NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

VIKTOR KATVALYAN

# DIALECTAL OVERVIEW OF THE REPUBLIC OF ARMENIA

## VOLUME 2

## REGION OF KOTAYQ

YEREVAN – 2020

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

## ԳԻՐՔ 2

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԵՐԵՎԱՆ – 2020

ՀՏԴ 81'28
ԳՄԴ 81.51- 02
Կ 280

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից
տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ № SCS 15T-6B101
գիտական թեմայի շրջանակներում:

Պատասխանատու խմբագիր՝
բան. գիտ. թեկնածու Ն.Գ.Հովհաննիսյան

**Կատվալյան Վ.Լ.**
Կ 280 Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր/
Վ. Լ. Կատվալյան.- Եր.: «Ասողիկ» հրատարակչություն,
2020. Գիրք 2: Կոտայքի մարզ.- 492 էջ:

Աշխատության մեջ ընդհանուր գծերով նկարագրվում են Կոտայքի մարզում գործածվող բարբառային միավորները, տրվում են տեղեկություններ բնակչության ծագման, խոսվածքների բարբառային պատկանելության վերաբերյալ, ներկայացվում են մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը: Գիրքը ներառում է նաև բարբառային տառադարձությամբ գրառված խոսքի նմուշներ ու բառացանկ:

Աշխատանքը կարող է կարևոր նյութ տրամադրել հայերենագիտական հետազա ուսումնասիրություններին, նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության շատ հարցերի պարզաբանմանը: Այն օգտակար կլինի նաև հայ բանահյուսության, ազգագրության, ժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետներին: Առկա նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 81'28
ԳՄԴ 81.51- 02

ISBN 978-9939-50-476-6
© «Ասողիկ» հրատարակչություն, 2020

# ՆԱԽԱԲԱՆ

Հայոց լեզուն բազմազան ու հետաքրքրական դրսևորումներ ունի Կոտայքի մարզում, որը կազմավորվել է 1995 թվին՝ իր մեջ ներառելով Աբովյանի, Հրազդանի և Նաիրիի նախկին շրջանները: Մարզի տարածքը հայերով բնակեցված է եղել անհիշելի ժամանակներից: Հնում այն ընդգրկված է եղել Մեծ Հայքի Այրարատ նահանգի կազմում: Արշակունիների տիրապետության շրջանում Կոտայքը պատկանել է հայոց արքունիքին: Հետագա դարերում գտնվել է հայկական տարբեր նախարարական տների և իշխանությունների իրավասության ներքո: 17-րդ դարի սկզբներին Շահ-Աբասի իրականացրած բռնագաղթը հայազրկել է նաև Կոտայքի շատ բնակավայրեր: Կոտայքի մարզի ներկայիս բնակիչների նախնիների մի մասը 1828-1830 թթ., 1870-ականներին, 20-րդ դարի առաջին քառորդում ներգաղթել է Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, Պարսկահայաստանից:

Ներկայում մարզն ունի 7 քաղաքային և վեց տասնյակից ավելի գյուղական համայնքներ: Դրանցից յուրաքանչյուրը, բնականաբար, ունի լեզվական յուրահատկություններ, որոնք պայմանավորված են տարբեր հանգամանքներով: Ընդհանուր առմամբ, մարզի համայնքները ըստ հաղորդակցման միջոցի կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) խոսակցական լեզվով հաղորդակցվող համայնքներ, բ) խառը տիպի խոսվածքով հաղորդակցվող համայնքներ, գ) որևէ բարբառի տարբերակով հաղորդակցվող համայնքներ: Մեկ-երկու բնակավայրում (Նոր Երզնկա, Քանաքեռավան) բնակիչների՝ ծագմամբ տարբեր հատվածերը շարունակում են հաղորդակցվել իրենց մայրենի բարբառներով:

Մարզում հիմնականում հայերենի խոսակցական տարբերակով են հաղորդակցվում մեկուկես տասնյակ բնակավայրերում: Նման բնակավայրեր են քաղաքներից վեցը (Եղվարդից բացի)՝ Աբովյանը, Բյուրեղավանը, Ծաղկաձորը, Հրազդանը, Նոր Հաճնը և Չարենցավանը: Գյուղական բնակավայրերից խոսակցական

լեզվով են հաղորդակցվում Աբովյանի տարածաշրջանի Գետարգել, Զովք, Պտղնի, Նաիրիի տարածաշրջանի Զորավան, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Պռոշյան, Քանաքեռավան, Հրազդանի տարածաշրջանի Կարենիս գյուղերի բնակիչները: Նկատելի է, որ բոլոր այս բնակավայրերը բնութագրվում են բնակիչների՝ ըստ ծագման անհամասեռ կազմով: Սրանց մեծ մասը (Չարենցավան, Բյուրեղավան, Նոր Հաճն քաղաքները, Գետարգել, Զորավան, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Պռոշյան, Քանաքեռավան գյուղերը) արդյունաբերական, գյուղատնտեսական կամ գիտաարտադրական նպատակներով հիմնադրվել է խորհրդային տարիներին՝ բնակեցվելով շրջակա բնակավայրերից ու հանրապետության տարբեր շրջաններից եկածներով: Երբեմն էլ տեղի է ունեցել որևէ բնակավայրի հիմքի վրա կամ մեկից ավելի բնակավայրերի միավորումով նոր, ավելի մեծ բնակավայրի ձևավորում (այդ ուղին են անցել Աբովյան, Հրազդան, Ծաղկաձոր քաղաքները, Զովք, Պտղնի, Կարենիս գյուղերը). այս բնակավայրերի բնակչության կազմը ևս զգալիորեն համալրվել է այլ շրջաններից եկածներով: Ե՛վ մարդկանց՝ տարբեր խոսքային միջավայրերից եկած լինելու հանգամանքը, և՛ բնակչության շրջանում բարբառակիր կայուն հանրության կամ հանրությունների բացակայությունը նպաստել են, որ վերոհիշյալ բնակավայրերում հաղորդակցման միջոց դառնա բոլորի համար ընկալելի և ընդունելի խոսակցական հայերենը[1]:

Կոտայքի մարզի երկու տասնյակ բնակավայրերում հաղորդակցման միջոց են խառը խոսվածքներ, որոնք ձևավորվել են բարբառակիր տարբեր հանրությունների՝ բավականին երկար ժամանակ համատեղ ապրելու պայմաններում: Դրանք զուգակցում են բարբառային տարբեր միավորների հատկանիշներ և այդ վիճակով չեն կարող անվերապահորեն վերագրվել բարբառային

[1] Այս բնակավայրերի լեզվական բնութագրերը չենք ներկայացնում՝ նկատի ունենալով դրանցում խոսակցական հայերենի դրսևորման նույնականությունը ըստ հիմնական հատկանիշների և բարբառային տարրերի թույլ արտահայտությունը:

հայտնի այս կամ այն միավորին: Խառը տիպի խոսվածքներ ավելի շատ գործածվում են Աբովյանի տարածաշրջանում (նման խոսվածքներ ունեն Բալահովիտ, Գեղադիր, Գեղաշեն, Զառ, Զովաշեն, Էլար, Կաթնաղբյուր, Կամարիս, Կապուտան, Հացավան, Նոր Գյուղ, Ողջաբերդ, Սնաբերդ բնակավայրերը): Նաիրիի տարածաշրջանում այդ տիպի խոսվածքներ ունեն Արզել, Գետամեջ, Թեղենիք, Սարալանջ, Քարաշամբ բնակավայրերը, Հրազդանի տարածաշրջանում՝ Բջնի և Ֆանտան գյուղերը: Բոլոր բնակավայրերի բնակիչների նախնիները տարբեր ժամանակներում (1828-1830 թթ., 1870-ականներ, 1915-1920 թթ.) ներգաղթել են Արևմտյան Հայաստանի գավառներից և Պարսկահայաստանից: Հատկանշական է, որ խառը տիպի խոսվածքներում հիմնականում զուգորդվում են Արարատյան բարբառի և որևէ այլ բարբառի կամ բարբառների (առավելաբար՝ Մշո, ապա նաև Խոյ-Մարաղայի, Վանի, Բայազետի, Դիադինի բարբառների, նաև Թավրիզի խոսվածքի) հատկանիշներ:

Հայերենի բարբառների տարբեր խոսվածքներով հաղորդակցվում են Կոտայքի մարզի շուրջ երեք տասնյակ բնակավայրերում (ներառյալ քաղաքների թաղամասեր, խոշորացված համայնքների մեջ ներառված գյուղեր): Մշո բարբառի տարբերակներով են հաղորդակցվում Հրազդանի տարածաշրջանի Աղավնաձոր, Մարմարիկ և Սոլակ, Նաիրիի տարածաշրջանի Բուժական, Քասախ գյուղերի բնակիչները, նաև Նոր Երզնկա գյուղի բնակիչների մի մասը: Բայազետի բարբառի խոսվածքներով են հաղորդակցվում Աբովյանի տարածաշրջանի Ակունք, Գեղարդ, Գողթ, Կոտայք, Հատիս գյուղերում: Խոյ-Մարաղայի բարբառով են հաղորդակցվում Աբովյանի տարածաշրջանի Արամուս, Ձորաղբյուր, Մայակովսկի և Նաիրիի տարածաշրջանի Զովունի գյուղերում: Վանի բարբառի տարբերակներ Կոտայքի մարզում գործածվում են Հրազդանի տարածաշրջանում՝ Լեռնանիստ գյուղում, Հրազդան քաղաքի Կաքավաձոր, Ջրառատ և Վանատուր թաղամասերում: Մարզում Արարատյան բարբառը գործածվում է Աբովյանի տարածաշրջանի Առինջ և Ջրվեժ գյուղերում, Նաիրիի տա-

րածաշրջանի Եղվարդ քաղաքում: Հրազդանի տարածաշրջանի Ալափարս, Արզական, Քաղսի գյուղերում և Աբովյանի տարածաշրջանի Գառնի գյուղում գործածվում է Մակուի խոսվածքը, Հրազդանի տարածաշրջանի Մեղրաձոր, Նաիրիի տարածաշրջանի Արագյուղ և Մրգաշեն գյուղերում հաղորդակցվում են Արծափի խոսվածքով: Նոր Երզնկա և Քանաքեռավան գյուղերում կան ընտանիքներ, որոնք հաղորդակցվում են Կարնո բարբառով:

Ինչպես Հայաստանի Հանրապետության այլ տարածաշրջաններում, Կոտայքի մարզում ևս կենդանի գործածական լեզուն ենթարկվում է երբեմն աննկատելի, բայց շարունակական տեղաշարժերի, փոփոխությունների: Լեզվում տեղի ունեցած և տեղի ունեցող գործընթացները դիտարկելու, զարգացման միտումները և ընթացքը վերլուծելու համար կարևոր է խոսքի պարբերական հետազոտությունը: Կոտայքի մարզի մի շարք բնակավայրերի խոսվածքների բարբառային հատկանիշների արձանագրման ուղղությամբ անցյալ դարի վերջին քառորդում զգալի աշխատանք են կատարել Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով կատարելով անհրաժեշտ գրանցումներ[2]: Մարզի որոշ բնակավայրերի (Առինջ, Ջրվեժ, Կաթնաղբյուր, Պտղնի, Ակունք, Կոտայք, Գառնի, Գեղաշեն, Էլար, Զառ, Բալահովիտ, Բջնի, Արզական, Ալափարս, Եղվարդ) խոսվածքներին անդրադարձել է Ռ. Մարկոսյանը՝ դրանք դիտարկելով Արարատյան բարբառի շրջանակում[3]: Մեր նախաձեռնած «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագրով 2016-2018 թթ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցներ Հ. Խաչատրյանի, Ժ. Միքայելյանի և Գ. Մկրտչյանի հետ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակ-

---

[2] Այս աշխատանքում մենք անհրաժեշտության դեպքում նյութ ենք քաղել նաև այդ գրանցումներից:

[3] Տե՛ս **Ռ. Մարկոսյան**, Արարատյան բարբառը, Ե., 1989, 390 էջ:

ցությամբ դաշտային աշխատանքներ ենք կատարել Կոտայքի մարզի բնակավայրերում՝ տեսաձայնագրմամբ և հարցումներով գրանցելով բարբառային և բանահյուսական անհրաժեշտ նյութեր, որոնք այնուհետև մշակվել են ու ենթարկվել գիտական վերլուծության: Ձեռք բերված տվյալների համադրումով ձևավորվել են Կոտայքի մարզի բնակավայրերի լեզվական բնութագրերը՝ համալրված բարբառային և բանահյուսական նյութերով, ժողովրդագրական տեղեկություններով, փաստական տվյալներով: Միաժամանակ ձևավորվել է մարզում գործածվող բարբառների և բարբառային հատկանիշների տարածման պատկերը, կատարվել են բարբառագիտական դիտարկումներ: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են մի շարք հրապարակումներում[4]:

---

[4] **Վ. Կատվալյան**, Բարբառային հայերենի դրսևորումները ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2017, էջ 209-227, **Վ. Կատվալյան,** Վանի բարբառի դրսևորումներ ՀՀ Կոտայքի մարզում, Հայ լեզվաբանության 11-րդ միջազգային գիտաժողովի հիմնադրույթների ժողովածու, Ե., 2017, էջ 70-71, **Վ. Կատվալյան**, Խառը տիպի խոսվածքները Կոտայքի մարզում, «Աճառյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2020, էջ 88-99, **Հ. Խաչատրյան**, *Աղբ* և *աղբանոց* հասկացությունների բառային դրսևորումները բարբառային հայերենում, «Աճառյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 84-94, **Հ. Խաչատրյան**, *Մենյակ* հասկացության բառանունները բարբառային հայերենում, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2017, էջ 170-180, **Հ. Խաչատրյան,** Տան բաղկացուցիչ մասերի անվանումները բարբառային հայերենում, «Աճառյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2017, էջ 144-159, **Ժ. Միքայելյան,** Աճառյանի օրենքի գործառությունը Աբովյանի տարածաշրջանի (Կոտայքի մարզ) մի քանի խոսվածքներում, Գիտական հոդվածների ժողովածու, 2016, էջ 217-229, **Ժ. Միքայելյան,** Կոտայքի մարզի մի քանի գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգերը, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2017, էջ 256-270, **Ժ. Միքայելյան**, Կոտայքի մարզի Առինջ, Ակունք, Գեղաշեն, Բալահովիտ գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգերի նկարագիրը, «Աճառյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 207-217, **Գ. Մկրտչյան**, Մշո բարբառի տարածման սահմանները ՀՀ Կոտայքի մարզում, «Աճառյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 151-158, **Գ. Մկրտչյան,** Կոտայքի մարզի խոսվածքների հանրալեզվաբանական քննություն, «Աճառյանական ընթեր-

Կոտայքի մարզի բնակավայրերի լեզվավիճակը համակողմանիորեն ներկայացնելու նպատակով սույն աշխատության առաջին մասում բերում ենք ընդհանուր տեղեկություններ մարզում գործածվող Վանի, Խոյ-Մարաղայի բարբառների վերաբերյալ, ներկայացնում տարածաշրջանում ինչպես այդ, այնպես էլ Մշո, Բայազետի, Արարատյան բարբառների և Մակուի ու Արծափի խոսվածքների դրսևորումների առանձնահատկությունները[5], ինչպես նաև բնութագրում և քննում ենք խառը տիպի խոսվածքները:

Գրքի երկրորդ մասում այբբենական կարգով ներկայացված են մարզի բնակավայրերը՝ բարբառային բնութագրերով: Մեր ընտրած լեզվական հատկանիշների շրջանակում դրանք արտացոլում են դաշտային աշխատանքների ընթացքում դիտարկված իրողությունները, որոնք կարող են օգտագործվել բարբառագիտական հետագա ուսումնասիրություններում:

Գրքի երրորդ մասը ընդգրկում է գիտական տառադարձությամբ բերված բարբառային խոսքի նմուշներ: Աշխատությունը եզրափակվում է Կոտայքի մարզի խոսվածքներում մեր արձանագրած բարբառային բառերի ցանկով:

Խորին երախտագիտությամբ ցանկանում ենք հիշատակել բարբառախոսների և դաշտային աշխատանքների ընթացքում մեզ սիրահոժար աջակցած անձանց անունները. **Աբովյանի** տարածաշրջանից՝ Լիա Մուրադյան, Լաուրա Կարապետյան (Աբովյան քաղաքի Էլար թաղամաս), Աշոտ Մնացականյան (գ. Ակունք),

---

ցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2017, էջ 286-300, **Գ. Մկրտչյան,** Մշո և Կարնո բարբառների տիպաբանությունը (ընդհանրություններ և տարբերություններ), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, XX, 2017, էջ 80-88:

[5] Մշո, Բայազետի բարբառների, Մակուի և Արծափի խոսվածքների ընդհանուր բնութագրերը բերված են սույն համալիր ծրագրի առաջին հատորում (տե՛ս **Վ. Կատվալյան**, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ, Ե., 2018), Արարատյան բարբառի ընդհանուր բնութագիրը կտրվի համապատասխան հատորում:

Քնարիկ Հունանյան, Գեղամ Հունանյան, Սպարտակ Նազարյան (գ. Արամուս), Երջանիկ Հայրապետյան, Նորիկ Սմբատյան, Մարջիկ Եփրեմյան (գ. Գառնի), Ռոզիկ Եղիազարյան (գ. Գեղադիր), Լենա Առաքելյան (գ. Գեղաշեն), Գուրգեն Սարգսյան (գ. Գեղարդ), Ամբիկ Ղարիբյան, Հայաստան Խաչատրյան, Վոլոդյա Խաչատրյան, Ոստան Խաչատրյան (գ. Գողթ), Արմեն Սաֆարյան (գ. Ձառ), Էմմա Մելքոնյան (գ. Ձովաշեն), Անգին Առաքելյան (գ. Ձովք), Սարգիս Գևորգյան, Սմբատ Գևորգյան (գ. Կաթնաղբյուր), Մակիտոն Աբելյան, Արթուր Աբելյան, Մնացական Խաչատրյան (գ. Կամարիս), Սերոբ Բարսեղյան (գ.Կապուտան), Հենրիկ Շահբազյան, Եգոր Մանուկյան, Պապին Վարդանյան (գ. Կոտայք), Գեղեցիկ Սահակյան (գ. Հատիս), Միշա Ղազարյան (գ. Մայակովսկի), Ալետա Արշակյան (գ. Նոր Գյուղ), Հայկուշ Հարությունյան (գ. Ողջաբերդ), Աշոտ Գրիգորյան, Վահան Ծառուկյան (գ. Սևաբերդ), **Հրազդանի** տարածաշրջանից՝ Արաքսի Ենգիբարյան (գ. Ալափարս), Արաքսյա Մխիթարյան, Ջինա Մխիթարյան (գ. Աղավնաձոր), Վազգեն Նիկողոսյան, Ռոբերտ Թադևոսյան (գ. Արզական), Ռիմա Սահակյան (գ. Բջնի), Անժելա Ղարիբյան, Վարդուշ Մանուկյան, Գոհար Մկրտչյան (գ. Լեռնանիստ), Օլյա Հարությունյան, Վազգանուշ Սահակյան (Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամաս), Սեդա Տոնոյան, Արուս Տոնոյան (գ. Մարմարիկ), Սարիբեկ Մանասյան, Հերմինե Մանասյան, Անահիտ Խաչատրյան (գ. Մեղրաձոր), Ռոզա Այվազյան (Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս), Փոփոլ Դանիելյան (գ. Սոլակ), Մանվել Ռաֆայելյան (Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս), Սիրուշ Գրիգորյան (գ. Քաղսի), **Նաիրիի** տարածաշրջանից՝ Ռիմա Մնացականյան, Թառլան Մնացականյան (գ.Արագյուղ), Աղոլֆ Երվանդյան (գ. Արգել), Սեդրակ Երիցյան (գ. Բուժական), Արաքսյա Մինասյան (գ. Գետամեջ), Ռոզա Հարությունյան (ք. Եղվարդ), Լուսիկ Սիմոնյան (գ. Ձովունի), Սիրանուշ Մուրադյան (գ. Թեղենիք), Նինել Մուրադյան (գ. Մրգաշեն), Սամվել Խուրշուդյան (գ. Նոր Գեղի), Այվազ Համբարձումյան, Ավագ Ոսկանյան և իր կինը (Նոր Երզնկա),

Արուս Գրիգորյան (գ. Սարալանջ), Համլետ Սողոմոնյան, Կարեն (գ. Քանաքեռավան), Ջվեդ Գրիգորյան (գ. Քարաշամբ):

# ՄԱՍ 1

# ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## ԳԼՈՒԽ 1.1.

## ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

### Ա. Ընդհանուր տեղեկություններ Վանի բարբառի վերաբերյալ

Վանի բարբառը պատկանում է հայ բարբառների Կը ճյուղին, ունի երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ (պ, կ, տ, ծ, ճ – փ, ք, թ, ց, չ), ընդգրկված է արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում (Դիադինի բարբառի հետ):

Հ. Աճառյանի վկայությամբ՝ այս բարբառը եղեռնից առաջ ընդգրկում էր Վանա լճի ողջ արևելյան եզերքը՝ կենտրոն ունենալով Վան քաղաքը՝ շրջակա բազմաթիվ հայ գյուղերով, և տարածվելով հյուսիսում մինչև Դիադին, հարավում՝ մինչև Մոկս, Ոզմի, Շատախ, արևելքում՝ մինչև Պարսկաստանի սահմանը, իսկ արևմուտքում՝ մինչև Մշո բարբառի տարածման սահմանները[6]: Եղեռնը հայաթափեց հիշյալ բոլոր տարածքները, փրկված հայ

---

[6] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայ բարբառագիտություն, Մոսկվա – Նոր-Նախիջևան, 1911, էջ 140, **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 2013, էջ 339:

բնակչության զգալի մասը ապաստան գտավ Արևելյան Հայաստանում, աշխարհի զանազան անկյուններում[7]:

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ հայ բարբառագետները արձանագրել են հայրենազրկված արևմտյան որոշ բարբառային միավորների առկայությունը Հայաստանում և նրա սահմաններից դուրս[8], սակայն Վանի բարբառի գործառության մասին որևէ վկայություն չի բերվել[9], ավելին՝ ըստ Ա. Գրիգորյանի՝ «Վանի բարբառը մեր ***անցյալի*** խոշոր բարբառներից մեկն ***է եղել***»[10] (ընդգծումը մերն է՝ Վ.Կ.)[11]: Այնուամենայնիվ, ներկայում ունենք փաստեր, որոնք վկայում են Վանի բարբառի դրսևորումների կենդանի գործառություն Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանում[12]:

Վանի բարբառը, ըստ Հ. Աճառյանի, հայերենի հարավային սահմանագիծն է, որից հետո քրդախոս ու արաբախոս հայերն են[13]: Լեզվաբանը փաստում է, որ այն «թեև ունի բավական շատ շեղումներ գրաբարի բառաձևերի համեմատությամբ, բայց դրանք

---

[7] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 238:

[8] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 2013, էջ 337, 338, **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 407, **Ա. Գրիգորյան**, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957, էջ 333, 363, 388-389:

[9] Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 339, **Հ. Աճառյան**, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 12, **Ա. Ղարիբյան,** նշվ. աշխ., էջ 384:

[10] Տե՛ս **Ա. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 314:

[11] Մենք ևս միտք ենք հայտնել, որ «Ներկայումս Վանի բարբառը որևէ բնակավայրում ընդհանուր հաղորդակցման միջոց չէ» (տե՛ս **Վ. Կատվալյան**, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016, էջ 50):

[12] Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում 2017 թ. ընթացքում բարբառագիտական հետազոտություններ կատարելիս ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագետների խումբը արձանագրեց Վանի բարբառի հիմնական հատկանիշներն ունեցող խոսվածքների գործածություն Լեռնանիստ գյուղում և Հրազդան քաղաքի Կաքավաձոր, Ջրառատ և Վանատուր թաղամասերում: Բոլոր բնակավայրերի բնակիչներն էլ վկայում են, որ իրենց նախնիները գաղթել են Վանի տարածաշրջանից, նաև հարևան բնակավայրերից, այլ վայրերից:

[13] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 339:

չափազանց այլափոխված չեն և սակավ վարժությամբ կարող են հասկանալի դառնալ բոլորին»[14]: Վանի բարբառը համեմատելով շրջակա բարբառների հետ՝ Աճառյանը նկատում է, որ այն Մշո բարբառից տարբերվում է նրանով, որ զուրկ է շնչեղ ձայնեղներից, գրաբարի ձայնեղների դիմաց ունի խուլեր, *հ*-ի դիմաց ունի *խ* և չի պահպանել հայցականի *զ* նախդիրը: Վանի և Մշո բարբառները նման են *է*, *ո*-ի երկբարբառային արտասանությամբ: Ըստ Աճառյանի՝ Վանի բարբառը իր արևելյան սահմանակիցների՝ Ուրմիայի, Սալմաստի և Խոյի հետ նմանություն ունի «*հ*>*խ* ձայնափոխությամբ, թրթռունների խլացումով և *էօ, իւ* ձայներով»[15], սակայն նրանցից տարբերվում է բայերի խոնարհման ձևով[16]: Փաստելով Արարատյան բարբառի հետ Վանի նմանությունը բացառականի *ից* մասնիկով և շնչավորների դեպքում սեռի խնդրի՝ ինչպես հայցականով, այնպես էլ տրականով արտահայտությամբ՝ Աճառյանը նշում է, որ այդպիսով «Վանի բարբառը գտնվում է «արևելյան և արևմտյան» կոչված բարբառների միջև»[17]: Աճառյանը Վանի բարբառի ենթաբարբառներ է համարում Դիադինը, Մոկքը և Ոզմին, բայց և հավելում է, որ «Ենթաբարբառների սահմանը միշտ խախուտ է. այս հարցի որոշման մեջ ես նկատի եմ առել նաև շրջանի մեծությունը կամ կարևորությունը: Այժմ ուրիշները Մոկք և Ոզմի առանձին բարբառ են ուզում հաշվել»[18]: Վանի բարբառի վերաբերյալ Ա. Ղարիբյանը գրում է, որ այն ձայնավորներով հարուստ բարբառներից է, իսկ բաղաձայնական համակարգով պատկանում է արևելյան խմբին, «այսինքն՝ ենթարկվում է առաջին տեղաշարժի. ձայնեղները վերածվում են խուլերի, որով ստացվում է երկաստիճան ձայնեղազուրկ սիստեմ»[19]: Ըստ Ղարիբյանի՝ *հ*-ի դիմաց *խ* ունենալու հատկությունը, «որ ունեն Վանի բարբառը և

---

[14] **Հ. Աճառյան**, Քննություն Վանի բարբառի, էջ 13:
[15] Նշվ. աշխ., էջ 12:
[16] Տե՛ս նույն տեղում:
[17] Նշվ. աշխ., էջ 13:
[18] Նույն տեղում:
[19] Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 384:

նրա մոտիկ գտնվող բարբառները, …. Վանի բարբառը ժառանգած պիտի լինի բիայնական լեզվից»[20]: Ընդհանուր գծերով անդրադառնալով Վանի բարբառի անվանական և բայական հատկանիշներին՝ Ա. Ղարիբյանը կարծիք է հայտնում, որ հարակատար դերբայի՝ բարբառում դրսևորվող *ած* և *ուկ* վերջավորություններից վերջինը Մշո բարբառից յուրացրած ձև է[21]: Լեզվաբանը Վանի բարբառի ենթաբարբառներ չի առանձնացնում. ինչպես Դիադինի, այնպես էլ Ոզմիի և Մոկքի խոսվածքները համարում է առանձին բարբառներ[22]: Վանի բարբառին որոշ չափով ավելի հանգամանորեն անդրադառնում է Ա. Գրիգորյանը[23], որի կարծիքով՝ բարբառն ունի մեկ՝ Տիատինի ենթաբարբառ[24], չունի երկբարբառներ՝ բացի ո̈-ն[25] և այլն: Այս բարբառի ամբողջական գիտական նկարագրությունը, ինչ խոսք, ներկայացնում է Հ. Աճառյանի «Քննություն Վանի բարբառի» աշխատությունը[26]: Գ. Ջահուկյանը արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբի Վանի բարբառի շրջանակներում ներառել է Մոկսը, Շատախը, Բաստը, Ոզմը և Վանը[27]: Վանից բացի՝ առանձին ուսումնասիրության ենթարկվել են Շատախը[28] և Մոկսը[29]: Վերջինիս նվիրված ուսումնասիրության մեջ հեղինակը դիտարկել է նաև Մոկսի և հարևան շրջանների բարբառային առնչությունները և հանգել այն եզրակացության, որ «Մոկսին

---

[20] Նշվ. աշխ., էջ 384-385:

[21] Տե՛ս նշվ. աշխ., էջ 387:

[22] Տե՛ս նշվ. աշխ., էջ 93, 383:

[23] Տե՛ս Ա. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 314-332:

[24] Տե՛ս նշվ. աշխ., էջ 314:

[25] Տե՛ս նշվ. աշխ., էջ 316:

[26] **Հ. Աճառյան**, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:

[27] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 134-135:

[28] **Մ. Մուրադյան**, Շատախի բարբառը, Ե., 1962:

[29] **Մ. Մուրադյան**, Ուրվագիծ Մոկսի բարբառի (Հայերենի բարբառագիտական ատլաս, 1982, էջ 108-183):

ամենից ավելի մոտ են Ոզիմն ու Շատախը, այնուհետև՝ Վանը»[30]: Վանի և շրջակա խոսվածքների հնչյունական համակարգի որոշ առանձնահատկությունների քննությանն է նվիրված Ժ. Միքայելյանի «Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)» ուսումնասիրությունը[31], որում հեղինակը հանգամանորեն անդրադառնում է նաև «Աճառյանի օրենքին» և փորձում յուրովի մեկնաբանել այն[32]: Վանի բարբառի առնչությունները Բայազետի բարբառի հետ քննության է ենթարկել տողերիս հեղինակը[33]: Ինչպես ներկայացնում է Հ. Աճառյանը, Վանի բարբառով տարբեր ժամանակներում հրապարակվել է զգալի գրականություն[34]:

Վանի բարբառն ունի ինը ձայնավոր՝ *ա, ա̈, է, ը, ի, օ, օ̈, ու, իւ*[35]: Ըստ Աճառյանի՝ Վանի բարբառի *ա*-ն շեշտակիր վանկում արտասանվում է փակ ձևով, ներկայացնում է հայերենի *ա* և *օ* ձայնավորների միջին աստիճանը[36]: Ինչ վերաբերում է ա̈-ին, ապա Վանի բարբառում դրա գործածության վերաբերյալ Աճառյանը դիտարկել է օրինաչափություն, որը ձևակերպել է այսպես. «Վանի բարբառում *ա* ձայնավորը, գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ա̈, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է *ա*»[37] (բաժանել>պա̈ժնել, գազան>կʲա̈զա̈ն, դանակ>տա̈նա̈կ, ծագ>ծա̈քʲ, ջարդել>ճա̈րտել): Ըստ Աճառյանի օրենքի՝ համանման դիրքում հանդես են գալիս քմայնացած այլ

[30] Նշվ. աշխ., էջ 178:

[31] **Ժ. Միքայելյան**, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., 2009:

[32] Տե՛ս նշվ. աշխ., էջ 62-69:

[33] Տե՛ս **Վ. Կատվալյան**, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016:

[34] Տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 7-11:

[35] Վանի բարբառի ընդհանուր բնութագիրը ներկայացնում ենք հիմնականում ըստ Հ. Աճառյանի «Քննություն Վանի բարբառի» աշխատության:

[36] Տե՛ս նշվ. աշխ., էջ 14:

[37] Նշվ. աշխ., էջ 20:

հնչյուններ ևս՝ ӧ (üö) (բողկ>պӧխկ, գող>կʲӧղ, ջոջ>ճӧչ), ö (բովել>պöվել, գովել>կʲöվալ, դողալ>տöղալ, ջոկ>ճöկ), *իւ* (բուրդ>պիւրթ, գունդ>կʲիւնդ, դուր>տիւր, ձուկն>ծիւկ, ջուր>ճիւր): Բարբառում բառավերջի դիրքում բացառված է *ը*-ն: Այս ձայնավորը չի հանդիպում նաև բառասկզբում: Ինչպես նկատել է Ա. Ղարիբյանը, «այդպիսի ձայնավոր ունեցող բառերի մեջ Վանի բարբառը կամ *ը*-ն վերափոխում է *ի*-ի, ինչպես, օրինակ, *ինգʲեր* – *ընկեր*, *ինգʲավ* – *ընկավ*, և կամ ուղղակի դուրս է գցում, օրինակ *գʲöզ*>*ընկույզ*, *ձիկ*>*ընձիկ*»[38]: Վանի բարբառի *ե*, *ո* երկբարբառները, ըստ Աճառյանի, «համապատասխանում են մշեցիների և Կարնո գյուղացիների *ե,ո* հնչումներին, բայց սրանց նման ծանր ու դանդաղ չեն, և արտասանվում են շատ ավելի արագ»[39], իսկ ӧ-ն ունի մոտավորապես *իւէօ* արտասանություն, բայց ավելի արագ է և մոտ է ձայնավոր հնչման[40]: Ճիշտ է, երկբարբառները երբեմն դրսևորվում են նաև այլ դիրքերում, բայց կանոնավորապես գործածվում են շեշտակիր վանկերում[41]: Հինհայերենյան *ե, ո*-ին միավանկ բառերի սկզբում համապատասխանում են *յե, վո* կազմություններ (յեզ, յեփ, յեռ, վոխ, վոսփ, վոր): Երկվանկ բառերի սկզբում նույնպես *ո*-ի դիմաց միշտ առկա է *վո* (վոզնիկ, վոչխար, վոճիլ, վոսկի, վորտի), մինչդեռ *ե*-ի դիմաց *յե* առկա է *ղ,ռ* բաղաձայններից առաջ (յեղինջ, յեղնիկ, յեռալ, յեռսուն), իսկ *ր*-ից առաջ առկա է *է* (էրազ, էրակ, էրկաթ): Բազմավանկ բառերի սկզբում *ե,ո*-ի դիմաց առկա են *է, օ* (էրէրալ, էրէվալ, էրանէկ, օղօղել, օրօճալ): Առկա են *ո*-ի դիմաց *ու* ձայնավորի և *ե*-ի դիմաց *ի* ձայնավորի

---

[38] **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, էջ 384:

[39] Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 15: Ա. Ղարիբյանը նկատում է, որ երկբարբառային *ե,ո* ձայնավորներ ունեցել է նաև գրաբարը, իսկ Վանի բարբառը այդ ձայնավորները ժառանգած պիտի լինի իր նախորդ բիայնական լեզվից (տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 384):

[40] Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում:

[41] Տե՛ս նշվ. աշխ., էջ 31-32, 38-42:

գործածության դեպքեր (կուտոշ, կուրիս, կուրկոտ, փուղոց, ուսկոռ, իրես, իրեքʲ, իրիկուն, պիրել, ծիփել, տիսնալ):

Գրաբարյան երկբարբառների դիմաց բարբառն ունի պարզ ձայնավորներ կամ երկբարբառակերպ հնչյուններ, ինչպես՝ *էծ, էն, կʲէլ, ախպէր, լէրթ, կորեկ, ӱլիւր, ծիւն, արուն, շուղ, խարիր, կʲեղ, պӧթ, լӧս, քӧր, ճկոթ, ուր* (իւր), *ուրӓնքʲ* (իւրեանք) և այլն: Բառավերջի *ա*-ն որևէ մասնիկից առաջ դառնում է *է* (տղէն, փէսէն, ակռէքʲ, շուշփէքʲ), *աւ*-ից առաջացած *օ*-ն չի շփոթվում *ո* (երկբարբառային) հնչման հետ:

Վանի բարբառում գործառում են 34 բաղաձայններ (բ, պ, փ, գ, գʲ, կ, կʲ, ք, քʲ, դ, տ, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ, վ, ֆ, զ, ս, ժ, շ, ղ, խ, հʲ, հ, մ, ն, լ, ր, ռ, յ): Բարբառը բնութագրվում է բաղաձայնական երկաստիճան համակարգով և *գʲ, կʲ, քʲ, հʲ* քմայնացած բաղաձայնների առկայությամբ: Հետաքրքրական է, որ դրանցից վերջինը, ինչպես վկայում է Հ. Աճառյանը[42], ավելի հաճախ հնչում է *յ*, որովհետև վանեցիները արդեն դժվարանում են այն արտասանել: *Բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ բաղաձայններ բառասկզբում հանդիպում են միայն թուրքերենից և արևելյան այլ լեզուներից փոխառված բառերում (բӓխտ, բӓշ, գʲӓզ, դӓրմӓն), իսկ բառամիջում ու բառավերջում՝ ռնգային ձայնորդներից հետո (պӓմբӓկ, թիւմբ, մӓնգʲӓդ, յեղունգʲ, անդունդք, խիվանդ, անձրեվ, խընձӧր, տանձ, պӓնջӓր, մունջ): Այլ դեպքերում, որպես կանոն, հինհայերենյան *բ, գ, դ, ձ, ջ* բաղաձայնների դիմաց առկա են խուլեր (պӓրӓկ, պիւսնել, կʲӓկʲӓթ, կʲետ, տӓնӓկ, տըտիւմ, ծӓխ, ծէն, ճӧչ, ճӓրտել, պօպիկ, խապել, արեկʲӓկ, ӓրտӓր, փործանքʲ, ӓռճին, էճնել, ӓռӓճ) կամ շնչեղ խուլեր (պաքʲել, թӓքӓվոր, էքʲ, պատրուքʲ, պӓռթ, պիւրթ, առցկել, վռոց, աչ, մէչ, առչ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ* (խիվանդ, խավնել, պախել, շնախավոր, պӓխ, մախ): Բառա-

---

[42] Տե՛ս նշվ. աշխ., էջ 15:

սկզբի *դ*-ի դիմաց բարբառն ունի *կ* (կարիք, կուռուշ, Կյա՛զա՛ր, Կու-կազ): Վանի բարբառն ունի վերջնավանկային շեշտ:

Բարբառում դրսևորվում են թերևս հինհայերենյան շրջանից եկող մի շարք արտաբերական օրինաչափություններ (ինչպես՝ *ո-օ, ե-է* զույգերի, *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում *խ*-ի, բառասկզբի *յ*-ի դիմաց *հ*-ի դրսևորումները):

Վանի բարբառում համակարգային բնույթ են կրում պատմական հնչյունափոխության այնպիսի իրողություններ, ինչպիսիք են հնչյունական նոր միավորի (ֆ) առաջացումը, երկբարբառների պարզեցումը, ձայնավորների անկումը բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում (աշկեռտ, պա՛ժնել, կիտնալ, յեռսուն, ժօղվել, սօվրել), միավանկ բառերի սկզբում երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելումը (յես, վոտ) և այլն: Մասնավոր բնույթ են կրում ձայնավորական (օրինակ՝ *ա>է*՝ խարազան > խա՛րէզա՛ն, արիւն > էրուն, արմուկն > էրմունգ[յ], *ե>ա*՝ ստեպղին > տապղին, աղեղնակ > անանակ, *ի>է*՝ անդրանիկ > անդրանէկ, արագիլ > առակ[յ]էլ, *ո>ու*՝ կոտոշ > կուտոշ, կորուսել > կուրիս, կորկոտ > կուրկոտ, փողոց > փուղոց, *ու>օ*՝ գլուխ > կ[յ]ըլօ՛խ և այլն) և բաղաձայնական (անկում՝ *ճա՛ղաց, ա՛ժել, կիսուր, շանց տալ, ծմա՛, ք[յ]ավոր, թօնել,* հավելում՝ *աթոռք[յ], խայլիկ, փռնթ, արծըլի, ծանղըր, տալվ, խամբրել, հէր* /քարայր/, *հըմէն*, դրափոխություն՝ *պա՛լնիս, վլա՛լ, թըխթըմոր*, արտաբերության եղանակի փոփոխություն՝ *կորիզ > կողինձ, զռուզ > կռունձ, պատիժ > պատիճ* և այլն) զանազան փոփոխություններ: Հնչաշղթայի ձևավորման գործող օրինաչափություններով են պայմանավորված բաղաձայնից առաջ *կ, գ, նգ > յ* անցումները (բակլայ>բա՛յլա՛, ճակտի > ճայտի, յեղունիկ > յեղունիյներ, ագանել>խայնել, կանգնել > կայնել, գանգատել > կ[յ]ա՛յտել), *ք > հ[յ]* անցումը (աքլոր > ահ[յ]լօր, ճգնաւոր > ճըքնավոր > ճըհ[յ]նավոր), հպաշփականի վերածումը շփականի

(երնջնակ > էրըժնա̈կ, յօրանջել > օրօշկըտալ, իջանել > էժնել, միջնակ > միժնէկ) և այլն:

Շեշտազրկման հետևանքով ձայնավորները հնչյունափոխվում են (աշկըռտներ, ճա̈ղչի, կիշըրներ, ամըսներ, տանսըներ, անվըներ, օխսի />օղիս>աղյուս/, խըրիշտըկի, ցորնի, արմընգʲի, ա̈լրի, պիւքʲ>պքʲի, տիրոչ, խող>խուղու ևն):

Վանի բարբառում առավել մեծ գործածականություն ունեն *եր, ներ* հոգնակերտները. միավանկ բառերի հոգնակին կազմվում է *եր* մասնիկով (խացեր, շներ, խարսներ), բազմավանկ բառերինը՝ *ներ* մասնիկով (թակավորներ, կաքʲվներ): Ձայնավորով կամ *ն* ձայնորդով ավարտվող բառերի հոգնակին կազմվում է *հʲտեր* հոգնակերտով (կʲինիհʲտեր, մառանիհʲտեր), երբեմն էլ՝ *քʲտեր* մասնիկով (պէրընքʲտեր): Ի ձայնավորով ավարտվող բառերի հոգնակին կարող է արտահայտվել նաև *քʲ* մասնիկով (վոսկիքʲ // վոսկիհʲտեր, խալիքʲ//խալիհʲտեր): *Ու//իւ* ձայնավորով ավարտվող բառերը նույնպես ունենում են հոգնակիի զուգահեռ ձևեր (ա̈ռուքʲ//ա̈ռվըներ, լէզիւքʲ//լէզվըներ): *Քʲ* հոգնակերտից առաջ բառավերջի *ա//ա̈* ձայնավորը դառնում է *է* (բակլա>բա̈յլա̈>բա̈յլէքʲ, փէսէքʲ): *Կին* բառի հոգնակին լինում է *կիհʲտեր* կամ *կըհʲտեր*:

Սակավ դեպքերում գործածվում են նաև հոգնակերտ այլ մասնիկներ, որոնք, ըստ Հ. Աճառյանի, գրաբարի կամ միջին հայերենի մնացորդներ են[43]: Այդպիսիք են՝ *էստար* (էկʲէստար՝ այգիներ), *անքʲ* (ծիանքʲ, ճա̈ճա̈նքʲ), *վանքʲ* (իշվանքʲ, տիրվանքʲ), *ստանք, տանքʲ* (քʲեռըստանքʲ, քʲավորտանքʲ), *րանքʲ* (տեղրանքʲ, կողրանքʲ), *տար* (կʲօմէշտար): Մարմնի մասերի մի շարք անունների հոգնակին կազմվում է *վեր* մասնիկով (ընքʲվեր, հընթվեր, լընդվեր, ծծվեր):

Կը ճյուղի մյուս բարբառների պես Վանի բարբառը ներգոյական հոլով չունի: Բարբառում սեռական հոլովը ևս կարող է

[43] Տ՛ես նշվ. աշխ., էջ 112:

ստանալ որոշիչ հոդ, ուստի սեռականը և տրականը (որոշյալ թե անորոշ) միմյանցից ձևով չեն տարբերվում: Հայցական հոլովը նման է ուղղականին կամ տրականին: Բացառական հոլովը սովորաբար ունենում է *ց*-ով վերջավորություն, սակայն ոճերի մեջ հանդիպում են նաև *է*-ով կամ *էն*-ով կազմություններ (վöղվընէ, ճöղչէն): Հատուկ տեղանունների բացառականը կազմվում է *ա* վերջավորությամբ (Վö̈նö̈, Մոկսա)[44]: Գործիական հոլովն ունենում է *օվ* վերջավորություն: Հոգնակի սեռական, տրական և բացառական հոլովներն ունենում են *աց* վերջավորություն (խացերաց):

Վանի բարբառում Ի հոլովումը ամենատարածվածն է (խաց, խացի, խացից, խացօվ, խացեր, խացերաց, խացերօվ): Շատ բառեր՝ կենդանիների անուններ, *ի* ձայնավորով ավարտվող բառեր և այլն, ենթարկվում են Ու հոլովման (խալիվոր, խալիվրու, խալիվրուց, խալիվրօվ, խալիվորներ, խալիվորներաց, խալիվորներօվ): Ժամանակի անունները ենթարկվում են Վան հոլովման (ամառ, ամըռվան // ամըռվա // ամռան, ամըռվընից // ամըռվընէ, ամըռվընօվ, ամըռներ, ամըռվըներ): Զգալի քանակություն են կազմում Ան հոլովման բառերը (ակ, ական, ակնից, ակնօվ, ակներ, ակներաց, ակներօվ): Ո հոլովումն ընդգրկում է *ախպէր, խէր, մէր* և դրանցով ավարտվող բաղադրյալ բառերը (խէր, խօր, խօրից, խօրօվ, խէրեր, խէրերաց, խէրերօվ): Ոջ հոլովման ենթարկվում են ազգակցական հարաբերություններ արտահայտող բառեր (քʲö̈ր, աներ, ինգʲեր, կիսուր, քʲավոր, տէր, տալվ, տէքʲր, քʲենի). *քʲö̈ր, քʲիրոչ, քʲիրոչից, քʲիրոչմօվ, քʲö̈րեր, քʲö̈րերաց, քʲö̈րերօվ:*

Վանի բարբառում գործածական է *ն* որոշյալ հոդը, որ դրվում է ձայնավորով ավարտվող բառերի վրա. բաղաձայնով ավարտվող բառերը որոշիչ հոդ կարող են ստանալ ձայնավորով սկսվող

---

[44] Հ. Աճառյանը նկատում է, որ սրանք գրաբարի հատուկ անունների հոլովման մնացորդներն են (տե՛ս նշվ. աշխ., էջ 116):

բառից առաջ: Անորոշ հոդը սովորաբար հետադաս է (խացըմ տուր, ծիմ առի), սակայն կարող է նաև լինել նախադաս (մէկ աթոռ, մէյ խաց, *նաև*՝ մէյ խա մարթ): Ստացական *ս,տ* հոդերի և բառավերջի բաղաձայնի միջև *ը* ձայնավոր չի ներմուծվում, ուստի նման դեպքերում, բաղաձայնների խճողումը մեղմելու համար, ստացական հոդի վրա կարող է ավելանալ *ի* թարմատար՝ *իրիսսի սիվցեր ի* (երեսս սևացել է)[45]:

Վանի բարբառում ածականի համեմատության աստիճանների արտահայտության միջոցները էական նորություն չեն բերում: Բաղդատականը դրսևորվում է տարբեր միջոցներով, ինչպես՝ *Բöրդին ուռից պանցր ի. Բöրդին չöնձ ուռին պանցր ի. Էսա տուն էնա տնից öվիլի պանցր ի*: Գերադրական աստիճանը ձևավորվում է *հöն* մասնիկով կամ *հըմմէնից* // *զըմմէնից* բառով՝ *հöն պանցըր, հըմմէնից պանցըր*:

Բարբառում 70, 80, 90 թվականները արտահայտվում են թուրքերենից փոխառյալ *յեթմիշ, սöհ<sup>յ</sup>սöն, դօխսան* բառերով: *Տասը* թվականը կցական բարդություններում դրսևորվում է *տըսն-* կամ *տըս–* ձևերով, ձայնավորով սկսվող միավորներին կապակցվում է *ու* շաղկապով, որը դառնում է *վ* (տըսնըմէկ, տըսվէրկու, տըսնէվութ): Բարբառը դասական թվականներ չունի: Բաշխական թվականների իմաստ արտահայտվում է քանակականների կրկնությամբ (մէյ մէկ, էրկու էրկու), երբեմն էլ՝ *ական* մասնիկով (խընգ<sup>յ</sup>ական):

Վանի բարբառի անձնական դերանուններն են՝ *յես, տիւ, զինք<sup>յ</sup>*, սրանց հոգնակիներն են՝ *մենք<sup>յ</sup>, տիւք<sup>յ</sup>, ուրանք<sup>յ</sup>: Յես* դերանունը տրական հոլովում ունի *ձի, ձիկ, զի, զիկ* ձևերը[46], հոգնակի թվում՝ *մե* ձևը: *Տիւ* դերանվան տրականի եզակի և հոգնակի ձևերն

[45] Տե՛ս նշվ. աշխ., էջ 154:

[46] Հ. Աճառյանը նկատել է, որ *ձի* //*ձիկ* ձևն առաջացել է *ինձի* // *ընձի* ձևից՝ նախավանկի անկումով (տե՛ս նշվ. աշխ., էջ 150):

են՝ *քյե, ծե*, իսկ *զինքյ* դերանունը այդ հոլովում ունի *ուր, ուրանց* ձևերը:

Ցուցական դերանուններն են՝ *էս, էսա, էտ, էտա, էն, էնա* (սրանց սեռականի ձևերն են՝ *իսոր, իտոր, ինոր*, հոգնակիները՝ *իսոնքյ, իտոնքյ, ինոնքյ*), նաև՝ *էսիկ, էտիկ, էնիկ*: Բացառականի *իսորմից* // *իսորից* տիպի ձևերից բացի՝ առկա են գյուղական *ըստից, էնղից* (կրճատ՝ *ղից*) ձևեր ևս: Ստացական դերանունները անձնական դերանունների սեռական հոլովաձևերն են (իմ, քյո, մեր, ծեր, ուր, ուրանց, ինոր, ինոնց), որոնք իրենց հերթին հոլովվում են (իմուն, իմունի, իմունից, իմունօվ, իմոնքյ, իմոնքյի, իմոնքյից, իմոնքյօվ և այլն): Ստացական դերանուններից հետո գոյականը ստացական հոդ չի ստանում (իմ տուն): Իբրև անձերին վերաբերող հարցահարաբերական դերանուն հանդես է գալիս *վով* ձևը՝ *վիր, վիրնից // վիրմից, վիրնօվ // վիրմօվ, վովեր, վովերաց, վովերօվ* հոլովաձևերով: Վանի բարբառում գործառող դերանվան մյուս տեսակները (հարցահարաբերական՝ *ինչ, վոր, վոր մէկ*, փոխադարձ՝ *իրար, մէյմէկու*, որոշյալ՝ *ըմէն, ըմէն մէկ, բիւթիւն*, անորոշ՝ *քյանի մ', իւրիւշ*, ժխտական՝ *վոչմէկ*) էական յուրահատկություններ չունեն:

Բարբառի Ե խոնարհման բայերում հինհայերենյան *ան* ածանցի դիմաց առկա է *ն* ածանց (անցանել < ընցնել, իջանել < էճնել, մտանել < մտնել, հասանել < խասնել): Ա խոնարհման բայերում *ան* ածանց երբեմն դրսևորվում է (խանգյըստանալ, նեղանալ, պանցրանալ, պյարկանալ), երբեմն էլ դրա դիմաց առկա է *ն* (իմնյալ, լօխկնալ, խասկնալ, խիվընդնալ, մոռնալ): Բացակայում է *չ* բայածանցը (փախնել, ուռել, տիպնել, թռնել), հազվադեպ է *էն* ածանցը (վյախէնալ): Պատճառական բայերը Վանի բարբառում ավելի հաճախ ունենում են *ցուց* կազմիչ (ընցուցել, խասկըցուցել մեռցուցել), երբեմն էլ՝ *ուց* կազմիչ (խատուցել, թռուցել): Ըստ Հ. Աճառյանի՝ գյուղական վայրերում գործածական են ձևեր

(փախցում, խարցում)[47], որոնցում դրսևորվում է Ու խոնարհիչ: Կրավորական *վ* ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են կրավորաձև՝ *ա, ար, ավ, անք<sup>յ</sup>, աք<sup>յ</sup>, ան* վերջավորություններով: Բարբառն ունի բազմապատկական *ռ, տ, ոտ* ածանցներ (թոռմըռել, կռվտալ, ծակըռտել):

Վանի բարբառում բայն ունի երկու խոնարհում՝ Ա և Ե: Անորոշ դերբայն ունի *էլ, ալ* վերջավորություններ, հոլովվելիս ենթարկվում է Ու հոլովման (խայնել, խայնէլու, խայնէլուց, խայնէլօվ): Հարակատար դերբայն ունի *ած* և *ուկ* վերջավորություններ (տիսած, խատուկ), ընդ որում՝ նկատվել է, որ *ուկ* մասնիկը գործածվում է չեզոք և կրավորական բայերի համար[48]: Վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն՝ *իկիր, լսիր*, ընդ որում՝ շրջուն շարադասության դեպքում *ր*-ն ընկնում է[49], իսկ *ի*-ն դառնում է *է*՝ *չեմ լսէ*: Ապառնի դերբայը Վանի բարբառում ունի *էլու* (ալու) վերջավորություն (ասէլու, տալու)[50]: Գործածվում է նաև երկրորդ ձև՝ *էլիք<sup>յ</sup>* (ալիք<sup>յ</sup>) վերջավորությամբ, սակայն նման ձևերը (ասէլիք<sup>յ</sup>, տալիք<sup>յ</sup>), ինչպես վկայում է Հ. Աճառյանը[51], ավելի գոյական են: Ենթակայական դերբայի վերջավորությունն է *օղ*՝ *պիրօղ, տարօղ*: Ժխտական դերբայը Վանի բարբառում ունենում է *է, ա* վերջավորություններ՝ (չեմ) *լսէ*, (չեմ) *խաղա:*

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես, ի, ենք<sup>յ</sup>, էք<sup>յ</sup>, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք<sup>յ</sup>, իք<sup>յ</sup>, ին:*

Բարբառում ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են *կը* եղանակիչով՝ *կըխայնեմ, կուզեմ, կըխաղամ, կըխայնի, կուզի, կըխաղի*, ընդ որում՝ այդ ձևերն արտահայտում են նաև ապառնի, անցյալի ապառնի ժամանակների իմաստներ: *Գալ,*

---

[47] Տե՛ս նշվ. աշխ., էջ 182:

[48] Տե՛ս նշվ. աշխ., էջ 193:

[49] Հ. Աճառյանը եզրակացրել է, որ *ր*-ի անկումը հաջորդ ձայնավոր հենարանի պակասության պատճառով է (տե՛ս նշվ. աշխ., էջ 196):

[50] Ըստ Ա. Ղարիբյանի՝ Վանի բարբառը ապառնի դերբայ չունի (տե՛ս Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 387):

[51] Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 196:

*լալ, տալ* բայերի դեպքում այդ ժամանակաձևերը կազմվում են *կու* մասնիկով՝ *կու կյա̈մ, կու լամ, կու տամ, կու կյի, կու լի, կու տի:*

Հ. Աճառյանը նկատել է, որ բարբառի գյուղական տարբերակներում անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում առկա է *մ* հավելված[52]: Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալի ցոյական հիմքով՝ *ճարիցի, խապիցի:* Այս խմբի չեզոք սեռի բայերը անցյալ կատարյալում ունենում են կրավորաձև վերջավորություններ (նստա, պառկար, ծլավ): Հ. Աճառյանը ուշադրություն է հրավիրում Վանի բարբառի, իր բնութագրմամբ, գրաբարից եկող մի իրողության վրա՝ նկատի ունենալով միավանկ բայաձևերի *ի* նախահավելվածը անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում, ինչպես՝ *իխան* (եհան), *իպա̈ռց* (եբարձ), *իպե* (եբեր), *իպա̈ց* (եբաց), *իթօղ* (եթող), *իլա̈ց* (ելաց) և այլն[53]: *Գնալ, մնալ* բայերն ունեն *կնա̈ց* // *կյա̈ց, մնաց* անցյալի հիմքեր: Եզակի հրամայականն ունի *ի, ա, ու* վերջավորություններ (էճի՛, խաղա՛, խասկըցո՛ւ): Արգելական հրամայականը Վանի բարբառում ձևավորվում է *մի* // *մը* արգելականով՝ *մէ՛ճնե, մը սօ՛վրե, մի՛ խաղա, մը խա՛սկըցուցե*: Հարկադրականի ձևերը, որոնք Վանի բարբառում ունեն նաև պարզ ապառնու իմաստ, կազմվում են *պիտի* մասնիկով՝ *պիտի սիրեմ, պիտի էրթամ*: Հ. Աճառյանի բերած բարբառային նմուշներում հանդիպում է նաև հետևյալ իրողությունը. դիմավոր բայաձևից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձև, օրինակ՝ *Կիմնա թէ փէսէն **ի կուկյա̈*** [54]:

Բարբառում հետադաս մի շարք կապեր ունեն նաև նախադաս կիրառություն (վէր կյըլխուտ, խե չամուռին, մէչ քաղաքյ)

---

[52] Լեզվաբանը կարծում է, որ այդ հավելումը կատարվում է ներկայի նմանությամբ (տե՛ս նշվ. աշխ., էջ 160):
[53] Տե՛ս նշվ. աշխ., էջ 170:
[54] Տե՛ս նշվ.աշխ., էջ 216:

## Բ.Վանի բարբառի դրսևորումները Կոտայքի մարզում

Վանի բարբառը Կոտայքի մարզում գործառում է Հրազդանի տարածաշրջանում՝ Լեռնանիստ գյուղում, Հրազդան քաղաքի Կաքավաձոր, Ջրառատ և Վանատուր թաղամասերում, որոնք նախկինում առանձին գյուղեր են եղել: Այս բնակավայրերի բնակիչների նախնիները գաղթել են Վանից, նահանգի և շրջակա այլ բնակավայրերից, նաև Խոյից, Մակուից, Արծափից, այլ վայրերից:

Հիշյալ չորս բնակավայրերի խոսվածքների համար ընդհանուր են Վանի բարբառի հնչյունական մի շարք էական հատկանիշներ: Այսպես, բոլոր խոսվածքներն ունեն երկբարբառային *ե, ո* հնչյուններ, միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ից առաջ շրթնային տարրի հավելում, *ե*-ից առաջ՝ *յ*-ի հավելում: Նման հավելումներ, Վանի բարբառի օրինաչափություններին համապատասխան, առկա են նաև երկվանկ բառերում, իսկ բազմավանկ բառերի սկզբում *ե, ո*-ի դիմաց առկա են *է*, *օ* ձայնավորներ: Փոխառյալ ու բնիկ շատ բառերում, նաև՝ համաձայն Աճառյանի օրենքի, խոսվածքներն ունեն քմայնացած *ա̈* ձայնավոր:

Լեռնանիստի խոսվածքն ունի նաև քմայնացած *ու* հնչյուն: Բառասկզբում, բառասկզբի խուլ բաղաձայններից հետո խոսվածքներում զգալի է *ա*-ի շրթնայնացումը[55]: Բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղման երևույթը առկա է բոլոր խոսվածքներում: Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի: Լեռնանիստի խոսվածքում առկա են *ե>ի, օ//ո>ու* անցման դեպքեր, *ոյ*-ի դիմաց *ո*-ի դրսևորումներ: Կաքավաձորի խոսվածքին ևս բնորոշ են *ե>ի* անցման դեպքերը:

---

[55] Ըստ Հ. Աճառյանի՝ Վանի բարբառի *ա*-ն շեշտակիր վանկում արտասանվում է փակ ձևով, ներկայացնում է հայերենի *ա* և *օ* ձայնավորների միջին աստիճանը (տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 14):

Բոլոր խոսվածքներին բնորոշ է բառասկզբի ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը: Կաքավաձորի, Ջրառատի, Վանատուրի խոսվածքներում բառասկզբում երբեմն հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ: Լեռնանիստի խոսվածքում բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր, երբեմն էլ՝ խուլեր, մյուս խոսվածքներում հանդիպում են միայն շնչեղ խուլեր: Բոլոր խոսվածքներն ունեն հետնալեզվային քմայնացած պայթականներ, ընդ որում՝ Լեռնանիստի և Վանատուրի խոսվածքներում այդ քմայնացումը հաճախ այնքան ուժգին է, որ հպականները վերածվում են հպաշփականների[56]: Լեռնանիստի, նաև Վանատուրի խոսվածքներում հետնալեզվային պայթականը բառամիջում ու բառավերջում *յ* է դառնում հաջորդող բաղաձայնից առաջ, *յ* է առկա *նք, նգ* խմբերի դիմաց բառավերջում կամ բաղաձայնից առաջ, հաճախ էլ անկախ դիրքից, *նգն, նկն* հնչյունախմբերի դիմաց առկա է *յն*: Բաղաձայնանախորդ դիրքերում համանման իրողություններ առկա են Կաքավաձորի և Ջրառատի խոսվածքներում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց շփականներ են արձանագրվել բոլոր խոսվածքներում: Բառասկզբի ձայնավորից առաջ *հ*-ի հավելումը հաճախադեպ է Լեռնանիստի, Վանատուրի խոսվածքներում, ավելի քիչ է հանդիպում Կաքավաձորի և Ջրառատի խոսվածքներում: Բոլոր խոսվածքներում հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում, օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ:*

Բոլոր խոսվածքներին բնորոշ է վերջնավանկային շեշտը:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են *եր, ներ* հոգնակերտների հետ նաև այլ մասնիկների առկայությունը (այդպիսիք ավելի բազմազան են Լեռնանիստի խոսվածքում), ձայնավորով ավարտվող հատուկ

---

[56] Ուսումնասիրողները այս հատկանիշը Վանի բարբառում չեն նկատել:

անձնանունների սեռականի ձևավորումը *յ*-ով[57], բացառական հոլովի *ց*-ով կազմությունը, ներգոյական հոլովի իմաստի՝ հայցական հոլովով կամ սեռականով ու *մեջ* կապով արտահայտումը, միայն *ն* հոդի առկայությունը և նրա սահմանափակ կիրառությունը, ի տարբերություն Վանի բարբառի՝ անորոշ հոդի նախադաս կիրառությունը: Որևէ խոսվածք հոգնակի թեք հոլովներում չունի * աց* կազմիչ: Ու հոլովումը, անկախ բառի ձևավորումից, որոշ տարածում ունի (ի տարբերություն Վանի բարբառի՝ նաև հոգնակի թվում) Լեռնանիստի և Ջրառատի խոսվածքներում: Այս երկու խոսվածքներում արձանագրվել է Ոջ հոլովման առկայություն: Հատուկ տեղանունների Ա հոլովումը տարածված է Լեռնանիստի, Ջրառատի, Վանատուրի խոսվածքներում: Լեռնանիստի և Ջրառատի խոսվածքներում անձնական դերանունների տրական հոլովաձևերում արձանագրվել են *ի*, *իկ* հավելվածավոր ձևեր, Կաքավաձորի և Վանատուրի խոսվածքներում՝ միայն *ի* հավելվածով ձևեր: Ջրառատի, Լեռնանիստի և Վանատուրի խոսվածքներում գործածվում են անձնական դերանունների տրականի կրճատ ձևեր (Ջրառատում՝ *քե, մե, ծե*, Լեռնանիստում՝ *քʲե, ծե*, Վանատուրում՝ *քե, մե*): Անձնական դերանվան երրորդ դեմքի ուղղականի *զ* նախդրով ձև ունեն Լեռնանիստի (զինքʲ) և Կաքավաձորի (զինք) խոսվածքները, որոնց հատուկ են նաև այս դերանվան տրականի *ուր*, *ուրӓնց* ձևերը: *Ով* դերանվան դիմաց Լեռնանիստը, Կաքավաձորը և Վանատուրը ունեն *վոն*, իսկ Ջրառատը՝ *վորը* ձևերը՝ ի տարբերություն Վանի *վով* ձևի:

Բոլոր խոսվածքներում ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը* մասնիկով: Կաքավաձորի և Վանատուրի խոսվածքներում հանդիպում են նաև անկատար դերբայով (*ում* վերջավորությամբ) կազմված ձևեր: Լեռնանիստի և Ջրառատի խոսվածքներում միավանկ բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *կու* մասնիկով: Լեռնանիստի խոսվածքում գործածական են այս բայերի՝ *ի* նախահավելվածով ձևեր (չեն իկʲա, չեմ

[57] Այս հատկանիշը Վանի բարբառում չի արձանագրվել:

իտա): Լեռնանիստի, Կաքավաձորի, նաև Վանատուրի խոսվածքներում վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն, Ջրառատում՝ *էր* վերջավորություն: Բոլոր խոսվածքներում հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն, Լեռնանիստում հանդիպում են նաև *ած* վերջավորությամբ ձևեր: Լեռնանիստում օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես, ի, ենք, էք, են*, մինչդեռ մյուս խոսվածքներում եզակի երրորդ դեմքում առկա է *ա* ձև: Երեք խոսվածքներում էական բայի անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք*//*ինք, իք*//*իք, ին*, իսկ Լեռնանիստի խոսվածքն ունի *էմ, էր, էր, էնք, էք, էն* ձևերը: Ե խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքը բոլոր խոսվածքներում սովորաբար անցոյական է[58]՝ ի տարբերություն Վանի բարբառի, որում այն սովորաբար ցոյական է: Այնուամենայնիվ, Լեռնանիստի խոսվածքում հանդիպում են նաև ցոյական հիմքի դրսևորումներ: Լեռնանիստի, Կաքավաձորի, Վանատուրի խոսվածքներում *գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կյաց, մաց*, իսկ Ջրառատի խոսվածքում՝ *կաց* //*կնաց, մնաց*: Բոլոր խոսվածքներում վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև (թել ին մանած = թել էին մանել): Ընդհանուր է նաև անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքում հավելական *մ*-ի գործածությունը (կուկ<sup>յ</sup>իմ /գալիս էի/, պիրիմ /բերեի/, նըստամ, չիմ թըխե): Անցյալ կատարյալը բոլոր խոսվածքներում ունի ներգործաձև և կրավորաձև խնարհումներ (պիրեց, նըստամ): Բոլոր խոսվածքներին բնորոշ է դիմավոր ձևերից առաջ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևի լրացուցիչ կիրառությունը՝ տրամաբանական շեշտ կրող բառն ընդգծելու համար (ինչ ա կասեն): Դիտարկվող միավորները *չ* բայական ածանց չունեն: Լեռնանիստի խոսվածքում պատճառական ածանցն է՝ *ուց* // *ցուց*, մյուսներում՝ *ցըն*: Բոլոր խոսվածքների որոշ ժամանակաձևերում պատճառական

[58] Այս բայերի անցյալի անցոյական հիմքը փաստորեն նույնանում է ներկայի հիմքի հետ:

բայերը հանդես են բերում Ու խոնարհիչ (պախկըվցո՛ւ, սօվըռցու): Լեռնանիստի, Կաքավաձորի խոսվածքներում գործածական է *կօ* հաստատական մասնիկը[59]: Այս երկու խոսվածքներում դիտվել է հետադաս կապի նախադաս կիրառություն:

Ինչ խոսք, դիտարկվող խոսվածքները չունեն Վանի բարբառում անցյալ դարի առաջին կեսում արձանագրված մի շարք էական հատկանիշներ, ինչպիսիք են հոգնակերտ որոշ մասնիկների գործածությունը (հʲտեր, քʲտեր, էստար, տար, վեր), սեռական հոլովի՝ որոշյալ հոդ ստանալը, հոգնակի թվում *աց* վերջավորության գործածությունը, անորոշ հոդի հետադաս կիրառությունը, ստացական հոդի վրա *ի* թարմատարի հավելումը, թուրքերենից փոխառյալ թվականների գործածությունը, դերանվան *ձի, ձիկ, զի, զիկ, վով* և այլ ձևերի կիրառությունը, անցյալի ցոյական հիմքը և այլն, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանց որոշ մասի բացակայությունը կարող է բացատրվել ժամանակի գործոնով, իսկ մյուս մասն էլ՝ շրջակա բարբառների ազդեցությամբ: Սակայն խոսվածքները ներկայացնում են շատ կարևոր հատկանիշների համակցություն, որով կարող է բնութագրվել միայն Վանի բարբառը: Մասնավորապես, նկատի ունենք հետևյալ հատկանիշները՝ երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ, բառասկզբի խլացած բաղաձայններից հետո քմայնացած ձայնավորի առկայություն, քմայնացած հետնալեզվային հպականների գործածություն, բաղաձայնանախորդ դիրքերում հետնալեզվային հպականների, *նք, նգ* խմբերի վերածում *յ*-ի, հինհայերենյան *h*-ի դիմաց բոլոր դիրքերում *խ*-ի առկայություն, բառասկզբում օտար բառերի *ղ*-ի դիմաց *կ*-ի գործածություն, միայն *ն* որոշիչ հոդի գործածություն, անձնական դերանունների տրականի կրճատ ձևերի առկայություն, Կը ճյուղի պատկանելություն, հարակատարի *ուկ* և վաղակատարի *իր* (էր) վերջավորությունների առկայություն և այլն: Այսպիսով, չնայած դիտարկվող խոսվածքները

---

[59] Հ. Աճառյանը արձանագրել է Վանի բարբառում *գյօ* (ահա, ահաւասիկ) մակբայի առկայությունը (տե՛ս նշվ. աշխ., էջ 199):

որոշ դեպքերում հեռացել են Վանի բարբառից, սակայն դրանք իրենց հիմնական հատկանիշներով, այնուամենայնիվ, Վանի բարբառի դրսևորումներ են, մանավանդ որ դիտարկվող խոսվածքների՝ Վանի հատկանիշներից տարբերությունների քանակը երկու տասնյակի չի հասնում Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման 100 հատկանիշների շրջանակում: Դիտարկվող միավորների մեջ, այնուամենայնիվ, առանձնանում է Լեռնանիստի խոսվածքը, որն ավելի հարազատորեն է պահպանել Վանի բարբառի հատկանիշները, իսկ մյուսները հանդես են բերում որոշ զանազանություններ՝ պայմանավորված տարբեր ազդեցություններով ու գործոններով: Բացի այդ, եթե Լեռնանիստում բնակչության խոսքը հիմնականում համասեռ է, ապա նկարագրված լեզվավիճակը մյուս բնակավայրերում բնակչության տարբեր շերտերին հավասար չափով հարազատ չէ:

Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի որոշ գյուղերի խոսվածքներում (Գեղադիր, Ջովաշեն, Կաթնաղբյուր, Ողջաբերդ), որոնց բնակիչների մեջ կան Վանի տարածաշրջանից գաղթածների սերունդներ, նույնպես արձանագրվել են Վանի բարբառին բնորոշ հատկանիշներ, սակայն դրանք այդ խոսվածքներում գերակշռող չեն, զուգորդվում են այլ բարբառների հատկանիշներով, շատ դեպքերում էլ արևմտյան բարբառներին բնորոշ ընդհանուր իրողություններ են:

# ԳԼՈՒԽ 1.2.

# ԽՈՅ-ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Ընդհանուր տեղեկություններ Խոյ-Մարաղայի բարբառի վերաբերյալ

Խոյ-Մարաղայի բարբառը պատկանում է հայ բարբառների Լիս ճյուղին, ունի երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ (պ, տ, կ, ծ, ճ – փ, թ, ք, ց, չ), ներկայացնում է արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի կամ հարավարևելյան բարբառախումբը:

Ք. Պատկանյանը Խոյի բարբառի տարածման շրջաններ է համարել Խոյը, Սալմաստը, նաև որոշ վայրեր Ղարաբաղում՝ Շուշիի շրջակայքում[60]: Ներկայում Խոյ-Մարաղայի բարբառի մեջ ընդգրկված խոսվածքները Հ. Աճառյանը ժամանակին խմբավորել է երկու տարբեր բարբառներում: Ըստ նրա՝ Խոյի բարբառն ընդգրկել է «ո՛չ միայն Խոյի, Սալմաստի և Մակուի գաւառները Պարսկաստանի մէջ, այլ և Ռուսաստանի մէջ Իգդիր և Նախիջևան»[61], իսկ Մարաղայի բարբառը «կը խօսուի Ուրմիոյ լճին երկու երեսները. արևելեան երեսը կը գտնուի Մարաղա քաղաքը, իսկ արևմտեան երեսը Ուրմիա քաղաքը՝ իր խումբ մը հայ գիւղերով, որոնցմէ մաս մը թրքախօս է»[62]: Սակայն հետագայում Աճառյանը Մարաղայի կազմում Ուրմիան այլևս չի հիշատակում[63], այն

---

[60] Տե՛ս К. **Патканов**, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869, էջ 74:
[61] **Հ. Աճառյան**, Հայ բարբառագիտություն, էջ 288:
[62] Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 281:
[63] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 356:

արդեն դիտարկվում է իբրև Խոյի բարբառի միավոր[64]: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Խոյի և շրջակա բնակավայրերի շատ բնակիչներ զանգվածաբար գաղթեցին Արևելյան Հայաստան: Ներկայում այս բարբառի խոսվածքները գործառում են Սիսիանի, Վայոց ձորի, Արտաշատի, Կոտայքի, Ապարանի, Էջմիածնի, Արցախի և այլ տարածաշրջաններում[65]:

Խոյ-Մարաղայի բարբառի կազմում Գ. Ջահուկյանն առանձնացնում է Մարաղա, Ուրմիա, Փայաջուկ, Խոյ միավորները[66]: Ընդհանրապես, հայ բարբառագիտության մեջ այս բարբառը ունեցել է տարատեսակ մեկնաբանություններ: Խոսելով Խոյի բարբառի մասին՝ Ք. Պատկանյանը նկատում է, որ այն շատ դեպքերում նման է Ղարաբաղի բարբառին, բայց ունի որոշ յուրահատկություններ. հակված է *ի*-ն դարձնելու *է*, ներկա ժամանակում արևելյան բարբառներին հատուկ *ում*-ի փոխարեն ունի *ս* (փխչես ըմ – փախչում եմ), ապառնին կազմում է *ական*-ով (թողլական չըմ – թողելու չեմ) և այլն[67]: Հ. Աճառյանը նախ Ել ճյուղում ընդգրկում է երեք բարբառ[68], այնուհետև՝ 5 բարբառ[69]. երկու դեպքում էլ այս ճյուղում առանձին ընդգրկված են Խոյի և Մարաղայի բարբառները: Լեզվաբանը նկատում է, որ Մարաղայի բարբառը շատ հարուստ է ձայնավորներով և երկբարբառներով, բավական հեռացած է հին հայերենի ձայնական օրենքներից, բարբառում մեծ տարածում ունի ձայնավորների ներդաշնակության օրենքը, շատ փոփոխված է բայի խոնարհումը, ներկայի բունը կազմվում է բայի անորոշից՝ նրան կցելով օժանդակ բայը (իւզէլ իմ), և այլն[70]: Աճառյանի հավաստմամբ՝ Ուրմիայի ենթաբարբառը Մարաղայի հետ

[64] Տե՛ս նշվ. աշխ., էջ 359:

[65] Տե՛ս **Մ. Ասատրյան**, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Ե., 1962, էջ 17, **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, էջ 342, 360:

[66] Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 135:

[67] Տե՛ս К. Патканов, նշվ. աշխ., էջ 74-75:

[68] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայ բարբառագիտություն, էջ 280-292:

[69] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 356-361:

[70] Տե՛ս նշվ. աշխ., էջ 356-357:

նույնն է, բայց ունի ինչ-ինչ տարբերություններ[71]: Անդրադառնալով Խոյի բարբառին՝ Աճառյանը գրում է, որ այն միջին դիրք է գրավում Վանի և Մարաղայի բարբառների միջև. «....իր քերականական կազմութիւնը նոյն է Մարաղայի բարբառին հետ, բայց ձայնաբանական օրէնքները Վանայ բարբառին նման են. ուրիշ խօսքով Խոյի բարբառը աւելի մօտիկ է գրաբար հայերէնին քան Մարաղան»[72]: Լեզվաբանը Խոյի բարբառի ներկայի *ս*-ով ձևերի առաջանալը բացատրում է *-ելիս* ձևից *լի* հատվածի մաշվելով և ընկնելով՝ *ասելիս եմ - ասելս եմ - ասէս եմ*[73]: Ա. Ղարիբյանը ճիշտ չի համարում արևելահայ բոլոր բարբառները Խոյի բարբառ անվանելը՝ նկատելով, որ դրանց մեջ «Ուրմիայի և Սալմաստի բարբառը պատկանում է ոչ թե «էլ» ճյուղին, ինչպես ընդունված է մինչև հիմա կոչել այն, այլ «Ս» ճյուղին: Այդ բարբառով խոսողներն անգամ սխալմամբ իրենց խոյեցիներ են կոչում: Ուրմիայի բարբառին պատկանում են Ուրմիայից, Սալմաստից, Բարանդուզից գաղթածների խոսվածքները»[74]: Ըստ լեզվաբանի՝ «Ընդհանուր առմամբ Ուրմիայի բարբառը, գտնվելով մի կողմից Խոյի բարբառի, մյուս կողմից Վանի բարբառի շրջապատում, իր լեզվական վիճակով ցուցահանում է իր կրած ազդեցությունները այդ երկու բարբառներից: Իր հնչյունական սիսիտեմով նա ավելի մոտ է Խոյի բարբառին. նրա բառապաշարն հիմնականում ամփոփում է իր մեջ և՛ Վանի, և՛ Խոյի բարբառների բառապաշարի հիմնական մասը»[75]: Այնուհետև նշվում է, որ Ուրմիայի բարբառն իր հնչյունական ընդհանուր վիճակով նման է արևելյան՝ Ղարաբաղի, Հադրութի, Խոյի, Վանի բարբառներին, սակայն հնչյունական համակարգի մասնավոր գործածությամբ յուրահատուկ է: Բարբառն ունի երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ, *ֆ*-ի փոխարեն գործածվում է *փ*: Բարբառում գերակշռում է Ի հոլովումը,

---

[71] Տե՛ս Հ. **Աճառյան**, Հայ բարբառագիտություն, էջ 284:
[72] Նշվ. աշխ.,, էջ 288:
[73] Տե՛ս Հ. **Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 259-260:
[74] Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 342:
[75] Նշվ. աշխ., էջ 342-343:

բացակայում է ներգոյական հոլովը: Անցյալի գաղափարն արտահայտելու համար «Լ» ճյուղի բարբառների պես գործածվում է «էր» մասնիկ-բառը, ներկայի խոնարհումը կատարվում է *ս*-ով ավարտվող դերբայով, սակայն եզակի երրորդ դեմքում հանդես է գալիս *լ*-ով դերբայ (կ՚իրէլ), որը համարում է «Լ» ճյուղի բարբառներից առնված ձև: Ուրմիայի բարբառի հատկանշական գիծ է համարում բայերի հոդառությունը (կանչիմդ – ես քեզ կանչեցի)[76]: Ի դեպ, ժամանակին Հ. Աճառյանը բայի հոդառություն արձանագրել է Մարաղայի բարբառում[77]: Ընդհանրապես, Ղարիբյանը գրում է, որ Ս ճյուղին պատկանող Ուրմիայի բարբառը միայն ներկայի կազմությամբ է նման այդ ճյուղի մյուս բարբառներին, իսկ մնացած հատկանիշներով նման է Լ ճյուղի բարբառներին և խստորեն տարբերվում է Ս ճյուղի բարբառներից[78]: Լ ճյուղում ընդգրկված Մարաղայի բարբառը, ըստ Ա. Ղարիբյանի, իր լեզվական վիճակով գտնվում է Վանի, Ուրմիայի, Խոյի և Ղարաբաղի բարբառների միջև: Մարաղայի բարբառի հիմնական հատկանիշներից է համարում ձայնավորների ներդաշնակությունը: Այս բարբառի պայթականները ևս ենթարկվել են բաղաձայնների առաջին տեղաշարժին: Բացակայում է *ֆ*-ն: Բարբառը սիրում է կրկնել բաղաձայն հնչյունները: Անվանական համակարգը, նաև դերանունների հոլովումը նման է Ուրմիայի բարբառին: Սահմանականի ներկան կազմում է անորոշ դերբայով, իսկ անցյալը կազմում է *էր* անփոփոխ մասնիկով, որն ընդհանուր է Ուրմիայի, Մարաղայի և Խոյի բարբառներում[79]: Ա. Գրիգորյանը, առաջարկելով Ել ճյուղը վերանվանել Լիս, մի քանի այլ բարբառների հետ այդ ճյուղում ընդգրկում է նաև Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառները և նշում, որ դրանցում տեղի է ունեցել անկատար դերբայի ամբողջական *լիս*

---

[76] Տե՛ս նշվ. աշխ., էջ 342-356:

[77] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայ բարբառագիտություն, էջ 284:

[78] Տե՛ս նշվ. աշխ., էջ 217:

[79] Տե՛ս նշվ. աշխ., էջ 360-368:

ձևի սղում[80]: Անդրադառնալով Ուրմիայի և Խոյի փոխհարաբերություններին՝ Մ. Ասատրյանը նշում է, որ և՛ հնչյունական, և՛ ձևաբանական տեսակետից դրանք լրիվ նույնական են[81]: Ըստ լեզվաբանի՝ «Փաստերը ցույց են տալիս, որ մենք գործ ունենք ոչ թե երկու տարբեր բարբառների հետ, այլ մի միասնական բարբառի երկու տարբերակների, ենթաբարբառների հետ»[82]: Մ. Ասատրյանը պնդում է, որ այդ երկուսը չեն կարող տարբեր ճյուղերի պատկանել, որովհետև ուղղակի դրանցից մեկը ներկայի դրականում սղում է *լիս*-ով դերբայի *լի* մասը (իւզէս էմ), իսկ մյուսը՝ *իս* մասը (իւզէլ էմ)[83]: Ի վերջո լեզվաբանը հանգում է այն եզրակացության, որ Խոյը և Ուրմիան «ունեն սոսկ հնչյունական առանձին տարբերություններ: Իսկ սոսկ հնչյունական տարբերություններով խոսվածքները առանձին բարբառներ համարվել չեն կարող»[84]: Սակայն Մ. Ասատրյանի մոտեցումը նույնը չէ Մարաղայի դեպքում. լեզվաբանն այն համարում է առանձին բարբառ: Ուրմիայի /Խոյի/ բարբառի և շրջակա բարբառների փոխհարաբերության մասին նա գրում է. «Պատմականորեն սահմանակից լինելով Վանի և Մարաղայի բարբառներին՝ Ուրմիայի /Խոյի/ բարբառը շատ կետերում շփման մեջ է մտնում դրանց հետ: Իր հնչյունական սիստեմով նա նման է Վանի բարբառին, իսկ քերականությամբ մոտ է Մարաղայի բարբառին»[85]: Ինչպես ներկայացված դիտարկումները, այնպես էլ բազմահատկանիշ դասակարգման վիճակագրական տվյալները[86] թույլ են տալիս ընդունելի համարել Գ. Ջահուկյանի մոտեցումը, համաձայն որի՝ Խոյը, Մարաղան և Ուրմիան մեկ բարբառի տարատեսակներ են: Խոյ-Մարաղայի

---

[80] Տե՛ս **Ա. Գրիգորյան**, *Հայ բարբառագիտության դասընթաց*, էջ 70-74:
[81] Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 11:
[82] Նշվ. աշխ., էջ 12:
[83] Տե՛ս նշվ. աշխ., էջ 14:
[84] Նշվ. աշխ., էջ 16:
[85] Նշվ. աշխ., էջ 17:
[86] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 62, 81, 99, 119, 135:

բարբառի մենագրական ուսումնասիրություններ են Հ. Աճառյանի «Քննություն Մարաղայի բարբառի»[87], Մ. Ասատրյանի «Ուրմիայի /Խոյի/ բարբառը»[88] աշխատությունները, ինչպես այլ, այնպես էլ այս բարբառի (ավելի ճիշտ՝ նրա խոսվածքների) մասին հանգամանալից տեղեկություններ է պարունակում Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի»[89] աշխատությունը: Հ. Աճառյանը հիշատակում է Խոյի բարբառով մի քանի գրվածքներ[90], մինչդեռ Մարաղայի բարբառով որևէ բնագիր նրան հայտնի չէ[91]:

Խոյ-Մարաղայի բարբառն ունի ինը ձայնավոր՝ *ա, ä, է, ը, ի, օ, ö, ու, իւ*[92]: Որոշ խոսվածքներ ունեն նաև կոշտ *ի:* Բարբառն ունի մեկ երկբարբառային հնչյուն՝ *ո* (ուօ): Քմայնացած *ä* ձայնավորը դրսևորվում է համաձայն Աճառյանի օրենքի, այսինքն՝ բառասկզբի՝ հինհայերենյան ձայնեղ հպականներին ու հպաշփականներին համապատասխանող խուլերից հետո (պäժընէլ, կʲäզäն, տäտäր, ծäխ, ճäնջըխէլ), ինչպես նաև այլ դիրքերում (վäխ, äրթäր, զäնգʲ): Համանման դիրքում հանդիպում են քմայնացած այլ հնչյուններ ևս՝ ö (բով>պöվ, պöպիկʲ, կʲöվäլ, ճöկʲէլ), *իւ* (բուրդ > պիւրթ, գունդ > կʲիւնդ, դուր > տիւր, ձուկն > ծիւկʲ, ջուր > ճիւր): Քմայնացած շրթնայիններ հանդիպում են այլ դիրքերում ևս (öլըրէլ, թöքʲ, göրöն, էրմիւնգʲ, թիւքʲ, նիւշ):

Խոյ-Մարաղայի բարբառում Մ. Ասատրյանը *ե* երկբարբառ չի արձանագրել, բայց նշել է, որ Ա. Ղարիբյանի վկայությամբ՝ Ուրմիայի բարբառում *է* և *ե* հնչյունները զանազանվում են

---

87 Հ. **Աճառյան**, Քննություն Մարաղայի բարբառի, Ե., 1926:
88 Ասատրյան Մ., նշվ. աշխ., , Ե., 1962:
89 Հ. **Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 1-5, 1952-1965:
90 Հ. **Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 359:
91 Տե՛ս Հ. **Աճառյան**, Հայ բարբառագիտություն, էջ 281:
92 Խոյ-Մարաղայի բարբառի ընդհանուր բնութագիրը ներկայացնում ենք հիմնականում ըստ Մ.Ասատրյանի «Ուրմիայի /Խոյի/ բարբառը» աշխատության:

իրարից[93]: Երկբարբառային *ռ* հնչյունը հանդիպում է շեշտակիր վանկում (ա̈վէլնորթ, կʲող, խընձոր), նաև այլ դիրքերում (խոնջան, թոնդիր, մորթել): Հինհայերենյան *ե, ռ*-ին միավանկ բառերի սկզբում համապատասխանում են *յէ,վո* կազմություններ (*յէզ, յէրք, յէռ, վոտ, վոսպ, վորթ*): Երկվանկ բառերի սկզբում նույնպես *ռ*-ի դիմաց առկա է *վո* (վոսկʲի, վոսկոռ, վորթի), մինչդեռ *ե*-ի դիմաց *յէ* առկա է *ղ, ռ* բաղաձայններից առաջ (յէղունգ, յէռալ, յէռսուն), իսկ *ր*-ից առաջ առկա է *է* (էրազ, էրկանք, էրինջ): Բազմավանկ բառերի սկզբում *ե, ռ*-ի դիմաց առկա են *է, օ* (էրէվալ, էրկʲըննալ, օղօղել, օղօրմէլ): Առկա են *ե*-ի դիմաց *ի* ձայնավորի գործածության դեպքեր (իրէս, իրէքʲ, շիրէփ, փիտէլ, քʲիրէլ):

Գրաբարյան երկբարբառների դիմաց բարբառն ունի պարզ ձայնավորներ, ինչպես՝ *էքʲի, էրէլ, էրկʲէն, կʲէղ, փէտ, էրնէկʲ, կորէկʲ, ալիւր, ծիւն, արուն, շուղ, խա̈յիր, ախպէրթոն, լոս, թոլ, ճիկոթ, կուս, կապուտ* և այլն: *Աւ*-ից առաջացած *օ*-ն չի նույնանում *ռ* (երկբարբառային) հնչման հետ:

Խոյ-Մարաղայի բարբառում գործառում են 35 բաղաձայններ (բ, պ, փ, գ, գʲ, կ, կʲ, ք, քʲ, դ, տ, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ, վ, ֆ, զ, ս, ժ, շ, ղ, ղ̂, խ, հʲ, հ, մ, ն, լ, ր, ռ, յ): Բարբառը բնութագրվում է բառասկզբի բաղաձայնական երկաստիճան համակարգով (հինհայերենյան ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց՝ խուլեր) և *գʲ, կʲ, քʲ, հʲ*-ի, նաև *ղ̂*-ի առկայությամբ: Որոշ խոսվածքներում, ըստ Մ. Աճառյանի, բացակայում է *ֆ* հնչյունը[94]: *Բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ բաղաձայններ բառասկզբում հանդիպում են նոր արևելյան, ինչպես նաև գրական փոխառություններում, գավառական բառերում (բա̈խտ, բէղ, բամփէլ, գʲա̈զա̈ր, գյօլ, գըռըշտէլ, դա̈ռդ, դիվան, դաղդըղուկ, ջըլիզ, ջա̈միւգʲ), իսկ բառամիջում ու բառավերջում՝ ռնգային ձայնորդներից հետո (ամբար, թումբ, կորընգʲա̈, ժա̈ռա̈նգʲ,

---

[93] Տե՛ս Մ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 25: Տե՛ս նաև **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 343:

[94] Տե՛ս Մ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 20:

կʲէրընդի, սանդուղ, կʲինդ, անձըռէվ, խընձոր, կʲինձ, պա̈նջա̈ր, տանջէլ, էրինջ): Այլ դեպքերում, որպես կանոն, հինհայերենյան *բ, գ, դ, ձ, ջ* բաղաձայնների դիմաց առկա են շնչեղ խուլեր (սըրփէլ, յէփ, թաքավոր, ծա̈քʲ, խորթէլ, պիւրթ, օթ, առցըկէլ, փորցէլ, օց, ա̈ռչին, աչառ, մէչ), երբեմն էլ՝ խուլեր (շա̈պա̈թ, տա̈րպին, ահակʲին, տա̈տա̈ր, տէրծիկʲ, վոճիլ, շըռճէլ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ* (խանէլ, խառնիս, պախէլ, շընախավոր, պա̈խ, մախ): Բառասկզբի *ղ*-ի դիմաց (ընդ որում՝ գավառական բառերում և փոխառյալ բառերում) բարբառն ունի կոկորդային պայթական *ղ̂* հնչյուն (ղ̂ըղի, ղ̂ըլավ, ղ̂ում, ղ̂ա̈րիբ, ղ̂ափաղ): Ըստ Մ. Ասատրյանի՝ այս հնչյունը «արտասանվում է լեզվի ամենաետին և վերին քիմքի ամենաետին մասի հետևանքով առաջացած փակվածքի պայթյունով»[95]: Բարբառի բառասկզբում *յ*-ն սովորաբար ընկած է (յաղթել > ախտէլ, յիշատակ > իշատակ, յիսուն > իցցուն, յղի > ըղի, յիստակել > ըստըկէլ, յոն > ունք, յօրանջել > օրօշկըտալ, յուզել > իւզէլ): Շեշտը վերջնավանկային է[96]:

Բարբառում դրսևորվում են թերևս հինհայերենյան շրջանից եկող որոշ արտաբերական օրինաչափություններ (ինչպես՝ *ո-օ* զույգի, *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում *խ*-ի դրսևորումները):

Խոյ-Մարաղայի բարբառում համակարգային բնույթ են կրում պատմական հնչյունափոխության այնպիսի իրողություններ, ինչպիսիք են երկբարբառների պարզեցումը, ձայնավորների անկումը բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում (առցըկէլ, խասկընալ, յէռսուն, օ̈լըրէլ, մօ̈լըրէլ), միավանկ բառերի սկզբում երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելումը (յէս, վոտ) և այլն: Մասնավոր բնույթ են կրում ձայնա-

---

[95] Նշվ. աշխ., էջ 49:

[96] Ճիշտ է, Մ. Ասատրյանը «Ուրմիայի/Խոյի/ բարբառը» աշխատության մեջ շեշտի մասին չի խոսում, սակայն հնչյունափոխությունների և կարագրություններից երևում է, որ բարբառում շեշտը վերջնավանկային է (տե՛ս նշվ. աշխ., էջ 70-71):

վորական (օրինակ՝ *ա>է*՝ արիւն > էրիւն, արմունկն > էրմինգʲ, *ե*>ö՝ երդումն > öրթիւմ, *ի>ը*՝ գիշեր > քըշէր, սպիտակ > սըվտäկʲ, հիւանդ > խըվանդ, *ու>օ*՝ գլուխ > կըլօխ, ուղեղ > օղօղ, ուղարկել > օրօխկէլ և այլն) և բաղաձայնական (*անկում*՝ ճäղäչ, նէս, ավատալ, պաճառ, ասված, ծըմä, ինէլ, քավոր, *հավելում*՝ իրիկʲ, փոնթ, սանդըռ, ավէլնորթ, առծէլիւ, տալվ, հըմմէն, *դրափոխություն*՝ ախշատէլ, վոխչար, ալնի, տäրտäկʲ, թըխտըմոր, վըլäլ նն) զանազան փոփոխություններ: Հնչաշղթայի ձևավորման գործող օրինաչափություններով են պայմանավորված բաղաձայնից առաջ *կ, գ, նգ > յ* (տախտակ > տախտըյնէր, փէթäգʲ > փէթäյնէր, կանգնել > կայնել, յէղունգ > յէղույնէր), *գ, ք, նք > հʲ* (ազանել > խահʲնէլ, օգնել > օհʲնէլ, աքլոր > äհʲլöր, տաքցուցել > տահʲցուցէլ, ապրանք > ապրահʲնէր, օրէնքʲ > օրէհʲնէր) անցումները, հպաշփականի վերածումը շփականի (իջանել > էշնէլ, աչք > աշկ, ճանաչել > ճաշնալ, հեծանել > խէզնէլ, ծածկել > ծասկէլ, անցանել > ըսնէլ), ռնգային ձայնորդներից հետո խուլերի ձայնեղացումը (ամպ > ամբ, ընկեր > ինգʲէր, թանկ > թանգ, ընտրել > ընդրէլ, բանտ > պանդ, ճենճ > ճէնջ, ճնճղուկ > ճընջուղ) և այլն:

Շեշտազրկման հետևանքով ձայնավորները հնչյունափոխվում են (պառվընալ, քամկի, ամըննէր, առծըթի, վոճըլոտ, մըսացու, տըռնէր, կարմընջի, կըրըյքʲէր, կօտըշնէր նն):

Խոյ-Մարաղայի բարբառում առավել մեծ գործածականություն ունեն *էր, նէր, քʲէր* հոգնակերտները: Միավանկ բառերի հոգնակին կազմվում է *էր* մասնիկով (աշկէր, պäխէր, թոռնէր // թոռէր): Բարբառի խոսվածքների մի մասում ձայնավորով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է *նէր* մասնիկով (առունէր), իսկ բաղաձայնով ավարտվողներինը՝ *քʲէր* մասնիկով (ճամբախքʲէր)[97]: Այլ խոսվածքներ, ինչպես վկայում է Մ. Ասատրյանը, գործածում են միայն *նէր* մասնիկը: Այսպիսով,

---

[97] Տե՛ս նշվ. աշխ., էջ 64:

խոսվածքների մի մասը կունենա *կարասնէր, ավազնէր, արօտնէր, պ՚ըլիսնէր, կ՚ըզըննէր* ձևերը, իսկ մյուս մասը՝ *կարասք՚էր, ավազք՚էր, արօտք՚էր, պ՚ըլիսք՚էր, կ՚ըզընք՚էր* ձևերը: Հոգնակիի կազմության ժամանակ բազմավանկ բառերը հաճախ հնչյունափոխվում են, սակայն հնչյունափոխված ձևերին զուգահեռ միշտ առկա են նաև չհնչյունափոխված ձևեր (ամըննէր // ամաննէր, ծ՚ըրնէր // ծ՚լիւրնէր, կըլխընէր // կըլօխնէր, կընգընէր // կընիյնէր // կընթընէր, վոսկըռնէր // վոսկոռնէր, առվընէր // առունէր, կատվընէր // կատունէր):

Սակավ դեպքերում գործածվում են նաև հոգնակերտ այլ մասնիկներ, ինչպես՝ *տանք* (գ՚ըմըշտանք, կ՚էտընտանք, ախպըրտանք, կըտորտանք), *րանք* (տէղրանք, կ՚էղրանք, կողրանք), *ստար* (էք՚ըստար), *վանք* (փըշըրվանք), *վէրք* (տըռվէրք՚), *անք* (ծիյանք, յէզնանք): Բարբառում անեզական գոյականներ են կազմում *էնք՚, օնք, անք* մասնիկները (Բ՚ըդ՚ըլէնք՚, մէրօնք, անէրանք):

Ի տարբերություն արևելյան այլ բարբառների՝ Խոյ-Մարաղայի բարբառը ներգոյական հոլով չունի: Բարբառում սեռական հոլովը որոշյալ հոդ չի ստանում, ուստի սեռականը և տրականը տարբերվում են որոշյալ հոդի գործածությամբ: Հայցական հոլովը նման է ուղղականին կամ տրականին: Այս հոլովը գործածվում է նաև ներգոյականի նշանակությամբ: Բացառական հոլովը ունենում է *է* (*ն*) վերջավորություն, առանձին դեպքերում՝ *մէ*(*ն*) վերջավորություն (ծառէն, խօրմէն): Հատուկ տեղանունների բացառականը կազմվում է *ա* վերջավորությամբ (Էրէվանա, Էշմիյազնա): Գործիական հոլովն ունենում է *օվ*, առանձին դեպքերում՝ *մօվ* վերջավորություն (ծառօվ, ախպօրմօվ):

Խոյ-Մարաղայի բարբառում Ի հոլովման են ենթարկվում բառերի բացարձակ մեծամասնությունը եզակի թվում, բոլոր բառերը հոգնակի թվում, սովորաբար ուրիշ հոլովումների ենթարկվող բառեր (ծառ, ծառի/ը, ծառէ, ծառօվ, ծառնէր, ծառնէրի/ը, ծառնէրէ, ծառնէրօվ): Ընդ որում՝ խոսվածքների մի

մասում սեռականի *ի* վերջավորության դիմաց առկա է շեշտակիր *ը* (վարժըպէտը՛ թըխտէրը՝ ուսուցչի գրքերը): Ու//Ու հոլովման են ենթարկվում *ի* ձայնավորով ավարտվող բազմավանկ բառերը (խընամու, կʲինիւ), անորոշ դերբայը (աղալու), կենդանիների որոշ անուններ (էծիւ, առչու, կʲէլիւ, կօվու ևն), այլ բառեր (տիրու, խարսու, ծօվու ևն): Վան կամ Վա հոլովման ենթարկվում են ժամանակի անունները (օր, օրվան, օրէ/օրվընէ, օրօվ, օրէր, օրէրի, օրէրէ, օրէրօվ): Ան հոլովման բառերը հիմնականում բառավերջի *ն*-ն կորցրածներն են (պէռան, կʲմառան, տըռան, յէզան, թոռան, խիման ևն), նաև այլ բառեր (լըծան, ճընջըղան): Ո հոլովումն ընդգրկում է *ախպէր, խէր, մէր* և դրանցով ավարտվող բաղադրյալ բառերը (խէր, խօր, խօրէն//խօրմէն, խօրօվ//խօրմօվ): Ոջ հոլովման ենթարկվում են ազգակցություն ցույց տվող բառեր (անէրոչ, ինգʲէրոչ, քավորոչ, տիրոչ, քʲրոչ): Ց հոլովման ենթարկվում են անեզական բառերը (քավորանք, քավորանց, քավորանցէն // քավորաամէն, քավորանցօվ // քավորաամօվ):

Խոյ-Մարաղայի բարբառում գործածական են *ը* և *ն* որոշիչ հոդերը: Բոլոր հոլովները, բացի սեռականը, որոշիչ հոդ կարող են ստանալ: Անորոշ *մէ* հոդն ունի նախադաս կիրառություն (մէ մառթ, մէ օր):

Ածականի բաղդատականը դրսևորվում է տարբեր միջոցներով, ինչպես՝ *Էտ ախչիկʲը էն ախչըկէն խօրօտ ի. Էտ ախչիկʲը էն ախչըկէն ղըհա//ավէլի խօրօտ ի:* Գերադրական աստիճանը ձևավորվում է *հըմընէն* կամ *հըմընը* բառերով՝ *Էտ ախչիկʲը հըմընէն խօրօտ ի// հըմընը խօրօտն ի:*

Բարբառում տասնավորները միավորների հետ կապակցվում են *ը*-ով (տասնըմէկʲ, քըսանըչորս, իցցունըվէց, օխտանասունըմէկʲ, քառսունէրկու//քառսունըէրկու): Բարբառը դասական թվականներ չունի: Բաշխական թվականների իմաստ արտահայտվում է քանակականների կրկնությամբ (մէյ-մէկʲ, էրկու-էրկու):

Խոյ-Մարաղայի բարբառի անձնական դերանուններն են՝ *յէս, տիւ, զինք'ը,* սրանց հոգնակիներն են՝ *մէնք', տիւք', զինք'էրը*: *Յես* դերանունը տրական հոլովում ունի *իմը, ընձի//ընձը, ընձիկ'*, հոգնակի թվում՝ *մէրը, մէզի/մէզը, մէզիկ'* ձևերը: Բացառականի ձևերն են՝ *իմէն, ընձըմէն, ընձըմանց* և *մէրէն, մէզըմէն, մէզըմանց:* Գործիականի ձևերն են՝ *իմօվ, ընձըմօվ* և *մէրօվ, մէզըմօվ*: *Տիւ* դերանվան տրականի ձևերն են՝ *ք'ոնը, ք'էզի //ք'էզը, ք'էզիկ'* և *ծէրը, ծէզի // ծէզը, ծէզիկ'*, բացառականի ձևերն են՝ *ք'ոնէն, ք'էզըմէն, ք'էզըմանց* և *ծէրէն, ծէզըմէն, ծէզըմանց*, գործիականի ձևերը՝ *ք'ոնօվ, ք'էզըմօվ* և *ծէրօվ, ծէզըմօվ*: *Զինք'ը* դերանվան ձևերն են՝ *իւր, իւրը, իւրէն//իւրմէն, իւրօվ//իւրմօվ* և *զինք'էրը, իւրէնց, իւրէնցը, իւրէնցէն //իւրէսմէն, իւրէնցօվ, իւրէսմօվ:*

Ցուցական դերանուններն ունեն երկշարք համակարգ՝ *էտ, էտիկ'* (այդ) և *էն, էնիկ'* (այն), ընդ որում՝ *էտ* դերանվամբ է արտահայտվում նաև *այս* դերանվան իմաստը: Սրանց սեռականի ձևերն են՝ *տա̈ր* և *դա̈ր*, տրականինը՝ *տա̈րը, տա̈րիկ'ը* և *դա̈րը, դա̈րիկ'ը*, հայցականինը՝ *էտ, էտիկ', տա̈րը, տա̈րիկ'ը* և *էն, էնիկ', դա̈րը, դա̈րիկ'ը*, բացառականինը՝ *տա̈րէն, տա̈րմէն, տա̈րիկ'էն, տա̈րիյմէն* և *դա̈րէն, դա̈րմէն, դա̈րիկ'էն, դա̈րիյմէն*, գործիականինը՝ *տա̈րօվ, տա̈րմօվ, տա̈րիկ'օվ, տա̈րիյմօվ* և *դա̈րօվ, դա̈րմօվ, դա̈րիկ'օվ, դա̈րիյմօվ:* Սրանց հոգնակիի ձևերն են՝ ուղղ. *տա̈նք'//տա̈նք'իկ*, սեռ. *տա̈նց*, տր. *տա̈նցը*, հյց. *տա̈նք'//տա̈նք'իկ, տա̈նցը*, բց. *տա̈նցէն // տա̈սմէն*, գործ. *տա̈նցօվ, տա̈սմօվ* և ուղղ. *դա̈նք' // դա̈նք'իկ*, սեռ. *դա̈նց*, տր. *դա̈նցը*, հյց. *դա̈նք' // դա̈նք'իկ, դա̈նցը*, բց. *դա̈նցէն // դա̈սմէն*, գործ. *դա̈նցօվ, դա̈սմօվ:* Ստացական դերանունները անձնական դերանունների սեռական հոլովաձևերն են (իմ, ք'ո, մէր, ծէր, իւր, իւրէնց, տա̈ր, դա̈ր, տա̈նց, դա̈նց), որոնք իրենց հերթին հոլովվում են (իմը // իմինը, իմի // իմընի, իմին // իմընին, իմէն // իմընէն, իմօվ // իմընօվ, իմօնքը // իմօնքինը, իմօնքի // իմօնքինի, իմօնքին // իմօնքինին, իմօնքէն // իմօնքէնէն, իմօնքօվ // իմօնքի-

նօվ և այլն): Ստացական դերանուններից հետո գոյականը ստացական հոդ չի ստանում (իմ տուն): Իբրև անձերին վերաբերող հարցահարաբերական դերանուն հանդես է գալիս *վո̈վ* ձևը՝ *վիր, վիրը, վիրէն // վիրմէն, վիրօվ // վիրմօվ* հոլովաձևերով: Բարբառում գործառող դերանվան մյուս ձևերից են. հարաբերական՝ *ինչ, վո̈ր, վո̈վ վոր, վո̈րը վոր, իշ վոր*, հարցական՝ *իշթո̈ր, վո̈րտէ, քʸո̈նի, դոր, դորէն*, որոշյալ՝ *հըմմէն, հո̈րը, հո̈ր մէկʸը*, անորոշ՝ *մէկʸ, իւրիշ* և այլն:

Բարբառի Ե խոնարհման բայերում հինհայերենյան *ան* ածանցի դիմաց առկա է *ն* ածանց (ազանել > խահʸնէլ, անցանել < ըննէլ, հեծանել > խէզնէլ, պրծանել > պըռզնէլ): Ա խոնարհման բայերում *ան* ածանցի դրսևորումները հաճախադեպ են (թանգանալ, խէխճանալ, կըշտանալ, խորթանալ), բայց *ան*-ի դիմաց քիչ չէ նաև *ն*-ի գործածությունը (թօլնալ, ծառվընալ, խօվնալ): Բացակայում է *չ* բայածանցը (թըռնէլ, փախնէլ), *էն* ածանցով հանդիպել է *վո̈խէնալ* բայը: Պատճառական բայերը Խոյ-Մարաղայի բարբառում կազմվում են՝ բայահիմքին ավելացնելով *ցուցէլ // ցիւցէլ* (ընցուցէլ, ծախկէցիւցէլ) կամ *ուցէլ* (խաաուցէլ, մէռուցէլ) մասնիկները: Պատճառական բայերի եզակի հրամայականում դրսևորվում է Ու//Իւ խոնարհիչ (նըստէցի՛ւ, խաաո՛ւ): Կրավորական *վ* ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են կրավորաձև՝ *ամ, ար, ավ, անք, աք, ան* վերջավորություններով: Բարբառի բազմապատկական հիմնական ածանցն է *ոտ* (ժօղըռտէլ, կապըռտէլ, քանդըռտէլ):

Խոյ-Մարաղայի բարբառում բայն ունի երկու խոնարհում՝ Ա և Ե: Անորոշ դերբայն ունի *էլ, ալ* վերջավորություններ, հոլովվելիս ենթարկվում է Ու//Իւ հոլովման (աղալ, աղալու, աղալէն, աղալօվ, վո̈զնէլ, վո̈զնէլիւ, վո̈զնէլէն, վո̈զնէլօվ): Անկատար դերբայն ունի երկու տարբերակ՝ *ս* և *ի//ը* կազմիչներով: Առաջին ձևը կազմվում է անորոշից՝ *լ>ս* փոփոխությամբ (կʸիրէլ > կʸիրէս՝ *գրում*, մընալ > մընաս՝ *մնում*), իսկ երկրորդ ձևը կազմվում է անորոշի վրա *ի*

(որոշ խոսվածքներում՝ *ը*) ավելացնելով (էփէլ > էփէլի/ը՝ *եփում*, թըռնէլ > թըռնէլի//թըռնէլը՝ *թռչում*)։ Որոշ խոսվածքներում անորոշի վրա այդ հավելումը չկա, և անորոշ ու անկատար դերբայները նույն ձևն ունեն (կʲիրէլ՝ *գրել* և *գրում*)։ Նկատվել է, որ ժխտական խոնարհման դեպքում հանդես է գալիս *ի* //*ը* հավելում ունեցող ձևը՝ հաջորդելով օժանդակ բային[98]։ Ապառնի դերբայը Խոյ-Մրաղայի բարբառում ունի *ու* // *իւ* վերջավորություն, որն ավելանում է անորոշ դերբայի վրա, ընդ որում՝ Ա խոնարհման բայերը ստանում են *ու* (իմանալու, խաղալու), իսկ Ե խոնարհման բայերը՝ *իւ* (ասէլիւ, կʲիրէլիւ), բայց նաև՝ *էթա̈լիւ, կյö̈վա̈լիւ, լըվա̈լիւ։* Հարակատար դերբայն ունի *ած* և *ուկ* վերջավորություններ (փախած, ճա̈ռթըվուկ), ընդ որում՝ նկատվել է, որ *ած* մասնիկով ձևերն ավելի տարածված են[99]։ Վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն (կʲիրիր, ճառթիր), ընդ որում՝ շրջուն շարադասության դեպքում *ր*-ն ընկնում է (կʲիրի, ճա̈ռթի)։ Ենթակայական դերբայի վերջավորությունն է *օղ* (պէրօղ, ավատացօղ)։ Ժխտական դերբայը ունի *ի, ա* վերջավորություններ՝ (չեմ) *զա̈րկʲի*, (չեմ) *կʲա̈ռթա։* Որոշ խոսվածքներում *ի*-ի դիմաց առկա է *ը*՝ *զա̈րկʲը։*

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *էմ, էս*, *ի* (որոշ խոսվածքներում՝ *ը*), *էնքʲ, էքʲ, էն*։ Անցյալի ձևերը կազմվում են ներկայի ձևերից՝ ավելացնելով *էր* մասնիկը՝ *էմ էր, էս էր*, *էր*, *էնքʲ էր*, *էքʲ էր*, *էն էր*։

Բարբառում ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են անկատար դերբայով և օժանդակ բայի ձևերով (*ներկա*՝ կʲիրէս եմ, կʲիրէս էս, կʲիրէլի//ը, կʲիրէս էնքʲ, կʲիրէս էքʲ, կʲիրէս էն, *անցյալ*՝ կʲիրէս եմ էր, կʲիրէս էս էր, կʲիրէս էր, կʲիրէս էնքʲ էր, կʲիրէս էքʲ էր, կʲիրէս էն էր)։

[98] Տե՛ս նշվ. աշխ., էջ 99։

[99] Մ. Ասատրյանի կարծիքով՝ բարբառում հարակատար դերբայը սկզբնապես կազմվել է միայն *ուկ* վերջավորությամբ, իսկ *ած*-ով կազմվող ձևը փոխառություն է գրականից (տե՛ս նշվ. աշխ., էջ 102)։

Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կազմվում է ոչ ցոյական հիմքով՝ *կյիրիմ, կյիրիր, կյիրէց, կյիրինք, կյիրիք, կյիրին:* Այս խմբի չեզոք սեռի բայերը անցյալ կատարյալում ունենում են կրավորաձև վերջավորություններ (քյընամ, քյընար, քյընավ, քյընանք, քյնաք, քյընան): Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում առկա է *մ*-ի հավելում (կյիրիմ, քյընամ): Ենթադրական եղանակի ձևերը կազմվում են *կը* եղանակիչով (կըկյառթամ), հարկադրականինը՝ *տի* եղանակիչով (տի կյառթամ): Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների անցյալի ապառնիները նույնպես կազմվում են ապառնու ձևերից՝ *էր* մասնիկով (կյիրէմ - կյիրէմ էր, կըկյիրէմ – կըկյիրէմ էր, տի կյիրէմ – տի կյիրէմ էր):

Եզակի հրամայականն ունի *ի//ը*, *ա*, *ու* վերջավորություններ (կյիրի՛//ը՛, կյառթա՛, խաաո՛ւ): Բաղադրյալ ժամանակաձևերի ժխտականը կազմվում է օժանդակ բայի ժխտականի ձևով, որը դրվում է դերբայից առաջ (նըստէս էմ > չէմ նըստէլի/ը, նըստէս էմ էր > չէմ էր նըստէլի/ը, նըստիր էմ > չէմ նըստի/ը, նըստիր էմ էր > չէմ էր նըստի/ը): Արգելական հրամայականը Խոյ-Մարաղայի բարբառում ձևավորվում է *մի՛* մասնիկով, որն ունի նախադաս կիրառություն՝ *մի՛ կյիրի, մի՛ կյիրէք, մի՛ մընա, մի՛ մընացէք:*

*Գալ* բայի դիմաց առկա է *իկյալ* տարբերակ, որի անկատար դերբայի ձևերն են՝ *իկյա//իկյալի/ը*, հետաքրքրական են նաև հրամայականի ձևերը՝ *յառ, յառէք: Անկանել* բայի դիմաց բարբառն ունի *ինէլ* ձևը, *ելանել* բայի դիմաց՝ *ըլէլ* ձևը, *իջանել* բայի դիմաց՝ *էջնէլ* ձևը և այլն:

## Բ. Խոյ-Մարաղայի բարբառի դրսևորումները Կոտայքի մարզում

Կոտայքի մարզում Խոյ-Մարաղայի բարբառն են ներկայացնում Աբովյանի տարածաշրջանի Արամուս, Ջրաղբյուր, Մայակովսկի և Նաիրիի տարածաշրջանի Զովունի գյուղերի խոսվածքները: Արամուսցիների նախնիները եկել են Խոյի գավառից, Ջրաղբյուրի և Զովունիի բնակիչների նախնիները՝ Խոյից, Սալմաստից և Ալաշկերտից, իսկ Մայակովսկիի բնակիչների նախնիները գաղթել են Սալմաստի գավառից:

Խոսվածքները տարբերություններ են հանդես բերում ըստ երկբարբառային հնչյունների առկայության: Այսպես, Զովունիի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ[100], Արամուսի խոսվածքում նման հնչյուններ ավելի սակավ են հանդիպում, Ջրաղբյուրի խոսվածքն ունի միայն երկբարբառային *ո* հնչյուն, իսկ Մայակովսկիի խոսվածքում դրսևորվում է միայն երկբարբառային *ե* հնչյուն: Բոլոր խոսվածքների միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ից և *ո*-ից առաջ առկա է համապատասխանաբար *յ*-ի և *վ*-ի հավելում՝ ձայնավորների տարբերություններով, ինչպես՝ Զովունիում ՝ *յե* և *վո*, Արամուսում՝ *յէ* և *վօ*, Ջրաղբյուրում՝ *յէ* և *վո,* Մայակովսկիում՝ *յե* և *վօ*: Ջրաղբյուրում *վո* է առկա նաև երկվանկ բառերի սկզբի *ո*-ի դիմաց: Բոլոր խոսվածքներում բազմավանկ բառերի սկզբում հիշյալ միավորների դիմաց առկա են համապատասխանաբար *է* և *օ:* Քմայնացած *ա̈* ձայնավոր հանդիպում է ինչպես խլացած ձայներից հետո, այնպես էլ այլ դիրքերում, փոխառյալ բառերում: Ջրաղբյուրի խոսվածքում հանդիպում են նաև քմայնացած *ու* և *օ* ձայնավորներ, Արամուսի խոսվածքում՝ քմայնացած *ու:* Խոսվածքներին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը:

---

[100] Հնարավոր է, որ այս հատկանիշը Մշո բարբառի ազդեցության արդյունք է:

Բառավերջի ա-ն ավելացող մասնիկներից առաջ Զովունիի խոսվածքում կարող է պահպանվել կամ դառնալ *է*, իսկ մյուս խոսվածքներում որպես կանոն չի հնչյունափոխվում: Ձորաղբյուրի խոսվածքում նախնական *ոյ* երկբարբառի դիմաց միավանկ բառերում երբեմն առկա է *ո* կամ քմայնացած *օ: Ութիւն* ածանցը խոսվածքում դրսևորվում է *թոն* (ըթոն) ձևով: Բոլոր խոսվածքները բառասկզբի հինհայերենյան ձայնեղների դիմաց ունեն խուլեր: Զովունիի, Մայակովսկիի խոսվածքներում բառասկզբում երբեմն հանդիպում են շնչեղ ձայնեղներ: Բոլոր խոսվածքներում բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց առկա են շնչեղներ, խուլերի դիմաց՝ խուլեր: Զովունիի խոսվածքում բառամիջում ու բառավերջում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ: Բոլոր խոսվածքներն ունեն քմայնացած հետնալեզվային հպականներ: Նախաբաղաձայնական դիրքերում հետնալեզվային հպականների, *նգ, նք* հնչյունակապակցությունների դիմաց առկա է *յ:* Ձորաղբյուրի խոսվածքում հետնալեզվային հպականի դիմաց արձանագրվել է նաև *$յ^{h}$* հնչյուն: Արամուսի և Մայակովսկիի խոսվածքներում նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց երբեմն հանդիպում են շփականներ, Զովունիի և Ձորաղբյուրի խոսվածքներում երևույթն ավելի մեծ տարածում ունի: *Տն* խմբի դիմաց *նն* է հանդիպում Զովունիի և Ձորաղբյուրի խոսվածքներում, վերջինում երբեմն հանդիպում է միայն *ն* (խրտնել > խըռնէլ): Բառասկզբի ձայնավորներից առաջ հավելական շունչը հազվադեպ է հանդիպում Արամուսի, Ձորաղբյուրի և Մայակովսկիի խոսվածքներում, որոշ դեպքերում դրսևորվում է Զովունիի խոսվածքում: Բառի բոլոր դիրքերում հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է հանդես գալիս բոլոր խոսվածքներում: Ձորաղբյուրի խոսվածքում երբեմն հավելական *հ*-ի դիմաց էլ է հանդիպում *խ* (խйլիվոր, խարփել): Արամուսի, Զովունիի և Ձորաղբյուրի խոսվածքները օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց ունեն *կ,* իսկ Մայակովսկիի խոսվածքը՝ *ղ* կամ *կ̂:* Բոլոր խոսվածքներում շեշտը վերջնավանկային է:

Դիտարկվող խոսվածքները աչքի չեն ընկնում հոգնակերտ մասնիկների բազմազանությամբ: Ընդհանուրհայերենյան *եր, ներ, ք* մասնիկներից բացի՝ խոսվածքներում գործառում են մեկ-երկու այլ հոգնակերտներ (Ձորաղբյուրի խոսվածքն ունի նաև *անք, քանք* մասնիկներ՝ *ծիյանք, կ՚էղրանք,* Զովունիի խոսվածքը՝ *անք, էրք* մասնիկներ՝ *ծիյանք, տըղէրք*): Զովունիի խոսվածքում դիտվել է հոգնակերտների կրկնակի գործածություն՝ *տըղէյներ:* Քիչ են նաև հոլովական յուրահատկությունները: Արամուսի և Զովունիի խոսվածքներում նկատելի են Ա վերջադրական հոլովման որոշ դրսևորումներ, Ձորաղբյուրում նկատելի է Ո ներդրական հոլովման ավելի լայն ընդգրկում: Զովունիում ձայնավորով ավարտվող բառերի սեռականը կարող է ձևավորվել *յ*-ով, Արամուսի, Մայակովսկիի և Զովունիի խոսվածքներում բացառականն ունենում է ինչպես *է*-ով, այնպես էլ *ց*-ով կազմություններ: Առանձնանում է Ձորաղբյուրի խոսվածքը, որում բացառականն ունի միայն *է*-ով վերջավորություն, ազգակցություն նշանակող որոշ բառերի դեպքում՝ *մէն* վերջավորություն (խօրմէն, մօրմէն, ախպօրմէն): Բոլոր խոսվածքներում ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռականով և *մեջ* կապով: Որոշյալ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով: Անորոշ հոդը նախադաս է: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի //ք՚եզի //ք՚էզի //քէզի, մեզի //մէզի, ծեզի //ծէզի*: Ձորաղբյուրի խոսվածքում դիտվել են անձնական դերանունների տրական հոլովի *իմը*, *ք՚օնը*, *մէրը*, *ծէրը* (ինձ, քեզ, մեզ, ձեզ) ձևերը: Մայակովսկիի խոսվածքում *ով* դերանվան դիմաց առկա են *օվ, վօր* ձևերը՝ սեռականի և տրականի *ում, ումը* ձևերով, Արամուսի և Ձորաղբյուրի խոսվածքներում առկա է *վա̈վ* ձևը՝ սեռականի և տրականի *վիր*, *վիրը* ձևերով, Զովունիի խոսվածքում գործածվում է *վորը* ձևը՝ սեռականի և տրականի *վիր, վիրը* ձևերով: Ցուցական դերանունները հիմնականում հանդես են բերում երկշարք համակարգ, ինչպես՝ Ձրղբ. *էտ* (այս, այդ), *էն, էտի, էնի, էտան, էնան,* Արմս. *էտ,*

*էն, էտի, էնի:* Դերանվանական թեքված ձևերով որոշակի ընդհանրություններ ունեն Մայակովսկին և Ջրաղբյուրը (Մյկվս. *դյ̈որը* /նրան/, *տյ̈որ* /դրա/, *տյ̈որը* /դրան/, Ջրղբ. *դյ̈որ, դյ̈ոնք, տյ̈ոնք, տյ̈որ, տյ̈որէն, դյ̈որէն, տյ̈ոնցը, դյ̈ոնցը*), Զովունին և Արամուսը (Զվն. *ըտանք* /դրանք/, ընդյ̈ոնցէն, ըտյ̈որ, ըտյ̈որը, ընդյ̈որ /նրա/, Արմս. ըտյ̈ոնք, ընդյ̈ոնք, ըտյ̈ոնց, ըտյ̈որը) և այլն:

Մայակովսկիի և Ջրաղբյուրի խոսվածքներում ներկա (նաև անցյալ անկատար) ժամանակաձևը կազմվում է *ս*-ով ավարտվող անկատար դերբայով (իկյաս էնք, էթաս էնք), բացառություն է եզակի երրորդ դեմքը. այս դեպքում անկատարն ավարտվում է *լ*-ով (իկյ̈ալ ի, մընալ ի): Երբ օժանդակ բայը նախորդում է դերբային, հանդես է գալիս *լ*-ով ավարտվող անկատար, որին կարող է ավելանալ նաև *ի* մասնիկը (չեմ նյ̈ալի, ինչ ա իկալի, չէր հավատալ, չէմ ուզէլ): Անկատարի *լ*-ով ձևը կարող է արտահայտել ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի իմաստ առանց օժանդակ բայի (ասէլ կամ ասէլի /ասում է/): Արամուսի և Զովունիի խոսվածքներում ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *լ*-ով ավարտվող անկատար դերբայով (իկյ̈ալ էմ, սիրէլ էմ), իսկ օժանդակ բային հաջորդելու պարագայում դերբայն ստանում է *ի* հավելված (գոռծ էր անէլի, չէմ թըխէլի): Արամուսի խոսվածքում *ի*-ի հավելում կարող է և չլինել (չէմ մընալ): Բոլոր խոսվածքներում վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն: Օժանդակ բային հաջորդելու պարագայում այդ վերջավորության *ր*-ն ընկնում է, և վաղակատարը Մայակովսկիի և Զովունիի խոսվածքներում վերջավորվում է *ե*-ով (էկե, նըստե), Արամուսում՝ *է*-ով (թըխէ), իսկ Ջրաղբյուրում՝ *ի*-ով (կյիրի): Մայակովսկիի և Արամուսի խոսվածքներում վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստը կարող է արտահայտվել միայն դերբայով՝ *նըստե, ամուսնացէ:* Հարակատար դերբայը խոսվածքներում ունի *ած* վերջավորություն: Մայակովսկիի խոսվածքում էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես//իս, ի//ա, էնք, էք, էն//են*, անցյալի

ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*, հանդիպել է նաև անցյալի վերլուծական ձևի կիրառություն (չէս էր կըպնէլի): Զովունիի խոսվածքի համապատասխան ձևերն են՝ *եմ, ես, ի, ենք, էք, են* և *իմ, իր, էր, ինք, իք, ին*: Զորաղբյուրի և Արամուսի խոսվածքներում ներկայի ձևերն են՝ *էմ, էս, ի, էնքʲ, էքʲ, էն*, իսկ անցյալի ձևերը բաղադրյալ են՝ *էմ էր, էս էր, էր, էնքʲ էր, էքʲ էր, էն էր:* Ընդհանրապես, վերջին երկու խոսվածքներում անցյալի բոլոր ձևերը, բացի անցյալ կատարյալը, ունեն վերլուծական կազմություն՝ ներկայի կամ ապառնու ձևերի և *էր* բառ-մասնիկի հարադրությամբ (պէրէլ էմ էր, չէն էր ասէլ, ունէմ էր, ժօղնըվէնքʲ էր, կըխըմէնքʲ էր, մընաս էմ էր, կʲիրիր էմ էր, կըտի կʲառթամ էր): Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքը բոլոր խոսվածքներում ունենում է *մ*-ի հավելում (էկամ, ասիմ): Զովունիի խոսվածքում *մ* հավելված ունեն անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքերը ընդհանրապես (իմ /էի/, կառթիմ /կարդայի/, պըտի տանիմ /պիտի տանեի/): Բոլոր խոսվածքներում Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցոյական հիմքից: Զովունիի խոսվածքում հանդիպում են նման բայերի՝ ցոյական հիմքով կառույցներ ևս: Բոլոր խոսվածքներում անցյալ կատարյալն ունենում է ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (վօրօշիմ, սիրիր, պըսագվամ, նըստար):

Մայակովսկիի և Զովունիի խոսվածքներում պատճառական ածանցն է՝ *ցըն*, Զովունիում հանդիպել է նաև *ցըց:* Արամուսի և Զորաղբյուրի խոսվածքներում պատճառական ածանցն է *ըց* //*ցըց:* Մայակովսկիի խոսվածքում հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի* // *պըդի*, Զովունիի խոսվածքում՝ *պըտի*, Արամուսի խոսվածքում՝ *պըտի* կամ *պըտü*, իսկ Զորաղբյուրի խոսվածքում՝ *կըտի:*

Այսպիսով, միշտ չէ, որ դիտարկվող խոսվածքներն ունեն նույնական հատկանիշներ: Նրանց ընդհանրությունները ավելի շատ են. դրանք շատ դեպքերում ներկայացնում են Խոյ-Մարաղայի բարբառը բնութագրող լեզվական կարևոր իրողություններ,

ինչպիսիք են, օրինակ, միավանկ բառերի սկզբում *յ*-ի և *վ*-ի հավելումը, քմայնացած *ա̈*-ի առկայությունը, բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, ավելացող մասնիկից առաջ բառավերջի *ա*-ի պահպանումը, բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը, հետնալեզվային քմայնացած հպականների գործածությունը և դրանց, ինչպես նաև *նք, նգ* խմբերի վերածումը *յ*-ի՝ բաղաձայնից առաջ, հնդեվրոպական *h*-ի դիմաց *խ*-ի առկայությունը, ներգոյականի իմաստի արտահայտությունը հայցական հոլովով կամ սեռականով և *մէջ* կապով, ցուցական դերանունների երկշարք համակարգը, սահմանականի ներկայի և անցյալ կատարյալի կազմությունը -*լիս* դերբայական ձևից առաջացած տարբերակներով և օժանդակ բային հաջորդելիս դերբայի՝ *լ*-ով կամ *լի*-ով ավարտվելը, վաղակատարի՝ *իր* մասնիկով և հարակատարի՝ *ած* մասնիկով վերջավորվելը, անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ* հավելման առկայությունը, այդ ժամանակաձևի կազմությունը անցոյական հիմքից, ներգործաձև և կրավորաձև վերջավորություններով հանդես գալը և այլն:

Այլ դեպքերում բարբառին բնորոշ մի շարք հատկանիշներ դրսևորվում են ոչ բոլոր խոսվածքներում: Մասնավորապես, Արամուսի և Զորաղբյուրի խոսվածքները, ի տարբերություն մյուսների, ունեն քմայնացած *ու* ձայնավոր (Զորաղբյուրը՝ նաև քմայնացած *օ*), հարցական *վա̈վ* դերանուն, օժանդակ բայի անցյալի վերլուծական ձև, պատճառականի *ցըց* (> *ցուց*) ածանց: Դերանվան թեք ձևերով, ներկայի կազմությամբ ընդհանրություն ունեն մի կողմից՝ Արամուսը և Ջրվեժին, մյուս կողմից՝ Մայակովսկին և Զորաղբյուրը, ընդ որում՝ դիտարկվող խմբում այդպիսով դրսևորվում են Խոյ-Մարաղայի բարբառի շրջանակներում ներկայի կազմության երկու եղանակներն էլ (*ս*-ով և *լ*-ով): Հետաքրքրական է, որ մի շարք դեպքերում բարբառին իր հարազատությամբ առանձնանում է Զորաղբյուրի խոսվածքը: Մասնավորապես, միայն այս խոսվածքում են առկա անձնական դերանունների՝ սեռականի հիմքով

տրականի ձևեր, բացառականի կազմություն *է*, *մէն* մասնիկներով, հետնալեզվայինների դիմաց որևէ դիրքում *jʰ* հնչյուն և այլն: Բարբառի ներքին զանազանություններից բացի՝ խոսվածքները երևան են հանում նաև այլ բարբառների ազդեցություններով պայմանավորված տարբերություններ, մասնավորապես՝ այդպիսիք պետք է համարել առանձին դեպքերում շնչեղ ձայնեղների առկայությունը, երկբարբառների դրսևորման որոշ դեպքեր, օտար *ղ*-ի դիմաց *կ*-ի գործածությունը, Ո հոլովման որոշ ընդլայնումը, *ց*-ով բացառականի գործածությունը, հարցական դերանվան *վորը*, *օվ* ձևերը, *ցըն*-ով պատճառականը և այլն: Այս կամ այն խոսվածքում դրսևորվող նման հատկանիշները որակ չեն կազմում, այլ որոշակի երանգ են հաղորդում Խոյ-Մարաղայի բարբառի՝ Կոտայքի մարզում գործածվող հիշյալ չորս խոսվածքներին:

# ԳԼՈՒԽ 1.3.

# ՄՇՈ, ԲԱՅԱԶԵՏԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Մշո բարբառի[101] դրսևորումները Կոտայքի մարզում

Մշո բարբառը Կոտայքի մարզում ներկայացնում են Հրազդանի տարածաշրջանի Աղավնաձոր, Մարմարիկ և Սոլակ, Նաիրիի տարածաշրջանի Բուժական և Քասախ գյուղերի խոսվածքները: Աղավնաձորի բնակիչների նախնիները գաղթել են Ալաշկերտից, Մարմարիկի բնակիչների նախնիները՝ Մուշի տարբեր գյուղերից, Բուլանուխից, Սոլակի բնակիչների նախնիները՝ Ալաշկերտի, Արճեշի, Վանի, Սալմաստի գյուղերից, Բուժականի բնակիչների նախնիները՝ Մուշից, Բաղեշից, Ղարսից, Ալաշկերտից, Պարսկահայքից, Քասախի բնակիչների նախնիները՝ Մուշից, Սասունից, Բուլանուխից, Ալաշկերտից:

Բոլոր խոսվածքներն ունեն *է, ո* երկբարբառային հնչյուններ: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի դիմաց առկա է *յէ:* Այդ դիրքում *ո*-ի դիմաց *ւո* ունի Քասախի խոսվածքը, իսկ մյուսներն ունեն *վո:* Բուժականի խոսվածքում նկատելի է բառի աճման դեպքում *վո*>*օ* անցում՝ *վող*>*օղօվ:* Բուժականի, Մարմարիկի և Քասախի խոսվածքներում *որ* շաղկապն ունի *օր* արտասանություն, իսկ Աղավնաձորում և Սոլակում՝ *վոր:* Բոլոր խոսվածքներում բազմավանկ բառերի սկզբում *ե*-ի և *ո*-ի դիմաց առկա

[101] Այս բարբառի ընդհանուր բնութագիրը տե՛ս **Վ. Կատվալյան**, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ, էջ 17-33:

են *է*, *օ* հնչյուններ: Աղավնաձորի, Մարմարիկի և Սոլակի խոսվածքներում փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ա̈* ձայնավոր (Սոլակում՝ ավելի շատ): Փոխառյալ մի շարք բառերում նման հնչյուն դիտվել է Բուժականի խոսվածքում, իսկ Քասախի խոսվածքում այդ հնչյունի առկայությունը չի արձանագրվել: Բոլոր խոսվածքներին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, որևէ մասնիկի հավելման դեպքում բառավերջում *ա>է* անցումը, բառասկզբում շնչեղ ձայնեղների գործածությունը: Մարմարիկի և Սոլակի խոսվածքներում բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր, Մարմարիկում նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ: Քասախի խոսվածքում բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են պարզ խուլեր, նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ: Աղավնաձորի և Բուժականի խոսվածքներում բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են երբեմն շնչեղ, երբեմն էլ պարզ խուլեր, հաճախ էլ դժվար է դրանք տարբերակելը: Նույն դիրքերում խուլերի դիմաց որպես կանոն առկա են ձայնեղներ: Բոլոր խոսվածքներում *նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Աղավնաձորի, Բուժականի, Սոլակի, նաև Մարմարիկի խոսվածքներում նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների: Բուժականում և Քասախում բառամիջում ու բառավերջում *h*-ի դիմաց հանդիպում է *յ*: Բոլոր խոսվածքներում հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում: Հինհայերենյան *h*-ի դիմաց Մարմարիկի, Աղավնաձորի և Սոլակի խոսվածքներում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում, երևույթը սակավ դեպքերում է հանդիպում Բուժականի խոսվածքում (խա, խող, պախել): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *կ* ունեն

Աղավնաձորը և Մարմարիկը, *խ* ունեն Բուժականը և Քասախը: Բոլոր խոսվածքներում շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքները հիմնական հոգնակերտների հետ ունեն հոգնակի թվի արտահայտության այլ միջոցներ ևս (ք, էրք, իք, անք, անիք, վանք, տիք // տինք // տանք // դանք, դիք, դան, վըդան, ան): Աղավնաձորի և Սոլակի խոսվածքներում նկատվել է հոգնակերտի կրկնական գործածություն՝ *էրէխէքնէր*, *տըղէքնէր:* Աղավնաձորի, Սոլակի և Քասախի խոսվածքներում կենդանիների որոշ անուններ, մի շարք այլ բառեր եզակի թվում ենթարկվում են Ու հոլովման, հոգնակի գոյականները Ու հոլովման են ենթարկվում Սոլակի և Քասախի խոսվածքներում: Ոջ հոլովում դրսևորվում է Քասախում, Սոլակում, նաև Մարմարիկում, իսկ Աղավնաձորում հանդիպել է այդ հոլովման միայն մեկ ձև (տիրոչ): Ա վերջադրական հոլովման առկայություն է արձանագրվել բոլոր խոսվածքներում: Քասախում հանդիպել են նաև Էրէվանու, Մըշու ձևեր: Ընդհանուր հատկանիշներ են նաև ձայնավորով ավարտվող բառերի սեռականի ձևավորումը *յ*-ով, բացառականի կազմությունը *ց*-ով: Աղավնաձորի և Մարմարիկի խոսվածքներում հազվադեպ են հանդիպում բացառականի *է*-ով կազմություններ, իսկ Քասախի խոսվածքում դրանք որոշ տարածում ունեն: Սոլակի խոսվածքում բացառականը կարող է արտահայտվել նաև կապային կառույցով (*քօ մօտից*՝ քեզնից): Բոլոր խոսվածքներում ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով: Խոսվածքներում որոշյալ հոդը *ն*-ն է՝ որոշակիորեն սահմանափակ կիրառությամբ: Անորոշ հոդը նախադաս է, Քասախում արձանագրվել է նաև հետադաս կիրառություն: Վերջինում ստացական հոդերից հետո հանդես է գալիս հավելական *ի* ձայնավոր (գ՛ըլօխսի, ձ՛եռտի): Անձնական դերանվան տրականի ձևերը բոլոր խոսվածքներում ունեն *ի* հավելված (ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի, *Քասախում*՝ ընձի, քըզի, մըզի, ձ՛ըզի), Քասախի խոսվածքում գործածական են նաև *իզ* հավելվածով ձևեր (ընձիզ, քըզիզ, մեզիզ, ձ՛եզիզ): Սոլակում հանդիպում են *քյէ*, *ձ՛է* կրճատ ձևերը, Աղավնաձորում և Բուժականում գործածական է *քէ* ձևը:

Ցուցական դերանունների համակարգով առանձնանում է Քասախի խոսվածքը, որում թերևս նախնական երկշարք (առանց *ս*-ով կազմությունների) ձևերին (իդա, էդի, էնի // իըդը, էդ, ինա) այժմ զուգորդվել է եռաշարք համակարգ (էս, էդ, էն): Մյուս խոսվածքներում ցուցականների համակարգը եռաշարք է: Հարցական *ով* դերանվան դիմաց Աղավնաձորում և Մարմարիկում առկա է *վոն* ձևը (սեռ.տր. վիր, վին), Բուժականում և Սոլակում՝ *վորը* ձևը (Բժկ. սեռ.տր. *վի*, *վիր*, Սլկ. սեռ.տր. *վիր*, *վիրըն*), Քասախում՝ *ւոր* ձևը (սեռ.տր. *վիր*):

Աղավնաձորի, Մարմարիկի, Բուժականի և Սոլակի խոսվածքներում բայի Ա և Ե խոնարհումների կողքին հանդիպում են Ի խոնարհման դրսևորումներ, իսկ Քասախի խոսվածքում բայն ունի Ի և Ա խոնարհումներ: Խոսվածքներում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել* (Մարմարիկում՝ *էղնել), հըլնել* (Քասախում՝ *հէլնել), կանալ* (Բուժականում՝ *կըռնալ//կարալ*, Քասախում՝ *կըռնալ*) տարբերակները: Բոլոր խոսվածքներում բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը // կ* մասնիկով կամ առանց դրա: Աղավնաձորի խոսվածքում *գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ՛ու//կը* մասնիկով, Սոլակի խոսվածքում՝ *գ՛ը//կը* մասնիկով, Բուժականի, Մարմարիկի և Քասախի խոսվածքներում՝ *գ՛ի // կի* մասնիկով: Աղավնաձորի խոսվածքի ժխտական ձևերում հանդիպում է միավանկ բայերի՝ *ի* հավելվածով ձև (չըն իգ՛ա): Նման ձևերն ավելի բնորոշ են Քասախի խոսվածքին (չըմ իկա, չըմ իլա, չըմ իդա), որում *գալ, լալ, տալ* բայերի անորոշ դերբայներն ունեն *իիկալ, իիլալ, իդալ* ձևերը: Բոլոր խոսվածքներում, բայասկզբի *ի*-ին միանալով, *կը* մասնիկի բաղաձայնը ձայնեղանում է (գ՛իշնէնք, գ՛էլնի, գ՛ա̈զըրինք, գուզիս, գէլնի, գ՛ընգընէնք, գ՛իշես, գէլի, գ՛ըլնի, գ՛ուզիմ, գ՛ընծընէր): Բուժականի խոսվածքում գործածական են նաև անկատար դերբայով կազմվող ժամանակաձևեր (ներկա, անցյալ անկատար):

Բոլոր խոսվածքներում վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն, որը օժանդակ բայի նախադաս գործածության պարագայում ընկնում է: Խոսվածքներում վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *աձ* // *ած* վերջավորությամբ դերբայական ձև (ամուսնացաձ ա /ամուսնացել են/, կայնաձ ին, մածած ը /մնացել են/): Աղավնաձորում, Բուժականում, Քասախում հարակատար դերբայն ունի *ուզ* վերջավորություն, Մարմարիկում և Սոլակում՝ *ուկ* վերջավորություն: Մարմարիկի և Սոլակի խոսվածքներում էական բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, Աղավնաձորի խոսվածքում՝ *իմ, իս, ա, ինք, իք, ին*, Քասախի խոսվածքում՝ *իմ, իս, ը, ինկ, իկ, ին*, իսկ Բուժականի խոսվածքում գործածական են ինչպես *ե*-ով (եմ, ես), այնպես էլ *ի*-ով (իմ, իս) ձևեր: Հետաքրքրական են այս բայի անցյալի ձևերը Քասախի խոսվածքում (էնկ, էր, էր, էնկ, էկ, էն)՝ եզակի և հոգնակի առաջին դեմքերի, ինչպես նաև եզակի երկրորդ և երրորդ դեմքերի ձևերի նույնությամբ: Այսպիսի ձևեր նկատվում են նաև Բուժականի և Աղավնաձորի խոսվածքներում: Սոլակի խոսվածքում Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է անցոյական հիմքով, իսկ մյուս խոսվածքներում կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերից: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ՛աց, մաց* (Քասախում՝ *գ՛աձ, մաձ*): Մարմարիկի խոսվածքում *էնել, ը՛նել* բայերի անցյալի հիմքում պահպանվում են *էն, ը՛ն* ձևերը (էնէցի, ը՛նէցի): Բոլոր խոսվածքներում անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ: Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա //ը* կամ *էր* ձևը՝ ըստ ժամանակային իմաստի: Ժխտական խոնարհման վերլուծական ժամանակաձևերի երրորդ դեմքի (երբեմն էլ՝ այլ դեմքերի) ձևերում *չ* ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա, ինչպես՝ *չեղե* (չի եղել), *չըսա* (չի ասի), *չըլնի* (չի ելնում), *չուզը* (չի ուզում), *չըխօրեն*

*(*չեն թաղի), *չըմընամ* (չեմ մնա), *չըլըսես* (չես լսում), այլ դեպքերում ժխտական մասնիկը որպես կանոն դրվում է օժանդակ բայի վրա՝ *չըն հըլնի*, *չինք ըսի*, *չեմ կանա*, *չըն թօղի*, *չըս տէսե:* Խոսվածքներում չկան *չ* ածանցով բայեր: Աղավնաձորի և Սոլակի խոսվածքներում պատճառական ածանցն է *ուց* //*gուց*, Քասախում՝ *ուծ* //*ծուծ*, Բուժականում՝ *gըն*, Մարմարիկում՝ *ուց* կամ *gըն:* Խոսվածքներում պատճառական բայերի ներկայում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը: Գործածական են հարկադրականի եղանակիչի *պըտի*, *պըդի*, *բըդի* հնչատարբերակները:

Մարմարիկի խոսվածքում *էլ* շաղկապի դիմաց գործածական է նաև *լէ* ձևը, Քասախի խոսվածքում՝ *լը* տարբերակը: Քասախում նկատելի է սովորաբար հետադաս կապերի նախադաս կիրառություն: Սոլակի խոսվածքն ունի *կօ* հաստատական մասնիկ (կօ էկավ, էլի), որը շատ դեպքերում կարող է ունենալ շարունակականության իմաստ (կօ կասեմ քեզի. կօ մըկա կըխօսամ. կօ հառավոտ կէլիմ, կըխաքիմ):

Այսպիսով, խոսվածքների համար ընդհանուր են Մշո բարբառի հնչյունական մի շարք էական հատկանիշներ, ինչպիսիք են՝ երկբարբառային *ե*, *ո* հնչյունների առկայությունը, միավանկ բառերի սկզբի հինհայերենյան *ո*-ից և *ե*-ից առաջ բաղաձայնական տարրի հավելումը, բազմավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո, ե*–ի դիմաց *օ, է* ձայնավորների առկայությունը, բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղման երևույթը, բառավերջում *ա*>*է* անցումը որևէ մասնիկի հավելման դեպքում, քառաստիճան բաղաձայնական համակարգի գործածությունը՝ շնչեղ ձայնեղ բաղաձայնների առկայությամբ, բառասկզբի ձայնավորից առաջ հագագի հավելումը, վերջնավանկային շեշտի դրսևորումը և այլն:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են *եր, ներ* հոգնակերտների հետ նաև այլ մասնիկների առկայությունը, հատուկ տեղանունների դեպքում Ա վերջադրական հոլովման դրսևորումը, ձայնավորով ավարտվող հատուկ ու հասարակ անունների սեռականի ձևավորումը *յ*-ով,

բացառական հոլովի *ց*-ով կազմությունը, ներգոյական հոլովի իմաստի՝ հայցական հոլովով կամ սեռականով ու *մեջ* կապով արտահայտումը, միայն *ն* հոդի առկայությունը և նրա սահմանափակ կիրառությունը, անձնական դերանվան տրական հոլովի ձևերում *ի* ձայնավորի առկայությունը, *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց տարբերակային այլ ձևերի գործածությունը, ներկայի և անցյալ անկատարի արտահայտությունը *կը* մասնիկի միջոցով, վաղակատարի կազմությունը *ր*-ով և հարակատարինը՝ *ուկ* // *ուգ*- ով, վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար *աձ*//*ած* վերջավորությամբ դերբայական ձևի հանդես գալը, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների դրսևորումը, *գնալ* և *մնալ* բայերի անցյալի հիմքի *գ՛աց, մաց* տիպի ձևերի գործածությունը, տրամաբանական շեշտ կրող բառն ընդգծելու համար դիմավոր ձևերից առաջ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևի լրացուցիչ կիրառությունը, *չ* ժխտական մասնիկի՝ բայաձևի վրա դրվելը, *չ* բայածանցի բացակայությունը և այլն:

Ընդհանուր առմամբ՝ նկատելի է, որ դիտարկվող խոսվածքները առանձին հատկանիշներով հանդես են բերում նաև մասնավոր կարգի նմանություններ: Այսպես, Մարմարիկի և Աղավնաձորի խոսվածքների համար ընդհանուր են *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը[102], օտար բառերի սկզբում *ղ*-ի դիմաց *կ*-ի դրսևորումը, *ով* դերանվան դիմաց *վոն* ձևի գործածությունը, բացառական հոլովում *ց*-ով ձևերի առկայությամբ հազվադեպ նաև *է*-ով ձևերի գործածությունը և այլն: Մյուս կողմից՝ Բուժականի և Քասախի խոսվածքներին միավորում են այնպիսի հատկանիշներ,

[102] Ըստ Գ. Ջահուկյանի աղյուսակների՝ այս հատկանիշը Մշո բարբառում ունեն Բաղեշը, Խլաթը, Արճեշն ու Արծկեն (տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 56-57), ըստ Ս. Բաղդասարյանի՝ նաև Ալաշկերտի որոշ գյուղեր (տե՛ս **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, *Մշո բարբառը*, էջ 5):

ինչպիսիք են՝ *հ*-ի դիմաց որոշ դիրքերում *յ*-ի գործածությունը[103], օտար բառերի սկզբում *ղ*-ի դիմաց *խ*-ի դրսևորումը[104], *ով* դերանվան դիմաց *վոր* // *ւոր* ձևի կիրառությունը և այլն: Խոսվածքների այս երկու խմբերը, այնուամենայնիվ, հստակորեն չեն սահմանազատվում, որովհետև առկա են մասնավոր այլ կարգի ընդհանրություններ ևս: Այդպիսիք են, օրինակ, հետևյալները. Աղավնաձորը և Բուժականը ոչ բառասկզբի ձայնեղների և շնչեղ խուլերի դիմաց ունեն խուլ կամ շնչեղ խուլ բաղաձայններ, *դու* դերանվան տրականի կրճատ *քե* ձև, Մարմարիկն ու Քասախը ունեն *էլ* շաղկապի *լէ* // *լը* ձև, Աղավնաձորն ու Քասախը ունեն օժանդակ բայի ներկայի՝ *հ*-ով ձևեր, Սոլակին ու Քասախին բնորոշ է հոգնակի գոյականների ենթարկվելը Ու հոլովման և այլն: Մշո բարբառի շրջանակում դրսևորվող որոշ հատկանիշներ էլ արձանագրվել են առանձին խոսվածքներում: Այդպիսիք որոշակի քանակություն են կազմում Քասախի խոսվածքում (օրինակ՝ ոչ բառասկզբում ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց խուլերի առկայությունը, ստացական հոդերից հետո *ի* հավելվածի գործածությունը, անձնական դերանունների տրականում *իզ* հավելվածի գործածությունը, ցուցական դերանունների երկշարք համակարգի առկայությունը, կապերի նախադաս գործածությունը, անորոշ հոդի հետադաս կիրառությունը և այլն): Հիշատակելի են նաև Մարմարիկի խոսվածքում *էնել*, *դ՛ընել* բայերի նաև անցյալի

---

[103] Ըստ Գ.Ջահուկյանի աղյուսակների՝ այս հատկանիշը Մշո բարբառում չունեն միայն Բաղեշը, Խլաթը, Արճեշն ու Արծկեն (տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 56-57):

[104] Ըստ Գ. Ջահուկյանի աղյուսակների՝ այս հատկանիշը Մշո բարբառին բնորոշ է ամբողջությամբ (տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 56-57), ըստ Ք. Մադաթյանի՝ հատկանիշը հատուկ է միայն Ալաշկերտի խոսվածքին (տե՛ս **Ք. Մադաթյան**, Ալաշկերտի խոսվածքը, 1985, էջ 5):

հիմքում *ն*-ի պահպանումը[105], Սոլակի խոսվածքում բացառականի կապային ձևերի, *կօ* մասնիկի առկայությունը և այլն:

Հասկանալի է, որ տարածական հիմքերի փոփոխությունը, բարբառախոս նոր միջավայրում հայտնվելը, այլ բարբառների ու գրական արևելահայերենի ազդեցությունը իրենց կնիքն են թողել դիտարկվող խոսվածքների զարգացման ընթացքի վրա, սակայն բարբառային քննվող միավորները, այդուամենայնիվ, պահպանել են Մշո բարբառին իրենց հարազատությունը, և վստահաբար կարող ենք արձանագրել, որ Կոտայքի մարզի Աղավնաձոր, Մարմարիկ, Բուժական, Սոլակ և Քասախ գյուղերի խոսվածքները ներկայացնում են Մշո բարբառը՝ լեզվի բնականոն զարգացմամբ ու արտալեզվական զանազան գործոնների ազդեցությամբ պայմանավորված յուրահատկություններով հանդերձ:

[105] Այս հատկանիշը մենք դիտարկել ենք նաև Մշո բարբառի՝ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի որոշ խոսվածքներում (տե՛ս Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 39):

## Բ. Բայազետի բարբառի[106] դրսևորումները Կոտայքի մարզում

Բայազետի բարբառը Կոտայքի մարզում գործածվում է Աբովյանի տարածաշրջանի Ակունք, Գեղարդ, Գողթ, Կոտայք, Հատիս գյուղերում: Ակունքի բնակիչների նախնիները եկել են Սալմաստից, Խոյից և Բայազետից, Գեղարդի բնակիչների մի մասի նախնիները եկել են Վանից, մյուս մասինը՝ Գավառի տարածաշրջանի Սարուխան գյուղից, Գողթի և Կոտայքի բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Բայազետի գյուղերից, Հատիսի բնակիչների նախնիները եկել են Բայազետից, Վասպուրականից, Սևանի տարածաշրջանից:

Բոլոր հինգ խոսվածքներն էլ, որոշ զանազանություններով, պահպանել են Բայազետի բարբառի հիմնական հատկանիշները: Դրանք ունեն *ե, ո* երկբարբառային հնչյուններ, միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց՝ համապատասխանաբար *վո* և *յե,* իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö ձայնավոր: Բառասկզբի վանկերում՝ Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում, հանդես է գալիս շրթնայնացած *ա* ձայնավոր, բայց ոչ նույն հստակությամբ, ինչ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի խոսվածքներում: Խոսվածքներին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը: Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի: Բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր, նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ: Հաճախ բառասկզբի

---

[106] Այս բարբառի ընդհանուր բնութագիրը տե՛ս Վ. Կատվալյան., նշվ. աշխ., էջ 44-54:

ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքները *խ* ունեն բառի բոլոր դիրքերում: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց դրսևորվում է *կ:* Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքներում տեղանունները սովորաբար ենթարկվում են Ա վերջադրական հոլովման: Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով: Որոշյալ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով: Անորոշ հոդը նախադաս է: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ: Սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատարով: *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ *գ՛ալում, լա̈լում, տալում:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն: Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերից: Անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ: Խոսվածքներում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* և այլն:

Խոսվածքներն ունեն սակավաթիվ մասնավոր հատկանիշներ: Այսպես, եթե Գեղարդի, Գողթի, Կոտայքի և Հատիսի խոսվածքներում *ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, ապա Ակունքում գործածվում է *օվ* ձևը (սակայն հինգ խոսվածքում էլ սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր*, *վիրը*): Ակունքում և Հատիսում անկատար դերբայը *ում*-ին զուգահեռ ունենում է նաև *ըմ* վերջավորություն: Ակունքում հարակատարն ունի *ած* վերջա-

վորություն, անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքն ունենում է *մ* հավելված: Գեղարդի խոսվածքում հետնալեզվային հպականները որոշակի դիրքերում ունենում են քմայնացած արտասանություն, անձնական դերանուններն ունեն տրականի *քե*, *մե*, *ձ՛ե* կրճատ ձևեր, գործածական է *կօ* հաստատական մասնիկը: Գողթի խոսվածքում երբեմն հանդիպում են քմայնացած հետնալեզվայիններ, դերանվան *քե* կրճատ ձև, երբեմն անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքն ունենում է *մ* հավելված: Կոտայքի խոսվածքում հազվադեպ հանդիպում են քմայնացած հետնալեզվայիններ, գործածական է *հորթ* բառի *ֆորթ* տարբերակը, հարակատար դերբայը *ուկ*-ին զուգահեռ կարող է ունենալ նաև *ած* վերջավորություն: Հատիսի խոսվածքում երբեմն նկատվում է հետնալեզվային հպականների քմայնացում, հանդիպում է անձնական դերանվան *մեզի* տրականի *մե* կրճատ ձև, օժանդակ բայը կարող է կրկնվել և այլն: Եթե զանազանությունների մի մասը կարող է բացատրվել Բայազետի բարբառի խոսվածքային առանձնահատկություններով (դերանվան կրճատ ձևեր, *կօ* մասնիկի գործածություն), ապա մյուս մասը պայմանավորված է բնակչության ծագումնաբանական յուրահատկություններով կամ այլ բարբառների ազդեցությամբ: Օրինակ, որոշ դեպքերում քմայնացած հպականների, հարակատարի *ած* վերջավորության, անցյալ կատարյալի *մ* հավելվածի գործածությունը պետք է պայմանավորել տվյալ բնակավայրերի (Ակունք, Հատիս, Գեղարդ) բնակիչների նախնիների մեջ խոյեցիների կամ վասպուրականցիների առկայությամբ, իսկ անկատարի *ըմ* վեջավորությամբ ձևի կիրառությունը, դերանվան *օվ* ձևի գործածությունը, բառասկզբի *հ*-ի դիմաց *ֆ*-ի մասնավոր դրսևորումը Արարատյան բարբառի ազդեցությունն են փաստում:

## Գ.Արարատյան բարբառի[107] դրսևորումները Կոտայքի մարզում

Կոտայքի մարզում Արարատյան բարբառը գործածվում է Աբովյանի տարածաշրջանի Առինջ և Ջրվեժ գյուղերում, Նաիրիի տարածաշրջանի Եղվարդ քաղաքում: Երեք բնակավայրերի բնակիչների նախնիներն էլ հիմնականում տեղաբնիկներ են, միայն Ջրվեժ գյուղի բնակիչների մի մասի նախնիները գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից:

Դիտարկվող խոսվածքները չունեն երկբարբառային հնչյուններ, միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց ունեն *վօ* և *յէ,* բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է:* Առինջի և Ջրվեժի Խոսվածքներում երբեմն նկատվում է բառի առաջին (նախաշեշտ) վանկի ձայնավորի սղում: Երեք խոսվածքներում էլ բառավերջի ա ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի, *ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց սովորաբար առկա է *ի* ձայնավոր: Առինջի և Ջրվեժի խոսվածքներում բառասկզբում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործածվում են խուլեր, Եղվարդի խոսվածքում՝ շնչեղ ձայնեղներ (սակայն սրանք ևս երբեմն թողնում են խուլերի տպավորություն): Բոլոր խոսվածքներում բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր, նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (Ջրվեժի խոսվածքում՝ ավելի հաճախ): Եղվարդի խոսվածքում առաջին շարքի ձայնավորներից առաջ նկատելի է հետնալեզվային հպականների քմայնացած արտասանություն: Բոլոր խոսվածքներում նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների, միավանկ բառերի սկզբի *հօ*-ի դիմաց առկա է *ֆօ*, սակավ դեպքերում բառասկզբի

[107] Այս բարբառի ընդհանուր բնութագիրը կներկայացվի համապատասխան մարզին նվիրված հատորում:

ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, որոշ դեպքերում բառասկզբի *խ*-ի դիմաց առկա է *հ*, իսկ *ս*-ի դիմաց *հ* է հանդես գալիս *տէսնէլ* բայի անցյալի հիմքում: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց Եղվարդն ու Առինջը ունեն *ղ*, իսկ Ջրվեժը՝ *կ:* Երեք խոսվածքներում էլ շեշտը վերջընթեր է: Առինջում և Եղվարդում Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տէր* բառը, իսկ Ջրվեժում այդ հոլովման ենթարկվում են ազգակցական հարաբերություն արտահայտող մի շարք բառեր: Բոլոր խոսվածքներում *հայր*, *մայր*, *եղբայր* բառերից բացի՝ Ո ներքին հոլովման ենթարկվում են նաև մի շարք այլ բառեր: Եղվարդի և Ջրվեժի խոսվածքներում հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա վերջադրական հոլովման: Երեք խոսվածքներում էլ բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն: Եթե Առինջի և Ջրվեժի խոսվածքներում ներգոյականի իմաստն արտահայտվում է *ըմ* վերջավորությամբ հոլովական ձևով, ապա Եղվարդում այդ իմաստը սովորաբար արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մեջ* կապով: Բոլոր խոսվածքներում որոշյալ հոդն ունի *ը* և *ն* դրսևորումներ: Առինջում և Ջրվեժում որոշյալ հոդ ստանում են նաև բացառական և ներգոյական հոլովները, Եղվարդում՝ բացառական և գործիական հոլովները: Երեք խոսվածքներում էլ անորոշ հոդը նախադաս է, անձնական դերանվան տրականի ձևերը չեն ունենում *ի* հավելված: Առինջում վերջիններիս բացառականները հանդիպում են առանց *ց* մասնիկի: Խոսվածքներն ունեն հարցական դերանվան *օվ* ձև՝ *ում* սեռականով, ցուցական դերանունների եռաշարք համակարգ, ընդ որում՝ Առինջի և Եղվարդի *էս*, *էտ*, *էն* և *ըսա, ըտա, ընա* շարքերի դիմաց Ջրվեժն ունի *էս*, *էտ*, *էն* և *էսի*, *էտի*, *էնի* ձևեր: Երեք խոսվածքներում էլ սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով, Եղվարդում դերբայը հանդես է գալիս նաև *ում* վերջավորությամբ: Առինջում *գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *կալիս, տալիս, լացըմ*, Ջրվեժում՝ *կալիս, տալիս, լաց ըլըմ*, Եղվարդում՝ *գ՛ալիս, լալիս, տալիս:*

Առինջն ու Զրվեժն ունեն *ու* վերջավորությամբ ապառնի դերբայ՝ ի տարբերություն նման դերբայ չունեցող Եղվարդի: Երեք խոսվածքներում էլ վաղակատար դերբայն ունի *էլ* վերջավորություն, հարակատարը՝ *ած* վերջավորություն, ընդհանուր են էական բայի ձևերը՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն* և *ի, իր, էր, ինք, իք, ին:* Առինջում և Եղվարդում Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի ձևերը կազմվում են ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից, իսկ Զրվեժում որպես կանոն կազմվում են ներկայի հիմքից: Երեք խոսվածքներում էլ անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ: Առինջում և Զրվեժում անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքն ունի *մ* հավելված: Խոսվածքներում չկան *չ* ածանցավոր բայեր, պատճառական ածանցն է *ցըն:* Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն: Առինջի խոսվածքում հարկադրականի եղանակիչն է *պէտք ա*, Եղվարդում և Զրվեժում՝ *պըտի:*

Այսպիսով, Առինջի, Եղվարդի և Զրվեժի խոսվածքները պահպանում են Արարատյան բարբառի հիմնական հատկանիշները՝ խոսվածքային որոշակի տարբերություններով: Հնարավոր է, որ այդ զանազանությունների մեջ որոշ հատկանիշներ ներկայացնում են այլ բարբառների ազդեցություններ, ինչպիսիք կարող են համարվել Զրվեժի և Առինջի խոսվածքների բառասկզբում ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը[108], անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ* հավելվածի առկայությունը, Զրվեժում օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց *կ*-ի առկայությունը, Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի կազմությունը հիմնականում անցոյական հիմքից, Եղվարդի խոսվածքում ներգոյական հոլովի բացակայությունը և այլն:

[108] Այս հատկանիշը բնորոշ է նաև Նորքի և Քանաքեռի խոսվածքներին:

# ԳԼՈՒԽ 1.4.

# ՄԱԿՈՒԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ԽԱՌԸ ՏԻՊԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Մակուի խոսվածքը[109] Կոտայքի մարզում

Կոտայքի մարզում Մակուի խոսվածքը գործածվում է Հրազդանի տարածաշրջանի Ալափարս, Արզական, Քաղսի գյուղերում և Աբովյանի տարածաշրջանի Գառնի գյուղում: Ալափարսի բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Մակուից, Խոյից, Սալմաստից, Վանից, Ալաշկերտից: Արզականի բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Մակուից, Խոյից, Բայազետից, մասամբ նաև Մուշից: Քաղսիի բնակիչների մի մասի նախնիները եկել են Մակուի Օղակ գյուղից, իսկ Գառնիի բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Մակուից:

Դիտարկվող բոլոր խոսվածքներն ունեն երկբարբառային *է*, *ո* հնչյուններ: Քաղսիի խոսվածքն ունի *է* երկբառային հնչյունի՝ նաև համեմատաբար բաց արտասանություն ունեցող տարբերակ, որը հանդես է գալիս բառավերջում, ինչպես նաև՝ իբրև օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի ձև: Խոսվածքներում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *է*-ի և *ո*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *յէ* և *վո*, իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *է* և *օ*, փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ա̈ ձայնավոր, Քաղսիի խոսվածքում այդ հնչյունը երբեմն հանդես է գալիս *է*-ի դիմաց: Խոսվածքներին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը: Ալափարսի, Արզա-

[109] Այս խոսվածքի ընդհանուր բնութագիրը տե՛ս Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 73-81:

կանի և Գառնիի խոսվածքներում բառասկզբի վանկերում *ա* ձայնավորը երբեմն ունենում է շրթնայնացած արտասանություն: Բոլոր խոսվածքներում բառավերջի *ա*-ն որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր, նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (Արզականում և Քաղսիում՝ ավելի հաճախ): Քաղսիի խոսվածքում գործառում են քմայնացած հետնալեզվային պայթականներ, երբեմն էլ հետնալեզվային պայթականի դիմաց առկա է հպաշփական հնչյուն: Մյուս խոսվածքներում նկատելի է հետնալեզվային հպականի քմայնացում առաջին շարքի ձայնավորներից առաջ: Բոլոր խոսվածքներում նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց հանդիպում են շփականներ, հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում: Գառնիի խոսվածքում հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է հանդիպում բառի բոլոր դիրքերում, իսկ մյուս խոսվածքներում *հ*-ի դիմաց *խ* է դիտվում մեկ-երկու բառում: Միավանկ բառերի սկզբում *հո*-ի դիմաց *ֆո* է հանդիպում Արզականի և Քաղսիի խոսվածքներում: Բոլոր խոսվածքները օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց ունեն *կ*, բոլորում շեշտը վերջնավանկային է:

Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով Արզականի, Գառնիի, Քաղսիի խոսվածքներում: Բոլոր խոսվածքներում բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռական հոլովով և *մեջ* կապով, Ալափարսի և Քաղսիի խոսվածքներում տարածված է այդ իմաստի արտահայտությունը նաև տրական հոլովով: Ա վերջադրական հոլովման դրսևորումներ ունեն Ալափարսի, Գառնիի, Քաղսիի խոսվածքները: Բոլոր խոսվածքներում որոշյալ հոդն ունի *ը* և *ն* դրսևորումներ, իսկ անորոշ *մէ* հոդը նախադաս է: Ալափարսի խոսվածքում դիտվել են որոշյալ հոդի բացակայության, *ը*-ի փոխարեն *ն*-ի գործածության, կրկնակի հոդառության դեպքեր: Բոլոր խոսվածքներում անձնական դերանունները տրական հոլովում ունեն *ի*

հավելված, Գառնիում՝ երբեմն նաև *իկ* հավելված: Խոսվածքներն ունեն ցուցական դերանունների եռաշարք համակարգ: *Ով* դերանվան դիմաց Ալափարսը և Քաղսին ունեն *վով*, Արզականը՝ *օվ*, Գառնին՝ *վորը* ձևերը: Այս դերանվան սեռականի և տրականի ձևերը բոլոր խոսվածքներում նույնն են՝ *վիր*, *վիրը:* Առկա են ցուցական դերանունների սեռական և տրական հոլովների՝ *ըստըրա, ըտըրա, ընդըրա, ըստա, ըտա, ընդա* տիպի ձևեր: Խոսվածքներում սահմանական եղանակի ներկան և անցյալ կատարյալը կազմվում են *ում //ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով: *Գալ, լալ, տալ* բայերի դեպքում անկատարի *ում // ըմ* վերջավորությունն ավելանում է անորոշի ձևի վրա: Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն, որը շրջուն շարադասության դեպքում ընկնում է: Գառնիի և Քաղսիի խոսվածքներում վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած // աձ* վերջավորությամբ դերբայական ձև: Հարակատար դերբայը Ալափարսում, Արզականում ունի *ած*, Քաղսիում՝ *աձ*, իսկ Գառնիում՝ *ուկ* վերջավորություն: Բոլոր խոսվածքներում էական բայի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են* և *ի, իր, էր, ինք, իք, ին*, միայն Քաղսիի խոսվածքում ներկայի եզակի երրորդ դեմքում ավելի գործածական է *է // է* ձևը: Բոլոր խոսվածքներում Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով: Այդ ժամանակաձևն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ: Ալափարսի և Քաղսիի խոսվածքներում խոնարհված բայերի անցյալ ժամանակի եզակի առաջին դեմքի ձևերը գործածվում են նաև *մ* հավելվածով, Գառնիում այդ հավելվածն առկա է միայն անցյալ կատարյալում: Ալափարսում *գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց*, Արզականում՝ *գ՛ընաց, մընաց*, Գառնիում և Քաղսիում՝ *գ՛աց // գ՛ընաց, մաց // մընաց*: Խոսվածքներում *չ* ածանցով բայեր չկան, պատճառական ածանցն է *ցըն*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի // պըդի:*

Այսպիսով, դիտարկվող բոլոր չորս տարբերակները նախ և առաջ բնութագրվում են Մակուի խոսվածքին բնորոշ ընդհանուր հատկանիշներով, ինչպիսիք են երկբարբառային հնչյունների առկայությունը, բառասկզբում հինհայերենյան *է*, *ո* միավորների դիմաց այլ ձևերի առկայությունը, բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը, շնչեղ ձայնեղների առկայությունը, հետնալեզվայինների քմայնացումը, բաղաձայնանախորդ դիրքերում հպաշփականների վերածումը շփականների, բառասկզբում ձայնավորից առաջ հագագի հավելումը, օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *կ*-ի գործածությունը, վերջնավանկային շեշտի առկայությունը, բացառականի ձևավորումը *ց*-ով, ներգոյականի իմաստի արտահայտությունը հայցականով կամ սեռականով և *մեջ* կապով, որոշյալ հոդի դրսևորումը *ը* և *ն* տարբերակներով, անձնական դերանունների տրական հոլովում *ի* հավելվածի առկայությունը, *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայի, անցյալ կատարյալի ներգործաձև և կրավորաձև վերջավորությունների առկայությունը, բայական *չ* ածանցի բացակայությունը, պատճառական *ցըն* ածանցի դրսևորումը և այլն: Խոսվածքին այս կամ այն չափով բնորոշ մի շարք հատկանիշներ էլ (նկատի ունենք այնպիսի հատկանիշներ, որոնք դրսևորվում են նաև Մակուի խոսվածքի՝ Սևանի տարածաշրջանի տարբերակներում[110]) դիտարկվող բնակավայրերում մասնակիորեն կամ տարբերակային ձևերով են արձանագրվել: Այդպիսիք են, օրինակ, *ա* ձայնավորի որոշ չափով շրթնայնացած արտասանությունը, հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի դրսևորումը, միավանկ բառերի սկզբում *հո*-ի դիմաց *ֆո*-ի առկայությունը, քմայնացած հետնալեզվայինների դրսևորման յուրահատկությունները, Ա վերջադրական հոլովման դրսևորումը, *ով* դերանվան դիմաց *վով*-ի գործածությունը, *գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերը, ներգոյականի իմաստի արտահայտությունը տրական հոլովով, որոշյալ

[110] Մակուի խոսվածքի այս դրսևորումների մասին տե՛ս Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 73-81:

հողի դրսևորման որոշ յուրահատկությունները, անձնական դերանունների տրականում *իկ* հավելվածի դրսևորումը, հարակատար դերբայի ձևավորումը *ուկ*-ով կամ *ած*-ով և այլն: Հետաքրքրական է, որ Մակուի խոսվածքի՝ Կոտայքի մարզի դրսևորումներում արձանագրվել են ընդամենը երկու հատկանիշներ, որոնք չեն դիտվել նույն խոսվածքի՝ Գեղարքունիքի մարզի դրսևորումներում: Նկատի ունենք օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի *ե* // *է* ձևը Քաղսիի խոսվածքում[111] և բայի անցյալի ձևերի առաջին դեմքում *մ* հավելվածի առկայությունը, որ դիտվել է Ալափարսի, Քաղսիի և Գառնիի խոսվածքներում: Պետք է նկատել, որ դիտարկվող խոսվածքները էական զանազանություններ չունեն, միմյանց նկատմամբ տարբերակված հարաբերություններ երևան չեն բերում: Որոշ առումով առանձնանում են Քաղսիի և Գառնիի խոսվածքները. առաջինը՝ օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի յուրահատուկ ձևով, հպականի՝ քմայնացմամբ հպաշփականի վերածվելով, երկրորդը՝ *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությամբ և հարակատարի *ուկ* վերջավորությամբ:

[111] Այս հատկանիշը բնորոշ է Արծափի խոսվածքի՝ թե՛ Գեղարքունիքի, թե՛ Կոտայքի մարզերում գործածվող տարբերակներին, և հնարավոր է, որ Քաղսիի պարագայում Արծափի խոսվածքի ազդեցության հետևանք է:

## Բ. Արծափի խոսվածքը[112] Կոտայքի մարզում

Արծափի խոսվածքը Կոտայքի մարզում գործածվում է Հրազդանի տարածաշրջանի Մեղրաձոր, Նաիրիի տարածաշրջանի Արագյուղ և Մրգաշեն գյուղերում: Երեք գյուղերի բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Բայազետի գավառի Արծափ գյուղից: Ժամանակին Արագյուղ են եկել նաև գաղթականներ Արճեշից, Կարսից, Իգդիրից:

Մրգաշենի և Մեղրաձորի խոսվածքներն ունեն երկբարբառային *ե*, *ո* հնչյուններ: Արագյուղի խոսվածքում հստակ է *ե* երկբարբառային հնչյունի առկայությունը, իսկ *ո* երկբարբառայինի գործածությունը տարածված և օրինաչափ չէ: Երեք խոսվածքում էլ միավանկ բառերի սկզբում *ե*,*ո* միավորներից առաջ առկա է բաղաձայնական տարրի հավելում, իսկ բազմավանկ բառերի սկզբում համապատասխանաբար առկա են *է* և *օ* հնչյուններ: Գործածական է մոտավորապես *եը* արտասանությամբ հնչյուն, որը *ե* երկբարբառային հնչյունի մի տարբերակն է և հանդիպում է բառավերջում, ինչպես նաև գործառում է իբրև էական բայի եզակի երրորդ դեմքի ձև: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում դրսևորվում է քմայնացած ա̈ ձայնավոր, Արագյուղի խոսվածքում երբեմն այդ հնչյունը *ո*-ին նախորդող դիրքում հանդես է գալիս նաև *ե*-ի դիմաց: Խոսվածքներին բնորոշ են բազմավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը, բառավերջի *ա* ձայնավորի՝ որևէ մասնիկի հավելման դեպքում *է*-ի վերածվելը, բառասկզբում շնչեղ ձայնեղների գործածությունը, բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների և շնչեղ խուլերի դիմաց խուլերի, նույն դիրքերում նախնական խուլերի դիմաց ձայնեղների առկայությունը: Արագյուղը և Մրգաշենը ունեն քմայնացած հետնալեզվային հպականներ, Արագյուղում դրանք երբեմն

[112] Այս խոսվածքի ընդհանուր բնութագիրը տե՛ս Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 82-85:

վերածվում են հպաշփականների: Բոլոր խոսվածքներում հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի, բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց գործածվում է *յ*, *նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է դրսևորվում *կայնել* ձևում, բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է հագագի հավելում, երբեմն *հ*-ի դիմաց գործածվում է *խ*, միավանկ բառերի սկզբում *հ*-ի դիմաց *ֆ* է առկա *ո*-ից առաջ, փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ*, շեշտը վերջնավանկային է:

Հիմնականում ընդհանուր են նաև քերականական հատկանիշները: Խոսվածքներում ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, ինչպես նաև հասարակ անունների սեռականը կարող է կազմվել *յ*-ով, բացառականը ձևավորվում է *ծ* (ց)-ով, ներգոյականի իմաստը կարող է արտահայտվել հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով, բայց շատ տարածված է այս իմաստի արտահայտությունը տրական հոլովով: Արագյուղի և Մրգաշենի խոսվածքներում հատուկ տեղանունները ենթարկվում են Ա վերջադրական հոլովման: Բոլոր խոսվածքներում գործածական են որոշյալ հոդի երկու տարբերակներն էլ: Արագյուղում որոշյալ հոդը երբեմն կարող է բացակայել, Մեղրաձորում ձայնավորով ավարտվող բառերը կարող են ստանալ կրկնակի հոդ: Խոսվածքներում անորոշ հոդն ունի նախադաս գործածություն, անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված, գործածական է կրճատ *քե* ձևը, ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ, *ով* դերանվան դիմաց գործածվում է *վօվ* // *վով* ձևը, որի սեռականն է *ում:* Արագյուղի և Մեղրաձորի խոսվածքներում բայը Ա, Ե խոնարհումների հետ ունի նաև Ի խոնարհում: Բոլոր խոսվածքներում սահմանականի ներկան և անցյալ կատարյալը ձևավորվում են *ըմ* // *ում* վերջավորություն ունեցող անկատար դերբայով, *գալ, լալ, տալ* բայերի դեպքում անկատարի վերջավորությունն ավելանում է անորոշի վրա: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն, օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն: Մրգաշենի և

Արագյուղի խոսվածքներում հարակատարն ունի *ուգ, ած* վերջավորություններ, Մեղրաձորի խոսվածքում՝ *ուգ* վերջավորություն: Երեք խոսվածքներում էլ էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, է* (*եը*) // *ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերից: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի սովորական ձևերն են՝ *գ՛ընած, մընած,* երբեմն հանդիպում են նաև՝ *գ՛ած, մած:* Ե խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալում ունեն ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններ: Ըղձական անցյալի ապառնին (նաև դրանից կազմվող ենթադրական ու հարկադրական եղանակների անցյալի ապառնիները) ունի վերլուծական ձևեր: Պատճառական ածանցն է *ծըն* (ցըն): Խոսվածքները բայական *չ* ածանց չունեն: Հարկադրական եղանակը կազմվում է *պըղի* եղանակիչով: Արագյուղում գործածվում է *կօ* հաստատական մասնիկը:

Այսպիսով, դիտարկվող երեք տարբերակները բնութագրվում են Արծափի խոսվածքի հիմնական հատկանիշների ընդհանրությամբ՝ առանձին դեպքերում հանդես բերելով որոշ յուրահատկություններ, իրողություն, որ բնական է բարբառախոս բոլոր բնակավայրերի համար:

## Գ. Խառը տիպի խոսվածքները Կոտայքի մարզում

Կոտայքի մարզում շատ են այն բնակավայրերը, որոնք ունեն խառը տիպի խոսվածքներ: Դրանց թիվը, մեր դիտարկումներով, հասնում է երկու տասնյակի: Աբովյանի տարածաշրջանում խառը տիպի խոսվածքներ ունեն Բալահովիտ, Գեղադիր, Գեղաշեն, Ջառ, Ջովաշեն, Էլար, Կաթնաղբյուր, Կամարիս, Կապուտան, Հացավան, Նոր Գյուղ, Ողջաբերդ, Սնաբերդ բնակավայրերը, Հրազդանի տարածաշրջանում՝ Բջնի և Ֆանտան գյուղերը, Նաիրիի տարածաշրջանում՝ Արգել, Գետամեջ, Թեղենիք, Սարալանջ, Քարաշամբ բնակավայրերը: Պայմանավորված բնակիչների ծագումնաբանական յուրահատկություններով, գրական ու խոսակցական լեզուների, Արարատյան բարբառի ազդեցություններով՝ նման խոսվածքները զուգորդում են տարբեր բարբառների հատկանիշներ, և դժվար է անվերապահորեն դրանք վերագրել բարբառներից որևէ մեկին[113]: Նկատելի է, որ Կոտայքի մարզի խառը տիպի խոսվածքներում հիմնականում դրսևորվում են Արարատյան բարբառի և որևէ այլ բարբառի կամ բարբառների հատկանիշներ, որը բնական է, եթե նկատի ունենանք հիշյալ բնակավայրերի հիմնադրման հանգամանքները, միջավայրը, բնակիչների նախնիների լեզվա-

[113] Այս կարգի բարբառային միավորներ ժամանակին ՀԽՍՀ Հոկտեմբերյանի շրջանում (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջան) դիտարկել է Ս. Բաղդասարյան-Թափալցյանը: Ներկայացնելով Ջրաշեն գյուղի խոսվածքը՝ նա գրում է. «Բնակչությունը խոսում է մի խառնալեզվով, որի վրա զգացվում է գրական լեզվի ուժեղ ազդեցությունը» (տե՛ս **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 12): Բարբառագետը նույն կարգի բնութագրումներ է տալիս մի շարք այլ գյուղերի և եզրակացնում. «Պատմական իրադրությունները այստեղ ևս դրել են իրենց կնիքը, հետևանքը եղել է այն, որ նույն գյուղում բնակվում են զանազան բարբառների, նույն բարբառի տարբեր խոսվածքների ներկայացուցիչներ, իսկ շատ գյուղերում էլ որևէ բարբառ, խոսվածք անաղարտությամբ չի պահպանվել» (նշվ. աշխ., էջ 14):

կան յուրահատկությունները: Հիշյալ բոլոր խոսվածքներն էլ ներկան և անցյալ անկատարը կազմում են *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (երբեմն զուգահեռաբար նաև այլ եղանակով), սակայն այդ հատկանիշը զուգորդվում է Ում ճյուղին ոչ բնորոշ բազմաթիվ հատկանիշներով, և այդ հանգամանքը, մեր կարծիքով, թույլ չի տալիս այդ խոսվածքները համարել Արարատյան բարբառի տարբերակային դրսևորումներ[114]: Բայց և Ում ճյուղի հիմնական բնութագրիչ հանդիսացող հիշյալ հատկանիշի առկայությունը թույլ չի տալիս Մշո, Վանի կամ Խոյ-Մարաղայի բարբառների ցայտուն հատկանիշներ ունեցող խոսվածքները վերագրել այդ բարբառներին: Մյուս կողմից՝ դիտարկվող խոսվածքները, կարծում ենք, միջխոսվածք համարվել չեն կարող, որովհետև ներկայացնում են ոչ թե մի բարբառից մյուսին աստիճանական անցման բնական վիճակներ, այլ առաջացել են արտալեզվական գործոնների՝ բարբառախոս տարբեր հանրությունների գաղթերի ու տեղաշարժերի, բարբառային միավորների կամայական խաչաձևումների ու նոր միջավայրի ազդեցությունների միջոցով[115]: Այնպես որ, նպատակահարմար ենք համարում հիշյալ բարբառային միավորներն առանձնացնել իբրև խառը տիպի խոսվածքներ՝ այդպիսով ընդգծելով նաև նրանց առաջացման ու ձևավորման յուրահատկությունը:

---

[114] Ռ. Մարկոսյանը Արարատյան բարբառի շրջանակում է ներառում Բջնիի, Գեղաշենի, Ջառի, Էլարի, Կաթնաղբյուրի և Բալահովիտի խոսվածքները՝ նշելով դրանց մի մասի վրա Բայազետի բարբառի զգալի ազդեցությունը (տե՛ս **Ռ. Մարկոսյան**, Արարատյան բարբառը, էջ 38-52): Նման մոտեցումը հիմք է դառնում, որ Արարատյան բարբառին, թեկուզ և մասնակիորեն, հանիրավի վերագրվեն այլ բարբառների հատկանիշներ, ինչպես՝ հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը, ներգոյական հոլովի բացակայությունը և այլն (տե՛ս նշվ. աշխ., էջ 74-75, 107):

[115] Արձանագրելով, որ Կաթնաղբյուրի խոսվածքը մի շարք հատկանիշներով նման է Արարատյան, Բայազետի և Խոյի բարբառներին՝ ունենալով այդ բարբառները ներկայացնող հարևան գյուղեր, իսկ Բալահովիտի խոսվածքն էլ ունի Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ՝ Ռ. Մարկոսյանը այդ երկու խոսվածքները համարում է միջխոսվածք (տե՛ս նշվ. աշխ., էջ 51):

Հետաքրքրական է, որ ավելի հաճախ խոսվածքներում զուգորդվում են Արարատյան և Մշո բարբառների հատկանիշները (7 խոսվածքում Արարատյանի հետ առկա է միայն Մշո բարբառի շերտը, ևս ութ խոսվածքում զուգորդվում են նաև այլ բարբառային միավորների տարրեր): Որոշ դեպքերում Արարատյան բարբառի հատկանիշները (առանձին կամ այլ բարբառային միավորների հատկանիշների հետ) զուգորդվում են Վանի (4 խոսվածք), Խոյ-Մարաղայի (5 խոսվածք), Բայազետի (2 խոսվածք), Դիադինի (1 խոսվածք) բարբառների, Թավրիզի խոսվածքի (2 խոսվածք) հատկանիշների հետ:

Արարատյան և Մշո բարբառների հատկանիշներ են դիտվում Արզելի, Գետամեջի, Էլարի, Թեղենիքի, Սարալանջի, Սևաբերդի և Ֆանտանի խոսվածքներում, Արարատյան, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներ ունեն Բալահովիտի և Գեղաշենի խոսվածքները, Արարատյան, Մշո և Վանի բարբառների հատկանիշներ են զուգորդում Ջրվաշենի և Քարաշամբի խոսվածքները, Արարատյան, Մշո և Բայազետի բարբառների հատկանիշներ՝ Կապուտանի խոսվածքը, Արարատյան, Մշո բարբառների և Թավրիզի խոսվածքի հատկանիշներ՝ Ձառի և Հացավանի խոսվածքները, Արարատյան, Մշո, Խոյ-Մարաղայի և Վանի բարբառների հատկանիշներ՝ Կաթնաղբյուրի խոսվածքը, Արարատյան և Վանի բարբառների հատկանիշներ ունեն Գեղադիրի և Ողջաբերդի խոսվածքները, Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ՝ Բջնիի խոսվածքը, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներ՝ Նոր Գյուղի խոսվածքը, Արարատյան, Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառների հատկանիշներ՝ Կամարիսի խոսվածքը:

Դիտարկումները երևան են հանում մի շարք հատկանիշներ, որոնք ընդհանուր կամ գրեթե ընդհանուր են խառը տիպի բոլոր խոսվածքների համար: Հնչյունական նման հատկանիշներից են հետևյալները. Էլարից բացի՝ բոլոր խոսվածքներում դրսևորվում է երկբարբառային *է* հնչյուն (Բալահովիտի, Սարալանջի և Բջնիի

խոսվածքներում՝ որոշ տատանումներով). Բալահովիտի, Էլարի և Սարալանջի խոսվածքներից բացի՝ մյուս խոսվածքներում գործածվում է երկբարբառային *ո* հնչյուն (կայուն չէ Բջնիի խոսվածքում). բոլոր խոսվածքներում միավանկ բառերի սկզբում *ե*-ից և *ո*-ից առաջ առկա է բաղաձայնական տարրի հավելում (բացառություն է *որ* շաղկապի *օր* արտասանությունը Զովաշենի, Թեղենիքի, Կապուտանի, Սարալանջի, Սևաբերդի, Քարաշամբի խոսվածքներում). բազմավանկ բառերի սկզբում նախնական *ե*, *ո*-ի դիմաց գործածվում են *է*, *օ* ձայնավորներ. քմայնացած ö ձայնավոր տարբեր հաճախությամբ հանդիպում է բոլոր խոսվածքներում, իսկ Գեղադիրի խոսվածքում օրինաչափորեն դրսևորվում է նաև բառասկզբի խլացած բաղաձայններից հետո. ընդհանուր է բառավերջում ավելացող մասնիկից առաջ *ա*>*է* անցումը, միայն Նոր Գյուղի խոսվածքում հաճախ նման անցում չի կատարվում. բոլոր խոսվածքներում շեշտը վերջնավանկային է, և բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը սովորական է. Նոր Գյուղից բացի՝ բառասկզբում շնչեղ ձայնեղ բաղաձայններ դրսևորվում են բոլոր խոսվածքներում (Բալահովիտի, Զովաշենի, Կաթնաղբյուրի խոսվածքներում շնչեղ ձայնեղներին զուգահեռ գործառում են նաև խլացած բաղաձայններ, Գեղադիրի, Կամարիսի, Ողջաբերդի խոսվածքներում սովորական է բառասկզբում ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը, բայց հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ, Գեղաշենի, Զառի խոսվածքներում շնչեղ ձայնեղները երբեմն խուլի տպավորություն են թողնում). ոչ բառասկզբի նախնական ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են շնչեղ խուլեր բոլոր խոսվածքներում՝ Սարալանջի խոսվածքից բացի, որում այդ դեպքում, ինչպես նաև նախնական շնչեղ խուլերի դիմաց գործածվում են խուլեր (մասամբ այդպես է նաև Թեղենիքի խոսվածքում). Թեղենիքի և Սարալանջի խոսվածքներում ոչ բառասկզբի խուլերի դիմաց առկա են ձայնեղներ, մյուս խոսվածքներում այդ իրողությունն ունի մասնակի դրսևորումներ. ընդհանուր է բառասկզբում ձայնավորից առաջ *հ*-ի

հավելումը (տարբեր ընդգրկումներով): Քերականական ընդհանուր հատկանիշներից են հետևյալները. բացառականի կազմություն *ց*-ով վերջավորությամբ, ներգոյականի իմաստի արտահայտություն հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (միայն Էլարը և Ֆանտանը ունեն նաև ներգոյական հոլով). որոշյալ *ը* և *ն* հոդերի առկայություն (Գետամեջում և Քարաշամբում նկատելի է *ն* հոդի ավելի գործածական լինելը, Զովաշենում, Թեղենիքում, Կամարիսում, Կապուտանում, Ողջաբերդում, Սնաբերդում, Քարաշամբում որոշյալ հոդը միշտ չէ, որ դրսևորվում է). անորոշ հոդը միշտ ունի նախադաս կիրառություն. անձնական դերանունների տրական հոլովի ձևերում առկա է *ի* հավելված. ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ. բայի ներկա ժամանակաձևը կազմվում է *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (Կապուտանում և Կամարիսում զուգահեռաբար գործածական է *կը* մասնիկով ներկան, Գեղադիրում, Զովաշենում, Թեղենիքում, Սնաբերդում և Քարաշամբում *կը* մասնիկով ներկան ավելի քիչ է հանդիպում, Նոր Գյուղում ներկան արտահայտվում է նաև *լ*-ով ավարտվող դերբայի մասնակցությամբ վերլուծական կառույցով). վաղակատար դերբայը ունի *ը*-ով վերջավորություն. էական բայի ներկայի ձևերն ունեն *ե* //*է* կազմիչ և եզակի երրորդ դեմքի *ա* ձև. նույն այդ բայի անցյալի ձևերում առկա է *է*-ի անկում. որպես կանոն՝ անցյալ կատարյալը կազմվում է թե՛ ցոյական, թե՛ ոչ ցոյական հիմքերից (Գեղաշենի խոսվածքում սովորաբար կազմվում է անցոյական հիմքից). անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (բացառություն են Զառի և Հացավանի խոսվածքները). բացակայում է բայական *չ* ածանցը. գործածական է պատճառական *ցըն* ածանցը (բացառություն են Սնաբերդի և Քարաշամբի խոսվածքները, որոնցից առաջինն ունի *ուց* ածանց, երկրորդը՝ *ցըց* ածանց). Հարկադրական եղանակն արտահայտվում է *պըտի* // *բըդի* եղանակիչով:

Խառը խոսվածքների բերված ընդհանուր հատկանիշների շրջանակում կարելի է արձանագրել հետևյալ իրողությունները.

1. Իրենց կենսունակությունը շարունակում են պահպանել խոր հնություն ունեցող և որոշակի տարածաշրջանների բարբառային խոսքի հնչյունաքերականական բնութագրիչներ հանդիսացող, ինչպես նաև ընդհանուր բնույթ ունեցող հատկանիշները (երկբարբառային *է*, *ո* հնչյունների առկայություն, վերջնավանկային շեշտ, շնչեղ ձայնեղ բաղաձայնների գործածություն, ցուցական դերանունների եռաշարք համակարգ, անցյալ կատարյալում Ե խոնարհման պարզ բայերի ներգործաձև և կրավորաձև վերջավորությունների տարբերակվածություն).

2. Խառը խոսվածքները ներկայացնում են գրեթե ողջ բարբառային լեզուն կամ դրա մի զգալի հատվածն ընդգրկած մի շարք զարգացումներ (միավանկ բառերի սկզբում *ո*-ից և *է*-ից առաջ բաղաձայնական տարրի հավելում, փոխառյալ բառերում քմայնացած *ա*-ի դրսևորում այս կամ այն չափով, բառավերջում *ա*>*է* անցում՝ ավելացող մասնիկից առաջ, ոչ բառասկզբի ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի առկայություն, նույն այդ դիրքերում երբեմն խուլերի դիմաց ձայնեղների առկայություն, բառասկզբում ձայնավորից առաջ հագագի հավելում):

3. Մի շարք հատկանիշներ ընդհանրացել են արևելահայ լեզվական միջավայրի (գրական արևելահայերեն, խոսակցական լեզու, Արարատյան բարբառ) ազդեցությամբ: Այսպես, բոլոր խոսվածքները ըստ ձևաբանական դասակարգման ներկայացնում են Ում ճյուղը, ընդ որում՝ որոշ դեպքերում հանդիպում է ներկայի կազմություն միայն *ում* // *ըմ* մասնիկ ունեցող անկատար դերբայով (Արգել, Գեղաշեն, Գետամեջ, Ջառ, Էլար, Կաթնաղբյուր, Հացավան, Ողջաբերդ, Սարալանջ, Բջնի), մյուս դեպքերում՝ զուգահեռաբար նաև այլ եղանակներով՝ Կը ճյուղին բնորոշ ձևով (Բալահովիտ, Գեղադիր, Ջովաշեն, Թեղենիք, Կամարիս, Կապուտան, Սևաբերդ, Քարաշամբ), Լիս ճյուղին բնորոշ ձևով (Նոր Գյուղ). բոլոր խոսվածքներն ունեն *ց*-ով բացառական, նախադաս անորոշ հոդ, *ն*-ի հետ նաև *ը* որոշյալ հոդ, էական բայի եզակի երրորդ դեմքի *ա* ձև, պատճառական *ցըն* ածանց:

4. Հատկանիշների մեկ այլ խումբ, վերաբերելով հիմնականում արևմտյան բարբառներին, նոր միջավայրում կենսունակ է գտնվել և պահպանվել: Այդպիսի հատկանիշներից են՝ բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, ներգոյականի իմաստի արտահայտությունը հայցականով կամ կապային կառույցով, անձնական դերանունների տրականում *ի* հավելվածի առկայությունը, վաղակատարի կազմությունը *ր*-ով վերջավորությամբ:

5. Երբեմն զուգահեռ գործածություն ունեն նույն իրողության՝ բարբառների տարբեր խմբերի բնորոշ տարբերակային ձևերը, ինչպես՝ Ե խոնարհման պարզ բայերի կազմությունը ցոյական և ոչ ցոյական հիմքերով:

6. Հնարավոր է նաև, որ զուգորդվող բարբառների հատկանիշները համընկնեն, ինչպես էական բայի՝ անցյալ անկատարի երկձայնավոր կազմությունների *է* հնչյունի կորստով ձևերը[116]:

Խառը տիպի խոսվածքների բնութագրման համար էական են նաև ընդհանուր բնույթ չունեցող հատկանիշները. դրանք թույլ են տալիս պատկերացում կազմելու տվյալ բարբառային միավորի կազմում առկա ենթաշերտերի և դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ: Մյուս կողմից՝ հնարավոր է դառնում դիտարկել խառը տիպի խոսվածքներում բարբառային հատկանիշների կենսունակության խնդիրը:

Արարատյան և Մշո բարբառների հատկանիշները զուգորդող խոսվածքներում Մշո բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշներ ավելի շատ արձանագրվել են Թեղենիքի, այնուհետև՝ Սնաբերդի, Սարալանջի և Արզելի խոսվածքներում: Մշո բարբառի հատկանիշները պակաս ցայտուն են Ֆանտանի, Գետամեջի և Էլարի խոսվածքներում: Արարատյան, Մշո և այլ բարբառների հատկանիշներ զուգորդող խոսվածքների մեջ Մշո բարբառի

---

[116] Հիմնականում արևելյան բարբառներին բնորոշ այս հատկանիշը հատուկ է նաև Մշո, Վանի, Դիադինի բարբառներին (տե՛ս Գ. **Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 108-119, թիվ 89 հատկանիշ):

հատկանիշներ ավելի շատ արձանագրվել են Քարաշամբի, Զովաշենի, ապա Կապուտանի և Գեղաշենի խոսվածքներում: Նման հատկանիշները ավելի քիչ են Բալահովիտի, Հացավանի, Զառի և Կաթնաղբյուրի խոսվածքներում: Արարատյան և Վանի բարբառների հատկանիշները զուգորդող Գեղադիրի և Ողջաբերդի խոսվածքներում Վանի բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշները ավելի շատ են, քան Արարատյան, Վանի և այլ բարբառների հատկանիշներ զուգորդող Զովաշենի, Կաթնաղբյուրի և Քարաշամբի խոսվածքներում: Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշները զուգորդող Նոր Գյուղի խոսվածքում Խոյ-Մարաղայի բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշները ավելի շատ են, քան Արարատյան, Խոյ-Մարաղայի և այլ բարբառների հատկանիշներ զուգորդող խոսվածքներում, ընդ որում՝ վերջին խմբում ընդգրկված Կամարիսի խոսվածքում էականորեն ավելի շատ են արձանագրվել Խոյ-Մարաղայի բարբառի հատկանիշներ, քան Բալահովիտի, Գեղաշենի և Կաթնաղբյուրի խոսվածքներում: Արարատյան, Բայազետի և Մշո բարբառների հատկանիշներ զուգորդող Կապուտանի խոսվածքում Բայազետի բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշներ ավելի շատ են արձանագրվել, քան Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ զուգորդող Բջնիի խոսվածքում: Արարատյան, Մշո բարբառների և Թավրիզի խոսվածքի հատկանիշներ ունեցող Զառի և Հացավանի խոսվածքներում Թավրիզի խոսվածքի քիչ հատկանիշներ են արձանագրվել: Արարատյան, Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառների հատկանիշներ ունեցող Կամարիսի խոսվածքում Դիադինի բարբառի հատկանիշները քիչ չեն: Ինչ վերաբերում է Արարատյան բարբառի՝ մասնակի դրսևորում ունեցող հատկանիշներին, ապա այդպիսիք դիտվել են քիչ թվով խոսվածքներում: Նման հատկանիշներ ավելի շատ ունեն Բալահովիտի և Էլարի խոսվածքները, մի քանի այլ խոսվածքներում (Կաթնաղբյուրի, Գեղաշենի, Զառի, Նոր Գյուղի, Բջնիի, Հացա-

վանի, Սարալանջի, Սնաբերդի, Կամարիսի, Գետամեջի) դիտվել են այդ կարգի մեկ-երկու հատկանիշներ:

Պետք է նկատել, որ դիտարկվող խոսվածքներում արձանագրված, բայց ընդհանուր տարածում չունեցող մի շարք հատկանիշներ բնորոշ են տարբեր բարբառների, հետևաբար այդ բարբառների խաչաձևման դեպքերում չեն կարող վերագրվել մեկին կամ մյուսին: Այսպես, հարակատարի *ած*-ով ձևերը Արարատյան և Վանի կամ Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներով խոսվածքներում անվերապահորեն չեն կարող վերագրվել բարբառներից մեկին, որովհետև երեքին էլ այդ հատկանիշը բնորոշ է, չնայած չի կարելի անտեսել, որ *ած*-ով հարակատարը Արարատյան բարբառի միակ ձևն է, իսկ մյուս բարբառներում զուգահեռաբար գործածվում է նաև *ուկ*-ով ձևը: Այդպես նաև բարբառներից մեկին չեն կարող վերագրվել բառասկզբի ձայնեղների դիմաց խուլի առկայություն, քմայնացած հետնալեզվայինների առկայություն, *հ*-ի դիմաց *խ*-ի առկայություն հատկանիշները, եթե տվյալ խոսվածքն ունի Վանի և Խոյ-Մարաղայի բարբառների շերտեր:

Տարբեր բարբառների՝ դիտարկվող խոսվածքներում մասնակի դրսևորում ունեցող հատկանիշների համամասնությունների հաշվառումով այդ խոսվածքները կարելի է բաժանել երկու խմբի.

ա) խոսվածքներ, որոնցում ակնհայտ է բարբառային որևէ միավորի հատկանիշների գերազանցությունը.

բ) խոսվածքներ, որոնցում բարբառային որևէ միավորի հատկանիշներ զգալի գերակշռություն չունեն:

Առաջին խմբի մեջ են Մշո բարբառի հատկանիշների գերազանցություն ունեցող Թեղենիքի, Սնաբերդի, Սարալանջի, Արգելի, Գետամեջի, Քարաշամբի, Ջովաշենի, Կապուտանի խոսվածքները, Վանի բարբառի հատկանիշների գերակշռություն ունեցող Գեղադիրի և Ողջաբերդի խոսվածքները, Խոյ-Մարաղայի բարբառի հատկանիշների գերակշռություն ունեցող Նոր Գյուղի խոսված-

քը, Արարատյան բարբառի հատկանիշների գերակշռություն ունեցող Բալահովիտի, Էլարի և Բջնիի խոսվածքները:

Երկրորդ խմբում են Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառների շերտեր զուգորդող Կամարիսի խոսվածքը, Վանի, Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառների հատկանիշներ ներկայացնող Կաթնաղբյուրի խոսվածքը, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների շերտեր ունեցող Գեղաշենի խոսվածքը, Արարատյան, Մշո բարբառների և Թավրիզի խոսվածքի հատկանիշներով բնութագրվող Հացավանի և Ջառի խոսվածքները:

Խառը տիպի խոսվածքներում ընդհանուր ընդգրկում չունեցող հատկանիշները տարբեր են ըստ իրենց տարածվածության: Ավելի մեծ տարածում ունեցող հատկանիշներից են՝ *ած*-ով հարակատար (14 խոսվածք), բառասկզբի *դ*-ի դիմաց՝ *կ* (12 խոսվածք), Ա վերջադրական հոլովման առկայություն (11 խոսվածք), *ուկ*-ով հարակատար (10 խոսվածք), *գնալ, մնալ* բայերի անցյալի *գաց, մաց* հիմքեր (10 խոսվածք) և այլն: Քիչ հանդիպող հատկանիշներից են՝ Ա, Ե խոնարհումների հետ նաև Ի խոնարհման առկայություն (5 խոսվածք), տրամաբանական շեշտի արտահայտման համար օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի լրացուցիչ կիրառություն (5 խոսվածք), հոգնակի թվում Ու հոլովման առկայություն (4 խոսվածք), *դու* անձնական դերանվան տրականի կրճատ *քե* ձևի գործածություն (4 խոսվածք), բառասկզբի *հ*-ի դիմաց՝ *ֆ* (3 խոսվածք) և այլն: Երկուական խոսվածքներում են դրսևորվում հետևյալները՝ ոչ բառասկզբում շնչեղ խուլերի դիմաց՝ պարզ խուլեր, որևէ դիրքում *հ*-ի դիմաց՝ *յ*, բառասկզբի *խ*-ի դիմաց՝ *հ*, միջձայնավորական դիրքում *ս*-ի դիմաց՝ *հ*, Ո ներքին հոլովման ընդգրկման ընդլայնում, *է*-ով բացառական, որոշյալ հոդի գործածություն նաև բացառական և գործիական հոլովներում, Ե խոնարհման պարզ բայերի՝ անցյալ կատարյալի *ա*-ով վերջավորություններ: Մեկական խոսվածքներում արձանագրված հատկանիշներից են՝ հետնալեզվային հպականների դիմաց՝ հպաշփականներ, հետնալեզվային հպականների դիմաց՝ *յ*[h] կամ *յ*, բառասկզբի *դ*-ի դիմաց՝ *խ*, ներգոյական հոլովի առկայություն,

հարցահարաբերական դերանվան *վով* ձև, *լ*-ով վերջավորությամբ անկատար դերբայ, *էլ* շաղկապի դիմաց՝ *լէ* և այլն:

Մասնակի դրսևորում ունեցող մի շարք հատկանիշների մեծ տարածվածությունը կարելի է պայմանավորել նրանով, որ դրանք բնորոշ են խառը խոսվածքներ ձևավորած մեկից ավելի բարբառների: Այսպես, *ած*-ով հարակատարը բնորոշ է Արարատյան, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառներին, Թավրիզի խոսվածքին. բառասկզբի *դ*-ի դիմաց *կ* հանդիպում է Վանի, Մշո, Բայազետի բարբառներում. Ա վերջադրական հոլովման դրսևորումներ ունեն Մշո, Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի, Բայազետի բարբառները. *ուկ*-ով հարակատար ունեն Մշո, Բայազետի, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառները. քմայնացած հետնալեզվային հպականներ, բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլեր, անցյալ ժամանակաձևերում եզակի առաջին դեմքում հավելական *մ* հնչյուն ունեն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները. հինհայերենյան *հ*-ի դիմաց բառի բոլոր դիրքերում *խ* ունեն Վանի, Խոյ-Մարաղայի և Բայազետի բարբառները, Մշո բարբառի որոշ խոսվածքներ և այլն: Այլ դեպքերում հատկանիշի գործածականությունը կարող է պայմանավորված լինել այն կրող բարբառային միավորի տարածվածությամբ: Օրինակ, խառը տիպի խոսվածքներում ամենաշատը առկա է Մշո բարբառի շերտը, հետևաբար տարածում ունեն հիմնականում այդ բարբառին բնորոշ հատկանիշները: Որոշ հատկանիշների տարածմանը (ինչպես, օրինակ, *ած*-ով հարակատարի, դերանվան *օվ* ձևի առկայությունը) անշուշտ նպաստել է նաև արևելյան լեզվական միջավայրը:

Խառը տիպի խոսվածքներում հանդիպող պակաս կենսունակ, մարող հատկանիշները բարբառների անխառն դրսևորումներում նույնպես հաճախ կայուն արտահայտություն չունեն: Այլ դեպքերում որևէ հատկանիշի սակավ դրսևորումը կարող է պայմանավորված լինել՝ ա) այն կրող բարբառային միավորի՝ տարածաշրջանում թույլ ներկայությամբ (օրինակ, Թավրիզի

խոսվածքին հատուկ՝ Ե խոնարհման պարզ բայերի՝ անցյալ կատարյալի *ա*-ով վերջավորություններ ունենալը, Մշո բարբառի առանձին խոսվածքներում ոչ բառասկզբի շնչեղ խուլերի դիմաց պարզ խուլերի առկայությունը և բառասկզբի *դ*-ի դիմաց *խ*-ի դրսևորումը), բ) հատկանիշի՝ լեզվական քիչ միավորներ ընդգրկմամբ (օրինակ, բառասկզբում *հ*-ի դիմաց *ֆ*-ի և *խ*-ի դիմաց *հ*-ի առկայությունը, միջձայնավորական դիրքում *ս*-ի դիմաց *հ*-ի դրսևորումը) և այլն: Թերևս այստեղ պետք է դասել նաև ներգոյականի իմաստի՝ *ում* մասնիկով արտահայտության հատկանիշը, որը լեզվի գրական ու խոսակցական տարբերակներում նույնպես չունի համընդգրկուն բնույթ:

Նկատելի է, որ հատկանիշների պահպանման կամ մարման հարցում կարևոր դեր ունեն նաև լեզվական և հոգեբանական գործոնները: Օրինակ, արևելահայ միջավայրում արևմտյան բարբառների *կը* մասնիկով ներկան հեշտությամբ զիջում է դիրքերը *ում*-ով ներկային, որովհետև բազմագործառույթ ձև է՝ արտահայտելով նաև ապառնու և ենթադրական եղանակների իմաստներ. *ում*-ով ներկայի գործածությունը թեթևացնում է *կը*-ով ձևի գործառական ծանրաբեռնվածությունը: Կարծում ենք՝ դիտարկվող խոսվածքներում բառասկզբում *հ*>*ֆ*, *խ*>*հ* հատկանիշների (թեկուզ և սակավաթիվ բառերում) տարածմանը խոչընդոտող հանգամանք է տարածաշրջանում գործածվող Վանի, Խոյ-Մարաղայի, Բայազետի բարբառների, Մշո բարբառի մի շարք խոսվածքների՝ *հ*-ի դիմաց *խ*-ի գործածության հատկանիշը: Մյուս կողմից՝ խառը տիպի խոսվածքներում նահանջում են (կամ, համենայն դեպս, չեն տարածվում) այն հատկանիշները, որոնք խոսողների և լսողների կողմից հստակ գիտակցվում են, հաճախ առաջ են բերում հասկանալիության խնդիրներ, և որոնցից խոսողները սովորաբար ձգտում են խուսափել՝ հաղորդակցման ընթացքում անհարմարությունները շրջանցելու մղումով: Այդպիսի հատկանիշներ են, օրինակ, հետնալեզվային հպականների դիմաց հպաշփականների, նույն կարգի հնչյունների դիմաց *յ*<sup></sup>$^{h}$ կամ *յ* հնչյուն-

ների դրսևորումները, *ով* հարցահարաբերական դերանվան դիմաց *վով* ձևի, *էլ* շաղկապի դիմաց *լէ*-ի կիրառությունները և այլն:

Հավելենք, որ խառը տիպի խոսվածքներում (ինչպես ընդհանրապես բարբառային լեզվում) լեզվական իրողության տարբերակային ձևերը (կամ՝ բարբառային հատկանիշները) կարող են երկար ժամանակ համագոյակցել՝ չնայած դրանցից մեկի տարածվածությանը և մյուսի մարմանը:

Այսպիսով, խառը տիպի խոսվածքների ձևավորման, բարբառային տարբեր հատկանիշների զուգորդման, տարածման կամ դուրսմղման պատճառ կարող են դառնալ արտալեզվական ու լեզվական զանազան գործոններ, ինչպիսիք են բարբառախոս հանրույթի ծագումնաբանական անհամասեռությունը, բարբառային տարբեր միավորների տարատեսակ խաչաձևումները, լեզվական հատկանիշների, տարբերակային ձևերի տարատեսակ փոխհարաբերություններն ու գոյատևման հանգամանքները, լեզվի զարգացման պայմաններն ու միտումները և այլն: Կոտայքի մարզի խառը տիպի խոսվածքների ձևավորման գործում անհրաժեշտ է ընդգծել արևելյան լեզվական միջավայրի էական դերը, որ հատկապես դրսևորվում է ներկայի և անցյալ անկատարի ձևավորման միօրինականացմամբ, տարբեր բարբառների էական մի շարք հատկանիշների աստիճանական դուրսմղմամբ:

# ՄԱՍ 2.

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 2.1.

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

**ԱԲՈՎՅԱՆ** – Քաղաք Կոտայքի մարզում: Նախկինում՝ գյուղ Էլար: Աբովյան է վերանվանվել 1961 թ.: Քաղաք է դարձել 1963 թ.: Ունի մոտ 58 400 բնակիչ, որոնք ծագումով ներկայացնում են Հայաստանի տարբեր շրջաններ, հայաբնակ այլ վայրեր: Քաղաքում ընդհանուր առմամբ հաղորդակցվում են խոսակցական լեզվով, բայց նախկին Էլար գյուղը ներկայացնող թաղամասում դեռևս խոսում են խառը տիպի մի խոսվածքով, որը զուգորդում է մի կողմից՝ Արարատյան բարբառին, մյուս կողմից՝ արևմտյան բարբառներին բնորոշ հատկանիշներ: Հետագա շարադրանքը ներկայացնում է այդ խոսվածքը:

Էլարի[117] խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօր, վօտ, յէս, յէփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օսկօռ,

[117] Էլարի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1983 թ. լրացված թիվ 238 տետրում, առկա են նաև բնակավայրում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

օղղէլ, էրկանք, էրգու), բայց նաև՝ *վօչխար, վօչիլ, յէրգիր:* Խոսվածքում նկատվում է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղում (ավէլնալ, ամչըկօտ, բ՛ալնիք, գ՛օղնալ, սօվրէլ, օղղէլ, հօրքուր): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէն, վըրէն, փէսէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛այց, բ՛էրէլ, բ՛օղօքէլ, բ՛օց, գ՛առ, Գ՛առնիկ, գ՛ընդէլ, գ՛ըռնակ, դ՛ընէլ, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛էն, ձ՛էռ, ձ՛էթէլ, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (առաչ, մառթ): Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ (դըբռօց, առավօղ, էրգու, յէրգար, Վաչիգ, վօրդուց, աշխադէլ, մօղը, կըդրէլ, գ՛օռձ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, մէշկ, անէսկ, լըվասկ): Բառասկզբի ձայնավորից առաջ մի շարք դեպքերում առկա է *հ*-ի հավելում (հախպուր, հառչի, հինքը, հիրա, հէլնէլ, հէրէս, հըմէն): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կափաղ, կալմակալ, կարիբ, կասաբ, կօչ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, անք, անիք* մասնիկներով (աղջըգէք, էրէխէք, զօղթէցիք, մառտունէցիք, տըղամառթիք, ձ՛իանք, կընանիք): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրօչ* ձևը: Ո ներքին հոլովման են ենթակվում նաև այլ բառեր՝ *անօր, հընգօր, տէքօր, քըվօր:* Ու հոլովմամբ են հանդիպել *էրէխա, տըղա* բառերը (տըղու, էրէխու): Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման դեպքեր (Գօղթա, Մառդունա, Արամուսա, Մըհուբա, թունդըրա): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (դըբռօցից, էթալուց): Ներգոյական հոլովը կարող է որոշիչ հոդ ստանալ (Գօղթումն էր, խանութումն): Հաճախ ներգոյականի իմաստն ատահայտվում է հայցականով կամ սեռականով և մեջ կապով: Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (ձ՛էռը, վըրէն): Անորոշ հոդը նախադաս է (մէ տըղա): Ցուցական

դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի)։ Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քէզի, մէզի, ձ՛էզի։ Ով* դերանվան դիմաց առկա է *օվ*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը։* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրա, հիրանց // իրանց, ընդուց, ընդանք, ըտա, ըտան, ըտանօվ, ըտանք, ըտանց, ըստէ, ըտէ, ընդէ, ստէղ, ստէղուց, էսէնց, ըտէնց, ընէնց* և այլն։

Էական բայի ներկայի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն,* անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին։* Սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (անում էր, նըստում ի, էթում ա, տէնում ա)։ *Գալ, լալ, տալ* բայերի դեպքում հանդիպել են անկատար դերբայի *գ՛ալիս, լալիս, տալիս // գ՛ալըմ, լաց ըլնըմ, տալըմ* ձևերը։ Օժանդակ բային հաջորդելիս *գ՛ալիս, լալիս, տալիս* ձևերի վերջի *ս*-ն ընկնում է՝ *խի չէս գ՛ալի։* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ամուսնացէր, աշխադէր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *է* վերջավորություն (շուտ ա մահացէ)։ Երբեմն հանդիպում է *լ*-ով վաղակատար (էկէլ էն)։ Վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստը կարող է արտահայտվել առանց օժանդակ բայի (խանութումն աշխադէ)։ Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում երբեմն հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող է գործածվել օժանդակ բայի եզակի ձև՝ *կըպած ա իրար* (= կըպէր էն իրար)։ Հարակատար դերբայը հանդիպում է նաև *ուկ* վերջավորությամբ։ Վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայը կարող է կրկնվել (խըմօր էր անում էր, թօղում ի էթում ի, հարէվանն էր անում էր, չէր պօզվում էր)։ Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով (գ՛ընդի, ձ՛էն տըվի, նըշանին), երբեմն էլ՝ ցոյական հիմքով (թըխէցի)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց // գ՛ընաց, մաց // մընաց։ Տեսնել* բայի անցյալի հիմքում երբեմն *ս*-ի դիմաց առկա է *հ*՝ *յէս էմ տէհէ։* Անցյալ

կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (արի, պահէց, նըստա, պըսագվավ), եզակի թվի առաջին դեմքում՝ երբեմն *մ* հավելված՝ *ծախիմ, նըստամ*: Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը կարող է դրվել դերբայի վրա (չէլէր ա, չաշխատէ): Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր (թըռնէլ, փախնէլ): Պատճառական ածանցն է *ցըն* (աշխադացնէլ, միացընէլ, նըստըցընէլ): *Կը* եղանակիչը, միանալով բայասկզբի *հ*-ին կամ դրանից առաջ լինելով, դառնում է *գ՛* (գ՛ըհիշէս, գ՛ըլի): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի նըստի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ անվօր (տվյալ անունն ունեցող, անունավոր), առավօղը (առավոտյան), առուտուր անէլ, ավարիա, բըրախէլ, գ՛ըռնակ, դաբօ (մեծ կաթսա), զօռօվ, էս էրկօրը (մոտ ժամանակներս), թազա, թաթման, թաք, թունդըրա շուռթ, թունդիր, խառճըկաթ, խընօցի, խի, կաթնօվ, կամանց-կամանց, կայիշ, կանալ, կափաղ, կըռութ, կիսուր, կուռծ, համարա, հէրանք, հըմի, հըրօխպէր, հօրքուր, ձ՛էթել, ճըմուռ, մանդըր, մէնձ, մըսէ պըղինձ, մուխ, մօղիկ, յա… յա, յէրզար, չառփ, չեմ չու, պաչէլ, պըղինձ, պըսագվէլ, պուճուր, պօպօք, ջ՛ոյէլ, սաղ (բոլոր), սըպաս, վօչխար, տափէլ, տէղը (փոխարեն), տըփէլ, քյօռփա և այլն:

**ԱԼԱՓԱՐՍ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Այլաբերից գյուղ, Այլաբերք, Այլաբերս: Ունի մոտ 2500 բնակիչ, որոնց նախնիները մեծ մասը 1829-1830 թթ. գաղթել է Մակուից, Խոյից, Սալմաստից, Վանից, Ալաշկերտից: Բնակավայրում հաղորդակցվում են Մակուի խոսվածքի մի տարբերակով:

Ալափարսի խոսվածքն ունի երկբարբառային *ե* և *ո* հնչյուններ՝ *իրեք, մեծ, քավոր, չոոս:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի և *ո*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *յէ* և *վօ* (յէս, յէփ, յէրք, վօտ, վօր), իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *է* և *օ* (էրկու, էրէխա, օղօրմի): Խոսվածքում հանդիպում է քմայ-

նացած ä ձայնավոր փոխառյալ և բնիկ մի շարք բառերում (äզիզ, ջäյէլ, զäյլä, թäզä, դ՛äնäկ, վըրä, զäնել, հէքյäթ, ժäժիկյ, ձ՛äք, միյնäկ ևն): Բառասկզբի վանկերում երբեմն նկատելի է շրթնային *ա* ձայնավորի առկայություն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը (հավքել, հառնիք, հասկընալ, չօրցընել, նըստըցընել ևն): Բառավերջի *ա*-ն որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէն, վըրէն, տըղէս, գ՛աթէք, էրէխէք): Խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛աժակ, բ՛ան, գ՛ալ, գ՛ընդակ, դ՛ընել, ձ՛ըմեռ, ձ՛ընձըխկըտան, ձ՛ու, ջ՛ուր և այլն): Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (խափել, յեփ, ձ՛äք, կարաք, յերք, ուրաք, առթար, մառթ, հառէչ, մէչ ևն): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, գիդալ, պըսագվել, հառադուն, կըդըրվել, սըբաս, յերգիր, ցաձըր ևն): Առկա է հետնալեզվային հպականների որոշակի քմայնացում առաջին շարքի ձայնավորներից առաջ (քյեռի, դ՛ուքյ էլ, մենքյ էլ, վանքյի, հէքյäթ, քյիչ, գյäզäր, գյիդալ, գյինի, կյիսուր, մէկյի ևն): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* բառում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց հանդիպում են շփականներ (ծասկել, ինշքան, իշկալ ևն): *Հ*-ի դիմաց բառամիջում ու բառավերջում հանդիպում է *յ* (պայել, ջäյէլ, գ՛օյ): Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախադեպ է *հ* - ի հավելումը (հընչի, հըլնել, հէսա, հընցնել, հուրիշ, հիրանք, հուր, հիրար, հըմէն, հառադուն, հուս, հիրկըվանը, հընզընել, հուխտ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է դիտվում մեկ-երկու բառում (պահկվել > պախկըվել, հորել > խօրել): *Խ*-ի դիմաց տարնմանական *հ* է առկա *հավող* ձևում: Բառասկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կըրաղ, կանթար): Բառասկզբի *հ*-ին միանալով՝ *կը* եղանակիչը վերածվում է *գ՛*-ի (կըհավատամ > գ՛ավատամ, կըհըլնեն > գ՛ըլնեն): Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, դինք, անք, րանք* մասնիկները (էրէխէք, գ՛աթէք, խընամիք, վէդ-րօք, ախպըրդինք, ըտեղանք, կողրանք ևն): Բացառական հոլովը ձևավորվում է *ց*-ով (հըմընից, մըչից, հավոդից), ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (լըցում ինք կըճուճներ, պառզոնի մէչ), սակայն հանդիպում է նաև այդ իմաստի արտահայտությունը տըրականով (գ՛յուղին ծընվէր եմ, զավօղնէրին բ՛անվօրութուն արէր եմ, աշխատէր եմ չօլերին): Առկա են Ա վերջադրական հոլովման դրսևորումներ (Ախտիյա լէզուն, թունդըրա կողըն): Գործածական են *ը* և *ն* հոդերը (խընամիքը, խընօցին): Դիտվում են որոշիչ հոդի բացակայության (հանըմ իմ լավաշներ), *ը*-ի դիմաց՝ *ն*-ի գործածության (թունդըրա կողըն, մէրըն գ՛ընաց), թվականների հոդառության (հինգը), կրկնակի հոդառության (ձ՛ինը) դեպքեր: Անորոշ *մէ* հոդն ունի նախադաս կիրառություն (մէ տեղ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: *Ով* դերանվան դիմաց առկա է *վով* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականինը՝ *վիրը:* Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի:* Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հիրա, հիրանք, հիրանց, ընդուց, ըտոնք, ըտոնց, ըտըրա, ըստըրանք, ըտան, ընդան, ընդանց, ըստե, ընդե, էտենց, ըենց, էսքան, էնքան, ամէն բ՛ան, ամէքըս, հըմէն, հըմընօվ, հուրիշ, հուր, վորը, վորդե, հընչի, իմալ, վոնց, հիրար* և այլն:

Խոսվածքն ունի անկատար դերբայ, որը ձևավորվում է *ում //ըմ* մասնիկով (անըմ, հըլնըմ, ուզըմ, կանում, տանում, տէնում): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լալում, տալում:* Վաղակատար դերբայն ունի *էր // եր* վերջավորություն՝ *տէսէր* (եմ), *մեռեր* (ա), շրջուն շարադասության դեպքում *ր*-ն ընկնում է (չեմ տէսե): Հարակատարն ունի *ած* վերջավորություն՝ *կայնած, ամուսնացած:* Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*:

Ժխտականի ձևերն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին:* Խոնարհված բայերի անցյալ ժամանակի եզակի առաջին դեմքի ձևերը գործածվում են նաև *մ* հավելվածով՝ *ուզըմ իմ* (սիրում էի), *չիմ ասըմ* (չէի ասում), *ասէցիմ* (ասացի), *չունիմ* (չունեի): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *ասէցինք, սիրէցի, ուզէցին, ասինք, սիրիր: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց* (գ՛ացին, մացինք): Անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *տըփեց, սիրէցի, պըսազվա, նըստար*: Հարկադրական եղանակը ձևավորվում է *պըտի* եղանակիչով (պըտի կըղըրվէր): Պատճառական ածանցն է *ցըն*՝ *նըստըցընել, լօղցընել, չօրցընել*: Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (թըռնել, փախնել): Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *լըցում ինք* (լցնում էինք), *վէրցում են* (վերցնում են): Բայական ինքնատիպ այլ ձևերից են՝ *արօղ, էրինք, զիղում եմ, ասավ // ասեց, տէնում ին, չեմ կանում* և այլն:

Խոսվածքի բառային միավորներից են՝ ա̈զիզ, ալաղ անել, ախտ հըլնել, աճառօվ փըլավ, բ՛ըռթէ թել, բօռալ, բօքոն, գ՛ըտալ, գ̈ա̈զա̈ր, դ՛ափ, դըրմըղ անել, դըրմըղել, զա̈յլա̈, զա̈նել, էթալ, ընդուց դէն, ընդօվ դէն, թա̈զա̈, թէշտ, թըզբեխ, թունդիր, թուփ (թթու դրված կաղամբ), ժա̈ժիկյ, իմալ, իշկալ, խընօցի, խորիզ, կանթար, կառտօլ, կաստյունզա, կընիկյ, հալալ, հա̈յա̈թ, հառադուն, հառսնիք, հավող, հարել, հարը, հէսա, հընչի, հիմի, հիրկըվանը, հօ, ձ՛ընձըխկըտան, ճըմուռ, մա̈նդա̈կ, մէթքա̈, մըտէս, միյնա̈կ, յեսիմ, նըխշել, նորուց, ուզել (սիրել), ումուդ, չա̈րի, չօլ, չօռ, պախկըվոցի, պաղել, պըսազվել, պիսօք, ջա̈յէլ, սաղ օրը, սըբաս, սիբեխ, վախտ, վառթիվոր, վէդրօ, վըռազել, վորդե, վօչխար, տան ջան, տեղսըթար, տէր կայնել, տըփել, փըռթել, քուռսի, ֆըռըցընել, ֆըռիկ և այլն:

**ԱԿՈՒՆՔ**[118] – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Բաշգյուղ, Բաշքենդ: Ակունք է վերանվանվել 1946թ.: Ունի 2100-ից ավելի բնակիչ, որոնց նախնիների հիմնական մասը գաղթել է Սալմաստից, Խոյից և Բայազետից: Գյուղի խոսվածքը մոտ է Բայազետի բարբառին՝ ունենալով նաև Խոյի, որոշ չափով նաև՝ Արարատյան բարբառների որոշ հատկանիշներ:

Ակունքի խոսվածքն ունի երկբարբառային *ե* և *ո* հնչյուններ՝ *գ՛եղ, ըտենց, չոոս, խավող:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի և *ո*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *յե* և *վո* (յես, յեզ, վոչ, վոր), իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *է* և *o* (էրկու, էրկաթ, օխչար, օրօճալ): Խոսվածքում հանդիպում է քմայնացած ä ձայնավոր որոշ փոխառյալ և բնիկ բառերում (նäֆäր, նօքäր, թäզä, հäվäլ, չäնչ, զäրկել, մինäկ ևն): Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում զգալի է շրթնային *ա* ձայնավորի առկայությունը, ինչպես՝ *աuել, մառթ, կառտօլ, պառկել, տափել* և այլն: Խոսվածքում առկա է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղում (ծարվընալ, հիրկուն, գ՛օղնալ, ավլել, փատըտվել, չօրնալ ևն): Բառավերջի *ա*-ն որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէն, վըրէն, փէսէք ևն): Խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛ան, բ՛էրել, գ՛ալ, գ՛էրէզման, դ՛առտակ, ձ՛եռ, ձ՛էն, ջ՛ուր, ջ՛աղաչ ևն): Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (խաքնել, ճըրաք, խափել, սըրփել, հառցակվել, մառթ, առչ, հառէչ ևն): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (պըսագել, կըդրել, պադրուք, աբրել, կօղբէս, պադմել, փորդե ևն): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* բառում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց երբեմն

[118] Ակունքի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984 թ. լրացված թիվ 273 տետրում, առկա են նաև գյուղում 2016 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

հանդիպում են շփականներ (մէշկ, աշկ, ըշկալ են): Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախադեպ է *հ*-ի հավելումը (հառաջ, հավըլնալ, հըլնել, հառավոտ, հէքուց, հառու, հըմէն, հընգնել, հիրկուն, հիմանալ, հὰվὰլ, հուրիշ են): Հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է առկա բառի բոլոր դիրքերում (խինգ, խա, խօրօխպէր, խէր, խին, խօրել, խառս, խէտ, պախել, մախ են): Բառասկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կօնախ, կὰրիբ, կազան, կաչաղ, կըռ): Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, իք, րանք, անք, անիք, վանք* մասնիկները (փէսէք, կաշիք, մառթիք, գ՛եղրանք, ըտերանք, ձ՛իանք, կընանիք, տիրվանք են): Բացառական հոլովը ձևավորվում է *ց*-ով (Բասէնից, Քὰվὰռից, խացից, գ՛ինուց), ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (գ՛եղն ա, բաղի մէչը): Խոսվածքում Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոչ*, առկա է նաև զուգահեռ *տիրու* ձևը: Սովորական է հատուկ տեղանունների հոլովումը Ա վերջադրական հոլովմամբ՝ *Խօյա, Հէրէվանա, Բաշգ՛եղա* են: Ուշադրության արժանի հոլովական ձևերից են՝ *Հայկօ* > *Հայկօյ*, *չարըքթուն* > *չարութան*, *քուր* > *քըվօր*, *կընիկ* > *կընգա*, *տէքըր* > *տէքօր* և այլն: Գործածական են *ը* և *ն* հոդերը (խինը, տըղէն): Անորոշ *մէ* հոդն ունի նախադաս կիրառություն (մէ բ՛ան): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի: Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականինը՝ *վիրը:* Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի:* Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *սըրա, ստըրա, ըտըրա, ընդըրա, ըտա, ըստան, ընդան, ըստուց, ըտուց, ընդոնք, ընդոնցից, հիրա, ըստե, ըտե, ընդե, ըստեղից, ընդեղից, ըսենց, ըտենց, էսքամ, էտոնὰ, վիրնից, վորդե, հիրար, հըմէն, ամէք մէկը* և այլն:

Խոսվածքում բայի ներկա ժամանակի կազմիչը անկատար դերբայն է, որը սովորաբար ձևավորվում է *ում* մասնիկով (ասում,

մընում, հըլնում), երբեմն էլ՝ դրա *ըմ* տարբերակով (բ՛էրըմ, քանդըմ, սարքըմ)։ *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լալում, տալում։* Ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքում օժանդակ բայը կարող է չարտահայտվել՝ *Գ՛ալում, մընում ըտե* (Գալիս, մնում է այդտեղ)։ Վաղակատար դերբայն ունի *էր* վերջավորություն՝ *խըրկէր, բ՛էրէր,* շրջուն շարադասության դեպքում *ր*-ն ընկնում է (չեմ տէսե)։ Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև՝ *խօրած ին* (= *խօրէր ին*՝ թաղել էին)։ Հարակատարն ունի *ած* վերջավորություն՝ *խըմած, քընած, նըստած*։ Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*։ Ժխտականի ձևերն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին։* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով՝ *գ՛ըրիր, ծախին*։ Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքը սովորաբար ունենում է հավելական *մ* (բ՛էրիմ, դ՛ըրիմ, թօղիմ)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց* (գ՛ացէր ին, մացիմ)։ Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *թօղիմ, արեց, փօխվա, նըստար, բ՛ըռնա՛, էփա՛, նըստի՛, քընի՛։* Հարկադրական եղանակը ձևավորվում է պըտի եղանակիչով (պըտի գ՛ա)։ Պատճառական ածանցն է *ցըն*՝ *խատըցընել, քընցընել։* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (*թըռնել, փախնել*)։ Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *հըլում* (ելնում է), *թօղում ա* (թողնում է)։ Բայական ինքնատիպ այլ ձևերից են՝ *կուրավ, ժօղըռտէք, վէ՛ռց, զիդում եմ, տէնում ա, անա* (անի) և այլն։

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղինջ, բաղ, բըլա̈գ, գ՛ըլխավոր (ամուսին), դ՛առտակ, զա̈րկել, էլչի, ըշկալ, թա̈զա̈, ժօղըռտել, խավող, խատըցընել, խընօցի, խըրկել, խօվ, խօրել,

խօրօխպէր, կառտօլ, կազան, կայնել, կաչաղ, կյարիբ, կըռ, կըռինձ, կըռութ, կըտուր, կուշտը (մոտ), կուրել, կօկօլ, կօնախ, հառավոտ, հառէչ, հյավյալ, հարուր, հէքուց, հիրկուն, ձ՛էն-մէն, ձ՛ըցում, ճիժ, մէկէլ (հանկարծ), մէշու, մըթամ, մըկա, մըռու, մինյակ, մուխ, մօղօզիկ, յան, յեսիմ, նյաֆյար, նորուց, նօքյար, շըռճել, չայ (գետ), չօբան, պըսազել, պուճուճակ, ջ՛աղաչ, ջ՛ոչ, սաղ (կենդանի), սըբաս, սիզոն, վիզը կըդրել, վիլկ, վորդե, տապօռ, տավար, տափել, փատըտվել, փէշ և այլն:

**ԱՂԱՎՆԱՁՈՐ** - Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Բաբաքիշի, Բաբաքշի: Աղավնաձոր է վերանվանվել 1948 թ.: Ունի մոտ 1300 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են հիմնականում Ալաշկերտից 1829 թ.: Բնակավայրում հաղորդակցվում են Մշո բարբառով:

Աղավնաձորի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *շեմ, գ՛իշեր, կող, խընձոր:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոռց, յերք, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օխչար, օղօրմի, էրգու, էթալ): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *թյազյա, հյալիմ, քյալյամ, յազիզ, ջյամդյակ, փյարինջ, շուշյաբյանդ, փիլյաքյան, խյայայթ, քյասիբ, դյաբըր, թյաք, թյալել, քօչյարի, տէքյարկընիգ, ժյաժիկ, զյարգել, յաշկըռել* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (հավքել, գ՛օղնալ, հիմնալ, սօվրել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի՝ *տըղէն, վըրէն, էրէխէք* և այլն: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛աժակ, բ՛ան, բ՛անջար, բ՛արէգամ, բ՛էտ, բ՛ուն, գ՛իշեր, գ՛աթա, դ՛էմ, դ՛անագ, դ՛ուս, ձ՛ավար, ձ՛ըցում, ձ՛ըմեռ, ձ՛ուն, ջ՛ոչ, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գոր-

ծառում են երբեմն պարզ, երբեմն էլ շնչեղ խուլեր (տըղամառտ, աշխատանկ, ուրպատ, ջ՛առտել, գ՛ածին, առճի /արջի/, բ՛ած, հէլ-նինկ, յերկօվ, թաքավոր, կարաք, էչմիաձին, հառէչ, առչըն, ան-քամ, տէքըր, էթանք, մենք նն), հաճախ էլ դժվար է դրանք տար-բերակելը: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (կաբել, սըբաս, կընիգ, ծաղիգ, օղօրգել, էրգաթ, Ալաշկերդ, փէդ, պաղէրազմ, հէդեվ, վիջագ, մաձուն, լաց ու կօձ, կադու, մըգա, հօռթիգ, պըզդիգ նն): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների, ինչպես՝ *ինշ կա, Բըժնի, գ՛իշնէնք:* Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հառավոտ, հիրա, հէստ, հինքըն, հուր, հէքուց, հըմէն, հառէչ, հէռթիս, հառիք, հարէ՛ք, հէրէզ* և այլն: Հինհայերեն-յան *հ* - ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիր-քերում, ինչպես՝ *խառնիս, խառս, խաց, խատ, խող. խըմար, խը-նութվա. խըրիստ, խինգը, խանել, խէդ, խավ, խավտըրիկ, խօքի, խա, խօրօխպէր, սըրախ, խայ, խօրքուր, բ՛ախ, գ՛ախ, պախել* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ,* ինչպես՝ *կազան, կյարիբ, կափաղ, կօնախ, կօնդախ:* Շեշտը վերջնավանկա-յին է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, իք, անք, անիք, վանք, տիք // տանք // դանք* մասնիկներով՝ *մառդունէցիք, նախըռճիք, տըղէրք, մառթիք, ձ՛իյանք, տէքյարկընանիք, իծվանք, գ՛իլվանք, տիրվանք, կողրանք, խօրօխպըռտիք, խօրօխպըռտանք, խօրօխըքըրդանք:* Կենդանիների որոշ անուններ, մի շարք այլ բա-ռեր եզակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *խավու, գ՛իլու, աղվըսու, ճիդու, ճըժու, գ՛ըլխու, հըմընու, մառթու* և այլն: Հոգնակի գոյականները սովորաբար ենթարկվում են Ի հոլովման՝ *էրէխէք-նէրի, խավէրի, ախճըգնէրի* և այլն: Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման որոշ դեպքեր՝ *Մէվանա, թունդըրա, ճընճըխա*: Ձայնա-վորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել

*յ*-ով՝ *մամէյ:* Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (ձ՛որից, մէշից, ախձըզնէրից), հազվադեպ պատահում է նաև *է*-ով ձև՝ *ընձընէ:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *կըլըցէնկ բութուլկէն, մէշօքի մէչ:* Որոշիչ հոդը հիմնականում *ն*-ն է՝ *Ծաղիգնէրըն կըշարէնք*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Մեր կիսուրներ ձ՛ըցում կըլըցէն:* Հաճախ որոշիչ հոդով են գործածվում թվականները՝ *չոռսը, խինգը, յօթը*: Անորոշ հոդը նախադաս է՝ *մէ գ՛ըթալ, մէ բ՛աժակ, մէ տըղա, մէ խատ:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վին:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձընից, ընձընէ, հինքըն, հիրա, հիրան, ըղըրա, ըղըրան, ընդու, ընդըրա, ըդուց, ըստու, էդան, դաս, դան, դէս, դէն, ըստե, էսատե, էնատե, ըտե, ընդե, ընդեղից, ըղենց, ըտենց, էնքան, հըմէն, ամէք մէ, իմալ, վորդե, հիրուր* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հըլնել, կանալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ՛ու* կամ *կի* մասնիկով՝ *գ՛ուքա // գ՛ուկա, կըտի, կըղինք*, մյուս բայերինը՝ *կը // կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըբ՛էրիմ, կըսէր, խըմիս, կըպուս:* Գործածական է *գալ* բայի՝ *ի* հավելվածով ձև՝ *չըն իգ՛ա: Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* կամ *գ*, ինչպես՝ *գ՛ավքէնք, գ՛էլիմ, գ՛իշնէնք, գ՛էլնի, գ՛ա̈զըրինք, գուզիս:* Անորոշ դերբայն ուղիղ ձևով կարող է գործածվել իբրև նպատակի պարագա՝ *Կէթին ջ՛ուր գ՛օղնալ:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *եղեր ա, էկէր էր*, հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *կայնուգ, շարուգ:* Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *աձ* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող են գործածվել օժանդակ բայի և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր՝ *ամուսնացաձ ա,*

*կայնած ին* (= ամուսնացէր են, կայնէր են), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի՝ *Իրեք ախպէր սէլեր լըձած, հընգած շօշն էգած:* Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինք, իք, ին:* Սրանց ժխտականները որպես կանոն ունեն զուգահեռ ձևեր, ինչպես՝ *չիմ* // *չըմ, չիս* // *չըս, չինք* // *չընք, չին* // *չըն:* Նկատելի է, որ անցյալ անկատար ժամանակաձևում եզակի և հոգնակի առաջին դեմքերն ունեն նույն վերջավորությունը՝ *էնք* (յես խընձոր կուղէնք, յես կըփըռէնք, մենք կըբ՛անէնք կուղէնք): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով՝ *ըսի, չըխանիր, էրէցինք: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *ջ՛առտեց, խանիր, ճըզըռավ, բ՛ըլավ, նեղվավ, քըշա՛, պաղմա՛, նըստի՛, կայնի՛:* Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը՝ ըստ ժամանակային իմաստի, ինչպես՝ *խընձոր ա կըբ՛էրիս, կաթըն էր կըխանէր*: Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա, ինչպես՝ *չեղե* (չի եղել), *չըսա* (չի ասի), *չըլնի* (չի ելնում), մյուս դեպքերում ժխտական մասնիկը որպես կանոն դրվում է օժանդակ բայի վրա՝ *չըն հըլնի, չինք ըսի, չեմ կանա, չըն թօղի, չըս տէսե*, երբեմն էլ՝ բայաձևի վրա՝ *չըճաշնամ* (չեմ ճանաչում): Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր (*թըռնել, փախնել*): Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *գ՛էլիս* (ելնում ես), *մըղիս* (մտնես): Պատճառական ածանցն է *ցուց* // *ուց*՝ *լօղըցուցել, խաքուցել:* Պատճառական բայերի ներկայում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *խառցունք, կըխաքուն, կըպուս, մօղըցո՛ւ, նըստըցո՛ւ*: Հարկադրականի եղանակիչն է *պըղի*՝ *պըղի լըռացուք:*

Խոսվածքի բառային միավորներից են՝ ա̈դա̈մ պուպուզ տէնալ, ազաբաշի, ա̈զիզ, ախճի, ախպէր, ա̈շկըռել, ավիլուկ, աքլօր, բ՛ախ, բ՛անջար, բ՛էտ, բ՛ըլել, բազ, բութուլկա, բօռալ, գ՛ալել, գ՛ախ, գ՛ըթալ, գ՛ըթնել, գընդիգըլոր, գինալ, գօվընդ դ՛արման, դա̈բըր, դան (այնտեղ), դան (անգամ), դանա, դաս (այստեղ), դէն (այն կողմ), դէս (այստեղ, այս կողմ), դընդընալ, դըրընդի, դոր (ուր), դօշ, զա̈րգել, զըլֆ, էդան, էնօքի, էրէխա, էրթալ, թա̈զա̈, թալա շըլազն, թալած (գցել), թալէնք (դնել), թալվա, թա̈ք, թաքավոր (փեսա), թըրիք, թունդիր, ժա̈ժիկ, իմալ, իշկընոց (կվանոց), լարել, խա, խախտուն, խաղալ (պարել), խա̈յսա̈թ, խառնիս, խառս, խառսնաքուր, խավտըրիկ, խաց ու պանիր, խաքուցել, խէդ, խէր, խընդալ (ծիծաղել), խընութ, խըրիսա, խըփուցել, խուսել, խօրքուր, խօրօխպէր, ծուռ (գիժ), կազան, կամփէ քուֆտա, կայնել, կանալ, կանանչի, կաշկա, կա̈րիբ, կափախկ // կափաղ, կըշտանոց (դ՛ըռան կողի փէղէրին ա կըսեն), կըրարել-ծըրարել, կըփօցի, կիսուր, կուբարի, կօզբանդ, կօնախ, կօնդախ, հա̈զըրել, հա̈լիմ, հախպուր, համ .. համ, հառավոտ, հառէջ (առաջ ժամանակ), հառիք, հէռթիս, հէսա, հէքուց, հընգնել, հիմնալ, հիշնել, հիրուր, հօռթիզ, ձ՛եռնախաղ, ձ՛ըցում, ճաշի բ՛էտ դօղ, ճար (1.ուղի, 2.բակի մուտք), ճէղ, ճըխնի, ճընճխա պաշար, ճիժ, ճուտ մամէ, մամիզ, մանդըր, մէ խատ, մէշա, մըզա, նախըռճի, նեղվել (սրտնեղել), շեմ, շուշա̈բա̈նդ, շուշուտ, շօշ, ուլինգ, ուշկը էթալ (շատ սիրել), պարկըցուցել, պըզդիգ, պուլիզ, պօլիզ (թազ, որի վրա փեռթէր էր շարուզ), ջ՛առտել, ջ՛ոչ, ջ՛օչընալ, ջա̈մդա̈կ, ջանավար, ջէջիմ, սաղօր (ողջ օրը), սարքել, սէլ, սըբաս, սըրախ, սիբեխ, սութգ՛ըմուկ, սօվրել, վառթիվոր, վէսկի, վիզ, տանիս, տաշի (պարին ուղեկցող ձայնարկություն), տէքա̈րկընիզ, փախէփախ, փա̈րինջ, փեռթ (ճակատի ոսկի), փիլա̈քա̈ն, փիրվազ, փօշի, քա̈լա̈մ, քա̈սիբ, քեղ, քըշել,

քըցել, քօչ՚րի, օթաղ, օխճըրի բէր, օխչար, օղոռթզ՛ըմուկ (բույս է, շուշանն ա), օղօրգել, օրուգ, օրուգել և այլն:

**ԱՌԻՆՋ**[119] - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Ունի մոտ 6300 բնակիչ, որոնց մեծ մասը տեղաբնիկներ են: Բնակիչների մի մասի նախնիները եկել են Սալմաստից, Խոյից: Հաղորդակցվում են Արարատյան բարբառով:

Խոսվածքը երկբարբառային հնչյուններ չունի: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօր, վօռթ, յէզ, յէրք), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օղօղէլ, օռնալ, օսկօռ, էրէվալ, էրկաթ), բայց նաև՝ *վօխչար, վօչիլ, յէրկիր, յէռէսուն:* Խոսվածքում երբեմն նկատվում է շեշտանախորդ վանկի ձայնավորի սղում (սըվօրէլ, լըղանալ, հայլի, հըմար, խըրօված, պըլանիք): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (փէսէք, վըրէն): *Ոյ, իւ* երկբարբառների դիմաց խուսվածքն ունի *ի* ձայնավոր (զըրից, լիս, քիր, պըտիտ, ալիր, արին, ծին): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբի ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը (պէռ, պէրան, պէրէլ, պուռթ, կարի, կէլ, կէղ, կէտին, կինի, կըլուխ, տաթար, տընէլ, տուս, ծըմէրուկ, ծուկ, ճուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (հաքնել, տէքըր, ուրաք, վօռթի, վառթ, մէչ, օց, փօռցանք, առչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (վիշաբ, ըրիգուն, փըսագ, կըղըրէլ, փիղըռէլ, պաղրուք): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա

---

[119] Առինջի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1983 թ. լրացված թիվ 236 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

*կայնէլ* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (լըվասք, ծասկէլ, մէշկ, աշկ): Միավանկ բառերի սկզբի *հօ*-ի դիմաց որոշ դեպքերում առկա է *ֆօ* (ֆօռթ, ֆօղ, ֆօտ, ֆօր): Որոշ դեպքերում բառասկզբի *խ*-ի դիմաց առկա է *հ* (հաղ, հավօղ): *Ս*-ի դիմաց *հ* է հանդես գալիս *տէսնէլ* բայի անցյալի հիմքում (տէհէլ, տէհավ): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *դ* (դազ, դազան, դայիմ, դասաբ, դալմադալ, դօլթուղ): Շեշտը նախավերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, անք, անիք, իք* մասնիկներով՝ *խընամիք, ճամփէք, ծիանք, կընանիք, մառթիք:* Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրօնչ* ձևը: Ո ներքին հոլովման ընդգրկումը ավելի լայն է (անօր, հընգօր, քըվօր, կէսօր): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (ծէռից, մառթուց): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հոլովական *ըմ* վերջավորությամբ (թէշտըմ, օրօրօցըմ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (յէրգիրը, պաքն էլ, պէրանին): Որոշիչ հոդով հանդիպում են նաև բացառականի և ներգոյականի ձևեր (քարիցը, կէտըմը, ճըրըմը): Անորոշ հոդը նախադաս է (մի մառթ): Անձնական դերանունները տրական հոլովում չեն ունենում *ի* հավելված՝ *ինձ, քէզ, մէզ, ծէզ,* բացառականի ձևեր են հանդիպում առանց *ց* մասնիկի՝ *ինձանի, քէզանի, մէզանի, ծէզանի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, ըսա, ըտա, ընա): *Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իրա, իրան, ըստըրա//ըստա, ըստըրանք, ըստօնք, ընդըրա, ընդըրանք, ընդանք, ըստանց, ընդար, ըստիան, ուրիշ* և այլն:

Խոսվածքում բայի Ե և Ա խոնարհումներից բացի՝ դրսևորվում է նաև Ի խոնարհում (մեռնիլ, նըստիլ, փախնիլ): Սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (սիրըմ, մընըմ): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կալիս, տալիս, լացըմ* դերբայական ձևերով: Ապառնի դերբայն

ունի *ու* վերջավորություն (ասէլու, մընալու): Վաղակատար դերբայն ունի *լ-ով* վերջավորություն (կըրէլ), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *է* վերջավորություն (կըրէ): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (քընած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *սիրէցիր, փօխէցինք, չափիք, ծակիր: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *ծախիր, խըմացըրիր, նըստավ, պըռնըվար*: Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում դրսևորվում է *մ* հավելված (սիրէցիմ, ծակիմ): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (մըտցընէլ, թըռցընէլ, հասկացընէլ): Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն (կէրցըրա՛, նըստացըրա՛): Հարկադրականի եղանակիչն է *պէտք ա* (պէտք ա մընաս):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աքլօր, դուզ, էրէխա, թըզբէխ, խըլէզ, խըրկէլ (վռնդել), խի, ծառակուտկուտ, ծըվածէղ, ծօրծօրակ, կըռընձէլ, կըտուր, կիսու, կօկօլ, հէռսօտէլ, հըմի, դուշ, ճըղէլ, մառթ (ամուսին), մէնձանալ, մըզէխ, մընչէվի, մըռու, մուխ, մուռ, նախըրչի, ուշունց տալ, պաժինք, պաչէլ, պէծ, պըշտէլ, պուճուր, սօթ տալ, վէ կալէլ, վըռըշնէլ, վըռթալ (բռնկվել), տէղակ, տիլ, փըսագվէլ, քօռ, քօռպուվ, օջօրք, օվչի և այլն:

**ԱՐԱԳՅՈՒՂ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Ղարաջորան: Վերանվանվել է 1946 թ.: Ունի 1100-ից ավելի բնակիչ, որոնց նախնիների զգալի մասը գաղթել է Բայազետի գավառի Արծափ գյուղից, ինչպես նաև Արճեշից, Կարսից, Իգդիրից: Հաղորդակցվում են Արծափի խոսվածքով:

Արագյուղի խոսվածքում հստակորեն դրսևորվում է *ե* երկբարբառային հնչյունը (ցօրեն, իրեք, տեղ, պարեր), իսկ *ո* երկբարբառայինի գործառությունը օրինաչափ և տարածված չէ

(խընձոր // խընձօր, վոր // վօր, չոռս // չօռս, բ՛ոխկ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի դիմաց առկա է *վօ* կամ *վո* (վօր // վոր, վոչ // վօճ), *ե*-ի դիմաց՝ *յե* (յեզ, յես), բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է* (օղօրմի, օխճար, էրգու, էրէխա): Գործածական է *ե՛ը* արտասանությամբ հնչյուն, որը *ե* երկբարբառային հնչյունի մի տարբերակն է և հանդիպում է բառավերջում (*փօխվե՛ը*), ինչպես նաև գործառում է իբրև էական բայի եզակի երրորդ դեմքի ձև (բ՛էրում ե՛ը): Երբեմն *ո* - ին նախորդող դիրքում *ե*-ի դիմաց հանդիպում է ö, ինչպես՝ *քöռի*, *յöռսուն:*
Խոսվածքում մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած ü ձայնավոր, ինչպես՝ *քյüչüլ // չüչüլ, քյուլüշ, գյü, յüքü, զիվü, թüլել, հüշկ, քüռի, լüլ, միյնüկ, հüյլի* և այլն: Արագյուղի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *հավքել, հառնիք, հիրգուն* և այլն: Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի՝ *տըղէն, վըրէն, էրէխէք* են: Խոսվածքը բառասկզբում ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛ան, բ՛անակ, բ՛անջար, բ՛էրել, գ՛եղ, գ՛էրընդի, գ՛եղածի, գ՛ինի, գ՛իշեր, դ՛առտըկել, դ՛ուս, ձ՛եռ, ձ՛էն, ձ՛ու, ձ՛ըրի, ջ՛առտըվել, ջ՛ուր* և այլն: Բառամիջում ու բառավերջում հպական և հպաշփական ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց որպես կանոն գործառում են խուլեր՝ *տըպել, սըռպեր, անկամ, հինկը, նախօրօկ, էրէխէկ, մօրկուր, էտալ, խանուտ, մառտ, յօտ, օծէրիծ, խօտանօծ, հիծուն, հիվանդանօծ, հառծընել, վեծ, բ՛առծ, ինճ, քիճ, չարճըրել, հէկուծ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *սըբաս, տարէզան, հիրգուն, էրգու, կընիգ, մըզա, շուղ, տաղ, պաղասխան, ծըձաղալ, ծընված, խեղջ, կըջուջ* և այլն: Նկատելի է հետնալեզվային հպականների քմային արտասանություն, ինչպես՝ *քյüչüլ, քյուլüշ, գյü*, երբեմն էլ՝ հպականի վերածում հպաշփականի՝ *քյüչüլ* > *չüչüլ, քյüլլի գ՛ալ* > *չüլլի գ՛ալ: Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է դրսևորվում *կայնել* ձևում: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել

շփականի, ինչպես՝ *խաշմէրուկ, հöշկերը, հիշկել, վօշ մէ* և այլն: Բառամիջում ու բառավերջում *h*-ի դիմաց գործածվում է *յ*, ինչպես՝ *պայել, զօյ, գ՛այ:* Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*-ի հավելում՝ *հöշկ, հառաջի, հառտ, հարի՛, հէկուծ, հէսա, հէրես, հըլնել, հընգընել, հիմանալ, հիրգուն, Հուշազան, հուր* և այլն: Երբեմն *h*-ի դիմաց գործածվում է *խ*, ինչպես՝ *խա, խօրօխպէր, խօղ, խէղ: Հո*-ի դիմաց *ֆօ* է առկա միավանկ բառերի սկզբում, ինչպես՝ *ֆօղ* (հող), *ֆօր* (հոր*), ֆօրթ* (հորթ): Փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ*, ինչպես՝ *կավուրմա, կօնդախ:* Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում գործառում են նաև *կ, իկ, անիկ* հոգնակերտներ, ինչպես՝ *էրէխէկ, գ՛եղածիկ, յեղվառթցիկ, մառտիկ, կընանիկ:* Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը կարող է կազմվել *յ*-ով, ինչպես՝ *Լուսօյ*: Խոսվածքում բացառականը ձևավորվում է *ծ* (ց)-ով՝ *ձ՛եռիծ, գ՛եղիծ, փաճէկիծ, քընուծ, գ՛եղացիկուծ:* Ներգոյականի իմաստը կարող է արտահայտվել հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով՝ *մընածէր են Ծօվագյուղ, գ՛օմի մէճը, թօրօնի մէչը,* շատ տարածված է այս իմաստի արտահայտությունը տրական հոլովով, ինչպես՝ *գ՛եղին, դ՛աշտին, Հöշտöրակին, հիվանդանօծին, չօլին, ստամօքսին, ունիվէրմագին, քաղաքին:* Հատուկ տեղանունների և որոշ այլ բառերի սեռականը ձևավորվում է Ա հոլովիչով, ինչպես՝ *Յեղվառթա, Հաշտարագա, ախճըկա, թունդըրա*, ընդ որում՝ հատուկ տեղանունների բացառականը ևս հանդիպում է *ա* վերջավորությամբ՝ *Հէրէվնա, Ուշագնա*: Գործածական են որոշիչ հոդի երկու տարբերակներն էլ (աֆտօն, տունը), սակայն երբեմն հոդը կարող է բացակայել՝ *Իմ մէր գ՛ընածէր էր. Իմ խիկազան անուն Ռիմա յե:* Անորոշ հոդը նախադաս է գործածվում՝ *մէ բ՛աժակ, մէ թէշտ:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Գործածական է կրճատ *քե* ձևը: *Ով* դերանվան դիմաց առկա է *վօվ* ձևը, սեռականի

և տրականի ձևերն են՝ *ում, ումը*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *էս, էսի, էտի // էդի, էնի, ըստու, էդու, ըդօր, ըդու, ըդմիծ*[120], *ընդու, էտըրան, ըտըրան, ըստե, ըդե, ընդե, ըտե, ըդե, դէս, դէն, ընենց, էսէնծ, ըսենց, ըտենց // ըդենց, էնդա, ընդա՛ր, հինքը, հիրա, հիրան, հիրանք, հիրանց, ամէքը, հըմէն, հըմէն ինձ, հըմընով, հիրար, հուր, վօրդե, վօշ մէ* և այլն:

Խոսվածքում Ա, Ե խոնարհումներին զուգահեռ՝ բայն ունի նաև Ի խոնարհում՝ *ունիմ, մեռնիմ, հըլնիմ, մըդնիմ* և այլն: *Լինել* և *ելնել* բայերի դիմաց գործառում է *հըլնել* ձևը: Բայի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերն արտահայտվում են անկատար դերբայի միջոցով (ճանանչում եմ, լօղնում էր): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լա՛լում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն՝ *էգէր* (եմ), *նըստէր* (էր), հարակատարը՝ *ուզ, աձ* վերջավորություններ՝ *քընուզ, դ՛ըրաձ:* Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, է // եը, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չէ // չեը, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին:* Ե խոնարիման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *աշխադէծի, ուզէծին, դ՛ըրէծի, թօղէծի, զանգին, քաղինկ, թօղինկ* և այլն: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի սովորական ձևերն են՝ *գ՛ընած, մընած*, երբեմն հանդիպում են նաև՝ *գ՛աձ, մած:* Պատճառական ածանցն է *ցըն*՝ *պարզըցընել, կըպցընել:* Անցյալ կատարյալը և եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *տըվէծի, ջ՛առտեց, բ՛ըլավ, լըծվավ, կայնի՛, նըստի՛, պարզըցըրա՛, պահէ՛:* Դիտվել է ենթադրական եղանակի անցյալի ապառնու վերլուծական ձև՝ *կըտանջվէր ի* (կտանջվեի): Ենթադրական եղանակի *կը* եղանակիչը,

---

120 Ռ. Բաղրամյանը Արծափի խոսվածքի դերանվանական համակարգում *մ*-ի հավելում արձանագրել է անձնական դերանունների բացառական և գործիական հոլովաձևերում՝ *ըզմիծ, ըզմօվ, քէզմիծ, քէզմօվ, հիրմիծ, հիրմօվ* (տե՛ս **Ռ. Բաղրամյան**, Հայերեն բարբառներ, Ե., 1972, էջ 82):

միանալով բառասկզբի *հ*-ին, վերածվում է *գ́*-ի՝ *գ́ըլնի, գ́իշկեն, գ́ընգընի:* Հարկադրական եղանակը կազմվում է *պըդի* եղանակիչով՝ *պըդի տանիս:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Հանդիպում է *կօ* հաստատական մասնիկը՝ *կօ աւէծի:*

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ, öզիզ, ամբըրօց, անիադութուն, անջախ, առ (աշխօր), բ́ըլել, բազառ, բէտօն, բօռալ, գ́օյ, գիվö, գʲö , զօռել, էն գ́այ, ըսկի, թöլել, թէշտ, թըբէթը չըտալ, թուլö (արիմր. երեխա), թօրօն, ժամ, ինադու, իսան, խախտուն, խօրօխպէր, ծըձաղալ, կանալ, կըռջօն, կըրիշ, կուշտը (մոտը), կօնդախ, կօրել, հöշկ, հառավնօվ, հառսնըքվօր, հառսնիք, հառտ, հավար, հավարը քըցել, հէկուծ, հիշկել, հիրան-հիրան, հիրար գ́ալ, ձ́ու, ճամփու դ́ընել, մանդըր, մառթ առնել, մըզգա, մըդէն էթալ, միթամ թէ, միյնöկ, մուխ, յաղմա անել (փչացնել), յան, յöքö, յեսիմ, յուրդ, նöսիլզա, նշանց տալ, շաբաշ, շէնք դ́ընել, շէնքել, շուշի զավօդ, ուշը էթալ, չöլլի // քալլի գ́ալ, չաղընալ, չöնք (մինչև), չուր, չուր լուս, չուրի, չօլ, պարքէվադ́ընել, պըրիստուպներ, սալըխը տալ, սալօմ, սաղ, սեվ տըռճէ, սըբաս, սըբա, սունգուր (սունկ), սուս փուս, վախտ, վէդրօ, տառթ, տափել, տըպել (ծեծել), ցան, փաճա, փէջ, քամագը (հետևը), քʲöչöլ // չöչöլ, օխճար, օրէգան (ամեն օր), ֆöյմել, ֆօտ, ֆօր, ֆօրթ և այլն:

**ԱՐԱՄՈՒՍ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Արախույզ, Արամազյուղ, Արամոնք, Արամույզ, Արամունիք, Հարամուս: Ունի 3800-ից ավելի բնակիչ, որոնց նախնիների հիմնական մասը եկել է Խոյի գավառից: Հաղորդակցվում են Խոյի բարբառով:

Արամուսի խոսվածքում սակավ են հանդիպում երկբարբառային *ե* և *ո* հնչյունները (մեռնէլ, ծեռ, մեզի, չոռս, կօյնոց): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի և *ո*-ի դիմաց գործառում են *յէ* և *վօ* (յէզ, յէս, յէփ, վօր // վոր, վօտ), բազմավանկ բառերի

սկզբում՝ *է* և *օ* (էրկու, էրէխա, օղօրմի, օրօճայ)։ Քմայնացած *ա* ձայնավոր հանդիպում է ինչպես խլացած ձայնեղներից հետո, այնպես էլ այլ դիրքերում, փոխառյալ բառերում (պӓն, պӓռնӓլ, ճӓռթէլ, տӓշտ /դաշտ/, ӓյլօր, վըրӓ, նӓխիր, իկʲӓլ, ըտӓր, վӓրտէ, վӓվ, հӓզӓր, թӓլէլ, իշթӓր, գʲӓզӓր, քʲӓնի, ջիզӓրն, կըդӓ, թӓք, մӓռզըկա, թӓզӓ, խӓքӓնդӓզ, լӓյլӓղ ևն)։ Երբեմն հանդիպում է քմայնացած *ու*՝ *իւ* (տիւս, քիւլ)։ Նկատելի է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղում (խասկընալ, տայնալ /տաքանալ/, սավրէլ /սովորել/)։ Բառավերջի *ա*-ն ավելացող մասնիկներից առաջ որպես կանոն չի հնչյունափոխվում (փէսաս, տըղան, վըրաս, բայց՝ տըղէս)։ Խոսվածքը բառասկզբի հինհայերենյան ձայնեղների դիմաց ունի խուլեր (պӓն, պարէկամ, պէրէլ, պէրան, տӓշտ, տեղնուշկ, տու, կօյնոց /գոգնոց/, կեղ, կըռնակ, ծեռ, ծու, ճօկ, ճօչ, ճӓռթէլ)։ Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց առկա են շնչեղներ (յէրք, շոք, խափէլ, սըրփըվէլ, էռթիս, ժօղօվուռթ, ախչիկ ևն), խուլերի դիմաց՝ խուլեր (էրկու, տակ, ածէլ, աստըված, տատ, պըսակէլ ևն)։ Հետնալեզվային հպականները սովորաբար քմայնացած են (քʲուր, ճօկ էնքʲ, քʲӓնի, քʲӓշէլ, վոռթիկʲ, ունէնքʲ, իկʲալ ևն)։ *Նգն* հնչյունախմբի դիմաց առկա է *յն* (կայնէլ, յեղույնէր)։ Նախաբաղաձայնական դիրքերում հետնալեզվային հպականների, *նք* հնչյունակապակցության դիմաց առկա է *յ* (հասարայ տուն, ախչիյնէր, իրէյ պէրան, խէլօյ մառթ, ӓյլօր, կօյնոց, էկայ սարքըռտինքʲ, պամբասայն, աշխատայ չըկա, ծէրօյն էլ ևն)։ Երբեմն *յ* է հանդիպում նաև *ր*-ի դիմաց՝ *խայիր:* Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց հանդիպում են շփականներ (ինշ մառթ, վօշ թէ, մէ քիշ պӓն ևն)։ Խոսվածքում բառասկզբի ձայնավորներից առաջ հավելական շնչի հավելում խիստ հազվադեպ է հանդիպում (հըմէն // ըմէն, հիրար // իրար, հէլավ // էլավ)։ Հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է դրսևորվում բառի բոլոր դիրքերում (խա, խառս, խավ, խատ, խանէլ, խայիր,

խինգ, խին, խէր, խըրօխպէր, խէտը, խըմա, խող, պախէլ են): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*՝ *էտ կըդմ*: Բաղհյուսական հարադրություններում *ու*-ի դիմաց հանդիպում է *ը*՝ *ծեռը վոտի:* Շեշտը վերջնավանկային է:

Արամուսի խոսվածքում լրացուցիչ հոգնակերտներ գրեթե չեն հանդիպում (խավէր, տնշտէր, ախչիյնէր, պարէկամնէր, հարէվաննէր, մառթիք): Շատ չեն հոլովման յուրահատկությունները, այդպիսիք ներկայանում են սեռականի (Քեղառթա, կընգա, թընդըրա, վոռթըկան), բացառականի (խօրէ, մօրէ, ընձընէ, թունդրից, վնրդուց, ըտուց) որոշ ձևերով: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով՝ *Ըռուսաստան ի. Ծընվիր էմ Արամուս կեղը, կէղը կան:* Գործածական են որոշիչ հոդի երկու տարբերակներն էլ (պննը, մէքէնան), հաճախ հոդ են ունենում թվականները՝ *չօռսը, խինգը:* Անորոշ հոդը նախադաս է գործածվում՝ *մէ ախպէր, մէ քուր:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քէզի, մէզի* // *մեզի, ծէզի*: *Ով* դերանվան դիմաց առկա է *վնվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Ցուցական դերանունները երկանդամ են՝ *էտ, էն, էտի, էնի:* Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *ըտննք, ընդննք, ըտննց, ըտնրը, իրա, էտա, ըտուց, ընդուց, ըտն, ընդն, էտենց, էտենց, էնէնց, էտկըդն, էտքան, էտքամ, հըմէն, ըմէնէն, ըմընօվ, ուրիշ, /հ/իրար, /հ/ընչի, ինչ, վնրդուց, վնրտէ, իշթնր* և այլն:

Արամուսի խոսվածքում ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են անորոշ դերբայի հետ նույնական ձև ունեցող անկատար դերբայով[121], ինչպես՝ *սիրէլ էմ, ցավալ ի, ասէլ*

[121] Ըստ Մ. Ասատրյանի՝ Ուրմիայի /Խոյի/ բարբառի որոշ խոսվածքներում (այդ թվում նաև Արամուս գյուղի խոսվածքում) անկատար դերբայի երկրորդ ձևի *ի* կամ *ը* վերջավորությունն ընկնում է, որի հետևանքով անկատար և անորոշ

*էր, էթալ էր:* Երբ օժանդակ բայը նախորդում է դերբային, վերջինս կարող է անորոշի ձևի վրա ունենալ *ի*-ի հավելում (գյա՛զա՛ր եմ մըշակէլի, ալաղ էմ անէլի, լավ էր ըլէլի, լավ չի ըլէլի, չէմ թըխէլի) կամ չունենալ այդ հավելումը (չէմ մընալ, չէր պախէլ, ցօրօն ի պէրէլ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ *իկյա՛լ, լա՛լ, տալ*: Վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն՝ *ապրիր, պըսակիր, ճօչացիր:* Երբ օժանդակ բայը նախորդում է դերբային, *ր*-ն ընկնում է, և վաղակատարն ունենում է *է* վերջավորություն՝ *խաց էմ թըխէ, կըռնակ էմ արէ*: Հաճախ էլ վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստն արտահայտվում է միայն դերբայով՝ *ամուսնացէ կընացէ* (ամուսնացել գնացել է): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն՝ *նըստած, քընած*: Էական բայի ներկայի ձևերն են՝ *էմ, էս, ի, էնք՛, էք՛, էն*, սրանց ժխտականների ձևերն են՝ *չէմ, չէս, չի, չէնք՛, չէք՛, չէն:* Այս բայի անցյալի ձևերը վերլուծական կազմություն ունեն՝ ներկայի համապատասխան ձևերի և *էր* մասնիկի հարադրությամբ՝ *էմ էր, էս էր, էր, էնք՛ էր, էք՛ էր, էն էր:* Սրանց ժխտականնները ձևավորվում են էական բայի ձևերի վրա *չ*-ի հավելումով՝ *չէմ էր, չէս էր* և այլն: Հարկ է նկատել, որ անցյալի բոլոր ձևերը, բացի անցյալ կատարյալը, ունեն վերլուծական կազմություն՝ ներկայի կամ ապառնու ձևերի և *էր* բառ-մասնիկի հարադրությամբ, ինչպես՝ *պէրէլ էմ էր, տալ էմ էր, ասէլ էն էր, չէն էր ասէլ, պա՛ռնա՛լ էնք՛ էր, ունէմ էր, ժօղնըվէնք՛ էր, կիկյա՛նք՛ էր, կըխըմէնք՛ էր* և այլն: Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքը միշտ ունենում է *մ* հավելում՝ *էկամ, ասիմ, չըխասկըցամ, կընացիմ, զիցամ, արիմ, տըրիմ* և այլն: Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կազմվում է ոչ ցոյական հիմքով՝ *ըսկըսիմ, սարքըռտինք՛:* Անցյալ կատարյալ ժամանակաձևում դրսևորվում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ՝

---

դերբայները ձևով նույնանում են, ինչպես՝ *կյիրէլ = գրել* և *գրում, մընալ = մնալ* և *մնում* (տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 99):

*ուզին, անջատին, շառժըվամ, նըստավ: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Պատճառական ածանցն է *ըց* // *ցըց* (էչըցէլ, թըռցըցէլ): Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտոմ* (պըտոմ կըրէմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ալաղ անէլ (քաղհանել), ախպէր, ածէլ, öյլօր, առատուն զիդալ, դըրմըղ (փոցխ), զöտ (բան), էօթիս, էտկըդö, ըլէլ, ընչի, թöզö, թöլէլ, թամահ, թöք, թըթուն, թընդըրա ակ, թութուն, թունդիր, ժօղնըվէլ, իշթöր, իկյöլ, ինէլ (ընկնել), իշթöր, իրէյ պէրան (երեք անգամ), լöյլöղը, խա, խայիր, խավ, խատ, խատ-խատ (մեկ առ մեկ), խöքöնդöզ, խըմա (համար), խըրօխպէր, ծեռը վոտի ըլէլ, կայնէլ, կըռնակ անէլ, կըռնակէլ կըրասկախող (մոխիր, թերևս՝ կրակ բառից), կիսուր, կու թըխէլ, կօյնոց (գոգնոց), հöլö (հայպա), հալալ (հարազատ), հէտօվ, ճöռթէլ, ճռչ // ճօչ, ճօկ, ճօչանալ, մöռզըկա, մառթ (ամուսին), մառթի էթալ, մըկա, միտը էթալ, յö՛ր // յէ՛ր (արի՛), յէթիմ, յէսիմ, նöլ (գիտենալ բայից, նշանակում է՝ կարողանալ), չöնզöլ, պախէլ, պամբասանքʲ, պöռնöլ, պըսակէլ, ջայէլ, ջըղայնանալ, ջիզöր, ջղայն, սավրէլ // սարվէլ, սարքըռտէլ, սըվտըկուշկ, վախտ, վöրդէ, վիլկ, վոռթիկʲ, տալվ, տայնալ, տöշտ (դաշտ), տեղնուշկ, տըփէլ, ցօրօն, փէժզիր, փէջ, քէշուր (զազար), քիլ, քʲուր, օղճատ տալ (հանգուցել), ֆըլան և այլն:

**ԱՐԳԵԼ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Լուսակերտ: Հիմնադրվել է 1948 թ.: 1996 թ. վերանվանվել է իր նախկին անվամբ: Ունի մոտ 3200 բնակիչ, որոնց մի մասի նախնիները Արևմտյան Հայաստանից բռնագաղթածներ են: Հաղորդակցվում են խառը տիպի խոսվածքով, որին բնորոշ է Մշո և Արարատյան բարբառների հատկանիշների զուգակցումը:

Արգելի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (գ՛իշեր, իրեք, գ՛եղ, չորս, փող): Միավանկ բառերի սկզբում հին-հայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոչ, վոր, յեզ, յես, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օխճար, էրէխա, էթալ): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ὒ ձայնավոր (քὒսիբ, գὒդὒ, զὒթի, ὒմի, զὒրգել, Հὒշտարակ): Նկատվում է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղում (հառնիք, հասկընալ): Բառա-վերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերած-վում է *է*-ի (վըրէն): Բաղաձայնական համակարգի համար բնութա-գրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛այց, բ՛ան, բ՛անազ, բ՛էրել, բ՛ըռնել, գ՛եղ, գ՛ետ, գ՛էլ, գ՛ըլօխ, գ՛ող, դ՛աշտ, դ՛ուս, ձ՛եր, ձ՛էն, ձ՛ուն, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում խուլ հպա-կանների ու հպաշփականների դիմաց հաճախ գործառում են ձայնեղներ (աբրել, պաբ, պադահական, հադ, տադ, ախճիգ, ուզընգան, մըգա, էգա, մադ, մէզը, փագել, տազ): *Նգն* հնչյունա-խմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (մէշկ, իշկալ, լուսը բ՛ասվել): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հուր, հուրիշ, հուզել, հըռուս, համալ /ամոլ/, Հὒշտարակ, Հէրէվան, հառավոտ, հիրկուն, հառաջ, հըլնել, հինքը, հիրան): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում կարող է *խ* հանդես գալ բառի տարբեր դիրքերում (խառս, խավ, խին, պախել, խասնել), բայց նաև՝ *հանել, հաց, հինգ, հարուր, հօքի, հառս:* Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կօնախ, կափաղ, կազան, կօչաղ, կավուրմա): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, անիք, անք, րանք, վանք, տինք* մասնիկներով (էրէխէք, մառթիք, կընա-նիք, ձ՛իյանք, տեղրանք, իշվանք, գ՛իլվանք, իձվանք, ախպըրտինք, քըվորտինք): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Նկատ-վել են հատուկ տեղանունների՝ Ա վերջադրական հոլովման դրսևորման դեպքեր (Հէրէվնա, Առքելա): Բացառականն ունի *ց*-ով

վերջավորություն (Հա̈շտարակից, Հէրէվանից, տընից, գ՛ըլխից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (դըբռօցն ա սօրվում, դ՛աշտէրի մէչ): Գործածական են *ը* և *ն* որոշիչ հոդերը (ջ՛ուրը, լուսը, տըղէն): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քէզի, մէզի, ձ՛էզի,* հանդիպում են նաև *քէ, ձ՛է* կրճատ ձևերը: Ցուցական դերանունները եռաշարք են (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրան, հիրանց, ըստու, ըստուց, ընդուց, ընդըրան, ըստե, ընդեղ, ըսենց, էտենց, ըտենց, ըստե, ըստեղից, ընդեղից, էսքան, էտքան, ամէք մէ, ամէքը, իմալ, վորդեղ, վորդուց, հուր, ինչքան, հընչի* և այլն:

Խոսվածքում ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (հասկընում եմ, ճըղըռտըմ ա, պադմում ին, չէր ախշատըմ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալըմ, լա̈լըմ, տալըմ:* Հանդիպում են այս բայերի ենթադրական ապառնու զուգահեռ կազմություններ՝ *գ՛իքամ, կիտամ // գ՛ուքամ, գ՛ուլամ // գ՛ըքա, կըտան: Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* (գ՛ըլնի): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (խօսացէր, վըռազցէր), օժանդակ բայի նախադաս կիրառության պարագայում՝ *ե* վերջավորություն (ցօրեն ա ցանե, լավ են աբրե): Ժխտական խոնարհման դեպքում վաղակատար դերբայը կարող է միաժամանակ ունենալ օժանդակ բայի նախադաս և հետադաս ձևեր (չի մըտեր ա): Վաղակատար ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքում օժանդակ բայը կարող է հանդես չգալ (էնի գ՛ացե = գացեր ա), իսկ հոգնակի երրորդ դեմքում կարող է հանդես գալ *ած* վերջավորությամբ դերբայական ձև (ժօղօվըրթին ա տըված = տըվէր են), որը նույնպես կարող է հանդես գալ առանց օժանդակ բայի (վէրցած = վէրցէր են): Հարակատար դերբայն ունի *ուգ* վեր-

ջավորություն (քընուգ, նըստուգ)։ Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ,ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին։* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով (թօղինք, ասիր, բ՛էրէցին)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց։* Անցյալ կատարյալ ժամանակաձևում և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականում դրսևորվում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (քընա, թափավ, նըստավ, ծախեց, բ՛էրեց, բ՛ըռնեց, անջատա՛, կայնի՛)։ Երբեմն դիմավոր բայաձևից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձև, ինչպես՝ *յօլա յա կէթան, վոնց ա գ՛ըլնի։* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (փախնել)։ Պատճառական ածանցն է *ցըն* (փախցընել, խօսցընել, նըստըցընել)։ Պատճառական բայերի ներկայում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *հընչիք խօսցում, խասկըցո՛ւ, մօտկըցո՛ւ։* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի քօչենք)։

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղունակ, ա̈մի, բախճա, բօզ, բօստան, գ՛ըլխից դ՛ուս, գ՛իշէրնեց, զա̈դա̈, զա̈թի, զալօ, զա̈րզել, էթալ-գ՛ալ, թազա, իմալ, իշկալ, խընդալ (ծիծաղել), ծըծաղել, կազան, կանալ, կավուրմա, կափաղ, կօնախ, կօչաղ, համալ (ամոլ), հառավոտ, հիրկուն, հուզել (սիրել), հօրօխպէր, ղըրկել, ճիժ, ճըղել, ճըղըռտել, մանջ, մըզա, միյնակ, յեղօ, յեռթ, շօշ, ուզընզան, չօբան, սաղ (բոլորը), վախտ, վօռթիկ, տէր կայնել, քա̈սիբ, քըցել և այլն։

**ԱՐԶԱԿԱՆ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում։ Նախկինում՝ Արտավազդական, Արտազական։ Ունի մոտ 2800 բնակիչ, որոնց մեծ մասի նախնիները 1828-1830 թթ. գաղթել են Մակուից, Խոյից, Բայազետից, մասամբ նաև Մուշից։ Հաղորդակցվում են Մակուի խոսվածքի մի տարբերակով։

Արզականի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (վեռչ, մինչեվ, փօցղըվոր, խոզ): Միավանկ բառերի սկզբում հին-հայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոտ, վոր, յեզ, յերփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրէխա, օղօրմի): Փոխառյալ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ӧ ձայնավոր (քӧլӧչի, ջӧյէլ, թӧզӧ): Երբեմն բառասկզբի և այդ դիրքի խուլերին հաջորդող *ա*-ն ունենում է շրթնայնացած արտասանություն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (ուրխընալ, հառսնիք, յեռսուն, հավքել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (բիձէք, վըրէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայ-նեղների առկայությունը (բ՛ան, բ՛անակ, բ՛արակ, բ՛ըռնել, գ՛ալ, գ՛արուն, գ՛ʲէրընղի, գ՛ըռթան, գ՛ութան, դ՛ու, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛ըմեռ, ձ՛որ, ձ՛ուն, ձ՛ու, ձ՛եռ, ջ՛առթել, ջ՛ուր): Բառամիջում ու բառա-վերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գոր-ծառում են շնչեղ խուլեր (անքամ, սուրփ, միրք, առաչի, հօքի, յերք, մէչ, օց): Նույն այդ դիրքերում տարածված է խուլերի դիմաց ձայնեղների գործածությունը (տէրդէր, օձվել, մէզ էլ, հանգառծ, կօղըրվել, գըլխարգ, տօբրակը, ցաձ, աբրել /ապրիլ/, խօրիզ, հա-տիզ, հառցագվել, աբրել, գիդալ, ցուռդ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Նկատելի է առաջին շարքի ձայնավորներից առաջ հետնալեզվային հպականների քմայնա-ցած արտաբերություն (հաքʲէր եմ, գ՛ʲէրընղի, հավաքʲէք): Նախա-բաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (հիշնել, հըսնսել, մէշկ, ծըզղալ, արաացընել, ինշ-քան): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառաջ, հառաչի, հառչի, հըլը, հէռթիկ, համբօլ, հիմա-նալ, հիշնել, հընչի, հըլնել, հառավոտ, հինքը, հըմէն, Հէրէվան, հընգեր, հառու, հիրգուն, հառիք): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդիպում մի շարք բառերում (խա, խօվ, խին, խոր, խազալ, խաչալ): Միավանկ որոշ բառերի սկզբում *հո* կա-

պակցության դիմաց *ֆո* է հանդիպում (ֆոռթ, ֆոտ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կարախըրման, կօնախ, կազ, կօնդախ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, էրք* մասնիկներով (բիձէք, էրէխէք, շըլապկէք, ֆուրղունչիք, մառթիք, տըղէրք): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Գէմօյ, Կարօյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (կընգանից, թելից, կողքից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (Հէրէվան են աբրում, առտի մէչը): Գործածական են *ը* և *ն* որոշիչ հոդերը (կընիկը, էրէխէն): Անորոշ հոդը նախադաս է (մէ ախչիկ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի: Ով* դերանվան դիմաց առկա է *օվ*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրանց, ըստոնք, ըտըրա, ըտըրանց, ընդըրանք, էսքան, էնքան, ըսենց, էտենց, ըտենց, ըստե, ըստեղ, ըտե, ըսենցին, հըմէն, ամէն մառթ, վօրղից, վորդուց, հուստ, վօնց, հընչի, իմալ* և այլն:

Ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (ուտըմ էք, քըցում ին): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալըմ, լա̈լըմ, տալըմ:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (հէլէր /են/, ճըղվեր /ա/), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (շուտ են էկե, չենք լըսացե): Վաղակատար ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքում օժանդակ բայը կարող է չարտահայտվել (մըտե, ունէցե): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (կըպած, գըժված, կայնած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական,

այնպես էլ ցոյական հիմքերով (քըցի, փագին, քաղէցին, փօցղէցին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (բ՛էրին, նըստա, նըստի՛, գ՛ըրա՛, լօխկըցըրա՛): Ժխտական խոնարհման ժամանակ երբեմն օժանդակ բայ կարող է դրսևորվել դերբայից և՛ առաջ, և՛ հետո (միտը չի էթըմ ա, չի վարվում ա): Խոսվածքում չկան չ ածանցով բայեր: Պատճառական ածանցն է՝ *ցըն* (արաացընել, կըպցընել, բ՛ըռնըցընել): Հարկադրականի եղանակիչն է *պըղի* (պըղի էթան, պըղի շուռ գ՛աս):

Խոսվածքի բառային միավորներից են՝ արաացընել, բ՛ընատա, բալդըրղան, բիձա, բօյ ու բուսաթ գ՛ըռթան, գ՛օմի հօղա, գյուլլա, դուզ, թըզը, թաթվան, ժընջիլ, իմալ, լալկըվել, լօխկըցընել, խամբաջի, խարակ (չվարած), խին այամ, խխ (այո), խոտքաղ, խօրիկ, ծըզղալ, կազ, կաշ, կառշըմ, կավառ, կարախըրման, կըզօրակ, կըռավ, կըռութ, կըտուր, կօնախ, կօնդախ, համբօլ, հայաթ, հառավոտ, հառիք, հափսաթաթիկ, հէռթիկ հէտա (ահա), հիշնել, հուստ, հօռօվել, հօքի (մարդ), ճավիկ դ՛ընել, ճըլըլեկ, ճըղվեր, ճիժ, ճուխք, մայլա, մանջկալ, մէշա, մըկա, մըշրել, մինչեվի, յան յեսիմ, շըլապկա, շըլօր, չըռնօթան, պաշաղ, պըլէճ, պըսագվել պօկոն, ջայել, ջէբ, սէլավ, սօկօն, վախտ, տէնալ, ցըվրել (բաժանել), փօխինձ, փօցղըվոր, քըլըչի, քըցել, քօլ, ֆըռալ, ֆոռթ, ֆոտ, ֆուրդունչի և այլն:

**ԲԱԼԱՀՈՎԻՏ**[122] – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Միուբ: Վերանվանվել է 1968 թ.: Ունի շուրջ 3600 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղե-

[122] Բալահովիտի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1983 թ. լրացված թիվ 299 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

րից, Ալաշկերտից, Բուլանըխից 1828-1829 թթ.: Նոր ժամանակներում Բալահովիտի բնակչությունը համալրել են Վանաձորի ու Աբովյանի տարածաշրջաններից եկածներ: Գյուղում բնակվում են նաև եզդիներ, քրդեր, ռուսներ: Հաղորդակցվում են Արարատյան, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Բալահովիտի խոսվածքում երկբարբառային հնչյունների գործածությունը օրինաչափ չէ (բ՛եռ, քըշեռք, հէռու, ձ՛էռ, ձ՛ըմեռ // ձ՛ըմէռ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօր, վօրթ, յէզ, յէրք), *վօ* է առկա նաև երկվանկ բառերի սկզբում (վօխչար, վօչիլ, վօսկի, վօրթի), բայց նաև՝ *օռնալ, օլօրէլ:* Բազմավանկ բառերի սկզբում *ե*-ի դիմաց առկա է *է* (էրէվալ, էրակ, էրինջ, էրկաթ, էփէլ), բայց նաև՝ *յէրգար, յէրգիր:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդիպում է քմայնացած ա̈ ձայնավոր (ա̈ժէլ, բա̈խտ, զա̈րգէլ, ժա̈շկ, դ՛ա̈թա̈ր, դա̈խց, վա̈զնէլ, ֆա̈յմ): Բառասկզբի վանկերի *ա*-ն երբեմն որոշ չափով շրթնայնացած է: Խոսվածքում երբեմն առկա է եռավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղում (կարկըտան, գ՛օղնալ, հասկընալ, սօվրէլ, ցամքէլ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, փէսէք, էրէխէք): Բառասկզբում հստակ չէ ձայնեղ հպականների և հպաշփականների գործածությունը. երբեմն դրանց դիմաց շնչեղ ձայնեղներ են, երբեմն էլ՝ խուլեր (բ՛էրան, բօխկ // բ՛օխկ, գ՛ըլօխ, գ՛ըռնակ, զօղ // գ՛օղ, դ՛ուս, դօղ // դ՛օղ, գ՛ազան // կազան, բ՛ան // պան, դ՛աս // տաս, ձ՛ուկ // ծուկ, ջուր // ճուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (խափէլ, հաքնէլ, մարաք, մէչ, հա̈րցա̈կ, օց, առչ, լիռփ, վօռց, ուրփաթ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրուստ, մըզրատ, սըբաս, սէրգէվիլ, ցուրդ, քըռդինք): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (անէսկ, լըվասք, ծասկէլ, աշկ, հիշնէլ, մէշք): Հաճախ բառասկզբի

ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հյախպուր, հառաչ, հառավող, հարտ, հիրիգուն, հէրէս, հէրէկ, հէքուց, հուրիշ, հէվէլի, հըմէն, հընգէր, հընգընէլ, հընդանիք, հընդըրէլ, հիչըցընէլ): Բառասկզբի *խ*-ի դիմաց երբեմն առկա է *հ* (հաղ, հավող): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում հազվադեպ *խ* է դրսևորվում (խատնէլ, խօղ): Բառասկզբի *հօ* խմբի դիմաց երբեմն հանդես է գալիս *ֆօ* (ֆօրթ, ֆօտ): *Ս* հնչյունի դիմաց *հ* է հանդես գալիս *տէսնէլ* բայի անցյալի հիմքում (տէհար, տէհէ): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, երբեմն էլ՝ *կ̂* (կ̂ ազ, կ̂ալմակ̂ալ, կասաբ, կավուրմա, կյարիբ, կափաղ, կօնաղ, կուշ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իկ, անք, անիք* մասնիկներով՝ *խընամիք, մարթիկ, ձ՛իյանք, կընանիք:* Ոչ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրօնչ* ձևը: Ընդլայնված է Ո ներքին հոլովման բառերի քանակը (անօր, հընգօր, տէքօր, քըվօր): Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա վերջադրական հոլովման (Հէրէվանա, Սէվանա, Շըհաբա, Թյազյա գ՛էղա): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (գ՛էլից, թունդըրից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (գ՛էղը, ջ՛ըրի մէչը): Որոշիչ հոդը ունի *ը* և *ն* տարբերակներ (ծէրը, վօսկին): Որոշիչ հոդ ստանում են նաև բացառական և գործիական հոլովները (գ՛ըլխիցը, շապկիցը, գ՛էղէրիցը, ճամփօվը): Անորոշ հոդը նախադաս է՝ *մէ մարթ:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քէզի, մէզի, ձ՛էզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձընից, քէզանօվ, հինքը, հիրա, հիրանք, ընդյանք, ըստրա, ըստրանք, ըտրանց, ընդան, ընդրա, ըտանց, ըտրանից, ընդանից, ըստուց, հըմըրնին, իշքամ, հուր, իշթյար* և այլն:

Խոսվածքում բայի սահմանական ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (խառնըմ, դ՛ընըմ, էթըմ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալըմ, լ՚ալըմ, տալըմ:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (գ՛րըէր, մընացէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում այդ *ր*-ն ընկնում է (արէ, գ՛րըէ): Հարակատար դերբայն ունի *ած* կամ *ուկ* վերջավորություն (քընած, փըտուկ): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (ծակէցիր, չափէցիք, ծակիր, փօխիք): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *փօխինք, մաղին, փախցըրիր, աքրանք, նըստան, բ՛ռնըվա:* Այս ժամանակաձևի եզակի առաջին դեմքում հանդես է գալիս *մ* հավելված (հասամ, մընացիմ): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (հիչըցընէլ, թըռցընէլ): Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն (խըմցըրա՛, քընցըրա՛): Հարկադրականի եղանակիչն է *պըտի // բըդի* (բըդի գ՛րէմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղինջ, անօր տըղա, արքատ, բ՛ըլէլ, բըմբուլ, էլչի, էրէխա, թաթման, թ՚ամուզ, թէշի, թըզբէխ, թըխտըմօր, թուփ, իշկալ, խազ, խըրկէլ (վռնդել), խօրօզ, ծառծակօղ, կէսրար, կըժմըթէլ, կըպչան, կըտուր, կօտօշ, հէքուց, հիրիզվա հաց, հուշը էթալ, ճամփա, ճըկութ, ճութ, մալ, մըռու, միթամ, մուխ, նըշանց տալ, շաղ, ուզընզան, ուշունց, պաղէլ, պուճուճակ, պուպու, պօպօք, սըբաս, վախտ, վիլկ, տախտէղ, տափէլ, տէղէր, տըփէլ, փըսակվէլ, քունջ, օջօրք և այլն:

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ** – Քաղաք Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Արզնի ավան: Վերանվանվել է 1974 թ.: Հիմնադրվել է 1945 թ.՝ բնակեցվելով Հայաստանի տարբեր բնակավայրերից

եկածներով, հետագայում՝ Ադրբեջանից բռնագաղթածներով: Քաղաքում հաղորդակցման միջոցը խոսակցական հայերենն է:

**ԲՋՆԻ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Ունի մոտ 2900 բնակիչ, որոնց մի մասի նախնիները այստեղ են հաստատվել 1915-20 թթ. Բայազետի Արծափ գյուղից, Վանից և Պոլսից: Հաղորդակցվում են Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Բջնիի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (մեռնել, կեխտոտ, մէշտեղ, իրեք, թոռ, նոր, փօղոց), բայց դրանք միշտ չէ, որ գործածական են (եմ // էմ, վոր // վօր, մենք // մէնք, գ՛էտ // գ՛ետ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, յես), բազմավանկ բառերի սկզբում՝ *o* և *է* (էրկու, էրէխա, օղօրմածիկ): Խոսվածքում հանդիպում է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղում (հառսնիք): Բառավերջի ա ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (բալէք, տըրուբէք, էրէխէն, ճամփէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛առ, բ՛եռթ, բ՛էրել, բ՛ընակըռել, բ՛ըռնել, գ՛ալ, գ՛ետ, գ՛էրէզման, գ՛ըլխարկ, գ՛ըլօխ, գ՛ին, դ՛աժան, դ՛աշտ, դ՛ընել, դ՛ու, ձ՛ըմեռ, ձ՛ըքել, ձ՛ուն, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (հաքնել, առաչին, մէչ, ձ՛ըքել, օքնել): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (ախճիգ, բօբիգ, գիդալ, պադրաստ, տարէզան, ժամանազ, յէրգիր, ավառդել, կըդրել, փէդ, լուձ): Խոսվածքում հանդիպում են քմայնացած հետնալեզվային հպականներ (պապիկʲ, տիկʲին, հէքʲիմ, էրէխէքʲ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (արասցընել, իշ կար, վօշ մէ, վօշխար): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառաչ, հէռթիգ, հէսօր, հիչնել,

հիրանք, հուս): Միավանկ բառերի սկզբի *հo* կապակցության դիմաց հանդիպում է *ֆo* (ֆօղ, ֆօտ, ֆօր, ֆօրթ): Բառասկզբում *խ*-ի դիմաց երբեմն առկա է *հ* (հաղալ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* (ղըրաղ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, էրք* մասնիկներով՝ *բալէք, մարթիք, տըղէրք:* Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոջ* ձևը: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (Զանգույից, կաշվից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով (Առզաքան ծանօթ ունէր, Ռուսաստան ա, ըտըրա մէջ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տակը, թոռն ա): Անորոշ հոդը նախադաս է (մէ ախճիկ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: Ցուցական դերանունններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *մենք, մեր, իրանց, ըստե // ըստէ*, ընդէ // *ընդե, ըստուց, ընդուց, ըտըրա, ըսենց, ըտենց, ընենց, էտքամը, հիրան, հիրանց, ամէն ինչ, բ՛օլօր, վօչ մէկին* և այլն:

Խոսվածքում սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ դերբայով (անում ա, տէնում ես, էթում ի, աշխադըմ եմ, կըթըմ էր, ապրըմ ինք, հաքցընըմ էր): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *իս* վերջավորությամբ ձևերով (գ՛ալիս, լալիս, տալիս): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ըլէր, խօսացէր, ասէր, բ՛էրէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (ըլե, տըվե): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (ամուսնացած, նըստած, կայնած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Վերլուծական ձևերում օժանդակ բայը կարող է կրկնվել (պապըս ա ըլէր ա): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով՝ *արին, թօղին, աքսօրէցին,*

*բըրախէցին: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *բ՛ըռնին, բ՛ացվավ:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (հաքցընել, ամուսնացընել, նըստըցընել, կըպցընել): Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն՝ *թուլացըրա՛:* Հարկադրականի եղանակիչն է *պըդի* // *պըտի* (պըդի տաք):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ակընկալ, արասցընել, բ՛ընակըռել, բալա, բարփիկ, բըրախել, բօքիզ, գ՛էրէզման, գիդալ, դարվազա, դըզվել, էրէխա, թունդըրի շուռթ, լուսը բ՛ացվել, խէր հըլնել, խօռօմ, խօսալ, կայնել, կըրիշ, կուկլա, հաղալ, հայաթ, հէդօ, հէռթիզ, հէսա, հէտա, հէքյիմ, ղըրաղ, ղըրկել, ճամփա, մէզար, մէշա, մէշտեղ, միյնազ, չաղանալ, չօռս յան, պըտըտօր (ոչխարի թրիք), պուճաղ, ջէրգել, ռաֆաղա, սաղ, սանտալ, վախտ, վէդրօ, վօշ մէ, վօշխարի գ՛ըլօխ բ՛ըռնել, վօրդէվ, տէնալ, տըրուբա, տուկ, օղօրմածիկ և այլն:

**ԲՈՒԺԱԿԱՆ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Բաբաքշի: Ունի մոտ 1750 բնակիչ, որոնց նախնիները հիմնականում գաղթել են Մուշից, Բասենից, Ալաշկերտից, Պարսկահայքից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Բուժականի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (գ՛իշեր, իրեք, տեղ, գ՛ոռձ, հող // խող, թոռ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե* (յես, յեզ, վող, վոչ), բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Նկատելի է բառի աճման դեպքում *վո>օ* անցում՝ *վող > օղօվ:* Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *օ* և *է* (էրգուս, էրէխա, օչխար, օսկի): Փոխառյալ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ü ձայնավոր (բüռüդի, հüլբüթ, քüլüմ, ջիգüր): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (բ՛աժնել, հառսնիք, քառսուն): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերած-

վում է *է*-ի (նօրմէն, քուֆտէն, փէսէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛անալ, բ՛ըռնել, գ՛իշեր, գ՛ոռծ, դ՛ու, դ՛ուռ, ձ՛եր, ձ՛եռ, ձ՛ու, ջ՛առթել, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են երբեմն շնչեղ, երբեմն էլ պարզ խուլեր (առթէն, ջ՛առթել, անօթի, մառթկանց, չօրօռթ, ժօղօվուռթ, սարքել, հաքնել, միրք, խուռց, մառտ, ուտը, վեծը, օտաղ, շարինկ, մօռտել, քաղակ), հաճախ էլ դժվար է դրանք տարբերակելը: Նույն դիրքերում խուլերի դիմաց որպես կանոն առկա են ձայնեղներ (աբրել, Անդրանիգ, ախճիգ, աշխադել, գ՛իձ, հէդ, հադ, էգաձ, էրգուս, Լէնինագան, ծէձել, կադու, հադիգ, ճագատ, մէգ, շադ, պադ, պըզդըլիգ, տագ, փագել, փէդ, զօնքաջ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց հանդիպում է *յ* (պայել, ջայէլ, սայման, գօյ): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (մէշկ, Էշմիաձին, լըսվել, ծասկել): Որոշ դեպքերում բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառավօտ, հարի՛, հէսօր, հէվել, հընգնել, հիմանալ, հիրգուն): Հնհայերենյան *հ*-ի դիմաց սակավ դեպքերում *խ* է հանդես գալիս (խա, խող, պախել): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ* (խարախառմա, խըսմաթ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, անիք, դիք* մասնիկներով (փէսէք, մառթիք, կընանիք, ախպըրդիք // ախպըրդիք): Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման դեպքեր (Հէրէվնա): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Համբօյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (դ՛ըռնից, քաղաքից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով (քաղաքն ին, գ՛օմի մէջ, մըըրքի մէջ): Որոշիչ հոդը որպես կանոն *ն*-ն է (փէշըն թալե, վարելըն թանգ ա), բայց երբեմն գործածական է նաև *ը*-ն (մօրը, մերը, գ՛ալօղը): Հաճախ որոշիչ հոդը կարող է չարտահայտվել (Հայաստան խող շա՞դ ունի,

կըզարգէր բ՛էրան կառնէր կէթէր): Անորոշ հոդը նախադաս է (մէ հաղ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էդ, էն, էսի, էդի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վիր*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքըն, հիրան* // *իրան, ըղըրան, ըղըրանից, ըղըրանք, ըդուց, ըստե, ըտե, էդեղ, ըտեղ, ըտեղից, ըդենց, էտկան, էտենց, ամէք, հըմէն, հիրար* // *իրուր, իմալ* և այլն:

Խոսվածքում բայն ունի Ա, Ե և Ի խոնարհումներ (կէթանք, կէպեն, չըտանիք): Նկատելի է, որ ներկայի և ապառնու ձևերը կարող են ունենալ *ե* կամ *ի* կազմիչներ (ունեմ, հիմի կիդենք, հիմի կաբրինք, իրավունք չունիք տանիք, կազադվիս, նաև՝ *եմ* // *իմ* , են // ին, ենք // ինք), մինչդեռ անցյալ անկատարի և ներկայի հիմքից կազմվող անցյալի այլ ձևերն ունենում են *է* կազմիչ (էնէն /անեին/, էնէր /աներ/, տէսնէն /տեսնեին/, կըփախնէն /փախչում էին/, կէթէնք կաշխադէնք /գնում աշխատում էինք/, կիդէնք /տալիս էինք/, կըտանէր /տանում էր/, գ՛օդդու էնք էնում /թաքուն էինք անում/, նաև՝ էնք /էինք/): *Անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հըլնել, կըռնալ* // *կարալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ՛ի* կամ *կի* մասնիկով՝ *գ՛իքան, կիդենք, գ՛իքէն, գ՛իքէր, կիդէնք*, մյուս բայերինը՝ *կը* // *կ* մասնիկով կամ առանց դրա (կըկայնէնք, հիմի նըստին կէթան, նըստէն մաղէն /նստում մաղում էին/): *Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* կամ *գ* (գ՛էլնէնք, գէլնի, գ՛ընգընէնք, գ՛անէնք, գ՛աշվիմ, գ՛ավաքենք): Անսովոր չէ ներկայի կամ անցյալ անկատարի կազմությունը նաև անկատար դերբայով (չէր բ՛էրում): Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն (էգէր /են/), օժանդակ բայի նախադաս գործածության պարագայում՝ *ե* վերջավորություն (շադ ենք քաշե, չի տըվե, բ՛ան չիմ էրե), ընդ

որում՝ դերբայի վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել եզակի երրորդ դեմքի իմաստ (ըսե = ըսեր ա, մաքրե = մաքրեր ա): *Հարակատար* դերբայն ունի *ուզ* վերջավորություն (հաքուզ, կախուզ, գ՛ըրուզ): Վաղակատար ներկայի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *աձ* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող է գործածվել օժանդակ բայի եզակի ձև (ջ՛առթաձ ա = ջ՛առթէր են, պայաձ ա = պահել են), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (էգաձ տէսաձ = էկէր են տէսէր են): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (սարքէցինք, տըվէցին, սարքի, տըվինք, բ՛էրին, էրին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց*: Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (ըսէցի, սիրէցինք, աշխադա, քընանք, կուճուռվանք, ազադվի՛, կայնի՛, նըստի՛, փօխա՛, պադմա՛): Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը՝ ըստ ժամանակային իմաստի, ինչպես՝ *հաց ա կուդինք, խօրօդ էլ ա կըսենք, մէ քիչ ծանըըր ա կըլըսիմ, թեփ էր կուդէնք:* Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը սովորաբար դրվում է բայաձևի վրա՝ *չեղե* (չի եղել), *չեղնի* (չի լինի), *չըտըվե* (չի տվել), բայց նաև կարող է դրվել օժանդակ բայի վրա (չի ախտա, չի հասե): Երբեմն ժխտականը կարող է դրվել նաև այլ դեմքի բայաձևի վրա՝ *չըկըռնամ, չըկարամ* (չեմ կարող): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (փախնել, թըռնել): Պատճառական ածանցն է *ցըն* (հասցընել, մեծըցընել): Պատճառական բայերի որոշ ձևերում հանդես է գալիս *ու* խոնարհիչը (հարցուք, բ՛առցուն, լօղցո՛ւ, կէրցո՛ւ, մօղզըցո՛ւ): Հարկադրականի եղանակիչն է *բըդի // պըդի* (պըդի եղնի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ազիզ մառտ, ամէք իրան, անիադ վախտ, անիադութուն, անօթի ծառավ, աշխարքի

տակ, բ՛աժվել (ընտանիքից առանձնանալ, նոր ծուխ ստեղծել), բ՛առնալ, բ՛ըլել, բաղնիս, բռռռի, գ՛ալօղ, գ՛էրընդի քաշել, գ՛ըլխու իընգնել, գ՛ըրգանոց, գ՛օխտուր, գ՛օղդու, զըրանից, զանգուլակ, ժէշտ, լամպար, խարախառմա, խըսմաթ, խըրօմի սապուգներ, խօրօդ, խօրօզ, ծանդըր, կալ, կայնել, կըռնալ, կըռուտ, կըրիշա, կուխնի, կուճուռվել, հալալ, հըլբըթ, հառավօտ, հառսնիք, հավար թալել, հարի լուս (մինչև լույս), հարիր // հարուր, հացափորի // փորհացի, հեղօվ, հէվել, հիրգուն, հիրգուն, հուր (ուր), հօրօխպէր, ձ՛ու, մալատիրկա, մէ թիքա, մէշա, մըշըրել (ձեռքերով տրորել), մըսըրքի մէջ, մըրկաթ, յերա (վերք), նաղդի, նաֆար, նեղութուն, նօրմա (չափաբաժին), շըլգել, շըռճել, շուշաբանդ, ուժը ախտել, չըռալ, չիշիգ, պեռվի սօռթ, պըզդըլիգ, պըռձնել, պօյեզի գ՛իծ, ջայէլ, ջիգյըր, սավա (բացի), սըֆտա, վախտ, վայթէմ, տանիք, տեղաշոր, տընէստուն (տանից տուն), փէդել (ձեռքով քաղել), փէդօն էնել, փէջ, փօզէմաղ, քըլըմ, քընէլատեղ, քօչել, օթաղ // օտաղ, օռշնէք, օսկի, ֆըռալ (շրջվել), ֆըռըցընել և այլն:

**ԳԱՌՆԻ**[123] - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Բաշ-Գառնի: Վերանվանվել է 1935 թ.: Ունի մոտ ութ հազար բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը գաղթել է Մակուից: Հաղորդակցվում են Մակուի խոսվածքով:

Գառնու խոսվածքն ունի *ե* և *ո* երկբարբառային հնչյուններ (տեղ, վեռչ, վեց, արեստ, չոռս, խընձոր): Միավանկ բառերի սկզբում *ե*-ի և *ո*-ի դիմաց առկա են *յե* և *վո* (յես, յեզ, վոռթ, վոր), բազմավանկ բառերի սկզբում՝ *է* և *օ* (էրակ, էրկաթ, օսկօռ, օրօճ):

[123] Գառնիի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1982 թ. լրացված թիվ 207 տետրում, առկա են նաև գյուղում 2016 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

Փոխառյալ և որոշ բնիկ բառերում հանդես է գալիս քմային *ա* ձայնավոր (ӓլբӓլ, փիլӓքӓն, նӓռդըվան, դӓրվӓզ, մӓզӓլու, Գӓռնի, դ՛ӓռտӓկ, էնդӓ, թӓլել, վըրӓ, քꞌӓնց, քӓվӓռցի, քӓնի): Երբեմն նկատելի է *ա* ձայնավորի շրթնայնացում բառասկզբում և բառասկզբի խուլերից հետո: Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ դառնում է *է* (էրէխէն, վըրէն, վըրէս, փէսէք): Բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորը սովորաբար սղված է (սօվրել, կադդել, ուրխընալ): Խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛աժակ, բ՛ան, բ՛ացի, բ՛էտընալ, բ՛էրել, գ՛եղ, գ՛ոմ, գ՛ըրիչ, դ՛առնալ, դ՛ընել, դ՛ու, դ՛ուռ, ջ՛օկել, ջ՛ուր, ձ՛էն, ձ՛եր): Բառամիջի և բառավերջի դիրքերում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են շնչեղ խուլեր (մառթ, վեռչ, հառցըկել, հիչնել, անքամ), նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն հանդիպում են ձայնեղներ (ավառդել, աբրել, գիդալ, յերգիր, տընգել, կադու): Հինհայերենյան *հ*-ի դիմաց դրսևորվում է *խ* (խասնել, խաց, խարիր, խէտ, խէր, խինգ, խող, պախել, խըմա /համար/, խինգ, խիվանդ, սօվամախ): Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում (հախպուր, հառէչ, հավէլի, հӓշկ, հընչի, հըմէն, հիմանալ, հիրար, հիրանք ևն): Փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց առկա է *կ* (կօնախ, կօչաղ, կալմակալ, կӓրիբ): Բաղաձայնից առաջ հպաշփականները կարող են վերածվել շփականի (վոշ մէկը, ինշ գ՛ոռծ, հӓշկ, հըսնել, լըվասկ): Նկատելի է հետնալեզվային հպականի քմայնացում առաջին շարքի ձայնավորներից առաջ՝ *գꞌӓդӓ, գꞌէրընդի, էկꞌե, վոսկꞌի, քꞌեռի, քꞌӓնց: Նգն* խմբի դիմաց *յն* է հանդես գալիս *կայնել* ձևում: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակի թիվը ձևավորվում է նաև *ք, էրք, անք, րանք* վերջավորություններով (գ՛եղացիք, գӓռնէցիք, գ՛ողթէցիք, տըղէրք, ձ՛իյանք, գꞌեղրանք): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ* մասնիկով (Վաչօյ, Կարօյ, աղէյ, մամէյ): Հանդիպում են հատուկ տեղանունների՝ Ա հոլովմամբ

կիրառություններ՝ *Գ՛ոխտա, Քեղարթա:* Ոչ հոլովմամբ հանդիպում է միայն *տիրոչ* ձևը, այն էլ՝ *տիրու* ձևին զուգահեռ: Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (խօրից, ախպօրից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով (գ՛եղը չըկար, տան մէչ): Խոսվածքն ունի որոշիչ *ը* և *ն* հոդեր (մէկը, էրէխէն): Անորոշ հոդը նախադաս կիրառություն ունի (մէ տըղա): Անձնական դերանվան տրականի ձևերն ունեն *ի*, երբեմն էլ՝ *իկ* հավելվածներ (ընձի // ընձիկ, քեզի, մեզի, ձ՛եզի): Ցուցական դերանուններն ունեն եռանդամ համակարգ (էս, էդ, էն, էսի, էդի, էնի): *Ով* դերանվան դիմաց գործառում է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հիրա, հիրանք, ընդոնք, հիրար, էտտա՛, էնդա՛, ըտա // ըտա՛, էսենց, էտենց, ըստե, ընդե, իշդա՛, վորդե, իմալ, հիրանց, ուրիշ, հըմէն ինչ, վոր մէկը, էնքան, ըսենց:*

Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (վախէցուկ, քընուկ): Էական բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես,* ա, *ենք, էք, են*, ժխտականի ձևերը՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն,* անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին:* Վաղակատար դերբայն ունի *էր* վերջավորություն (գ՛ացէր /եմ/, սօվրէր /ենք/): Երբ այս դերբայը հաջորդում է օժանդակ բային, ունենում է *ե* վերջավորություն (էրէխա յեմ հէլե, մէրս ա պախե, չեմ էկե): Վաղակատար ներկա ժամանակաձևի հոգնակի երրորդ դեմքում հանդես է գալիս *ած* վերջավորությամբ ձև, որը համապատասխան իմաստ արտահայտում է առանձին կամ *ա* օժանդակ բայի հետ՝ *քանդած, ավիրած ա* (= քանդել են, ավերել են): Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը բաղադրվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (բ՛անցընըմ եմ, ուրխընում ենք, պաղմըմ էր, ճանչընում ինք, չի վեռչանում): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում // գ՛ալըմ, լա՛լում // լա՛լըմ, տալում // տալըմ*: Անցյալ կատարյալ ժամանակաձևն ունի ներգործաձև և

կրավորաձև վերջավորություններ (տըվեց, տընգէցինք, սօվրամ, կադղամ, քամբըխվավ), այդպես նաև՝ եզակի հրամայականը (քըռտընի՛, նըստի՛, պադմա՛, խասկըցըրա՛): Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքը վերջավորվում է *մ* ձայնորդով (գ՛ընացիմ // գ՛ացիմ, ընթունվամ, սօվրամ, պըռծամ): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *աշխատէցիմ, գ՛ըրինք*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց // գ՛ընաց, մաց // մընաց:* Խոսվածքը *չ* ածանցով բայեր չունի (փախնել, թօղել): Պատճառական ածանցն է *ցըն* (բ՛անցընել, խըմցընել, կայնըցընել): Ենթադրականի եղանակիչի խուլ հպականը, բառասկզբի *հ*-ի հետ միանալով, վերածվում է *գ՛*-ի (գ՛ընցնեմ): Հարկադրականի եղանակիչն է՝ *պըդի* (պըդի էթիր):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ӛլբӛլ (միանգամից), արաղ, բ՛էտընալ, բաղ, գ՛եղացավարի, գօմփ, դӛրվӛզ, զառաֆաղ, զօռ, էլչի, թӛլել (լցնել), թըխտըմոր, ժեխ, իմալ, իշդӛ, խըրկել (վռնդել), խիժ, խիվըննալ, ծըձղալ // ծըծըղալ, կադղել, կայնըցընել, կըթուն, կըռիվ-կալմակալ, կունարկ, կօխըռճել, կօնախ, հառէչ, հառիք, հօլթըլաղ, ձ՛ըծում, ճիժ, մամիկ, մӛզӛլու, մըկա, մուխ, մօղօզըրիկ, յան, յեթիմ, յեղըռճիկ, նӛռդըվան, պախել, պըռունգ, պուճուճակ, ջ՛օկել, սաղ, սըլուլ (ուժեղ ցուռտ), սօվամախ, վախտ, վիզ առնել, տանիս, տիլ, տիկնակըլօնձ, փիլӛքӛն, փօշի, քամբըխվել, քըռտինք տալ վըրէն և այլն:

**ԳԵՂԱԴԻՐ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Քյարփիչլու: Վերանվանվել է 1935 թ.: Ունի մոտ 700 բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը 1918-1924 թթ. եկել է Վանից, Խնուսից, Ռշտունիքից, Մոկսից: Հաղորդակցվում են Վանի և Արարատյան բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Գեղադիրի խոսվածքն ունի երկբարբառային *ե* և *ո* հնչյուններ (մեռնել, խեխձ, թոռ, չոռս, օրօրոց): Միավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե* (յես, յեզ, վոր, վոտ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրէխա, օխձար, օսկոռ), բայց նաև՝ *վոծիլ, վոսկի, յեռեսուն, յերկիր:* Բառասկզբի խլացած բաղաձայններից հետո, այլ դիրքերում և փոխառյալ շատ բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավորը (կʲա̈ն, կʲա̈ռ, պա̈ն, պա̈ռցել, տա̈ռնալ, ճա̈ռթըրվել, հա̈շկ, զա̈րկել, թա̈լել, ա̈զիզ, ասկʲա̈ր, զա̈յլա̈, նա̈ֆա̈րը, խա̈լխ, նօքա̈րութուն, յա̈քա̈, մէթըքա̈, չա̈նչ, սա̈բա̈թ, քʲա̈սիբ): Բառասկզբում և բառասկզբի խուլերից հետո երբեմն նկատելի է *ա*-ի որոշ շրթնայնացում: Բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը (խասկընալ, հավքել): Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ դառնում է *է* (տըղէն, ճամփէն, էրէխէք): Խոսվածքը բառասկզբի հինհայերենյան ձայնեղների դիմաց ունի խուլեր (Պէրկըրի, պէրել, պացվել, պըռնըրվել, ծուկ, կետ, կալ, կʲեղ, կըլօխ, տառնալ, տու, տուռ, տուս, տընել, ճուր, ճոչ, ծոր, ծեռ, ծիթխաց, ծէն), բայց երբեմն հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ (բ՛ա̈ն, բ՛արի, գ՛ընաց, գ՛իշեր, գ՛ոռծ, դ՛ասարան): Բառամիջում և բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, մառթ, թաքավոր, ճըրաք): Նույն այդ դիրքերում երբեմն խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (աբրել, կըդրել, հէրգար, պադասխան, տօբրակ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց առկա է *խ* (խաց, խավ, խինգ, խէր, խասկընալ, խառսէ, խասնել, խարիր, պախել), բայց գործածական է նաև *հ*-ն (հանել, հառս, հէր, հօրօխպէր, հատ): Բառասկզբի ձայնավորից առաջ առկա են *հ*-ի հավելման դեպքեր (հախու // հա̈խու, հա̈շկ, հառաջ, հառէչ, հավէլի, հուր, հինքը, հիրա, հընչի, հէսա, հիրկուն, հէրգար, հէրէկ, ամէք, հըմէն), ընդ որում՝ այդ *հ*-ն բավականին թույլ հնչյուն է: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց գործածվում է *ղ* (ղօնախ, ղազան, ղավուրմա, ղա̈րիբ), բայց

հանդիպում է նաև *կ*՝ կազան: Հետնալեզվային հպականները առաջին շարքի ձայնավորներից առաջ քմայնացած են (կյա̈ն, էկյե, կընգյան, կյա̈ռընալ, կյեղ, քյա̈սիբ, քյա̈նի): Հպաշփականները բաղաձայնից առաջ դառնում են շփական (լըսվել, մէշները, հա̈շկ, պընշներ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Շեշտը վերջնավանկային է:

Գործածական են նաև *ք, անիք* հոգնակերտները՝ *էրէխէք, կընանիք:* Արձանագրվել են հոգնակերտ մասնիկների հավելական կիրառության դեպքեր՝ *վըրէքներ, վոտքէրներ:* Հանդիպում են սեռական հոլովում հատուկ տեղանունների՝ *ա* վերջավորությամբ ձևեր (Վանա, Սէվանա): Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով (աբրում էր Կիրօվական, տան մէչը, կյեղի մէչ): Գործածական են *ը* և *ն* որոշիչ հոդերը (հէրը, ճամփէն): Անորոշ դերանունն ունի նախադաս կիրառություն (մէ տըղա, մէ հատ): Խոսվածքն ունի ցուցական դերանունների եռանդամ համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսա, էտա, էնա): Անձնական դերանունների տրականի ձևերն ունեն *ի* հավելված (ընձի, քեզի, մեզի, ձըզի), գործածվում է նաև կրճատ *քե* ձևը: *Ով* դերանվան դիմաց գործածական է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հինքը, իրա, իրան, հիրանք, հիրանց, ըտա̈, ըտան, ըտու, ըստե, ըտեղ, ընդե, էսենց, էտենց, էնենց, ըտենց, էնքան, հըմէն, հուր:* Մեկ թվականի դիմաց առկա է *մէ* ձևը՝ *քառասունմէ:*

Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են անկատար դերբայով (ըսպանում են, աբրում էր): Ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի իմաստը կարող է արտահայտվել նաև միայն դերբայով (հա̈շկերը կուրանում, մեռնում): *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ *կյա̈լում, տալում, լա̈լում:* Հանդիպում են նաև *կը // կու* մասնիկով ձևեր՝ *կըկյա̈ // կուկյա̈, կուկյէր*: Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի իմաստներ

արտահայտվում են նաև *կը* եղանակիչով (կըպախին, կէթամ): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Վաղակատար դերբայն ունի *էր* վերջավորություն (գ՛ընացէր /եմ/, տարէր /են/): Օժանդակ բային հաջորդելիս կամ եզակի թվի երրորդ դեմքում առանց դրա գործածվելիս վաղակատարն ունենում է *ե* վերջավորություն (ճամփա յեն հընգե, չեն տարե, տըվե մառթի, էկե, քըցե): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (խըմուկ, քընուկ): Անցյալ կատարյալը կազմվում է և՛ ցոյական, և՛ ոչ ցոյական հիմքերով (ասի // ասէցի, սպանէցին, թöլին, արինք): Անցյալ կատարյալում և եզակի հրամայականում դրսևորվում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (ղըրկէցի, քըցի, մըռսավ, էրէցավ, լըսա՛, խասկըցըրա՛, իշկա՛, նըստի՛, քընի՛): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց // կʲöց, մընաց // մաց:* Պատճառական ածանցն է *ցըն* (խասկըցընել): Հարկադրականը կազմվում է *պըտի // պըղի* եղանակիչով՝ *պըտի տանես, պըղի ասեմ*: Խոսվածքը չունի *չ* ածանցով բայեր:

Գեղադիրի խոսվածքի բառային միավորներից են՝ öզիզ, ախպէր, ակռա (սեղանատամ), ամէք, ապըրվել (ապրել), առնել (կին առնել), ասկյöր, բöռöդի, բըմբըլել, դուշմընութուն, զöյլö, զöրկել, էրէցել, թöլել, թըխ, թընդիր, թուփ (տերև), ինչըխ, իշկալ, լուսնակ, խաբար, խöլխ (օտար), խառսէ, խեխճ ու կըրակ, խէմ, ծամ, ծիթխաց, ծիծ տալ, ծոր ծուկ, կէրսար, կըլավ, կըլօխ, կըռութ, կʲöռընալ, կʲöռ, հախու, հöշկ, հառէչ, հավար, հէնա, հէսա, հէրգար, հէրէկ, հիրկուն, հօրօխպէր, ղազան // կազան, ղավուրմա, ղöրիբ, ղըրկէցի, ղօնախ, ճամփէն, ճոչ, մառթի տալ, մառթ, մէթըքö, մըկավա, յöքö, նöֆöր, նօքöրութուն ուռ (կուրծք), ուռթել, չաղ, չամբար, չöնչ, չըլուղ, չուչէքը (քուչէքը), պըստիկ, ջեբ, սöբöթ վոճիլ, վոռթի, տըրընդէզ, տըփել, տօբրակ, ցան, փախէ-

փախ, փոխինձ, քարկիճ, քյմսիբ, քօռնալ, քոչէքոչ, քոչ, օխճար, օսկոռ և այլն:

**ԳԵՂԱՇԵՆ**[124] - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ճաթղռան, Հրազդան: Գեղաշեն է վերանվանվել 1967 թ.: Ունի մոտ 4200 բնակիչ, որոնց նախնիները հիմնականում գաղթել են Ալաշկերտից, Մուշից, Խոյից 1828-1830 թթ.: Հաղորդակցվում են Մուշի, Խոյի և Արարատյան բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով::

Գեղաշենի խոսվածքն ունի *ե* և *ո* երկբարբառային հնչյուններ (իրեք, շենք, չոռս, քավոր, խըևձոր): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի և *ո*-ի դիմաց հանդես են գալիս *յե* և *վո* (յես, յերք, յեզ, վոր, վոտ), բազմավանկ բառերի սկզբում՝ *է* և *օ* (էրկու, էրէխա, օխճար, օղըրդել), բայց նաև՝ *յեռեսուն, յեռու, վոսկի:* Բնիկ և փոխառյալ մի շարք բառերում հանդես է գալիս առաջին շարքի ա ձայնավոր (ւռւջ, դ՛ննկ, զմրկըվան, էստմրի, վմխէնալ, քմնի, զմտիկ, բմրիշել, հմլիմ, հմյմթ, դմստըղուն, ջմյէլ, չէչմ, նմմ, քյմսիբ, փմռղմ, քմսմր): Բառասկզբում և բառասկզբի խուլ բաղաձայններից հետո երբեմն նկատելի է *ա*-ի շրթնայնացած արտասանություն: Նկատելի է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղում (գ՛օղնալ, սօվրել, չօրցընել): Բառավերջի *ա*-ն հաջորդող մասնիկից առաջ դառնում է *է* (վըրէն, տըղէն, ռամկէն): Բառասկզբում գործածական են շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛աժան, բ՛ան, բ՛անակ, բ՛առ, բ՛առցել, բ՛էրել, գ՛էլ, գ՛իրկ, գ՛ինի, գ՛ըռնակ, դ՛ընել, դ՛ուռ, դ՛աշտ, դ՛ու, դ՛ուս, ձ՛ավար, ձ՛եռ, ձ՛եր, ձ՛ի, ձ՛ուն, ջ՛առթել, ջ՛ուր, ջ՛ոչ), որոնք երբեմն թողնում են խուլերի տպավորություն: Բառամիջում և բառավերջում

---

[124] Գեղաշենի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984 թ. լրացված թիվ 275 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, յերք, մառթ, շափաթ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց որպես կանոն առկա է *խ* (խա, խառս, խառնիս, խատնել, խասնել, խանել, խավ, խէր, խէտ, խինգ, խիվանդ, խատ, խոտ, խօրել, խօրքուր, պախկըվել, պախել): Գործածական են հետնալեզվային քմայնացած հպականներ (գʲէտին, hօքʲի, շենքʲեր, քʲöսիբ, քʲեռի, քʲիչ, իրեքʲ, շոքʲին, քʲöլöմ, էկʲեր ա, մէկʲ), որոնք երբեմն հպաշփականի տպավորություն են թողնում: Բառասկզբի ձայնավորներից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում (հառչի, հավէլի, հընչի, հըմէն, հառավոտ, հէոթիս, հէսօր, հիճըցընել, հէրկընցընել, հիրա, հիրանց, հըղըրկել, հիշկալ): Հանդիպում է միավանկ բառերի սկզբի *հո* > *ֆո* անցում՝ *ֆոռթ:* Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց առկա է *կ* (կազան, կանթար): Բաղաձայնից առաջ հպաշփականները կարող են վերածվել շփականների (վոնշ մէ, ինշ գ՛ըլնի, ինշքան, բ՛ասվել): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում:

Գործածվում են նաև *ք, անիք, անք, րանք, էրք* հոգնակերտ մասնիկները (հօղէք, քöվöռցիք, կընանիք, ձ՛իյանք, ըստերանք, ըտերանք, կողրանք, տըղէրք): Ձայնավորով ավարտվող բառերը սեռական հոլովում կարող են ստանալ *յ* (մամայ): Հատուկ տեղանունների սեռականը կարող է ձևավորվել *ա*-ով՝ *Արամուսա, Գöռնիյա:* Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (դ՛ըռնից, ճարից, փէսէքից): Ներգոյականի իմաստն արտահայտ-վում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով (հավաքվում ինք կըլուբը, շորի մէչը): Գործածական են *ը* և *ն* որոշիչ հոդերը (կընիկը, տըղէն): Անորոշ հոդը նախադաս է (մէ մառթ): Թվական-ները ևս հոդ են ստանում՝ *չոռսը, խինգը, յօթը, ութը: Մեկ* թվականի դիմաց առկա է *մէ* ձևը՝ *քըսանմէ:* Անձնական դերա-նունների տրական հոլովաձևերն ունեն *ի* հավելված (ընձի, մեզի, քեզի, ձ՛եզի), հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի,

էնի)։ *Ով* դերանվան դիմաց գործածվում են *վոր*, *օվ* ձևերը, սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը։* Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հինքը, ըստոնց, ըտոնց, տըրան, ըտüր, ըտան, հիրա, հիրանք, հիրանց, ըստըրանք, ըտըրանք, ընդըրանք, ընդըրանց, ըսենց, ըտենց, ամէնքը, ամէքը, ամէքին, հըմընօվ, ըստե, ըտե, էտատե, ըստեղին, ըստեղից, ընդար, վորդե, վորդուց, հիրար* և այլն։

Անորոշ դերբայի տրականը կարող է արտահայտել ժամանակի իմաստ (էս շենքը շարէլուն)։ Ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են անկատար դերբայով (չեմ յերքում, բ՛առցում ին)։ *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լüլում, տալում։* Վաղակատար դերբայն ունի *էր* վերջավորություն (ծընվէր, առէր), իսկ օժանդակ բայից հետո կամ առանց դրա՝ *ե* վերջավորություն (վոնց էր առե, մենք ենք խօսացե, չեն փախծըրե, ըտենց խաքե փախե գ՛ընացե)։ Վաղակատար ներկա ժամանակաձևի հոգնակի երրորդ դեմքում դրսևորվում է *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող են գործածվել օժանդակ բայի *ա* կամ *են* ձևերը (կախած ա = կախէր են, ծընած են = ծընէր են)։ Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (կայնած, ուզած, վüխէցած)։ Էական բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերը՝ *ի // իմ, իր, էր, ինք, իք, ին։* Անցյալ կատարյալը եզակի առաջին դեմքում վերջավորվում է *մ* մասնիկով (գ՛ընացիմ, սկըսիմ, հէլամ, տէսամ)։ Այդ մասնիկը դրսևորվում է նաև էական բայի անցյալ ժամանակի եզակի առաջին դեմքում՝ *չիմ կարում* (չէի կարողանում), *չիմ էթում* (չէի գնում)։ Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով (տըվիմ, արիմ, նըշանակին, ծառայինք, քաղին)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց։* Անցյալ կատարյալում դրսևորվում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (վէրցին, խընթըրին, ասեց, նըստանք, բüրիշանք)։ *Կը* եղանակիչը և նրան հաջորդող *հ*-ն վերածվում են *գ՛*-ի (գ՛ըլնի)։ Հարկադրականը

ձևավորվում է *պըտի* եղանակիչով (պըտի ուզեմ): Պատճառական ածանցն է *ցըն* (հիճըցընել, կառճըցընել, հէրկընցընել, կայնըցընել, փախցընել, նըստըցընել, կէրցընել): Խոսվածքը *չ* բայածանց չունի (թօղում):

Գեղաշենի խոսվածքի բառային միավորներից են՝ աhակին, անունը խանել, առավոտնեց, առնել (կնության առնել), բախչա բյարիշել, գ՛ըռնակել, գ՛ույնը քըցել, գըռուզավիկ, դյաստըղուն, դըմփիկ, զյարկըվան (զարկան), էտատե, ընդար, ըտերանքից, թալվա, թամաշ անել, թըռճել (թրջվել), թութուն, թունդիր, թօ, թօզ, լըցենք ծօվը՝ կըցամաքի, խառճըկաթ, խէրանց տուն, խըլղ, խըշմար, ծէծել (ցորենը), կազան, կալ, կամ, կայնել, կանթար, կէրսար, կըսըր, կըրալ (կարողանալ), կըրիշա տուն, կուռծ, հա (միշտ), հյալիմ, հյայաթ, հաշտ, հառավոտ, հէնա, հէռթիս, հըղըրկել, հըրօխպէր // խըրօխպէր, հիճըցընել, հիշկալ, հօղա, ճար (բակի մուտք), մըկա, մընաց (որոշ ժամանակ անց), յեքսան (հաջորդ), նյամ, շուշուտ, շոք - կըրակ, շօռվա, չայնիկ, չէլած (ածական է), չէչյա, չօբան, պադըռել, պախկըվոցի, պախկըվել, պասավուր տօլմա, պըստիկ, ջ՛ոչ, ջյայէլ, ջէջիմ, ջուղաբ, ռամկա, ռաֆադա, սուսուփուս, վազնել, վախտ, վոնց, տէրմօս, տըփել, փյառդյա, փէջ, քամակ (հետև), քանի տեղ (շատ տեղեր), քյասյար, քըռչիկ, քյալյամ, քյասիբ, օթաղ, օխճար, ֆյայմել, ֆոռթ և այլն:

**ԳԵՂԱՐԴ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Արթիզ: Գեղարդ է վերանվանվել 1946 թ.: Ունի մոտ 350 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Վանի նահանգից 1914-1918 թթ., իսկ մյուս մասը եկել է Գավառի տարածաշրջանի Սարուխան գյուղից 1933 թ.: Հաղորդակցման միջոցը Բայազետի բարբառն է՝ Վանի բարբառի որոշ հատկանիշներով:

Խոսվածքն ունի *է* և *ո* երկբարբառային հնչյուններ (իրեք, նեռս, ցօրեն, չոռս, թոռ, գ՛ոռծ): Միավանկ բառերի սկզբի հինհայե-

ընյան *ո*-ի և *ե*-ի դիմաց հանդես են գալիս *վո* և *յե* (վոր, յես, յետ, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էթալ, էրէխա, օղօրմի, օրօճալ), բայց նաև՝ *վոսկի, յեռսուն, յեռթըվալ:* Փոխառյալ և բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö ձայնավոր (զöռթընել, միյնöկ, զöտ, դ՛öռտöկ, դ՛öռսուկ, դöրվöզö, բըլö-զուկ, Դöրöչիչöկ, միզöր, չöղըր, ջöյել): Բառասկզբում, բառա-սկզբի խուլ բաղաձայններից հետո, ինչպես Բայազետի բարբա-ռում, հանդես է գալիս շրթնայնացած *ա* ձայնավոր, ընդ որում՝ երևույթի ավելի թույլ դրսևորմամբ: Առկա է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղում (հառծըկել, յեռսուն, հավքել, խավնել, փատըտել): Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ դառնում է *է* (տըղէն, վըրէն): Գեղադիրի խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛արէկամ, բ՛ացել, բ՛առցել, բ՛եռ, բ՛էրել, բ՛ըռնել, գ՛եղ, գ՛ալ, գ՛իշեր, գ՛ըլօխ, գ՛ող, գ՛ոմ, դ՛աշտ, դ՛ուռ, ձ՛եռ, ձ՛ուն, ջ՛ոչ, ջ՛ուր): Բառամիջում և բառավերջում խուլերի դիմաց երբեմն հանդիպում են ձայնեղներ (աբրել, զիդալ, տըզլոզ, մաղնիք, վորդե, փազել), ձայնեղների դիմաց՝ շնչեղ խուլեր (ընթունել, մառթ, օքնել, մէչ, օց): Հետնալեզվային հպականները առաջին շարքի ձայնավորներից առաջ ունեն քմայնացած արտասանություն (գʲեղացի, կʲիսուր, պըսակʲի, քʲե, քʲեռի): Բառասկզբի ձայնավորներից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում (հանզաճ, հառավոտ, հառէչ, հառծըկել, հառտ, հէսօր, հինքը, հիշկալ, հիրա, հըմէն, հընզնել, հուստակ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ* (խա, խանել, խառս, խավնել, խատ, խաց, խէտ, խինգ, խիվըննալ, խօրքուր, գ՛ախ, պախել): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ* (կաչաղ, կավուրմա): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է դրսևորվում *կայնել* ձևում: Հաջորդ բաղաձայնից առաջ հպաշփականները կարող են վերածվել շփականի (ինշքան, ճաշնալ, բ՛ասվել): Շեշտը վերջնավանկային է:

Գործածական են նաև *ք, իք, անիք, րանք* հոգնակերտ մասնիկները (գ՛եղացիք, էրէխէք, մառթիք, կընանիք, ըտերանք):

Զայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը ձևավորվում է *յ* մասնիկով (Բöրխօյ, Սէնօյ, պապէյ): Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման (Ախտիյա, Գ՛ոխթա), հանդիպում են նաև *ա* վերջավորությամբ սեռականի այլ դրսևորումներ (թունդըրա վըրէն, մըսա խոտ): Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (գ՛եղից, տըկից, հառչուց, ծընվէլուց, տարուց), հանդիպում են նաև *է*-ի գործածության սակավ դեպքեր (էն գ՛ըլխէն): Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռական հոլովով և *մէչ* կապով (ծընվէր եմ Գ՛ոխթը, տեղաշորի մէչ): Խոսվածքն ունի որոշիչ *ը* և *ն* հոդեր (տունը, տըղէն): Դիտվել է հոդի կրկնակի գործածություն՝ *ձ՛ինը*, ինչպես նաև՝ հոդի բացակայություն՝ *Միլլետ վէրցում ը՛ընում հանգըճին*: Անորոշ հոդը նախադաս է (մէ տարի): Անձնական դերանունների տրականի ձևերն ունեն *ի* հավելված (ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի), գործածական են նաև *քե, մե, ձ՛ե* կրճատ ձևերը: *Ով* դերանվան դիմաց գործառում է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հինքը, հիրար // հիրուր, հիրան, հիրանց, ըտուն, ընդուն, ըստե, ընդեն, ըտե, էսքան, ամէքը, հըմէն, հըմէն ինչ, վորդե*: *Մեկ* թվականն ունի *մէկ* ձևը՝ *հիցունմէկ:*

*Լինել* և *ելնել* բայերի դիմաց գործածվում է *հըլնել* ձևը (խաբար չեն հըլնում, հըլնում ը՛ուռը բ՛ացում): Ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են անկատար դերբայով (էթում եմ, անում ի): Ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստը կարող է արտահայտվել միայն դերբայով՝ առանց օժանդակ բայի (ը՛ուռը տըփում = դուռը թակում է): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լöլում, տալում*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ցուրահատուկ է ներկայի եզակի երրորդ դեմքի ժխտականի ձևը՝ *չը* մասնիկի՝ դերբայի վրա հավելումով (չըգ՛ալում, չէթում, չըքընե): Վաղակատար դերբայն

ունի *էր* վերջավորություն (առէր, պըսակէր), օժանդակ բային հաջորդող դիրքում՝ *ե* վերջավորություն (մառթի յեմ էկե, չես լըսացե): Վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքում հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որը կարող է նաև առանց օժանդակ բայի արտահայտել համապատասխան իմաստը (մեզի ինչ արած = մեզի ինչ են արե. քյե էսքան տանջած = քյե էսքան տանջէր են): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (թըխուկ, դ՛ռռսուկ, պարկուկ, քընուկ): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել և՛ ցոյական, և՛ ոչ ցոյական հիմքերով (բ՛էրէցի, բ՛էրին, ընթունին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց* // *գ՛ընաց*, *մաց* // *մընաց:* Անցյալ կատարյալում և եզակի հրամայականում դրսևորվում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (խավնէցին, նըստան, փազա՛, վառա՛, զռռթընցըրա՛, կայնի՛, նըստի՛): Ենթադրականի *կը* եղանակիչը, բառասկզբի *հ*-ի հետ միանալով, վերածվում է *գ՛*-ի (գ՛ըլնեմ): Հարկադրական եղանակն ունի *պըտի* եղանակիչ (պըտի քընեմ): Պատճառական ածանցն է *ցը́ն* (մըտցընել, կայնըցընել): Խոսվածքը *չ* բայածանց չունի (փախնել): Գործածական է *կօ* հաստատական մասնիկը (կօ մենք ինք):

Գեղարդի խոսվածքի բառային միավորներից են՝ անօթի, բալթա բեղեր, բըլըզուկ, գ՛ախ, գ՛եղավարի, գ՛ըլօխ, գառդիրօվ, գիդալ, դ՛ուռը տըփել, դըրվըզը, զըտ (ինչ-որ բան), զուլում, էլչի, էն գ՛ըլխէն (ի սկզբանե), թը, թըզը, խա, խաբար հըլնել, խավնել, խիվըննալ, խօրքուր, կամէցօղ, կայնել, կաչաղ, կառավաթ, կիսաքէրել (կիսով չափ քերված), կյիսուր, կուշտը, կօ, հախ (վարձ), հանգըճի օղ, հանգաճ, հառավոտ, հըռծըկել, հառչի, հառչուց, հըմէն ինչ, հիշկալ, հուստակ, ձ՛եռք (համակազմ), ճանգ (բուռ, ափ), ճաշնալ, ճիժ, մառթի գ՛ալ, մէշու, մէշօլ, մըկա, միզըր, միյնըկ, մուղարթ, մուֆտը, յետ (հետո), նաղդի, չըդըր, չում, չօլ, պըսակել, ջ՛ոչ, ջըյէլ, սաղ (ամբողջովին), տապօռ, տեղաշոր,

տըգլոզ, տըրրաքել, ցեփ (շղթա), փատըտել, փէժգիր, փէշտըմալ, քաղ անել, քյասիբ, քյօխվյա և այլն:

**ԳԵՏԱՄԵՋ**[125] - Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Կեղրոն: Գետամեջ է վերանվանվել 1948 թ.: Ունի շուրջ 800 բնակիչ, որոնց մի զգալի մասի նախնիները 1915-20 թթ. այստեղ են գաղթել Արճեշի, Բիթլիսի, Մանազկերտի, Բուլանըղի, Մուշի և Վանի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո և Արարատյան բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Խոսվածքն ունի երկբարբառային *ե* և *ո* հնչյուններ (մեռնեմ, տեղ, նոր, օրորոց, փող): Միավանկ բառերի սկզբում *ե*-ի և *ո*-ի դիմաց առկա են *յե* և *վո* (յես, յերք, վոտ, վորթ), բազմավանկ բառերի սկզբում՝ *է* և *օ* (էրկու, էրկանք, օղորմի, օղօղել): Փոխառյալ որոշ բառերում հանդիպում է քմային *ա* ձայնավոր (բյառյադի, գյազյար, ջյայէլ, քյալյամ, զյայլյա): Նկատվում է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղում (բ՛անցընել, սօվըռցընել, ժօղվել): Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ դառնում է *է* (վըրէն, վըրէս, բալէք): Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ (գ՛արուն, գ՛եղ, գ՛էլ, գ՛էտին, գ՛ըռտընգել, դ՛առտըկել, դ՛ու, բ՛աժակ, բ՛ան, բ՛ազ, բ՛էրել, բ՛էրան, բ՛ըռնել, դ՛առնալ, դ՛ընել, ձ՛ավար, ձ՛եզի, ձ՛էն, ձ՛ըմեռ, ձ՛ըցում, ձ՛ու, ջ՛ոչ, ջ՛ուր): Բառամիջում և բառավերջում ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր (խափել, սուռփ, մառթ, յերք, օքնել, մէչ), խուլերի դիմաց՝ երբեմն ձայնեղներ (պըսազվել, գիդալ, կըդրել): Սակավ դեպքերում *հ*-ի դիմաց առկա է *խ* (խող, բ՛ախ): Բառասկզբի ձայնավորներից առաջ երբեմն առկա է *հ*-ի հավելում (հընգեր, հընգընել, հըլնել, հիշկալ, հիչնել,

[125] Գետամեջի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1981 թ. լրացված թիվ 196 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

հընչի): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց արտասանվում է *կ* (կօչաղ, կասաբ, կութի): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Հպաշփականը բաղաձայնից առաջ կարող է վերածվել շփականի (մէշկ, իշկօղ): Շեշտը վերջնավանկային է:

Գործածական են նաև *ք, անիք, անք, վանք* հոգնակերտ մասնիկները (էրէխէք, բալէք, կընանիք, ձ՛իյանք, իծվանք): Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (գ՛եղից, սարէրից): Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով (դ՛ընում ինք թունդիր, կաստըրուտկի մէչ): Խոսվածքում ավելի գործածական է *ն* որոշիչ հոդը (հէրըն կըսպանէր, ջ՛ոչըն Մէյրանն ա), բայց դրսևորվում է նաև *ը*-ն (բ՛էրանը, թանը): Անորոշ դերանունն ունի նախադաս կիրառություն (մէ մառթ, մէ տեղ): Անձնական դերանունների տրականի ձևերն ունեն *ի* հավելված (ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էդ, էն, էսի, էտի, էնի): Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *ըտըրանք, ըդըրանց, իրա, իրան, ըսենց, ընենց, ըստե, ընդե, իրար* և այլն:

Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (շարում ի, պահըմ ինք): Էական բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Վաղակատար դերբայն ունի *էր* վերջավորություն (խառնէր), օժանդակ բային հաջորդելու պարագայում կամ եզակի երրորդ դեմքում առանց դրա գործածվելիս՝ *ե* վերջավորություն (ման ա էկե, չեմ դ՛ըրե, չի եղե, քուրըս թըխե, ունէցե): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (քընուկ, նըստուկ, խըմուկ), բայց հանդիպում են նաև *ած*-ով ձևեր (խաշած): Անցյալ կատարյալը կարող է կազմվել և՛ ցոյական, և՛ ոչ ցոյական հիմքերով (արին, փօրէցինք): Այս ժամանակաձևում դրսևորվում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (փախցըրեց, բարիշավ): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց // գընաց, մաց // մընաց: Կը* եղանակիչի բաղաձայնական տարրը երբեմն վերածվում է *գ՛*-ի (գ՛ըլըցնենք, գ՛ըհանեմ, գ՛ըհուշէր): Հանդիպում են ժխտականի

ձևեր, որոնցում *չը* մասնիկը ուղղակի փոխարինում է *կը* եղանակիչին (չըկարամ), բայց նաև՝ *չեմ խաշի, չի եղե:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի էթամ): Պատճառական ածանցն է *ցըն* (բ՛անցընել, փախցընել, խօսցընել, իչցընել): Առկա են Ու խոնարհման դրսևորումներ (սօվըռցու): Խոսվածքը *չ* բայածանց չունի:

Խոսվածքի բառային միավորներից են՝ աշխարք, առավօտ, բ՛անցընել (գործածել), բ՛արօվ խէրօվ, բալէք, բաղ ու բախչա, բö̈ռö̈ղի, բառդան, գ՛ըռտնակ, զըռուզավիկ, դըռի-դըռի խաղցընել, զաթի, զö̈յլö̈, էրկանք, թութուն թունդիր, թուփ (կաղամբի թթու), ժաժիկ, ինադ անել, խի, կայնել, կաստըրուլկա // կաստըրուտկա, կօչաղ, կօռծել, հալ, հէտա, հընչի, ձ՛ըցում, ման գ՛ալ (շրջել), ման տալ, մանդըր, յեսիմ, նըխշուն - խօրօտ, նույն րօպէյին, շօռ, չօրանօց, պըսազվել, ջ՛ոչ, ջö̈յէլ, ռաֆադա, սաղ (1.ամբողջ, 2. առողջ), սօվըռցընել, վախտ, վօնց, տէնալ, փարատիչ, փէչկ, փօշի, քա, քö̈լö̈մ, քյօռփա և այլն:

**ԳԵՏԱՐԳԵԼ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1948 թ.: Ունի մոտ 800 բնակիչ: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով:

**ԳՈՂԹ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Ունի մոտ 2000 բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը գաղթել է Բայազետի գյուղերից 1829-30 թթ.: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

Գողթի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (իրեք, ասեղ, շենք, գ՛եղ, հառավոտ, շընորք, ջ՛ոչ, խող): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոտ, յեզ, յես), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օղօրմած, օխճար, էրազ, էրէխա): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö̈ ձայնավոր (հö̈ռու, հö̈ռէչ, դ՛ö̈նö̈կ, զö̈նել, զö̈րկել, իմö̈լ, լö̈լ, թö̈զö̈, թö̈փուկ, թö̈ղö̈րուք, բö̈րիշել): Որոշ չափով շրթնայ-

նացած *ա* ձայնավոր է արտաբերվում բառասկզբում և բառասկզբի խուլ բաղաձայններից հետո: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (գ՛օղնալ, հիրկուն, հըղըրկել, օլըրել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէն, վըրէն, նախակէն, փէսէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛անակ, բ՛էրել, բ՛ըժիշկ, գ՛առ, գ՛եղացի, գ՛ըլօխ, գ՛օղնալ, դ՛էմը, դ՛ընել, ձ՛եռ, ջ՛առթել, ջ՛ոչ, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (իփըր, սուռփ, հէքուց, բ՛առցել, մառթ, առչ, վեռչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (ագռա, պըսագվել, փագ, կըդրել, փէդ, պաղասխան, աբրուստ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Երբեմն հանդիպում են քմայնացած հետնալեզվայիններ (գ՛անքʲ, քʲեռի, հավաքʲին): Բաղաձայններից առաջ հպաշփականները կարող են վերածվել շփականների (ինշ գ՛ըլնի, օշլոտ, մէշկ, լըվասկ, բ՛ասվել): *Հաճախ* բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառավոտ, հավէլի, հափ, հէսօր, հէրէկ, հէքուց, հէրկէն, հընգեր, հընչի, հիմանալ, հիշկալ, հիրար, հիրանք, հիրկուն, հըղըրկել, հընցնել, հիշնել, հուստ): *Հ*ինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խաց, խէրանց, խիվանդ, խիվըննալ, խառցընել, խէտ, խըտխետին, խող, խօրօխպէր, խօրքուր, խօ, պախել, բ՛ախ): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կըրաղ, կօնախ, կավուրմա, կյարիբ): Շեշտը վերջնավանկային է:

*Հ*ոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, էրք, անիք, տանք, անք, վանք* մասնիկներով (էրէխէք, մառթիք, տըղէրք, կընանիք, ախպըռտանք, քըվորտանք, իշվանք, գ՛իլվանք, տիրվանք): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Առկա են Ա վերջադրական հոլովման դրսևորումներ՝ *Գյոռնիյա, Գ՛ոխթա, Առթիգա, Քեղառթա, թունդըրա, բ՛անակա:* Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Ցեղօյ, Դէրօյ,

վէղրօյ, աղէյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (էտ օրվընից, տընից), երբեմն պատահում են նաև *է*-ով ձևեր (հիրկընէ, տընէ, հառավտընէ, գ՛ըլխէ): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով (քաղաքն ա աբրում, գ՛եղի մէչը): Որոշիչ հոդը ունի *ը* և *ն* տարբերակներ (վեռչը, Սէնօն): Հաճախ որոշիչ հոդով են գործածվում թվականները (չոռսը, խինգը, յօթը): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հիրանք, հիրա, հիրանը, հիրանց, ըստուն, ըտոնք, ընդուն, ըստե, ըտե, ըտեն, ընդեղից, էնենց, էնդա՞, հըմէն, ամէք, հիրար, իմա՞լ, վորդեղի, հընչի* և այլն:

Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են անկատար դերբայով (չես գ՛ըրվում, էթում ինք): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լա՞լում, տալում: Ըլնել* և *լինել* բայերի դիմաց գործածվում է *հըլնել* ձևը (հէլանք դ՛ուս, խայտառակ հէլանք): Անորոշ դերբայն ուղիղ ձևով կարող է գործածվել իբրև նպատակի պարագա՝ *փախավ գ՛ընաց թութուն կապել*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (էկէր, դ՛ըրէր), օժանդակ բայի նախադաս կիրառության պարագայում՝ *ե* վերջավորություն (մանուշակ էր բ՛էրե, չեմ ասե, հընչէք դ՛ըրե): Վերջին ձևը կարող է դիմավոր ժամանակաձևի իմաստն արտահայտել նաև առանց օժանդակ բայի (սիրահարվե = սիրահարվէր ա): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (նըստուկ, խըմուկ, քընուկ): Վաղակատար ներկայի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող է գործածվել օժանդակ բայի եզակի կամ հոգնակի ձև՝ *հէրէկ ա էկած* (= էկէր են), *տըված ին* (= տըվէր ին), ինչպես նաև՝ դերբայական

ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (կանչած = կանչէր են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (սիրէցինք, ասի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց*: Երբեմն անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքն ունենում է *մ* հավելված (ասիմ, բ՛էրիմ, տարամ, տէսամ): Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (տըվէցին, կըդրեց, պըսագվանք, բա̈րիշանք, նըստի՛, կայնի՛, պախա՛, բ՛ըռնա՛, վէրցըրա՛): Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա, ինչպես՝ *չասա* (չի ասի), *չըլնի* (չի լինի), *չէթա* (չի գնա), *չըտէսե* (չի տեսել), մյուս դեպքերում ժխտական մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա՝ *չեն հըլնի, չենք ասի, չեմ էթա, չես տէսե:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (փախնել, թըռնել): Պատճառական ածանց է *ցըն* (նըստըցընել, բ՛անցըրցընել, լօկըցընել): Պատճառական բայերի հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը (հիշէցո՛ւ, նըստըցո՛ւ, բ՛անցըրցո՛ւ): *Կը* եղանակիչը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* (գ՛ըլնի, գ՛ավատա, գ՛իշնի): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի տանին):

Գողթի խոսվածքի բառային միավորներից են՝ բախչա, բա̈րիշել, բիձա̈, դ՛աս (ազգ), դ՛էմը կըդրել, զա̈նել-թափել, զատ (ինչ-որ բան), զա̈րկել, զա̈նել, էնդա̈, թա̈դա̈րուք, թա̈զա̈, թա̈լլա̈, թափ, թա̈փուկ, թութուն, թութունի ասեղ, ինսուլ, իշպիշկ, լա̈րել, խալխ (ուրիշ), խատել, խէրանք, խըտխետին, խիվըննալ, խօ, խօրօխպէր, ծըծղալ, կա̈մա̈լթի, կայնել, կըրաղ, հառավոտ, հավէլի, հափ, հէքուց, հըղըրկել, հընչի, հընց, հիշկալ, հիրկուն, ձ՛եռը գ՛ըլխին դ՛ընել (իրենով անել), ճանգ, մախսարա, ման տալ, մէ վախտ, մէշու, յա̈քա̈, նաղդի, նըշանց տալ, շընորքից քըցել, չա̈նգա̈լ,

չորանոց, պըռագվել, պըռտիկ, ջ՛ոչ, ջէբ, ռատ գ՛ալ, սաղօվ, սէր-բա՛րիշ, վոտբ՛օպիկ, տէլէգըրատկա, քա, քաղվոր, քըշեր, քըվրել, քօփօլի, քօք և այլն:

**ԵՂՎԱՐԴ**[126] – Քաղաք Նաիրիի տարածաշրջանում: Ունի 14200-ից ավելի բնակիչ, որոնց նախնիները հիմնականում տեղաբնիկներ են: Հաղորդակցվում են Արարատյան բարբառով:

Եղվարդի խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վօ* և *յէ* (վօր, վօռփ, յէս, յէզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրէխա, էրկու, օսկօռ, օղօղէլ): Կան բացառություններ՝ *վօշխար, վօսկի, վօչիլ, յէրգար:* Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, տըղէք, միլիցէք): Խոսվածքը հինհայերենյան *ոյ, իւ* երկբարբառների դիմաց ունի *ի* ձայնավոր (արին, սառից, ձ՛ին, լիսանալ, թիլ, թիլանալ, քʲիր), բայց նաև՝ *հարուր:* Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛աժանէլ, բ՛ան, բ՛անակ, բ՛անցըր, բ՛առցէլ, բ՛էրել, բ՛օվէլ, գ՛ինի, գ՛ընալ, գ՛օմ, գ՛օղանալ, դ՛ալ, դ՛աշտ, դ՛արման, դ՛էզ, դ՛ընէլ, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛ավար, ձ՛էթ, ձ՛էռ, ձ՛ըմէռ, ձ՛ի, ջ՛ուր): Ընդ որում՝ այս բաղաձայնները երբեմն խուլի տպավորություն են թողնում: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (աչ, առաչ, վառց, մէչ, շըռչէլ, մառթ, փօռցանք, օքնէլ, հաքնէլ, մարաք, սուրփ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրէլ, առավօղ, ընգընէլ, կընիգ, ցէրէգ, պահազ, աշխադանք, գիդալ, դըբրօց, Պէդրօս, կըդրէլ, հադ, յէգէղէցի, փէդ, լուձ): Հաճախ նկատելի է հետնալեզվային հպականների քմայնացած արտասա-

[126] Եղվարդի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984 թ. լրացված թիվ 86 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

նություն (գʸինի, գʸէլ, գʸէղ, քʸիր, մօքʸիր, կʸէրանք): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, վօշխար, վօշ թէ, իշնէլ, անէսկ, ծասկʸէլ): Երբեմն բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հընգէրք, հուս, հընգնէլ // ընգնէլ): *Ս*-ի դիմաց *հ* է հանդես գալիս *տէսնէլ* բայի անցյալի հիմքում (տէհէլ, տէհավ): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* (ղըրաղ, ղամշէ, ղայիշ, ղըդի, ղըռավ, ղառղառ, ղօչաղ): Բառասկզբում *խ*-ի դիմաց երբեմն հանդես է գալիս *հ* (հաղալ, հավօղ): Միավանկ բառերի սկզբի *հօ*-ի դիմաց առկա է *ֆօ* (ֆօռթ, ֆօղ, ֆօտ): Որոշ երկվանկ բառերի առաջին վանկի ձայնավորը սղված է կամ փոխարինվել է *ը*-ով (հըմար, ջըգէլ, շըլագ, ըսօր): Շեշտը վերջընթեր է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, էրք, անք, անիք, տինք* մասնիկներով (էրէխէք, լամփուշկէք, տըղէք // տըղէրք, սինիք, մառթիք, ձ՛իյանք, կընանիք, տէքըրտինք): *Հայր, մայր, եղբայր* բառերից բացի՝ Ո ներքին հոլովման ենթարկվում են նաև մի շարք այլ բառեր (անէր > անօր, հընգʸէր > հընգօր, տէքըր > տէքօր, քʸիր > քըվօր, հօքʸիր > հօքօր, մօքʸիր > մօքօր): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրօչ* ձևը: Հատուկ տեղանունների սեռականը կարող է ձևավորվել *ա* վերջավորությամբ (Աբարանա, Աշտարագա, Ցէղվառթա): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (փէղէրից, օձօրքից, տընից): Ներգոյականի իմաստը որպես կանոն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (դ՛աշտը պաշաղ ինք անում, լըցնում ինք մէշօքնէրը, նըստում ինք տունը, ջ՛ըրի մէչ, գ՛օմի մէչ): Որոշիչ հոդը ունի *ը* և *ն* դրսևորումներ (հէլածն էլ, տունը): Որոշիչ հոդ ստանում են նաև բացառական և գործիական հոլովները: Հանդիպում են *երկու* թվականի որոշյալ առմամբ զուգահեռ ձևեր՝ *էրկուսն էլ* // *էրկունն էլ*: Անորոշ հոդը նախադաս է (մի մառթ): Անձնական դերանունների տրական հոլովի ձևերն են՝ *ինձ, քէզ, մէզ, ձ՛էզ:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, ըսա, ըտա, ընա): *Ով* դերանվան դիմաց առկա է *օվ*, որի սեռականի և տրա-

կանի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ինքը, իր, իրա, ըտըրա, ըտըրան, ըտըրանց, ընդըրան, ընըրան, ընդըրանք, ըսըրանք, սըրա, տըրանից, ընդար, ըսդար* // *ըզդարը* (էսքան), *ըդդար, ընդա, ըսէնց, ըտէնց, ընէնց, ըստէ, ըստէղից, ըտէղ, ընդէղ, ընդէ, ամէն մէզը, ամէքը, իրար, վօնց, վօրդիան, ուր* և այլն:

Խոսվածքում ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (էթում, անում, հավաքըմ, քըշըմ): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է անկատարի *գ՛ալիս, լալիս, տալիս* ձևերով: Օժանդակ բային հաջորդելու դեպքում այս ձևերի վերջի *ս*-ն ընկնում է (ման ինք տալի, չէր գ՛ալի): Վաղակատար դերբայն ունի *էլ* վերջավորություն (ունէցէլ, գ՛ընացէլ), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *է* վերջավորություն (նէղության մէչ էնք ապրէ, չի ըլէ, չի թօղէ): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (հէլած, տէհած, թըխած, ճըղված, ճօթըռված): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (բ՛էրէցիր, նըկարինք, քըցիր): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց*, իսկ *տեսնել* բայինը՝ *տէհ* (տէհէլ էմ): Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (ծէծէցին, արէց, կէրցըրինք, նըստա, աբրավ, քանդըվավ, նըստի՛, կայնի՛, քաշա՛, գ՛ըրա՛, փօխա՛): *Չ* ժխտական մասնիկը դրվում է հարադրավոր բայի հարադրի վրա (չըվէր ինէին, չանց կէնար): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (փախնէլ, թըռնէլ): Պատճառական ածանցն է *ցըն* (նըստացընէլ, քընցընէլ, լիսացընէլ, պարկացընէլ): Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն (հէռվացրա՛, մօղըզացրա՛): Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի* (պըտի բ՛ըռնէինք):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աբրանք (անասուն), ազի, ամանչէլ, այա, անըմ (անուն), առավօղ, առնէլ (ամուսնանալ), արաղ, արին (արյուն), արիշտա, բ՛անցըր, բաշարօղ, բըշկուլ, բըրախէլ, բուխանկա, բօխչա, գ՛ըռնակ քաշէլ, գ՛օթի, դ՛ալ, դ՛արման, դաստա, դարվազ, դէյրա, դէվա (ուղտ), դօշ, զօնքաչ, ըժգուշ, ըշկաֆ, ըսօր, թամաշ անէլ, թառ, թէզ, թէշտ, թիլ (թույլ), թիլանալ, թիքա, թունդիր, թուշ, թօփ (գ՛ընդակ), ժաժ գ՛ալ, ժէշտ, իշավօտնէր, լամփ, լամփուշկա, լաց ըլէլ, լը, լիսանալ, խաբար, խաթէր, խամութուն, խընօցի հարէլ, խի, խիժ, խօրօվի (զառը կախած թոնրի մեջ եփած), կալ, կամ քըշէլ, կայնէլ, կանցիլար, կառաֆաղ, կարէնալ, կէսուր, կըռնատ, կուշտը, կօթուն, հաղալ, հաշտ (նախասրահ), հավուզ, հավօղ, հըմի, հընգէրք, հօղա, հօրօխպէր, ձ՛ին (ձյուն), ղամշէ քըթալ, ղայիշ, ղառղառ, ղըդի, ղըռավ, ղըրաղ, ղօչաղ, ճանանչէլ, ճօթըռվէլ, ճօռ (թրիք), մալատիրկա, մայլա, ման տալ, մանգէղ, մանդըր, մաշակար, մաշակար անէլ, մառթի տալ, մատանիկ, մէլիցա, մէնձ, մէնձանալ, մէշօք, մըհանա, մինդար, մինչէվի, մօղիկ, մօքիր, յարա, յէրգար էշ, նաղըլ, նաֆար, շառ, շըլագէլ, շըլօփա, շըռչէլ, շիրա տալ, շիքէլ, շօշ, ուզընգան, ուզվօր (մուրացկան), չըկալ, չըկարէնար, չուլքի, պաղըրհան, պադվալ, պաշաղ անէլ, պաչէլ, պառզըգա, պըղինձ (կաթսա), պըտըտօր (ոչխարի), պուճուր, պօպօք, ջայէլ, ջըզէլ, սաղ, սառից (սառույց), սիպտակ, սկըպօ, վախտ, վէկալէլ, վօնց, վօչխար, վօրդիան, տախտէղ, տէր կայնէլ, տընաշէն, տիկին (կուկլա), փայ, փէշ, փօխինձ, քարէ գուռ, քէրէղան, քըշէր ու ցէրէզ, քըցէլ, քիսիկ, քիր, քյուլաշ, քուռսի, քօզ, քօլ, քօռ, քօռանալ, քօքնէրըտ կըղըրվի, օզռաշ, օթաղ, օճօրք, ֆըռալ, ֆօղ, ֆօռթ, ֆօտ և այլն:

**ՁԱՌ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Ունի մոտ 1500 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Մուշից, Վանից, Թեհրանից: Հաղորդակցման միջոցը խառը տիպի խոսվածք է՝ Մշո բարբառի և Թավրիզի խոսվածքի հատկանիշներով:

Ձառի խոսվածքն ունի *է, օ* երկբարբառային հնչյուններ (իրեք, քեռի, վեռչ, ծոց, բ՛անվոր, պոռտ): Միավանկ բառերի

սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոռփ, վոռթ, յես, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օղօրմած, օխչӧր, էրկու, էրէս): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ӧ* ձայնավոր (թӧդӧրուք, թӧզӧ, լӧյլուղ, փӧրինջ, դուլզӧր, Հӧդիս, քӧվӧռցի, գ՛ընӧց // գ՛ընաց, զӧրկել, օխչӧր): Խոսվածքում հանդիպում են բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղման դեպքեր (հառսնիք, թուլնալ, յեռցընել, տաքցընել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, շուշէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛աժակ, բ՛այց, բ՛ըժիշկ, բ՛ընիկ, գ՛ալ, գ՛ըլօխ, գ՛օխտուկ, գ՛ոռծ, դ՛եղ, դ՛ու, դ՛ուս, ջ՛ուր, ձ՛եռ, ձ՛որ), սակայն սրանք երբեմն խուլերի տպավորություն են թողնում: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, հօքի, մէչ, մառթ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (ազնոց, պըսազվել, հիրզուն, թիզունք, աշխադել, կըդրել, տաղմէր, ուղել, ցաձ): *Նզն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Հանդիպում են քմայնացած հետնալեզվային հպականներ (գʲեղ, թոքʲեր): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (մէշկ, իշնել, աշկ, ինշքան, հընսնել, բ՛ասվել): Բառասկզբի ձայնավորից առաջ նկատվում է *հ*-ի հավելում (հառէչ, հիրզուն, հընգեր, հընսնել, հինքը): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* (ղազան, ղարիբ, ղայիշ, ղօնախ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, անիք, րանք* մասնիկներով (քեռիք, տըղէրք, կընանիք, տեղրանք, գ՛եղրանք): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Նկատվում են հոգնակի գոյականների՝ Ու հոլովման ենթարկվելու դեպքեր (վոռփէրու, թուրքէրու): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (տընից, առտուց, կըտըրից): Ներգոյականի իմաստն արտա-

հայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (դ՛աշտը քաղ էր անում, գ՛եղի մէչ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (մոդն ա, տընէրը): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քըզի, մեզի, ձ՛եզի: Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձնից, հինքը, իրա, հիրան, ըստըրան, ըստանօվ, էսքան, ըստեղ, ըստե, ըտե, ըտեղից, ընդեղ, ըտենց, ընենց, ամէքը* և այլն:

Խոսվածքում *լինել* և *ելնել* բայերի դիմաց գործածվում են *եղնել և հըլնել* տարբերակները: Սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (քըցում, բօռում): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լա̈ցում, տալում:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (էկէր /են/, ծընվէր /ա/), օժանդակ բային հաջորդելու կամ առանց դրա գործածվելու պարագայում՝ *ե* վերջավորություն (վռռփ ենք մընացե, եղե=եղեր ա): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (զըտած, նըստած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերն են՝ *ի // իմ, իր, էր, ինք, իք, ին:* Վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայը կարող է կրկնվել՝ *դ՛ուս չես գ՛ալում ես, շոր ին կապում ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով և այդ դեպքում ունենում է *ամ, ար, ավ, անք, աք, ան* վերջավորություններ՝ *աշխատամ, պահար, պահավ, պահանք, սպանաք, բ՛էրան:* Հանդիպում են նաև ցոյական հիմքով կազմություններ՝ ներգործաձև վերջավորություններով (սպանէցին, ազատէցին, չուզէցին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (թըռնել): Պատճառական ածանցն է *ցըն* (հասկըցընել, տաքցընել, ծընըցընել): Այս բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն՝

*մոտկըցըրա՛, հասկըցըրա՛:* Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի* (պըտի բ՛էրեն):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ազիզ, ալաղել (քաղհանել), ախպուր, ախպէր, ամէքը, այա, աշկ, աշունք, առտուց, բալշօվիկ, բաշարել, բօռալ, գ՛ըլօխ, գ՛ոխտուկ, դէտը, էն վախտ, թöղöրուք, թöզö, թէշտ, թիզ չափել, լöյլուղ, խըժվըժալ, կանամփ, կըռութ, կըտուր, հըրօխպէր, հիրգուն, ղազան, ղայիշ, ղարիբ, ղօնախ, մամիկ, յեթիմ, յեղա-յեղա, յեսիմ, շուշա, պըսազվել, պոռտը կըդըրել, ջէբ, սաղ (բոլորը), վէկալել, տաղմէր, տէր կայնել, ցաձ, փöրինջ, քըցել, չում քըշեր, քօլ, օխչöր և այլն:

**ԶՈՎԱՇԵՆ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Դալլաքլու: Զովաշեն է վերանվանվել 1948 թ.: Ունի մոտ 180 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-18 թթ. այստեղ են գաղթել Վանի, Մուշի, Սասունի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո, Արարատյան և Վանի բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Զովաշենի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (իրեք, մինչեվ, վոռփանոց, նոր, չոռս): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե* (վոչ, վոռփ, վոսպ, յես, յերք), բացառություն է *որ* շաղկապը, որի դիմաց առկա է *օր* ձևը: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *օ* և *է* (էրէխա, էրկու, օչխար), բայց նաև՝ *վոսկէ, յեռեսուն, յեղըռձիկ*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö ձայնավոր (թöք, հöնöք, նöֆöր, նöֆտուլ, ջöյէլ, ջիզöր, մöնդöկ, öքլօր, գ՛ʲöլել, ժöժիկ, զöրկել, թöլել, չöնզöլ, քʲöնի, քուֆթö): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (բ՛աժնել, գ՛օղնալ, խառնիք // խառնիս, չօրնալ, խասկընալ, ուրխընալ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, զուռնէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է

շնչեղ ձայնեղների առկայությունը, սակայն դրանց զուգահեռ հաճախ գործառում են խուլեր (բ՛ան // պյ̈ն, բ՛անակ, բ՛անջար, բ՛անցընել, բ՛է, բ՛ըլել, բ՛ըռնել // պըռնել, գ՛եղ // կեղ, գ՛ըլօխ, գ՛ընա, դ՛ընել, դ՛ուք // տուք, ջ՛ըրել, ջ՛ուկել, ջ՛ուր // ճուր, ձ՛եռ // ծեռ, ձ՛ըմեռ, ձ՛էթ, ձ՛ավար, ձ՛ու, ծուն // ձ՛ուն, ձ՛ըցում): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (մառթ, ջ՛առթել, խօքի, մարաք, մէչ, վեռչ, վոռց): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (գիդալ, սուբ, պադմել, կըդրել, կընիզ, էգան, ճանգ, փէդ): Առաջին շարքի ձայնավորներից առաջ հետնալեզվային հպականները որոշ չափով քմայնանում են (գ՛ʲյ̈լել, քʲյ̈նի, քʲյ̈սիբ, իրեքʲ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա միայն *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, մէշկ, հիշցընել): Մի շարք դեպքերում բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հալիվոր, հախպուր, համբօլ, հառէչ, հընցընել, հընգըրնել, հէսօր, հըմէն, հիրա, հինքը): Հնհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խանել, խառս, խասկընալ, խաց, խէրանք, խետ, խին, խինգ, խըմար, խող, խօքի, պախել): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կօչաղ, կանթար), երբեմն էլ՝ *գ՛* (գ՛ազան<ղազան): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *անիք, էք* մասնիկներով (կընանիք, ախչըկէք): Առկա են Ու հոլովման մասնակի դրսևորումներ եզակի և հոգնակի թվերում (տըղուն, թոռնէրուն): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Սուրօյ, ֆէրմայ), ընդ որում՝ երբ սեռականի ձևը հատկացուցիչ է, այդ *յ*-ն կարող է ընկնել (ֆէրմա վարիչ)[127]: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (սարից, տընից), հազվադեպ պատահում է նաև

---

[127] Ալաշկերտի խոսվածքում համանման երևույթ նկատել է Ք. Մաղաթյանը (տե՛ս Ք. Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 75):

*է*-ով ձև (իրիզվորէ): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (քաղաքն են, թունդըրի մէչ): Գործածական են *ն* և *ը* որոշիչ հոդերը (տունը, Սուրօյն ասա), բայց որոշիչ հոդը կարող է նաև բացակայել (իմ տըներ բ՛ըլավ): Անորոշ հոդը նախադաս է (մէ մառթ): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: *Ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրա, ըտըրա, ըդըրա, ըտըրանք, ընդըրան, ընդանից, ըստե, ընդե, ընդեղից, էնքան, ընենց, հըմէն, ամէն մէ* և այլն:

Սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը որպես կանոն կազմվում են *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (մընում եմ, ասում ա, հարգում էն, էթում էնք, *նաև*՝ գ՛ալըում եմ), երբեմն՝ *ըմ* վերջավորությամբ ձևով (նըստըմ, սարքըմ): Անկատար անցյալի իմաստը հաճախ արտահայտվում է նաև *կը* մասնիկով (կըմընի /մնում էի/, կէնէնք /անում էինք/, կէթէյ /գնում էի/): Ավելի քիչ են հանդիպում *կը* մասնիկով ներկայի ձևեր (ինչ կասա /ինչ է ասում/): Նկատելի է, որ ներկայի և ապառնու ձևերը ունենում են *ե* կազմիչ (էփենք, տանեն, մեռնեմ, նաև՝ ենք, են), մինչդեռ անցյալ անկատարի ձևերն ունենում են *է* կազմիչ (կէթէնք /գնում էինք/, կընըստէնք, նաև՝ էնք = էինք, էն = էին): Խոսվածքում *անել, լինել, ելնել* բայերի դիմաց գործածվում են *էնել, եղնել, հըլնել* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի անցյալ անկատարը (երբեմն նաև ներկան) կազմվում է *գ՛ի* կամ *կի* մասնիկով՝ *գ՛իքէյ* (գալիս էի), *գ՛իկէր* (գալիս էր), *կիտէր* (տալիս էր): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (էկեր /ա/, ասէր /էր/), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (կօվ եմ կըթե, հարվածային եմ եղե, ծաղիկն եմ ջ՛ուկե): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (կըպուկ): Ե

խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը առավելաբար կազմվում է ոչ ցոյական հիմքով (խանին, քըցին, քօչին, բ՛էրին, մօռթին), հազվադեպ՝ անցյալի հիմքից (տըվէցին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (համօզին, ծածկին, պաղավ, նըստավ, պաղմա՛, կայնի՛): Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա, ինչպես՝ *չէթա* (չի գնում), *չըթօղա* (չի թողնի), մյուս դեպքերում ժխտական մասնիկը որպես կանոն դրվում է օժանդակ բայի վրա՝ *չեն պըռնի:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է՝ *ցըն* (բ՛անցընել, չօրցընել, ֆըռըցընել, սօվըռցընել): Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի:*

Խոսվածքի բառային միավորներից են՝ աշկ, բ՛ըլել, բօյ, գ՛ազան (ղազան, մեծ կաթսա), գ՛ʲա̈լել, գէրընդի քաշել, գօլել (գոլ դառնալ), գօվընդ, դաստա, թա̈լել, թա̈ք, թունդիր, թօ, թօփ, թօփալ, ժա̈ժիկ, իրիգվորէ, խաթուն (աչքի), խանութը կըդրել, խառճկաթ, խէր հըլնի, խէրանք, խօ, խօռօմ, ծըմէթ, կայնել, կանթար, կառավաթ, կաստուրկա, կէսրար, կըռութ, կըռտընակ, կըրիշա, կօկօմ, կօչաղ, հալիվոր, հախպուր, համբօլ, հա̈նա̈ք, հառէչ, ձ՛ըցում, ճանզ, ճիժ, մալատիրկա, մա̈նդա̈կ, մանջկալ, մըկա, մինդա̈ր, յեղըռճիկ, նա̈ֆա̈ր, նա̈ֆտուլ, շըլկել, չա̈նզա̈լ, չօռթան, չօռթնէ ճաշ, պախկըվօցի, պաղ, պաղավ, պըստիկ, պուտուկ, պօպօք, ջ՛ոչ, ջ՛ուկել, ջա̈յէլ, ջէր, ջիզա̈ր, սանդերք, սուր, վախտ, վառեկ, տեղաշօր, տըփել, փախէփախ, քʲա̈սիբ, քուռսի, քուֆթա̈, քօչել, օչխար, ֆըռցընել և այլն:

**ԶՈՎՈՒՆԻ**[128] - Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Ունի 6300-ից ավելի բնակիչ, որոնց հիմնական մասը 1960-ական թթ. Ապարանի շրջանի Զովունի գյուղից տեղափոխվածներն ու նրանց սերունդներն են: Սրանց նախնիների մի մասը գաղթել է Խոյից, Սալմաստից, Ալաշկերտից և Մուշից: Հաղորդակցվում են Խոյի բարբառի մի տարբերակով, որն ունի նաև Մշո բարբառի որոշ տարրեր:

Զովունիի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (մեր, սեղան, չոռս, կըվանոց): Միավանկ բառերի սկզբում հնդեվրոպական *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոռց, վոտ, յես, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրկաթ, օղորմի, օլըրէլ), բայց նաև՝ *յեռսուն, վոճիլ, վոխչար:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում (նաև ըստ Աճառյանի օրենքի) հանդես է գալիս քմայնացած *ա̈* ձայնավոր (ա̈զիզ, զա̈ռզա̈նդ, մա̈ռզըկա, մա̈զա̈լու, հա̈բրիկ, չա̈փ, զա̈ռթուն, վա̈տ, ճա̈ռթէլ, տա̈շտ, տա̈ռնալ, պա̈ցէլ, պա̈ժա̈ն, կընա̈՛): Առկա է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղում (հառսնիք, պա̈ժնըվէլ, կարօտնալ, ալվէլ): Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ կարող է պահպանվել (տըղաս, տըղան) կամ հնչյունափոխվել (բախչէն, վըրէն): Բառասկզբում հինհայերենյան ձայնեղների դիմաց գործառում են խուլեր (տուք, տընէլ, կըռնակ, կʲեղ, կըլօխ, կընալ, կոմ, կըրէլ, պամբասէլ, պա̈ց, պէրէլ, պէրան, ճուր, ծեր, ծոր, ծու), բայց երբեմն հանդիպում են նաև շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛անակ, բ՛անվոր, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց

---

128 Զովունիի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1980 թ. լրացված թիվ 145 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

գործառում են շնչեղ խուլեր (առաչ, տէքըր, սուրփ, հօքնէլ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրէլ, իրիգուն, մըգրադ, փըսագվէլ, ուզընգան): Նախաբաղաձայնական դիրքերում հետնալեզվային հպականների, ինչպես նաև *նգ*, *նք* խմբերի դիմաց առկա է *յ* (Առշայն, ախչիյն, տախտայն, նամայներ, տըղէյներ, քըսանխիյ տարի, հարազատ չէյ բ՛այց, տէրէվ իյ քաղե, կընացիյ), *նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնէլ, յէղույնէր* (կանգնել, եղունգներ) ձևերում: Հետնալեզվային հպականները հաճախ քմայնացած են (կʲա̈զա̈ն, կʲեղ, կʲինի, կʲիսուր, վոսկʲի, շըլկէլ ինքʲ, մէ քʲա̈նի, քʲիթ, էկʲիր էր): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (էրըժներ, քիշ-քիչ, հիշնէլ, իշթա̈ր, ճաշնալ, անէսկ, լըվա̈սկ, ըսնէլ): *Տն* խմբի դիմաց երբեմն հանդիպում է *նն* (ماննոց, մըննէլ): Բառասկզբի ձայնավորից առաջ երբեմն առկա է *h*-ի հավելում (հա̈ռա̈չ, հարի՛, հընգնէլ, հընչի, հուխտ, հիկյա̈նք /գանք/, հիրանը): Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խաց, խառս, խատ, խանէլ, խավնէլ, խասնէլ, խէտ, խէր, խիվանդ, խինգ, խըմար, պախէլ, պախս): Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց առկա է *կ* (կազան, կալմակալ, կա̈յիմ, կըսմա̈թ, կըրաղ): Բաղհյուսական հարադրություններում *ու* շաղկապի դիմաց գործածվում է *ը*՝ *խէրը մէր* (հայր ու մայր), *սուսըփուս*: Շեշտը վերջնավանկային է:

Ընդհանուր հոգնակերտներից բացի՝ հանդիպել են նաև հոգնակիի *անք, էրք* մասնիկներ (ծիյանք, տըղէրք): Դիտվել է հոգնակերտների կրկնակի գործածություն՝ *տըղէյնէր:* Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման որոշ դեպքեր (Զօվունա, թունդըրա): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Դառչօյ, Լէնայ, մա̈ռզըկայ, պապիյ, աֆտօյ): Բացառականն ունենում է ինչպես *էն*, այնպես էլ *ց*-ով վերջավորություն (ծորէն, ծեռէն, տընէն, վէրէն // վիրեվից, վորդուց): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ*

կապով և սեռականով (տա̈շտը բախչա էլ ի տըրե, վանքի մէչը): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (մա̈ռզըկան, կողը): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Մեկ թվականի դիմաց գործածվում է *մէ* ձևը՝ *քառասունմէ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, ք՛եզի, մեզի, ծեզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի): *Ով* դերանվան դիմաց գործածվում է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *զինքը* // *ինքը, իրա, հիրանը, ըտանք* (դրանք), *ընդա̈նցէն, ըստա̈* (այստեղ), *ըտա̈, ընդա̈* (այնտեղ), *ըստա̈ց, ընդա̈նց, ընդա̈նցէն, ըտա̈ր, ըտա̈րը, ընդա̈ր* (նրա), *ընդուց,  ըստե, ըտե, էտա, ըստա̈, ըսենց, ըտենց, ընենց, էտենց, էնենց, ըտա̈նա* (այդտեղ), *ըստա̈նա̈, ամէքին, իրար, վորդե, վորդուց, ուր* և այլն:

Խոսվածքում սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *լ*-ով ավարտվող անկատար դերբայով (անէլ /ին/, էթալ /ին/, ըսէլ /էր/): Այդպես նաև *գալ, լալ, տալ* բայերի դեպքում՝ *իկյա̈լ* // *գ՛ալ էր* (գալիս էր), *տալ իմ* (տալիս էի), *լա̈լ ի* (լալիս է): Օժանդակ բային հաջորդելու պարագայում դերբայն ստանում է *ի* հավելված՝ *գործ էր անէլի, տընէն իմ տանէլի, կուտ էր հըլնէլի, տեմն ին կայնէլի:* Վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն (տարիր, էկիր, աշխատիր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (մածուն եմ ծախե): Հարակատարն ունի *ած* վերջավորություն (տըրած, խալած, քընած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ի, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *իմ, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով (խավնին, կապին, բ՛էրին), որոշ դեպքերում՝ նաև ցոյական հիմքով (պէրէցին, ասէցի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Անցյալ կատարյալն ունի ներ-

գործաձև և կրավորաձև վերջավորություններ (պէրին, արինք, փըսագվամ, կայնան): Ինչպես օժանդակ բայի անցյալի եզակի առաջին դեմքը (իմ), այնպես էլ անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքերը որպես կանոն ունեն *մ* հավելված (ամուսնացըրիմ, տըվիմ, չիմացամ, կառթիմ /կարդայի/, իկʲիմ /գայի/, պըտի տանիմ /պիտի տանեի/): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (թըռնէլ, փախնէլ): Պատճառական ածանցն է *ցըն* (ամուսնացընել)[129]: Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի տանեմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ (մայրիկ), ӓզիզ, ալվէլ (ավելել), առավնախառ, ӓրէթայ (արի էթանք = եկ գնանք), բախչա, բաղ, բըշկուլ, բըրախել, դ՛եմքօվ դ՛իրքօվ, դըրմըղ անէլ, զӓռզӓնդ հընգնէլ սիռտը, զӓռթուն, զինքը, էլը, էն վախտ, թեխ, թութուն, թունդիր, թօլխի, իմանալ (կարողանալ), իշթար, իրիգուն, լӓ (դեռ), խառճըկաթ, խօրօխպէր, ծըղզալ, կայնէլ, կէսրար // կէսըրր, կըլխըրվեր, կըռնակ, կըվանոց, կʲիսուր, կոմ, կու, կօվկիթ (կթվոր), հӓբրիկ, հӓռӓչ, հէնա, հէսա, հուխտ, ճըխնէլ (ճխտել), ճըմուռ, ճիժ, մӓզӓլու, մազիս խամբըրուսկի չափ, մանգաղ, մӓռզըկա, մէ թէթեվ, մըկա, մըկավա, մըննէլ, յէլթանք (յէլ էթանք), յեղունիկ, յեսի՞մ, յետօ, յէրգար, շիշ, շուք հընգնէլ սիռտը, շօշ, ուզընգան, չաղ, պӓժӓն, պӓժնըվէլ, սեղան - տախտակ, սէր ունէնալ, սուսըփուս, սուրփ (մատուռ), վայթէ, վոխչար, վորդե, վորդուց, տալվ, տӓշտ, տӓռնալ, տըսնալ, տըփէլ, փայա (գոմ), փըսագվէլ, քըթնէլ, քըշեր, օղոռթ, օղօրկէլ, օյաղ, օրէկան (ամեն օր), օրօշկըտալ, ֆըռօնտ և այլն:

**ՁՈՎՔ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Քյոուլլուջա: Ունի մոտ 1000 բնակիչ, որոնց մի մասի նախնիները եկել են Արամուս գյուղից, մյուսները՝ Գեղարքունիքի մարզի

[129] ՀԲԱ ծրագրով 1980 թ. լրացված թիվ 145 տետրում արձանագրված է պատճառականի *ըց//ցըց* մասնիկ (էչըցէլ, խաքցըցէլ):

տարբեր բնակավայրերից, այլ տարածաշրջաններից: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով, որը ի հայտ է բերում նաև այս կամ այն բարբառին բնորոշ որոշ տարրեր:

**ԶՈՐԱՎԱՆ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Փոքրավան: Հիմնվել է 1972-1980 թթ.: Ունի մոտ 1700 բնակիչ, որոնք ծագումով ներկայացնում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր, ինչպես նաև Ջավախքը, Գանձան և այլն: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով, որը երբեմն հանդես է բերում մայրենի բարբառներին բնորոշ երանգներ: Բնակիչները վկայում են, որ որոշ ընտանիքներում դեռևս մայրենի խոսվածքները գործածվում են:

**ԹԵՂԵՆԻՔ**[130] - Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Թեղուտ, Թղիթ: Ունի 500-ից ավելի բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Կարսի և Մուշի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո և Արարատյան բարբառների հատկանիշներ զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Թեղենիքի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (գ՛եղ, եղնի, շոր, չոռս): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե* (վոնց, վող, յես, յեփ)՝ բացառությամբ *որ* շաղկապի, որի դիմաց գործածվում է *օր* ձևը: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *օ* և *է* (էրէխա, էրթալ, էրազ, օչխար, օսկոռ), բայց նաև՝ *յերզար, յեղըրջից:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ա̈* ձայնավոր (զա̈րգել, թա̈լել, հա̈շկ, շիտա̈կ, թա̈ռս, թա̈զուց, ջա̈յէլ, քյա̈լա̈մ): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնա-

---

130 Թեղենիքի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1980 թ. լրացված թիվ 108 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

վանկի ձայնավորի սղումը (գ՛օղնալ, ժօղվել, օղըղել, հասկընալ, սօվրել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէն, վըրէս, փէսէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛այց, բ՛ան, բ՛ըռնել, գ՛եղ, գ՛ըլօխ, գ՛իշեր, գ՛ոռձ, դ՛ու, դ՛ուռ, ձ՛եր, ձ՛եռ, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (առթէն, մառթ, էռթալ, տաքութուն, հօքի, վացուն), բայց նաև՝ *ինձ, էպէր եմ:* Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (պար, բ՛արէզամութուն, էզավ, հիմնազան, փըրգել, լուսնազ, մօղը, յեղ, մըղավ, մըղաձել, ըսաձ, աստվաձածին, ամէնամեձ, շէգ, ավէդարան // ավէդրան, զիդալ, ընդանիք, տադ, փէդ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում երբեմն հպաշփականը կարող է վերածվել շփականի (հա̈շկ): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հա̈շկ, հառաչի, հէրեւ, հէսօր, հիրգուն, հիրան-հիրան, հըմէն, հընչի, հուզել /ուզել/, հուր, հուրիշ): Առանձին դեպքերում հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս (սըրախ, պախել): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կա̈յիմ, կասար, կավուրմա, կափախկ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, անիք, դիք, անք, վանք* մասնիկներով (էրէխէք, քեռիք, մառթիք, կընանիք, ախպըրդիք, հընգերդիք, ձ՛իյանք, իշվանք): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Մարօյ, աղէյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (թեվից, քաղաքից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (սօվրում ա քաղաքը, տըղէն բանազն ա, տեղաշօրի մէչ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ն* և *ը* տարբերակներով (գ՛եղը, պարին), սակայն այն հաճախ բացակայում է (ձ՛եր շոր պիտի հանէք, հայրիկ մեռնի քեզի): Անորոշ հոդը նախադաս է (մէ տարի, մէ հօքի): Անձնական դերանունները

տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էդ, էն, էսի, էդի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի* // *վիր, վին:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իրա, իիրանց, ըստä* (սրա), *ըդä* (դրա), *ընդան* (նրան), *ընդըրան, ընդըրանք, ընդորից, ընդե, էնդե, ըսենց, էնքան, էսա, իըմէն, հուրիշ, իմալ, իուր, իընչի* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, իէլնել, կանալ* տարբերակները: Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը հիմնականում արտահայտվում են *ում* (երբեմն նաև՝ *ըմ* /մոմ ի թափըմ, հաց ինք թըխըմ, քընըմ եմ/) վերջավորությամբ անկատար դերբայով (խօսում ա, աբրում ա, ըսում ա): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լäլում, տալում: Կը* եղանակիչով ձևեր են գործածվում պատմական ներկայի և անցյալի իմաստներով (կըդ՛ընա ընդե, կըփախի, էրէխէն կըթäլա, շենք կըդ՛ընի, կըսէր, նաև՝ գ՛ըքա): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ծընվէր, բ՛ըռնէր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (խօսալօվ էք էկե, տըղա յեմ առե, ինչ էր էրե): Դերբայի վերջին ձևը կարող է առանց օժանդակ բայի արտահայտել եզակի երրորդ դեմքի իմաստ (բ՛աժնե = բ՛աժներ ա): Հարակատարն ունի *աձ* վերջավորություն (վախէցաձ, գ՛ըրվաձ, պարզաձ, կըբաձ, բ՛աժնըվաձ, պըրձաձ): Հանդիպում են նաև *ուգ* վերջավորությամբ ձևեր (դ՛ըրուգ, քընուգ): Հարակատարի ձևը վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքի իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (էրէխէք ըսաձ = ըսէր են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերն են՝ *ի , իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական (աղօթի, թօղի, ըսի), այնպես էլ ցոյական հիմքերով (պադմէցի, չափէցի, աղօթէցի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի

ձևերն են՝ *գ՛ընաց* // *գ՛աց*, *մընաց* // *մաց*: Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (բ՛ացեց, կանչեց, կայնավ, հեռսօղավ, բ՛ըռնա՛, շիտկա՛, կըպցըրա՛, նըստի՛): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (փախնել, թըռնել): Պատճառական ածանցն է *ցըն* (քընցընել, փըձըցընել): *Կը* եղանակիչը, միանալով բայասկզբի *ի*-ին կամ դրանից առաջ լինելով, դառնում է *գ՛* (գ՛իմանաս, գ՛էլնի, գ՛ըհիշեմ): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* // *պըղի* (պըտի հանէք, պըղի գ՛ա):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ, ասկ ու տըկօվ, բ՛աժնել, բ՛ըշտել, գ՛ըլօխ, ըսէլիք (հիացմունքի առարկա), թա̈զուց, թա̈լել, թախտ, թայ (հասակակից), թըզբեխ, թըմել, թըռանավարի, թունդիր, ժամ (եկեղեցի), իմալ, ինադ, լուսնազ, խըրբա, խօրօտ, ծըռել (գժվել), կակըղել, կայնել, կանալ, կարքըվել, կէսրանք, կէսրէր, կիսուր, հո̈շկ, հարի (մինչև), հեռսօղել, հըրիշտազ, հիրան-հիրան, հիրար տալ, հուզել, հօրթիզ, հօրքուր, ղուբա տուն, մանդըր, մառթ (ամուսին), մենձ, մըխ, մընաց (ժամանակ անցավ), մոմ թափել, յօրղան, շիտկել, պաբի, պախկըվել, պաղել, պըզդիզ, ջո̈յէլ, ջէբ, սաղ (ամբողջ), սըրախ, վախը չափել, վախտ, վէկալել, տեղաշոր, տըվածուրիզ, ցաձըր, փատըղվել, փըձըցընել, քեռուկընիզ, քըցել, քյո̈լո̈մ և այլն:

**ԼԵՌՆԱՆԻՍՏ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Վերին Ախտա: Լեռնանիստ է վերանվանվել 1978 թ.: Ունի մոտ 2900 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյի, Մակուի, Սալմաստի գյուղերից, Վանից: Հաղորդակցվում են Վանի բարբառի մի տարբերակով:

Լեռնանիստի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (իրեք, ցօրեն, կուրկոտ, խոտ, ուրուրոց): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոտ, վոռփ, յես, յետ, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրինջ, օղօղել, օլըրել), բայց

նաև՝ *վոխչար, վոսկէ, յեռըսուն, յեղունգ:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում, նաև՝ համաձայն Աճառյանի օրենքի, հանդես է գալիս քմայնացած *ա̈* ձայնավոր (ա̈լըրմաղ, բա̈խտա̈վոր, թա̈նձիֆ, լուլա̈, խա̈լի, խա̈րիր, խա̈զա̈ր, ա̈վա̈լ, հա̈յա̈թ, հա̈րէվան, ա̈նգյա̈լ, ճա̈ղա̈չ, մա̈ռզա̈կյա, նա̈ֆա̈ր, չա̈նա̈, շըլա̈կ, սըլա̈, փա̈յա̈, փա̈յլէվան, քʲա̈լա̈յ, քʲօմա̈կ, հա̈րուր, թա̈փուկ, վա̈խէնալ, միյնա̈կ, քʲա̈նի, զա̈րկել, կʲա̈րէ, պա̈ն, պա̈ց, տա̈շտ, տա̈ռնալ, ճա̈խչի, ճա̈խճըփան, ճառթըվել): Երբեմն հանդիպում է նաև քմայնացած *ու* (տիւռ, խէրիւ, քիւ): Բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորը հաճախ սղված է (ավէդրան, կʲողնալ, լօխկընալ, պա̈ժնել, խօսցուցել): Բառասկզբում, բառասկզբի խուլ բաղաձայններից հետո զգալի է *ա*-ի շրթնայնացումը: Նկատելի են *ե>ի*, *ո//օ>ու*, երբեմն էլ՝ *ու>օ* անցման դեպքեր (ծիծել, պիրել, իրես, ուրուրոց, պուլոր, կուրիսել, օրօխկել), *ոյ*-ի կամ *իւ*-ի դիմաց *ո//օ* - ի դրսևորումներ (ճըկոթ />ճկոյթ/, քʲոր//չոր />քոյր/, լոս />լոյս/, թոլ />թոյլ/, ճօղ />ճիւղ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, պազրիշկէն, մա̈ռզա̈կէն, բալէքʲ, էրէխէքʲ): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբի ձայնեղների դիմաց խուլերի առկայությունը (կʲա̈ռ, կʲա̈զա̈ր,կʲա̈զա̈ն, կʲէլ, կեղ, կʲոռծ, կʲէր, կʲոլ, կիտեմ, կըլօխ, Տա̈վիթ, տա̈շտ, տու, տոււռ, տուս, տէմ, տընել, պաժակ, պարէկամ, պիրել, պըռնել, պուլոր, ծա̈խ, ծըծում, ծի, ծուկ, ճուր, ճոչ), սակայն այդ խուլերը նկատելիորեն տարբերվում են նախնական խուլերից: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների, շնչեղ խուլերի դիմաց գործառում են շնչեղ խուլեր (էթալ, մէչ, խօքʲի, խացկերութեն, կիրք, տէքʲըր), երբեմն էլ՝ խուլեր (թըռճել, փէճ, իճուցել, ենկ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, ավէդրան, սըբաս): Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվային հպականներ (կʲընդել, կʲըռ-

տընքել, կʲինի, խօսացէքʲ, քʲամել, քʲանդել, քʲա̈սիր, քʲուռսի, քʲըռոն, տէքʲըր, հա̈ռիքʲ, տաքʲ, փառքʲ, սարքʲել, քʲու, քʲուն, կʲա̈զ, կʲա̈րէ, կʲող), որոնք երբեմն թողնում են հպաշփականի տպավորություն կամ էլ վերածվում հպաշփականի (քʲար//չար, քʲու //ջ́ու, ջ́եղացի, ճունդ /կʲունդ>գունդ/, ճինի /գինի/, ջ́ա̈տա̈ /գաթա/): *Նք, նգ* խմբերի դիմաց բառավերջում կամ բաղաձայնից առաջ, հաճախ էլ անկախ դիրքից առկա է *յ* (ստոյ, ըտոյ, ուրայ, ստերայն, ասիր եյ, մեյ չեյ ուզե, մեյ ունեյ, տասխիյ տարէկան): Բաղաձայնից առաջ *յ* են դառնում նաև հետնալեզվային հպականները (էրէխէյ քընույ կըլեն, տըղէյներ, տայ ճըրեր, իրեյ տարի, օյտըվել, ճայտին): *Նգն, նկն* հնչյունախմբերի դիմաց *յն* է առկա, ինչպես՝ *կայնել, էրմըյներ, կիյնի* (կընկնի): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, ինշ կըլի, խըմիշկ, խաս տու): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հախպուր, հակամա, համբար, հառու, հա̈ռէչ, հավէլի, հէռթիս, հա̈ռիքʲ, հընչի, հէրէկ, հէլի, հընգեր, հընցուցել, հիրար, հիրես, հիշկալ, հիրկուն): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խա, խամար, խառս, խառնիս, խանել, խասնել, խացատուն, խատ, խէր, խինգ, խիվանդ, խոր, խօրել, պախել, կʲա̈խ): Փոխառյալ բառերում *հ*-ի դիմաց գործածական է *յ* (ջա̈յէլ, փա̈յլէվան): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կազ, կափաղ, կա̈րիբ, կազան, կուրբան, կօնախ, կօնդախ): *Ություն*ածանցի դիմաց առկա է *ութեն* (օռշնութեն, հաջօղութեն, խացկերութեն, պատմութեն): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, անիք, էրքʲ, րանք, վանք, ոնք* մասնիկներով (բալէք, էրէխէք, մառթիք, կընանիք, տըղէրքʲ, ըստերայ /=ըստերանք/, ըտերայ /=ըտերանք/, տէրվայ /տէրվանք/, հընգէրոնք): *Կընիկ* բառն ունի նաև *կըյտեր* հոգնակիի ձև: Դիտվել է հոգնակերտների կրկնակի գործածություն (տըղէյներ): Մի շարք բառեր եզակի թվում, երբեմն էլ՝

հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման (ճամփու, մառթու, կըլխուց, յերկընքուց, ճըժուն, ճըժէրու, թըվէրու): Խոսվածքն ունի Ոջ հոլովում (տիրոչ, կիսրոչ, քյավրոչ//չավրոչ): Տարածված է Ա վերջադրական հոլովումը հիմնականում հատուկ տեղանունների դեպքում (Ախտիյա, Սըփ Կարապտա, Կըզկալա, Ափէլա, Հէրէվանա, թունդըրա): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական կամ տրական հոլովը սովորաբար ձևավորվում է *յ*-ով (Ափոյ, Լէնդոյ, Թյքույ, Սըքոյ, Առտոյը, Զավէյ, դադէյ, պապկէյ, աֆտոյ):

Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (տըկից, էտ յանէրից, տընից, հախպըրից, կըլխուց, սըրփ Կարապտուց), հազվադեպ պատահում է նաև *է*-ով ձև՝ *սըրփի մէչէն, հիրկընէ հիրկուն:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (նըստի քյօ խօր տուն, թունդիր խաց ի թըխի, պէրնի մէչ, թասի մէչ): Որպես կանոն, որոշիչ հոդն է *ն*-ն (թեփուկըն կուտա տուս, վորըն պախէր), թեև հանդիպում է նաև *ը*-ն (ամաննէրը): Հաճախ էլ որոշիչ հոդը կարող է չդրսևորվել (պանիրնէր կըխօրին մէչը, տուռ տըփին, իմ խէր կյացե պատէրազմ, Արուս խիվանդ ի): Անորոշ հոդը նախադաս է (մէ կիշէր): *Մէկ* թվականն ունի *մէ* ձևը՝ քսանմէ, քառասունմէ: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսիկ, էտիկ, էնիկ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քյեզի, մեզի, ծեզի // ծեզիկ,* հանդիպում են նաև կրճատ ձևեր՝ *քյե, ծե:* Գործածական է *զինք* ձևը՝ իբրև անձնական դերանվան երրորդ դեմքի ուղղականի ձև: *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն* տարբերակը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վիրըն*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ծեր, ընձընից, մեզնից, էսա, ըստոյ // ստոյ, ըտոյ, էստոյ, էստոր // ըստոր, էսրընօվ, ըսոր, ըտոր//էտոր, էտուր, ընդոր, ընդըրանք, ըստոնք, ըտոնք // ըտոյ, ընդոնք, ըտոնց, ստե, ըստե, ըստեն, ըտե, էտա* (այդտեղ), *ընդա* (այնտեղ), *ընդե, ընդեղից, դյա // տյատ, դյարէրից*

(որտեղերքից), *էտքան, էնքան* // *էնքամ, ըսենց, ըտենց, ընենց, ուր* // *ուրա, ուրանից, ուրան, ուրայ* // *ուրանք, ուրանց, ուրանցից, հըմէն, հըմընի, հըմէն ինչ, ամէք, հուրիշ, հիրար* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կու* մասնիկով՝ *կուկ՚ա* (երբեմն նաև՝ *գ՛ուկ՚ա* /գալիս է/), *կուկ՚էր* (գալիս էր), *կուտա* (տալիս է), *կուտէն* (տալիս էին), *կուլա* (լալիս է), մյուս բայերինը՝ *կը* // *կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըլըցեն, կըծէծեն, կասեն, քըցեն, ճուր չըռէր, փըշըրվէր, թափվէր, տանի կուտի, զա̈րկի, տէնա, վա̈խէնա:* Նկատելի է, որ ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը տարբերվում են *ե-է* հակադրությամբ, այսպես՝ *կըլըցեն* (լցնում են), *կանեն* (անում են) և *կըլըցէն* (լցնում էին), *կանէն* (անում էին): Գործածական են *գալ, տալ* բայերի՝ *ի* հավելվածով ձևեր (իկած են=եկել են, չեն իկ՚ա, յետ ես իկե = ուշ ես եկել, չեմ իտա = չեմ տա): *Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին կամ հանդես գալով դրանից կամ ձայնեղից առաջ՝ դառնում է *գ՛* կամ *ք* (գ՛հավէլացուցէն, գ՛ըվըժին, գ՛ըվառէյ, քհունցէն, քհավաքվէն): Վաղակատար դերբայն ունի *իր* վերջավորություն (լըսիր, խալիր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (խոտ ենկ պիրե, չեմ տըսե, վոնց ի կայնըցուցե): *Հարակատարն* իբրև կանոն ունի *ուկ* վերջավորություն (նըստուկ, արուկ, պըռծուկ, շարուկ, սարք՚ուկ, կայնուկ, փէճատուկ, քընուկ), բայց հանդիպում են նաև *ած*-ով ձևեր (շարած, կայնած, կէրած): Դիտվել է ընթացակցական դերբայի ձև (շըփշըփալէն): Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող է գործածվել օժանդակ բայի ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ձև (խըմոր ի արած = խմոր են արել, թել ին մանած = թել էին մանել), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (խաք՚ած = հագել են): Վաղակատար դերբայը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի իմաստ (ստեղծօղ իլե /ստեղծող է

եղել/, կյողըն մըտե տուն /գողը տուն է մտել/, ծեռ թըլե, ճըղըչ կայնըցուցե /ձեռքը զցել, ջրաղացը կանգնեցրել է/)։ Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ի, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *էյի//իմ, էր, էր, էնք, էք, էն։* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական, երբեմն էլ՝ ցոյական հիմքերով (փօխին, պըռնին, ասիմ, խըմէցին)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կյաց, մաց*։ Անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (պիրեց, ճըռթեց, կըրիմ, օղօրկին, ծախիմ, նըստամ, չըքյընանք, հանդիպավ, կըռվավ, վիյավորվավ)։ Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքում իբրև կանոն հանդես է գալիս հավելական *մ* (կուկյիմ /գալիս էի/, պիրիմ /բերեի/, նըստամ /նստեցի/, մեռամ /մեռա/, իճամ /իջա/, կըրիմ /գրեցի/, կյացիմ /գնացի/, տըսամ /տեսա/, չիմ խօսա /չէի խոսում/)։ Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ի* կամ *էր* ձև (ըստ ժամանակային իմաստի), ինչպես՝ *ինչ ի կասեմ, ինչ ի կուտաս, լէզուն ի կըխառցուն, փուլ ի կուկյը, ախչըյներն ի կէթան կասեն, կանանչն էր կապէն, մեյ կոռնակ էր փըռէյ էն ժամանակ, մէրըս էր կաշխատէր։* Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը կարող է դրվել բայաձևի վրա, ինչպես՝ *չըտըփե* (չի ծեծել), *չաղա* (չի աղի), բայց նաև՝ *չի տըփե։* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (կուրիսել, փախնել)։ Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *կըլի*։ Պատճառական ածանցն է *ուց // ցուց* (մըտուցել, իճուցել, փախցուցել, տըռցուցել)։ Պատճառական բայերի ներկայում, ապառնիում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըխառցուն, չես պատկերացու, փախցուն, պախկըվցու, խօսցուս, լօխկըցո՛ւ։* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի անեն, պըտի էթէն /պիտի գնային/)։ Խոսվածքում գործածական է *կօ* հաստատական մասնի-

կը (կօ էտքան պան ասիր եմ)։ Դիտվել է *խէտ* կապի նաև նախադաս կիրառություն՝ *խէտ իրար։*

Խոսվածքի բառային միավորներից են՝ ա̈զա̈բ, ա̈զիզ, ա̈զիզըտ խօրեմ, ա̈լըրմաղ, ախչի, ամբոտ, ամեղ տեղ, ամրոց շարել, անա, ա̈նգյա̈լ, անծիծել, աշկ, աշկի հախպուր, ապուր (սպաս), առավոտ, ա̈վա̈լ, ավէդրան, արաղ, բալա, բա̈խտըն պիրել, բիձա̈, բօլ, գիվա թէ, գյա̈լա̈ջա̈, գյօլ, դա̈բօ, դա̈ղ, դաղէ (մայրիկ), դա̈ռղ, դա̈վա, դըրմեղ էթալ, դըրմըղ անել, դըրօնդի (ջուր կրելու հարմարանք), դիվան (դատաստան), դոր (ուր), զա̈խիրա, զաղա, զինքյ, զօմա, զօռօվ, էլչի, էս փըշուր կյա̈խ, էխա̈ղ, էրկօր, էրմունգ, ըխ (այո), ընդօքի, թա̈լել, թալվա // թավլա, թա̈նձիֆ, թա̈ռլա̈ն, թա̈փուկ, թափտան, թէշտ, թըռճել, թըփել (ծեծել), թինել (թիկնել), թոլ (թույլ, գոթի), թունդիր, թօ, թօզոտ, ինա̈ն (և), ինչըխ, իշկալ, իրեւ, լուլա̈, լօխկընալ, խա, խաբար ըլել, խաբար տալ, խամար, խառնիս, խառչըկաթ, խատել, խարիսա, խացատուն, խացկեբութեն, խէրիւ, խըմիշկ, խընութ, խուզ անել, խուժանուտեն, խուռջին, խօ, խօսկ թօղել կէտին (չանսալ, խոսքը չանել), խօրել, խօրօխպէր, ծեռք, ծէծել (մանրացնել), ծըծում (ձձում), ծընել (անասունի ձագ բերելը), կազ, կազան, կալչա, կայնել, կանալ, կանթ, կա̈րիբ, կափաղ, կըթէլ (գդալ), կըլխավոր (ամուսին), կըլօխ, կըճուճ, կընիկ (հոգն. կըյտեր), կըռտընակ, կիշերվա կէս, կիսուր, կյա̈զա̈ն, կյա̈րէ խաց, կյըռտընկել, կոճ (կուտ, ծիրանի), կոյ (կու), կոռնակ փըռել (բասմա փռել), կուշտ (մոտ), կուրբան, կուրկոտ (հարիսա), կօ, կօզբա̈նդ, կօյանոց, կօնախ, կօնդախ, կօռզըվել, կօվօղ, հախպուր, հակամա, հա̈յա̈թ, հա̈ռէչ, հա̈ռիքյ, հէնա, հէռթիս, հէսա, հէտա, հէրէկ չէ մէկել օր, հըմէն ինչ, հընչի, հիրկընէ հիրկուն, հուստ, ճա̈խճըփան, ճա̈խչի քար, ճա̈ղա̈չ, ճանջ, ճար կիտես՝ ճար արա, ճըկոթ, ճիժ, ճոչ, ճօղ (ճյուղ), մալ, մանդըր,

մա̈ռզա̈կա, մառթ (ամուսին), մատ յեղունգ, մատղել, մէ էրկօր, մէ թայ (հասակակից), մէ խա, մէ կըրընգի (իրար հետևից, առանց ընդմիջելու), մէշ էլ, մէշու, մէշօք, մըկա, միյնա̈կ, միտը էթալ, մոխիր, յալանչի, յախա, յա̈յլըղ, յան, յավաշ, յեմիշ, յեռու, յետընալ, նա̈լ (չեմ նա̈ /չգիտեմ/), նա̈ֆա̈ր, նըխշուն, նըղնըղել (վիրավորել), շա̈ռ, շըլա̈կ, շըլկել, շըռչըվել, շըրիդ, շըփշըփալէն, շիշ, շօռվա, ուզել (սիրել), ուռ (կովի կուրծք), ուռթել, ուրուրոց, չամադան, չա̈նա̈, չա̈նգյալ, չա̈նթիկ, չարօխ, չըռել, չում, պազրիշկա, պա̈ժնել, պախել, պախկըվել, պաղ, պանիր խօրել, պաշաղ, պաչել, պապկէ, պաքյել, պէծիկ, պըռտել, պըստի, պըստիկ, պըտուկ, պինդծեռ, պուլոր, պօլիկ (թազ), պօպօք, ջա̈յէլ, ջէբ, ջըվալ, սաղ, սանախէր, սանդ, սանդի քյար, սեղան - տախտակ, սեվ կա վըրէտ, սէլ, սըբաս, սըլա̈, սիպտակ, սութ քյուն տալ (քնած ձևանալ), վագոնէտկա (ցիստեռն), վա̈զէվա̈զ, վախտ, վառթէվար, վա̈րա̈մ (թույն), վըրէն լա̈լ, վիյավորվել, վոխճըրանակ կըթել, վոխչար, տախտ, տանիս, տա̈տ, տեղ թա̈լել, տեղաշոր, տըրկեց // հարէվան, տըփել (ծեծել), տուռ տփել // թփել, տփել (խփել), ցաձրախտէցի, փայ, փա̈յա̈ (գոմ), փա̈յլէվան, փա̈շա̈ռու (քաղված արտից հավաքված մնացորդ), փեռթ, փէճատել, փըթիր թըխել, փըթիր, փըլավքյամիկ, փօխինձ, քա, քըռչիկ, քիթ պէրան, քիւռսի, քյա̈նց թէ, քյա̈սիբ քյըռոն, քյուլխան, քյօմա̈կ կայնել, քյօռ, օխտ, օղօրկել, օռշնութեն, օրական (ամեն օր), օրօխկել, ֆայմի քյօռ:

**ԾԱՂԿԱՁՈՐ** – Քաղաք Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ծաղկունյաց ձոր, Կեչառիս, Կոնստանտինովկա: Ծաղկաձոր է վերանվանվել 1947 թ.: 1828-1829 թթ. Ծաղկաձորում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից եկած հայ գաղթականներ: Ներկայում քաղաքն ունի մոտ 1500 բնակիչ: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով:

**ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ**[131] - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ազահձոր, Աղաձոր: Կաթնաղբյուր է վերանվանվել 1946թ.: Ունի 600-ից ավելի բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից, Վանից, Խոյից, Մակուից, Սալմաստից: Հաղորդակցվում են Արարատյան, Մշո, Վանի և Խոյի բարբառների տարրեր զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Կաթնաղբյուրի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (Ալաշկեոտ, արեվ, քեռի, կող, փոր, շընորք): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոտ, յեզ, յերք), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրինջ, էրկաթ, օլըրել, օրօճ, օսկոռ), բայց նաև՝ *վոխչար, յերկիր:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ü ձայնավոր (Սüքօ, պüրեվ, կʲüրի, տüռը, լüց, խüյլի, քʲüսիբ, քʲüնի, չüչüլ, զüրկել): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (գ՛օղնալ, լօղնալ, կարկըտան, սօրվել, քառսուն): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (սիլլէն, փէսէք): Բաղաձայնական համակարգում առկա են շնչեղ ձայնեղներ (բ՛ալնիք, բ՛ան, բ՛էրել, բ՛օղօք, գ՛արի, գ՛արուն, գ՛եղ, գ՛ըլօխ, գ՛ող, գ՛ոմ, դ՛աշտ, դ՛ուս, ձ՛եռ, ձ՛ըմեռ, ջ՛üղաչ, ջ՛առթել, ջ՛ուր, ջ՛օկել), բայց դրանց զուգահեռ՝ բառասկզբի ձայնեղների դիմաց գործածական են նաև խուլեր (պարլուս, պէրան, պէրել, կընա՛, կʲարի, կըլօխ, կող, տüռը, տուռ, տըտում, ճուր, ծըմէրուկ, ծուն): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (խափել, մառթ, հառաչ, էքուց, պաղրուք, տէքըր, օց): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն հանդիպում են ձայնեղներ (կըդրել,

---

[131] Կաթնաղբյուրի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1983 թ. լրացված թիվ 229 տետրում, առկա են նաև բնակավայրում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

պաղմել, վորդուց, փազել, պահազ, դըբրոց): Առանձին դեպքերում բառասկզբի *գ*-ի դիմաց առկա է *ք* (քըշեր, քըցել, քըթնել, քըռնակ, քըթալ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Խոսվածքում գործածվում են քմայնացած հետնալեզվային պայթականներ (կʲա̈րի, քʲա̈նի): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (իշքան, մէշկ, լըվացընել, անէսկ): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հախպուր, հառաչուց, հավէլի, հիմանալ, հէրկէն, հըղըրկել, հըմէն, հընգեր, հիրկուն, հէոթիս, հունք, հուրիշ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (ախ, խաց, խասնել, խավ, խիվանդ, խէր, խօրական, խին, տասխինգ, պախել, բ՛ախ, Ապըր-խամ /Աբրահամ/): Միայն մեկ դեպքում բառասկզբի *հո*-ի դիմաց հանդիպում է *ֆո* (ֆօրթիկ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կազան, կօնախ, կարիբ, կավուրմա): Բաղհյուսական հարադրություններում *ու* շաղկապի դիմաց գործառում է *ը* հնչյունը (տունը տեղ, դ՛արը դ՛աշտ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, րանք, անիք* մասնիկներով՝ *ակռէք, տըղէրք, կեղրանք, կընանիք:* Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (հառաչուց, Բայազէտից, Էրէվանից): Ներգո-յականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կա-պով և սեռականով (գ՛եղը, զօրքի մէչը): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (պունը, խավէրին): Անորոշ հոդը նախա-դաս է (մէ տարի): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: *Ով* դերանվան դիմաց հանդիպում է *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իրա, ընդըրա, ըստըրա, ըստոնք, ընդա̈նք, ընդըրանք, ըտե, ըտենց, ընդեյից, վորդեղից // վորդից, հըմընին, հիրար* և այլն:

Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (չեմ կարում, ասում ին, չեմ գիդըմ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալըմ* (նաև՝ *գալիս* /կըռանթից ա գալի/), *տալըմ, լա՚գ ըլըմ:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ծընվէր, մեռեր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *է* վերջավորություն (չենք տէսէ, շուտ ա մեռէ): Հարակատարն ունի *ած* վերջավորություն (շարած, քընած): Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (յեզը նըստած = նըստէր են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (ծախէցիմ, փոխէցիր, սարքին, սկըսինք, չըռփինք): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց, մընաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *բ՛ուժին, խըրկին, նըստավ, հավաքվան:* Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքերն ունեն հավելական *մ* ՝ *չար իմ* (էի), *չիմ սօրվըմ, քըթամ* (գտա), *քըցիմ, չըբօյօվցամ:* Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր (փախնել): Պատճառական ածանցն է *ցըն* (բ՛ըլցընել, խաքցընել), պատճառական բայերի եզակի հրամայականը գործածական է թե՛ *ու*, թե՛ *ա* վերջավորություններով (մոտըցըրո՛ւ, խըմցըրո՛ւ, խաքցըրա՛, նըստըցըրա՛): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի մընամ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ամբըրոց, բ՛ալնիք, բ՛ախ, բ՛ըլցընել, բասեյն, բօյօվնալ, բօռալ, գ՛եղավարի, դարը դ՛աշտ, թունդիր, իչըցընել, լըվասցընել, խամբըրել, խասկըցընել, խատցընել, խըրկել, խի, խօրական, ծըմէրուկ, կազան, կարիբ, կըլուբնիկ, կըռանթ, կօնախ, հախպուր, համ...համ, հառաչուց,

հավէլի, հըղըրկել, հըմի, հընցնել, ղըրկել, միտ, շիվարել, չմ̈չմ̈լ, չափալաղ, չըռփել, պախել, պուն, ջ́մ̈ղաչ, սիլլմ̈, սիվտմ̈կ, վախտ, վոնց, վորդեղից, վորդից, վորդուց, տմ̈ռը օցի կօտ, տըփել, տունը տեղ, քըթնել, քըշեր, քըցել, քյմ̈սիբ, քօռ և այլն:

**ԿԱՄԱՐԻՍ**[132] - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Կամարկույս, Կյամրիս, Գյամրեզ: Ունի մոտ 2300 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյից, Դիադինի գավառակի Ջուջան գյուղից, Ակոռիից, Մակուից: Հաղորդակցվում են Խոյի բարբառի հատկանիշների գերակայություն, Դիադինի և Արարատյան բարբառների տարրեր ունեցող խառը տիպի խոսվածքով:

Կամարիսի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (ուժեղ, տարբեր, տեղ, փող, խորը): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոռփ, վոտ, յես, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օսկոռ, օլըրվել, էրկու, էթալ), բայց նաև՝ *վոսկի, վորձկըտալ, վոխչար, յէրգէն:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում, նաև Աճառյանի օրենքին առնչվող դիրքերում հանդես է գալիս քմայնացած մ̈ ձայնավոր (մ̈վէլի // հմ̈վէլի, մ̈քլոր, Գմ̈ռնի, զմ̈րկել, պմ̈ն, թմ̈լել, քյմ̈շել, խմ̈նչմ̈լ, հմ̈խպուր, ճմ̈ղմ̈չ, պմ̈րի, վմ̈զնել, վմ̈ռել, տմ̈ռտմ̈կ, զմ̈յրումմ̈ր, հմ̈յմ̈թը, նմ̈ֆմ̈ս, շըլմ̈կ, փմ̈յլէվան, փիլմ̈քմ̈ն): Երբեմն առաջին վանկի *ա*-ն ունի շրթնայնացած արտասանություն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (ավրել, ժօղվել, սօվըռցըրօղ, օլըրվել, խիվըննալ, հըղըրկել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի

[132] Կամարիսի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984 թ. լրացված թիվ 281 տետրում, առկա են նաև բնակավայրում 2016 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

(ճամփէն, տըղէն, փէսէք, վըրէս)։ Խոսվածքի համար բնութագրական է բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը (Կալուստ, կյըրի, կէլխեխտ, կեղ, կեղացի, կէրան, կըլօխ, կըրել, կինի, կըլօխ, կոռծ, կոմ, տըռփընանոց, ճոչ, ճուր, պըն, պէրել, պըռնել, պըրընձէ, պուռթ, տուռ, տուս, ծէն, ծեռ, ծի, ծըմեռ, ծիթխան), բայց գործածական են նաև շնչեղ ձայնեղներ (բ՛ըն, բ՛ացել, բ՛էրել, գ՛ալ, գ՛եղ, գ՛էտին, գ՛ոռծ, գ՛օվալ, դ՛աշտ, դ՛ուս, ձ՛եռ, ձ՛եզի, ձ՛էն, ջ՛ոչ, ջ՛օկել)։ Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (վռոփ, խափել, մառթ, ձ՛աք, թաքավոր, մուք, թըռչել, մէչ)։ Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (կըդրել, պաբ, փըրգել, փէդ, ցաձըր)։ *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա կայնել, *յեղույներ* ձևերում։ Բառի կազմում նախաբաղաձայնական դիրքում, ինչպես նաև բառավերջում՝ բաղաձայնով սկսվող բառերից առաջ, հետնալեզվային հպականները, *նք* խումբը կարող են դառնալ *յ* կամ *յʰ*՝ *ըյʰլօր, պըստիյն, ծաղիյներ, ճառպիյ տըղա, մէ բ՛աժայ խըմել, կըլոր էշ եյ խաղացե, սապօյ տամ, հէլայ կընացինք, իրեյ խատ ծըմէրույ կառնի։* Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, իշքան, խաշքար, հիշնել, մէշտեղ, միշնեկ, ընգըժներ)։ Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվայիններ (քյըշել, քյուլ, քյըքյուլ, կյըրի, կիկյա)։ *Հաճախ* բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հըխպուր, հառաջ, հըռու, հըվէլի, հէռթիկ, հէսա, հըղըրկել, հըլնել, հընգեր, հընչի, հըշկալ, հըռստ, հիրկընեց, հուր)։ *Հ*ինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խամ, խանել, խաց, խառս, խառնիս, խասնել, խասկընալ, խաստ, խավապուն, խաքնել, խըմա // խըմար, խինգ, խէր, խէտ, խըպառտ, պախել, ժամխըրենք)։ Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կօնախ, կըրաղ, կըստու)։ Բաղ-

հյուսական բարդություններում *ու* շաղկապի դիմաց գործածվում է *ը՝ աչը ձ՛ախ, տունը տեղ:* Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, րանք, անք* մասնիկներով (գ՛եղացիք, տըղէրք, ըստերանք, ըտերանք, ընդերանք, կողրանք, ծիյանք): Հանդիպում է *կին* բառի *կընթըներ* հոգնակին: Հոգնակի գոյականները սովորաբար ենթարկվում են Ի հոլովման, բայց հանդիպում են նաև Ու հոլովմամբ ձևեր (փիլաքաննէրու): Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման դեպքեր (Արամուսա, Առզընիյա, Հադիսա, թունդըրա): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով՝ *ափոյ*: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (Խօյից, Վանից, տեղից, կինուց): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (սաղ Հայաստան կոռծ արե, հիվանդանոցն ի, բաղէրի մէչը): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (պապերը, պատիվը, փոփէրին), հոդը երբեմն կարող է բացակայել (պէրան կապում ին): *Մեկ* թվականն ունի *մէ* ձև (քըսանմէ): Անորոշ հոդը նախադաս է (մէ մառթ): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի // ծեզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: *Ով* դերանվան դիմաց առկա են *վով, օվ* ձևերը, որոնց սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը, ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իրա, ըստըրա, ըստըրանց, ըտըրա, տըրա, տանց* (դրանց), *ըտըրանից, ընդըրանք, ըտա, ըստու, ընդու, ըստուց, ընդուց, ըստե, ըտե, ընդե, ըտեղից, էսա, էտա, էսենց, ըսենց, էտենց, հիրանք, հիրանց, իրա, իրանց, համէքը // ամէքը, համէն // ամէն ինչ, վորդե* և այլն:

Սահմանական ներկան և անցյալ անկատարը կարող են կազմվել *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (ասում, տանում, ազատում, բ՛էրում), նաև՝ *կը // կ* մասնիկով կամ առանց

դրա (կըխաղամ, կըպատմեմ, կըտանեն, կըծախի, կէթա, կասի, տէնա, խանի, պըռնի): Պատմական ներկան իբրև կանոն կազմվում է վերջին ձևով: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) նույնպես կազմվում է տարբեր ձևերով՝ անկատար դերբայով՝ *կյա̈լիս // գ՛յա̈լիս ա* (ներկայի եզակի երրորդ դեմքում նաև առանց օժանդակ բայի՝ *կյա̈լի*), *տալիս ա*, *կի // կը* մասնիկով՝ *կիկյա, կիկյաս, կիկյա̈ն, կըտա, լա̈ց կըլնի:* Հանդիպում են *գալ* բայի՝ *ի* նախահավելվածով ձևեր՝ *թօ իկյա̈, իկյա̈մ, տուս չես իկյա̈:* Կը մասնիկը, ձայնորդից առաջ կամ միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* կամ *գ* (գ՛ընգընի, գ՛ընցընինք, գ՛ըլնի, գ՛իշնի, գըլօխկընա): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (էկէր // էկիր, տարէր, գ՛ընացիր, զարգացիր), օժանդակ բային հաջորդող դիրքում՝ *ե* վերջավորություն (դ՛ըրե, չէք տէսե): Վերջինը նաև առանց օժանդակ բայի կարող է արտահայտել եզակի երրորդ դեմքի իմաստ (պէրե տունը, հըղըրկե, էկե, կոռծ արե, տըսե): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (փախցըրած, կորած, զա̈րկած, խըմած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա//ի, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի(մ), իր, էր, ինք, իք, ին:* Սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի/մ/, չիր, չէր, չինք, չիք, չին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը ավելի հաճախ կազմվում է ոչ ցոյական հիմքով (չըպախիր, փըրզիր, տըրի, շարին, խանին, թօղին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց // կընա̈ց, մընաց:* Ե խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալում ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (շարին, ասիմ, քընավ, նըստան): Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքում առկա է հավելական *մ* (պառտք իմ, չէթիմ, կընա̈ցիմ, մըտամ, խըմամ, պէրիմ, տըրիմ): Հանդիպում է տրամաբանական շեշտի արտահայտություն օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի՝ դիմավոր բայաձևից առաջ կիրառումով՝ *էտ փըշէրից էր կըզա̈րկիյ բօթուլի բ՛էրան:* Խոսվածքում չկան *չ*

ածանցով բայեր (փախնել, թըռնել): Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը (կըփախի, խաքօղ): Պատճառական ածանցն է *ցըն* (ֆըռըցընել, սօվըռըցընել): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի գ՛էր, պըտի տին):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղի կոշտ, աղքատ խըպառտ, ամէքը, ա̈յʰլօր, անհատ ժամանակ, անձըրև պըռնել, աշկ, աշկը առնել (նկատել), ապուր (սպաս), ավրել, արաղ, ափօ, բաղ, բըրախել, բօթուլ, բօռալ, գախտըվել, գըռուզավիկ, գիվա̈ , գʲա̈, գյուլլել, գʲօլ, գուռ (քարե ավազան), դա̈վա̈, դարը փոխվել, դա̈րվէշ, դըզել (կարգի բերել), դինջընալ, դօշ (սարալանջ), զա̈յրումա̈ր, էթացօղ կյա̈ցօղ, էս դա̈ն, ընդուց դէն, թա̈լել, թա̈մըզ, թառել, թույնել, թունդիր, թօ, ժօղվել, իզ, իշքան, իրիգուն, լա̈ (դեռ), լա̈խտի, լա̈յլուղ, լօխկընալ, խա̈բա̈ր, խա̈նչա̈լ, խա̈շքար, խա̈ռա̈ջի լայլուղ (թաշկինակ), խառնիս, խառս, խավապուն, խարատվել, խըմա, խիվընալ, խուտաղ, ծըցում, ծիթխան // ծիթխաց, ծուռ (գիժ), կայնել, կա̈ստու, կելխեխտ, կըլխանց, կըլօխ գ՛օվան, կըրաղ, կողրանք, կոմի հօղա, կոռծել, կօզվել, կօնախ, հա̈խպուր, համէքը, հա̈յա̈թ, հառաջ, հա̈վէլի, հավուզ, հէռթիկ, հէսա, հըլնել, հըղըրկել, հըշկել, հըռստտ, հըրօխպէր, հիրանը, հիրկընեց, հուշ տա̈ռցընել (ուշադիր լինել), հօրուկ զա̈րկել, ճա̈ղա̈չ, ճա̈ղա̈չի քար, ճանգըռել, ճա̈ռթըռտել, ճըխտել, ճոչ, մառթ (ամուսին), մէշտեղ, մէշօք, մըկա, մըսմըլա̈, յախա, նա̈ֆա̈ս, շանջու, շըլա̈նգ, շըլվար, շտօք, շօռ (ժաժիկ), շօռ ճուր, չա̈չա̈լ, չըլիկ դա̈ստա̈, չիբան, չօքները տըփել, պադվալ, պախել, պախկըվել, պախկըվոցի, պընակըռվել, պըռկըներ, պըստիկ, պըտուկ (աման), պըտտել, պըրընձէ փըլավ, ջ՛ոչ, ջա̈հել, ռէմէն (գոտի), սալ քար, սալըխ, սանդերք, սէլաֆ, սըխտոռուկ, սոխուկ, սօվըռցընել, վախտ, վէդրօ, վըռազ, վիզ առնել, վիզը տակը մընա, վօսկէճըրել, վորդե, վորձկըտալ, տա̈ռտա̈կ, տա̈ռփը-

նանոց, տէմըն առնել (արգելել), տէնալ, տըրուբա, տըփել, տուր թէ կըտաս, փձյլէվան, փէջ, փըռթընցընել (փրկել), փիլձքձն, քաղվոր, քամակը ըշկալ (հետ նայել), քարկըտիկ, քըցել մըտէն, քյձշել, քյձսձ, քյասիբ, քյձքյուլ, քյուլ, քյօմազ, քուռսի, օլըրվել (շրջվել), օխտը սարի քամակը, օյամիշ հըլնել, օյին խանել կըլօխը, ֆըռալ և այլն:

**ԿԱՊՈՒՏԱՆ**[133]- Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Գյոքքիլիսա, Լեռնավանք: Կապուտան է վերանվանվել 1935 թ.: Ունի շուրջ 1380 բնակիչ, որոնց նախնիները, բնակիչների վկայությամբ, գաղթել են Բայազետից, Ղարսից, Մուշից, Արծկեից, Արճեշի Առինջկուս գյուղից, Սասունից: Հաղորդակցվում են Մշո բարբառի հատկանիշների գերակայություն, Բայազետի և Արարատյան բարբառների որոշ տարրեր ունեցող խառը տիպի խոսվածքով:

Կապուտանի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (վեց, եղե, իրեք, չոռսը, դըբրոց): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոտ, վոչ, յես, յեզ), բացառությամբ *օր* (որ) շաղկապի: Բազմավանկ բառերի սկզբում այդ միավորների դիմաց առկա են *օ* և *է* (օղօրմի, օչխար, էրէխա, էրկու): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ձ ձայնավոր (զձրկել, հձռցձկ, միյնձկ, վձխէնալ, թձփուկ, լձրել, բիձձ, թձլել, թձզձ, զձղձ, զձ, քձլձմ, թձվձքձլի, ձձձ, շձքձր, ջձյէլ, կօլձյ, բձռձդի, Փձրձքձր, օրինձկ): Բառասկզբի վանկերում նկատելի է շրթնայնացած *ա*-ի առկայությունը: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (թեթըվնալ, ժօղվել,

---

[133] Կապուտանի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984 թ. լրացված թիվ 276 տետրում, առկա են նաև բնակավայրում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

օղըղել, գ՛ողնալ, ավլել)։ Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (բիձէն, փէսէք)։ Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛առցել, բ՛ացի, բ՛էրել, բ՛ըռնել, գ՛արուն, գ՛եղ, գ՛էրընդի, գ՛ըլօխ, գ՛ըրել, դ՛ասատու, դ՛էմ, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛եռ, ձ՛ուն, ջ՛առթել, ջ՛ոչ, ջ՛ուր)։ Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (Սէրօփ, անքամ, մառթ, օթ, վեռչ)։ Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, փազել, էրկուհարզանէ, դըբրոց, հէդեվ, պադմել)։ *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում։ Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, իշկալ, վոշ մէ, կօշկել, լըվձսկ, ծասկել)։ Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառէչ, հüռցüկ, հառչուց, հիրան, հըմէն, հընգեր, հընչի, հընցնել, հինքը, հիրկուն)։ Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում սովորաբար *խ* է հանդես գալիս (խա, խայ, խաց, խառնիս, խասկընալ, խավ, խէտ, խէր, խինգ, խող, պախել)։ Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կազան, կափաղ, կազ, կüրիբ, կըրաղ)։ Շեշտը վերջնավանկային է։

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, անք, վանք, տիք* մասնիկներով՝ *üմօղլիք, խընամիք, տըղէրք, ձ՛իանք, իշանք, իծվանք, ախպըրտիք։* Ոջ հոլովման ենթարկվում են մի քանի բառեր (հընգէրոջ, տալոչ, տիրոջ, քուրոջ, քավօրոջ)։ Ա վերջադրական հոլովման կարող են ենթարկվել հատուկ տեղանուններ, այլ բառեր (Հէրէվանա, Աբարանա, Սէվանա, հօրթըկա)։ Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (ախշըրքից, Ռընջկույսից)։ Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (հօրօխպէր ունի Արզավանդ, Ռուսաստան ա, էտի մընաց կազարմէն, սապուկնէրիս մէչը, գ՛եղի մէչը)։ Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տատը, տատըն էլ), հոդը երբեմն բացակայում է (ձ՛եռներ զüրկեց

հիրար): Անորոշ հողը նախադաս է (մէ գ՛եղ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձնից, ստըրան, ըսենց, ստեյից, ըտե, ընդե, ընդեյից, վորդե, վորդուց, ամէքից, հըմընի, հըմէն ինչ, հինքըն, հիրա, հիրանք* և այլն:

Խոսվածքում *անել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, եղնել, հըլնել, կանալ* տարբերակները (էրին, եղե, հէլանք, չեմ կանում): Ա և Ե խոնարհումների կողքին երբեմն դրսևորվում է նաև Ի խոնարհում (քընիմ, պըռծնիս, չըտանիմ, տանիմ//տանեմ): Ներկա ժամանակաձևը կազմվում է ինչպես *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (հիշում եմ, ընդե յէր աբրում), այնպես էլ *կը* // *կ* մասնիկով (կըմընամ, կասեմ): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) սովորաբար կազմվում է *գ՛ու* // *կը* մասնիկով՝ *գ՛ուկյա̈մ, գ՛ուկյ՛էր, գ՛ուլյա̈մ, կըտէր: Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, կարող է դառնալ *գ՛* (գ՛ընգի): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ծընվէր, ունէցէր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (չի բ՛էրե): Դերբայն առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ (հէլե լըցվե): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (բ՛ըռնուկ, փագուկ): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով (ասի, կապին, կարին, թա̈լի), երբեմն նաև՝ ցոյական հիմքով (ուզէցի, խըմէցի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց* // *գ՛աց, մընաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (վեռցեց, քաղեց, չըքընա, ջ՛առթավ, քաղա՛, նըստի՛):

Հանդիպում է տրամաբանական շեշտի արտահայտություն՝ օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի՝ դիմավոր բայաձևից առաջ կիրառումով՝ *ինչ ա կուզես, նուռ ա կուզեմ, գ՛ըլօխ ա կըպախեմ, նուռ շատ էր ք՛էրէր, գ՛էրընդօվ էր քաղեն, քաղ ա կէնենք, էչմիածին էր տանին, փող էր կառէր:* Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (փախնել, թըռնել): Պատճառական ածանցն է *ցըն* (կըպցընել): Պատճառական բայերը եզակի հրամայականում ունենում են *ու* վերջավորություն՝ *քընցո՛ւ, լօխկըցո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի տանին):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աբէրանցի, ա̈մօղլի, անջախ, ապէր (հորեղբայր), աֆտօ, բ՛էրնի ջ՛ըրերը էթալ, բանգա, բա̈ռա̈դի, բիձա̈, գ՛արնան դ՛էմ, գ՛ըլօխ պախել, գա̈ // գա̈դա̈, դոր (ուր), էրկուհարգանէ, թա̈զա̈, թա̈լել, թա̈վա̈քա̈լի, թա̈փուկ, ժէշտէ, իշկալ, լա̈մփ (նավթալամպ), լաս, լա̈րել, լուսումութ, խա̈լի, խառնիս, խըմա (համար), խուզ էրօղ, կազան, կազարմա, կանալ, կառտօլ, կուրսել, կօլա̈յ, հալալ, հա̈յա̈թ, հառէչ, հա̈ռճի, հա̈ռչուց, հա̈ռցա̈կ, հընչի, հիրկուն, հօրօխպէր, ձ՛եռ քաշել, ձա̈ձ // ձա̈ձա̈, ճիժ, մատացիկլէտ, մըկա, միյնա̈կ, մութը տալ, մուր կէրա՝ լեղի կէրա, յա̈ռէսուն, յաքա, յեղ, յեռսօտել, յուռդ, նարկօզ, շափա, շա̈քա̈ր աքլօր, շէն տուն, շուշա̈, չա̈ր, չաստ, չօբան, չօլ,պըռունգ, պըռօշ, պըստի, պըստիկ, ջ՛ոչ, ջա̈յէլ, սաղ (կենդանի, ամբողջ), սապուկ, սուս (անձայն), վախտ, վափշէ, վոնց, տավար մալ, տէղաշոր, տըռտըռիկ, տիլ, փուփուլօվ խավ, քա̈լա̈մ, քըցել, օչխար և այլն:

**ԿԱՐԵՆԻՍ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Գյումուշ: Ունի մոտավորապես 800 բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է Մակուից, Մուշից, այլ վայրերից: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով, որն ի հայտ է բերում Մշո բարբառի և Մակուի խոսվածքի որոշ տարրեր:

Կարենիսի խոսքում հանդիպում են *է, ո* երկբարբառային հնչյուններ (տեղ, իրեք, անուններ, նոր, վոնց): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վօ* // *վո* և *յե* (վօր // վոր, յես), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրէխա, օղօրմի): Փոխառյալ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö ձայնավոր (öվöլ, դöչա, ջöյէլ, քöսöր, քöվöռցի):

Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի՝ (էրէխէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛էրել, բ՛ընիկ, գ՛օռծարան, դ՛ընել, ձ՛եռ, ձ՛եվ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (աչ, մէչ, մառթ, բ՛առցըր): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, փըրգըվել, կըդրել, վօրդէղացի): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (հիշնել): Բառասկզբի ձայնավորից առաջ երբեմն առկա է *հ*-ի հավելում (հէրէվանցիք, հիրան, հիշնել, հինքը): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում[134] ձևավորվում է նաև *ք, իք* մասնիկով (էրէխէք, գ՛յուղացիք, դöչէք, մառթիք): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (գ՛ալուց, ձ՛եռից): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տեղը, լէզուն): Անորոշ հոդը նախադաս է (մէ տարի): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *մեր, ըտանց, ըտըրանք, ընդանք, ընդանց, հինքը, հիրան, հիրանք, հիրանց, ամէքը, ընդեղից, ստեղ, ըստե, էստեղից, ըտենց* և այլն:

Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (խօսում, հիշնում, իմանում): *Գալ, տալ* բայերի անկատար դերբայն ունի *իս* վերջավորություն՝ *գ՛ալիս, տալիս*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (փօխէր, հէլէր),

---

[134] Այս կարգի լեզվատարբերակը խոսվածք ենք անվանում պայմանականորեն:

օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* (սարքե, տէսե, էղե): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (շալակած, գ՛ալացած, ծընված): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը սովորաբար կազմվում է ցոյական հիմքով (բ՛ացէցին): Պատճառական ածանցն է *ցըն* (փախցընել): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի գ՛ընաք): Խոսվածքի բառային միավորներից են՝ ամէքը, ձ̈վձ̈լ, գ՛ալացած, դձ̈չա, էկվօր, ըտանք (դրանք), ըտըրանք, կընիկ, կըռուզավօյ, հավաքօվի, հիշնել, մօստ, ջձ̈յէլ, սարքել, ստեղ, քձ̈սձ̈ր և այլն:

**ԿԱՔԱՎԱՁՈՐ** – Հրազդան քաղաքի թաղամաս, նախկինում՝ գյուղ Ֆարուխ, 1949 թվից՝ գյուղ Կաքավաձոր, 1963 թվից ընդգրկվել է Հրազդան քաղաքի կազմում: Բնակիչները հավաստում են, որ իրենց նախնիները գաղթել են Վանի նահանգի Ֆարուխ գյուղից: Հաղորդակցվում են Վանի բարբառի հատկանիշների գերակայություն և Արարատյան ու Մշո բարբառների որոշ տարբեր ունեցող մի խոսվածքով:

Կաքավաձորի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (խելք, իրեքʲ, թոռ, բօքոն): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե* (վոչ, վոր, վոտ, յես), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրէխա, օղօրմի, օղօղել), բայց նաև՝ *վոսկի, վոխչար, վոռթիկ, յէրկար:* Փոխառյալ ու բնիկ շատ բառերում հանդես է գալիս քմայնացած ձ̈ ձայնավոր (հձ̈ռու, կʲձ̈ռ, կʲձ̈րի, զձ̈ռթընել, ճձ̈ռթել, միյնձ̈կ, պձ̈ժնել, պձ̈ց, դձ̈րվձ̈զ, թձ̈լել, թձ̈քʲ, խէքʲձ̈թ, խձ̈նձ̈քʲ, քʲձ̈շել, միզձ̈ր, հձ̈զձ̈ր, ջձ̈յէլ, փձ̈րինջ, քʲօռփձ̈): Բառի առաջին վանկում նկատելի է շրթնայնացած *ա*-ի առկայությունը: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (պայսըցընել,

յեռսուն, քառսուն): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէս, վըրէն, բըլուզկէք): Նկատելի է երկվանկ բառերի առաջին վանկում *ե//է>ի* անցում մի շարք դեպքերում (իլե, իկած, իկէք, իրեքʲ, պիրել, կիսուր, չեմ կիրե /չեմ կերել/, չեմ տիսե, վիրեվ և այլն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբի ձայնեղների դիմաց խուլերի առկայությունը (պէրան, տու, կʲüռ, կացե, կեղ, կէլ, կըլօխ, կէտնափոր, կինի, կոռծ, պան, պիրել, պէտ, պէրան, պըռնել, տընել, տուռ, տուս, ծեռ, ծըմեռ, ծըցում, ճոչ, ճուր): Հազվադեպ հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ (բ՛այց, գ՛ացե, ձ՛եվ, ձ՛էն): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (սուրփ, անքամ, ժօղօվուռթ, պուռթ, մէչ, հüռէչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրանքʲ, դըբրօց, պադրուք, վորդե, ցաձըր): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Բառավերջի *նք*, *նգ* խմբերը *յ* են դառնում բաղաձայնով սկսվող բառից առաջ (կʲüրի յեյ ցանե, կուզեյ ծեր ախչըկան, մեյ սըրախ կասենք, մեյ տայնանքʲ, խիյ մանէթ): Բառամիջում ու բառավերջում հետնալեզվային պայթականը *յ* է դառնում բաղաձայնից առաջ (կըխայնինքʲ, տայնալ, իկէյ կախվէյ թունդիր՝ *եկեք կախվեք թոնիր*): Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվայիններ (մենքʲ, քʲուր, քʲուռսի, քʲըվոր, էթինքʲ, կըքʲընինքʲ, քʲօ, քʲիչ, ուզընգʲան, կʲող): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, մազնի, իշ կըկըդըրէր, վոշ մէ): Բառասկզբի ձայնավորից առաջ որոշ դեպքերում առկա է *հ*-ի հավելում (հավել, հüռէչ, հէրէկ, հէսօր, հիրես, հընչի, հիրան, հիրկուն, հուրիշ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խա, խայնել, խանել, խառս, խառնիս, խառցընել, խացատուն, խէր, խէտ, խինգ, խիվանդ, խօրքʲուր, խօրօխպէր, սըրախ, պախել): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կօնախ, կըսըր): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *քյ, անիքյ, էրքյ* մասնիկներով՝ *էրէխէքյ, կընանիքյ, տըղէրքյ:* Ա վերջադրական հոլովմամբ հանդիպում է *թունդըրա* ձևը: Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (պապայ, աֆտօյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (տընից տեղից, առատվանից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (քաղաքն եմ իլե, քաղաք կապրին, մէ տան մէչ, ճըրի մէչ): Որոշիչ հոդը միայն *ն*-ն է (թանըն չեմ տա, ճայտին), որը կարող է և չարտահայտվել (թութուններ կաշխատինքյ, քըցիր կըրակ): Անորոշ հոդը նախադաս է (մէ տուն): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ծեզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վռն* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *զինք* (ինքը), *ուր* (իր), *իրան, հիրանքյ // իրանք, հիրանց, ուրան, ուրանք, ընդուց, ըստոնք, ըստուն, ըտու, ըտուն, ընդու, էսա, ըտոնց, ըստուց, ըսենց, ըտենց, ընենց, հիրար, ըստե, ընդեն, էնադեն, էնատե, ամէքի, ամէքյ մէկին, հըմընօվ, հընչի* և այլն: Այլ լեզվատարբերակների հետադաս կապի դիմաց երբեմն հանդիպում է նույնի նախադաս կիրառություն (խըտ իրար, խեռ տընից տեղից):

Բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը // կ* մասնիկով կամ առանց դրա (կըկյա̈, կըկյէր, կյըտամ, կըլա̈ցեմ, կաշխատինքյ, կապրին, կըփոխէր, շալըն քըցին ըսենց կըկապին, պըռնեն, տանեն): *Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* (գ՛անգըստանամ, գ՛իճըրցընինքյ, գ՛իշկամ): Հազվադեպ հանդիպում են նաև անկատար դերբայով կազմություններ (չիմ ուզում): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (կացիր, քընիր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (կացե, ընտանիք ենք իլե, չեմ թըռչե): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (փոռցուկ,

կախուկ, նըստուկ, պըլուկ): Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող են գործածվել օժանդակ բայի և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր (*սաած էն* // *սաած ա*՝ ասել են), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (*իկած*՝ եկել են, *գ՛ացէ*՝ գնացել է, *չէկէ*՝ չի եկել, *տուռ փակած, կացած*՝ դուռը փակել գնացել են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնքյ, էքյ, էն,* անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինքյ, իքյ, ին:* Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքն ունենում է *մ* հավելված (*չիմ ուզում*՝ չէի ուզում, *պիրիր իմ*՝ բերել էի, *տըվիմ*՝ տվեցի, *առամ*՝ առա, *պիրիմ*՝ բերեցի, *կասիմ*՝ ասում էի, *մընիմ*՝ մնայի): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով (նըշանին, տըվին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կյաց, մաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (պիրեց, կայնանքյ): Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձև (մառթ ա կըկյա̈, Իչան ա կընայեմ, ինչ ա կասեն, ըտոնց վըրէն ա ճուր կըթա̈լեն): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (կարմըրցընել, խօսցընել, հիճըցընել): Պատճառական բայերը ներկայում և ապառնիում կարող են ունենալ *ու* խոնարհիչ՝ *սօվըրցու*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի էթինքյ): Գործածական է հաստատական *կօ* մասնիկը (կօ սար ա էսի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ամվէլի (գովական), անկիսուր տուն, առատուն, առունքյ, արանքյ, բը (բա), բըլուզկա, բօռալ, բօքոն, դա̈ռսել, դա̈րվա̈զ, դոր (ուր), դօշ (լանջ), զինք, թաթման, թա̈լել, թալվա // թավլա, թա̈քյ, թէշի, թէշտ, թըռանա անել, թութուն, թունդըրա խուփ, թունդիր, իմալ, ինատու, լէզու թըռչել (մեկի հետ խոսել), խամ-խամ, խառճըկաթ, խառնիս, խացատուն, խեռ տընից տեղից (որևէ վատ բան տանից հեռու

պահելու մաղթանք է), խըրկել, խուժանանոց, խօրքյուր, խօրօխ-պէր, խօրօտ, ծըցում, կալօշ, կախվել թունդիր, կայնել, կէսրար // կէսրէր, կէտնափոր, կըլխիս մազի չափ (շատ, անթիվ), կընիկ, կըսըր, կիսուր, կուրցըվել, կօ (ահա, առանց այդ էլ), կօնախ, հüռէչ (նախկինում), հüռու, հէրէկ մէկէլ (բոլորովին վերջերս), հընչի, հիրես տալ (ինչ-որ բանում մեղադրել), հիրկուն, հօղա, ճըմուռ, ճըպոթ, ճիժ, ճոչ, մալ, մառթ (ամուսին), մառթի էթալ, մըկա, միզüր, յաշմաղ (բերանը փակող շոր), յեղ, նաֆար, նըխշուն, շüխտա, շուռթ (թոնրի), ուզընգյան, չըփխել, պաս (սպաս), պէտ (մեծ), պըստի, պուտուկ, պօլիկ, ջüյէլ, ռաֆաթա, սաբախտան, սաղօր (ամեն օր), սանդերքյ, սըրախ, սո՛ւս, վախտ, վոշ մէ (ոչ մի), վոռթիկ, տեղը տեղին (ամեն ինչով կարգին), տըկի շոր, տիլ, փարատիչ, փüրինջ (աճառ), փոռցուկ թանըն չեմ տա անփոռց մազնի (նախընտրել փորձվածը), փոր թափել (խողխողել), քըթէլ, քըցել կըրակ (վատ վիճակի մեջ գցել), քյուռսի, քյօ ըսենց ընենց (հայհոյանքի բանաձև), քյօռնալ, քյօռփü, ֆըռալ և այլն:

**ԿՈՏԱՅՔ** - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Բարձաբի, Ելղովան: Կոտայք է անվանվել 1965թ.: Ունի շուրջ 1800 բնակիչ, որոնց նախնիները եկել են Բայազետի գավառից, Ալջա-վազից: Հաղորդակցվում են Բայազետի բարբառի՝ որոշ ազդե-ցություններ կրած տարբերակով:

Կոտայքի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (վեց, իրեք, խելք, նոր, վիյավոր, կօտոշ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանա-բար առկա են *վո* և *յե* (վոր, վոտ, յես, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օղօրմի, օղըղել, էրինջ, էրէխա), բայց նաև՝ *յեռեսուն, յեռթիս, վոչխար:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ü ձայնավոր (դüստըղուն, թüլել, թüզü, չüռչօվա, դüրօսար, դուրզüր, քüվüռցի, օրինüկ): Բառասկզբի

վանկերում՝ Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում, հանդես է գալիս շրթնայնացած *ա* ձայնավոր: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (թուլնալ, ծօրծըրակ, մատնիք): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, շախտէն, էրէխէք, սումկէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛աժակ, բ՛այց, բ՛ան, բ՛էրել, գ՛ափառ, գ՛ավ, գ՛եղ, գ՛իշեր, գ՛ոմ, դ՛աշտ, դ՛առնալ, դ՛ընել, դ՛ուք, ձ՛եռ, ձ՛երոնք, ձ՛ուկ, ձ՛ուն, ջ՛ըրտար): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (ժօղօվուռթ, մառթ, անքամ, մէչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, դըբրօց, գիդալ, կըդրել, փէդ, թազ, փազել): Սակավ դեպքերում նկատելի է հետնալեզվային հպականների քմայնացում (գ՛ʲինի, քʲուլ): *Նզն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում (հառավոտ, հառէչ, հինքը, հիրանք, հըլնել, հընցընել, հիմանալ, հիրար): Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խանել, խառնիս, խասնել, խաց, խէր, խին, խող, խոտ, խըրօխպէր, պախել): *Հորթ* բառի դիմաց խոսվածքն ունի *ֆոռթ* տարբերակը: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կազան, կըսըր, կօլթուղ, կըռաֆ, կօչ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, էրք, րանք, տանք* մասնիկներով (խօյէցիք, էրէխէք, միլիցէք, մառթիք, տըղէրք, ստեղրանք, ախպըրտանք): Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորումներ (Սեվաբեռթա, Սէվանա, Քյավառա, թունդըրա):

Զայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Տօնօյ, շուկայ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (Բայազէտից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (սօխուկ կար դ՛աշտը, անտառի մէչը): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն*

տարբերակներով (շուռթը, էկօղներըն)։ Անորոշ հոդը նախադաս է (մէ ախչիկ)։ Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*։ Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի)։ Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրա, հիրանք, հիրանց, ըղըրան, ընղըրանցը, ըտուց, ընդոնք, հիրար, հըմէն, ըստե, ընդե, վորդեյից, ըտենց* և այլն։

Սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատարով (կայնում են, լըսում եմ, ասում ինք, նըստում ին)։ *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ *գ՛ալում, լա՛լում, տալում*։ Ենթադրականի *կը* մասնիկը, միանալով բայասկզբի *h*-ին, դառնում է *գ՛* (գ՛ըլնի)։ Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (հէլեր, էկեր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (խի յես տափե, չի ծածկըվե)։ Վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքի իմաստ (*ազաղվե*՝ ազատվել է, *պարկե*՝ պառկել է)։ Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (նըստուկ, խըմուկ, քընուկ), բայց գործածական են նաև *ած* վերջավորությամբ ձևեր (ծընված, դ՛ըրած)։ Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև (էկած են՝ եկել են)։ Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին։* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (բ՛էրէցին, դ՛ըրէցին, ըսկըսին, բ՛ացի)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (բ՛ացի, լըցին, տափա, ծընավ, հաշվա՛, փագա՛, նըստի՛, կայնի՛)։ Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր։ Պատճառական ածանցն է

*ցըն* (կըռվըցընել): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի թա̈լես):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ակ (թոնրի օդանցք), աղադվել (ծննդաբերել), արաղ, բազաժնիկ, բանդ (կավառ), գ՛ավ, գ՛ափառ, գ՛եղ, գա̈ղա̈, գըռուզավիկ, գիդալ, դա̈ստըղուն, դա̈րօսար (դռան գլխի փայտը), դուրզա̈ր, դօլչա (կանթով բաժակ), զակազ տալ, էթալ գ՛ալ, էրէխա բ՛էրել, էրինջ, թազ (թակ), թա̈զա̈, թունդըռա շուռթ, թունդըրատուն, ժօլօբ, խանչալ, խառճըկաթ, խընօցի, խըրօխպէր, խի, խօրօտ, ծընել, կազան, կայնել, կառտօլ, կընամիշ անել (կշտամբել), կըռաֆ, կըսըր, կըտուր, կըրխըլաղ (հաքրիկ՝ *ոչխար խուզելու մեծ մկրատ*), կըրուշկա, կօլթուղ, կօչ, կօծել, կօտռշ, հառավոտ շուտ, հառէչ հասար, հընցընել, հօդա, հօլուկ, ճիժ, ճըլըլեկ, մըկավա, մուխ, մօզի, յեռթիս, յեսիմ, նախըռչի, նախրազ՛ընա̈, նավդան (ջրհորդան), շըլօփա, շուշուտ, շօշ, շօռ խօրել (ժաժիկ պատրաստել), չա̈ռչօվա, չօբան, չօչ անել, պախել, պաճառավոր, պարկել (ծննդաբերել), պուճուճակ, պուճուր, պուտուկ, ջ՛ըրտար, ռաֆադա, սալքար, սարի հօլիկ, սեղանտախտակ, սինօռ, սուբա, սուրու, վոչխար, տափել, տըփել, տիլ, ցօնցել, փէջ, փիս, քասա, քըթնել, քըշեր, քʲուլ, քʲուլխան, քյուֆտա քըցել, քուռսի քօլիկ, ֆոռթ, ֆուրդուն և այլն:

**ՀԱՏԻՍ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Քանքան: Հատիս է վերանվանվել 1978 թ.: Ունի մոտ 380 բնակիչ, որոնց նախնիները եկել են Բայազետից, Վասպուրականից, Սանաի տարածաշրջանից: Հաղորդակցվում են Բայազետի բարբառի մի տարբերակով:

Հատիսի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (թեվ, վեց, իրեք, կըթվոր, փող): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոռ, վատ, յես, յերք, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրէխա, էրկու, էրազ, էփել, օղօրմի, օլըրել), բայց նաև՝ *յերզիր,*

*յեռթում:* Երբեմն նկատելի է *ա* ձայնավորի թույլ շրթնայնացում: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ӓ ձայնավոր (զӓտ, լӓլ, հӓշկ, թӓփել, լӓրել, միյնӓկ, քӓռի, գӓզӓր, դӓռդ, սիֆտӓկ, ӓզիզ, թիքӓ, մӓնդӓկ, նӓֆӓր, ջӓյէլ, օռӓշ): Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (գ՛օղնալ, խասկընալ, ջ՛ոչընալ, յեռցընել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (էրէխէս, ճամփէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛անջար, բ՛էրան, բ՛էրել, բ՛ըժիշկ, բ՛ըլել, բ՛ըռնել, գ՛ախ, գ՛արէ, գ՛ըլօխ, գ՛էրընդի, գ՛ին, գ՛իշեր, գ՛ոմ, դ՛ասատու, դ՛եղ, դ՛ու, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛ըմեռ, ձ՛ու, ջ՛ոչ, ջ՛ուր, ջ՛ըրխոր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (սըռփել, մառթ, ժօղօվուռթ, խաքցընել, ճըրաք, թաքավոր, տէքըր, բ՛առցել): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, փազել, գիդալ, կօղըրվել): Երբեմն նկատվում է հետնալեզվային հպականների քմայնացում (կըրակʲի, քʲիչ, տէքʲօր): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (ծըսցընել, կըսկըրվուկ, հӓշկ, ճաշնալ, ինշ կա): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հախպուր, հառէչ, հինքը, հընգնել, հէքուց, հէռթիս, հէսօր, հէրէկ, հէրես, հիմանալ, հինքը, հընչի, հընցըցընել, հուս): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խանել, խառս, խառցընել, խասնել, խաց, խավ, խատ, խէր, խիվանդ, խըմար, խօրօխպէր, խոտ, գ՛ախ, պախել): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կըրադ): Բաղիյուսական հարադրություններում *ու* շաղկապի դիմաց առկա է *ը*՝ *գ՛էլը գ՛ազան:* Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, տանք, րանք* մասնիկներով (էրէխէք, մառթիք, տէքըրտանք, էտերանք): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Շավօյ, աֆտօյ, վէդրօյ // վէյրօյ, ֆէրմայ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (տանջանքից, խօրից, վորդուց): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով (գ՛ումերն եմ աշխատե, Սէվան ա աբրե, շըտուկի մէջը): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տարին, նըշանը): Որոշիչ հոդով կարող են գործածվել թվականները (ութը, խինգը): Երբեմն որոշիչ հոդը կարող է չարտահայտվել (պառավ կընիկ էր իմ կիսուր, ընձի տարէք կուշտ), երբեմն էլ՝ կրկնվել (ձ՛ինը): Անորոշ հոդը նախադաս է (մէ տարի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում է նաև կրճատ ձև՝ *մե:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսա, էտա, էնա): *Ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրա, ըսոնց, ընդոնցը, ընդըրա, ընդըրանց, ըստե, ըտե, ըտուց, ընդե, ընդուց, էսքան, էտքան, ըսենց // էսենց, ըտենց, ընենց, հըմէն, վորդե* և այլն:

Խոսվածքում սահմանական եղանակի ներկան ու անցյալ անկատարը կազմվում են *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (ուզում ես, լըցըմ ենք, ասում ին, կապըմ ինք): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում* // *գ՛ալըմ, լյալում, տալում:* Ենթադրական եղանակի *կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* (գ՛իմանան, գ՛ըլնի): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (խանէր, փազվէր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (կօվ եմ կըթե, ինչ եմ խասկըցե): Վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքի իմաստ (էկե Սէվան, խաբար արե): Հարա-

կատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (պարկուկ, չէլուկ, կախվուկ, կայնուկ, նըստուկ, կըսկըվուկ)։ Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև (*չին բ՛էրած*՝ չէին բերել, *գ՛ացած ին*՝ գնացել էին), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (*վարաքված*՝ վարակվել են, *նըշանած*՝ նշանել են)։ Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին։* Օժանդակ բայը երբեմն կարող է կրկնվել՝ *խէտը չի խօսում ի։* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով (դ՛ըրին, տըփին, կըդրի, կըդրէցի, դ՛ըրէցի)։ *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ աց, մաց*։ Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ ( լըցեց, կըդրէցի, փիձավ, չօքա)։ Ժխտական խոնարհման վերլուծական ձևերի եզակի թվի երրորդ դեմքում *չ* ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա, ինչպես՝ *չէկե* (չի եկել), *չըգ՛ացե* (չի գնացել), *չըգիդում ա* (չգիտի), *չէլե* (չի եղել)։ Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր (փախնել)։ Պատճառական ածանցն է *ցըն* (յեռցընել, խաքցընել, դըռըցընել)։ Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի գ՛ա)։

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ (մայր), ӧզիզ, ապէրացյա, ասէլու խէտ (ասելու պահին), արօղ կընիկ, բ՛էրանացի, բըլուսկա, բօզ մӧնդӧկ, գ՛ախ, գ՛արէ խաց, գ՛ըլխօվ արեվօվ յեռթում ուտել, գ՛ըլօխ, գ՛իշեր - ցէրէկ, գ՛օխտուկ, գ՛օվական, գիդալ, գյօլ (լճակ), դ՛ու հըլնես՝ քօ աստըված, դӧռդ, դէյրӧ, դըռըցընել, դօշ, զӧտ (ինչ-որ բան), զօռբա, էթալ, էնգ՛ախ, էրէխա ախճիկ, էրէխա պախել, ընդուց (այնուհետև), ըշպիյօն, ըսկի, թըթվաշ, թիքӧ, իկռա, իմալ, լӧրել (հետապնդել), խա, խաբար, խախտըվել (հոգեկան խանգարում ունենալ), խӧրըվարուկ, խոտ հընգնել քիթը, խօրօխպէր, կալիցօ, կախվել թունդիրը, կայնել, կանալ,

կըթվոր, կընիկ, կըչկըչալ, կըրակ'ի գ՛ին, կըրաղ, կըրամուս (ջուր կրելու փայտյա հարմարանք), կըրուշկա, կիսուր, կուշտ (մոտ), կօլխօզ, կօմբիկօր, հախպուր, հա՛շկ, հառէչ, հէռթիս, հէսօր, հէքուց, հընգնել աֆտոյ տակը, հընչի, հիշկալ, ղըրկել, ճաշնալ, ճըրաք, ճիժ, մամէ (տատ), մա՛նդա՛կ, մառթ (ամուսին), մէշու, մէշօք, մըկա, մըկավա, միլիցա, միյնա՛կ, միտը հըլնել, յան, յա՛նի, յեթիմ, յեռման, յեռցընել, յեսիմ, նաղդ, շըտուկ, շոր (հագուստ), ուզել (աղջիկ ուզել), չէլուկ, չըկալ տարի, չօլ, չօքել, պառզոն, պէսօք, պըստըլի, պըստի, ջ՛ըրխոր, ջ՛ոչ, ջ՛ոչընալ, ջա՛յէլ, ջէբ, սա՛լօմ, սաղ (ամբողջ), սավա (բացի), սըլալ (սայթաքել), սիֆտա՛կ, սօվի տարի, վախտ, վէդրօյ վոռ տըփել, վիլ (եղան), վոնց, տան նա՛ֆա՛ր, տէնալ, տընազ, տըրումբա, տըփել, տըփոց, փայ, փէլփըլալ, փըշօվ մառթ, փիձել, փիրվազ, քաղ անել, քամիկ, քէլալ, քըթնել, քըռչ, քօ յուռդը չըբ՛ըլի, օխտ, օռա՛շ, օռթիկ ծըսցընել, օռթիկ և այլն:

**ՀԱՑԱՎԱՆ** - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ավդալար: Վերանվանվել է 1945 թ.: Ունի մոտ 560 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկաստանից, Մուշից, Վանից: Հաղորդակցվում են խառը տիպի խոսվածքով:

Հացավանի խոսվածքում գործածվում են *ե, ո* երկբարբառային հնչյուններ (իրեք, տեղ, վեց, Մէլիքսէթենք, քավոր, խընձոր, փող): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (յես, վոր, վոտ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էթալ, էրկու, օղօրմի): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ա՛ ձայնավոր (ա՛ռա՛ջ, Գա՛ռնի, ղ՛ա՛նա՛կ, հա՛յա՛թ, մէզա՛ր, յա՛նըմ): Նկատելի է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղում (ուրխընալ): Բառավերջի ա ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (գ՛աթէք, տըղէս): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (գ՛ալ, գ՛եղ, գ՛ըրել, գ՛ըլօխ, ղ՛առնալ, ղ՛ընել, ղ՛ու, ղ՛ուռ, ղ՛ուս, բ՛անակ,

բ՛ացվել, բ՛էրել, բ՛ըռնել, ձ՛եռ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, մառթ, առաչ, կարքին, տէքօր): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, տէրդէր, հէդեվ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (վոնշ մէկը): Երբեմն բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառէչ, հէլաք, հէսա, հըմէն, հընգնել): Հնհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում հազվադեպ է *խ* հանդիպում (խառնիս), բայց բարբառակիրների վկայությամբ՝ հնում ասել են՝ *խիվանդ, խաց, պախել, խավ* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, անիք, էրք* մասնիկներով (գ՛աթէք, էրէխէք, կընանիք, տըղէրք): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (տեղից, Գյոռնուց): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (Կիրօվական ա, գ՛եղի մէչ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (ախպէրը, շօֆերն): Անորոշ հոդը նախադաս է՝ *մէ մառթ:* Ցուցական դերանունները եռաշարք են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի: Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընդոնք, ըտոնք, ըտանք, իրա, իրանք, իրանց, ըտենց // էտենց, ըստե // էստե, ստեղ, ըտե, ընդե, ընդեղից, ամէքը, հըմէն* և այլն:

Խոսվածքում սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (նըշում, հըլնում): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է անկատարի *գ՛ալում, լալում, տալում* ձևերով: Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն (պըսակվէր), օժանդակ բային նախորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (ստեղ եմ ամուսնացե, չեմ արե): Հարակատար

դերբայն ունի *ած* վերջավորություն (կանանչած, էկած, առած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են,* անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (բ՛էրէցինք, տըվէցինք // տըվինք, ասին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց // գ՛ընաց, մընաց:* Անցյալ կատարյալը որպես կանոն ունի *ամ, ար, ավ, անք, աք, ան* վերջավորություններ (ասամ, ասար, ասավ, ասանք, ասաք, ասան, տըվանք, տըվաք, տըվան, ծախանք, բ՛էրանք, գ՛ըրանք, վէրացըրանք), բայց գործածական են նաև այլ ձևեր՝ *բ՛էրէցինք, մուծինք:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (կայնըցընել): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի տանինք):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ադաթ, ախճիկ, ախպէր, ամէքը, ö̈ռö̈ջ (անցյալում), առէջի (առաջին), գ՛եղ, դ՛ուս, էտենց, խառնիս, կայնըցընել, կարքին, հառըընքավոր, հէսա, հըլը (դեռ), հընց, մէզö̈ր, մըկա, յան, յö̈նըմ, շըխպիկ, շօֆեր, պըռծնել, պըսակվել, ջէր, վախտ, վոնց, փէջգիր, քուր և այլն:

**ՀՐԱԶԴԱՆ** – Քաղաք Կոտայքի մարզում, մարզային կենտրոն: Նախկինում՝ Ներքին Ախտա, Կորկոտիս: Վերանվանվել է 1959 թ.: Ունի մոտ 58 000 բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է Մակուից, Սալմաստից, Սասունից, Կարսից, Խոյից, Մուշից: Այնուհետև քաղաքի բնակչությունը համալրվել է Հայաստանի այլ բնակավայրերից, ԽՍՀՄ հանրապետություններից եկածներով, սփյուռքահայերով: Քաղաքում հաղորդակցվում են խոսակցական լեզվով[135]:

---

[135] Հետագայում քաղաքի վարչական տարածքի մեջ մտել են Վանատուր, Ջրառատ և Կաքավաձոր գյուղերը՝ վերածվելով թաղամասերի: Դրանց լեզվական հատկանիշները ներկայացվում են առանձին:

**ՁՈՐԱՂԲՅՈՒՐ**[136] – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Դժրաբակ, Թեժրաբակ, Տաճարաբակ, Տաճարապատ: Ձորաղբյուր է վերանվանվել 1946 թ.: Ունի մոտ 2300 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Խոյից, Սալմաստից և Ալաշկերտից 1828-1830 թթ.: Հաղորդակցվում են Խոյ-Մարաղայի բարբառով:

Ձորաղբյուրի խոսվածքն ունի *ո* երկբարբառային հնչյուն (պոխկʲ, կործ, խոզ, չոռս, ամչըկոտ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց, երկվանկ բառերի սկզբում *ո*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յէ* (վոր, վորթ, վոսպ, վոխչար, վոճիլ, վոսկʲի, յէզ, յէս), երկվանկ և բազմավանկ բառերի սկզբում *ե*-ի դիմաց առկա է *է* (էրկաթ, էրկանք, էրթիս, էրէվալ): Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի դիմաց առկա է *օ* (օղօղէլ, օրօճալ, օլըրէլ): Կանոնավորապես հանդես է գալիս քմայնացած *ա̈* հնչյուն, երբեմն էլ՝ քմայնացած *ու* և *օ* ձայնավորներ (ա̈ժէլ, ա̈նջա̈կ, ա̈վըլնալ, զա̈նգ, զա̈րկʲէլ, լա̈ց, վա̈խ, վա̈ռէլ, վա̈զնէլ, պա̈խ, ճա̈ղա̈չ, շըլա̈կ, սըվտա̈կʲ, ֆա̈նդ, ֆա̈նա̈ռ, պիւսէլ, ա̈լիւր, ա̈խպիւր, ծիւն, կʲիւնդ, կö̈րէկʲ, գö̈րö̈ն, քʲö̈րէլ): Նախնական *ոյ* երկբարբառի դիմաց միավանկ բառերում երբեմն առկա է *ո* կամ քմայնացած *օ* (պոն>բոյն, շոտ>շոյտ, թö̈լ>թոյլ, լö̈ս>լոյս): *Ությու*ն ածանցը խոսվածքում դրսևորվում է թոն (ըթոն) ձևով (էրկընթոն, չորըթոն): Խոսվածքում հաճախ է հանդիպում նախաշեշտ վանկի ձայնավորի սղում (էրկըննալ, ավլէլ, իրկուն, խավնէլ, կողըթոն, քառսուն, խըրօխպէր): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում պահպանվում է (վըրա̈ն, կʲո̈լպա̈ն, տըղան): Բառասկզբում ձայնեղների դիմաց առկա են խուլեր (պա̈ն, պա̈ժին,

[136] Ձորաղբյուրի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1981 թ. լրացված թիվ 161 տետրում, առկա են նաև բնակավայրում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

պյ̈նջյ̈ր, պյ̈լիս, պէրէլ, կʲյ̈զյ̈ն, կʲյ̈րի, կʲէլ, կʲէղ, կʲէրընդի, կʲինի, կըլօխ, կոռտ, տյ̈րտյ̈կʲ, տէզ, տէղին, տուռ, ծյ̈խ, ծէռ, ծըմէռ, ծու, ճյ̈ղյ̈չ, ճյ̈ռթէլ, ճընջէլ, ճուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (առչ, խափէլ, լիռփ, յ̈րթյ̈ր, կʲյ̈ռթալ, էքʲ, տէքըր, յ̈ռյ̈չ, մէչ, պյ̈ռց, օց): Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվային հպականներ (ժյ̈նգʲ, պյ̈րակʲ, կʲյ̈րուն, կʲյ̈նգʲյ̈տ, քʲյ̈շէլ, կըծիկʲ, կընիկʲ, խինգʲ, ինգʲէր, քʲէռի, թըրիքʲ): Բաղաձայնանախորդ դիրքերում հետնալեզվային հպականների դիմաց հանդես է գալիս *յ // յʰ* հնչյուն (մէյն էլ, յէրէյ կայծայնէրը զյ̈րկին, էրնէյ քէզի, պայսէլ, մըյնէր, յէղունիյնէր, պայʰնէլ, այʰլօր, խայʰնէլ, տայʰնալ): *Նգ, նկ* հնչյունախմբերի դիմաց *յ* է առկա բաղաձայնանախորդ դիրքերում (խիյ տարէկան, կայնէլ, յէղըյնէր, էրմույնէր): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները որպես կանոն վերածվում են շփականների (անէսկ, ըսնէլ, լըվյ̈սկʲ, կըսկէլ, աշկ, էշնէլ, կօշկէլ, մէշկ, վէս տարէկան): *Տն* խմբի դիմաց որպես կանոն առկա է *նն*, երբեմն էլ՝ *ն* (խաննէլ, մաննիկʲ, մըննէլ, կարկըննէլ, խըռնէլ, քըռնէլ): Բառասկզբի ձայնավորից առաջ հազվադեպ առկա է *հ*-ի հավելում (հըմէն): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խազալ, խյ̈լիվօր, խամբըրէլ, խաննէլ, խառնիս, խասկընալ, խարցուցէլ, խաց, խավ, խին, խըմար, խէզնէլ, խող, խօվ, խում, խօքի, պյ̈խ), որոշ դեպքերում՝ նաև հավելական *հ*-ի դիմաց (խյ̈լիվօր, խարփէլ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կալմակալ, կասաբ, կավուրմա, կօնաղ, կութի, կուշ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *անք, րանք* մասնիկներով՝ ծիյանք, կʲէղրանք: *Կընիկʲ* բառի հոգնակին է՝ *կընթընէր*: Ոջ հոլովմամբ հանդիպել է միայն *տիրոչ* ձևը: Նկատելի է Ո հոլովման ավելի լայն ընդգրկում (անօր, տէքօր, քըվոր): Բացառականն ունի *էն* վերջավորություն (կըլխէն, կարմընջէն,

թոռէն, խացէն, քյըվորէն), ազգակցություն նշանակող որոշ բառերի դեպքում՝ *մէն* վերջավորություն (խօրմէն, մօրմէն, ախպօրմէն): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (ճըրի մէչը, ամանը /ամանի մեջ/): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տա̈շտը, վարպէտին): Անորոշ հոդը նախադաս է (մէ թաքավոր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *իմը, քյօնը, մէրը, ձէրը* ձևերը, հանդիպում են նաև *ընձի, քյէզի* ձևերը: Ցուցական դերանունները հանդես են բերում երկշարք համակարգ՝ *էտ* (այս, այդ), *էն, էտի, էնի, էտան, էնան: Ով* դերանվան դիմաց առկա է *վա̈վ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իմէն* (ինձնից), *մէրէն, իմօվ* (ինձնով), *հըմմէն, հըմմընէն, դա̈ր, դա̈նք, տա̈նք, տա̈ր, տա̈րէն, դա̈րէն, տա̈նցը, դա̈նցը, ըստա̈ղ, ընդա̈ղ, իշթա̈ր* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի անորոշ դերբայի ձևերն են՝ *իկյալ, լա̈ցէլ, տալ:* Սահմանականի ներկան կազմվում է *ս* մասնիկով ավարտվող անկատարով (իկյա̈ս էմ, լա̈ցէս էս, տաս էքյ,սիրէս էնքյ, մընաս էքյ), բացառություն է եզակի երրորդ դեմքը, որտեղ անկատարն ավարտվում է *լ*-ով (իկյա̈լ ի, լա̈ցէլ ի, տալ ի, սիրէլ ի, մընալ ի): Օժանդակ բային հաջորդելու կամ առանց օժանդակ բայ հանդես գալու դեպքերում անկատար դերբայն ունենում է *լ* կամ *լի* վերջավորություններ (յէս էմ սիրէլ, չէս մընալ, չի լա̈ցէլ, չէմ տալի, չէք իկյա̈լի, ասէլ *կամ* ասէլի /ասում է/, տուս էթա̈լի /դուրս է գնում/, պէրանն էր տընէլի): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (կյիրիր, մընացիր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ի* վերջավորություն (յէս էմ կյիրի, էրազ էմ տըսի): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (քյընած, թըխած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ի, էնքյ, էքյ, էն,* անցյալի ձևերն են՝ *էմ էր, էս էր, էր, էնքյ էր, էքյ էր, էն էր:* Էական բայի ներկայով բաղադրվող վերլուծական ձևերից, ինչպես

նաև ապառնի ժամանակաձևերից կազմվում են անցյալի համապատասխան ժամանակաձևեր՝ *էր* միավորի հավելումով (մընաս էմ էր /մնում էի/, կյառթամ էր /կարդայի/, կյիրիր էմ էր /գրել էի/, կըկյառթամ էր /կկարդայի/, կըտի կյառթամ էր /պիտի կարդայի/): Անցյալ կատարյալը եզակի առաջին դեմքում ունի *մ* հավելված (մընացիմ, խասամ, սիրիմ): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ոչ ցոյական հիմքով (սիրիր, ծակինքյ, ծախիքյ): Այս ժամանակաձևն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *սիրիր, փոխինքյ, նըստար, աբրանքյ, ծախկավ: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց: Գալ* բայի հրամայականի ձևերն են՝ *յա՛ր, յարէ՛ք:* Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըց* (զարմացըցէլ, լողցըցէլ, թըռցըցէլ, խասկըցըցէլ, փախցըցէլ): Պատճառական բայերի հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *խախցըցո՛ւ, խըմցըցո՛ւ, նըստըցըցո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է՝ *կըտի* (կըտի ասէմ, կըտի մընաս):

Խոսվածքի բառային միավորներից են՝ առատուն, առիքյ, զօ (ահա), դադդըղան (եղինջ), էլը (դարձյալ), էլչի, ընչյանքյ, թյաթման, թարթափ, թըզբէխ, թուփ, ժըխշէլ, ինէլ (ընկնել), լըխտիկյ, լօղալ (սայթաքել), խյալիվոր, խամբըրէլ, խաց ժօղօղ, խըռծիկ, խօվ (ստվեր), խօրօտ, ծառծակուկ, ծըղզալ, ծըվյաձէղ, կաթ (կաթիլ), կանօխ (վաղը), կավ (ցեխ), կարկատ (աղանձ), կըռինձ, կյէսըրար, կողնիկ (զաղտնի), կոճ (կորիզ), կոռծէլ, կուզ, կում, կուշ, կուշտը, կօլթուղ, կօկօլ, կօտօշ, ճամբախ, ճանզ, ճոչ, մառթ (ամուսին), մըռ (ցեց), միրզյամի (աներորդի), մուխ, մօղօզիկ, նյամ, ուշը էթյալ, ուռ (կուրծք), պյաժինքյ, պաղ, պյանէլ, պըշտէլ, պըսպըղան բըլոճ (լուսատտիկ), պուճուճակ, պուտ, պօպօք, սըվտյակ, վյախտ, վըռըշնէլ, տէղաշոր, տէղէլ (թունավորել), տըկլոզ, տընխս, փախկըվէլ (թաքնվել), փըթիր, փըսայվէլ (ամուսնանալ), փըստիկյ, փօղօց (աղբանոց), քարալէխէլ, քյաշ*ու*մ տալ (հայհոյել), քյաշում և այլն:

**ՄԱՅԱԿՈՎՍԿԻ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում, նախկինում՝ Շահապ: Մայակովսկի է վերանվանվել 1940 թ.: Ունի մոտ 2160 բնակիչ, որոնց նախնիները հիմնականում գաղթել են 1829-30 թթ. Սալմաստի գավառի Հիջվազ, Փայաջուկ, Հավթվան գյուղերից: Գյուղում բնակվում են նաև մոտ 40 ընտանիք եզդիներ, Սումգայիթի և Բաքվի ջարդերից մազապուրծ հայեր: Հաղորդակցվում են Խոյ-Մարաղայի բարբառի մի տարբերակով, որ կրել է Արարատյան բարբառի որոշ ազդեցություն:

Մայակովսկի գյուղի խոսվածքում դրսևորվում է *ե* երկբարբառային հնչյուն (քեռի, մեր, ծեռ, տեղ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վօ* և *յե* (վօչ, վօտ, վօր, յես, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրէխա, էրազ, օղօրմի, օղօղէլ): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ա̈ ձայնավոր (դա̈րը, իկʲա̈լ, քʲա̈նի, ա̈ղա̈թ, իշթա̈ր, թա̈րզը, գյուլա̈շ, նա̈լբա̈նդ): Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (պաժնըվել, յեռսունյօթ): Բառավերջի *ա*-ն ավելացող մասնիկներից առաջ որպես կանոն չի հնչյունափոխվում (տըղան, վըրան): Բառասկզբում ձայնեղների դիմաց առկա են խուլեր (պաժան, պան, պանակ, պացել, պէրան, կեղ, կէտին, կըլօխ, կըտնել, կօխտուկ, կօմ, կօռծ, տառնալ, տընել, տու, տուռ, տուս, ծեռ, ծի, ճառթէլ), հազվադեպ՝ շնչեղ ձայնեղներ (բ՛այց, բ՛անցըրցընել, գ՛էտին, ջ՛ա̈լել): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, հօքի, օքնել, վեռչ, առթէն, մառթ, ժօղօվուռթ, օթ, մէչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (կադվի, պադմել): Շփական *ս* բաղաձայնից առաջ բառասկզբում *պ*-ն կարող է շնչեղանալ (փըստիկ, փըսակել): Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվային հպականներ (կʲար, քʲա̈շէլ): Բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականների, նաև *նք, նգ* հնչյունակապակցությունների դիմաց կարող է դրսևորվել *յ* (բըլա̈յներ, իրեյ խատ, մէնայ տունը,

տանեյ քեզի, տէնայ վօրն ի, նըստայ կէրայ խըմանք, կայնէլ): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (վօշ մէկը, մէշկ): Երբեմն բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հընգեր, հինքը, հըմէն): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խայ, խանել, խասնել, խաստ, խատ, խէր, խէտը, խիվանդ, խըրօխպէր): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* կամ *կ̂* (ղասար, կ̂ազան): Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում բացառական հոլովն ունի *է*-ով կամ *ց*-ով վերջավորություն (կեղէն, սկըզբէն, քամկէն, տընէն, Խօյից, տախտակից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (լըցի կազանները, կեղի մէչը): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տեղը, խէրն): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ծեզի: Ով* դերանվան դիմաց առկա են *օվ, վօր* ձևերը, սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ինքը, մէզնէ, իրա* // *հիրա, հիրանց, դ̈ըրը* (նրան), *տ̈ըր* (դրա), *տ̈ըրը* (դրան), *ընդե, ըստե, ըտենց, էտ, էն, էնքան, հըմէն ինչ, վօշ մէկը* և այլն:

Խոսվածքում Ա և Ե խոնարհումներից բացի հանդիպում են նաև Ի խոնարհման դրսևորումներ (կօռծ չունիս): Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *ս*-ով ավարտվող դերբայով (իկյաս էնք, էթաս էնք, պէրէս եմ, տանէս էք, տըրէս էր, պառցըրցընէս էր): Երբ օժանդակ բայը նախորդում է դերբային, հանդես է գալիս *լ*-ով ավարտվող անկատար, որին կարող է ավելանալ նաև *ի* մասնիկը (չեմ ն̈ալի, ինչ ա իկալի, էրազի պէս եմ հիշել, չէր հավատալ, չէմ ուզէլ): Անկատարի *լ*-ով ձևը կարող է արտահայտել ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի իմաստ առանց օժանդակ բայի (առթէն մօռանալ ընգէր-մընգէրը, հինքը կըպնէլ): Գործածական են *գալ* բայի՝ *ի* հավելվածով ձևեր՝ *իկյ̈ալ,*

*իկʲաս*: Այս բայի ենթադրականի ձևերի կազմիչն է *կի* եղանակիչը (կիկʲա̈), այլ բայերինը՝ *կը*//*կ* (կանեմ, կըփախնէմ): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (կընացիր, ծառայիր, էկիր, սկըսիր, փսակիր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (հէլե, տէսե, ունէցե, նըստե): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (նըստած, կապած, սարքած, դ՛ըրած): Վաղակատար ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքի իմաստ կարող է արտահայտվել առանց օժանդակ բայի (*էկե, նըստե*՝ եկել, նստել է. *ասե*՝ ասել է): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես // իս, ի // ա, էնք, էք, էն // են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Հանդիպել է օժանդակ բայի անցյալի վերլուծական ձևի կիրառություն (չէս էր կըպնէլի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց*: Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում առկա է *մ*-ի հավելում (կընացիմ, սօվօրամ, տըվիմ, վէրցիմ): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ոչ ցոյական հիմքով (քաշիմ, կըռիմ /կտրեցի/, տուս խանիմ, քըռթիմ, մաքրիմ): Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (վօրօշիմ, տըվիմ, քաշիմ, պըսազվամ, ապրանք): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է՝ *ցըն* (խասցընել, ջըղայնացնել): Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի* // *պըդի* (պըտի էթամ, պըդի կըպնէնք):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ա̈դա̈թ, ախտըվէլ, արանք, բըլազ (արմունկ, հոգն.՝ *բըլա̈յնէր*), գյուլա̈շ կըպնել, դա̈րը (նրան, դրան), էթալ, ըշկալ, թա̈րգը տալ, իշթա̈ր, խաբար ըլել, խայ, խըրօխպէր, ծանդըր, կազան, կօխտուկ, հա (շարունակ), ման իկʲա̈լ (որոնել), մըկա, մըկավա, մօզի, յարի (ե՛կ), նա̈լ (իմանալ), նա̈լբա̈նդ, պաժան, պաժնըվել, պըսազվել, ջ՛ա̈լել (ծալել), ջահէլ, ջըղայնացընէլ, սըթըրվել, վախտ, վէրի կըլօխ, վօշ մէկը, վօտ, տա̈ր

(դրա), տǘրը (դրան), տիրապըտվել, տու մ'ըսա, տուս խանել, փǘյա (գոմ), փըռթէլ, փըսակել, փըստիկ, քամակ, քըռթէլ և այլն:

**ՄԱՐՄԱՐԻԿ** - Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Փաշի գյուղ: Մարմարիկ է վերանվանվել 1935 թ.: Ունի մոտ 700 բնակիչ, որոնց նախնիները եկել են Մուշի տարբեր գյուղերից, Բուլանըխից: Հայերից բացի՝ գյուղում բնակվում են նաև եզդիներ: Հաղորդակցման միջոցը Մշո բարբառն է:

Մարմարիկի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (շենք, իրեք, մերոնք, շոր): Միավանկ բառերի սկզբում հնդեվրոպական *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոտ, վոչ, յես, յերք, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրէխա, էրկու, օղորմի, օսկոռ, օխճար): *Որ* շաղկապի դիմաց առկա է *օր* ձևը: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ǘ ձայնավոր (ǘմի, գǘզǘր, դǘստǘ, ծախկաքǘլǘմ, միյնǘկ, մէթըքǘ, քոչǘրի, թǘզǘ, թǘռլǘն, թǘք, թǘրǘքǘմի, հǘլիմ, միզǘր, ջǘյէլ, ջǘյնǘմ, փǘրինջ, Օռդǘզլու): Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (բ՛աժնել, սօվրել, խառըընիք, տաքնալ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէս, էրէխէք, վըրէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛աժնել, բ՛ան, բ՛անջար, բ՛արօվ, բ՛ըժիշկ, գ՛ախտըվել, գ՛ալ, գ՛էլ, գ՛ըլօխ, գ՛օղնալ, գ՛օխտուլ, գ՛ոմ, դ՛էմ, դ՛ընել, դ՛ու, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛եռ, ձ՛ի, ձ՛ու, ձ՛ուն, ձ՛ըմեռ, ջ՛ախճըփան, ջ՛առթել, ջ՛ըրխոր, ջ՛օչընալ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (առթէն, բ՛օրփըսնել, խաքնել, մարաք, օքնել, օքտել, մառթ, առչ, միրք): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, ավառդել, կըդըռտել, գ՛ըռտընագ, փըրգել): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում

հպաշփականները կարող են վերածվել շփականների (վոշ թէ): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հախպուր, հառավօղ, հառէչ, հէսօր, հէրես, հէքուց, հինք, հիրիկվանից, հըմէն, հընչի, հընցնել, հուսում, հուր): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խանգուստ /հանգույց/, խալել, խանել, խառս, խասկընալ, խաստ, խավ, խատ, խաց, խաքնել, խէտ, խըմար, խըրիսա, խիվանդ, խօրօխպէր, խօրքուր, պախել, բ՛ախ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կազան, կօնախ, կարիբ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, տանք* մասնիկներով (էրէխէք, սանգէք, տըղէրք, ախպըրտանք): Խոսվածքն ունի Ոջ հոլովում (կիսուրոչ, տանտիրոջ): Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման դեպքեր (Մառտունա, թունդըրա, կընգա): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Հակօյ, Ռուբէյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (հախպըրից, տընից), հազվադեպ պատահում է նաև *է*-ով ձև (հազարէն): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (աբրէր են Ալաշկեռտ, բախճի մէչը): Որոշիչ հոդն է *ն*-ն (կէսըն), հաճախ այն կարող է բացակայել (մօռթէր են թուրքէր, Խաչիկ հաշվանդամ էր, հայեր կըսեն): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի // վիր, վին:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինք, հիրա, իրանք // հիրանք, իրանց // հիրանց, ըղըրա, ըղըրանք, ընդըրա, ընդըրանք, ընդըրանց, ըտըրա // ըդըրա, էստըրանց, ընդըրանից, ըտոնք, ընդոնք, հօնդեղ, ըստե, ըտե, ընդեն, էսենց, էտենց, էնենց // ընենց, էղենց, իրար // հիրար, հիրարից, հըմէն, հըմընին, ամէկի* և

այլն: Ստացական հոդից հետո հանդիպում է *ի* մասնիկի գործածություն (իմ գ՛ըլօխսի):

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում *են էնել, ըսել, էղնել, հըլնել, կանալ* տարբերակները: Հանդիպում են բայի Ի խոնարհման դրսևորումներ ևս (պըտի աշխատիմ, մըտնիմ, կառիս, պըտի փախիս, գ՛էլին, խասինք): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ՛ի // գ՛ը* կամ *կի* մասնիկով՝ *գ՛իքին, գ՛իկան, գ՛իկէր, գ՛ըքան, գ՛ըկա, կիտա*, մյուս բայերինը՝ *կը // կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըսենք, կէնա, կըպատմենք, կըխանին, նըստին պըլուլին կուտին, կըխանի խառնի լըցի, դ՛ընէր ծէծէր: Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, երբեմն էլ ձայնորդից առաջ դառնում է *գ՛* կամ *գ* (գ՛իշես, գէլի, գ՛ըլնի, գ՛ըլըցինք, գ՛ուզա): Գործածական են անորոշ դերբայով և *ան-* նախածանցով ձևավորված մակբայներ (անտէնալ, անգ՛ըրել): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (մօռթէր, կըղըռտէր, մեռէր, պըսակվէր, խախծէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (եղե, ունէցե, թօղե, էրե, հէլե, ըսե): Հարակատարի վերջավորությունն է *ուկ* (էկուկ, սօվրուկ, քընուկ, գ՛ըրուկ): Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող են գործածվել օժանդակ բայի և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր՝ *մըշակ են էղած* (մշակ են եղել), *մէ խատ ա թօղած* (մեկ հատ են թողել), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (հավաքված /հավաքվել են/, գ՛ացած /գնացել են/): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (սպանէցին, ըսէցին, թօղիր, բ՛էրին, բ՛ացինք): *Էնել, դ՛ընել* բայերի անցյալի հիմքում հաճախ հանդես են գալիս *էն, դ՛ըն* ձևերը՝ *փոցըղ եմ էնե* (փոցղ եմ արել), *քախծըր էնա՛* (քաղցր արա՛), *խաշ ենք դ՛ընե* (խաշ

ենք դրել), *դ՛ընէ սէլի վըրէն* (դրել է սայլի վրա): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (խառնէցիր, խըրգէցին, նըստավ, կարմըրավ, նըստի՛, ծածկա՛, խառնա՛): Ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ դրսևորվում են նաև Ե խոնարհման պարզ բայերի ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքում՝ *կէփա* (եփում է), *կէփի* (եփվում է): Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը՝ ըստ ժամանակային իմաստի, ինչպես՝ *խառսն ա կըպարա, քաղաքն ա կաշխատի, սըբաս ա կասենք, խառսնիք էր կանին, խաշ էր կըտինք:* Ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը դրվում է դերբայի վրա, ինչպես՝ *չըտարբէրէ* (չի տարբերել), *չէղէր* (չի եղել), *չեղէ* (չի եղել), *չուտէր* (չէր ուտում), մյուս դեպքերում ժխտական մասնիկը որպես կանոն դրվում է օժանդակ բայի վրա՝ *չեմ էկէ, չեն սըթըրվի, չի տամ,* երբեմն էլ՝ բայաձևի վրա՝ *չիշեմ* (չեմ հիշում), *չըսեն* (չեն ասում), *չըթըխեն* (չեն թխում): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ուց* (խաքուցել, իչուցել) կամ *ցըն* (լօղցընել, վեռչացընել): Պատճառական բայերի ներկայում և հրամայականում հանդես է գալիս Ու խոնարհիչը՝ *կըյեռցուս, քընցո՛ւ, նըստըցո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի // պըղի // բըղի* (պըտի աշխատիմ, պըտի էնենք, բըղի էթի, պըղի գ՛ի): *Էլ* շաղկապի դիմաց երբեմն հանդիպում է նաև *լէ* ձևը (էն մէ տըղէս լէ, ամէն ինչ լէ, մեր էրէխէք լէ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ (տատ), ալայլուղ (պար է), ախպէր, աղավարի, ämի, անգ՛ըրել, անգաճ, անտէնալ, անօթի, առ ու փախ, արեվ առնել, ափօ (պապ), բ՛աժնել (նոր՝ առանձին օջախ ստեղծել), բ՛ախ, բ՛արօվ խէրօվ, բախճա, բիբար, բօստան, գ՛ախտըվել, գ՛ըռտընգել, գ՛օթէցուկ, գ՛օխտուկ, դäն (ան-

գամ), դմստմ, դիվօտ (դժվար թե), դոր (ուր), էրէխէքին հիրարից չըտարբերել (հավասար աչքով նայել), ըսկի, թմզմ, թմռլմն, թմրմքմմի (պար է), թմք, թունդիր, թուփ դ՛ընել, թօ, իմալ, ինչօր (կարծես), իշկալ, իչուցել, լարել (վռնդել), լօղկըցընել, խաբար տալ, խաբար, խալի, խամ (ոչ վարժ), խանգուստ (հանգույց, գլխաշորի հանգույցը ճակատին), խաց ուտել (սնվել), խաքուցել, խէրքել, խըմար, խըռբա, խըրգել, խըրիսա, խում ու խաշ ուտել, խօ, խօրական, խօրքուր, խօրօխպէր, խօրօտ, ծախկաքմլմմ, ծիձղալ, կազան, կանամփ, կաստըրունգա, կարիբ, կարմունջ, կարօպկա (տուփ), կէրասինգա, կըդըռտել, կըռթկըռթան, կըռվըրար, կուբա, կօնախ, հազարէն մէ մառթ, հմլիմ, հախպուր, հաշվանդամ, հառավօղ (առավոտյան), հառէչ, հարիսա, հացի գ՛ունդ, հէսա, հէսօր, հէքուց, հըմէն, հիրիկուն, հուսումի տալ, հուր (ուր), հօնդեղ, ճէնջըռթալ, ճըկութ զօվընդի (պար է), ճըմուռ, ճըփճըփալ (հեղուկ մասը շատ լինել), մառթ (ամուսին), մատակ, մէ փըռթիկ, մէթըքմ , մէշօք, մըկա, մըկավա, միզմր, միյնմկ, յան, յեխպար (դիմելաբառ, երբ կինը դիմում է ամուսնու որևէ տղամարդ հարազատի), յեռլական, յեփ, յէքմ, շիրա, ուրֆանի (պար է), չաղ, չօք, պախել, պախկըվել, պըլիկ, պըլուլել, պըսակվել, պըստիկ, ջ՛ախճըփան, ջ՛աղաչ, ջ՛ըրիկ, ջ՛ոչ, ջ՛օչընալ, ջմյէլ, ջայէլ, ջմյնմմ, սաղ (ամբողջ), սանգա, սանդ, սանդի քար, սէլ, սէվանի (պար է), սըբաս, սըթըրվել, սիֆտըկել դ՛առնալ ձ՛ուն, սուրու, սօխառած, սօվրուկ (կրթված), վախտ, վըռազ, տան կառօլ, տէնալ, տըփել, փմրինջ, փըխըլվել, փօխինդ, քմլմմ, քըռչիկ, քըռչոտ, քօչ, օխճար, օղօղել, օղօրմի, օսկոռ, օքտել և այլն:

**ՄԵՂՐԱՁՈՐ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Թայչարուխ, Թեժառույք: Վերանվանվել է 1946 թ.: Ունի մոտ 2600 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30 թթ. գաղթել

է Բայազետի գավառի Արծափ գյուղից: Հաղորդակցվում են Արծափի խոսվածքով:

Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *կըլոր, խոտ, ցորեն, մեձ, վեց, խընձոր:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի դիմաց առկա է *վո,* իսկ *ե*-ի դիմաց՝ *յե* (վոճ, վոր, վոռց, յեզ, յես), բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է,* ինչպես՝ *էրգու, էրգանկ, էրինջ, օխճար, օղօրմաձիգ, բայց նաև՝ վօխչար, վոսկէ, յեռեսուն:* Մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած ӧ ձայնավոր (ӧզըզցընել, դӧռղ, հӧրուր, բէսӧմթ, իսկӧլӧ, զӧյրումӧր, միյնӧկ, օրինӧզ, լӧչӧռ, բӧրիշել, շիշӧկ, շӧշ, չӧփիկ, փէտӧկ, քӧմӧր): Մեղրաձորի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *հառսնիկ, հավկըվել, մաննիկ:* Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ դառնում է *է* (էրէխէն, թուլէն, տըղէն, տըղէս): Բառասկզբում գործառում են շնչեղ ձայնեղ բաղաձայններ (բ՛աժան, բ՛ան, բ՛անազային, գ՛ալ, գ՛առ, գ՛արի, գ՛եղ, գ՛էտին, գ՛էրընդիկ, գ՛ըլօխ, դ՛ուռ ու դ՛ուս, ջ՛ուր, ձ՛եր, ձ՛եռ): Բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց որպես կանոն գործառում են խուլեր (էտալ, յօտը, ուտանասուն, փէտӧկ, ծանօտ, Հարուտ, անկամ, հինկը, հօկի, մօրկուր, ներկեվ, մառտ, յէտէ, էկ, շտեռճ, մառտիկ, մինճեվ, քիճ, ուտիծ յօտը), երբեմն նաև՝ շնչեղ խուլեր (էթալ, հօքի, հինքը, թեվաթափ): Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (ախճիգ, աղամ, գ՛օռձակաղար, ճազաղ, հաղ, շաղ, պաղահել, պաղաշար, պըզդիգ, հասագ, օրինӧզ, կընիգ, ծաձգ, էձ, Առձըփցի, կըձել, իսկազան, մէզ, պաբ, պըզդիգ): Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի (ամէն ինշն էլ, մէշտեղ, մէշկ, վոշ մէզը, հիշնել): *Նզ* հնչյունախմբի դիմաց *յ* է առկա *կայնել* ձևում: *Հ*-ի դիմաց *ֆ* է առկա միավանկ բառերի սկզբում՝ *ո*-ից առաջ, ինչպես՝ *ֆող* (հոտ), *ֆոր* (հոր), *ֆորթ* (հորթ): Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ տեղի է ունեցել *հ*-ի

հավելում (հ̈ա̈շկ, հիշկալ, հառաղուն, հառէճ, հառու, հեռտիզ, հիրար, հիրանց, հիմանալ, հիճնել, հէկուծ, հընգնել, հընչի, հըմէն, հընգնել, հընգեր, հէրես, հէրէկ, հէսօր, հուստ, հուրիշ, հուր), այդ հավելումը կա նաև *հըռոււ* ձևում: Երբեմն հինհայերենյան *հ*-ի դիմաց հանդիպում է *խ*, ինչպես՝ *խող, խօրօխպէր:* Բառամիջում և բառավերջում *հ*-ի դիմաց հաճախ առկա է *յ*, ինչպես՝ *պայել, պայեստ, գ՛օյ:* Փոխառյալ բառերի բառասկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ* կամ *կ̂*, ինչպես՝ *կազ, կ̂ազան, կ՛օչ, կ̂ա̈րիբ, կօնախ:* Ենթադրականի *կը* եղանակիչը, միանալով բառասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛ը*՝ *գ՛ըլիմ:* Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում գործառում են նաև *կ, իկ, անիկ, դանկ* հոգնակերտներ, ինչպես՝ *մէշէկ, մառտիկ, կընանիկ, ախպըրդանկ, քըվորդանկ:* Երբեմն գործածվում են հոգնակերտ երկու մասնիկներ՝ *գոմերներ:* Ո ներքին հոլովման են ենթարկվում այլ բառեր ևս՝ *տէկօր, քըվոր:* Խոսվածքն ունի նաև Ոջ հոլովում՝ *տիրոչ, հընգերոչ, քըրոչ:* Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունները, նաև հասարակ գոյականները սեռականը կազմում են *յ*-ով՝ *Զօրօյ, Խաչօյ, աֆտօյ*: Խոսվածքում բացառականը ձևավորվում է *ծ*//*ց*-ով՝ *յանիծ, բ՛անազիծ, գ՛եղից, մանգուտյունից:* Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *գ՛ոմերներն ին, գ՛ըրկի մէճը*, բայց ավելի տարածված է այս իմաստի արտահայտությունը տրական հոլովով, ինչպես՝ *գ՛եղին ե, դ՛աշտին ե, ցանում ինք դ՛աշտէրին, դըբրօցին էնք:* Որոշյալ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (գ՛եղը, պաբըն), ձայնավորով ավարտվող բառերը կարող են ստանալ կրկնակի հոդ՝ *կընգանը:* Անորոշ հոդն ունի նախադաս կիրառություն (մէ հինգը կիլօ): *Մեկ* թվականի իմաստն արտահայտվում է *մէ* ձևով՝ *քառասունմէ:* Ցուցական դերանունները եռաշարք են (էս, էտ, էն, էսի, էդի, էնի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Հանդիպում է նաև *քե* (քեզ) կրճատ ձևը: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հինկը, հիրանք: Ով* դերանվան դիմաց առկա է *վով* ձևը, բարբա-

ռախոսները վկայում են սեռականի և տրականի *ում(ը)* ձևը: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *մենկ, հինկը, հիրա, հիրանը, հիրանք, հիրանց, ըղըրա, ըղօրը, ըղուց, ըստու, ըստուց, ընդու, ըտու, հիրար, ըստե, ըղե, ընդե, ընդեղից, ըսենց, էղենց, ընենց, հըմէն, համէկը, իմնք, քոնոնք, վորղե, դո՞ր* և այլն:

Խոսվածքում Ա, Ե խոնարհումներին զուգահեռ դրսևորվում է նաև Ի խոնարհումը՝ *ունիմ, չունիս, նըստինք* և այլն: Սահմանականի ներկան և անցյալ կատարյալը ձևավորվում են *ըմ // ում* վերջավորություն ունեցող անկատար դերբայով (անըմ, պայըմ, մօռթըմ, նըստըմ, ուղըմ, բ՛առնում, կըձում, դ՛ընում, քըշըմ, փօխըմ): *Գալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալըմ // գ՛ալում, տալըմ // տալում:* Հանդիպում է *գալ* բայի՝ ենթադրական ապառնու *գ՛ըկա* ձևը: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (գ՛ընացէր, աշխադէր, տէսէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (գ՛ընացե, շարե, նըկարե, քըցե, փախծըրե): Հարակատար դերբայն ունի *ուզ* վերջավորություն՝ *նըստուզ, մեռուզ, կայնուզ*, ընթացակցականը՝ *ուն* վերջավորություն՝ *հըլնէլուն:* Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքում զուգահեռաբար գործածական է *աձ // ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ օժանդակ բայը կարող է գործածվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով (դ՛ըրաձ ե՝ դրել են, վեռչերս են մեռաձ՝ վերջերս են մեռել, փախծըրաձ են՝ փախցրել են), կարող է և չգործածվել՝ *ասաձ, էգաձ* (ասել են, եկել են): Ուշագրավ է եզակի թվի երրորդ դեմքում էական բայի *ե* ձևը, որին զուգահեռ գործածվում են նաև *է* և *ա* ձևերը: Ընդհանրապես, այս բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, է // ե // ա* (էտըմ է, հէլեր ե, վովն ա)*, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չե // չէ, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *համօզէցինք, չասէցին, ըսկըսէցինք, ասէծի, տըվէցինք, խըմէծինկ, ասի, քըցինք, բ՛էրին, տըվի, արինք, կախի* և այլն: *Գնալ,*

*մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընած // գ՛ աց, մընած,* իսկ *լինել* բայինը՝ *իլ // իիլ* (իլավ, իիլանք, իիլէր են): Ե խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալում ունեն ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններ՝ *քըցինք, միջամըտէցին, քըշեց, թապավ, կայնավ, նըստանք:* Այդպես նաև ըղձական (նաև ենթադրական և հարկադրական) ապառնին եզակի երրորդ դեմքում, ինչպես և եզակի հրամայականը ունեն *ե // է* վերջավորություն ներգործական բայերի դեպքում՝ *խըմե* (խմի), *չուտե* (չուտի), *կըքըցե* (կզցի), *քըցէ* (զցի), *ասե* (ասի), *անջաղէ՛* (անջատի՛ր), *քաշէ՛* (քաշի՛ր), *ի* վերջավորություն՝ չեզոք սեռի բայերի համար՝ *ուռի* (ուռչի), *նըստի* (նստի), *նըստի՛* (նստի՛ր): Ըղձական անցյալի ապառնին (նաև դրանից կազմվող ենթադրական ու հարկադրական եղանակների անցյալի ապառնիները) ունի վերլուծական ձևեր՝ *ջ՛ըրէր ինք* (ջրեինք), *էտէր ինք* (գնայինք), *պըղի էթէր ի* (պիտի գնայի): Պատճառական ածանցն է *ցըն* (ծըն)՝ *ӧզըզցընել, նըստըցընել, հիճըցընել:* Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն՝ *խախծըրա՛, կորցըրա՛,* բայց հանդիպում է նաև *ու* վերջավորությամբ ձև՝ *լօխծըրո՛ւ:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Կան կառույցներ, որոնցում ենթական արտահայտվում է տրական հոլովով, ինչպես՝ *Էս մեր հարէվանին ունէր մէ հաղ լավ սիրուն ախճիգ:*

Խոսվածքի բառային միավորներից են՝ ӧզըզցընել, ապալթապալ, արաղ, արան, բ՛աժան, բӱրիշել, բէսӧմթ, բուռում, բօյէբօյ, գ՛էրընդիկ, գ՛ըլխըվեր, գ՛ըլօխ, գ՛իշերանօվ, դ՛ուռ ու դ՛ուս, դӧռդ, դար ու դաշտ, դըզել, դըռըցընել, դըրբ, դիվեր (դեպի վեր), դուզ, զӧյրումӧր, էրգանկ, էրգու հարգանի, էրինջ, թապել (գալ), թեվաթապ, թօզ ու դուման, թօրօն, ժէշտ, ինշվորայա, իսկӧլӧ, լӧչӧռ, լը, լօխծընել, լօջըցընել, խախծընել, խարատվել (տաքանալ), խընօցի, խոտ քաղել, ծանդըր, կ՛ӧրիբ, կ՛օչ, կազ, կազան, կայնել, կանալ, կառաֆաղ, կաստըրունգա, կըլոր մէ ամիս, կըջուջ, կիսուր, կոխըռճել, կուբա ծաձգ, կօլխօզ նախակա, կօլօտիգ, կօ-

նախ, համէկը, հանել փըռել արեվի հէրեւ (բոլոր հանգուցյալներին հայհոյել), հա̈շկ, հառադունը, հառավնօվ, հառու, հառսնիք, հարէ՛, հեռտիգ, հէքուց, հէքսի հառավնօվ, հըմէն, հընչի, հիշկալ, հիշնել, հիշնէլուն խետ, հուշտ անել, հուստ, հօրիկ, ձ՛եռի վոտից հընգնել, ղըրկել, ճանջ (մեղու), ճիժ, մալատիրկա, մանդըրունք, մաննիկ, մառթ առնել, մեձ, մէշա̈, մէշտեղ, միս մոռթել, մոզիկ, մսէ կազան, յան, յաշ, յելիվեր, յուպկա, նամառդ, շանվոռթու թուլա, շա̈շ, շըլանգ, շիշա̈կ, շուղուլ, շուստըրի, շտեռճ, ումբըր, չա̈փիկ, չուր հիմի, չօլ, չօկել, պարէպար, պադաշար, պադօճօրկ, պախկըվել, պաղ, պըզդիգ, պիսօկ, պոչկապ (խիճ), պօլի վոսկի, ջ՛օվ, ջէբ, ջէջիմ, ջըղայնանալ, սալդադ, սալըխն առնել, սաղ, սանդըր, սըռը տալ (ցրտահարվել), սիգնալ, վախտ, վայթէ, վիլկ, վոնց, վոռց, վով, տըփըսվել, տօչնի, փեռթ, քա̈մա̈ր, քըռֆել, քուռսի, քուֆըր-քաֆար, օխճար, օղօրմաձիգ, օրազան, ֆըռալ, ֆող, ֆոռթ, ֆոր և այլն:

**ՄՐԳԱՇԵՆ**[137] – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1960 թ.: Ունի մոտ 2100 բնակիչ, որոնք 20-րդ դարի երկրորդ կեսին Դովրի գյուղից այստեղ եկածներն ու նրանց սերունդներն են: Դովրեցիների նախնիները եկել են Արագյուղից և ծագումով Արծափից են: Մրգաշենում հաղորդակցվում են առավելաբար Արծափի խոսվածքով:

Մրգաշենի խոսվածքն ունի *ե* և *ո* երկբարբառային հնչյուններ (ձ՛եվ, վեծ, նեռս, չոր, թոռ, քավոր, չոռս, տեղաշոր): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի դիմաց առկա է *վո* կամ վօ (վոր//վօր, վօծ), *ե*-ի դիմաց՝ *յե* (յես, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է* (օղօրմի, օխճար, էրկու,

---

[137] Մրգաշենի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1980 թ. լրացված թիվ 78 տետրում, առկա են նաև բնակավայրում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

էրնէկ, էրգատ), բայց նաև՝ *յէգէղէցի, վօճիլ:* Գործածական է *էը* արտասանությամբ հնչյուն, որը *է* երկբարբառային հնչյունի մի տարբերակն է և գործառում է իբրև էական բայի եզակի երրորդ դեմքի ձև: Խոսվածքում սակավաթիվ փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ӓ* ձայնավոր, ինչպես՝ *լӓլ, գիվӓ, նօկʹӓր, շիշӓկ, քӓվӓռցի* և այլն: Մրգաշենի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *հավըլնալ, գ՛օղնալ, կարգըղան* և այլն: Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի՝ տըղէս, վըրէն, էրէխէկ: Խոսվածքը բառասկզբում ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛ան, բ՛աց, բ՛ընազվել, բ՛էրել, բ՛էրան, բ՛ըժիշկ, գ՛ալ, գ՛իրկ, գ՛ըլօխ, դ՛եղին, դ՛ընել, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛եռկ, ձ՛եվ, ձ՛եր, ջ՛ուր* և այլն: Բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց որպես կանոն գործառում են խուլեր՝ *աղօտկ, ամօտ, հօկի, էտալ, կըտել, յօտը, ուտը, մառտ, կառտալ, հավակույտ, թապել, խապել, ինճ, հիճնել, քիճ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *Աշտարագ, աբրել, զաղդագան, մըգա, կօբիդ, փէդ, հայրիգ, փըրգիճ* և այլն: Երբեմն նկատելի է հետնալեզվային հպականների քմային արտասանություն, ինչպես՝ *նօքʹӓր, սարքʹել: Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է դրսևորվում *կայնել* ձևում: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի, ինչպես՝ *հӓշկ, քիշ մընաց, ջ՛աղաշներ, լըվասկ, ծասկել* և այլն: Բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց գործածվում է *յ*, ինչպես՝ *պայել, գ՛այ, գ՛օյ, սայման*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հանգաճ, հառէչ, հառտ, հափ, հէսօր, հէրես, հըմէն, հիմանալ, հիճնել, հիրանց, հուրիշ* և այլն: Երբեմն *հ*-ի դիմաց գործածվում է *խ*, ինչպես՝ *խէտ, խաց, խազալ, խող*: *Հո*-ի դիմաց *ֆո* // *ֆօ* է առկա միավանկ բառերի սկզբում, ինչպես՝ *ֆոռթ, ֆոտ, ֆօր:* Փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ*, ինչպես՝ *կազան, կասաբ, կօնախ, կօճաղ*: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում գործառում են նաև *կ, էրկ, իկ, անիկ, անկ, ղանկ* հոգնակերտներ, ինչպես՝ *քյավյառցիկ, տըղէրկ, մառտիկ, կընանիկ, իշանկ, գ՛իլանկ, ձ՛իյանկ, իձանկ, ախպըրղանկ, քըվօրղանկ:* Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, ինչպես նաև հասարակ անունների սեռականը կարող է կազմվել *յ*-ով, ինչպես՝ *Հէնղօյ, աֆտօյ:* Խոսվածքում բացառականը ձևավորվում է *ծ* // *ց*-ով՝ *սարիծ, տիրոչից:* Ներգոյականի իմաստը կարող է արտահայտվել հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (քաղակըն է, աֆտօյ մէճը, խըցէրի մէճը), *շատ տարածված* է այս իմաստի արտահայտությունը տրական հոլովով, ինչպես՝ *ղըբրօցին է, բանգին ա աշխատըմ:* Հատուկ տեղանունների և որոշ այլ բառերի սեռականը ձևավորվում է Ա հոլովիչով, ինչպես՝ *Դօվրիյա, Հէրէվնա, Գօրիսա*, այդպես նաև բացառական հոլովը՝ *Վանա, Աբարանա:* Ոչ հոլովմամբ հանդիպել է *տիրոչ* ձևը, Ո ներքին հոլովմամբ՝ նաև *տէկօր, քըվօր* ձևերը: Գործածական են որոշիչ հոդի երկու տարբերակներն էլ (գ՛եղը, տակըն): Անորոշ հոդը նախադաս է գործածվում (մէ մառտ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Գործածական է կրճատ *քե* ձևը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էդի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վօվ* ձևը, սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հինկը, հիրա, հիրանից, հիրանց, ըտու, ըստոնք, ըդոնկ, ըսենց, ըղենց, ըսենց, ընենց, այսենց, ընդեղից, ըստե, ընդե, էսքան, հիրար, հըմէն* և այլն:

Խոսվածքում *լինել* և *ելնել* բայերի դիմաց գործառում է *հըլնել* ձևը (քավոր ենք հէլե – հէլա գ՛ընացի): Բայի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերն արտահայտվում են անկատար դերբայի միջոցով (էթում եմ, փօրըմ էր, հարգըմ եմ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում* // *գ՛ալըմ, լյալըմ, տալըմ:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (հասցըրէր, էկէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջա-

վորություն (վատ եմ ըզգածե, բաղ եմ բ՛ացե, չեմ արե): Վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ՝ *մեռե* (մեռել է): Հարակատարն ունի *ուզ, աձ* վերջավորություններ (քընուզ, կըպաձ): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, է // ե*ᵖ *// ա, ենք, էք, են,* անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *աղօտէծի, քանդէցին, փօխի, սիրին* և այլն: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի սովորական ձևերն են՝ *գ՛ընաց // գ՛ընած, մընաց // մընած:* Ե խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալում և եզակի հրամայականում ունենում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *սիրի, մաղին, պարզանք, նըստա, լըսա՛, նըստի՛:* Ըղձական (նաև ենթադրական և հարկադրական) եղանակի անցյալի ապառնին ունի վերլուծական ձև՝ *սարկէր ին* (սարքեին), *ծընգի գ՛ար ին* (ծնկի գային), *վառէր ին* (վառեին), *ուտէր իք* (ուտեիք): Պատճառական ածանցն է՝ *ծըն // ցըն* (բօպկըցընել, հիճըծընել): Հարկադրական եղանակը կազմվում է *պըղի* եղանակիչով՝ *պըղի ուզեմ:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր:

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ (մայրիկ), ակուշկա, աղօտկ անել, ամանչել, այսենց (այ այսպես), անա (մայրիկ), բ՛էրել մըտէն (հիշել), բալա, բաղ, բօստան, գ՛այ (գահ՝ ժամանակ), գ՛ըլօխ, գիվյ, դ՛ուռ բ՛ացօղ (այցելող, օգնող), դ՛օխպըռտալ, դոր (ուր), դօշ, էտալ, էրնէկ, ընգընել տեղաշոր, ժամ (եկեղեցի), իշի յօնջա, լը (ապա մի …), խարաբ, ծընգի գ՛ալ, կայնել, կանթապի ծաղիգ, կառնալ (կարողանալ), կէսրանք, կօճաղ, կօնախ, հանգաճ, հաշտ (նախասրահ), հառաջ // հառէճ, հառէչվա, հավող, հարուր, հէղեվն անել (շրջվել), հէսա, հէսօր, հըմէն, հըմի, հընչի, հընցնել, հիճըծընել, հիշկալ, հօղա, հօրօխպէր, ճամփու դ՛ընել, ճիժ, մառտ (ամուսին), մէ բ՛էրան (մի անգամ), մըզա, մըխկուտ, միյնակ, մուռ, մօզի, յախալամիշ անել, յան, նեղվել (սրտնեղել), նըղդել (կառավարել), նօկʲար // նօքʲար, շիշակ, ուշը էտալ (շատ սիրել),

չայի հափներ, չոր հա̈շկօվ (առանց վիշտ տեսնելու), չօլախ, չօկել (ծնկի իջնել), պապական (պապին պատկանող, պապերից եկող), պաօրա տօլմա, պըղինձ (մեծ կաթսա), պըստի, ջ՛աղաշներ, ջ՛ուրը բ՛էրել (արժեք չունենալ), ջըվալ, սաղ, վօճ (ոչ), վօշ մէ, տէնալ, քախնել (քաղհանել), քէլալ, քուչա, օտաղ, ֆըլան բէֆան, ֆըլան ֆըստան, ֆոռթ (հորթ), ֆոտ (հոտ), ֆօր (հոր) և այլն:

**ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1965-1978 թթ.՝ իբրև ակադեմիական գիտաշխատողների բանավան, 1982 թ. անվանվել է Նոր Արտամետ, 1995 թ. դարձել է գյուղ և մտել Կոտայքի մարզի մեջ: Ունի մոտ 1100-ից ավելի բնակիչ, որոնք ծագումով ներկայացնում են բազում տարածաշրջաններ՝ Մարտունի, Ապարան, Գավառ, Գյումրի, Վարդենիս, Ախալքալաք, Գետաշեն և այլն: Ընդհանուր հաղորդակցման միջոցը խոսակցական հայերենն է՝ սովորաբար խոսողի ծագումը հուշող տարրերով: Բնակիչների վկայությամբ՝ ընտանիքներում դեռևս այս կամ այն չափով գործածական են մայրենի խոսվածքները:

**ՆՈՐ ԳԵՂԻ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Բազմավան, Ճաթղռան: Ունի մոտ 6500 բնակիչ: Գյուղում բնակվում են նաև եզդիներ: Բնակիչների վկայությամբ՝ իրենց նախնիները եկել են տարբեր վայրերից՝ Կարսից, Թալինից, Գանձակից, Շամխորից, այլ վայրերից: Կան նաև հայրենադարձներ: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով:

**ՆՈՐ ԳՅՈՒՂ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Թազագյուղ, Նորագյուղ: Հիմնադրել են Խոյից գաղթածները 1828 թ.: Ունի մոտ 1600 բնակիչ: Հաղորդակցվում են Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառների տարրեր զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Նոր Գյուղի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *խոոթ, վագոն, իրեք, թեվ:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոչ, վոտ, յես, յերք), բազմավանկ բառերի սկզբում՝ *o* և *է* (էրկու, էրէխա, օղօրմի): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ü ձայնավոր, ինչպես՝ *üլուր, üռüչ, գ'üզüր, դէյրü, զüտ, լüրել, հüրիսü, տüռնալ, թüզü, նüֆüր* և այլն: Շեշտանախորդ վանկում ձայնավորը կարող է սղվել (խըրօխպէր, քառսունք): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում պահպանվում է (փէսաս, տըղաս) կամ վերածվում *է*-ի (էրէխէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը (պան, պէրել, պըռնել, կեղ, կըլօխ, կընալ, կոռծ, տüռնալ, պէրել, ճուր, ճոչ, ճօկնըրվել, ծեռ, ծերոնք, ծի): Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր (անքամ, խաքնել), խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրուստ, Ավէդիս): Հանդիպում է հետնալեզվային հպականների քմայնացում՝ *հօք'ի, գ'üզüր, ք'üնի:* Բառասկզբի ձայնավորից առաջ հանդիպում է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հավէլի, հիրես, հընչի* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում, ինչպես՝ խալել, խանել, խաց, խառս, խառնիս, խասկընալ, խետ, խող, տասխինգ, պախել և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, անիք, էրք* մասնիկներով՝ *էրէխէք, կընանիք, տըղէրք:* Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման որոշ դեպքեր՝ *Քüնքüնա, թունդըրա*: Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով՝ Անոյ: Բացառականն ունի ոչ միայն *ց*-ով վերջավորություն (տընից, տըսից, մեզնից), այլ նաև *է* (ն) -ով ձևեր՝ *պատէն, կյանքէն, ընձընէ, ընդüրէն:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝

*տունը, ճըրի մէչը:* Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տունը, բըրիգադիրն): Անորոշ հոդը նախադաս է՝ *մէ մարթ:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ծեզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ինքը, իրա, իրան, իրանց, ըստըրա // ստըրա, ըտըրա, ըստնց, ընդան, ըսենց, ըտենց, ընենց, էտենց, այսենց, այտենց, ըստե, ընդե, փորդուց* և այլն:

Խոսվածքում Ե և Ա խոնարհումների հետ հանդիպում են նաև Ի խոնարհման դրսևորումներ՝ *ունիս*: Ներկա ժամանակաձևը կազմվում է անկատար դերբայով (անըմ, ըստիբըմ, հանըմ, *բայց նաև*՝ էթալ եմ /գնում եմ/, լավ ա ասել /լավ է ասում/, յերքել էր /երգում էր/): *Գալ, լալ, տալ* բայերի ներկայի ձևերից են՝ *տալիս եմ, գ՛ալ եմ, գ՛ալիս եմ* և այլն: Հանդիպում են *գալ* բայի՝ *ի* նախահավելվածով ձևեր՝ *իկ՛ա* (գա), *իկ՛ամ* (գամ): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (աշխատիր, էկիր, պէրիր), օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *ե* վերջավորություն (կընիկ էր առե, յես եմ տըսե): Վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ՝ *վէրցե կընացե* (վերցրել գնացել է): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Անցյալի ձևերի եզակի առաջին դեմքում առկա է *մ*-ի հավելում (տմռցամ էկամ, էլամ ասիմ, կընացիմ, կանչիմ, կընացիր իմ, չիմ լըվացե): Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (մըտցընել, ճոչըցընել): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի էթաս, պըտի կ՛յաս):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ապուր (սպաս), բալա, բօքոն, զօյ (զոհ), դէյրմ, զմտ (ինչ-որ բան), զօռօվ, էն վախտ, էրէխա, թազմ, թութուն, թունդիր, լմրել (քշել), լը (դեռ), խաբար

տալ (մատնել), խալես խափանվես (անեծք է), խառնիս, խացատուն, խէրու, խըրկել, խինութվա, ծեռ ու վոտօվ խօսալ (շարժումներով հասկացնել), կէրսար, կըլօխ, կընիկ առնել, կըրասինգա, հϋրիսϋ, հընչի, հիրեւ, ճըմուռ, ճոչ, ճոչընալ, ճօկնըվել, մանդըր, մըկա, մըկավա, մընալ ուրիշի ումուդին, մըշըրել (փշրել, մանրել), մըռճիկ խանել, մուխ, նանա աւել (օրորոցային երգելով քնեցնել), նϋֆϋր, շըթիլ, չօք, պըստիկ, պըրիմօս, ջահէլ, սուս փուս (անաղմուկ), վո՞րդուց, տէքօրկընիկ, օթաղ, օցէրի խետ ճուր խըմել (հարմարվել ծանր միջավայրին) և այլն:

**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1965 թ.: Բնակիչները եկել են Ախալքալաքից, Ապարանից, Մարտունուց, այլ վայրերից: Ունի մոտ 1800 բնակիչ: Ըստ բնակիչների վկայության՝ գյուղացիների մեծ մասը ախալքալաքցիներ ու մարտունեցիներ են, կան նաև սասունցիներ: Գյուղը չունի քիչ թե շատ միասնական խոսվածք, տարբեր տեղերից եկածները (առավելաբար՝ ավագ և միջին սերնդի ներկայացուցիչները) լավ են պահպանել իրենց մայրենի խոսվածքները, որոնցից առավել տարածված են Մշո և Կարնո բարբառները ներկայացնողները:

Մշո բարբառի Արծկեի խոսվածքի մի տարբերակով է խոսում բնակիչների մի մասը: Նրանց վկայությամբ՝ իրենց նախնիները եկել են «Մըշվա Բ՛աթնոց գ՛ավառից»[138]: Այս խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *գ՛եղ, մենք, իրեք, նոր, խոզ, բ՛անվոր:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոչ, վոռթ, յես, յեզ), բացառություն է *ոռ* շաղկապը, որն ունի *օռ* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում հիշյալ միավորների

138 Ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (հեղ. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., հ. 1, էջ 549)՝ Բաթնոցը գավառակ էր Վանի նահանգի Արծկեի գավառում: 20-րդ դարի սկզբին ուներ 8 հայաբնակ գյուղ՝ 308 տնտեսությունով: 1915-18 թթ. գավառակն ամբողջապես հայաթափվել է:

դիմաց առկա են *օ* և *է* (օխճար, օրօճալ, էրինջ, էրկանք): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö ձայնավոր, ինչպես՝ *բöխտ, զöրկել, լöլ, չöրի* (մինչև), *ֆöյմ* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (թալնել, ժօղվել, քառսուն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛այց, բ՛ըռնել, գ՛եղ, գ՛ըրել, գ՛օղություն, դ՛ատել, դ՛ու, ձ՛ի): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (ծընընթական, մառթ, մէչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (բանզ, մառդունէցի, պադմել, դըբռօց, ընդանիք): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում, ինչպես՝ *հöռու, հöռէչ, հընչի, հիրա, հիրար, հիրկուն, հուրիշ* և այլն: Հնհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խա, խատ, խարիր, խազալ, խամ, պախելն այլն): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ,* ինչպես՝ *կափաղ, կայիմ, կարիբ*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, տիք, վանք* մասնիկներով՝ *գ՛եղացիք, ախպըրտիք, կընգըտիք, իշվանք, գ՛իլվանք, իծվանք:* Հոգնակի գոյականները սովորաբար ենթարկվում են Ու հոլովման՝ *հայէրու, թըվէրու* և այլն: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (գ՛եղից, գ՛ինուց), հազվադեպ պատահում է նաև *է*-ով ձև՝ *ընձընէ:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ՛եղը, աշխըրքի մէչ:* Որոշիչ հոդը որպես կանոն *ն*-ն է (մառթըն դ՛ու յես, էս գ՛եղըն): Հանդիպել է անորոշ հոդի հետադաս կիրառություն՝ *վախտըմ:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վռն* ձևը: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *մեր, հիրա, ամէք*

*մառթ, հուրիշ, հիրար, էղպէս, էստեղ, էնղեղ, իմալ, քանի, հօրի* և այլն:

Խոսվածքում Ի խոնարհիմամբ կարող են արտահայտվել նաև ներգործական բայերը (չըտէնիս, ունիս, չըտանին), սակայն չեզոք ու կրավորական սեռերի բայերը համապատասխան ձևերում միշտ ունենում են *ի* խոնարհիչ (մեռիմ, կըյենթարգվինք): Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հըլնել, կըռնալ* տարբերակները: Բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը // կ* մասնիկով՝ *կըտանիս, կէնի:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (աշխատէր, մէնձըցէր, էկէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (մենք ենք էկե): Վերջին ձևը վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ կարող է արտահայտել նաև առանց օժանդակ բայի (կօրե /կորել է/): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն՝ *գ՛ըրուկ, քընուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են:* Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *գ՛ըրա՛, քընի՛:* Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* ձևը, ինչպես՝ *հընչի յա կըխօսամ, հիրա լէզվօվ ա կըխօսա, տակ ա կըքանղեն:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական բայերի ներկայում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըխառցու:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի գ՛ըրեմ): Խոսվածքի բառային միավորներից են՝ ամէք մառթ (ամեն մեկը), գ՛ըրակետ, թամամ, իմալ, խա, խատ, խարիր, ծընընթական (ծննդյան վկայական), կըռնալ, հընչի, հիրար բ՛ըռնել (աջակցել), հուրիշ, հօրի, մէնձընալ, մըկա, չա՛րի մըկա (մինչև այժմ), վախտ, փարա, օյաղ և այլն:

Նոր Երզնկայի բնակիչների մի ստվար հատված էլ կենդանի է պահում Կարնո բարբառի Ախալքալաքի խոսվածքը: Ախալքալաքի Կումուրդո գյուղից 1970-ականներին եկածների խոսքում

հազվադեպ դրսևորվում է *ե* երկբարբառային հնչյուն՝ *մեխք, իրեք, նեղ:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօչ, վօղք, յէս, յէզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկու, էրթալ, էրէխա, օչխար, օսկօռ): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (սօվրէլ, հարսնիք): Երբեմն ձայնավորների ներդաշնակության օրենքի գործողությամբ հանդիպում է *ը>ա//ա̈* անցում՝ *ջ՛ավալ* (>ջ՛ըվալ), *վա̈րացի* (> վըրացի), *նակար* (> նըկար), *վա̈րա* (>վըրա): Բառավերջի *ա* ձայնավորը ավելացող բաղաձայնից առաջ կարող է պահպանվել կամ դառնալ *է* (էրէխէք, տըղաք): Նախնական *այ* երկբարբառի դիմաց խոսվածքն ունի *ա*, ինչպես՝ *աօնք, անքան, աստէղ, ահզա, ալ:* Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց տարբեր որակի հնչյունների գործածությունը, չնայած նկատելի է շնչեղ ձայնեղների առավել գործածականությունը (քընալ, պան, պանալ, բ՛անակ, բ՛արէկամ, բ՛էրէլ, գ՛արի, գ՛եղ, ջ՛առթէլ, ջ՛ավալ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (մէչ, ջ՛առթէլ, տէքէրկին): Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ (աբրէլ, ախճիգ, կընիգ, ծէձէլ, պուջուր, պաբըս, հօդադ, ուղէլ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակի գոյականները խոսվածքում սովորաբար ենթարկվում են Ու հոլովման՝ *հարէվաննէրու:* Հանդիպում են նաև հոգնակի սեռականի *օց* վերջավորությամբ ձևեր՝ *մառթօց:* Բացառականն ունի *էն*-ով վերջավորություն (մըչէն, գ՛եղէն): Անձերի անունների գործիական հոլովը հանդիպում է *մօվ* վերջավորությամբ՝ *ախպօրմօվ:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *տունը, հէրըս բ՛անած էր, թընդիրի մէչըն:* Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով՝ *տունը, քէռուն:* Որոշիչ հոդ ստանում է նաև հատկացուցիչը՝ *հարէվաննէրուն ախճըգնէրը, ախպօրը կընիկը,*

*քէոուն կընիգը:* Անորոշ հոդը ունի և՛ նախադաս, և՛ հետադաս կիրառություններ (մէ չօռըմ, մէ բ՛ան, ավուր մը): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ՝ *աս, աղ, ան:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *մէնք, իրէնց, աաօնք, էղօնք, անօնք, աաիզա, անքան, աստէղ, ամէնիս, ինչ, ուրտէղ* և այլն:

Ե և Ա խոնարհումներից բացի՝ խոսվածքն ունի նաև Ի խոնարհում՝ *չունիմ, ըսիմ:* Խոսվածքում *անել, աաել, լինել* բայերի դիմաց գործածվում են *էնէլ, ըսել, էղնէլ* տարբերակները: Բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը* կամ *զը* մասնիկներով, որոնցից առաջինը հանդիպում է բայից թե՛ առաջ, թե՛ հետո (կաշէր, կըսէր, կուղէինք, կըցանէինք, ցանէինք կը), իսկ երկրորդը հանդես է գալիս միայն բայից հետո (ծէձէր զը, ջ՛առթէր զը): *Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛*, ինչպես՝ *գ՛ավաքէինք:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով, նաև *լ*-ով վերջավորություններ՝ *կախվէր ինք, փախծըրիլ է*: Օժանդակ բային հաջորդելու դեպքում վաղակատարի *ր* // *լ* մասնիկը կարող է ընկնել կամ պահպանվել՝ *մէ բ՛ան չէ ըսէ, ընձի չի ըսէլ, բ՛ան էր էրէ*: Հարակատար դերբայն ունի *աձ* վերջավորություն՝ *նըստաձ:* Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, է, էնք, էք, էն:* Օժանդակ բայի ժխտական խոնարհման երրորդ դեմքի եզակին ունի *չի* կամ *չէ* ձևերը՝ *չի ըսէլ* // *չէ ըսէլ:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով՝ *քաշէցին, բ՛էրինք:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *փախուցինք, բ՛էրինք, աշխադա, աշխատանք:* Հարկադրականի եղանակիչն է *պըդի* (պըդի չապրին): Խոսվածքի բառային միավորներից են՝ աշէլ, ավուր, թ՜ազբեխ, թընդիր, թընդիրի մէչըն կախվէլ (նստել թոնրի շուրթին և ոտքերը կախել թոնրի մեջ), խաբար, կապ էնէլ (խուրձ կապել), կէրսանք, հօղաղ, մանչ,

ուրտէղ, չօբան, չօռ (վատ խոսք), պուճուր // պուջուր, ջ՛ավալ (մեծ պարկ), տէքէրկին, քընալ (գնալ), քըրվէլ և այլն:

**ՆՈՐ ՀԱՃԸՆ** – Քաղաք Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է իբրև բանավան: Այնուհետև դարձել է քաղաքատիպ ավան, քաղաք: 1953 թվականից սկսած՝ բնակեցվել է երկրի տարբեր տարածաշրջաններից եկած ընտանիքներով: Բազմաթիվ ընտանիքներ բռնագաղթել են Ադրբեջանից: Քաղաքում ապրում են նաև այլ ազգերի սակավաթիվ ներկայացուցիչներ՝ ռուսներ, ասորիներ, եզդիներ: Քաղաքն ունի մոտ 11 700 բնակիչ: Ընդհանրապես հաղորդակցվում են խոսակցական լեզվով, չնայած ընտանիքներում դեռևս որոշ չափով գործածվում են մայրենի խոսվածքները:

**ՈՂՋԱԲԵՐԴ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Ունի մոտ 950 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Վանից: Հաղորդակցվում են Վանի և Արարատյան բարբառների տարրեր զուգակցող խառը տիպի խոսվածքով:

Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *մեր, մեծ, ցեղ, շընորք, կըթվոր, չոռս:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոչ, վոր, վոտ, յես, յերք), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրէխա, էրկու, օղօրմի), բայց նաև՝ *վոսկոռ, վոչիլ:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ö ձայնավոր (տöռնալ, Գöռնի, թöթ, թöզö, հöյöթ, հէքʲöթ, չöնչ, քʲöսöր): Բառասկզբի վանկերում երբեմն նկատելի է *ա* ձայնավորի թույլ շրթնայնացում: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (պալնիս, ճանչընալ, խասկընալ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, տըղէն, վըրէտ): Բառասկզբում հազվադեպ հանդիպում են շնչեղ ձայնեղներ (բ՛ըժիշկ, բ՛այց, գ՛ըթէլ), իսկ օրինաչափ է ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը

(պան, պացել, պառցել, ծէն, ծեռ, ծիւ, ծուկ, ծըմէրուկ, կʲա̈լ, կʲառ, կէլ, կըլօխ, կըրիչ, կոռծ, կունդ, տա̈ռնալ, տեղ, տընել, տու, տուռ, տուս, պիրել, ճուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (մառթ, առաչի, անքամ, յերք): Նկատելի է հետնալեզվային պայթականների քմայնացած արտասանություն (մենքʲ, կʲա̈լ, կʲառ, քʲա̈սա̈ր, քʲուլ, կընգʲա̈): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Բառասկզբի ձայնավորից առաջ երբեմն առկա է *h*-ի հավելում (հառավոտ, հառէչ, հըմէն): Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խա, խանել, խառս, խավ, խէտ, խող, խօվ, խառնիս, պախել): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կօչաղ, կօնախ, կավուրմա): Շեշտը վերջնավանկային է:

Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա վերջադրական հոլովման՝ *Գա̈ռնիյա:* Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (ծեռից, մօրից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *սարն ենք ապրե, կեղի մէչ:* Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (յերքը, սարն), բայց երբեմն հոդ չի գործածվում (ծեռ կօխում ա ջէր): Անորոշ հոդը նախադաս է (մէ պան): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ծեզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *ում, ումը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձընից, ընդոր, իրա, ըտըրա, ընդըրան, ըտենց, ընենց, էտքան, ընդեղ // ընդե, ամէն ինչ, հըմէնին, ուրուշ, վոչ մէկին, վորդե* և այլն:

Խոսվածքում *գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կʲա̈լիս, տալիս* (տալի) ձևերով, մյուս բայերինը՝ *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (անում եմ, չենք խօսում, յօլա չիմ էթում): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջա-

վորություն (մընացիր, սիրիր, առիր, ասիր, պըսակիր, փոխիր, յերքէր, էլէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (չեմ տէսե, կօվ եմ կըթե, չեմ կընացե, ման ենք իկե, կըթվոր ենք իլե): Հարակատար դերբայը հանդիպում է *ուկ* և *ած* վերջավորություններով (քընուկ, նըստած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքն ունենում է *մ* հավելված (ունիմ /ունեի/, չուզիմ /չուզեցի/, չիմ փախե /չէի փախել/, առամ /առա/, ամուսնացամ, էկամ, կընացիմ, տարամ): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական բայերի հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *լօղցըրո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի ասեմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ազաբ, արօղ տըրօղ, գ՛ըթէլ, դոր, դօշ, զաղա, զօռբա, ընչի, թӧզӧ , թӧփ, թունդիր, խա, խառնիս, խէտ, խըրկել (ուղարկել), խող, խօվ անել, ծառի թուփ, ծու, կայնել, կանալ, կէլ, կըթվոր, կըլեփ, կըլօխ, կոխել (մտցնել), կունդ ու կըծիկ, կօչաղ, կօվի ուռ, հալ, հӧյӧթ, հառավոտ, հէսա, հէտա, հէքյӧթ, հըմէն, հօլիկ, ճանգըռել, ճանչընալ, ճընջուղ, ման կʲӧլ (շրջել), մառթ (ամուսին), մըկա, մոխիր, յօլա էթալ, նըշան տընել, շընորք (ունակություն), շըպըռտել, ուզօղ (մի աղջկա հետ ամուսնանալ ցանկացող), ուրուշ, չӧնչ, չօք, պաղ, պառզօն, պըսակել, պիրել, պուճուր, ջէբ, ջուղաբ, սաղ (ամբողջ, ամեն), սեվ թոք, սիպտակ // սիֆտակ, վոչիլ, վորդե, տեղաշոր, տէնալ, տունտեղ, քյӧսӧր, քʲուլ, քօլիկ, օրական, ֆըռալ և այլն:

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ** – Քաղաք Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Լուսավան: Վերանվանվել է 1967 թ.: Հիմնադրվել է 1947 թ.՝ բնակեցվելով շրջակա գյուղերից, Հայաստանի տարբեր բնակավայրերից եկածներով, նաև՝ հայրենադարձներով: Հաղորդակցվում են խոսակցական լեզվով:

**ՊՌՈՇՅԱՆ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1960 թ. Տեղեր, Նիգատուն և այլ գյուղերից եկածների կողմից: Ունի մոտ 5600 բնակիչ, որոնց նախնիները եկել են Վանից, Մուշից, Սասունից և այլ վայրերից: Գյուղը հաղորդակցման միասնական միջոց չունի: Գործածվող խոսակցական հայերենը հաճախ երանգավորված է այս կամ այն բարբառի տարրերով:

**ՊՏՂՆԻ**[139] - Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1831 թ.: Ունի մոտ 1600 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկաստանի տարբեր գավառներից՝ Սալմաստից, Մակուից, Խոյից, Ուրմիայից և այլ վայրերից[140]: Հաղորդակցվում են Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների որոշ տարրերով երանգավորված խոսակցական լեզվով: Այսպես, բառասկզբում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց երբեմն հանդիպում են շնչեղ ձայնեղներ (բ՛ան, դ՛առսել, գ՛ալ), հաճախ էլ՝ խուլեր (ճուր, պիրել, պան, տուռ): Սակավ դեպքերում նկատվում է երկբարբառային հնչյունների գործածություն (ստեղ, ըտենց, վորդե): Ներգոյականի իմաստն առավելաբար արտահայտվում է հայցականով կամ սեռականի և *մեջ* կապի կապակցությամբ (էրէխէն դըպրօցն ա, քաղաք կիհօ չըկար, տաշտի մէչ): Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման (Պըտըղնիյա): Անձնական դերանվան տրական հոլովի ձևերն ունեն *ի* հավելված (ընձի, քէզի, մէզի, ձէզի): Վաղակատար դերբայն ավարտվում է *ր*-ով, որն ընկնում է, երբ օժանդակ բայը նախորդում է (հավանէր էն, չէն էկէ): Սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում* // *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (աշխադում ին, քաղըմ ինք, էթում ա, կալըմ ա, գ՛ալըմ

---

[139] Պտղնիի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1983 թ. լրացված թիվ 239 տետրում, առկա են նաև բնակավայրում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

[140] Տե՛ս ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 239 տետրը:

էր)։ Անցյալի ձևերը կարող են ունենալ *մ* հավելված (զօռծ իմ անում՝ գործ էի անում, մաքրում իմ՝ մաքրում էի, ունէիմ՝ ունեի) և այլն։

**ՋՐԱՌԱՏ** – Հրազդան քաղաքի թաղամաս, նախկինում եղել է գյուղ Հրազդանի տարածաշրջանում, անվանվել է Մելիքի գյուղ, Ռնդամալ։ Ջրառատ է վերանվանվել 1949 թ..։ 1960-ական թվերի վերջերից մտել է Հրազդան քաղաքի շրջագծի մեջ։ Այդ ժամանակ բնակավայրն ուներ 3100-ից ավելի բնակչություն։ Բնակիչների նախնիների մի մասը 1828-1830 թթ. գաղթել է Վանից, Արծափից, Խոյից, Մակուից։ Թաղամասում բնակվող ավագ սերնդի մարդկանց, միջին սերնդի շատ ներկայացուցիչների և երիտասարդության որոշ շերտի խոսքը բարբառային հայերենի մի տարբերակ է՝ առավելաբար Վանի բարբառին բնորոշ հատկանիշներով։

Մեր կողմից Ջրառատ թաղամասի խոսվածք անվանվող այդ տարբերակն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (գ՛եղ, վեց, վեռչ, վոր, ծոր, ճոչ, խըմոր)։ Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոսպ, յես, յեզ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրէխա, էրինջ, օղըղել, օլըրել), բայց նաև՝ *յեռըսուն, վոխչար։* Փոխառյալ ու բնիկ շատ բառերում հանդես է գալիս քմայնացած ӧ ձայնավոր (միյնӧկ, զӧնել, թӧլել, կʲӧռ, կʲӧտա, խӧրիսա, Շուշӧն, կӧյդի, քӧլӧմ, քյӧլӧզօշ, քյօռփӧ)։ Բառասկզբի վանկերում երբեմն զգացվում է *ա*-ի շրթնայնացած արտասանություն։ Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (յեռըսուն, կարկըտան, ժօղվել)։ Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (հօբէն, հօբէք, վըրէն)։ Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբում ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը (պӧխ, պӧնջӧր, պարեվ, պէրան, պըռնել, տӧռտըկել, տէմ, տընել, տու, տուս, կէլ, կըլօխ, կʲոլ, կօռալ, ճոչ,

ճուր, ծըցում, ծոր, ծու, ծուկ), հազվադեպ հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ (բ՛ոռալ, գ՛եղ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (առաչին, մէչ, վեռչ, մառթ, անքամ): Խոսվածքն ունի հետնալեզվային քմայնացած բաղաձայններ (կʲըռտընակ, կʲüռ, քʲուր, շարենքʲ, կասենքʲ, չինքʲ, ենքʲ): Բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականները, ինչպես նաև *նգ*, *նք* հնչյունակապակցությունները վերածվում են *յ*-ի (մեյ, կասեյ, ըզբաղվայ, մառթիյ, ճըրայ, կարայ՝ կարագ, ճայտի /ճակտի<ճակատի/, կայնել, զüնէր եյ): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (ինշ փախնել փախավ, ծասկուկ): Բառասկզբի ձայնավորից առաջ մի շարք դեպքերում առկա է *հ*-ի հավելում (հառու, հախպուր, հավէլի, հիճնել, հիրիկուն, հուր): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում, ինչպես՝ *խա, խանել, խալել, խառնիս, խասնել, խատ, խըմա, խօրել, խացատուն, խառս, խառցընել, խիվանդ, խօրական, պախել, պüխ* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կüյդի, կüրիբ, կօնախ, կազան, կավուրմա): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *րանք, ք, տանք, վանք, անք, անիք* մասնիկներով (ըտերայն /ըտերանք/, ոընդամալցիք, հօրէք, ախպըռտանք, քըվորտանք, հընգերտանք, իշվüնք, ծիյանք, կընանիք): Հոգնակի գոյականները հանդիպում են Ու կամ Ի հոլովումներով՝ *թօնէրու, ճըժէրու, ճոչէրու, բօստըննէրու, տընէրի:* Ոջ հոլովմամբ հանդիպել են *ընգերոչ, անէրոչ* ձևերը: Տարածված է հատուկ տեղանունների, երբեմն նաև հասարակ անունների Ա վերջադրական հոլովման ենթարկվելը՝ *Ոընդամալա, Հէրէվնա, Սէվանա, թունդըրա:* Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Թաթօյ, Պուպույ, Նüմույ, աղէյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (կէլից, վախից), պատահում են նաև *է*-ով ձևեր՝ *կէսօրվանէ,*

*գ՛իշերվորէ, հէրէկվորէ, հիրիկվորէ:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (սարերն եմ ֆըռացե, կեղի մէչ): Որոշիչ հոդը որպես կանոն *ն*-ն է (զավօղըն, ծըցումըն), սակայն հաճախ այն չի դրսևորվում (ճըժէրի սօլէր կուրցըվե, էտ կէլ նայեց ընձի): Անորոշ հոդը նախադաս է (մէ մառթ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի*, նաև *իկ* հավելվածներ՝ *ընձի* // *ընձիկ, քեզի* // *քեզիկ, մեզի* // *մեզիկ, ծեզի* // *ծեզիկ,* հանդիպում են նաև կրճատ *քե, մե, ծե* ձևերը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսա, էտա, էնա): *Ով* դերանվան դիմաց առկա է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ըստուց* // *ստուց, ըտուց, ընդուց, ըստե, ըտե, ընդե, ըտեղից, էնքան, էսենց, էտենց, իմալ, վորդե* և այլն:

Խոսվածքում *գալ, լալ, տալ* բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *կու* // *գ՛ու* // *կը* // *կի* մասնիկներով՝ *կուկ՚ամ, կուկ՚էր, գ՛ուկէր, կըկ՚էր, կիկ՚ä, կուտա, կուտի* (տալիս էի), *կուլա, կուլէր*, մյուս բայերինը՝ *կը* // *կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըվառին, պըռնին, կըտäռտըկէր, կասէր, կէփէր, կուզեմ էթամ՝ վախէնամ:* Անորոշ դերբայի սեռականը կարող է գործածվել իբրև նպատակի պարագա՝ *կընացէր եմ թութուն քաղէլու*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (տäռտըկէր, պըռծէր, կացէր, հէլէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (անասուն եմ պախե, կէլից եմ փըռթընե, մառթ ա մեռե), ընդ որում՝ վերջինս առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ (էկե /եկել է/, շըռճըվե մեռե /շրջվել մեռել է/, կէլն իմ տէմն առե /գայլը իմ դեմն առել է՝ առաջս կտրել է/): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (թäլուկ, շարուկ, լըցվուկ, խօրուկ, կայնուկ, վախէցուկ): Ե խոնարհման բայերի ժխտական դերբայը ձևավորվում է անորոշի *լ*-ի անկումով (չեմ թըխե, չեմ

առնե, չեմ ուզե, չինքյ ասե, չէր զ՚ննե): Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որի հետ կարող են գործածվել օժանդակ բայի և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր՝ *էկած են, էկած ա* (եկել են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենքյ, էքյ, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինքյ, իքյ, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքից՝ *ասի, ուզին, պէրիմ, ըրկարիմ: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կաց // կընաց, մաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *ասի, պուպուզա*: Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքն ունենում է *մ* հավելված (չիմ թըխե, կյըռտընկիմ, թըխիմ, ունիմ, տըվիմ, կըպէրիմ, կէթիմ, կասիմ, էկամ): Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևը՝ ըստ ժամանակային իմաստի (յես ա կէթամ, միյնա՛կ էր կըմընէր): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է՝ *ցըն* (նըստըցընել, մօտըցընել): Պատճառական բայերի ներկայում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ նըստըցու, մօտըցու, լօխկըցու, լօխկըցում, նըստըցուս: Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի* (պըտի կյամ, պըտի ըլնի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ, ախճի, առտուն, ավիլուկ, բ՛օռալ, գյօլ (լիճ), դըրմըղ, զ՚նել, զավօղ, էրէխա, ընձէլ (ինձ էլ), ըտերանք (այդ տեղերում), թազա խառսի պ՚նջ՚ր, թ՚լել, թառ, թետըրափոխվել, թութուն, թունդըրա շիշ, թունդըրա շուռթ, թունդիր, թօ, իմալ, լըփլըփալ, խառնիս, խ՚րիսա, խացատուն, խորիզ, խօրական, ծըցում, կախկալ, կ՚յդի, կայնել, կարմընջի անգաճ, կէլին զ՚նել (կրակոցով գայլ սպանել), կընիկ, կըվանոց, կյ՚ռ, կյ՚տա, կյըռտընկել, կյոլ (գոլ), կուրցըվել, հախպուր, հավէլի, հիրիկուն, հօբա, ճամփել, ճավիկ, ճիժ, ճոչ, մառթ (ամուսին),

մառթի էթալ, մէ անքամից, մէ պէրան, մէշու, մըկա, միյնձկ, միջնակըլօջ (միչինգ), յան, նաղարա - զուռնա զձնել, նաղարա, շըռձըվել (շուռ գալ), ուզօղ (մի աղջկա հետ ամուսնանալ ցանկացող), չուրքի մըկա, չօռթնէ ճաշ, պձխ, պըռծնել, պըռտընջել (բրդուճ անել), պըստի, պուպուզել, ռաֆադա, սարի կըլօխ, սեղան-տախտակ, սէլ, սօլ, վախտ, վորդե, տձռտըկել, ցան, փըռթընել (ազտվել, փրկվել), փիրվազ, քձլձմ, քեղ, քըշտել, քըռչիկ, քյձլձ-գօշ, քյօռփձ , քօլիկ, օղօրկել, ֆըռալ և այլն:

**ՋՐՎԵԺ**[141] – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Ունի մոտ 6900 բնակիչ, որոնց մի մասը տեղաբնիկներ են, մյուսների նախնիները 1828-29 թթ. գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից, եկել են նաև Շամքորի, Գանձակի և Ախալքալաքի շրջաններից 1960-ական թվականներին: Հաղորդակցվում են Խոյ-Մարաղայի բարբառի որոշ հատկանիշներ զուգակցող Արարատյան բարբառով:

Խոսվածքը երկբարբառային հնչյուններ չունի: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօռփ, վօոց, յէզ, յէփ), երկվանկ բառերի սկզբում ևս հաճախ ո-ի դիմաց վօ է դրսևորվում (վօխչար, վօչիլ, վօսկի): Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց դրսևորվում են *օ* և *է* (էրազ, էրկաթ, էփէլ, էրէվալ, օսկօռ, օրօրոց), բայց նաև՝ *ըրէխա, ըղօղէլ, հըլօրէլ*: Խոսվածքում երբեմն նկատելի է նախաշեշտ վանկի ձայնավորի անկում (թըթախէլ, կըրկատան, մըտանիք, սըվօրէլ, խըրօված, հըրսանիք): *Ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց սովորաբար առկա է *ի* ձայնավոր (զըրից, թիլ, լիս,

[141] Ջրվեժի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1981 թ. լրացված թիվ 200 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

կապիտ, պաղրիս, քիր, ալիր, ծին): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (փէսէք, ճամփէք, ըրէխէն, տըղէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը (պանջար, պանցըր, պառց, կարուն, կարի, կէլ, կէղ, կէրան, կինի, կըլուխ, տառնալ, տարդազ, տիմանալ, տուռ, տուս, ծաք, ծէն, ճառթէլ, ճաղաց, ճընջըխէլ, ճուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (պուռթ, սուրփ, խափէլ, էք, հաքնէլ, տէքըր, վօչիլ, փօռցանք): Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ (ազաղէլ, նամազ, պամբազ, պազուգ, պէրան, տանազ, զօնքաջ, կօռձէլ, կասկաձ, կօրէգ, ծըվաձէղ, իրիգուն, կընիգ, փէղ): *Նգ* հնչյունախմբի դիմաց *ղ* է առկա *կաղնէլ* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (լըվասկ, ծասկէլ, մէշկ, աշկ): Միավանկ բառերի սկզբի *հօ*-ի դիմաց առկա է *ֆօ* (ֆօռթ, ֆօղ, ֆօտ, ֆօր): Մի շարք դեպքերում բառասկզբի *խ*-ի դիմաց առկա է *հ* (հաղ, հավօղ, հէխտէլ, հէղճ): *Ս*-ի դիմաց *հ* է հանդես գալիս *տէսնէլ* բայի անցյալի հիմքում (տէհէլ, տէհավ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կազան, կալմակալ, կասաբ, կօչ, կարիբ, կօնաղ): Շեշտը նախավերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էք, վանք, անիք, էրք* մասնիկներով՝ *խընամիք, մառթիք, իշվանք, ծիանիք, կիլանիք, կընանիք, ախչըգէրք:* Ոչ հոլովման ենթարկվում են մի շարք բառեր (անէրօչ, ընգէրօչ, կէսրօչ, տալօչ, տէքրօչ, տիրօչ, քըրօչ, քավօրօչ): Ո ներքին հոլովումն ավելի ընդգրկուն է (ընգօր, հօքօր, մօքօր): Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման որոշ դեպքեր՝ *Էրէվանա, Աբարանա, Էշմիյաձնա:* Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (անէրօչից, Էրէվանից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է *ըմ* վերջավորությամբ հոլովով (ճըրըմ, փօրըմ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (կըլուխը, լիզուն): Բացառական և ներգոյական

հոլովները նույնպես ստանում են որոշիչ հոդ (քարիցը, տաշտըմը, կէղըմը): Անորոշ հոդը նախադաս է (մի կէղացի): Անձնական դերանունների տրական հոլովի ձևերն են՝ *ինձ, քէզ, մէզ, ծէզ*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էդ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևն է *ում:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իրա, ըստըրա, ըտըրա, ընդըրա, ըստըրանք, ընդըրանք, ըստիյան* և այլն:

Խոսվածքում սահմանականի ներկան և անցյալ անկատարը ձևավորվում են *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (սիրըմ, մընըմ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *կալիս, տալիս, լաց ըլըմ:* Օժանդակ բային հաջորդելու դեպքում *ս* վերջնահնչյունն ընկնում է (կալի, տալի): Ապառնի դերբայն ունի *ու* վերջավորություն (ասէլու, մընալու): Վաղակատար դերբայն ունի *լ*-ով վերջավորություն (կըրէլ, զարմացէլ), օժանդակ բային հաջորդելու դեպքում այդ *լ*-ն ընկնում է (յէս էմ կըրէ): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (քընած, թըխած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքից՝ *սիրինք, ծակիր, ծախինք: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *սիրիր, նըստար, պըռնըվավ:* Այս ժամանակաձևի եզակի առաջին դեմքում հանդես է գալիս *մ* հավելված (մօռացամ, ծախիմ, հասկացըրիմ): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (հասկացընէլ, իչացընէլ): Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն՝ *հաղացրա՛, կէրցըրա՛:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի կառթիր):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ախքադ (մուրացկան), ածէլ (նվազել), աղինջ, անէրծաք, աքլօր, բիձա, բուռջ (տերև), էլչի, ըրէխա, թաթման, թէշի, թօփ անէլ (հավաքել), իմաց անէլ,

խազ, խաշ (թթխմոր), խըլէզ, խընօցի, խըչմար, խըրկէլ (վռնդել), ծառքութուր (փայտփորիկ), ծօրծօրակ, կէսառ (սկեսրայր), կըժմըթէլ, կըպչան, կըտուր, կում, կօկօլ, հըմի, ճըկըռէլ, ճիթ, մըտիկ տալ, մուխ, յախա, շըլինք, շըհանց տալ, ուշը կընալ, ուշունց, չօփուռ (ծաղկատար), պաժինք, պէծ, պըռօշ, պուճախ, պօզ, պօպօք, ջըվար (ջրաբաշխ), սըպաս, սուրու, վահըր (թարախ), վէկալէլ, վըռթալ (բռնկվել), վօնց, տախտէղ, տափ կէնալ, տէղաշօր, քէրք (կերակրի՝ ամանում մնացած տականք), քյուլ, քօռբու, օջօրք և այլն:

**ՍԱՐԱԼԱՆՋ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Նախկինում՝ Թուլինար: Հիմնադրվել է 1921 թ.: Սարալանջ է վերանվանվել 1946 թ.: Ունի մոտ 350 բնակիչ, որոնց մեծ մասի նախնիները տարբեր ժամանակներում գաղթել են Մուշի և Կարսի գյուղերից: Հաղորդակցման միջոցը խառը տիպի խոսվածք է՝ Մշո և Արարատյան բարբառների տարրերով, առաջինների գերակշռումով:

Սարալանջի խոսվածքում հազվադեպ դրսևորվում է *ե* երկբարբառային հնչյուն (վեց, ձ՛ըմեռ, մենկ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօճ, վօղ, յէս), բացառություն է *ոչ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում հիշյալ միավորների դիմաց առկա են *օ* և *է* (էրէխա, օչխար, օղնէր), բայց նաև՝ *յէզրօտ:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ӓ ձայնավոր (ӓզիզ, ջӓյէլ, զӓնել, օրինӓկ): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (հարսնիկ, մօռնալ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (էրէխէք, գ՛ատէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛աժանվէլ, բ՛էրէլ, գ՛ըլօխ, գ՛ըրբան, գ՛ըրել, գ՛իշէր, գ՛ինի, գ՛օղուտյուն, գ՛օնէ, գ՛օմ, դ՛աժան, դ՛աշտ, դ՛ու, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛էռք, ձ՛ըծում, ձ՛ու):

Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց որպես կանոն գործառում են պարզ խուլեր (իպըր, աշխադանկ, ատար, ժօղօվուռտ, ուտանաասունյօտ, կարկըվել, հառաճ, անկամ, հօկի, ինճ, մէճ, վարիճ, մինճէվ, տէկըր, խէլօկ, զօրկ, փօկըր, մածէկ, հած, հիծուն, վածուն): Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (պաբօնք, օրագան, մրգա, ընդանիկ, տաջգաստան, հադուգ, ժամանագ, հարգ, էրգու, կըդրէլ, ճագադ, սիբդագ, մաձուն, կօռձէլ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնէլ* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (վօշ թօղէր էմ): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառաճ, հիրանց, հիրա, հիրար, հինկըն, հըմէն, հընգնէլ, հընճի, հըռուս, հուզէլ): Բառամիջում և բառավերջում *հ*-ի դիմաց երբեմն առկա է *յ* (պայել, գ՛օյ, ջüյէլ): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ* (խօնախ, խազ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *կ, անիկ, իկ* մասնիկներով՝ *էրէխէկ, բիձէկ, կընանիկ, մառտիկ:* Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Բաղօյ): Բացառականն ունի *ծ* // *ց*-ով վերջավորություն (թայէրիծ, մառտից, կօլխօզից, Աշտարազիծ): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէջ* կապով և սեռականով (քաղակ էր աբըրմ, հօղէն ին հավակվում, բուխէրիգի մէճը, թունդըրի մէճ): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (կընանիկին, բիձէկը): Անորոշ հոդը նախադաս է (մէ մառտ): Մեկ թվականն արտահայտվում է *մէ* ձևով՝ *տասնըմէ:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քէզի, մէզի, ձ՛էզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էդ, էն, էսի, էտի//էդի, էնի, էսա, էտա, էնա): Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քէզնիծ, ձ՛էր, հինկըն* // *ինկը, հիրա, իրանկ, հիրանց, ըդըրանօվ, ընդըրանկ, ընդըրանց,*

*ըտէնց, ըստէղ, ընդից, հիրար, ամէն ինճ, հըմէն, հըմէն բ՛ան, վօճ մի, մէ քանի, հուր, հուրդից, ուրդէղիծ* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսէլ, էղնէլ,* կըռնալ տարբերակները: Սահմանականի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *ըմ // ում* վերջավորությամբ անկատար դերբայով (քըցըմ ինք, շինըմ ինք, ըսում ին, անում ին): Խոսվածքում բայը Ե և Ա խոնարհումներից բացի ունի նաև Ի խոնարհում (էնիմ, չունիմ, փըրզըվիմ): Ենթադրական եղանակի ձևերը կազմվում են *կը // կ* մասնիկով (կըվախէնամ): *Կը* մասնիկը բայասկզբի *հ*-ից առաջ կարող է դառնալ *գ* (գըհիշէմ): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ծընվէր էմ, ախտէր ա), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *է* վերջավորություն (ըսէ, մէր էմ ունէծէ, վօնց էն մէնձածէ, վաղուծ էմ կօրծըրէ), վերջինս առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ (ուժըս ախտէ /ախտել է՝ պատել է/, փախէ էզէ /փախել եկել է/): Հարակատար դերբայն ունի *աձ* վերջավորություն (պարզաձ, կախաձ): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնկ, էկ, էն,* անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինկ, իկ, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ ոչ ցոյական հիմքերով (քըցէցի, վա՛ռէծին, ըսի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընած, մընած // մած*: Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *պահէցի, վառէծին, աշխադավ, բ՛աժանվա, սարկա՛, գ՛ըրա՛, նըստի՛:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ծըն // ցըն* (մըտծընէլ, մօղկըցընէլ): Հարկադրականի եղանակիչն է *բըդի* (բըդի էտայինկ): Հանդիպում է *էլ* շաղկապի *լէ* տարբերակը (դ՛ըրա համար լէ էզէր էմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ա̈զիզ, աղըլ, ատար, արաղ, բալիշ, բիձա, բուխէրիգ, դառդ, զա̈նէլ, էղնէլ, էրէխա, թախում (ցեղ), թաղալու, թայ (հասակակից), թանը կըդրէլ (թանի

որակը փոխել), թընդիր, թունդրրատուն, թօ, ժաժիկ, իմալ, լէ (էլ), խազ (սազ), խօնախ, ծամ, կառտօշկա, կարկըվել (ամուսնանալ), կէսուր, կըթվօր, կըռնալ, հառաճ (նախկինում), հառաճի անկամ, հառսանիկ, հէրանկ, հըմէն (ամբողջը), հըմէն բ՛ան, հընձի, հիմի, հինկըն, հուր (ուր), հուրդից, հօղա, հօղի, հօնա, հօցկա, ճ՛էռք (լրակազմ), ճ՛ըծում, ճ՛ու, մէնձանալ, մըզա, մինակ, մօղկըցընէլ, մօզի, յէսիմ, շունճ (ընտանիքի անդամ), ուժը ախտէլ, ուրդէղ, պաբօնկ, պասմա քըցէլ, պուղ (կաթիլ), սիբդազ, վիյավօր, վօղից գ՛ըլօխ, վօճ մի, տէղաշօր, տէնալ, տընազան, ցօնցէլ, փօշի, քասա, օչխար, օրազան և այլն:

**ՍԵՎԱԲԵՐԴ** – Գյուղ Աբովյանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ղարաղալա: Սևաբերդ է վերանվանվել 1948 թ.: Ունի մոտ 260 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-1918 թթ. և 1922-1925 թթ. գաղթել են Մուշի, Վանի գավառների գյուղերից: Գյուղում գործածական է խառը տիպի մի խոսվածք, որն ունի Մշո և Արարատյան բարբառների տարրեր՝ առաջինին բնորոշ հատկանիշների էական գերակշռությամբ: Հայերից բացի՝ գյուղում բնակվում են նաև եզդիներ: Վանից գաղթած եզդիներից սերող մեծահասակների խոսքում դրսևորվում են Վանի բարբառի որոշ հատկանիշներ (բառասկզբի ձայնեղների դիմաց խուլեր, *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ, *իր*-ով վաղակատար դերբայ և այլն):

Սևաբերդի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (մեր, իրեք, տեղ, նոր, փող, վազոն, չոռս): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (յես, յեզ), բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում հիշյալ միավորների դիմաց առկա են *օ* և *է* (էրգու, օխճար): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ա̈ ձայնավոր (զա̈րգել, գյուլա̈շ, թա̈զա̈, փա̈րինջ, քա̈լլա̈): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (ուրխընալ, հասկընալ, սօվրել): Բառավերջի *ա* ձայ-

նավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛առնալ, բ՛էրան, բ՛ըռթել, բ՛ուն, գ՛ախթական, գ՛ալ, գ՛առ, գ՛արի, գ՛ըրել, գ՛եղ, գ՛ըլօխ, գ՛ոմ, դ՛ընել, ջ՛ուր, ձ՛եռ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, մառթ, ժօղօվուռթ, հառէչ, օքնել): Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ (աշխադել, տագ, մըգա, էրգու, ընդանիք, աբրել, զüրգել, հավգիթ, լուձ, փէդ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Բառասկզբի ձայնավորից առաջ երբեմն առկա է *հ*-ի հավելում (հառէչ, հինքը, հիչուցել, հընչի): Բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց հանդիպում է *յ* (պայել, գ՛օյ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* (ղազան, ղօնախ): Շեշտը վերջնավանկային է:

*Հ*ոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *անիք, էրք, անք, վանք, դիք, տիք, դանք* մասնիկներով՝ *կընանիք, տըղէրք, հօրքուրանք, մօրքուրանք, ձ՛իյանք, իշվանք, իձվանք, հօրօխպըրդիք, ախպըրդիք, կընգըտիք, քըվօրդանք:* Դիտվել է հոգնակերտների կրկնակի գործածություն՝ *տըղէքնէր:* Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման որոշ դեպքեր՝ *Հաբըրվա, թունդըրա*: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (էնէլուց, սօվից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ՛եղը, ջ՛ըրի մէչ:* Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (տունը, կընանիքին): *Հ*աճախ որոշիչ հոդը բացակայում է (զüրգում հանում ին սալդաթներ, գ՛ացե վարգեր փազա): Անորոշ հոդը նախադաս է (մէ մառթ): Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, ըստե, ըստեից, էնենց, էսմալ, էնմալ* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել* բայերի դիմաց հանդիպում են *էնել, ըսել, եղնել, հըլնել* տարբերակները: Բայի Ե և Ա խոնարհումների հետ դրսևորվում է նաև Ի խոնարհում (կըսիմ, չըսպասիս, կուղիմ): Սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատար դերբայով (ասում են, էթում էր), հանդիպում են նաև *կը* մասնիկով կազմություններ՝ *կըհասկընէր* (հասկանում էր), *կըսիմ* (ասում եմ): *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ *գ՛ալում, լալում, տալում*, ենթադրականի ձևերը կազմվում են *գ՛ի* // *կի* մասնիկով՝ *գ՛իկամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը* // *կ* մասնիկով (կեղի, կըթօղէր): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (էկեր, ըսեր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *է* վերջավորություն (բ՛ըռթե, տէսե, էրե, եղե): Հարակատարն ունի *ած* // *աձ* վերջավորություն՝ *հընգած, հէլած, էգաձ:* Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* // *աձ* վերջավորությամբ դերբայական ձև՝ *տըված են* (տվել են), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի՝ *գ՛ացած* (գնացել են), *էգաձ* (եկել են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Երբեմն եզակի առաջին դեմքի իմաստը կարող է արտահայտվել հոգնակի թվով (յես ուրխըցէր ինք, յես աֆտօ յինք նըստե): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով՝ *տեղափօխին, աքսօրին, քօչին*, բայց կարող է կազմվել նաև ցոյական հիմքով՝ *փօխէցին: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց* // *գ՛ընաց, մաց* // *մընաց:* Անցյալ կատարյալն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *աքսօրին, աշխադա:* Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում կարող է հանդես գալ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևը՝ *հաց ա կուղիմ:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր:

Պատճառականածանցն է՝ *ուց* // *ցուց* (կայնուցել, հիչուցել, հասցուցել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ամբըրօց, ամօթ բ՛ան, ապուր (սպաս), աքլօր, աֆտօ, աֆտօմատ, բ՛առնալ, բ՛ունգալ, բըշկուլ, գ՛առնէրի քօզ, գ՛ըլօխ, գ՛ոմ, զիդալ, գյուլյ՛ոշ, զ՛արգել, էնմալ, էսմալ, էրթալ, թ՛ազ՛, թալվա, թըրքընոց, թունդըրա փօշի, ժընջիլ, լուձ, խարաբ էնել, խըրգել (ուղարկել), կայնուցել, կօխել (լցնել), հառէչ, հավգիթ, հիչուցել, հօրի, հօրիկ քըշել, ղազան, ղօնախ, մըգա, մըսուր, մօյըշնի, շըլանգ, շըլօփա, պասմա, սալդաթ, սալօմ, վախտ, վիրի գ՛ըլօխ, տավարնի վագոն, փ՛արինջ, ք՛ալյ՛, քուլիան, քօչել, օխճար և այլն:

ՍՈԼԱԿ – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Ունի մոտ 2400 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Ալաշկերտի, Արճեշի, Վանի, Սալմաստի գյուղերից: Գյուղում գործածական է Մշո բարբառի մի տարբերակ՝ Արճեշի խոսվածքին բնորոշ տարրերի որոշ գերակայությամբ:

Սոլակի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *գ՛եղ, վեց, նոր, կըլոր, տեղաշոր:* Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոչ, վոտ, յես, յեփ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրկաթ, էրկու, էրկանքյ, օղօրմի, օլըրել), բայց նաև՝ *յեռեսուն, վօչխար:* Փոխառյալ ու բնիկ շատ բառերում հանդես է գալիս քմայնացած ա՛ ձայնավոր (ա՛ժել, ա՛զիզ, բա՛խտ, բա՛րիշել, զա՛նգել, զա՛նել, զա՛րկել, թա՛շկինակ, թօշա՛կ, կիրա՛կի, հա՛զա՛ր, քյա՛շել, խա՛յսա՛թ, հա՛յա՛թ, մինա՛կ, նա՛ֆա՛ր, ջա՛յէլ): Բառասկզբի վանկերում հաճախ զգալի է *ա*-ի որոշ շրթնայնացում: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (սօվրել, հիմնալ, յեռսուն): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէս, վըրէն, ումբէն, էրէխէքյ, քուչէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ

ձայնեղների առկայությունը (բ՛աժանվել, բ՛այց, բ՛անակ, բ՛արեվ, բ՛էրան, բ՛ըլել, բ՛ըռնել, գ՛եղացի, գ՛էշ, գ՛ըլօխ, գ՛իր, գ՛ոռծ, դ՛առնալ, դ՛ընել, դ՛ու, դ՛ուս, ջ՛ոչ, ձ՛եռ, ձ՛եր, ձ՛ըմեռ, ձ՛ու): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (մառթ, անքամ, ջ՛ոչ, մէչ): Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվային հպականներ (կʲե /կեր/, շիքʲել, գʲօմփ, իրեքʲ, գ՛ացինքʲ, հիրանքʲ): *Նգն* խմբի դիմաց *յ* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, վոշ մէ բ՛ան): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հանգաճ, հառավոտ, հառէչ, հէվել, Հէրէվան, հէրէկ, հէսօր, հինքըն, հիշկել, հիրան, հիրար, հընչի): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խանել, խառս, խառսընիս, խասնել, խավ, խատ, խաց, խաքնել, քըսանխինգ, խէտ, խէր, խիվանդ, խող, պախել): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, վանք, տինք* մասնիկներով՝ *խընամիք, էրէխէքʲ, գ՛իլվանք, իշվանք, իծվանք, տիրվանք, ախպըրտինք: Կընիկ* (կին) բառի հոգնակին է՝ *կընթըներ:* Դիտվել է բաղադրյալ հոգնակերտների գործածություն՝ *տըղէքներ:* Մի շարք բառեր եզակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *ամսու, գ՛ըլխուն, ճամփխու, մըխու, ճըժու* և այլն: Հոգնակի գոյականները սովորաբար ենթարկվում են Ու հոլովման՝ *թըխտէրու, քըրէրու, ախչիկնէրու* ևն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *քըրոչ, կիսուրոչ:* Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման դեպքեր՝ *Հէրէվանա, Սէվանա:* Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով՝ *մամայ:* Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (դ՛ըսից, սարից, բ՛անակից), կարող է արտահայտվել նաև կապային կառույցով՝ *քօ մօտից* (քեզնից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (Մասկըվա յա, ջէբըս ա, գ՛եղի մէչ): Որոշիչ հոդը առավելաբար դրսևորվում է *ն* տարբերակով (փօխինդըն), երբեմն էլ այն կարող է չարտահայտ-

վել (էրկաթ պըռծավ բ՛ըռնեց գ՛ըլխուն, կընիկ խիվանդ ա, Վանուշ ա տըղիս անուն): Անորոշ հոդը նախադաս է (մէ տըղա): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի,* հանդիպում են նաև կրճատ *ք՛է, ձ՛է* ձևերը: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի): *Ով* դերանվան դիմաց առկա է *վոր* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրըն:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինք // հինքըն, հիր* (իր), *ուր* (իր), *հիրան, ուրան // իւրան, ուրան-ուրան, հիրանք, էստոնք, էնոնք, ըստու, ընդու, էտուց // էդուց, էտոր, էտքան, էնքան, էմալ (այնպես), էդմալ, էնմալ, ընենց, էտա՞րը* (այդտեղ), *հիրար, հըմէն, հըմէն ինչ, հուրիշ, վոշ մէ, վորդուց, հընչի, դո՞ր* և այլն:

Խոսվածքում *անել, լինել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, եղնել, կանալ* տարբերակները: Ե և Ա խոնարհումներից բացի՝ դրսևորվում է նաև Ի խոնարհում (ունիմ, պըռծիմ, մըտիս, կէլիմ, կըխաքիմ, պարկիմ, նըստիմ, կասինք): Բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *գ՛ը // կը // կ* մասնիկով կամ առանց դրա՝ *գ՛ըկա, գ՛ըքէր, գ՛ըքինք, կըտան, կըտի, կըպախեմ, կըթէլեմ, կէնեմ, կուզեմ, կըխօսա, բ՛ըռնեն ակտ գ՛ըրեն, կէթա խասի, գ՛ան քեզի կըտանին, կըստանի, կըխանի, կեղէր: Կը* մասնիկի բաղաձայն տարրը բայասկզբի հագագին միանալով կամ ձայնորդից առաջ դառնում է *գ՛*, ինչպես՝ *գ՛ընզի, գ՛ամաձայնըվի, գ՛ըլըցեմ:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ծընվէր եմ, խանէր են, մեռեր ա, մացէր էր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (չեմ փօխե, չեն տըվե, սարեր եմ գ՛ացե, եղե): Վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ՝ *մեռե* (մեռել է): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն՝ *ամուսնացուկ, ջըղայնացուկ, նըստուկ, մեռուկ, քանդուկ:* Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև ՝ *էկած ա* (եկել են),

*էնոնք ա պախած* (նրանք են պահել), ինչպես նաև՝ դերբայական ձևը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի՝ *չասած* (չեն ասել), *փախցուցած բ՛էրած* (փախցրել բերել են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են, ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքով՝ *ասի, լըսի, չըլըսիր, էփի, մօռթի*, հազվադեպ՝ նաև ցոյական հիմքով՝ *բ՛էրէցինք: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛աց, մաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *խանին, դ՛եղին* (դեղեցին), *մեռըցուցին, բռ̈րիշանք, նըստանք, գ՛ըրա՛, շաղա՛, նըստի՛, կայնի՛:* Դիմավոր

բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը՝ ըստ ժամանակային իմաստի, ինչպես՝ *տըղէս ա կըցանա, հինքն էլ ա կէթա, ինչ ա կէնես, վիրն ա կըխառցուս, ինչ էր կըդ՛ընինք, շատ էր կըվախէնի:* Դրական խոնարհման՝ *կը* եղանակիչ ունեցող ձևերի համապատասխան ժխտականներում *չ* մասնիկը սովորաբար դրվում է բայաձևի վրա, ինչպես՝ *չըտէնա* (չի տեսնում), *չասեն* (չեն ասում), *չեղի* (չի լինում), *չըմընամ* (չեմ մնա), *չըլըսես* (չես լսում), *չեղէր* (չէր լինի), *չըխօրեն* (չեն թաղի), *չըկանամ* (չեմ կարողանում), *չըվախէնամ* (չեմ վախենում), *չըմընի* (չէի մնում), *չըխանգարա* (չի խանգարի): Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր: Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *կառիք, կըմըտիս*: Պատճառական ածանցն է *ցուց* (մեծացուցել, փախցուցել, սօվըռցուցել): Պատճառական բայերի խոնարհման հարացույցի առանձին ձևերում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *խառցուս, փախցո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է՝ *պըտի* (պըտի էնեմ): Խոսվածքն ունի *կօ* հաստատական մասնիկ (կօ էկավ, էլի), որը շատ դեպքերում կարող է ունենալ շարունակականության իմաստ (կօ կասեմ քեզի, կօ մըկա կըխօսամ, կօ հառավոտ կէլիմ, կըխաքիմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղէ (մայրիկ), ձ̈գիզ, ձ̈ժել, ակցէնտ, աշկ խանին, աշկ, ասսուն հ̈ձ̈զ̈ձ̈ր բ՛էրան փարք, ավարյայի տակ հընգնել, արխային, բալա, բ՛արեվը մոռնալ, բ̈ձ̈րիշել, բ՛ըռնել գ՛ըլխուն (դիպչել գլխին), գ՛էշ, գըլուլ, գյօմփ, դ՛եղել, դըզել, դոր (ուր), դուզն ասած, զ̈ձ̈նել, զ̈ձ̈րկել, էդմալ, էթալ մառթու, էթալ ուզընգան, էմալ, էնմալ, էս յան էն յան, էրկանքյ, թայ (հասակակից), թօ, իւրան (իրեն), լայլուղ, խ̈ձ̈յ̈ձ̈թ, խառսընիս, խօրել (թաղել), խօրօտ, կայնել, կանալ, կէսրէր, կըլոր տարի, կիսուր, կուշէտկա, կօ, հ̈ձ̈յ̈ձ̈թ, հանգաճ էնել, հառավոտ, հէսօր, հէվել, հըմէն, հընչի, հիշկել, ճամփխու դ՛ընել, ճիժ, ճոթ, մանէթ, մառթ (ամուսին), մեխկը գ՛ալ, մեռըցուցել, մէշօք, մըկա, մինձ̈կ, մույնաթ, յեփ, նձ̈ֆ̈ձ̈ր, շիշ (ապակյա շիշ), շիքյել, շուռ գ՛ալ (որոնել), ուզել (սիրել), ումբա, ումուղ, ուրան, ուրան-ուրան, չամադան, պախել, պըռծնել, պըսակվել, պըստի, պօպօք, ջ՛ոչ, ջ̈ձ̈յէլ, ջէբ, վախտ, վոշ մէ, վոչխար, տեղաշոր, փայ, փօխինդ, քուչա և այլն:

**ՎԱՆԱՏՈՒՐ** – *Հրազդան* քաղաքի թաղամաս, նախկինում՝ գյուղ, որ տարբեր ժամանակներում անվանվել է Աթարբեկյան, Գառնեկին, Գառնըյարըխ, Կապուտխան, Քարվանսարա: Գյուղը Հրազդան քաղաքի շրջագծի մեջ է մտել 1959 թ.: Բնակավայրում գործածական է Վանի բարբառի մի տարբերակ՝ Արարատյան բարբառի որոշ տարրերով;

Վանատուրի խոսվածքն ունի *է, ո* երկբարբառային հնչյուններ (իրեքյ, կիշեր, տեղ, փող, պոռտ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յէ* (վոտ, վոր, յէս), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (օղօղել, էրկու, էրկաթ), բայց նաև՝ *վոսկի, վոխճար // վոչխար, վոռթիկ:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ձ̈ ձայնավոր (ձ̈ռձ̈չի, զ̈ձ̈նել, հ̈ձ̈խպուր, միյնձ̈կ, վըրձ̈, պձ̈ն, դձ̈տձ̈վոր, հձ̈զձ̈ր, հձ̈րուր, կըսմձ̈թ, մձ̈զձ̈լու, մըխ-

տա̈ռ, թիքյա̈, ռա̈ֆա̈ղա̈, քյա̈շկէ, շա̈քյա̈ր, Ֆա̈յրա̈դ): Բառասկզբի վանկերում երբեմն զգալի է *ա*-ի շրթնայնացում: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (խըպառտնալ, կյողնալ, հաֆքել, հիրկուն): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (ճա̈մփէն, նախրագ՛յընէն): Բառասկզբի ձայնեղների դիմաց առկա են խուլեր (պան, պա̈զուկ, պա̈ռցել, պըռնել, տա̈ս, տու, կյա̈րի, կիշեր, կեղ, կէլ, կըլօխ, կյող, կըռտընակ, ծեռ, ծըմեռ, ծու, ճա̈ռթել, ճոչ), բայց երբեմն հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ (դ՛ա̈տել, դ՛ու, դ՛ուս): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (հառէչ, հէքուց, մարաք, թաքավոր, մառթ): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրել, գիդալ): Խոսվածքում առկա են քմայնացած հետնալեզվային պայթականներ (ճանգյ, քյա̈շել, քյօթուկ, քյօռ, քյընել, քյուռսի, կյա̈րի, կյա̈ցէր, կյոռտընուկ, կյըրել, կյունդ), երբեմն էլ նկատվում է դրանց հպաշփականացում՝ *մի՛ ճողցի* (մի՛ գողացիր), *ճա̈րէ* (գարե): Բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականները, ինչպես նաև *նգ, նք* հնչյունախմբերը դառնում են *յ* (ա̈յլօր, քյօթույն, խայցընել, մեյ չեյ տանի, իրեյ մանէթ, տարէյ ծեզի, տասխիյ կիլօմետըր, ասեյ, յեղույներ, կայնել, ըտոյն), նման փոփոխություն կարող է կատարվել նաև դադարից առաջ (պըտի էթայ պա̈ռցեյ պէրեյ, էկէր եյ, մեյ քեզի կանչիյ): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (աշկ, ինշքան, իժնել, գ՛ըննի՝ *կանցնի*): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հա̈խպուր, հառէչ, հառիք, հառու, հավէլի, հիրկուն, Հէրէվան, հէքուց, հընգեր, հընցնել, հընչի, հիրկուն): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խանել, խաց, խացատուն, խառնիս, խատ, խասնել, խէտ, խիվանդություն, խըպառտնալ, խոտ, սըրախ, պախ, պախել, սախմընել): Օտար

բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կըսմըթ, կըսըր, կազան, կաչաղ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, էրք, րանք*, *անք, վանք* մասնիկներով (ախտէցիք, կեղացիք, տըղէրք, կեղրանք, ըտեյրանք, ծիյանք, էշվանք): *Կընիկ* բառի հոգնակիի ձևերն են՝ *կըյթըներ, կըյտեր:* Հատուկ տեղանունները որպես կանոն ենթարկվում են Ա վերջադրական հոլովման (Սէվանա, Մառտունա, Թայչարուխա), այդպես նաև սակավաթիվ հասարակ անուններ հանդիպում են Ա հոլովիչով (թունդըրա, կեղա): Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Սուքոյ, Բընոյ, Թումոյ): Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (քաղաքից, տընէրից), հազվադեպ պատահում է նաև *է*-ով ձև՝ *առատվընէ:* Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով (ըտոյ անտառներ կաքրին, խացի մէչ, ճըրի մէչ): Որոշիչ հոդն է *ն*-ն (սըրախըն, կեղըն), որը երբեմն բացակայում է (փող չըկա մօտ, Կօլօտ Հայրապետ կըլնի կասի): Անորոշ հոդը նախադաս է (մէ փըշուր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ծեզի,* հանդիպում են նաև կրճատ ձևեր՝ *քե, մե:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսիկ, էտիկ, էնիկ): *Ով* դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականի ձևն է *վի* // *վիր,* տրականինը՝ *վին* //*վիրըն*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *իրա, իրանց, ըստու, ըստուն, ըստոնց, ըստօվ, ըտու, ընդու, ընդօվ, ըտոնք, ըտոնց, ընդոնց, ըստե, ըտե, ընդե, ստեղի, էսենց, էտենց, էսակըղմ, վորդուց, ամէք* և այլն:

Խոսվածքում *լինել, ելնել* բայերի դիմաց որպես կանոն գործառում է *հըլնել* ձևը, երբեմն *լինել*-ի դիմաց գործածվում է *եղնել* բայը: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը* մասնիկով՝ *կըկյամ, կըկյա* // *գ՛ըկյա, կըկյէր, կըտա,* մյուս բայերինը՝ *կը* // *կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կառնի, կասի, կեղի, կըտըրնի, կըզանի, մըտնի, լըծեն կէթան, պառցեն, քաշեն,*

*խանեն:* Երբեմն այդ ժամանակաձևերը արտահայտվում են անկատար դերբայով (կէրցընում են, խըմցընում): *Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, կարող է դառնալ *գ՛* (գ՛առցըկեն, գ՛ըլնի, գ՛ընգընեն): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (տըվէր, տըրէր, հէլեր, էկէր // էկիր, սախմընիր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (թօղե, տիսե): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (տըրուկ, կայնուկ, կախուկ, կապուկ, խայցուկ, հընգʲուկ, կըռթըվուկ): Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (պէրած խաացըրած /բերել հասցրել են/): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ոչ ցոյական հիմքից (կանչինք, քըցին): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կʲäց, մաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (տըվեց, սիրիմ, արինքʲ, պըսագվամ, նըստանք): Անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքում հանդիպում է հավելական *մ* (ասիմ, առամ, պէրիմ, պըռծամ, տարամ, կացիմ, կըրիմ, կըկʲըռտընկիմ, կըթըխիմ, կըսարքիմ): Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի երրորդ դեմքի ձև՝ ըստ ժամանակային իմաստի, ինչպես՝ *դոր ա կէթաք, տեղ ա կէթամ, միկրո յա կաքրեմ, վիրնօվ ա խըպառտնաս, ախտէցիքին ա կասեն, առավոտ ա կասենք, խոտ ա կըկʲä, թոռներս ա կանեն, տանիսն էր կըվառինք, անտառներն ին կաքրին:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (կայնըցընել, ֆըռֆըռցընել): Պատճառական բայերի հրամայականում հանդես է գալիս Ու խոնարհիչը՝ *լօխկըցո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի էթանք):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ակոս, ակոսի կըլօխ, ամէք, աշկ, առավոտ (վաղը), առատվընէ, բ՛օլոր (շուրջ), բը, բօյօվ, բօստան, բօքոն, գյա, գյուլլել, դոր, էլչի, էսակըդա, ըտեյրանք, թէշտ, թըխտըմոր, թունդիր, իժնել, իմա, իշկալ, լըպըտալ, լուսուտեմ, լօխկընալ, խա, խալալ, խառձըկաթ, խացատուն, խըլըսուն (վաղ առավոտ), խըպառտնալ, կազան, կայնուկ, կաչաղ, կըլխի ճար տէնալ, կըլօխ, կըռթըվուկ, կյըռտընակ, կըսըր, կըսմաթ, կիշերվա կէս, կիսուր, կյըռտընկել, կյոռտընուկ, կյունդ, կօլօտ, կօղպէս, հախպուր, հաշտ, հառէչ, հառիք, հէքուց, հընչի, հիրկուն, ճանգյ, ճարէ ալուր, ճարէ բօքոն, ճըմուռ, ճիժ, ճյողնալ (գողանալ), ճոչ, մազալու, մառթ (ամուսին), մարաք, մէ թիքյա, մէ փըշուր, մէշու, մէշօք, մըխտառ, մըկա, մըկավա, միյնակ, յեղույներ, յեղունակ, յետօ, նախրազ՛յընա, նամանց, նըշանվուկ, շանվոռթի, շընէլ, շընթէլա խոտ, չար մըկա, չորանց, չօք, պըռծընել, պըսագվել, պըստի, պըտղունձ, ջամուկ, ռաֆադա, սախմընել, սանկա, սեղան-տախտակ, սէր ու բարիշ, սըրախ, սօլ, սօլկարանց, վախտ, վռթիկ, տանիս, տաշտաքյեր, տաս (ցեղ), տէնալ, տիլ, փօշի, քյաշկէ, քյաշկօղ, քյուլխան, քյուռսի, քյօթուկ, քյօռ, օթաղ, օղօղել, օղօրկել, ֆայտոնչի, ֆըռֆըռցընել, ֆուրդուն և այլն:

**ՔԱՂՍԻ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Ունի մոտ 2500 բնակիչ, որոնց մի մասի նախնիները եկել են Մակուի գավառի Օղակ գյուղից 1830 թ.: Գյուղում գործածական է Մակուի խոսվածքը՝ Արծափի խոսվածքի հետ հետաքրքրական որոշ ընդհանրություններով:

Քաղսիի խոսվածքն ունի *է, ո* երկբարբառային հնչյուններ՝ *մէր, իրէք, սիբէխ, խըմոր, շընորք:* Երկբարբառային *է* հնչյունի համեմատաբար բաց տարբերակը դրսևորվում է իբրև էական բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի ձև՝ *պըսակվէր է*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *է*-ի դիմաց

համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (յես, յեփ, վոր, վոնչ), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (էրէխա, էրկու, օղօրմի, օսկոռ), բայց նաև՝ *յեռեսուն, վոռթիզ, վոխճար:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ӧ ձայնավոր (բӧռӧդի, բիձӧ, դӧռզ, զӧդ, զӧթի, զӧրգել, էստӧրի, թӧզӧ, ժӧժիկ, հӧլիվոր, հӧշկ, հӧռӧչի, մէթիքӧ, յӧքʲӧ, բօլ ու բօլդӧն, դӧփ, մուխտӧռ, շիշӧզ, շուշӧն, սӧբӧթ), այդ հնչյունը երբեմն հանդիպում է նաև *ե*-ի դիմաց՝ *ձ՛ӧռ:* Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (ցամքել, լօղցընել, հիրգուն, սարվել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (տըղէս, բիձէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛աժան, բ՛ան, բ՛ացել, բ՛էրել, բ՛ընակըռել, գ՛ալ, գ՛առ, գ՛եղ, գ՛ըլօխ, գ՛ըռնակ, գ՛ոմ, գ՛օքնոց, դ՛աշտ, դ՛ու, դ՛ուս, ձ՛ու, ձ՛ուզ, ջ՛ӧռթել, ջ՛ուր), հազվադեպ բառասկզբում դրանց դիմաց առկա է շնչեղ խուլ՝ *քըշեր, քըթալ:* Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (առթէն, հաքնել, հӧռէչ, հէռթիկ, օքնել, տէքըր, մէչ): Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ (աբրել, պադրաստ, ձ՛ուզ, մէզը, վոռթիզ, ցէրէզ, պարգել, տարէզան, հադ, շադ, վադ, սիռդ, մոդիզ, տօբրազ, ըղենց, մեձանալ, մաձուն, ցաձըր, օջօրք): *Նզն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Խոսվածքում գործառում են քմայնացած հետնալեզվային պայթականներ (հօքʲի, հառսանիքʲի, քʲեզի, յӧքʲӧ, ձ՛ӧքʲ, մըսուրքʲ, մառթիքʲ, իրեքʲ, ահակʲին, կʲերպ, կʲէրէք, էգʲէր ին, գʲէրան): Երբեմն հետնալեզվային պայթականի դիմաց առկա է հպաշփական հնչյուն՝ *ջօջի* > *գոճի:* Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (ծասկըռտըվել, արաացընել): Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հӧլիվոր, հանգաճ, հӧշկ, հառադուն, հառէճ, հառու,

հավէլի, հէսօր, հէրէկ, հընչի, հիրանց, հիրար, հիրգուն, հուս, հուրիշ, հըղեղ): Միավանկ բառերի սկզբում *հո*-ի դիմաց հանդիպում է *ֆո* (ֆող>հոտ): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում երբեմն *խ* է հանդիպում՝ խող > հող, խոր > հոր, խազալ > հազել, սըրախ > սրահ: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* (կըսըր, կօնախ, կազ, կազան, կա̈ստու, կըռաֆ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *իք, անիք, էրք, րանք* մասնիկներով՝ *մառթիք, կընանիք, տըղէրք, ըղերանք:* Նկատելի են Ա վերջադրական հոլովման դրսևորման որոշ դեպքեր՝ *թունդըրա:* Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով՝ *Վաչօյ:* Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (ընձընից, տեղից, բ՛անազից), հազվադեպ պատահում է նաև *է*-ով ձև՝ *հիրկընէ հիրկուն:* Ներգոյականի իմաստը կարող է արտահայտվել հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (Հէրէվան է, սա̈բա̈թի մէչ), բայց հաճախ արտահայտվում է տրականով (գ՛եղին, Զանգուին, ջէբին, դ՛աշտին, բօշկին, կըրուշկին, օրօրօցին, բ՛աժնին): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (լավն են, մէզը): Անորոշ հոդը նախադաս է (մէ օր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Ցուցական դերանունները ունեն եռաշարք համակարգ՝ *էս, էդ, էն, էսի, էդի, էնի*: *Ով* դերանվան դիմաց առկա է *վով*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինքը, հիրանք, հիրանց, ըստա, ըստըրա, ըտա // ըդա, ընդա, ընդըրա, ըստուց, ըդուց, ընդուց, ըտոնց, ըդըրանից, ըդոնցից, ըստեղ, ըսենց // էսենց, ըդենց, ընենց, հիրար, վորդեղից, հուստ, հուր, ամէքը, հըմէն, հըմընու, հուրիշ* և այլն:

Խոսվածքում սահմանական եղանակի ներկան և անցյալ կատարյալը կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (թըխում // թըխըմ էր, քաշվում ե, անըմ ի, չեմ կանում, տէր էր կայնում), *գալ, լալ, տալ* բայերի դեպքում անկատարի

վերջավորությունն ավելանում է անորոշի վրա (գ՛ալում, տալում): Ենթադրական եղանակի *կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* (գ՛ընցընի, գ՛ըլնի): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (ծընվէր, էգէր, տէսէր, տարէր, ցամքիր, գ՛ընացիր, ծասկիր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (բ՛ան է արե, էգե, թըխե): Վերջին ձևն առանց օժանդակ բայի կարող է արտահայտել վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ՝ *գ՛ընացե* (գնացել է): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն՝ *մընացած, մահացած, նըստած, քընած:* Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որը համապատասխան իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի՝ *գ՛ացած* (գնացել են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ե/է/ա, ենք, էք, են,* անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի տարբերակային երեք ձևերի գործածությունը որևէ գործոնից կախված չէ, բայց նկատելի է, որ *ա* տարբերակը, ակնհայտորեն լինելով ազդեցության հետևանք, ավելի քիչ է գործածվում: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով՝ *ծախծըխինք, մօռթինք, բ՛էրի, հանի, փօխէցինք, բ՛էրէցի, չարէցին:* Անցյալ ժամանակաձևերի եզակի թվի առաջին դեմքում հանդես է գալիս *մ* հավելված (ունիմ /ունեի/, մընացիմ, վաղ իմ /վատ էի/): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց* // *գ՛աց, մընաց* // *մաց:* Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *մօռթինք, գ՛ընդէցի, թըռչըվավ, ցամքան, նըստի՛, գ՛ըրա՛:* Խոսվածքում չկան *չ*ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (լօղցընել): Պատճառական բայերի հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *պատկէրացո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է *պըտի* // *պըդի* (պըտի հըլնեմ, պըդի գ՛ամ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ալբալը, ախճիկ հա̈շկադ՛ըրել (մի աղջկա վրա աչք դնել), ածել (լցնել), ահակյին, ամէքը, անկիսուր, ասկություն (տոհմ, ցեղ), արասցընել, ափալ-թափալ, աքլօր, բ՛աժան, բ՛ընակըռել, բ՛ընկալ, բ՛ուռ սիվտըկել, բա̈լէ (գուցե), բա̈լի (գուցե), բախտակ, բա̈ռա̈դի բիձա, բօլ ու բօլդա̈ն, բօշկա, գ՛ըլօխ, գ՛ընդել, գ՛ըռնակ, գ՛օքնոց, դանա, դա̈ռզ, դա̈փ (ռաֆադա), զա̈դ (մի բան, ոչինչ), զա̈թի (առանց այդ էլ), զա̈րգել, էստա̈րի, էրէխա, էրնէկ, Էրվել, թա̈զա̈, թէբուր, թէբրափոխվել, թէշտ, թողզը, թունդըրա փօշի, թունդիր, թունդիրը քաշվել, թօ, ժա̈ժիկ, իսան, խաբար, խա̈լուվըրից, խառջըգաթ, խըլդ, խըրգել (վռնդել), խոռթել, խոր փօրել, ծախծըխել, ծասկըռտըվել, կա̈ստու, կազ, կազան, կատար (աքաղաղի), կըշտին (մոտ), կըռաֆ, կըսըր, կըվանոց, կըրուշկա, կիսուր, կու, կուլա (գրաֆին), կօզօլ վառեզ, կօլօն, կօլօնել, կօղակ, կօնախ, հա̈լիվոր, հանգաճ, հա̈շկ, հառադուն, հա̈ռա̈չի, հառէճ, հառու, հարսէ, հէռթիկ, հէսա (շուտով), հէրանք, հէրէկ մէգէլ օրը (վերջերս), հըղեղ, հըղըրգել, հըմի, հընչի, հընց, հիրգուն, հիրկընէ հիրգուն, ձ՛ա̈ռ, ճըղճըղվել, ճըղվել, մէ լըփ, մէ յա̈քյա̈, մէթիքա̈, մընալ շիվար, մըսուրքյ, մուխտա̈ռ, յանի, յետի, նեղի նաճար, նըխշուն, շախտէն տալ, շըփանց // շըպանց (ծխից թունավորում), շիշա̈զ, շուշա̈ն (բանջարի տեսակ), ուշ դ՛ա̈ռցընել, չաղըր, չարդախ, չիթ, պադառիք անել, պըզդի, պըռձնել, ջահէլ, ջէբ, ջէրգել, ջուղաբ, ջօջի (գոճի), սա̈բա̈թ, սալօմ, սաղ (բոլորը), սաղ (ողջ, կենդանի), սարվել (սովորել), սըթից ասել (ստել), սըռը տալ, սըրախ, սիբեխ, սիռդ հէտ տալ, սուրմա, սուրու, վախտ, վոխճար, վոնց, վոռթիզ, տէր կայնել (հոգ տանել), տօբրազ, ցաձըր, ցամքել, փէճ, փօխան, քըթալ, քըշեր, քըշէր չան լուս, օթաղ, օյին հընզնել, օջօրք, օրը բիթուն, ֆող /հոտ/ և այլն:

**ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ** – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1958 թ.: Ունի 3900-ից ավելի բնակիչ, որոնք եկել են տարբեր տարածաշրջաններից: Գյուղում ապրում են նաև եզդիներ (մոտ 40 ընտանիք): Գործածական է խոսակցական հայերենը՝ յուրաքանչյուր դեպքում մայրենի բարբառի որոշակի տարրերով:

Բնակիչների մի մասը անցյալ դարի վերջերին եկել է Ախալքալաքի տարածաշրջանի Փոքր Խանչալի գյուղից (այս գյուղի բնակիչների նախնիները գաղթել են Կարինից 1829-1830 թթ.) և պահպանել է մայրենի խոսվածքը՝ այն գործածելով և՛ ընտանիքներում, և՛ հայրենակիցների շրջանում:

Կարնո բարբառի Ախալքալաքի խոսվածքի այս տարբերակում դրսևորվում է երկբարբառային *ե* հնչյուն, որի արտաբերության մեջ սկզբնային վերին շարքի ձայնավորական բաղադրիչը ավելի ընդգծված բնույթ ունի (վիᵉց, տիᵉղ, կիᵉղ, միᵉր, էշիᵉր), և որի արդյունքում, թերևս, հաճախ երկբարբառը փոխարինվում է *ի*-ով (էստիղ, գ՛իղ, մինք): Սակայն երկբարբառային այդ հնչյունի գործածությունը օրինաչափ և կանոնական չէ, հաճախ ուղղակի արտասանվում է *է* պարզ ձայնավոր (կիշէր, մէր, վառէլ, տէղ, իրէք): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վօ* և *յէ* (վօչ, վօտկ, յէս, յէփ), բազմավանկ բառերի սկզբում, նաև *որ* շաղկապի դեպքում՝ *օ* և *է* (էրգու, էրէս, օր, օչխար): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ա̈ ձայնավոր (թա̈ք, հա̈րիֆ, նա̈ֆթ): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (խօլօքնալ, հարսնիք, հարըստնալ, պաժնիլ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (վըրէն, ճամփէք): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբում անկայուն վիճակը, երբ մի դեպքում արտաբերվում են շնչեղ ձայնեղներ (ջ՛ուր, բ՛այց, բ՛ան, բ՛անակ, բ՛առնալ, բ՛ըռնէլ, գ՛ալ, գ՛եղ, գ՛ըթնէլ, գ՛ըլօխ, գ՛օրձ, դ՛աս, դ՛ու, դ՛ուս, ձ՛էզնէ), մեկ այլ դեպքում՝ դրանց դիմաց խուլեր (պան, պեղ, պէրէլ, կարի, կէրէզման, կեղ, կըլօխ, կըլխարկ, ծավար, ծեռ,

ծըմեռ, ծօր, ծուկ, ճանավար, ճաիիլ, ճուր, տանակ, տու, տուռ, պաժնիլ, պացէլ), և հաճախ էլ արտաբերվող հնչյունը ներկայացնում է շնչեղ ձայնեղի և խուլի միջև տատանվող միջին մի որակ: Երբեմն էլ բառասկզբում ձայնեղների դիմաց շնչեղ խուլեր են գործածվում (թըրկից, քառտօլ, փի՛ /բե՛ր/): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (անքամ, խընթըրէլ, առաչի), երբեմն էլ շնչեղ խուլերի դիմաց՝ խուլեր (հիծուն, ինճ): Նույն դիրքերում խուլերի դիմաց որպես կանոն առկա են ձայնեղներ (աբրէլ, մէձ, պաբա, էրգու, պարգէլ, տարէգան, փագ, փըրգէլ, քէռէգին, հէդօ, տաղիս հիդ, պըռձնէլ): Խոսվածքում հազվադեպ գործածվում են քմայնացած հետնալեզվային պայթականներ (կʲէ, կʲուտիմ): Մի շարք դեպքերում բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հընչի, հիմանալ, Հէրէվան* և այլն: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* (Ղարձախ, ղյ̈րիբ, ղօնաղ, ղաուրմա): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում *եր* // *իր, ներ* // *նիր* մասնիկներից բացի (հավքըթներ, ծառեր, ճանավարնիր, կարմընջնիր, պըռկընիր, փէթկընիր)՝ ձևավորվում է նաև *ք, ան, անք, նի, էրք, դիք, վի, վըղիք, էստան, իք* մասնիկներով՝ *ճամփէք, ծիան, կեղան, տեղան, քուրանք, հօրքուրանք, մօրքուրանք, քէռանք, անգըջնի, պէըննի, պառվընի, կաղվընի, կըլխընի, օչխըրնի, տըղէրք* // *տըղէք, ախպըրդիք, ըշվի, ծեռվի, օտվի, ծընգվի, մաղվի, տիրվըղիք, կընգըդիք, կաթէստան* (գաթաներ), *կինէստան* (զինիներ), *պալնէստան* (բանալիներ), *մառթիք:* Դիտվել է հոգնակերտների կրկնակի գործածություն՝ *աթօռքնի:* Մի շարք բառեր եզակի թվում, շատ գոյականներ հոգնակի թվում սովորաբար ենթարկվում են Ու հոլովման՝ *գ՛ըլխու, իշու, սէլէրու, կօվէրու, կեղանու* նլն: Ոջ հոլովման ենթարկվում են մի շարք բառեր (կէրսարօչ, տիրօչ): Առկա են Ց հոլովման յուրօրինակ դրսևորումներ (ախպըրդանց, կընկըտաց, տըղօց, էնդեղանց): Բացառականն ունի *էն* (էս, էդ) վերջավորություն (պատէրէն, սէլէն, դ՛ըբրօցէն, կեղէն, քաղքէն, հարսանիքէղ,

գ՛որձէդ), առանձին դեպքերում՝ *մէ* վերջավորություն (աստըձումէ), հատուկ տեղանունների դեպքում՝ *ու* վերջավորություն (Հէրէվընու, Սէվանու, Թիֆլիսու): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով՝ *քաղաք կաշխատի, Ախըլցըխա կըսօրվէի, կեղին մէչ:* Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (կօլխօզն էլ, սաղ օրը): Հատկացուցիչը կամ կապի՝ սեռականով խնդիրը խոսվածքում նույնպես ստանում է որոշիչ հոդ (սէլէրուն վըրա, տանը մէչ, կըլխուն վըրէն, Աղվանին մէրը): Անորոշ հոդը որպես կանոն հետադաս է (քիչըմ, մէզըմ, մառթըմ), հանդիպում են հոդի նախադաս և հետադաս միասին կիրառություններ (մէ քանիմ օր): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ինձի, քէզի, մէզի, ձ՛էզի*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էդ, էն, էսիկ, էդիկ, էնիկ): *Ով* դերանվան դիմաց առկա է *վիᵉրը* ձևը: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ինքըն, այսօր* (սրա), *այնօր* (նրա), *էդօր, էդօնք, էդօնց, էնօնք, էնքան, էդմալ, էդման, էնդեղաց, իրար, վօչ մի, ինչխ, ուրդէ, ուրդից* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, էղնել* տարբերակները: Ե և Ա խոնարհումներից բացի՝ խոսվածքում բայն ունի նաև Ի խոնարհում (կըխօսիմ, կըբ՛ըռնիմ, չընգընիմ, կըքըրվիմ, նըստիմ, հիշիմ, կապրիմ, ըլիք, զանիմ, կըցավի, կըգ՛օլիս, տէսնիմ, թօղնիս, *նաև*՝ մէռնիլ): *Գալ, լալ, տալ* բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *կու* // *գ՛ու* մասնիկով (կուգ՛ային, գ՛ուքա, կուդամ, կուլան), մյուս բայերինը՝ *կը* // *կ* // *գը* մասնիկով կամ առանց դրա՝ *կըբ՛առնան, կըխօսիմ, կըսինք, կըսէի, կըսէր, կէնիս, բ՛էրին կուտին, գը ցանին*: *Կը* մասնիկը (կամ նրա *գը* տարբերակը) հաճախ ունի հետադաս կիրառություն՝ *խընթըրէմ կը, հանդիպէնք կը, նըստէին կը, խընդա կը, գ՛ըթնիկ կը, հիշէս գը, տանին գը, գէրթան դ՛առնան գը, ցավի գը:* Միանալով բայասկզբի *հ*-ին՝ *կ* (ը)-ն դառնում է *գ՛* կամ *գ*, ինչպես՝ *գ՛էլիմ, գէլնին:* Վաղակատար դերբայն ունի *ր*-ով կամ

*լ*-ով վերջավորություն՝ *հարըստցիր, էրէր, գ՛ընացիլ, ըսկըսիլ, աշխադիլ, կըտէլ, պըրձէլ, էգէլ,* օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *է* վերջավորություն (աշխատէ, կըրէ, պէրէ, հընգէ, էղէ, իմացէ): *Հարակատար* դերբայն ունի *աձ* վերջավորություն (նըստաձ, դ՛ըրաձ): Հանդիպել են էական բայի ներկա ժամանակի *էմ // իմ, իս, է, էնք, էք, ին* ձևերը, ինչպես նաև՝ *էի, էիր, էր, էինք, էիք, էին* անցյալի ձևեր: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ցոյական հիմքով՝ *հանէ-ցիք, դըրկէցինք: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կընաց, մընաց:* Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևը՝ *էնիկ է հէղըս կաշխատի*: Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևում հանդիպել է *ուց* ածանցը՝ կօրուցի: Հարկադրականի եղանակիչն է ՝ *պիդի* (պիդի վառէմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աշօղ (նայող, հսկող), ավէլուրդ, բ՛առնալ, բաջանաղ, դ՛ըրկից, զանիլ, էդմալ, էդման, էրթալ, թայ (հասակակից), թըք, թընդըրտուն, թընդիր, թօփ էղնէլ (հավաքվել), ինադ էնէլ, ինչխ, խէլառ տամար, խօջա կընիկ, ծընէլ (ծննդաբերել), կէսուր, կէրսար, կըլօխ, կընիկ մառթ, կօլխօզ, հավգիթ, հüրիֆ, հէրսը հանէլ, հըմի, հընչի, ղաւրմա, ղüրիբ, ղըրկէլ, ղօնաղ, ճահիլ, ճամփա, ճանավար (գայլ), մամ (տատ), մանչ, մօխիր, յէփ, շէլլիք (ժողովուրդ), ուլիկ (այծ), ուրդէ, չիդէմ, պաժնիլ, պապ, պըզդի, սաղ օրը, սաղը (բոլորը), սէլ, սօմին, վախտ, վըրա կըլխու, տըղա (երեխա), տըրկից, տուռ տըռան վըրա, տօխ (աղավնի), ցիկան, քառտօլ, քէռէզին, քըրվէլ, օդա (հողա), օթաղ, օչխար, ֆուրդուն և այլն:

Քանաքեռավանի բնակիչների մեկ այլ հատված, ըստ տեղացիների վկայության, եկել է Նախիջևանի Փարադաշտ, Շոռուտ, Գաղ գյուղերից 1950-ականների վերջերին: Փարադաշտ

գյուղի բնակիչների նախնիների մեջ մեծ թիվ են կազմել 1828 թ. Պարսկահայաստանից եկածները:

Քանաքեռավանի՝ Փարադաշտը ներկայացնող բնակիչների խոսվածքը, որ հիմնականում խոսակցական հայերենն է՝ Արարատյան և Ղարաբաղի բարբառների հատկանիշներով, *ե, ո* երկբարբառային հնչյուններ չունի: Միավանկ բառերի, հաճախ նաև երկվանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վo* և *յէ* (յէկ, յէս, վօտ, վօր, վօխճար, վօչիլ, յէրգար, յէրէզ): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես են գալիս քմայնացած *ö, իւ* ձայնավորներ՝ *öմի, öնզիզ* (ընկույզ), *կʲöռ, նöնի, ղöրիբ, պöց, Մöլիքանց, ջöհէլ, սöրսöղ, պöզիլկ, պöցիւր* (բարձր), *իւլ* (ուլ), *տիւս* (դուրս), *տիւքʲ* (դուք), *տիւնղիւմ* (դդում): Խոսվածքին բնորոշ է նախաշեշտ վանկի ձայնավորի սղումը, որի դիմաց ըստ անհրաժեշտության *ը* է արտասանվում (ըրէխա, պըժանէլ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում պահպանվում է կամ դառնում *է* (սատանան, քʲալավէք): Նախնական *ոյ* երկբարբառի դիմաց առկա է *ու* (լուս): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է բառասկզբի ձայնեղների դիմաց խուլերի առկայությունը (պան, պöց, պէրէլ, պըռնէլ, կʲալ, կʲաթա, կʲöռ, կէղ, կըլօխ, ծէր, ծէռ, ծըմէռ, ծի, տö, տըրանք, տընէլ, տուռ, ճառթէլ, ճըրէլ), առանձին դեպքերում՝ շնչեղ խուլերի (քինալ, քըշէր) կամ շնչեղ ձայնեղների (գ՛օմ) գործածությունը: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (միրք, կէղամէչ, տիրօչ, մառթ, վէռչ, առթէն): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (յէրէզ, իրիգուն, յէրգար): Խոսվածքն ունի քմայնացած հետնալեզվայիններ (տիւքʲ, կʲալ, կʲաթա, կʲառ), որոնք երբեմն հնչում են իբրև հպաշփականներ (քʲ//չալավէք /ավերակներ/, քʲ//չöշվöն /չօլ, դաշտ/): Փարադաշտցիների վկայությամբ՝ քմայնացմամբ պայմանավորված այս իրողությունը ավելի բնորոշ է Շոռուտին, ինչպես՝

*ճöռ > կʸöռ, չինանք > քինանք:* Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (անգաժնի, քաշկ, աշկ): Բառասկզբի *խ*-ի դիմաց երբեմն առկա է *հ* (հաղալ): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ* (ղöրիբ, ղöշöնգ, ղավուրմա, ղօնաղ, ղօչ): Շեշտը նախավերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, անք, անիք, նի* մասնիկներով՝ *բըվէրք, ծիյանք, կընանիք, անգաժնի, կըլօխնի:* Դիտվել է Ց հոլովման յուրօրինակ ձև (գէրմանացօց): Ոչ հոլովմամբ հանդիպել է *տիրօչ* ձևը: Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (վօտից, պöնից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է *ում // ըմ* վերջավորությամբ հոլովով՝ *ճըրում, կէղըմ:* Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (վօտը, սաղին), ընդ որում՝ սեռականից բացի՝ որոշիչ հոդ կարող են ստանալ բոլոր հոլովները (կէսիցը, թէվիցը, գ՛օմումը, քաղաքումը): Անորոշ հոդը նախադաս է (մի պառավ): Անձնական դերանունները տրական հոլովում չունեն *ի* հավելված՝ *ինձ, քէզ, մէզ, ծէզ:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ՝ *էս, էտ, էն:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *տիւ, մէնք, իրան, տö, տըրանից, տըրանք, տըրանց, ըսէնց, ըտէնց, ըտէղ, ըտէղից, ընդէ, ըտէ, էնքան, իրար, ընչի // ինչի, վօնց* և այլն:

Խոսվածքում *գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *ում* կամ *իս* վերջավորությամբ անկատար դերբայով (կʸալիս, կʸալում, տալիս), մյուս բայերինը՝ *ում // ըմ* վերջավորությամբ անկատարով (ասում, ճըրում, կօրում, կընում, պըռնում, տէնում, քինում, ապրըմ, քաշըմ, ըլնըմ, հաղըմ, կրնըմ, վառըմ, կըրըմ): Վաղակատար դերբայն ունի *լ*-ով վերջավորություն՝ *ասէլ, պէրէլ, թօղէլ, էկէլ*, ընդ որում՝ օժանդակ բայից հետո եկող վաղակատարը կարող է կորցնել կամ պահպանել վերջնահնչյունը (չի կարացէլ, յէս էմ կընացէ): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (կօրած, շարած): Ապառնի դերբայի *ու* վերջավորությունը օժանդակ բայի ձայնավորից առաջ դառնում է *վ*՝ *կʸալ վէնք, ճառթիլ վէմ, քինալ վէմ, կʸալ վէմ:* Եական բայի ներկա

ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *քինաց // կընաց, մընաց:* Ե խոնարհման բայերի անցյալ կատարյալը հանդիպում է կրավորաձև վերջավորություններով (արանք, պըռնավ, պէրամ, կըրամ, կըրար, կըրավ, կըրանք, կըրաք, կըրան, ճառթամ, ասամ): Այս ժամանակաձևի եզակի առաջին դեմքում գործածական է *մ* հավելված (տէսամ, պէրամ, տարամ, քընամ, վէ կացամ): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (լօղացընէլ): Հարկադրականի եղանակիչն է *պըտի* (պըտի քինան):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ախպուր, ա̈մի, ա̈նգիզ (ընկույզ), արաղ, աքլօր, ըրէխա // ըրխա, թամք, իրիգուն, *իւլ* (ուլ), խաբար, կա̈ղէլ (գաղ-ից՝ պահել), կէղամէչ, կըլօխ, կʲաթա, կօտօշ, հաղալ, հըվաուզ, ձաձա (հորեղբայր), ղա̈շա̈նգ (գեղեցիկ), ղավուրմա, ղա̈րիբ, ղօնաղ, ղօչ, ճառթէլ, ճըրէլ, ճըրօգ, մակար, մատաղ անէլ, յէրգար, նա̈նի, պա̈զիւկ, պա̈ց անէլ (բացել), պա̈ցիւր (բարձր), պըժանէլ, պուճուր, ջա̈հէլ, սաղ (բոլոր), սավօրական, սա̈րսա̈ղ սա̈րսա̈ղ տիւս տալ, վէր կալէլ, վիրէվ, վօնց, տէնալ, տիւ, տիւնդիւմ (դդում), տիւս, քաշ (ներքև, ցած), քաշկ, քաշկեր (սատանաներ), քըշէր ցէրէկ, քըռտինքի մէչ կօրէլ, քինալ, քʲ/չալավէք (ավերակներ), քʲ/չա̈շվա̈ն (չօլ, դաշտ) և այլն:

**ՔԱՍԱԽ**[142] – Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1965 թ.՝ բնակեցվելով Ապարանի տարածաշրջանի Քասախ և Ջովունի գյուղերից տեղափոխվածներով: Գյուղի բնակիչների մի մասը եկել է Ախալքալաքից և Գանձակից: Քասախ է անվանվել

---

[142] Քասախի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1979 թ. լրացված թիվ 76 տետրում, առկա են նաև գյուղում 2017 թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

1970 թ.: Ունի մոտ 5800 բնակիչ, որոնց նախնիների հիմնական մասը գաղթել է Մուշից, Սասունից, Բուլանուխից, Ալաշկերտից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Քասախի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (մոմ, խընձոր, սըղոծ, թել, շէրեպ, վեծ, ձ՛ըմեռ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *ւո* և *յե* (ւոխ, ւոռտ, ւոճ, յեզ, յես, յեպ), բացառություն է *որ* շաղկապը, որը խոսվածքում ունի *օր* արտասանությունը: Նկատելի է նաև բառասկզբի *յ*-ի արտասանության թուլությունը: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *օ* և *է* (օճխար, օճիլ, օսկի, օլըրել, էրէվալ, էրգատ, էրգանկ): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (թէտվընալ, ժօղվել, ավլել, գ՛օղնալ, հառսընիկ): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (փէսէկ, էրէխէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, բ՛անջար, բ՛ոխկ, գ՛անգաղ, գ՛եղ, գ՛ըլօխ, գ՛ող, գ՛ոմ, դ՛անագ, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛ախ, ձ՛ըմէրուգ, ջ՛աղաճ, ջ՛առտել, ջ՛ոճ): Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլ և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են պարզ խուլեր (ակլօր, աղաճանկ, բ՛անծըր, բ՛օրպոս, ուրպատ, անօտի, գ՛ուտան, դ՛ատար, թըտու, յօտանասուն, խապել, սուրպ, տէկըր, իրիծել, օծ, օկուտ, առճ, մէճ): Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (ուղել, կընիգ, գ՛ըրգել, պագաս, կէձագ, մաղնիկ, կըջուջ, կըղուծ, շուղ, փէղ, պաջառ, մօձագ, մըգրաղ, սիբդըգել): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հառծագ, հէրգէն, հընդրել, հիրգուն, հիճնել): Բառամիջում և բառավերջում հաճախ *հ*-ի դիմաց հանդես գալիս *յ* (աքայ, գ՛օյ, Թաքույի, շայ, պայել, սայման): Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ* (խազ, խազան, խալմախալ, խայիմ, խավուրմա, խօնախ): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք // կ, դան, վըդան, տիք, ան* մասնիկներով՝ *խընամիք, ագռէկ, ախպըրդան,*

*քուրվըղան, տիրվըղան, հընգերղան, կընգըտիք, իձան, գ՛իլան, իշան, ձ՛իյան:* Կենդանիների որոշ անուններ, այլ բառեր եզակի թվում ենթարկվում են Ու հոլովման (առճու, իշու, գ՛իլու, կաղվու, կօվու, պառվու, գ՛իդու): Հոգնակի գոյականները ենթարկվում են Ու հոլովման (գ՛օղէրու, կօվէրու, օխճըրնէրու, տընէրու): Ոջ հոլովման ենթարկվում են մի շարք բառեր (անէրոճ, ընգէրոճ, կիսրոճ, տալոճ, տիրոճ, քըրոճ, հօրքըրոճ): Որպես կանոն հատուկ տեղանունները, նաև որոշ այլ բառեր Ա վերջադրական հոլովման են ենթարկվում (Աբարանա, Պօլսա, Սէվանա, Էրէվանա, Վանա, թունդըրա, կընգա, ախճըգա), բայց նաև՝ *Էրէվանու, Մըշու:* Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը կարող է ձևավորվել *յ*-ով (Կարօյ, Մարօյ, Սարօյ, Ժօրայ, Վազգէյ): Որոշ բառեր ունեն հետաքրքրական հոլովաձևեր (օր – ավուր, տէկըր – տէկյէր // տէկօր, ւող – ւողաց, ձ՛եռ – ձ՛եռաց): Բացառականն ունի *ց* // *ծ*-ով վերջավորություն (անէրօճից, աղվըսուծ, արէվուծ, գ՛իլուծ, թօռուծ, հածէրուց), հաճախ պատահում են նաև *է*-ով ձևեր (գ՛եղէն, ախպօրէն, ձ՛եռնէն, սարէն, տընէն, քըտէն, օրվընէ): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով (աշխըրկի մէճ, մըճ աշխըրկին, գ՛ոմըն): Որոշիչ հոդն է *ն*-ն (ապօն, էրգըրին, կէսըն), որը հաճախ բացակայում է (թակավօրուտէնիդ կէս տուր, էրգինկ պաղռավ): Անորոշ հոդը հետադաս է (մառտ մի): Ստացական հոդերից հետո առկա է հավելական *ի* մասնիկ (գ՛ըլօխսի, ձ՛եռտի): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* // *իզ* հավելված՝ *ընձի*(*զ*), *քըզի*(*զ*), *մըզի*(*զ*), *ձ՛ըզի*(*զ*)*:* Հանդիպում են ցուցական դերանունների տարբեր համակարգեր (էս, էդ, էն // իդա, էդի, էնի // հըդը, էդ, ինա): *Ով* դերանվան դիմաց առկա է *ւոր* ձևը, որի սեռականտրականի ձևն է *վիր:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *հինկ, ընձնէ, քըզնէ, ձ՛ըզնէ, ուրնէ, ուրընծնէ, ընձնիծ, ձ՛ըզնիծ, ուրանկ, ուրանծ, ուրին, ուրնիծ, ուրընծօվ, մըզնօվ, ընդրա, ընդոր, ընդոնկ, ուրանկ, ըղրանկ, իդոնկ, իդոնծ, ըստրանկ, իդոր, հըմընու, հըմալ* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել* տարբերակները: Բայը այս խոսվածքում ունի Ի և Ա խոնարհումներ (գ՛ըրիմ, ուղիմ, մընամ): *Գալ, լալ, տալ* բայերն ունեն անորոշի *հիկալ, հիլալ, իղալ* ձևերը, սրանց ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ՛ի // կի* մասնիկով՝ *գ՛իկամ, գ՛իլաս, կիղանկ*, մյուս բայերինը՝ *կը // կ* մասնիկով՝ *կըսիմ, կը մընա, կը խօսէր, կըծիձղէր: Գալ, լալ, տալ* բայերի ժխտական դերբայի ձևերն են՝ (չըմ) *իկա, իլա, իղա: Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *h*-ին, դառնում է *գ՛* (գ՛ուզիմ, գ՛ընծընէր): Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն (գ՛ըրէր, մածէր, զարմածէր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ի* վերջավորություն (յես իմ գ՛ըրի, դ՛ու յիս գ՛ըրի, մենկ ինկ գ՛ըրի): Հարակատար դերբայն ունի *ուզ* վերջավորություն՝ *քընուզ, նըշանվուզ, փըղուզ*: Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *աձ* վերջավորությամբ դերբայական ձև՝ *մածաձ ը // մածէր ին* (մնացել են), *գ՛ըրաձ էն // գ՛ըրէր էն* (գրել էին): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ը, ինկ, իկ, ին*, անցյալի ձևերն են՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն:* Ինչպես երևում է՝ անցյալ ժամանակաձևում նույն կերպ են արտահայտվում եզակի երկրորդ և երրորդ դեմքերը, ինչպես նաև եզակի և հոգնակի առաջին դեմքերը: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով՝ *խըմի // խըմէծի, հուզինկ // հուզէծինկ, ծախիկ // ծախէծիկ: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ած, մած*: Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *գ՛ըրիր, փօխինկ, բ՛ըռնեծ, աբռար, նըստանկ, ծաղզավ, բ՛ըռնը՛, գ՛ըրը՛, նըստի՛, աբռի՛:* Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ը* կամ *էր* ձևը՝ ըստ ժամանակային իմաստի, ինչպես՝ *խող ը կըքաղը, օղօռ ը կըսիս, մառո մ՛էր գ՛ընծընէր:* Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ուծ // ծուծ* (իճուծել, իճէծուծել, թըռ-

ծուծել, հակուծել): Պատճառական բայերի ներկայում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըխըմծում, կըխըմծուս, բ՛անծըրծո՛ւ, մօղէծո՛ւ:* Հարկադրականի եղանակիչն է *բըղի* (բըղի գ՛ըրիմ): Սովորաբար հետադաս կիրառվող որոշ կապեր գործածվում են նաև նախադաս (հընգերդանու հեդ – հըդ պաբուն, ճամպու վըրէն – վըր ճամպուն, գ՛իդու մէճ – մըճ գ՛իդուն): *Էլ* շաղկապի դիմաց գործածվում է *լը* ձևը (իմ ապօն լը /իմ պապն էլ/):

Խոսվածքի բառային միավորներից են՝ աբուր (թանապուր), ագռա (ատամ), անտէտագ, առճըգան, բ՛ըլել, գ՛օղդու, դ՛ըրգեց, էդմալ (այդպես), էրէխօվ, թատվան, թուպ, ժօղվել, իդըմլա (այսպես), իմալ, իրիգ, լուսուն (վաղը), խազ, խայլոն, խըլավ, խըռծիգ (տիկնիկ), խօնդախ, ծագաճկ, կագըխնալ, կարկըվել, կարմըրժըռել, կէձօռ (կայծոռիկ), կըռուտ, կըտոն, կոլտ (ումպ), կուդ, կօղոշ, հալիվոր, հանդը (ահա), հառիկ, հավգ՛իտ, հավկ (թռչուն), հըմալ, հընծուծել, հըռըկել (խռովել), հըրի (մինչև), հուդա (այստեղ), հօդի (այդտեղ), հօլօնդել (հրել), հօկուհած, հօնի (այնտեղ), ձ՛ըծում, ճամպա, ճարընգան, ճուռ, մաձնի տօբրագ, մըգա, մըռու, մըտընժոռ (իրիկնապահ), մըտկափոխ, մուխ, մուռ, մօղօզիգ, յեղըռջիգ, շըխպիգ, չուրի, պաղել, պուբուշտագ (ծծրակ), պուջախ, ջ՛ըլեր, ջ՛ոճ, ջըհէզ, սարանդօստիգ (սարդ), սեղան ագռա, սիվդագ, սուրուն, վիզ, վիսալ (զգվել), տալիկ, տախտեխ, տանիկ, տապել, տիգնակըլօնձ, տիլ, փըշում, փըստալ (սայթաքել), փիդնալ (սատկել), փօղոծ (աղբանոց, զուգարան), փօշի, քունջ, քօկ, քօկըռել (արմատակալել), քօռբ՛ու, օղոռտ, օռձըգդալ, օռպէվէրի և այլն:

**ՔԱՐԱՇԱՄԲ** - Գյուղ Նաիրիի տարածաշրջանում: Ունի մոտ 700 բնակիչ, որոնց մի մասի նախնիները եկել են Վանից, Մուշից, Արճեշից, Ղարսից: Գյուղում գործածական է խառը տիպի մի խոսվածք՝ Մշո բարբառի հատկանիշների գերակշռումով և Արարատյան բարբառի տարրերով:

Քարաշամբի խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուն-ներ (մենք, վեց, իրեք, նոր, գ՛ող, խոտ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոր, վոռփ, յես, յերք, յեփ)՝ բացառությամբ *որ* շաղկապի, որ ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում այդ միավորների դիմաց առկա են *օ* և *է* (էրէխա, էրկու, օրօճ), բայց նաև՝ *յերկիր, վօսկօռ:* Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ա̈ ձայնավոր (ա̈խճի, զա̈րկել, գա̈դա̈, գա̈վա̈զրջի, թա̈ժա̈, թա̈լել, թա̈մբա̈լ, լա̈ճ, լա̈րել, լա̈ց, խա̈բա̈ր, խա̈նչա̈լ, հա̈յա̈թ, վա̈խէնալ, Վա̈ռթան, փազա̈խ, Նա̈զա̈ր, յա̈քա̈, քա̈սա̈ր, քօսա̈): Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը (խեխճընալ, խառսնիք, սօրվել, գ՛օղնալ, ավլել, խավնել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (էրէխէք, վըրէս, տըղէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛այց, բ՛ան, բ՛ըլվել, բ՛ըռնել, բ՛էրել, բ՛ուժել, գ՛ախտնի, գ՛եղ, գ՛էլ, գ՛էտին, գ՛ըլօխ, գ՛իշեր, գ՛իրկ, գ՛ող, գ՛օխտուկ, գ՛ում, դ՛աշտ, դ՛էզ, դ՛ընել, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛եռ, ձ՛ի, ձ՛ուկ, ջ՛առթել, ջ՛ոչ, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (համփէրել, մարաք, Սարքիս, յերքօղ, ժօղօվուռթ, մառթ, մէչ, վեռչ, հօքի): Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (հէդեվ, փազել, կըդրել): Խոսվածքում գործառում են քմայնացած հետնալեզվային պայթականներ (գ՛ʲախ, գ՛ըկʲէր, քʲա̈նի, քʲա̈մբա̈խ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Մի շարք դեպքերում բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում (հէրէկ, հընչի, հընգեր, հիչնել, հիրան): Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խառս, խաց, խատ, խէտ, խառսնիք, խավնել, խարիր, խօրօխպէր, խօխպէր, խօրքուր, պախել), չնայած բնակիչները հակված են խուսափելու այդ արտասանությունից:

Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ*՝ *ղայիշ, ղուլ*: Երբեմն *էլ* շաղկապը գործածվում է *լ*-ի անկումով (ձ՛իյօվ է /էլ/ ման ա էկե, յես իմ կընգան է /էլ/ կըպախեմ, մէկ է /էլ/ գ՛ըկա): Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում ձևավորվում է նաև *ք, իք, տանք, տիք* մասնիկներով՝ *տըղէք, մառթիք, ախպըրտանք, կընգըտիք* (նախկինում՝ *կընթեր*): Հոգնակի գոյականները կարող են ենթարկվել Ու հոլովման՝ *քարէրու:* Ոջ հոլովմամբ հանդիպել են *տիրոչ, հընգէրոչ, քըրոչ* ձևերը: Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը որպես կանոն ձևավորվում է *յ*-ով՝ *Բ՛օզօյ, Հ՛ըոյ, Վըրթօյ, Նազօյ, Մարօյ, Ուստօյ, կակօյ:* Բացառականն ունի *ց*-ով վերջավորություն (Վանից, տեղէրից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով՝ *ղ՛աշտըն ա բ՛ըռնե, մարաքի մէչ, ամբըրոցի մէչ:* Որոշիչ հոդը ունի *ը* և *ն* դրսևորումներ (էրէխէն, ավազըն, պապը), ընդ որում՝ *ն* հոդը ավելի գործածական է, բայց հաճախ էլ որոշիչ հոդը բացակայում է (ճիժ քընուկ ա, իմ տատի անուն Ղումաշ էր, իմ պապ զառթնե): Անորոշ հոդը նախադաս է՝ *մէ բ՛ան:* Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի: Ով* դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին:* Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձնա* (ինձնից), *հինքըն, մենք հինքըներըս, հիրա, հիրան, հիրանից, հիրանք // իրանք, ձ՛եր, ըսրանք, էղրանք, ըտըրա, ըտըրան, ըտըրանց, ընդըրան, էտոր, էսենց, ըսենց, ընենց, ըստե, ըտեղ // ըտե, ընդե, ընդեղից, էնքան, ամէք մէ, իմալ* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, կարողանալ* բայերի դիմաց հաճախ գործածվում են *էնել, ըսել, եղնել, կանալ* տարբերակները: Բայի Ե և Ա խոնարհումներից բացի՝ դրսևորվում է նաև Ի խոնարհում՝ *ունիմ, տանիմ:* Սահմանականի ներկան և անցյալ անկատարը սովորաբար կազմվում են *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (խօսում, տէնում, ասում, անըմ): Գործ-

ածվում են այդ ժամանակաձևերի՝ նաև *կը* մասնիկով կազմություններ (կըցանեմ, կըկատղի, կըմըտի, կէթինք, կըսըղինք, կըխօսամ) կամ էլ առանց *կը*-ի ձևեր (հէլի նայա /ելնում նայում է/, պախկըվէր /պահվում էր/): *Գալ* և միավանկ մյուս բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է անորոշ դերբայի վրա *ում* մասնիկի հավելում ունեցող անկատարով (գ՛ալում, տալում), ինչպես նաև՝ *գ՛ը* կամ *կը* մասնիկով՝ *գ՛ըքէր* // *գ՛ըկյէր, գ՛ըկա, կըտա, կըտաս:* *Կը* մասնիկը, միանալով բայասկզբի *հ*-ին, դառնում է *գ՛* (գ՛էլին, գ՛ավաքա): Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն (արէր, ապրէր, փօխէր, մընացիր, տէսիր, կիսիր, էկիր, սիրիր, ունէցիր, բ՛էրիր, ամուսնացիր), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (էկե, սարքե, եղե, մընացե, էրէվացե, քաղե, գ՛ըթե, գ՛ըրե), ընդ որում՝ վերջին ձևը վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքի իմաստ կարող է արտահայտել առանց օժանդակ բայի (տըվե /տվել է/, հանե /հանել է/, ունէցե /ունեցել է/): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն՝ *քընուկ, կարքըվուկ, քըցուկ, պարկուկ, վ՛ախէցուկ, կայնուկ:* Վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում զուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև, որը համապատասխան իմաստ կարող է արտահայտել նաև առանց օժանդակ բայի՝ փախցըրած (փախցրել են): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, են, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ոչ ցոյական, այնպես էլ ցոյական հիմքերով՝ *սաի, սպանին, զ՛ըրկէցին, ըսպանէցին: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ընաց* // *գ՛աց, մընաց:* Անցյալ կատարյալը ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *խըփեց, համփէրիր, սպանին, բ՛ացվավ, ծընվավ:* Դիմավոր բայաձևերից առաջ, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, խոսքում կարող է հանդես գալ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևը՝ *ինչ ա կըմըշակենք, ինչ ա կէնես:* *Կը* մասնիկով ժամանակաձևերի, ինչպես նաև

վերլուծական ձևերի՝ ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի ձևերում *չ* ժխտական մասնիկը կարող է դրվել բայաձևի վրա, ինչպես՝ *չէնէր* (չէր անում), *չեղե* (չի եղել), *չըկըդըռե* (չի կտրվել), *չըհամփէրե* (չի համբերել): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Հանդիպել է պատճառական *ցըց* ածանց (սատկէցըցի): Հարկադրականի եղանակիչն է՝ *պըդի* // *պըտի* (պըդի թօղես, պըտի անեն):

Խոսվածքի բառային միավորներից են՝ ախպէր, ամբըրոց, անմառթ, ավդուշ, բ՛ըլվել, բօլ, բօյօվ, գ՛էշընալ, գ՛յախ, գ՛օխտուկ, գöդö, գöվöգըջի (գզզված, խառը՝ մազերը), դ՛ուս, դիֆտ, զիբիլ, էս էրկօր, էրէխա, էրէխատէր, թաթարի (անմիջապես, շտապ), թöժö, թöլել, թöմբöլ, թöրէք, թըվանք թöլել (հրացանով կրակել), թունդիր, թօռ (ուռկան), թօփալ, իմալ, լöճ (տղա), լայէղ ենել, լöրել (վռնդել), լէզուն բ՛ըռնըվել, լը (դեռ), լըռփօտել, խöբöր, խöբրաբըզիկ, խöնչöլ, խառսնիք, խավնել, խօխպէր, խօրքուր, խօրօխպէր, խօրօտ, կակօ (հորեղբայր), կակօյ կընիկ (հորեղբոր կին), կայնել, կանալ, կարքըվել, կէսրար, կընիկ, կըսկըծու, կըտուր, կիսուր, կօլօտ, հöյöթ, հետ տալ (որձկալ), հէռթ (երդիկ), հէվի (երկրորդ կին), հընչի, հուշիկ, դայիշ, դըրկել, դուլ (նայօղ), ճըժօվ, ճիժ, ման գ՛ալ (շրջել), մառթ (ամուսին), մարաք, մըկա, մինազ, մուռ ունէնալ, յöնի, յöքö, յեռթիկ, յեռլական (տեղի ժողովուրդ), յերանեկ, նաղդի, նամուս, շախել, շըվաք (հովանի), շուշուտ, ուշաթափվել, պախել, պախկըվել, պըստի, պըստիկ, ջ՛ոչ, ջահէլ, ջիգիթ, ռաֆաղա, ռիսկօվ (համարձակ), սաղ (ողջ), սօրվել, վախտ, վըռիկ, վոնց, տատա (տատի), տատէ, տեղեր (անկողին), տըփել, տըքալ, փազöխ (գոմ), փորը թափել (փորը պատռել), քաղ, քöսöր, քիչվոր (քչով, քիչ մարդկանցով), քյöմբöխ, քյօռփա, քունջ, քօլօզ, քօռ, քօսö, քօփօղլու դէլ, օղա, ֆըռֆըռալ և այլն:

**ՖԱՆՏԱՆ** – Գյուղ Հրազդանի տարածաշրջանում: Նախկինում՝ Կաթ-կաթ, Չոր Ֆանտան, Սուխոյ Ֆանտան: Հիմնադրվել է 1828-1830 թթ.: Վերանվանվել է 1935 թ.: Գյուղն ունի 1000-ից ավելի բնակիչներ, որոնց մեծ մասի նախնիները այստեղ են եկել լքված Թեզխարաբ գյուղից, մյուս մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանից: Գյուղում գործածական է խառը տիպի մի խոսվածք՝ Արարատյան և Մշո բարբառների տարրերով, երիտասարդների խոսքում՝ Արարատյանի հատկանիշների նկատելի գերակշռությամբ:

Ֆանտանի խոսվածքն ունի երկբարբառային *ե, ո* հնչյուններ (տեղ, ձ՛եռ, մինչեվ, իրեք, շոր, կոճ, կողմ): Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե* (վոշ, վոնց, վոր, յես): Բազմավանկ բառերի սկզբում հիշյալ միավորների դիմաց առկա են *օ* և *է* (էրէխա, օղօրմի): Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած ӧ ձայնավոր (քӧլӧմ, գյօրӧ, դӧռդ, միյնӧկ): Դիտարկվել է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղում (զուլըլել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (էրէխէք, տըղէն): Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը (բ՛ան, գ՛ալ, գ՛առ, գ՛արուն, դ՛ընել, դ՛ուս, ձ՛եռ, ջ՛ուր): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (մառթ, մէչը, մուք, խընթիր, հաքնել): Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ (աբրել, աշխադել, բախկացաձ, իրիգուն, կիրագի, պարգել, ուղել, օքուղ): *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականները կարող են վերածվել շփականների (վոշ թէ, վոնշ մէ բ՛ան): Հազվադեպ չէ բառասկզբի ձայնավորից առաջ *հ*-ի հավելումը (հառավոտ, հինքըն, հընգընել, հիմանալ, հընչի, հիրանց): Բառամիջում և բառավերջում *հ*-ի դիմաց երբեմն առկա է *յ* (դըժգօյել, պաղայել): Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն (շընչից, փողից): Ներգոյականի իմաստն արտահայտվում է համապատասխան հոլովով (գ՛յուղում): Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով (աֆտօն, իրիգունը): Հաճախ որոշիչ հոդ են ստանում նաև թվականները՝ *վեցը, յոթը:* Անորոշ հոդը նախադաս է (մէ բ՛ան): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի:* Ցուցական դերանուններն ունեն եռաշարք համակարգ (էս, էտ, էն, էսի, էտի//էդի, էնի): Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *մենք, մեր, իիրանը, իիրանց, ըստե, ընդե, ըսենց, ըտենց, իըմէն, ամէնքը, վոր մէկը, իընչի, խի, վոնց* և այլն:

Խոսվածքում սահմանականի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *ում // ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով (ցանք ենք անում, ուզում էք, վոնց ա աբրըմ): *Գալ, լալ, տալ* բայերի դեպքում վերջավորությունն ավելանում է անորոշի ձևերի վրա՝ *գ՛ալում, լալում տալում // տալըմ:* Ենթադրական եղանակի *կը* մասնիկը բայասկզբի *հ*-ից առաջ կարող է դառնալ *գ՛* (գ՛ըլնի): Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն (տարէր են), օժանդակ բային հաջորդելու դեպքում՝ *ե* վերջավորություն (էնի յա էկե, սիսեռ եմ ցանե): Հարակատար դերբայն ունի *աձ* վերջավորություն (բախկացաձ, դ՛ըրաձ): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են:* Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը հանդիպում է ոչ ցոյական հիմքով (չարին): Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր: Պատճառական ածանցն է *ցըն* (պատկէրացընել): Պատճառական բայերի եզակի հրամայականը հանդիպում է *ա* վերջավորությամբ՝ *պատկէրացըրա՛:* Հարկադրականի եղանակիչն է *պըդի* (պըդի յօլա էթա):

Խոսվածքի բառային միավորներից են՝ գյօրա̈, դա̈ռդ, դ՛ուս, իրիգուն, խի, համ … համ, հըլնել, հընչի, մեծական, մեղ դ՛ընել, միյնա̈կ, յօլա էթալ, շընորքին, շոր, սաղ, վար ու ցանք, վոնց, վոչխար, տէնալ, ուժը ախտել, քա̈լա̈մ և այլն:

# ԳԼՈՒԽ 2.2.

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Կոտայքի մարզի խոսվածքներում դրսևորվող բարբառային առավել էական հատկանիշներից են հետևյալները.

1. քմայնացած ä-ի առկայություն, +[1]. օրինաչափ դրսևորմամբ, +[2]. լայն տարածումով.
2. քմայնացած ö ձայնավորի առկայություն.
3. շրթնայնացած *ա*-ի առկայություն.
4. միավանկ բառերի սկզբի *ո*-ից առաջ *վ*-ի հավելում՝ *վո*, +[1]. *վօ*.
5. միավանկ բառերի սկզբի *ե*-ից առաջ *յ*-ի հավելում ՝ *յե*, +[1]. *յէ*.
6. *որ* շաղկապի արտահայտություն *օր* հնչատարբերակով.
7. բազմավանկ բառերի սկզբի *ո*-ի դիմաց *օ*.
8. բազմավանկ բառերի սկզբի *ե*-ի դիմաց *է*.
9. *ոյ, իւ* երկբարբառների դիմաց *ի*.
10. շեշտանախորդ վանկի ձայնավորի սղում միջնավանկում, +[1]. առաջնավանկում.
11. որևէ մասնիկի հավելման պարագայում բառավերջում *ա*>*է* անցում.
12. երկբարբառային *ե*-ի առկայություն.
13. երկբարբառային *ե*-ի՝ ավելի բաց ավարտ ունեցող տարբերակի՝ *եը*-ի առկայություն.
14. երկբարբառային *ո*-ի առկայություն.
15. *օ*>*ու*, *ու*>*օ* անցման դեպքեր.
16. *ոյ*-ի կամ *իւ*-ի դիմաց *ո* // *օ*-ի դրսևորումներ.
17. վերջընթեր շեշտի առկայություն.
18. շնչեղ ձայնեղների առկայություն.

19. բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլեր.

20. բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների դիմաց շնչեղ խուլեր.

21. բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց խուլեր, $+^{1}$. միայն շնչեղ խուլերի դիմաց.

22. բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական խուլերի դիմաց ձայնեղներ.

23. հետնալեզվային պայթականների քմային արտասանություն. $+^{1}$. դիրքով պայմանավորված.

24. հետնալեզվային պայթականների դիմաց *ջ, ճ, չ* հպաշփականներ.

25. բաղաձայնից առաջ հպաշփականի վերածում շփականի.

26. հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*.

27. ոչ բառասկզբում *հ* > *յ* անցում.

28. փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *կ*, $+^{1}$. *գ*.

29. փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *կ̂*, $+^{1}$. *գ́*.

30. փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *խ*.

31. փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *ղ*.

32. բառասկզբի *խ*-ի դիմաց տարնմանական *հ*.

33. բառասկզբի *հօ*-ի դիմաց *ֆօ*.

34. միջձայնավորական դիրքում *ս*-ի դիմաց *հ*.

35. նախաբաղաձայնական դիրքում հետնալեզվային պայթականի դիմաց *յ* ձայնորդ.

36. բաղաձայնասկիզբ բառից առաջ, նաև բառամիջում *նք* > *յ*, *նգ* > *յ* անցում.

37. բառասկզբի ձայնավորից առաջ *հ*-ի հավելում.

38. հոգնակերտների կրկնական գործածություն.

39. կենդանիների անունների կամ այլ բառերի՝ եզակի թվում Ու հոլովմամբ հոլովում.

40. Ու հոլովման դրսևորում հոգնակի թվում.

41. Ոջ հոլովման առկայություն.

42. Ո ներքին հոլովման ընդգրկման ընդլայնում.

43. Ա արտաքին հոլովման դրսևորում.

44. ձայնավորահանգ բառերի սեռական հոլովի ձևավորում *յ*-ով.

45. *ց*-ով բացառական, +[1]. կապային կառույցով.

46. *է*-ով բացառական.

47. ներգոյական հոլովի առկայություն.

48. ներգոյականի իմաստի արտահայտություն տրական հոլովով.

49. ներգոյականի իմաստի արտահայտություն հայցականով կամ սեռականով և կապով.

50. միայն որոշիչ *ն* հոդի առկայություն՝ որոշ դեպքերում ոչ պարտադիր գործածությամբ.

51. *ն* որոշիչ հոդի գերակայությամբ նաև *ը* հոդի կիրառություն, +[1]. հոդի՝ որոշ դեպքերում ոչ պարտադիր կիրառությամբ.

52. որոշիչ հոդի գործածություն նաև բացառական, ներգոյական և գործիական հոլովներում.

53. որոշիչ հոդի կրկնական գործածություն.

54. հետադաս անորոշ հոդ.

55. անձնական դերանունների տրական հոլովում *ի* հավելվածի առկայություն. +[1]. նաև *իկ* մասնիկի առկայություն.

56. անձնական դերանվան *քե* կրճատ ձևի առկայություն. +[1]. *քե, ձե* կրճատ ձևերի առկայություն , +[2]. *քե, մե, ձե* կրճատ ձևերի առկայություն, +[3]. *քե*, *մե* կրճատ ձևերի առկայություն.

57. անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի ուղղականի *զինք* ձև.

58. անձնական դերանունների սեռականաձև տրական.

59. ցուցական դերանունների երկաձևություն.

60. *ով* դերանվան դիմաց՝ +¹. *օվ*, +². *վով* // *վօվ*, +³. *վոն*, +⁴. *վöվ*, +⁵. *վոր*(ը)

61. ստացական հոդից հետո հավելական *ի* հնչյուն.

62. *էլ* շաղկապի դիմաց *լէ* //*լը.*

63. կապերի նախադաս կիրառություն.

64. բայի Ա, Ի խոնարհումների առկայություն, +¹. Ա, Ե, Ի խոնարհումների առկայություն.

65. *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց՝ *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* // *կանալ.*

66. *ում* // *ըմ*-ով անկատար դերբայ, +¹. *գալում, լալում, տալում* տիպի ձևեր և *ում* // *ըմ*-ով անկատար.

67. *գալիս, լալիս, տալիս* տիպի ձևեր.

68. *Գալ, լալ, տալ* բայերի ձևերում *ի* նախահավելվածի առկայություն.

69. *կը*-ով ներկա և անցյալ անկատար.

70. *լիս*-ով ներկա. +¹. *լ*-ով, +². *ս*-ով դերբայով.

71. օժանդակ բային հաջորդող՝ *լ*-ով դերբայի վրա *ի*-ի հավելում.

72. *գալ, լալ, տալ* բայերի՝ *կուկամ, կուտամ, կուլամ* տիպի ձևեր,+¹. *գ՛ուկամ, գ՛իլամ, կիտամ* տիպի ձևեր, +². *գ՛իկամ, գ՛իլամ, կիտամ* տիպի ձևեր, +³. *գ՛ուկամ, կըտամ* տիպի ձևեր.

73. *ր*-ով վաղակատար, +¹. *իր*-ով վաղակատար

74. վաղակատարով ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքում *ած*-ով դերբայական ձև.

75. *ուկ* // *ուգ* – ով հարակատար.

76. *ած* // *աձ*-ով հարակատար.

77. էական բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքում *ա*, +¹.*է*, +². *եը*, +.³ *ի*, +⁴. *ը* ձև.

78. էական բայի ներկա ժամանակի *եմ, ես, ա* // *ի, ենք, էք, են* ձևեր, +¹. *իմ, իս*, ա // *ի* // *ը, ինկ* // *ինք, իկ* // *իք, ին* ձևեր, +². *էմ, էս, ա* // *ի, էնք, էք, էն* ձևեր.

79. էական բայի անցյալ ժամանակի *ի* // *իմ, իր, էր, ինք, իք, ին* ձևեր, +[1]. *ինք, իր, էր, ինք, իք, ին* ձևեր.

80. էական բայի *էմ էր, էս էր, էր, էնք' էր, էք' էր, էն էր* անցյալի ձևեր.

81. էական բայի անցյալ ժամանակի *էնկ* // *էնք, էր, էր, էնկ* // *էնք, էկ* // *էք, էն* ձևեր.

82. ներկայի և անցյալի ձևերի տարբերակում բայական վերջավորություններում *ե-է* հակադրությամբ.

83. Ե խոնարհման պարզ բայերի՝ ցոյական հիմքով անցյալ կատարյալ.

84. Ե խոնարհման պարզ բայերի՝ ոչ ցոյական հիմքով անցյալ կատարյալ, +[1]. *ամ, ար, ավ, անք, աք, ան* տիպի վերջավորություններով.

85. անցյալի ձևերի եզակի առաջին դեմքում *մ* հավելված, +[1]. միայն անցյալ կատարյալում.

86. բայի եզակի առաջին դեմքում հոգնակիի ձևի գործածություն.

87. *գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի *գ՛աց, մաց* տիպի ձևեր.

88. *էնել* և *դ՛ընել* բայերի անցյալի *էն, դ՛ըն* հիմքերի առկայություն, +[1]. միայն *էնել* բայի դեպքում.

89. ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակում համապատասխան վերջավորություններով.

90. ըղձական (նաև՝ ենթադրական, հարկադրական) անցյալի վերլուծական ձևեր.

91. *կօ* հաստատական մասնիկի կիրառություն.

92. պատճառական *ցըն* ածանցի կիրառություն.

93. պատճառական *ուց* // *ցուց* (ուծ // ծուծ) ածանցի կիրառություն. +[1]. *ըց* // *ցըց* ածանցի կիրառություն.

94. պատճառական բայերի եզակի հրամայականի *ա* վերջավորություն.

95. պատճառական բայերի եզակի հրամայականում կամ այլ ձևում *ու* խոնարհիչի առկայություն, +[1]. բեական հիմքի վրա.

96. բայական *չ* ածանցի առկայություն.

97. բայական *ն* ածանցի բացակայություն ներկայի հիմքից կազմվող ձևերում.

98. նախադասության մեջ տրամաբանական շեշտ կրող բառի և դիմավոր բայի միջև օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի գործածություն.

99. ժխտական մասնիկի հավելում բայաձևի վրա՝ հնարավոր օժանդակ բայի բացակայությամբ.

100. հարկադրականի *պըտի* // *պըդի* // *բըդի* եղանակիչ, +[1]. *կըտի* եղանակիչ, +[2]. պըտա՛ եղանակիչ, +[3]. պէտք ա եղանակիչ:

Կոտայքի մարզի խոսվածքներում բարբառային այս 100 հատկանիշները ունեն տարածվածության էական տարբերություններ (տե՛ս ստորև բերվող աղյուսակները): Բացարձակ ընդհանուր ընդգրկում ունեցող հատկանիշները քիչ են, որովհետև տարածաշրջանի՝ Ում, Կը և Լիս ճյուղերի խոսվածքները բնականաբար ունեն մյուսներից առանձնացող մի շարք իրողություններ: Այնուամենայնիվ, հիշյալ բոլոր խոսվածքներին բնորոշ են բարբառային հայերենի ընդհանուր կամ գրեթե ընդհանուր մի խումբ հատկանիշներ, ինչպիսիք են՝ միավանկ բառերի սկզբի նախնական *ո*-ից և *ե*-ից առաջ համապատասխանաբար *վ*-ի և *յ*-ի հավելումը, բազմավանկ բառերի սկզբի նախնական *ո*-ի դիմաց *օ*-ի, իսկ *ե*-ի դիմաց *է*-ի առկայությունը, բառասկզբում ձայնավորից առաջ հագագի հավելումը, ներգոյականի իմաստի արտահայտությունը հայցականով կամ սեռականով ու կապով: Ավելի շատ են գրեթե ընդհանուր տարածում ունեցող հատկանիշները: Մասնավորապես, շեշտանախորդ վանկի ձայնավորի սղում չի դիտվել միայն Եղվարդի խոսվածքում, միայն Ջրվեժի, Էլարի և Բջնիի խոսվածքները չունեն քմայնացած ա̈ ձայնավոր, որևէ մասնիկի հավելման պարագայում *ա>է* անցումը բնորոշ չէ Խոյ-Մարաղայի բարբառին վերաբերող խոսվածքներին, շնչեղ ձայներ բաղաձայններ չունեն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառների, ինչպես նաև Առինջի և Ջրվեժի խոսվածքները, անձնական դերանունների

տրական հոլովում *ի* (կամ *իկ*) հավելված չունեն Առինջի, Զովեժի և Եղվարդի խոսվածքները, միայն սրանք չունեն *ը*-ով վաղակատար դերբայ, Զառի ու Հացավանի, Նոր Գյուղի ու Ողջաբերդի խոսվածքներում չի արձանագրվել ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակվածություն համապատասխան վերջավորություններով և այլն: Բավականին շատ են տարբեր բարբառներ ներկայացնող խոսվածքներում տարածված հատկանիշները: Այսպես, շրթնայնացած *ա* ձայնավորի առկայություն է դիտվել Վանի, Բայազետի բարբառների և Մակուի խոսվածքի դրսևորումներում, բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլեր են առկա Վանի, Խոյ-Մարաղայի բարբառները ներկայացնող խոսվածքներում, ինչպես նաև Արարատյան բարբառի որոշ դրսևորումներում, հետնալեզվային պայթականների դիմաց *ջ, ճ, չ* հպաշփականներ արձանագրվել են Վանի բարբառի, Մակուի և Արծափի խոսվածքների որոշ դրսևորումներում, հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* ունեն Վանի, Բայազետի, Խոյ-Մարաղայի բարբառների խոսվածքները, նաև Մշո բարբառի որոշ դրսևորումներ, նախաբաղաձայնական դիրքում հետնալեզվային պայթականի դիմաց *յ* ձայնորդ, ինչպես նաև բաղաձայնասկիզբ բառից առաջ և բառամիջում բաղաձայնից առաջ *նք* > *յ*, *նգ* > *յ* անցում հատուկ է Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները ներկայացնող խոսվածքներին, հոգնակերտների կրկնական գործածությունը, կենդանիների անունների կամ այլ բառերի՝ եզակի թվում Ու հոլովման ենթարկվելը, կապերի նախադաս կիրառությունը, *կը*-ով ներկայի կազմությունը, նախադասության մեջ տրամաբանական շեշտ կրող բառի և դիմավոր բայի միջև օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի գործածությունը բնորոշ են Վանի և Մշո բարբառների խոսվածքներին և այլն: Այդպես նաև վաղակատարով ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքում *ած*-ով դերբայական ձև ունեն Վանի, Մուշի, Բայազետի բարբառների խոսվածքները, Մակուի խոսվածքի տարբերակները, *ուկ* // *ուգ*-ով հարակատար դերբայ ունեն Վանի, Մուշի, Բայազետի բարբառների խոսվածքները, Արծափի

խոսվածքի տարբերակները, պատճառական ածանցի *ուց*//*ցուց* տիպի ածանցներ ունեն Վանի, Մուշի և Խոյ-Մարաղայի բարբառների խոսվածքները և այլն: Շատ այլ դեպքերում առանձնանում են այս կամ այն բարբառի յուրահատկությունները: Օրինակ, միայն Մշո բարբառը ներկայացնող կամ այդ բարբառի շերտն ունեցող խոսվածքներին են հատուկ հետևյալ հատկանիշները՝ *որ* շաղկապի արտահայտություն *օր* հնչատարբերակով, փոխառյալ բառերի սկզբի *ղ*-ի դիմաց՝ *խ,* Ու հոլովման դրսևորում հոգնակի թվում, *ն* որոշիչ հոդի գերակայությամբ նաև *ը* հոդի կիրառություն, ստացական հոդից հետո հավելական *ի* հնչյունի գործածություն, *էլ* շաղկապի դիմաց *լէ* (կամ *լը*), եզակի առաջին դեմքում հոգնակի ձևի գործածություն: Միայն Արարատյան բարբառը ներկայացնող կամ այդ բարբառի շերտն ունեցող խոսվածքներում դիտարկված հատկանիշներ են հետևյալները՝ *ոյ, իւ* երկբարբառների դիմաց *ի*, վերջընթեր շեշտի առկայություն, միջձայնավորական դիրքում *ս*-ի դիմաց *հ*, բառասկզբի *խ*-ի դիմաց տարնմանական *հ*, Ո ներքին հոլովման ընդգրկման ընդլայնում, ներգոյական հոլովի առկայություն, որոշիչ հոդի գործածություն նաև բացառական, ներգոյական և գործիական հոլովներում, *գալիս, լալիս, տալիս* տիպի ձևեր: Միայն Խոյ-Մարաղայի բարբառը ներկայացնող կամ այդ բարբառի շերտն ունեցող խոսվածքներում են արձանագրվել հետևյալ հատկանիշները՝ ցուցական դերանունների երկադիմություն, օժանդակ բային հաջորդող դիրքում *լ*-ով դերբայի վրա *ի*-ի հավելում, էական բայի *էմ էր, էս էր, էր, էնք' էր, էք' էր, էն էր* անցյալի ձևեր: Միայն Արծափի խոսվածքի դրսևորումներին հատուկ հատկանիշներ են հետևյալները՝ երկբարբառային *ե*-ի ավելի բաց ավարտ ունեցող տարբերակի՝ *եը* - ի առկայություն, ըղձական (նաև՝ ենթադրական, հարկադրական) անցյալի վերլուծական ձևեր: Որոշ հատկանիշներ արձանագրվել են մեկական խոսվածքներում: Այսպես, *օ>ու, ու>օ* անցման դեպքեր դիտվել են միայն Վանի բարբառը ներկայացնող Լեռնանիստի խոսվածքում, հետադաս անորոշ

հողի գործածություն արձանագրվել է Մշո բարբառը ներկայացնող Քասախի խոսվածքում, անձնական դերանունների՝ սեռականաձև տրական է դիտվել Խոյ-Մարաղայի բարբառը ներկայացնող Չորաղբյուրի խոսվածքում և այլն:

Ստորև բերվող աղյուսակները երևան են բերում Կոտայքի մարզի խոսվածքներում բարբառային յուրաքանչյուր հատկանիշի տարածման պատկերը, առանձին խոսվածքների հատկանիշների ամբողջությունը, միաժամանակ հնարավորություն են ընձեռում դիտարկելու բարբառային միավորների փոխհարաբերությունները:

**Հնչյունական հատկանիշներ** Աղյուսակ 1

| h/h | 1.Լեռն. | 2.Կքրձ. | 3.Ջրառ. | 4.Վնտր. | 5.Արմս. | 6.Ձորբ. | 7.Մյկս. | 8.Ձոլուն. | 9. Աղնձ.. | 10.Մարմ. | 11.Մոլկ. | 12.Բուժ. | 13.Քասխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | +[1] | +[1] | +[1]- | +[1]- | +[1] | +[1] | + | +[1] | + | + | + | + | -+ |
| 2. | + | - | - | - | +- | +- | - | - | - | - | - | - | - |
| 3. | +- | +- | +- | +- | - | - | - | - | - | - | -+ | - | - |
| 4. | + | + | + | + | +[1] | + | +[1] | + | + | + | + | + | + |
| 5. | + | + | + | + | +[1] | +[1] | + | + | + | + | + | + | + |
| 6. | - | - | - | - | - | - | - | - | - | + | - | + | + |
| 7. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 8. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 9. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 10. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 11. | + | + | + | + | - | - | - | -+ | + | + | + | + | + |
| 12. | + | + | + | + | -+ | - | + | + | + | + | + | + | + |
| 13. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 14. | + | + | + | + | -+ | + | - | + | + | + | + | + | + |
| 15. | + | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 16. | + | - | - | - | - | + | - | - | - | - | - | - | - |
| 17. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 18. | - | -+ | -+ | -+ | - | - | -+ | -+ | + | + | + | + | + |
| 19. | + | + | + | + | + | + | + | + | - | - | - | - | - |
| 20. | + | + | + | + | + | + | + | + | -+ | + | + | -+ | - |
| 21. | -+ | - | - | - | - | - | - | - | +- | - | - | +- | + |
| 22. | -+ | -+ | -+ | -+ | - | - | -+ | -+ | + | -+ | - | + | + |
| 23. | + | + | + | + | + | + | + | + | - | - | + | - | - |
| 24. | -+ | - | - | -+ | - | - | - | - | - | - | - | - | - |
| 25. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | - |
| 26. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | -+ | - |
| 27. | +- | - | - | - | - | - | - | - | - | - | - | + | + |
| 28. | + | + | + | + | + | + | - | + | + | + | + | - | - |
| 29. | - | - | - | - | - | - | -+ | - | - | - | - | - | - |
| 30. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | + | + |
| 31. | - | - | - | - | - | - | +- | - | - | - | - | - | - |
| 32. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 33. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 34. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 35. | + | + | + | + | + | + | + | + | - | - | - | - | - |
| 36. | + | + | + | + | + | + | + | + | - | - | - | - | - |
| 37. | + | + | + | + | -+ | -+ | -+ | +- | + | + | + | + | + |

| հ/հ | 14.Ակնք. | 15.Գեղրդ. | 16.Գողթ | 17.Կոտյք. | 18.Հատոս. | 19.Ալափ. | 20.Արզակ. | 21.Քաղսի | 22.Գառնի | 23.Մղրձ. | 24.Արգլ. | 25.Մրգշ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 2. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 3. | +- | +- | +- | + | -+ | -+ | -+ | - | -+ | - | - | - |
| 4. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 5. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 6. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 7. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 8. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 9. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 10. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 11. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 12. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 13. | - | - | - | - | - | - | - | + | - | - | + | + |
| 14. | + | + | + | + | + | + | + | + | + | + | +- | + |
| 15. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 16. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 17. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 18. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 19. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 20. | + | + | + | + | + | + | + | + | + | - | - | - |
| 21. | - | - | - | - | - | - | - | - | - | +- | + | + |
| 22. | -+ | -+ | -+ | -+ | -+ | -+ | +- | +- | -+ | + | + | + |
| 23. | - | +[1] | -+ | -+ | -+ | +[1] | +[1] | + | +[1] | - | + | -+ |
| 24. | - | - | - | - | - | - | - | -+ | - | - | -+ | - |
| 25. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 26. | + | + | + | + | + | -+ | -+ | -+ | + | -+ | -+ | -+ |
| 27. | - | - | - | - | - | + | - | - | - | + | + | + |
| 28. | + | + | + | + | + | + | + | + | + | -+ | + | + |
| 29. | - | - | - | - | - | - | - | - | - | +- | - | - |
| 30. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 31. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 32. | - | - | - | - | - | -+ | - | - | - | - | - | - |
| 33. | - | - | - | -+ | - | - | +- | - | - | + | + | + |
| 34. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 35. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 36. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 37. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |

| հ/հ | 26.Առինջ | 27.Ջրվեժ | 28.Եղվրդ. | 29.Բլխկտ.. | 30.Գողթ. | 31.Գողշն. | 32.Ջառ | 33.Ձկշն. | 34.Էլար | 35.Կթնղբ. | 36.Կմրս. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | -+ | - | -+ | + | +[1] | + | + | + | - | + | +[1] |
| 2. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 3. | - | - | - | -+ | -+ | -+ | - | - | - | - | -+ |
| 4. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 5. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 6. | - | - | - | - | - | - | - | + | - | - | - |
| 7. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 8. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 9. | + | + | + | - | - | - | - | - | - | - | - |
| 10. | +[1] | +[1] | - | + | + | + | + | + | + | + | + |
| 11. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 12. | - | - | - | +- | + | + | + | + | - | + | + |
| 13. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 14. | - | - | - | - | + | + | + | + | - | + | + |
| 15. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 16. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 17. | + | + | + | - | - | - | - | - | - | - | - |
| 18. | - | - | + | +- | -+ | + | + | + | + | + | -+ |
| 19. | + | + | - | -+ | + | - | - | -+ | - | -+ | + |
| 20. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 21. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 22. | -+ | +- | -+ | -+ | -+ | - | -+ | -+ | +- | -+ | -+ |
| 23. | - | - | +[1] | - | +[1] | + | +[1]- | + | - | - | + |
| 24. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 25. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 26. | - | - | - | -+ | +- | + | - | + | - | + | + |
| 27. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 28. | - | + | - | +- | -+ | + | - | + | + | + | + |
| 29. | - | - | - | -+ | - | - | - | +[1]- | - | - | - |
| 30. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 31. | + | - | + | - | +- | - | + | - | - | - | - |
| 32. | -+ | +- | -+ | -+ | - | - | - | - | - | - | - |
| 33. | + | + | + | +- | - | -+ | - | - | - | -+ | - |
| 34. | -+ | -+ | - | -+ | - | - | - | - | -+ | - | - |
| 35. | - | - | - | - | - | - | - | - | - | - | + |
| 36. | - | - | - | - | - | - | - | - | - | - | + |
| 37. | - | -+ | +- | + | + | + | + | + | + | + | + |

| h/h | 37.Կպտն. | 38.Հցվն. | 39.ՆրԳղ. | 40.Ողջբր. | 41.Սևբրդ. | 42.Բջնի | 43.Արզել | 44.Գառնջ. | 45.Թղնք. | 46.Սրլնջ. | 47.Քրշմր. | 48.Ֆանտ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | + | + | + | + | + | - | + | + | + | + | + | + |
| 2. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 3. | -+ | - | - | -+ | - | - | - | - | - | - | - | - |
| 4. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 5. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 6. | + | - | - | - | + | - | - | - | + | + | + | - |
| 7. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 8. | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 9. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 10. | + | + | +- | + | + | + | + | + | + | + | + | + |
| 11. | + | + | -+ | + | + | + | + | + | + | + | + | + |
| 12. | + | + | + | + | + | +- | + | + | + | -+ | + | + |
| 13. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 14. | + | + | + | + | + | +- | + | + | + | - | + | + |
| 15. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 16. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 17. | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 18. | + | + | - | -+ | + | + | + | + | + | + | + | + |
| 19. | - | - | + | + | - | - | - | - | - | - | - | - |
| 20. | + | + | + | + | + | + | + | + | + | - | + | + |
| 21. | - | - | - | - | - | - | - | - | -+ | + | - | - |
| 22. | -+ | -+ | -+ | - | +- | -+ | +- | -+ | + | + | -+ | +- |
| 23. | - | - | +[1]- | + | - | + | - | - | - | - | -+ | - |
Հիրար խէտ դըբրոց ինք էթում, սիրէցինք հիրար, պըսազվանք: Էն վախտվանից ձ՛եռը դ՛ըրէր էր գ՛ըլխիս: Մէ օր էկավ, մանուշակ էր բ՛էրե, տըվեց հընգեր Աղաջանյանին՝ «էսի տար տուր Հայաստանին»: Բ՛էրեց հընգեր Աղաջանյանը՝ «Վէրցըրա՛, քեզ նըվէր են բ՛էրե»: Ասի՝ «Օ՞վ ա բ՛էրե»: «Վալօդը»: Էս էլ ջ՛ուր էր խըմե էրազին, Աղաջանյանն ըստուն ջ՛ուր էր տըվե: Էկավ, ասավ՝ «Աղաջանյանն ընձի ջ՛ուր ա տըվե»: «Քա, Աղաջանյանն էրէխա ունի, քեզի ի՞նչ ջ՛ուր տա»: «Նաղդի տըվեր ա»: Մանուշակը Աղաջանյանը բ՛էրեց հանձընեց: Էտ օրվընից՝ մէ օր կըռվանք, մէ օր բա՛րիշանք: Մէ օր էլ աշխատանքի տեղը իրա խօրօխպօր տըղէն

էր, հըմի կա, Լուքսօն, ըտեն էր, պըտի մեզի տանին քաղաք ման տալու՝ բըրիգադին: Ասի՝ «Վայ, Լուքսօ ջան, ինշ գ՛ըլնի, էնենց օր գ՛ացէք, վօր սաղօվ էլ գանքյ, էլի»: Էսի մի տարի իմ խէտ խըռօվ մընաց: Էտի սէ՞ր էր: Հընչի՛ պըտի ասիր՝ Լուքսօ ջան: Քա, քօ խօրօխպօր տըղէն էր, խօ խալխի չեմ ասե... Վեռչը, գ՛ընաց բ՛անակ... Գ՛ընաց բ՛անակ, մէ օր ախպօրըս կանչած, օղօրմած, մէ նամակ են նըշանց տըվե, թէ էսի իփըր թէ յես եմ գ՛ըրե Վալօդին: Էլ ի՛նչ: Մընաց, մընաց, հէտօ հիմացան, վօր հիրանց քյեռի Յեղօյ ախպօր ախճիկն էր, սիրահարվե վըրէն՝ գ՛ըրեր ա, քըցէր ին իմ վըրէն: Քա ջանըմ, դ՛ու բ՛անակ իր էթում, էկար մեր տուն, խաց ինք թըխում, կէրար, խըմար, հէլար գ՛ացիր: Վօր բ՛ան ասի, էտ օր կասի: Վեռչը, էկավ, իրեք տարի մընաց, նոր պըսազվանք:

Հայաստան Խաչատրյան, ծնվ. 1938 թ.

## Ջառ գյուղ

***

Ուրեմ, յես էսի պաղմում եմ օղօրմած մօրըս յէլնէլուց: Ուրեմ, ճամփի մօղն ա մեր տըները: Էրկու հատ տըղա դէտը հընցնէլուց են հըլնում, տէնում են՝ ըտե կանամփի քօլեր կա: Մօտէնում են էս տըղէրքը՝ «Մայրի՛կ ջան,- բա՛,- էս քօլերը պէտկ ա մեզի», բ՛ան: Բա՝ «Ազի՛զ ջան, տարէք, բը ի՞նչ ա պէտկ»: Բա՝ «Մամայիս վոտերը ցավում, տանում ենք էսի, վօր մամաս ջ՛ըրօվ բ՛ացի, քըսի վոտերին, լավընա»: Էս իմ օղօրմած մէրըս ասում ա. «Յես էլ եմ ըտենց վոտերիցըս նեղանում, յես վո՞նց անեմ»: Ասե. «Աղէ՛ ջան, տար, դ՛իր, ջ՛ըրի մէչը լից էտ քօլերը, դ՛ի թօ յեռա»: Էկանք տէսանք՝ քարածուխի փէչի վըրէն չոռս վէդրանոց ղազանօվ լըցրե էտ քօլե-րը, ամէնաուժեղը, դ՛ըրե յեռում ա: Հիրան դ՛եղ ունի ըտենց հա-տուկ, տաքցընում էր, քըսում էր վոտներին: Դը մեծ կընիկ ա, ինչ էլ ասես՝ հավատում են: Էտ քարածուխի փէչի վըրէն յեռում, էսի սկըզբից քըսում ա, հէօ դ՛ուրը գ՛ալում ընենց, խըմում ա մի փո-քըր բ՛աժակ: Վօր խըմում ա, էտ դօզայի տակը էտ ցավերն առթէն

հէչ ա հըլնում, բ՛ան ա հըլնում, վեռչը, հընսնում ա: Մէ վախտ հընսնում, պառկում քընում ա, նորուց էլ սկըսում ա էտ վոտները ցավալը: Էս անքամին մեծ բ՛աժակօվ ա խըմում... Ուրեմ, իմ հրօխպէրները սաղ բ՛ըժիշկներ են… Ա՛յ մառթ, գ՛ընացէ՛ք բ՛էրէք, էս մառթը մեռնում ա: Բ՛այց մեզի չի ասում, վոր ինչ… Վեռչը, գ՛ալում են, ըստուգում են՝ թոք'երն առօղջ, վոտերն առօղջ, գ՛ըլօխն առօղջ, ամէն ինչն առօղջ ա, բ՛այց մեռնում ա էսի: Ի՞նչ անենք, վեռչը, չի ասում մեզի, նորուց էլը՝ «Մեռա՛մ, ընձի սպանաք», էս արաք, էն արաք... Նորուց էտ ղօզան վոր խըմում, հէտըներըս լավ ա: Նորուց թուլնում: Հետո էն մեծ քըվորըս ասում ա. «Էրկու հատ տըղա էկան ղէտն հընցընէլու, էտ կանամփի քօլէրից ուզում ին տանին, ասին՝ մայրիկ, դ՛ու էլ տար ջ՛ըրօվ յեռցըրու, քըսի վոտերիտ կամ էլ խըմի»: Այ մառթ, էտ չոռս վէդրանոց ղազանօվ մէկ խըմէր էր, մեզ էլ չի ասում, վոր՝ էտ կանամփի ջ՛ըրից եմ խըմում, ըտենց էտ վոտէրի ցավը բ՛ան ա հըլնում… Վեռչը հինքըն ասեց: Էս մեր հային ասում էր՝ «Արի մըտի ծոցըս»...

***

Ասեց՝ «Աշկերըս լավ չի տէնում,- բա,- գյօզլուկ բ՛էրէք»: Բ՛էրում ենք ազնոց, դ՛ընում ենք, ասում ա՝ «էլը խըժվըժում ա աշկէրիս»: Բը ինչ անենք, լավ, ինշքան բ՛էրանք, ասեց՝ էս չի, էս չի: Էն ախպօրս ասի՝ «Լը տար շուշէքն հանի»: Շուշէքն հանավ, բ՛էրավ դ՛ըրավ, «Ահա,- ասեց,- այ ըստանօվ լավ եմ տէնում»…

***

Ուրեմ, օղօրմած հէրըս... դ՛աշտը վոր քաղ են անում, դը մածուն են տանում: Էդ մածունի բ՛էրանն էլ էն վախտ շոր ին կապում ին: Էրէսօվ էր տանում ինքը, զըտած չէր տանում: Ըստե էրկու հոքի կան, մէզն Հուսիկն էր, մէզն էլ օղօրմած Սիանոսն էր: Էս շորը հանում ին՝ իր էտ շորը, է՛ն շորն ին բ՛էրում կապում ըստրան: Բ՛ացում էր՝ ա՛յ մառթ, էսի զըտած մածուն ա: Գ՛ալում էր, ասում էր մօրըս՝ «Աղօ՛, կըթի՛», կըթում էր, «Մէրի՛», մէրում էր,

«Կապի՛»... Տանում էր, նորուց նույն պաղմությունը, նույն բոպէյին էտ տըղէրքը փօխում ին բանգի շորը:

Արմեն Սաֆարյան, ծնվ. 1952 թ.

## Զովաշեն գյուղ

***

Հօրօխպօրըս կընիգ ասում էր. «Մարո՛ւս ջան, էգան մեզի տընից հանէն, փախէփախ, խօրեր հըմէն բ՛ըրինձ էր, բ՛ան էր, հըմէն ծածկինք, աման-չաման լըցինք խօր, խող տըվինք վըրէն, փախանք»: Զիյօվ էկէր էն: Իմ խէր վոռփ էր եղե: Գ՛ընացե վոռփանոց, մէ հատ լավ քուր էր ճարե: Էտ քուրը մեզի պահեց: Մեր ութ էրէխէն իմ հօրքուրն ա պահե, խոռթ հօրքուրը: Մէրըս էլ քաղաքի ախչիկ էր: Մէրըս վօչ կօվ կըթել գիդէր, վօչ… Հօրօխպօրըս կընիկ գ՛իքէր, մեր կօվեր կըթէր, տէր կայնէր մեզի: Լավ բ՛արէկամներ շատ եմ ունէցե... Տօ շատըն մըտածէլուց եմ հիվանդ:

***

Ընենց կօչաղ ախչիկ ի, քըսանըիրեք տարի կօվ եմ կըթե, մալատիրկա յեմ բ՛անցըրե, շատ եմ չարչըրվե: Իրիգվորէ կէթէնք հախպըրի վըրէն կընըստէնք մինչեվ լուս, ջ՛ուր կըքաշէնք, կօվեր կըջ՛ըրէնք, կանթարօվ ջ՛ուր կըբ՛էրէնք: Էն վախտ էթում էնք կըռութ հավաքէլու, մըկա բօյս էլ չըկա, ձ՛եռներս էլ… Կէթէյ, մա̈նդա̈կ բ՛էրէյ շըլկօվ սարից, յեղըռճիկ, բ՛անջար: Ավիլուկը գ՛յա̈լում էնք, չօրցընում էնք, ձ՛ըմեռ գազանօվ դ՛ընում ենք էփենք, յեղօվ, սոխօվ: Ըստեն էլ աշխատա, հարվածային եմ եղե: Ըտըրանք հըմէն ընձի շատ էն հարգում: Մառթըս մեխանիզատօր էր, ասէր էր՝ կօկօմնէրի մէչից կօկօմն եմ ջ՛ուկե: Լավ ծաղիկն եմ ջ՛ուկե: Հէնա ջա̈յէլ ժամանակվա իմ նըկար, բ՛ե թօ տէնա: Էս ք՚յա̈նի տարի ասում եմ՝ գ՛ընա ընձի թուխտ խան, չէթա:

Էմմա Մելքոնյան, ծնվ. 1930 թ.

## Կաթնաղբյուր գյուղ

***

Իմ տատիկը Ալաշկեռտից ա, էկեր ա տասխինգ թըվին: Խօրըս կողմը չեմ գիդում: Տատուս չօռս ախպէրները Սըմբաթի ջ՛օկատում են կըռվե: Մէ ախպէրը քօռ ա եղե: Մէ ախպօրն էլ Արաքսը տարեր ա: Տատիս ու էտ քօռ ախպէրը յեզը նըստած, պոչից բ՛ըռնած հընցէր են, էրկուսօվ փըրգըվէր են: Էն ախպէր-նէրից վօչ մէ լուր չի եղե… Ասում ին՝ ընթարվէր են, գ՛ընացէր են, Սըմբաթի զօրքից դ՛ուս են էկե: Ըտենց էլ չեն իմացե՝ ուր են գ՛ընա-ցե: Մենք Ապըրխամին շատ լավ հիշում ենք: Էտ Ապըրխամի լէզուն մէ տէսակ խըփում էր Արամուսի լէզուն: Ինքը Արամուսա լէզուն էր խօսում: Մենք էլ ենք խաց ասում: Ընձի ըտենց ա թըվում՝ մերոնք, իմ տատիի պատմէլօվ, Ալաշկեռտից են: Խինը հիշում եմ, իմ հիշօղությունը շատ ուժեղ ա: Տատըս շատ բ՛աներ էր պատմում: Տատըս պատմում էր, վոր մենք Սըմբաթին քեռի յինք ասըմ, Սըմբաթ փաշին: Սըմբաթ փաշէն էլ էկավ Էրէվանի կօմայգուն պահակ: Դէ, ասում էր տատիս, մէնք բ՛ա՛ն չունինք էն վախտ, ուտէլիք էլ չունինք... Ասում ա՝ յեղ էլ չըկար, վօր, ասում ա, էտ կառտօշկէն էփինք, յեղ դ՛ընինք վըրէն, ղըրկինք Սըմբաթին: Մեր ջ՛ուրը լավ ջ՛ուր ա, խըմէք...

Սարգիս Գևորգյան, ծնվ. 1960 թ.
Սմբատ Գևորգյան, ծնվ. 1962 թ.

## Կամարիս գյուղ

***

Գյմրէզցին կօվը կըծախի, կէթա Գյռնի խառնիս: Խառնըսի ժամանակ ընդե դէ բ՛ան գ՛ըլնի, չէ՞, բօռացօղ գ՛ըլնի, վոր՝ Խըչօն տըվեց մէ մանէթ, Վաչօն տըվեց քըսան մանէթ, էս տըվեց… Էս էլ կօվը ծախե գ՛ընացե, ախպէ՛ր: Է՛, նըստե, քէֆը լավընում ա, հա տէնա՝ էս զյռնէցիներ կըլօխ կըզ՛օվան, խանի կասի՝ «էս էլ

գյմրէզցի հասարակության կողմից՝ հարուր հիցուն մանէթ, կըրէք ըտե…»:

***

Մեզի՝ մեր գ՛եղցիներին, ասում են խյմնչըլօվ աղվէս պըռնօղ… Գյմրէզցին էթում ա քաղաք, ըտե դէ վոտօվ ին էթում գ՛յլիս, էշօվ… Էթում, լա՛վ ուտում խըմում ա, վեռչը, վոնց են ասո՞ւմ, աղա յա հըլնում, խյմնչյլօվ (դէ խյմնչյլը զէնք ա հըլնում, չէ՞, էն վախտ, գըլխարկն ու խյմնչյլը պատիվն էր մառթու)... Գ՛յլիս ա վոտօվ, վոր հասնում ա էս Արամուսա դօշը, վոր հէլաք՝ առթէն ֆըռում էք էս յան, է՛լի, ըտե խասնում ա, մէկէլ առթէն քէֆը լավ ա, ասում ա՝ ա՛յ մառթ, էսենց գըլդօր-մըլդօր մըտնեմ գ՛եղը: Էտ ճամփէն գ՛յլիս ա, տէնում ա՝ մէ հատ աղվէս պառկե, շանջու կըպե, կըվորձկըտա: Էտ աղվէսին կըպըռնի: Պըռնի, ռէմէնը կըխանի, թյլի աղվըզի վիզը, քյշէլօվ պէրի: Կասի՝ կայնի պառկեմ ըստե, մէ քիչ դինջընամ, Արամուսա կըլօխը, նոր էթամ պյն՝ կեղը: Կըպառկի ըտե, ախպէ՛ր ջան, խյմնչյլը կըզյրկի հօրուկ, ռէմէնօվ կըկապի: Ու կըքընի: Դէ խըմած մառթի քընելը գիդես, քընավ՝ քընավ, ախպէր: Էս աղվէզը քյշի էս յան, քյշի էն յան, խյմնչյլն էլ իրա խէտ վէրցու կըփախի: Էսի կըլնի տէնա՝ վոչ մեր գ՛օված խյմնչյլը, վոչ աղվէս կա: Կըլնի, գ՛ընգընի քամակ, գ՛ընգընի քամակ, վորդե մառթ կըտէնա, կասի՝ «Ախպէ՛ր, խյմնչըլօվ աղվէս չէ՞ք տէսե»: Դէ դըրանք խյբյր չեն, ախպէ՛ր: Կասի՝ «Ինչ տէսէր ինք, տէսէր ինք, խյմնչըլօվ աղվէս չինք տէսե»…

***

Գյմրէզցուն կըկանչեն քէֆի, խառնըսի կըկանչեն: Կըլնի կասա՝ այ տա, շոր չունեմ, ի՛նչ անեմ, ի՛նչ անեմ...Կէթա էն խաստ թըխտէրից կառնի, կըտանի վըռազ կըներկի կանանչ, կըպէրի,

շըլվար, գալիֆօ շըլվար կըսարքի, կարել կըտա: Էժան ա, չէ՞, թըխտից շըլվար կարելն ի՞նչ ա, կարի կըխաքնի: Կըխաքնի, կէթա ընդե, բեղերն էլ կըսըրի, յեղն էլ կըքըսի բեղէրին, էսենց կընըստի խըպառտ, խըպառտ: Կըլնեն տուս, վոր պարեն, պարէլու վախտ անձըրն կըպըռնի: Անձըրեվ վոր պըռնի, շըլվար թըռչի: Ըտըրա խըմար կըջ՛օկեն, վոր թըխտից գալիֆօ յէր սարքե: Գյումրէզցինէրին մըկա կասեն թըխտից գալիֆօ շըլվար խաքօղ…

***

Գյումրէզցին գ՛իշնի կիկյա Արամուս. դը էն վախտ զըռուզավիկներօվ են էկե: Ընդե տէնա՝ արամուսցին քէֆը լավ՝ ըսենց կըֆըռա, կըֆըռա, ֆըռա մութ տեղ: «Գյա՛,- կասա,- էտ հընչի՞ կըֆըռաս»: Արամուսցին կասա՝ «Իմանա՞լ իս,- ասում ա,- իրեյ մանէթըս կորցըրէս եմ, ման իկաս եմ, վոր քըթնես եմ, ինչ ասեմ»: Էս գյումրէզցին կանի՝ «Իժդյա՞ յէր»: «Դէ ասիմ՝ իրեյ մանէթ, է՛լի»: Ջէբից տասը մանէթ կըխանի, կըվառի, կասի՝ քըթի…

***

Մէ օր մեր տունը կօնախ պըտի գ՛էր, հա՛, կօնախ պըտի գ՛էր, իմ քեռու տըղէրքի հընգերներն ին: Պապան ասեց՝ «Կէթաս էն պադվալի կինուց, լավ թունդ կինուց կքյաշես, կպէրես»: Կընացիմ մըտամ, շըլյանգ տըրրիմ, քյաշիմ կինին, պէրիմ, ախպէ՛ր ջան, շտօբը լըցի, տըրրի սեղանին: Մէ բ՛աժակ է՛ն խըմավ, մէ բ՛աժակ յես խըմամ, մէ բ՛աժակ է՛ն խըմավ, ասեց՝ թուլ ա: Խէրըս ասեց՝ «Լյա թուլն հետօ կէրէվա, կըլնես էտ փիլյաքյաննէրը մինչեվ խասնես տակ, էն վախտ թուլը կէրէվա…»: Մինչեվ խասավ փիլյաքյաններու տակը, սկըսավ վոտէրը ծալվի… Հէլան տուս, էն կապուտ զըրօ վեցն էր քեռու, տուռը հյազիվ բ՛ացին, նըստան մէչը կընացին:

Մակիտոն Աբելյան, ծնվ. 1964 թ.

***

Քառասունվեց թըվին սկըսին թունդըրա փէչ սարքել: Ըսենց կըլոր սարքում ին տըրուբէն, հէռթիկ կար, հէռթիկից խանում ին, ծուխը չէր լըցվի նեռս, վա՛ռում ին, ճաշը տըրա վըրէն էփում ին: Պըտուկը ճաշը լըցում ին, ամէն ինչօվ, տընում ին մինչեվ իրիգուն, ըտըրա մէչըն էփում էր, իրիգուն հանում ին, ուտում ին: Քաղվորին ապուր (սպաս) պըտի տին: Անհատ ժամանակ էս գյուղացիները պըրընձէ փըլավ, յեղը լա՛վ, սարքում ին, տանում ին: Ապուրն էլ էփում ին տանում ին, վոր վըրից ուտի՛ ին, մառսէր: Աշխատօղը պըտի ուտի: Էն ժամանակ համէն ինչըն էլ կար: Մերոնք շօռ ին անում, շօռ՝ ժա՛ժիկ: Քյուլը տանում ին, լըցում ին ըտե, պըտուկները լըցում, պէրան կապում ին, տանում ին էտ քյըլի մէչը կոռծում ին: Մընում էր, ցուռտըն ընգում էր, ծըմեռ նոր խանում, պէրում ին, պացում ին, ուտում ինք: Ամէն ինչ խառնում ին: Դ՛աշտից ին բ՛էրում, ուռց ին պէրում, սըխտորուկ կար էս դ՛աշտերը, սոխի խամ ունէր՝ սոխուկ, կըծու բիբարը խառնում ին շօռին… Պատէրազմ լա չէր սկըսե, թիթեվ տըղա յիմ, հիշում իմ, էս մեր ժամի հա՛յա՛թը ջա՛հէլները ժօղվում ին, վէղրօներօվ ծու յին պէրում, խաղում ին: Մառթ կա՝ չոռս վէղրօ ծու յէր տանում: Մեծ զա՛տկին ծու յին պէրում, կըռվըցընում ին: Մենք խաղացիր ենք լա՛խտի, պախկըվոցի, կըլոր էշ էյ խաղացե (ըսենց պըռնում ին, թըռնում ին շըլա՛կը), մըսմըլա՛, չըլիկ դա՛ստա՛, սապօյ տամ կուլ տուր … Քարկըտիկ էտի ախչըկներն ին խաղում:

***

Ուրեմ, յես քեզի ասեմ, մեր կեղից մէկը՝ Կալուստի տըղա Ռաֆիկը, իրանց տան տակ՝ հէնց ըտե, սէլաֆն էթում, էտ սէլաֆը մէ հատ ա՛քլոր ա պէրում: Էսի քըցում, վոր պըռնի, ճուրը վէռցում ա իրանը: Ըտեղից մէ հըրօխպէրը՝ Արմենը, էս ափօվ ա գ՛ալիս, էն մէ կողից էլ՝ էն մէկը, բ՛անի խէրը, ձ՛եր Գուրգէնի, փէսա Գուրգէնի՝ Հառթենը...Մըկա էրկըսօվ կալիս են, չօքները տըփէլօվ՝ վա՛այ,

մեր ախպօր տըղին տարա՜վ, տարա՜վ… Ցես էլ խօրըս խէտ ըտե խըճեր ի թ՚ալում սէլաֆ, պ՚ան... Մէկէլ չօքները տըփէլօվ… Խէրըս ասեց՝ «էն ի՞նչ հէլե, Հառթե՛ն»: Ասեց՝ «Ռաֆիկին ճուրը տանում ա»: Ասեց՝ «Տուք էլ հընգիր էք կողրանքը, կէթաք…»: էսի շորէրօվ, վոր տըսավ՝ Ռաֆիկին ճըխտեց փոսը խանեց, շորէրօվ իրանը քըցեց: Իրանը քըցեց, Ռաֆիկին պանցըրցըրեց օթը: Հիմա չի կարա էս յանը խանի, էն յանը խանի, տարավ ըտե՝ ճըրի կըաղը, նոր ըՌաֆիկին շըպըռտեց տուս: Աիակին կընաց, ինքըն էլ տուս էկավ, նոր քիթ մըռթի կախեց, ճուրը կընաց, պան, ՚այʰլօրն էլ խէտը խանեց: Հավատա՛, էտ պ՚արի օրը վըկա, թէ սուտ կասեմ… Կալուստն էլ էտ վախտ Թուրքէն գ՛ոռծակատար էր, տունը չէր:

Մնացական Խաչատրյան, ծնվ. 1939 թ.

## Կապուտան գյուղ

***

Մէրըս չոռսը տարի էրէխա չի բ՛էրե վափշէ, լըսա՞ր... Տատ ունէցէր եմ, ուրեմ, բ՛ացի իմ տատից, հօրըս տատըն էլ ա սաղ էղե: Ցես ծընվէր եմ՝ պըռօշըս ըսենց, նապաստակի շըռթունքօվ: Վօր պըտի տանին դըբրոց ընձի առթէն, գ՛եղի դըբրոցը, հէրըս ասեց՝ «էս պըռօշօվ չըտանիմ դըբրոց, է՛լի, տանեմ տամ կարել քօ պըռօ-շը»: Դը յես վեց տարէկան էրէխա յի, լավ եմ հիշում էտի: Տարավ, վո՞րդե տարավ՝ Փ՚արաք՚՞ր, Մալաթյա՞, վեռչը, ըտե մէ հիվանդա-նոց էր: Տարիքօվ բիձ՚ա մառթ էր էտ աբէրանցի էրօղը: Էրկու իրեք անքամ ընձի բ՛ան էրին, նարկօզ կուզին տին, օր քընիմ, վեռչը, չըքընա: Էս բիձ՚ա մառթը, հ՚առչուց ձ՛եռներըս, վոտներըս հ՚առցակ էր, մէ էրկու թ՚ափուկ էտ բիձին կըպցըրի: Բիձէն յեռսօտավ, ասեց՝ «էս ի՞նչ չար էրէխա յա, ստըրան կապէք»: Կապին, պըռունգըս կարին: Էդ վախտ նուռ շատ ի սիրի: Մէ հատ հօրօխպէր ունի Արգավանդ, էս մեր կօղի տունն ա, ստեյից թօղե գ՛ընացէր էր

Արգավանդ, է՛լի, ընդե յէր աբրում, օղօրմի հըմընի անցյալնէրին, օղօրմի հիրան, գուկ՚էր մօտըս: «Մէրօ՛փ,- կասէր,- ի՞նչ ա կուզես»: «Մէրօ՛ժ ապէր,- կասի,- նուռ ա կուզեմ, մէկ էլ՝ փուչիկ»: Կասէր՝ «Նուռը լա՛վ ա, բ՛այց էտ փուչիկը քեզի չի կարէլի, բալա՛ ջան»: «Ա՛յ ափէր,- կասի,- ախըր փուչիկը լավ ա»: Դէ, պըստի էրէխա… Դէ էն վախտ շա՛քա՛ր աքլօր էր, փուչիկ, խա, էտ էր: Նուռ շատ էր բ՛էրէր, կիլօնէրօվ նուռ կըբ՛էրէր ընձի: Հետօ էկա, դըբրոց գ՛ընացի: Հօրքուրըս ա եղե իմ դ՛ասատուն, հա՛ռձի դ՛ասատուն, հալալ, հօրըս հօրօխպօր ախճիկը՝ Բ՛առսեղյանը: Դը յես էլ եմ Բ՛առսեղյան: Քուրերըս Պօղօսյան են, հօրըս ազգանունն ա, բ՛այց մենք Բ՛առսեղյան ենք: Էտի մեր պապու, խօրըս պապու անունն ա, Բ՛առսեղ ա: Յես ու ախպէրըս առթէն գ՛ըրվէր ենք Բ՛առսեղյան, վօր մեր պապիի անունը չըկուրսի: Դէ պապաս հիրա պապիի ազգանունն ա, Պօղէ յա, Պօղօսյան են հիրանք: Գ՛յուղում մընացէր ենք, խէրըս ա մընացե, մընացած սաղ դ՛ուսն են, Ռուսաստան ա վօրը, հօրօխպէրըս Աբօվյան ա, շուտ ա գ՛ընացե...

***

Ինյերօռթ դ՛ասարանն ի, ուրեմ, ձա՛ձ ջան: Դէ մեր մօտը գ՛էրընդօվ, էտ մատացիկլէտ, տըռտըռիկ-մըռտըռիկ չըկար, գ՛էրընդօվ էր քաղեն: Դէ յես էլ աշխատօղ մառթ եմ, է՛լի, հըմա թա՛վա՛քա՛լի չէ, շատ աշխատօղ եմ: Ձ՛ուչ մառթ էր, էս մեր հարէվանն էր, չօբան ա հինք, չօբա՛ն, կըխասկընաս, չէ՞: Պապիիս վոտը ջ՛առթավ, սարը: Բ՛էրին տարան հիվանդանոց, յես մընացի էտ բիձա՛ մառթու հէտ: Աֆտօյօվ կէթանք էտ մեր յուռդերը: Էդ մեր սաղ հըմէնին անուն ունեն, մեր չօլէրին: Գ՛ընացէր ենք Չօտանդաղ, յուռդեր, ըտե քաղ ա կէնենք, գ՛էրընդօվ: Էտ գ՛էրընդիյօվ քաղ ա կէնենք, էտ խայը հառէչն ա, հա՛ռէջից ա, խա, դը յես ջա՛յէլ եմ, հէղեվից կէթամ: Մէ լաս ա բ՛ըռնե, կէթա: Գ՛էրընդօվ, դէ պըտի ֆիզիկականըտ եղի, է՛լի: Գ՛ընացի, ձա՛ձա՛ ջան, ուրեմ, բիձէն հէլավ, առթէն քաղեց պըռծավ, հէլավ, դ՛ա՛ռցավ տէսավ՝ մէ հատ հէտեվից մէ էրկու մէտրա-

նոց լաս բ՛ըռնուկ գ՛ուկյա՛մ: Դ՛ա՛ռցավ, ձ՛եռներ զա՛րկեց հիրար՝ ջա՛ն, ջա՛ն, Սէրօ՛փ ջան, ջա՛ն… Ինյերօռթ դ՛ասարանն ի: Սուս գ՛էրընդին թա՛լի, ասի՝ «Էլ չեմ կանում»: «Գա՛նդա՛ ջան, հընչի՞»: Ասի՝ «Կօղերըս տակ կըտաս, օր ըսպանես ընձի…»: Վեռչ, համօզեց, ասեց՝ լա՛վ, քաղա: Ըտենց քաղինք բիձու խետ:

Սերոբ Բարսեղյան, ծնվ. 1973 թ.

## Կոտայք գյուղ

***

Քա՛վա՛ռցին քընում ա, էրազ ա տէնում: Էրազին Աստըված գ՛ալում ասում՝ «Ի՞նչ կուզես՝ անեմ»: Ասում ա՝ «Գիդա՞ս ինչ կուզեմ», ասում՝ «Ի՞նչ կուզես»: «Կուզեմ՝ էս մեր Քա՛վա՛ռա մըչօվ հըն-ցընօղ գ՛ետը արաղ դ՛առնա»: Ասում ա՝ «Հաշվա, վոր արաղ ա: Է՛լ ինչ կուզես»: «Դէ վոր ըտենց ուժ ունես,- ասում,- թօ Սէվանա լիճն էլ արաղ հըլնի, ի՛նչ գ՛ըլնի»: Ասում՝ «Հաշվի արաղ ա»: «Ցավըտ տանեմ, մէ շիշ էլ մեր սեղանին հըլնի…»: «Հաշվա վոր դ՛ըրած ա սեղանին»: «Դէ մէ բ՛աժակ էլ լից, նոր գ՛ընա»…

***

Մեր տունն էլ են ընձի շատ կընամիշ անում (կշտամբում են), ասա՝ հաց, խի՞ յես խաց ասում: Հիրանք քաղաքավարի յեն խօսում, յես իմ լէզուն չեմ կարում փօխեմ: Ասում եմ՝ «Խացը մէ թըռճա՛ բ՛ե», «Հա՛ց ասա, է՛լի»: Է՛, խաց ա, վո՞նց ասեմ հաց...

***

Էրէխէքին տարէր եմ Ծախկաձօր՝ լազեր: Շափաթ օր ա, էթում եմ էրէխէքին տէնալու: Միս եմ առե խոզի, բազաժնիկը դ՛ըրած, բաստուրմա դ՛ըրած, պըտի տանեմ ընդե, տանեմ անտառի մէչը, մէ խօրօված անենք, վոր ուտեն: Պօստ են դ՛ըրե մինչեվ Ծախկաձօր խասնելը, պօստ են դ՛ըրե, չի թույլադըրվում

միս տանել, ինչ-վոր վարաք ա, ղաբաղ ա, յեսիմ ի՞նչ ա: Ասին՝ «Բազաժնիկը բ՛աց»՝ միլիցեքը: Բազաժնիկը բ՛ացի: «Ա՛յ տըղա,- ասէցին,- չի թույլադըրվում էս միսը: Կա՛մ տար էփել տուր, նոր տար, կա՛մ ըսենց չի կարէլի, չըպըտի տանես»: Յես էլ մի քիչ քաղաքավարի յի խօսում: Լէզուս փօխի, ասի՝ «Տըղէ՛րք, բա յես էս միսը բաստուրմա դ՛ըրած Քյավյառից բ՛էրեմ, խասցընեմ ըստե, դ՛ուք ասէք՝ յետ դ՛առցըրա տա՞ր: Ա՛յ տըղա, էրէխէքն ընդե գիդում են, վոր պըտի տանեմ, խօրօված անեմ»: «Քյավյառցի՞ յես», ասի՝ «Բա ի՞նչ եմ»: Լէզուս էլ վոր մի քիչ փօխէցի, կօպըտցավ… «Փագա՛ բազաժնիկը, գ՛ընա»: Տարա, ճըժէրին ընդե՝ Թըրթու ջ՛ուրը, խօրօված արէցի, կէրցըրէցի էրէխէքին:

Հենրիկ Շահբազյան, ծնվ. 1946 թ.

***

Ընդե մէ ախչիկ տէսա, ընդե յին աբրում, ըտենց պըսազվա: Ախչիգն ու մէրը խաղող ին քաղում: Յեսիմ, հէլավ, է՛լի, ստացվավ, խօրօտ էլ չէր: Տունն ասի, բ՛ան... Մատնիք դ՛ըրին սեղանի վըրեն, էկավ վէրցեց, վէրցեց դ՛ըրեց էն բ՛անի վըրէն ու փախավ: Էն վախտ ըտենց չէր... Հետօ խառնիսը հէլավ, գ՛ընացինք, էրկու գըռուզավիկ աֆտօ յինք տարե, մէկ էլ էն Օնըկի պուճուր Մասկըվիչը: Էն էլ խըրօխպէրը, վոր Շէնգավիթի նախագան էր, էնի հիրա Պաբէդան տըվեց, մեզի բ՛էրեց ըստե:

***

Իմ պապը, Նահապետ պապը, տասնութ-քըսան տարէկան հասակում հին Բայազէտում աքլօր ա կըռվըցըրե: Ասում են՝ աստիճանավորի տըղի հէտ: Յեփ հիրա աքլօրը հաղթէր ա, էտ աստիճանավորի տըղէն խյանչյալը քաշե, խըրե աքլօրին: Էտ խյանչյալն էլ պապըս քաշե, խըրե հիրա փորը: Ու դ՛ատ ու դիվան չի հէլե, հինքը վոտօվ փախեր ա: Յօթ օր գ՛իշերն էկեր ա, ցէրէկը քըներ ա, հասե ըստե: Ըստե վեց տուն ա հէլե, մերը յօթերօրդ տունն ա…

***

Մեր տատի ախպէրները Սեվ շուկայ տեղը ֆուրղուն են սարքե: Ուրեմ, ասում ա, հառավոտը շուտ վոր էթում ին, ֆուրղուն ին զակազ տալըւմ, իրիգունը էրկու ախպըրօվ ֆուրղունը սարքում ին, տալըւմ ին:

***

Էտի թӓզӓ ամուսնացէր էր, էկէր էր ըստե, հիմացար, ստե այգի ունէր մէ քանի մետըր: Ցես էլ մեր այգու բուտկէն նըստէր ի, կօշիկըս ի կարկըտում: Մէկէլ էտ մառթն ու հիրա կընիկը էկան: Մեր այգօվ պըտի հընցընեն: Մեր ծառից տանձերն ըսենց թափեր ա, հըլը չեն հավաքե, պըտի տընից գ՛ան, վոր հավաքեն: Ընձի հիրանք չըտէսան... Վոր ըսկըսին հավաքել, յես կամանց քաշվա բուտկէն, ասի՝ թօ չըտէնան, կամանչեն, է՛լի: Հավաքէցին, սումկէքը լըցին, համա մեզ էլ հիմար անվանէցին՝ «Էս հիմարները չեն հավաքում»... Ցես էլ տափա, թօղին գ՛ընացին, էլ չըգ՛ացին հիրանց այգին:

Եգոր Մանուկյան, ծնվ. 1933 թ.

## Հատիս գյուղ

***

Մէ կիլօ ցօրեն գ՛օխցա, լըցի ծոցերըս, ջէբերըս, տարա մըատ մէշօք առա, արի մըատ դէյրӓ: Գ՛օղություն շատ եմ արե, յես ֆէրման կօվ եմ կըթե, տասնիրեք տարի, առանց գ՛օղություն տուն չեմ էկե: Կաթ ի գ՛օղնում, սӓլօմ ի գ՛օղնում, խոտ ի գ՛օղնում… Սӓլօմը գ՛օղնում ի, դ՛ընում ի հարէվանի տուն, էթում ի բ՛էրում ի: Կօմբիկօրը գ՛օղնում ինք, յես ու Մարքըրիդը, ըսենց դ՛ընում ինք դօշըներիս, տօբրըկօվ, ըէմէնօվ պինդ կապըմ ինք, շալը քաշում ինք վըրըներըս, գ՛ալըմ ինք: Այսենց պախում ինք, վոր ճամփէն

չըտէնին: Բը գ՛օղությունօվ ինք պախում… Ձ՛ըվերը լըցըմ ի ծոցըս, գ՛ալըմ ի: Շատ գ՛օղություն եմ արե: Վոր չըգ՛օղնինք, կանի՞նք աբրինք...

***

Հիցուն խատ թոռ ունեմ, հըմէն էլ այս իմ գ՛ըլխօվ արեվօվ յեռթում են ուտում, այտենց կընիկ եմ հէլե: Բ՛այց լավ արօղ կընիկ չեմ հէլե, է՛լի, ճաշ-մաշ չեմ էփե: Մինչեվ առ հէսօր հըլը դ՛եղ խըմած չըկամ: Գ՛ըլխացավ յես չեմ տէսե՝ ինչ ա, էտ ի՞նչ բ՛ան ա, յես չեմ խասկընում, դ՛եղ չեմ խըմե…

***

Յես նըշանվէր եմ: Յ՛ննի իմ առնօղ տըղէն պըտի գ՛ա, ընձի տէնա: Քօ տէրը խօրեմ, շուտ մեռնիր, է՛լի: Յես էլ փախա, գ՛ացի խօրօխպօրըս տունը: Գ՛ացի, փախա խօրօխպօրըս տունը, կախվա թունդիրը: Դ՛ու մի ասա, էտի գ՛ալըմ հէռթըսի վըրնից նայում ա, տէնում՝ յես թունդիրը կախվուկ եմ: (Ա՛յ կընիկ, էտի հընչի՞ հընգավ քօ միտը): Կախվուկ եմ թունդիրը: Ուրեմ նայում ընդեղից, վոր ասում եմ՝ «Մամէ՛ ջան (մեծ կընիկ էր տատին), մամէ՛ ջան, լասա, ճիշտն ասա, Քըրիստը խօ մեր տունը չէ»: «Չէ՛, չէ՛, չէ՛, ախճի՛կ ջան, չէ»: Դ՛ու մի ասա, մամէն զիդում ա: Չէ՝ չէ, լավ: Դէ ասի՝ «Հէլի, ընձի տար մեր տունը»: Հէլա, էկա խասա ճամփէն, ասի՝ «Մամէ, դ՛ու հըլնես՝ քօ աստըված, խօ Քըրիստը մեր տունը չէ, յես էթում եմ»: Հէնց էտ ասէլու խէտ պատից թըռավ, ընձի պինդ բ՛ըռնեց: Վա՛յ, յես քօ տէրը խօրեմ: Էլ ի՞նչ, բ՛ըռնեց… Առավ էկավ ընձի մեր տուն, ասավ՝ «Հընչե՞ս հէլե գ՛էլը գազան՝ փախնում, նաղդ մե նըշանած, յես պըտի քեզի տանեմ»: Տարան: Տարան դըհօլ զուռնօվ, վէյրօյ վոռը տըփին, տարան… Էսենց պըստըլի բ՛անից կանֆետ կար, է՛, սիփտ՛ակ: Ըտուց բ՛էրէցին, թ՛փին գ՛ըլխիս: Էս հիրա քուրը, պըստի քուրը, հընգէր էր վոտնէրիս տըկից հավաքըմ էր: Է՛է՛, ա՛զի՛գ ջան, կյանքը դ՛աժան ա հընցե էտ գ՛ախ:

***

Մէ օր հախպուրը կայնուկ եմ, հախպուրը կայնուկ ջ՛ուր եմ լըցում, տէսա՝ մեր հարէվանը մեր Աշօտին, իմ կիսուրի տալի տըղէն ա, մենք ենք պախում, յեթիմ ա, մենք ենք պախում, տէսա՝ Մառդիրոսի տունը տըփըմ են: Կըրամուսն առա, վազա (ցույց է տալիս ուսը, հավանաբար ջուր կրելու փայտն է): Առա, վազա գ՛ացի, ասի՝ «Մառդիրոս ու Փառանձիմ, մըտէք տուն, էկա՝ կըրամուսօվ կըսատկըցընեմ: Էտ վի՞րն էք բ՛ան ասում»: Նոր լա̈րի ընդոնցը, լըցի նեռս, Աշոտին բ՛էրի տուն: Չէ, յես զօռքա յեմ հէլե: Մըկա էս հասակին լըվացք էլ եմ անըմ, պօլ էլ եմ սըռփում, աման էլ եմ լըվում, ճաշ էլ եմ էփում, ամէն ինչ, մառթկությանն ինչ պէտկ ա՝ անում եմ: Էլ չանեմ՝ կըմեռնեմ, օրէ կըմեռնեմ: Միյնա̈կ բ՛անջար չեմ տէնում, վոր էթամ քաղեմ:

***

Մէ օր էթըմ եմ չօլը, ը՛ը, գ՛ոմը, էս մեր գ՛ոմը, էթում եմ գ՛ոմը, ասի՝ «Քըրի՛ստ, հէլի ընձի տար, է՛լի»: Ասավ՝ «Ա՛յ կընիկ, յես կա-նա՞մ գ՛ամ»: «Քօ յուռդը չըբ՛ըլի,- ասի,- յես էթամ, դ՛ու չըկանա՞ս գ՛աս»: Հէլավ, վիլը դ՛րեց հուսին, քօ ա̈զիզը խօրեմ, վիլը դ՛ըրեց հուսին, վոր ընձի տանա, գ՛ոմերն հընցըցընա, էթամ: Խասավ էսա Ճուճոռենց տան վիրեվ, էսա տընից մէ քիչ վիրեվ՝ «Ա՛յ Գ՛եղեցիկ, յես չեմ գ՛ա»: Ասի՝ հընչի՞: «Չէ՛, չէ՛, չէ՛, լուսնակ ա, գ՛ընա»: «Քօ տէրը խօրեմ, դ՛ու շընից վախէնըմ ես՝ էրկու մետըր էկէր ես, բը յես մինչեվ էն գ՛ոմ…»: «Չէ, դ՛ու գ՛ընա»: Հինքը ընձի թօղաց, յես միյնա̈կ գ՛ացի, հինքն էկավ մըտավ տունը: Աշխար քանդըվէր՝ էնի շընից վախէնում էր…

***

Գ՛ացէր ենք Նուռնիսից քըվորըս խէտ, իրեք քուր, խաց ենք առե, շըլկում ենք, բ՛էրենք, վոր տանք ճըժէրին: Բօշի գ՛եղօվ հըն-

ցընըմ ենք, տէսա՝ իրեք խատ մառթ են նըստուկ ըտե: Ասավ՝ «Ախճըկնե՛ր ջան, լարէք ըստե»: Գ՛ացինք մօտիկ, ասավ՝ «Դ՛ու քմնքմնցի՞ յէք», ասի՝ խա: Ասավ՝ «Իրեքօվ էլ Հուսէփի ախճըկներն էք»: Ասի՝ «Ի՞նչ ես հիմանում»: Ասավ՝ «Ձ՛եր հէրեսի կարմըրութընից»: Հինքն էլ քուռդ էր:

***

Լը լըսա, ա̈զիզ, յես կամուտատորի վըրէն աշխատում ի, իմ տէքըրը կույրի գ՛ըլխավոր հաշվապան էր: Վոր զանգում էր, իմ խէտ խօսում էր, յեռախօսօվ խօսում ի: Վոր գ՛ալում էր տունը, խէտը չի խօսում ի, խառս ի: Ասում էր՝ «Գ՛եղէցիկ ջան, ի՞նշ կա», ասում ի՝ «Բ՛ան էլ չըկա, ափէր»: Բա՝ «Գ՛ըքամ տունը, մէ խատ տըրրումբա կըխաքցընեմ ձ՛եր տընից մեր տունը, կըխօսանք»: Էն գ՛ախ խօսալ չըկար, տէքօր խէտ էլ պըտի չըխօսին:

***

Յես խիվանդ ի, քուրըս էրկու խատ խիյար, մէկ էլ գա̈զա̈ր բ՛էրե, վոր յես ուտեմ: Գ՛օխտուկ: Ասավ՝ «Գ՛եղէցի՛կ, աղէն ասավ՝ տար տու, թօ Գ՛եղէցիկըս ուտա»: Վայ, վո՞րդե ուտեմ, այ բալա ջան, շըխկըտա, զըռտզըտա, գա̈զա̈ր ուտեմ՝ շըխկըտա, տէքըրըս, կիսուրըս… Տարա, պատի տակը գ՛օխտուկ ուտում ի, տէքըրըս էկավ տէսավ: Տէսավ, վոր յես ամչըցա, թօղեց գ՛ընաց:

***

Ազիզ, լըսա ասեմ, մէ օր, խէրըս գ՛յուղսօվէտի նախակա էր, յես էլ էրէխա ախճիկ ի: Հէլա դ՛ուսը, տէսա՝ մէատ խին շընէլօվ մառթ, այսենց կըսկըրվուկ, մէատ էլ սեվ գ՛ըլխարկ… Էկավ ասավ՝ «Ախճի՛կ ջան, լը արի մօտիկ»: Գ՛ացի մօտիկ, ըստե մեր խորի վըրէն նըստուկ ա, ջ՛ըրխորի վըրէն նըստուկ ա: Ասավ՝ «Մէ կըրուշկա ջ՛ուր բ՛էրե՛ս՝ խըմեմ»: Ջ՛ուրը լըցի տարա: Ջ՛ուրը վոր տարա տըվի՝ խըմում էր, յես նայի, խելքըս մեռնի, էս պըլաշի տակը ընենց

կանանչ շոր էրէվաց, փէլփըլըմ էր: Խըմավ, հէլավ հիշկաց ու գ՛ը-նաց: Ըտենց մեր գյօլօվ գ՛ընաց: Խէրըս էկավ, ասի՝ հայրի՛կ, ըսենց բ՛ան տէսա: Ասավ՝ վո՞ր յանը գ՛ընաց: Ասի՝ գյօլօվ գ՛ընաց: Դէ, էն գ՛ախ աֆտօ չըկար, ձ՛ի յէր: Ձ՛ինը խէձավ, հընգավ հէտեվը: Գ՛ը-նաց, վոր քըթնէր, չըկառցավ քըթնէր: Հիմի էլ ասում են՝ ինչօր ըշ-պիյօն հէլե, յես շա՞տ եմ զիդում, տըկի շորերը փէլփըլըմ ին, բ՛այց վըրնի շորը քըռչ էր… Յեսիմ, լը յես չի էլ ամուսնացե, քառասուն-չոռս-քառասունխինգ… էտ գ՛ախ էր… էտ պատէրազմի վախտ էր, հա, պատէրազմի վախտ էր:

Գեղեցիկ Սահակյան, ծնվ. 1926 թ.

## Մայակովսկի գյուղ

***

Էտ ուժեղ մառթկանցից մէկը հէնց էլե իմ խէրը: Հարուր ան-քամ էկիր են խօրըս քամկէն, վոր՝ «Յարի՛ տանեյ քեզի սպօրտ-կօմիտէ, քաղաք»: Տատըս, վոր պապի չեմ ունէցե, դէ, արամուսցի յա հէլե, ասե՝ «Բալա՛ս, էթալ ես, քէլի, պայց իմ կըլօխը կըտա էս շէմքի վըրա տընեմ»: Չի հէլե իրա տընէն: Բայց տըղան էլ հօ տուռը չէր ծածկի իրա մօր դէմքի վըրա, թօղէր տուս կյար էթար: Շատ պաներ ա կօրցըրե: Ու ըտէնց էլ չի կընացե: Ինքը նա̈լբա̈նդ ա էլե: Ծիէրի վօտէրի տակը նալ, պան խըփէլուց… Հիմա էսօրվա տըըրության էտ արհէստը իմ մօտ ա: Մէատ ընգէր ա ունէցե: Ըստե տուռը նըստած, նըստե մեխ-պան սըրէլու ժամանակ, վոր պըտի նալ անի, հընգերն էկե նըստե, խէտը սկսիր են զըրուցել, խօսալ: Բը՝ «Մամիկօ՛, պըտի քօ խէտ յես գյուլա̈շ կըպնէմ»: Խէրըս ասե՝ «Ա՛յ մառթ, տու իմ հընգերն իս, ամօթ ա, ըտենց առաջարկություն ես անէլ ընձի, ամօթ ի»: «Չէ՛, պըտի կըպնենք, տէնայ մէզնէ վօրն ի ուժեղը»: Էն վախտը փա̈յա յա հէլե անունը, վոր ասէլ էն՝ փա̈յա-նէրն, ասէնք՝ կօմէրը, հօղանէրը: Էնքան ա խաացընել հօքուն, վոր ջըղայնացընէլ, է՛լի, մի խօսքօվ, առթէն մօռանալ ընգէր-մընգէրը...

Էթըմ են, վօր մառթ իիրանցը չըտէնա, վօշ մէկը չըտէնա, թէ ում մէշկը պըտի գ՛էտնօվ տա: Տու մ՚ըսա, ժողովուրթն առթէն խաբար են էլե: Կօխտուկ էն լուսամուտ պանէն, սկըսիր են ըշկալը: Մէ տարէկան մօզին ուրէմ կապած էլէ էն վէրի կըլօխը, կօմի՝ փնյայի վէրի կըլօխը: Վօր կըպիր են, սկըսիր են գյուլնշ կըպնէլու, խէրըս ասում ա՝ յես հա պաշպանվամ, վօր չէմ ուզէլ կըպնէմ, է՛լի, չեմ ուզէլ, բ՛այց ասում ա՝ հինքը կըպնէլ, ճառթէլ, է՛լի, ուժը տեղն ի: Հա ասէմ՝ «Թնրզը տուր, է՛լի, թնրզը տուր, ա՛յ մառթ, կօռծ չունիս, թնրզը տուր»: «Չէ՛, Մամիկօ՛, վօր մէշկըտ տըվիմ կէտին, պաճառ չըպըռնէս, վօր չէս էր կըպնէլի: Պըդի կըպնէնք»: Դէ վօր պըդի կըպնէնք՝ պըդի կըպնէնք: Ասէլ՝վօր վէրցիմ, տնր վօտէրըն ջ՛նլիմ, ըսէնց բ՛անցըրցըրիմ օթի մէչ, հէնց էնդե անասուն կապած ա, ասէլ, վօր թըփիմ անասունի վըրան, մէշկը կօտըրվավ, զօռաց ու նըստավ: Վօրից յեդօվ, ասէլ, քյնշիմ տուս խանիմ, էտ անասունի վիզը կըռիմ (դասաբություն էլ էր անէլի), կըռիմ, քըռթիմ, մաքրիմ, փըռթի լըցի կազաններր: Հա՛մ էտ անասունի փօղը տըվէց, հա՛մ նըստայ կէրայ խըմանք... Իրա պառտությունն էլ, իրա ախտըվէլն էլ, ասէլ, լըռիվ հասարակությանը, ժօղօվըռթին ցույց տըվէց, թէ ինքը… Շատ ուժեղ խէր եմ ունէցե: Նրա ամէն բըլնյներր էտ վօտիս խաստության էր, հա: Սէղանը ատամնէրօվ ըսէնց պնռցըրցընէս էր, սարքած սէղանը, տախտակից, անկյունից բ՛առցըրցընում էր հըմէն ինչը վըրան դ՛ըրած, նօր տարվա սեղան ըլէր, պարըցընէս էր, պէրէս էր, սօվօրականի պէս տընէս էր տեղը:

Միշա Ղազարյան, ծնվ. 1950 թ.

## Նոր Գյուղ գյուղ

***

Պըստիկ եմ հէլե, ընձի պէրիր են ըստե: Էկիր եմ, քըշեր ու ցէրէկ աշխատիր եմ, տասխինգ տարէկան, տասվեց տարէկան եմ էլե, օցէրի խետ ճուր եմ խըմե: Մէկ օր տունը չեն թօղա, նռնչիս

էրէխան նոր ծընվիր էր, քառսունքը լը չէր լըռացե, բըրիգադիրն էկավ, կանչեց աշխատանք: Կիսուր-կէսրարըս տունը չին, էլամ ասիմ՝ «Վո՞րդուց իկʸամ, յես քառսունքի մէչ եմ», ըսենց, ընենց… Կընացիր էր դէրէկտօրին խաբար էր տըվե՝ «Կընացիմ, Ավեդիսի խառսին կանչիմ, հէլավ ընձի մըռճիկ խանեց»: Է՛, մըռճիկն էլ հօ յես իրանը մըռճիկ չե՛մ խանե, ծեռ ու վոտօվ եմ խօսացե: Դէրէկ-տօրը կէրսարիս կանչիր էր զըրասէնյակ, թէ՝«Ընչի՞ խառսըտ բըրիգադիրին մըռճիկ խանա»: Կէսրարըս էկավ՝ «Բալա՛, ի՞նչ կոռծ ունիս բրիգադիրի խէտ»: «Հընչի՞, պապա՛»: Ասէլ՝ «Մըռճիկ ես խանե բըրիգադըրին»: Ասիմ՝ «Մըռճիկ չեմ խանե, պապա՛,- ասիմ,- ծեռօվ վոտօվ եմ խօսացե, իմացե՝ մըռճիկ եմ խանե»:

***

Դէ ջահէլ իմ, կընացիր իմ… Ստիպում ին բըրիգադիրները՝ պըտի ժամանակին էթաս կոռծի, աշխատես... Կէրիր իմ, թօղիր իմ, ամըններըը չիմ լըվացե, կիսուրըս խանիր էր, մէկ-մէկ շարիր էր: Ըստըրա կիսուրը, դէ մէ պատ էր մերը, տէքօր կընանիք ին, էկիր էր ասիր էր՝ «Վա՛յ, Հիսոս ու Քըրիստոս»: Ասիր էր՝ «Խալես խափանվես: Մէկէլ անքամ ուտի՝ լըվա, չըթօղի ըտենց»: Էտի թօղըմ էթըմ ա, կիսուրըս պէրում, նորից շարըմ ա: Ասում ա՝ «Յա՛, յես շարիր եմ, վոր իկʸա տէնա: Հընչե՞ս վէրցե»,- ստըրա կիսուրին ա ասըմ: «Ախճի՛, ամօթ ա, ա՛յ Կատուշ, ամօթ ա»: Ի՞նչ ամօթ… Բայց մըկավա խառսներն՝ ա՛հ… Խառս ենք պախում՝ աշխարը չըկա:

Ալետա Արշակյան, ծնվ. 1936 թ.

## Ողջաբերդ գյուղ

***

Մեր ցեղը ըտենց ա՝ սիֆտակ... Մէրըս հազար շընորքի տէր էր, ամէն ինչ իմ մօր ծեռից կʸա՛լիս էր... Յօթ էրէխա յինք, մընացիր եմ յես... Յես լավ ախճիկ իմ, ընձի ուզօղ շատ ունիմ, բ՛այց յես վոչ

մէկին չուզիմ... Սիրիր եմ, առիր եմ, չիմ փախե. նըշան տըրին, ամուսնացամ: Ունեմ չոռս էրէխա, հըմէնին էլ պըսակիր եմ: Հաբուր հատ օրական կօվ եմ կըթե, կըթվոր եմ աշխատե: Պարքեվաղըրիր են... Չոռսը կըթվոր ենք իլե, ամառ էլէլ ենք սար, սարն ենք ապրե՝ հօլիկները, տեղաշոր տանում ինք ընդեղ... Իրեք ամիս սար ինք էթում: Մենք կէլ չենք տէսե: Սաղ տեղ էլ ֆըռացիր եմ, սաղ գյուղօվ էթում ինք ման կյա̈լու...

***

Մէ հատ թաքավոր ա ըլնում, մէ ատ տըղա յա ունէնում: Հէտօ կընիկը մահանում ա: Նախքան կընգ'ա մահանալը, ինքը կայնած՝ լըվացվում ա, տէնում ա՝ էրկու հատ թըռչուն էկան կայնան: Թըռչունի լէզու յա հասկընում էտ թաքավորը: Ասում ա՝ էտ ի՞նչ խօսաց, ասեց՝ վոր իրա կընիկը կըմեռնի, իրա տըղէն էլ իրա տեղ կըլնի թաքավոր: Էսի ասում ա՝ վոնց թէ, ասում ա, ուրեմ իմ տըղէն կ'ա իմ տեղ ըլնի թաքավո՛ր: Ասում ա՝ հա: Հէտօ կընիկը մեռնում ա: Մեռնում ա, տըղին տանում ա, մէ ատ պալատ ա սարքում, տըղին տանում, տըընում մէչ: Ասում ա՝ «Տու ըստե մընա, տուս չըկյա̈ս»: Տըղէն տառնում ա քըսան տարէկան, ինքը թազա կընիկ ա առնում: Մի օր էտ կընիկը իմանում ա, վոր իրան տըղա ունի: Էթում ա ընդե, ասում ա՝ «Տու պըտի իմ հէտ ըլնես, յես քօ համար եմ էկե, վոչ թէ քու հօր համար»: Ասում ա՝ «Ա՛յ կընիկ,- ասում ա,- յես իմ հօր անկօղինը չեմ պըխծի, վոր հարուր հատ քօ նըման հըլնի»: Էս կընիկը ճըվում-բօռում, թաքավորին ասում ա՝ «Քօ տըղէն էկէր էր, վոր ընձի ծեռ քըցէր»: Ասում ա՝ ինչ անենք, ինչ չանենք, տըղին ասում ա՝ «Դէ վոր ընենց ա,- ասում ա,- ըստեղից հեռացի՛, կընա՛: Յես քեզի սըրին չեմ խանի, մէնակ կընա, է՛լի, ըստեղից»: Թօղում հեռանում ա: Հեռանում էթում ա, շատ տանջանքներ ա տէնում… Վէրադառնում ա: Վէրադառնում, տէնում ա, վոր հէրն ու մէրն են, ըտեղ մառթ չըկա, ասում ա՝ «Հայրի՛կ ջան, ընձի հույր կընթունէ՞ք»: Ասում ա՝ «Խընթըրեմ, համէցէք»: Ասում ա՝ «Դէ արի լըվացվի, նոր հաց կե»: Տըղէն ծեռներ պըռնում

ա, հէրը ճուր լըցում, լըվացվում ա: Էս տըղէն ասում ա՝ «Հայրի՛կ, հիշո՞ւմ ես, վոր էրկու ճընջուղ ասեց՝ կիկ՚ա ժամանակ, վոր տու ճուր կըլըցես, քօ տըղէն կըլըվացվի»: Ասում ա՝ «է՛է, տըղա ջան,- ասում ա,- տըղէս կընաց, հաստատ կօրավ»: Ասում ա՝ «Յես քօ տըղէն եմ, հիմի տու ճուր լըցիր, յես լըվացվա»: Ասում ա՝ «Դէ վոր ընենց ա, ճընջուղի ասածը ճիշտ էր, իմ թագը քեզի խալալ ըլի»… Քաառ եմ պատմում…

Հայկուշ Հարությունյան, ծնվ. 1937 թ.

## Սևաբերդ գյուղ

***

Հառէչ թուրքերը քօչին գ՛ացին ըստեից, նոր փօխէցին... Մեզի աքսօրին: Աֆտօն կայնուցին ըստե, տարան բ՛առցան... Յես ուրխըցէր ինք, աֆտօ յինք նըստե: Հէրըս կըհասկընէր, օր մեզի տանում են ուրիշ տեղ: Գ՛ընացինք, տավարնի վագոն են բ՛առնում՝ չոռս-հինգ ընտանիք... Կօթօվ զարգում հանում ին սալդաթներ, մեզի բ՛առնում էն: Յես տէսէր եմ, սըրանք չեն տէսե: Բ՛առցան, տարան մէզ հասցուցին, տարան աֆտօմատօվ կօխին էտ դէպօյը, մօյըշնին: Կընանիքին՝ առանցին, տըղամառթկանց՝ առանցին: Շըլանգներ պային, մեզի լօղացըրին. տաք ջ՛ուր էր: Հիչուցին, տեղափօխին: Անձըրեվ, շըլօփա... Գ՛ացի աշխադա. հօրիկ եմ քըշե, մէխանիզատըր եմ սօվրե: Գ՛ացէր եմ, սալօմ ու խոտ եմ կապե, խըրգէր եմ էս մեր սօվխօզին: Հիցուն տարի վար ու ցանք եմ էրե: Մըզա տըղէքները գ՛ացած՝ վարգեր փագեն... Էս տէլէվիզըրները խարաբ էրին ժօղօվըռթին...

Աշոտ Գրիգորյան, ծնվ. 1935 թ.

***

Էն վախտվա պառավ կընանիքն ասում ին՝ «Իդա դազան դ՛ըրած ա փէչկի վըրէն, բ՛էրան ծածկուզ ա. ի՞նչ գինաս՝ մէչը ինչ կա, ինչ չըկա, օր բ՛ացիր՝ ամէն ինչ կէրէվա»:

Վահան Ծառուկյան, ծնվ. 1952 թ.

# ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## Ալափարս գյուղ

***

Ջա՛յէլ վախտըս էթըմ ի դ՛աշտերը, աշխատըմ ինք, խոտ ինք քաղըմ, խոտ ինք դըրմըղըմ: Էտենց աշխատըմ ինք, տէսանք՝ ախչիկնէրի մէկը չըկա: Ասէցինք՝ հո՞ւր ա, հո՞ւր ա, ասին՝ չեմ գիդում, մէ տըղի հէտ կայնած խօսում ին, ընդօվ դէն մէկ էլ իշկացինք տէսանք՝ չըկա ու չըկա, փախեր ա:

Յես էլ սիրէր իմ: Մէ օր հէրըս տէսավ: Տէսավ՝ էտ տըղի հէտ խօսըմ իմ: Հօ տըփել չըտըփեց, հօ տըփել չըտըփեց: Ընձի էնքան տըփեց, ասավ՝ «Հընչէ՞ս ըտան սիրե դ՛ու, յես ընդանցը չեմ ուզում, հընչի՞ սիրիր»: Ասի՝ դը յեսիմ, սիրէցի: Հետօ յէլ պըսազվանք հիրար հէտ: Էկան նորուց ուզէցին տարան:

***

Հառադունը զառթնում եմ, շորերըս հաքնում եմ՝ զա՛տ էլ չըկա անէլու: Գ՛ործ հըլնում՝ անըմ եմ, չի հըլնում՝ չեմ անըմ: Ումո՛ւդ, նըստար արեվի՞ն: Ժիլէտ ի գ՛ործըմ: Բուրթը խուզել ին տալում, տըղէս էր անըմ, մառթըս էր անըմ: Մառթըս էլ մեռե գ՛ացե: Կըթէր եմ մէ վախտ կօվ: Վոր պայում ինք, կըթում իմ, բա ինչ իմ անըմ: Կաթը անըմ ինք պանիր, մածուն ինք մէրում: Խընոցին կախըմ ինք, հարում ինք: Կարաքն էլ հանըմ ինք մըչից, դ՛ընում ինք ընդե, ուտըմ ինք: Դը վոր շատ էր հըլնում, հալըցընում ինք, յեղ էլ ինք անըմ: Վոր հա լըցըմ ինք ընդե, աղըմ ինք, դ՛ընում ինք, հալըմ ինք՝ առթար յեղ, կէրէ՛ք: Կաթը պըտի կըղըրվէր՝ անինք ժա՛ժիկ: Վոր դ՛ընըմ ինք վըրէն՝ կըղըրվըմ էր, լըցում ինք պառզօններ, քամվում էր, հըլնում էր ժա՛ժիկ: Լըցում ինք պառզոնի մէչ: Յուղերը լըցում ինք կըճուճներ: Յեղ ենք ասում մենք: Հա, ասէցիմ: Կըղըրվըմ էր, քամըմ ինք, ուտըմ ինք: Պանիրը կըճըճօվ խօրըմ

ինք: Կանթար կար, էրկու կանթեր ունէր: Վէղրօքը քըցում ինք, էթում ինք, քըցում ինք հուսընէրիս, բ՛էրում ինք: Մեզի մօտիկ էր: Հիմի էլ ջ՛ուրը դ՛ըռան դ՛էմըն ա: Բ՛անջըրի գ՛ացէր եմ: Բ՛էրըմ ինք, տապկըմ ինք, ուտըմ ինք: Չորցընում ինք: Խընօցու թանը կա՛մ ըրբաս կանինք, կա՛մ՝ վիրը չունէր՝ կըտինք հիրանք կանին ըրբաս: Այտենց, ձզիզըս: Թունդըրի մէչը միյնձկ լավաշ ինք թըխըմ: Գ՛ըլօխըտ չըզձնես ծառին: Ընենց գ՛աթա յի թըխըմ, համը բ՛էրանտ էր մընըմ: Խորիզը շատ անըմ ինք, խըմորն անըմ ինք, յուղ ինք քըցըմ հէտը, ամէն բ՛անը քըցըմ ինք, էտի գ՛ալըմ էր պըռծընում էր, խըմորը բ՛էրում ինք, գ՛աթէքը բ՛ացըմ ինք, ամէն գ՛ունդըն ըսենց խորիզը զձնում ինք մէչը, բ՛ացում ինք սիրուն նըխշըմ ինք, կըրաղները նըխշում ինք, զձնում ինք թունդըրա կողըն, ընենց գ՛աթա յէր հըլնում, համը մընում էր հըմընի բ՛էրանը: Կըլօջ էլ ինք թըխըմ: Խորիզ չինք դ՛ընըմ ըտըրա մէչը: Միչինգն էլ՝ փողը դ՛ընում ինք մէչը: Կըլոր անըմ ինք, թըխըմ ինք, պըռծընում ինք, հարը մէ պաղըմ ին, հիրկըրվանն հանըմ ին, փըռթըմ ին՝ տէնին՝ փողը վիրն ա հընգընըմ: Այսենց դ՛ձնձկօվ փըռթըմ ին: Վորը կըվէրցէր՝ հընգընում էր ընդան: Բօ՞ռշ: Թուփը լավ փըռթըմ ինք, լավ փըռթըմ ինք, լըցըմ ինք կաստյունգէն, յուղը դ՛ընըմ ինք, ամէն բ՛անը, դ՛ընում ինք էփըմ էր, համը բ՛էրանն էր մընըմ: Հավողից գ՛ինի սարքում էն, մաճառ, հըլնում էր գ՛ինի, խըմում ին:

***

Գ՛յուղին ծընվէր եմ: Սաղ օրը խաղըմ ինք, գ՛ընդակ ինք խաղըմ, պախկըվոցի ինք խաղըմ մերոնց հէտ: Իմ մէրըն մեռեր ա, մեծըցէր եմ, զավօղնէրին բ՛անվօրութուն արէր եմ, աշխատէր եմ չօլերին: Ալաղ ինք անըմ, ուրաք ինք անըմ, դըրմըղ ինք անըմ՝ փօցըղ ինք անըմ, սիռտըտ ուտեմ: Լավաշ ինք թըխըմ, յես էլ թըխըմ ի. քըցըմ իմ դ՛ափի վըրէն, զձնըմ իմ թունդըրա կողը, հանըմ իմ ձ՛ընձըխկըտան լավաշներ: Վով գ՛ալում էր՝ հույրա-

սիրում իմ, վոն գ՛ալում էր՝ հույրասիրում իմ, ճզիզըս: Բօքոնը թըխում ինք, ճըմուռն անում ինք, լըցում ինք ուտըմ ինք: Բօքօնը փըռթըմ ինք, յուղը դ՛ընըմ ինք, խառնըմ ին գ՛ըտալօվ, խառնըմ ին, լըցըմ ին ամըններն ուտըմ ին: Պիսօք քըցինք շատ՝ քախծըր գ՛ըլնէր: Պէսօք քիչ ինք քըցըմ, շատ չինք քըցըմ: Զ՛ըմեռ ժամանակ քուռսի դ՛ընըմ ին, մըտնում ին տակը էրէխէքը, չին կախվըմ թունդիրը: Ծասկըմ ին էսենց, քուռսին դ՛ընըմ ին, մեծ քուռսի էր, մըտնըմ ին տակը: Զճնում ինք կողրանքը կառտօլը: Շըշէրին էլ ին շարըմ: Անասուն հառէչ շատ ինք պայըմ: Մէ քանի հատ խոզեր ենք պայում: Ի՞մալ ենք՝ շատ լավ ենք, ճզիզըս: Դ՛ու առօղջ հըլնէք, ինշքան աբրէք՝ ուրախ աբրէք:

Արաքսի Ենգիբարյան, ծնվ. 1930 թ.

## Աղավնաձոր գյուղ

***

Տէքճրկընիգ ինք: Համ հարէվան ինք, համ տէքճրկընիգ ինք: Ալաշկերդից ինք: Էսի հիրանց տունն ա: Մեր տունըն հէն ա: Ափսոս վոր ամուսինըս մահացե, լըսացի՞ր: Արի նըստի իմ կող: Չէկիստ էր իմ կիսուրըն, լավ, ընտիր կընիգ էր: Տըղամառտու աշխատանկ կէնէր: Քառասունմեկ թըվին ամուսնուն հօղօրգէր էր պաղէրազմ, հինքըն պախէր էր հիրա էրէխէքին, աշխադէր էր: Աշխադե, կըրարե-ծըրարե, էրէխէքին պահե, ուսումի յա տըվե, լավ գ՛ըրակետ էրէխէք էրե: Մեզի ընտիր կիսուրներ ունինք:

Արաքսյա Մխիթարյան, ծնվ. 1938 թ.

***

Ուրպատ օր մըսացուն կէնինք, յեզըն կըմօռթինք, կողրանք բ՛ըռնինք զօվըընդ կըխաղանք: Հառավոտ հէլնինք ճաշըն կէփինք, գ՛ճզըրինք: Ժամի ըտենց տասին, տասանց կէս կէթան խառսի հէ-

դեվ նաղարով, զուռնով, տաշի բոռալով, յերքէլով կէթան խընամու տուն: Կէթան խառսին կըխաքուն, կըխըփուն, կըտին փէսի թեվ, բ՛էրին մեր տուն: Ազաբաշին էլ կա, խառսնաքուրն էլ կա: Թըրի գ՛ըլխու վըրէն՝ լավ խընձոր, կողրանքն էլ՝ խընձոր, կարմիր լյան-թէրով, վառթերով կընըխշին թըրի վըրէն: Քավորին կէթանք կըսենք՝ դ՛ու հէլի մեզի քավոր: Էդ մառթն էլ չըսա՝ չէ: Կըսա՝ «Անպայման գ՛ըլնիմ ձ՛եզի քավոր յես»: Քավորն էլ կըխաքնի կըխըփվի, վառթըն կըզյըրգա դօշ: Տըղին կօզբանդ կըկաբին: Էն-քաղ վոր կըկաբին, տըղի՝ թաքավորի կօզբանդըն կըկաբին, ազա-բի, քավորի ծաղիգն էլ կըտանին խըփին հիրա դօշը: Յօթը գ՛իշեր, յօթը ցէրէկ խառնիս կէնինք, խառսին կըբ՛էրինք տուն: Խախտուն ունէնք, կուբարի տըներ կար մեծ, լավ քօչյըրի կըխաղինք, լավ ձ՛եռնախաղ, լավ կըփօցի, զօվընդ կըխաղէնք:

Արաքսյա Մխիթարյան, Զինա Մխիթարյան

***

Հառէչ կէթին ջ՛ուր գ՛օղնալ: Թյազյա խառսներ կըխաքվին, խըփվին, խացօվ, գ՛աթօվ, հալվօվ, կանֆըռտներ, ամէն բ՛անօվ կառնին կէթին գ՛էտերի բ՛էրները: Յօթ հախպըրից ջ՛ուր կըլըցէնք բութուլկէն, մէ խատ պըստի քար կըթյըլէնք մէչ, ըտե կուտէնք, կըխըմէնք: Ծաղիգներըն կըշարէնք բութուլկի վըրէն, կառնէնք գ՛ուքէնք, մեր կիսուրներ ձ՛ըցում կըլըցէն, լըցեն մէչը: Էդ էլ մեր վիջագըն:

Զինա Մխիթարյան, ծնվ. 1936 թ.

***

Բազեր կըդ՛ընէնք ձ՛ըցմի տազըն, ձ՛ըցումըն շուռ կըդինք մէչ, ինչ կա չըկա գ՛ուքէր լըցվէր էդ բազըն: Բազըն կըքաշէնք մեր դ՛էմ, սիրուն ջ՛ըրօվ կօղօղէնք ու կարաքըն գ՛ավքէնք: Էտ թանը կըկըդրէնք, ժյաժիկ կէնէնք, պանիրը, կանանչին կըխառնէնք խէտ, պուլիգներ էնքան կըսըխմէնք ու շուռ կըդէնք թունդըրա փօշու

վըրէն: Չ՛ըմեռ ձ՛ուն վոր գ՛ուկէր, նոր կըբ՛անէնք կուտէնք: Մըկա գ՛ազ կա, կըպուս, մէ բ՛աժակ չայ խըմիս ու վեռչ: Էլ ինշ կա խընութվա:

Արաքսյա Մխիթարյան

## Արզական գյուղ

***

Իմ պապիս հէրը տէրդէր է հէլե, պապըս էլ ուզէցե տէրդէր հըլնի, օձվի տէրդէր, էն էլ՝ կընիկը մեռեր ա, հինքը ջայէլ է հէլե, գ՛ընացե նորից պըսագվեր ա: Էրկու ախչիկ, մէ տըղա ունէցէլ են, իսկ էրկու տըղա, մէ ախչիկ էլ էն հառչի կընգանից ա ունէցե: Յես էն եմ հիշում, վօր առթէն հինգ տարէկան էրէխա յի, մէ անքամ, էս վէրեվը Սուրփ Հօվանէս ունենք, պապիս տունը ըտըրա պատին կըպած էր, մէ փօքըր հօղամաս էր... Ուրեմ մէ անքամ յես գ՛ընացի, խընձօրի ծառներ ունին, գ՛ընացի, դէ հինգ տարէկան էրէխէն ինչքան պըդի բօյ ու բուսաթ ունէնա, ձ՛եռըս քըցի, հըլը խակ էլ է, էլի, ձ՛եռըս քըցէցի էս յանից, էն յանից՝ բօյըս չըհասավ, վոր մէ հատ զօյնէ քաղեմ: Մէզ էլ հանգառծ մէ փօքըր ճուղ կօղըրվավ: Էդ ճուխքը վոր կօղըրվավ, յես թօղի յու փախա դուզ տուն, էկա ըստեղ: Էս տունը քըսանյօթ թըվին են սարքե: Հէրըս քըսանյօթ թըվին ա սարքե: Թօղէցի էկա ըստե: Մէ քիչ հետո, մէկ էլ տէնամ՝ էկավ՝ «Ա՛յ բալամ, ուտըմ էք՝ կէրէք, էլ ճըղներն հընչէք ջ՛առթըմ»: Էդի իմ միտը չի էթըմ ա: Չեմ կարա մոռանամ, վօրտեվ դէ հինգ տարէկան էրէխէն ինչ... Յեռեսունվեց թըվին էլ մահացավ: Կըզօրակօվ գըլխարգներ կար՝ շըլապկէք, այտըրանցից էր դ՛ընում:

***

Զատկի օրը, ուրեմ, տօբրակը կախըմ ինք թելից, կապըմ ինք, դէ էն վախտ սաղին էլ հէռթիկ էր, լուսամուտ վօ՞րդից, հէռթըկից հըլնում ինք, էտ տօբրակը կախըմ, հիշնում էր ցաձ: Դէ էդ մառթիք առթէն գիդէին, չէ՞, սօվօրութուն էր, վօր պըդի մի բ՛ան լըցնին. աղանձ էր, փօխինձ էր, յեսիմ, ինչ հըլնէր, լըցնում ին, քաշում ինք,

հանում: Միրք էն վախտ չըկար, մէնակ խընձօր էր, շйքйրգէնի խընձօր:

***

Քառասունը էրկու թըվի գ՛արնանը, ուրեմ, յես էծերը տարա, վօր արաացընեմ: Աբրելի ութըն էր: Մէկ էլ, մի ախպէրըս էտ համբօլն էր քըշըմ, մէ հատ էլ մանջկալ կար, ընձի ասէցին՝ «Արի խօրիկ քըշի»: Ցես էլ, ուրեմ, առաչի անքամը, կյանքում առաչի անքամը հէրըս մէ զույգ կարմիր կօշիկ ա առե, հաքյէր եմ, գ՛ընացե, էծերը վօր տանեմ արաացընեմ: Մէգ էլ վօր գ՛ընացի, ասին՝ «Արի խօրիկ քըշի», է՛, ուրխըցա, հիմացար, ասէցի՝ խօրիզ են ասում արի քըշա: Ուրեմ էկավ էն հօռօվէլին, վօր պըտի ֆըռա, դէ յես ի՛նչ եմ հասկընըմ՝ էն յա՞նն հընսնեմ յեզան, թէ՞ էս յանն հըսնեմ… Ուրեմ, ըսենցին վօր պըտի ֆըռա, յես էս յանը հիչա, էտ տավարը վօր ֆըռաց, բ՛ան հէլավ, ընձի առթէն կըպցըրին, էս ժընջիլը, բ՛ընատէն… Կըպա յեզանը, քիչ ա մընըմ՝ մէշկըս ջ՛առթըվի: Տասը տարէկան էրէխա յեմ: Էդ մօմէնդին յեզը վոտը դ՛ըրեց վոտիս, էտ կօշիկը վէրեվից մինչեվ նէրքեվ ճըղեց: Հիմի հէլէր են, առթէն ֆըռում ենք, հիմի ախպէրըս բ՛ան ա անում, վըրէս ջըղայնանում ա, (գ՛ընաց բ՛անակ չէկավ), ջըղայնանում ա վըրէս՝ «Հընչի՞ ես էդ յանն հընցե»: Է՛, հօ յես մէշկիս ցավի դառդը չեմ, կօշիկիս դառդըն եմ, վօր կօշիկըս ճըղվեր ա. կյանքյում առաչի անքամ մի զույգ առէր են, հաքյէր եմ: Նօր ասէցի՝ «Տօ յես շա՞տ եմ հասկընում՝ էն յանը հիշնեմ, էս յան հիշնեմ… Դ՛ու տէնում էք, վօր հառաչի օրը ընձի ասէլ էք՝ հէլի նըստի քըշի, հէլէր եմ նըստե»: Այ էտենց...

Վազգեն Նիկողոսյան, ծնվ. 1931 թ.

***

Հառավոտ շուտ էր, չեմ հիշում՝ վօր թըվին էր, մէզ էլ դալմադալն հէլավ էս մայլից: Ըսենց դալմադալ հէլավ, ասինք՝ էս ի՞նչ հէլե, վազանք էրէխէքօվ, էրէխա յէլ չի, յես ահակին ջйյէլ տըղա յի: Վազանք՝ մէ հատ վայրի խօզ էկեր ա գ՛յուղը, էլ գ՛յուղից չի կարէցե

դ՛ուս գ՛ա: Մըտե, ըսենց այգիները տըրօրէլօվ, բ՛ան, մինչեվ ըտե, բ՛ան էր, վօնց վօր գըժված հըլնէր, էլի: Սեվ, հըսկայական խօզ էր էսքան: Իրեք հօքի տարան հիվանդանօց: Հառցագվում էր ժօղօվըռթի վըրէն: Օվ մօտիկ գ՛ընաց, փօր-մօրը ճըղէր էր: Վեռչը էնքան լարէցինք, էկավ մըտավ էտեղ, հընց էս հարէվանի տունը, գ՛օմը, մէամիտ էկավ մըտավ: Նօր դ՛ուռը փագին վըրէն, գ՛ընացին նախակային բ՛էրին, անտառի պետին բ՛էրին, թէ՝ ինչ անենք, ասին՝ գյուլլէք, էլ ի՞նչ պըտի անէք: Վօր վընաս ա տըվե, էրկու-իրեք հօքի տարան հիվանդանօց, բ՛ըռնին գյուլլէցին:

Ռոբերտ Թաղևոսյան, ծնվ. 1939 թ.

## Բջնի գյուղ

***

Մեռնեմ քեզի, էն վախտ ի՞շ կար, վօշ մէ բ՛ան: Բ՛այց ուրախ ինք ապրըմ: Պըտըտօրնէրը ջէրգում ինք ըսենց, տուն-տուն ինք հաղում էրէխէքʹի հէտ, հառս ու փէսա յինք հաղըմ: Փէդի վըրա կուկլա յինք սարքըմ, կօճակ ինք դ՛ընըմ, թէվէր ինք դ՛ընըմ, էտ տիկʹինօվ հաղըմ ինք: Սանտալ էմ հաքʹէ, բօբիզ էլ էմ գ՛ընացէ դըպրօց: Օրօրմածիկ պապըս տըրէխ ա կարէ, մէզի հաքցըրէ, կօվի կաշվից: Կաշին ձ՛ըքում էր, սարքըմ էր, տըրէխը կարըմ էր, հաք-ցընըմ մէզի, ղըրկում էր դըպրօց: Վօշխարի գ՛ըլօխ էմ բ՛ըռնէ, սարէրում էմ էղէ, կըթվօր էմ էղէ: Աշխօր էն տըվէ, բէրէր էմ: Թունդըրի շըռթին հաց էմ թըխէ, թըխէր եմ ռաֆաղօվ: Ժամանագ ա ըլէ՝ հա՛մ գըռտնագ եմ արե, հա՛մ թըխէր եմ: Գիդէ՞ս ինչ, ձ՛ունն էկէ, բարփիկը պըդի վէրցնէմ, ճամփէն բացէմ, բ՛այց թէվըս թուլ ա:

Ռիմա Սահակյան, ծնվ. 1939 թ.

***

Մէր պապէրն էն առաչինն էկէ ստէ, նէրգախթվէր էն ըստէ, էկէ բ՛ընակըռէ, աբրէր էն: Հըմի մենք դ՛ըրանց սերունդներն ենք:

էն կարմիր դարվազէն վօր կա, ընդէ յէն աբրէ, մի քիչ վէրէվ: Այ էս մէքէնայի կայնածօվ էս իմ պապէրի տունն ա ըլե: Այ ընդե յեն աբրե: Տատըս պատմում էր՝ վէղրօն տալիս ինք, Զանգույից ջ՛ուր ինք վէրցնում: Էս ջ՛ըրի հըմար էն մառթիք էկէ ստէ աբրէ: Ջ՛ուրը կար, անտառը կար, ամէն ինչը հարմար էր, էկան ըստէ: Էս յէրգիրը կըղըզվի, մառթիք կարօղա ըլէն՝ խանգառէն: Վօչ մէկին չի հէտաքըրքըրում՝ ո՛ւմը բ՛ըռնին, ո՛ւմը բ՛աց թօղին՝ էտի հիրանց նէրքին կուխնյան ա: Էս գ՛յուղը աշխատօղ ժօղօվուռթ էն, հիրանք հիրանց դ՛աշտէրօվ աշխատըմ էն: Հավատացէք, էս ամէն ինչը հիրանց չի էլ հէտաքըրքըրում: Հավատը շատացէր ա ժօղօվըռթի: Բ՛անէր կա, վօր էժանացէր են:

Գյուղամիջում հավաքված տղամարդիկ

## Լեռնանիստ գյուղ

***

Էլ չեն թըխե մըկա, ժօղօվուռթ զարգացած առթէն, կյա̈զի փէճէր տընեն, շըփշըփալէն պա̈ցեն թըխեն... Քյօռցած էն ժօղօվուռթ էն վախտ, ա՛յ ախպէր ջան: Ի՞նչ կար, աշկընէրից ըսենց ճուր չըռէր... Էն վախտ կյա̈րէ խացն էր, ժօղօվուռթըն ըտենց թըխէն, է՛լի, խօ մըկավա նըման վիշի չի՞, վօր մէ շա̈բա̈թ անեն ու... Էն վախտ օրը մէչ թըխէն: Կյա̈րէ խաց էր, փըշըրվէր թափվէր, կուտվէ՞ր էտի: Խըմոր կանէն, մա̈ռզա̈կա կար, կըկյընդէն, կյըռտընկէն ու տփէն կօղը՝ վօրըն պախէր կօղը, վօրըն թըփէր կըրակի վըրէն... Յեսիմ, ըտենց արած, ասէլօվ լըսիր եմ յես ուրանցից, չեմ տըսե յես, էտենց կյա̈րէ խաց յես չեմ տըսե: Տաշտէրօվ խըմորըն կանէմ, լավ կըկյընդէմ ու կըթըխէմ, համարյա վացուն, հա̈րուր խաց էլ չում թըխէր եմ, կըռտընքօվ... Քյուռսի կըտընէն թունդըրա վըրէն, ժօղօվուռթ կըհավաքվէն ըտոնց պուլոր, սեղան-տախտըկի նըման, քհավաքվէն ըտոնց պուլոր, ու

վոտներ կըմըտուցէն էտ քյուռսու տակ, վոր տըկից էտ կյոլըն կյէր ուրանց, տաքյ ըլնին ուրայ:

***

Էսի սանդի քյարն ի, էստոր մէչ սիպտակ ցօրեն կըլըցեն, թըռձեն, ու էստըրօվ կըծէծեն: Ճուր կըլըցե՛են, էտուր թեփուկըն կուտա տուս, էնի մաքուր կուրկոտ կանեն, քըցեն սըբասի մէչ: Ածի՞կըն… Ցօրեն ցանէյի ըսենց սինու մէչ՝ ճոչ, ճըրէյի օրական, կանանչըն ըսենց կըլէր: Սեղան-տախտըկի վըրէն տընէյի, կըտըռտէյ… Սանդըն, վոր ցույց տըվիմ քյեզի, է՛, ըտոր մէչ կըլըցէն ու կըծէծէն էտի: Ըտոր մէչըն ըտենց կըծիծէն, կըխանէն ու կըլըցէն դյաբօները: Լըվէն, լըցէն փըլավքյամիկներըն: Մյառզյակէն, է՛, մյառզյակէն կասեմ, սըլէներըն, էտի քյամէն, էտ ճուրըն, նորից թյանձիֆօվ սիրուն կքյամէն, վոր էտ մազիկներըն չէթէր մէչըն, ու ըտենց յոլուրըն քիունցէն մէչըն, տընէն թունդըրա վըրէն, կէփէն էտի: Պիսօք քըցէն մէչ, վոր լավ քյախցըրնէր:

***

Ընձի փախցուցած են: Խօրիցըս ուզեց՝ չըտըվեց, փախցուց: Կասէր՝ «Յես չեմ իտա, ըտոյ քյասիբ են, տու հարուստ տան ախչիկ ես, հընչի՞ էթաս, էտ քյասիբ տուն խառս տյառնաս»: Տարավ իրա պարէկմի տուն, էրկօր մընաց, պիրեց ուրա տուն: Պապաս էկավ մէշու ճըղայնացավ, թօղեց կընաց: Պապաս չէր կըռվե: Վոր կըռվավ, ի՞նչըն կըփոխվի...

Անժելա Ղարիբյան, ծնվ. 1948 թ.

***

Կուկյան ըտոր խաբար կուտան, կասեն՝ «Ախչի՛, Արո՛ւս, քյու տըղի աֆտօն կառնեն կուտան Լէնդօյ»: Կասի՝ վո՞ն, կասեն՝ «Մեյ լըսէր ենք, կընա կանխի, վոր տան քյու տըղին»: Էսի կէթա մըտնի գըրասէյնակ՝ նախակի մօտ, խա, էտ Լէնդօյն էլ կանչեն: Կասի՝

«Բալա՛ ջան, քյու դաղէյ յոթ մառթ խասնէր, իմ տըղին մէ աֆտո չէ՞ր խասնէ»:

***

Տէքյըրըն կէթա, վոր ախպօր կընգյա՜ն թըփի: Էն յանից մէկըն կուկյա՜ խաբար կուտա, «Ախչի՛,- կասի,- ճար կիտես՝ ճար արա: Հէսա տէքըրըտ էկավ, քե կըթըփի»: Կասի՝ տու իմ մօրըն լավ չես պախե: Խա՛: Դէ մէ շա՜ռ պըտի անեն, է՛լի, վոր մառթու սիռտըն մառթու չուզեց, ինչ ուզեն՝ կասեն: Էս ախչիկ փախնի մըտնի հա՜րեվնի ամրոց, հա՜րէվան տանի պախկըվցու: Ման կուկյա՜, տէնա չըկա, թօղի կէթա: Տուն ի ման իկե, խօ չէր էթե ուրիշ տեղ ման կէր: Թաղեմ Արուսի արկածները...

***

Էսի կէթա կյոռծի կուկյա՜ (դէ կիսուր մէշու պինդծեռ կընիկ էր)՝ «Անա՛, խաս տ’ուտեմ, անա՛»: Դը, կասի՝ «Քա, հէ՛նա է՛լի, կընա՛» (ախտէցի յէր, ցաձրախտէցի յէր. *ա՜նա*, *դա՜դէ* կասէյ էն վախտ, *դա՜դէ*՝ մայրիկ): Խա, էսի կասի՝ կայնի ընենց քյա՜լա՜յ խանեմ ըտոր կըլօխ: Ցեղեր խալի էտ պառավըն, ըսենց լըցի իրեյ կիլօներ, շարե խացատան տախտա մէչ, վոր վէրցա: Էտի շիշըն ինչ կուտա՝ իրեյն էլ հիրար հիտեվ գըլոր-մըլոր կէթան: Կասի՝ վոր ընձի փայ չըկա, կայնի թօ յեղեր շըռչըվի էթա: Կիսուր կանի՝ «Վա՛այ, սեվ կա վըրէտ, կատըվներն հուստ էկան էս փըշուր կյա՜խ»: Նըստի վըրէն կուլա. յեղեր շըռճե կյա՜ցե… Տէքյա՜ր տուն ծուկ պիրի, վոր միյնա՜կ կիսուրն ուտի: Թա՜ռլա՜ն Արուսը կյողնա կուտի, կազանը ըսենց թա՜փկօվ թա՜լի էն յան, զիվա թէ կատուն ի տարե կէրե: Կըլի կէթա կոռծի: Մէ օր էլ կուկյա՜ տուն (խէտ իրար կաշխատէնք իմ բըրի-զադ), կուկյա՜, կասի՝ «Անա՛, մէշու խաս տ’ուտեմ»: «Քա, հէ՛տա, ինչ կուտես՝ կե, վա՜րա՜մ ուտես, կե՛, է՛լի»: Կասի՝ դէ լավ, լա՜ տես ինչ

դիվան կանեմ քօ կըլօխը: Կըլի կաթի հիրեսըն՝ սերըն քյա̈շի կուտի, փըռթի... Մուկըն (մենք հո՞ւստ պըռնենք մըկա) թա̈լի կաթի թէշտըն, կէլնի… Ինչեր ասես՝ չըխանե կըլօխ… Կիսուր կասի՝ «Ախչի՛, խիվանդ եմ, ի՞նշ կըլի, կընա հախպըրից մէշու պաղ ճուր պե»: Կըլի վագոնէտկի ճըրից լըցի, տանի կըտա կիսուրին:

***

Կատուն կուկյա̈, ըտոնց ճըտեր տանի կուտի: Կատուն զինքըն պըռնի, թա̈լի մէ մէշօյ, կիլնի ըստանցին: Մէ քյօռ մառթ կար, ճա̈յել տըղա յէր, բայց շատ անշընորք էր: Կէթա էտի կոռծի: Կասի՝ «Ջավէ՛ն ջան, ինշ կըլի, կատուն տար թա̈լ, իրիկուն կուկյա̈ս, մէ պան կանեմ»: Կատուն կու տանի թա̈լի: Էտի թունդիր խաց ի թըխի: Մա̈ռզա̈կէն զա̈րկի, տէնա՝ Ջավէնն էկավ: Կասի՝ «Հա՛, Արո՛ւս, դէ ինչ ի կուտաս»: «Վա՛յ-, կասի,- Ջավէ՛ն ջան, կատուն իկէր ի»: Կասի՝ սըտկա ...

***

Մէ կիշեր կըլի էտ բիձէն, վոր էթա Արուսի մօտ՝ ուրա մառթըն: Էրէխէյ քընույ կըլեն: Էսի սութ քյուն տըվիր ի, էս Արուսը: Աշկերը պաց ըսենց կըմընա, գիվա թէ վոր մառթըն կյա, տէնա առթէն մեռե պըռծե: Տէնա վոր..., մէ խատ կուտա քիթ պէրնին, սաղ նա̈ֆա̈ր խա̈բա̈ր կըլեն:

***

Տա̈վիթ ուժեղ մառթ էր: Կեղից հա̈րուր կիլօ ցօրեն ջըվալօվ շըլկիր էր մինչեվ Ախտիյա ճա̈ղա̈չ: Կա̈ցիր էր ընդե, ճա̈խճըփան ասիր էր՝ «Տու յետ ես իկե, քենուն հետօ կըտանեյ կաղեյ: Վոն հա̈ռէչ իկե, թօ էնի աղա»: Համա ծեռ թա̈լե, ասե՝ «Չէ, չաղա՞»: Ասե՝ չէ՛: Ծեռ թա̈լե, ճա̈ղա̈չ կայնըցուցե:

***

Սըփ Կարապտա մասին … Իմ պապիկըն Կըզկալա կուկʲա էրկու հօքու խէտ, տէնա (մըրի նըման ամբոտ կըլի), տէնա՝ ըտենց պյ̈ն կիյնի յերկընքուց: Կուկʲյ̈, թուրքէրէն պյ̈րէվ կուտա: Մէ խա խուռջին շըլյ̈կ, նըխշուն թաթեր վոտեր, կուկʲյ̈ թուրքէրէն պարեվ կուտա՝ պարե՛վ Խաչօ: Վյ̈խէնա պապիկըս, կասի՝ էտիկ ի՞նչ գիտի իմ անուն, թուրք ի, վայթէ էտի ընձի սպանի: Կուկʲյ̈, կըխասնի ճամփու կէս, ըտենց խօսալօվ, գյ̈լյ̈ջյ̈ անէլօվ, կասի՝ «Քʲու տըղի անուն մէկին Հայրապետ ի, մէկին Կարապետ ի: Էտի յես եմ տըվե»: Ընդուց կասի՝ «էրկու խատ քʲար տու»: Քʲար վէրցու պապիկըս, կուտա ուրան: Կըտա էտ սըրփ Կարապտան, թյ̈լի խուռջին, կուկʲյ̈ն տուն: Էսքան թուխտ էր կըրե տըվե մօրըս էտ սըրփ Կարապետը, ասիմ՝ տանեմ տընեմ սըրփ Կարապտա տըված կըրքի մէչ: Դան կʲոխցան տարան Սըրփ Կարապտուց էտ կʲիրքըն, կʲոխցան սըրփի մէչէն տարան: Էտի տըվիր էր մօրըս: Պախիր էր մէրըս յէրկար տարի, համբըրի մէչ տըրիր էր, ըտենց պախիր էր: Մընաց, էսիկ՝ պապիկըս, կէթա, վոր էտ խուռջին պյ̈ցի, տէնա՝ էրկու խատ էսենց ճոչ յեմիշ: Քʲյ̈րերըն տառցե յեմիշ: Էտենց կըտըրըտե, սաղին, էրէխէքʲին, հարէվնէրին պյ̈ժնե: Վախտ կար՝ էտի խացատուն էր... Վախտ կար, կասի, կըլէր տասխիյ տարէկան ջյ̈յէլ տըղա, փյ̈յլէվան խաղէր: Մացե իմ պապկի տուն: Փայլէվան շըրիդ կապէր, խաղէր, ընդուց հետ կըլէր ծերունի բիձյ̈: Ասիր էր՝ «Իլի՛, քʲու մէ տըղէն խոստա մատաղ»: Մէրը վյ̈խէցիր էր, ասիր էր՝ «Իմ տըղէն մոռթի էտի, թուրք ի»: Ընդուց էտի Ափէլա մատաղ էր իջուցե: Ասիր էր՝ «Խօ չե՞մ յես քօ տըղին մատղե, տու վոր մատաղ տէր»: Կասի՝ «Յես մատաղ ի կանեմ»: Իջուցէր էր էտի մատղէր էր, հյ̈րէվնէրին, էս յան, էն յան... Կʲյ̈ռ էր իճուցե, մատղէր էր, էտ կիրքն էլ տըվիր էր ըտոր: Ընդուց հետ իմ պապկէյ տուն սատանա յէր էլե: Էն վախտ էտենց պյ̈ներ շատ կար: Թաս

պիրիր էր, ճուր լըցիր էր թասի մէջ, էտ սատանէքին պըռնիր էր: Կասի՝ էրէխու նըման, լըցված են էտ ճըրի մէջըն, գ՛ըվըժին: Պապիկըս պատմէր… Ասիր էր՝ «Էտ Հայրապետ, Կարապետ՝ յես եմ տըվե քյու տըղէրքյըն»: Ութ ախչիկ տատիկըս պիրիր ի մէ կըրընգի: Ութ ախչըկա հիտեվ էտ էրկու տըղէն էր պիրե:

***

Ասու օռշնութեն ծեր հըմընի վըրէն ըլի:
Կըլխավորօվ մընաս:
Ծեր բալէքյօվ բըխտըվոր ըլէքյ:
Ծեր ընտանիքի կըլխուց անպակաս ըլէքյ:
Ասու թեվեր ծեր հըմընի վըրէն ըլնի:
Մեր ավէդրան թօ ծեզի հըմընին քյօմըկ կայնի:

***

Խըռիսէն բօլ ի, յուղ վըրէն գյօլ ի, ուտօղն էլ քյօռ ի:
Խօսքի մէչ կասեն՝ ընդոր հօքին էրմըյներն ի:

Վարդուշ Մանուկյան, ծնվ. 1937 թ.

***

Յես ընդոր վոչ էլ տըսիր եմ, պանակից զինքյ էկավ, յես կօվկիթ էմ: Իմ մէրն ինըն ուրա մէր շատ մօտիկ ընգերույի յէն: Կասի՝ «Թըքո՛ւ ջան, ի՞շ կըլի՝ էտ ջ՛ու (քո) ախճըկան ուզեմ իմ Միրանին»: Կասի՝ «Էտի ընձի կըխասնի՞»: Կասի՝ «Խա, էրկըսօվ դասավորեյ»: Մէ օր կօվ կըթէլուց կուկյիմ, զինքյ պանակից նոր էր էկե, էսա մեր զըրասէյնակի մօտ հանդիպավ: Ասավ՝ «Տու Գուհո՞ն ես, թէ՞ Դուխօն ես»: Ընձի մէ խօրօխպօր ախճիկ ունեմ: Ասիմ՝ «Ասենք Գուհօն եմ, ի՞նչ կասես»: Ու էլ բառ չըփօխանակեց: Ըտենց մէ էրկօր... Մեզի մեծ ունէյ, իրա խօրօխպէրներ՝ Վահան, Սիրօն, Ափօն, մեր Ափօն: Մէ օր կօվ կըթէլուց էկամ, տըսամ՝ մեր տուն

նըստուկ են: Խասամ, Ափոյ իրըններ պաքʲիմ, «Ափո՛ ջան, ընչե՞ս էկե մեր տուն»: Ցես վոր վոխչըրի կըլօխ պըռնօղ եմ, ուրա վոտեր կէթէմ Շատիբուլաղից ճուր պիրեմ, լըվեմ, «Վա՛յ, պե՛, բալա՛ ջան,- կասէր,- վոտերըս թօզոտ են, պե լըվըմ»: Մէրըս ասավ՝ «Զը (քա), ըզիզըտ խօրեմ, ըտոյ էկած քʲե էլչի, տու իկիր ես իրըններ պաչես»: «Բա ի՞նչ անեմ, ա՛յ մէր»: Ասավ՝ «ըզի՛զ ջան, յես իկիր եմ, վոր քʲե տանեմ ընձի խառս»: «Ափո՛ ջան,- ասիմ,- վի՞րըն»: Ասավ՝ «Իմ ախպօր տըղին՝ Միրանին»: Ասիմ՝ «Ցես չեմ առնե ընդոր»: «Վո՛նց թէ,- ասավ,- չես առնե»: Վեռչը, հէլան կʲըցին, խօսք տարան պի-րին, էս յան, էն յան, համոզին, առամ, է՛լի, ախպէ՛ր ջան:

***

Խառնիս արին, բա ի՞նչըղ… Կիշերօվ խառնի՞ս կանեն: Ցէրէկօվ խացկերութեն էկան: Էն վախտ ի՞նշ կար՝ շօռվա յէր… Բա մըկավա նըման քʲուֆտը՞ յէր, բը՛խտըվոր… Խառնըսից հառէչ խաց կթխէն, տըղի տուն միս կըմոռթէն, նաղարա կըզընէն... Կուկʲէր զըխիրա: Զըխիրէն պիրէն մէ քʲըփի խատ արաղ, մէ քըսան կիլօ միս, էտի պիրէն, վոր կասէն՝ մեզնից քʲըփի հօքի պըտի կʲը ըստե՝ խացկերութեն: Քʲըփի հօքի կʲեն, ըտոնց կէրածըն պըտի տըղի տուն պիրէր ախչըկա տուն, վոր կʲէր խացկերութեն: Արաղ, ճինի, փէճատուկ չէր էն վախտ, կէթէն Արանա պիրէն (տըղի տէրն ի կʲացե պիրե, մեյ խաբա՞ր եյ): Օժիտ ի՞նշ կար՝ մէ ծեռք տեղաշոր էր, է՛լի: Չավորոչ (քավորի) տուն կէթէն խըբըր՝ չավորն էլ վոր ուր մառթն առնէր, գ՛էր: Նըվագօվ, զուռնօվ կէթէյ պիրէյ չավորոչ, վոր նոր միսըն մոռթէն: Առանց չավոր չեն մոռթե: Մըկա չավորոչ տեղ կիտե՞ն: Չէ, էլ ի՞նչ, մըկա… Մըկա չոր - ախպէր (քույր և եղբայր) ի կըլեն չավոր սանախէր:

***

Ծեռիս մէչ ծըվածեղ անեմ՝ ուտեն, չեն իմանա:

Աստըված ուր արածըն կանի, բ՛այց վոր չես առնի չու (քո) վըրէն, անեծքն էլ սուտ ի:
Էն վախտ փախցուցել չիլե, մըկա յի խուժանուտեն կանեն:

Գոհար Մկրտչյան, ծնվ. 1941 թ.

## Կաքավաձոր թաղամաս

***

Ցես քաղաքն եմ իլե, իկած իմ խօր տուն, իկած, ասած են՝ կուզէյ ծեր ախչըկան մեր տըղին: Իմ պապան էլ ասաց՝ «Իմ փոռ-ցուկ թանըրն չեմ տա անփոռց մազնի: Կյըտամ»: Ցես էլ ըստուն չիմ ուզում: Տասյօթ տարէկան, խելքըս ի՞շ կըկըդրէր: Միյամիտ, կեղի ախճիկ եմ իլե, կացիր եմ քաղաք քեռուս տուն, էրկու տարի ութ ամիս ընդեն եմ մընացե: Կըլխիս մազի չափ ուզօղ եմ ունէցե քաղաք: Բ՛այց պապաս չըտըվեց: Մինչեվ վեռչ հիրես տըվիմ իրան: Կեղըն չիմ ուզում: Թութուններ կաշխատինքյ, կալօշ կըխայնինքյ... Կասիմ՝ նորից էթամ կալօ՞շ խայնեմ, նորից ցեխերի մէ՞չ աշխա-տեմ, տըլերի մէչ: Ըտու խըմա չիմ ուզում: Վօրպէս լավ թութուն շարօղ՝ չըթօղին մընիմ քաղաք: Էկան, նըշանին, պիրեց ըստե: Տասյօթ տարէկան ամուսնացիր եմ: Հիցունյօթը թըվի մառղի քըսանչօռսին մեր խառնիսն ա իլե: Տըրընդէզ խօրըս տունն արին: Խըտ իրար կընացինք շոր առնէլու: Տալըս էլ էկավ խետըս, հիրա քյըվոր ախճիկն էլ խետըս էր, հիրա քյըվոր տըղէն էլ: Հիրանց տուն կընացինքյ, հիրանքյ քաղաք կապրին, իրա խօրքյուրի տըղէն քաղաք կապրէր: Ճա̈նզիրն էլ իմ խետ էկավ, իրա անունն ա Ճա̈նզիր: Կյա̈ցինք իրանց տուն, կյա̈ցինք իրեքյ օր ֆըռացինք: Իրեքյ օր իրա խէտ ֆըռացէր եմ, բայց լէզու չեմ թըռչե խետը: Չիմ ուզում, քաղաք կուզի մընի… Բայց մաման պապայ փոր կըթափէր՝ «Ընչի՞ իմ էրէխուն նորից պիրիր, քըցիր կըրակ: Ծեռ մաքուր, վոտ մաքուր, ընչի՞ պիրիր»: Խէրըս ասաց՝ սո՛ւս, քյօ ըսենց ընենց, քաղաք խուժանանոց ա…

***

Մոսկըվա յեմ կացե… Խինգ ձգձր մանէթ առամ կյացիմ, ըտուն աբրայ պիրիմ, խինգ ձգձրից հավէլ աշխատի մէչըն, խամ-խամ: Ախպէրըս էլ խետս էր, մեր հիմնարկի աշխատողներն էլ խետըս ին: Կա՛յնի, վո՞ր հույրանոցն էր… Մըտէս էր մինչեվ հէրէկ-մէկէլ… Մեյ ճաշարան կէթինք, մեր ուտել, պան տօմսի մէչըն էր, խա: Ամէն տեղ տարան, բացատըրին, կյացինքյ Լէնինի դամ-բարան, կացինք տէսանքյ… Հըլը պըստի տըղէս չըկար… Է՛նքան յեռթ կայնանքյ, կօտօրվանքյ, մինչեվ մըտանքյ... Ընչի՞ վախէնի, քյօռփա ճի՞ժ իմ… Պարկուկ էր հիրա խըմա… Ժակէտներ իմ առե, բըլուզկէք իմ առե, տըղամառթու տըլկի շորեր իմ առե… Տալերըս օվ ինչ ուզիր էր, պիրիր իմ: Ամէքի մէչ մէ խիյ մանէթ, վեց մանէթ մըտիր եմ… Տալէրի՞ս՝ չէ, չէ… Անքամ ամէքյ մէկին նըվէր տըվիմ, վոր Մոսկըվա յեմ կացե:

Օլյա Հարությունյան, ծնվ. 1938 թ.

***

Էտի մէ թձյ տըղա յէր, յես էլ մէ թձքյ ախչիկ ի: Էս մառթէրի ճռչերն էկան… Խէր չեմ տիսե: Խօրօխպըրներըս… Չէ՛է, ամսընէ-րօվ պախին: Վոր կըկյան, կասէր՝ կյացէք, հըլա մէ քյան օրից հետ նոր պան կասենքյ: Հձռէչ ըտենց էր: Մըկա չէ, մըկա չէ՝ ծեռներ պըռնեն տանեն էնատե, իրան խըրկեն... Մէ տուն էր՝ պըլուկ, պըլէր վըրնէրուս: Էտենց էր էն վախտվա տըներ: Թալվա յէր: Թունդիր էլ կար մէչ: Մէ խատ էլ կէսրար ունիմ, զձտ չունիմ, յես կիսուր չեմ տիսե: Խա, կօվ կըթիմ, վոխչար կըթիմ, կէրսարիս կէրակըրիմ, մըկա ի՞նշ կա... Ասենք՝ էսա իմ վըրնի խալաթ մաշվեր ա, կըխանիմ, թունդիր փարատիմ, մաքրիմ, էտ շըռթերն էլ կըմաքրիմ, յես կընըստիմ: Էս մէ խալաթն էլ խացին էր, քխայնիմ նըստիմ: Միզձրն էլ կըկապիմ վըրէս, կընըստիմ: Քթըխիմ, կըլիմ էտօյքը կըվէրցընիմ, թախտըփիմ կըվէրցընիմ, է՛ն, թունդըրա վոր

փարատիչ էր, էն էլ կըծալիմ, ուրան տեղ կըտրնիմ, վոր մէկէլ անքամ չինիմ ման կիմ, ուրան տեղ կըտրնիմ, է՛լի: Յես իմ խըմոր կանիմ, ծըմեռ շուտ կանիմ: Ամառ տավար կէթէր, նոր յես կանիմ: Յես քʸիչ նաֆար իմ. հիցուն խատ, յեռսուն-քառսուն խատ, էտենց կըթըխիմ... Չէ՛, չէ՛, թունդըրա խացի վըրէն ճուր չեն թա̈լե: Վոր կըպըռծըրնիմ, խըմորիս թէշտը շուտ էն վախտ կըլըվիմ, կըկոռծիմ: Կըտրնիմ թունդըրա վըրէն, թունդիրը պա̈ց էր պէրան... Կէթիմ թէքսօվ յեղը պէրիմ, կըլըցիմ մէչ, ընդե մէ խատ մաքուր շոր ունիմ, սըռփիչ էր, կըքըցիմ վըրէն: Գիտիմ՝ բօքոնները ծածկիր իմ թունդըրա շուռթ, իմ ժօղօվըռթին կըպիրիմ՝ վորըն կէր, կըբօռիմ կասիմ՝ իկէքʸ, ճըմուռ կանեմ: Կըկʸին, ճըժերըն, կէսրէրըս, էտ բօքոններ կըճա̈ռթին, լըցին մէչ, քըթէլօվ խառնին, տընին թէշտօվ կուտին:

***

Պուռթըն կըլըվինքʸ, տանինք հա̈ռվըներ: Պիրինք փըռինք, ճըպոռթօվ չըփխինք, քʸըրքʸըրինք, սանդերքʸըն կըտրնինք վոտնէ-րուս արանքʸ ու կըքյա̈շինքʸ: Խանի, պադրույներ կանի, սիրուն պադրույներ կանի, դա̈ռսինք: Փատտիյ թեվնէրուս, մանինքʸ: Թելը ժակէտ կʸոռծի, շալ կըկʸոռծի, դէյրա̈ կըկʸոռծի. չըկար էն վախտ կըտոր: Գուլպէք կըկʸոռծինքʸ, էրէխէք կըխայնին, մեյ կըխայնիյ, տըղէքʸ կըխայնին: Թաթման կʸոռծիմ, խինգʸը մատիս: Քʸա̈նի ճի՞ժ... խինգʸը ճիժ ունեմ: Խինգ խատ էրէխա յեմ ունէցե: Մէ ախճիկ ունեմ, կացե հուրիշ տեղ:

Վազգանուշ Սահակյան, ծնվ. 1933 թ.

## Մարմարիկ գյուղ

***

Չիշեմ յես... Կըղըռտէր են, մօռթէր են թուրքեր, կէսըն մեռէր են, կէսն էլ էկէր են... Մերոնք էկէր են, առաջ մըշակ են էղած...

Քառասունըյօթը թըվին պըսակվէր եմ. Խաչիկ պատէրազմի հաշվանդամ էր: Ունէցէր եմ հինգ ատ էրէխա: Յես ի՞նչ պըտի աշխատիմ, հինգ ատ էրէխա յեմ ունէցե, պայէր եմ, մէծըցըրէր եմ: Հինգ էրէխա պախել հանգիստ չէր: Հուսումի տըվէր եմ, սաղին օքնէր եմ՝ շենք սարքէր են, բ՛աժնէր եմ: Օղօրմի իմ կիսուրոչ, իմ էրէխէքին հինք պայեց, կէսրարս էլ լավ մառթ էր, յես կառօլն ի տան: Մենք քուր ենք, տէքօրկընիկ չենք: Հինք մեր էրէխէք հիրարից չըտարբերե: Յես կըդրի, կարի, կըխաքուցի իրանց, վէրմակներ կըկարի, իրանց շոր կըկըդրի կըկարի: Մեր էրէխէք լէ իրար հետն են լավ հէլե... Իմ կէսրարի վոտները լըվացէր եմ, իրան լօղցըրէր եմ, տըրօրէր եմ: Պըռծեր ա՝ ըսէր եմ՝ յես կէթամ, դ՛ու հէլի քու շօրեր խաքի... Հիմի չէնեն...

Սեդա Տոնոյան (մոտ 90 տարեկան)

***

Խառըընիքին քանի դ՛ըն հաց կըտինք, չոռս-հինգ անքամ խաց էր կըտինք, հառավօղ էլ խաշ էր կըտինք: Իրեք հարուր լըդրանոց խաշ ենք դ՛ընե խառըընիքին... Էս իմ մեծ տըղի խառըընիքն ա՝ խաշ ենք էփե: Իմ ախպօր կընիկ, իմ տէքօր կընիկ, յես տարէր ենք, մեր խացատուն էն յանն ա, էրկու հարուր քըսան, հարուր լըդրանոց կազընէրօվ խաշ ենք դ՛ընե: Էս մեր խընամին օր էկավ, ինչքան ջ՛ըգի ջուգի կար, հավքէր էր, առէր էր բ՛էրէր էր: Էս իմ խեխճ մառթ տէսավ, վախէցավ: Ըսեց՝ «Արո՛ւ, խընամ Առշակ հըմընին հավքե, հարիր հօքի առե էկե, խաշ օր չըխէրքա՞... Յես մէկին խաշ դ՛ընեմ, ջ՛յնմ՝ գ՛առ կըմօռթեմ, մէկին էլ խօրօվա՞ծ դ՛ընեմ... Նըստին սեղան, նայեն, մինչեվ գ՛առ էփի՞»: Մէկ էլ իմ տէքօր կընիկ, օղօրմի իրան, ըսեց՝ «Յեխպա՛ր ջան, չըվախէնաս, քառասուն խօքու էլ լը կըմընա, հէքուց կըճաշակեն: Էնքան ենք դ՛ընե, էնքա՛ն, էլ պատմէլու չէ»: Էտքան խաշ ինք դ՛ընե: Էկան կէրան, խըման, ուրխըցան, հէլան գ՛ացին:

***

Նոր տարուն պըտի քըռչիկ էփենք: Քըռչիկ... Ցես թուփ կըղ՛ընեմ լա՛վ, ամէն տէսակ բ՛աներ կըլըցեմ: Գա̈զա̈րից բ՛ըռնած, ծախկաքա̈լա̈մից, խընձօրից, ամէն ինչ՝ բիբար, ծիծակ, ամէն ինչ կըղ՛ընեմ էտ թըթվի մէչ, սամիթն էլ կըղ՛ընեմ: Հէտօ կըխանեմ, քըռչիկ կուզեմ էփեմ: Մէ լավ կըտոր էտ քըռչիկի կըտոր կըխանեմ, բ՛ըռթեմ: Առանց թըթվել քա̈լա̈մ էլ ունեմ, էտ քա̈լա̈մից մէ էսքան կըտոր էլ, էտ քախծըր քա̈լա̈մից լա՛ավ կըտըռտեմ, սօխառած կէնեմ, էտոնք կըլըցեմ մէչ: Կառտօշկէն էլ կըտըռտեմ գ՛ըլըցեմ մէչ, մէ քիչ ջ՛ուր քըցեմ, էտի լա՛ավ խարկըտի, էնենց, օր գ՛ուզես առթէն ուտես: Ջ՛ուրն էլ ընդե կըյեռա, կըբ՛էրես ջ՛ուր կըլըցես, ձ՛ավարն էլ կըքըցես... էդ ամէն ինչը, էդի կէփի, շատ համօվ ճաշ…

***

Հարիսի ձ՛ավար պըդի հատուկ ճանչընաս: Կա ձ՛ավար՝ սիվտակ սիրուն ա, բ՛այց էտի չի փըխըլվի, ինչօր ավազ մընա ջ՛ըրի մէչ: Էտի լավ գ՛ըլ ջ՛ըրօվ կըլըվանաս, ջ՛ուրն էլ կըղ՛ընես, գ՛ըլ ջ՛ուր, վըրէն: Իրիկուն լից (գ՛ազ ունի՞ս, թէ՞ կէրասինգա յա. ինչ վօր ա), բ՛ան կէնես, մէ հաստ խավ ա կըքըցես մէչ, կըտըռտես կըլըցես: էդրա բ՛էրան ծածկա՛, դ՛ի գ՛ազի վըրէն, էրկու իրեք ժամ հետօ կէթաս տէնաս՝ օր ջ՛ուր ցամքե, էտ խատիկներ փըլխեր ա, շէրեփըն կառիս, կըսկըսես խառնել: Էդի վօր խառնէցիր, մէ քիչ էլ կէփի, առթէն կըցվի, դ՛առնա շիրա վօնց վօր, գ՛ըլնի խըրիսա: Էնա Մուսա լեռան խըրիսից լավ կըլնի:

***

Իմ մէրըս կըպատմէր, կասէր՝ գ՛ախտըրվե փախէր ենք: Հիրանք լըսէր են՝ հէսօր իրանց գ՛յուղի կըդրէլու օրն ա: Ընկըզբից աբրէր են Ալաշկեռտ, հետօ էկէր են Դիարբա̈քիր: Դիարբա̈քիր,

էտի միշտ մըկա ցույց ա կըտան, խա: էս խեխճ մամաս կըսէր՝ էկան էս իմ ախպօր կընգա ախպէրնէր (չոռս ախպէր ունէր, իրանք վաճառական են եղե, լավ խօր տուն ա ունէցե քեռուս կընիկ), էկած ասած՝ «Հակօ՛փ, գիտե՞ս ինչ կա, հէսօր դ՛ու պըտի անպայման քօչըտ առիս, փախիս, թէ չէ սաղին կըկըրդրեն, հեռթըն էս գ՛իշեր ճ՛եր գ՛յուղին ա»: Ասում ա՝ բ՛էրեց իմ քեռին, ըսեց՝ «Հէլէ՛ք, հէլէ՛ք ճ՛եր քօչ-մօչ բ՛առցէք»… Մօրն ա դ՛ընե, հիրա կընգան ա դ՛ընե, դ՛ընե սէլի վըրէն, մէ քիչ ուտէլիք-մուտէլիք լըցե, առ ու փախ ա, փախին… Էս իմ մէր, իրան խօրօխպօր մէ հատ Մուշօ անունօվ տըղա կըլնի, էնրան գ՛օխտուկ անգըճին կըսա, կառի կէթա պախ-կըվի: Կըսա՝ «Մենք վօր էթանք էտ յէրկիր, սօված-ծառավ էթանք, մեզի կըսեն՝ էս անօթի քըռչօտնէր էկած, վո՞ն մեր հէրես կիշկա, յես էնքան հարուր գ՛ըլօխ օխճար, կօվ, մատակ, գ՛օմէշ թօղեմ ըստե, էթա՞մ: Թօ իմ ախպէր առի քօչ էթա, թէ հնարավոր ա՝ կառիմ կէթամ, չէ՝ կըսպանեն, ընձէլ թօ սպանեն, ընձի էնքան ախպէր ըտե մեռան, ընձէլ թօ սպանեն»: Էսի ասում ա՝ վօր մենք գ՛ընացինք, գ՛օմի դ՛ըռնէր բ՛ացինք, էսի ախպէրըն առթէն առե՝ իրա մէրն ա, իրա կընիկ, իրեք էրէխա ունի, սէլի վըրէն գ՛ըքան: Էսի օխճար, կօվէր, յէզնէր, գ՛օմէշնէր՝ հըմէն կըտա դ՛եմ, էտ տըղու խետ խօրօխպօր, հինքը եղե տասչոռս տարէկան, բ՛էրե հասցըրե, ինչքան են էկե, քիչ ա մացե՝ խասին Արազին, գ՛ըթե ախպօր: Ախպէր կուրխընա, կըբ՛էրա մատաղ կանի, կըսա՝ լավ ա, իմ քուր մեր եղած բ՛էրեց… Մատաղ կանի, կըդ՛ընա կազան վըրէն, կէփի, օր լըցեն, ուտեն առթէն… Ռուսն էլ խափե շատ, հայէրին, միշտ էլ կըխափա: Ռըսի զօրքըն գ՛ըկա: Գ՛ըկա, էսի էդ ախպէր, վօր սպա-նէր են, ըղըրա ճ՛ին, կըսա, չըթօղէր՝ մառթ խէձին, հինք կըպախէր: Կըկապէր իրա ճ՛իուն, ուր կէթէր, իր խետ տանէր: Ասում ա՝ կապուկ էր, էստոնք էկան, ըսին՝ «Էս ճ՛ին պըդի տաս: Մենք էկէր ենք, օր ճ՛եզի փըրզենք՝ ճ՛եզի թուրքերն ու էս քըռդեր չըսպանեն, էկէր ենք՝ ճ՛եզի ազատազ՛ըրենք, բ՛ան չըլնի»: Դէ՛, կըսա, էտ ճ՛ին տըվէք ընձի, էսա գ՛օթէցուկ խիվանդ ճ՛ին առէք ճ՛էզի: Իմ քեռին կըսա՝ «Յես իմ գ՛ըլօխսի տամ, էտ ճ՛ին չի տամ, էդի իմ ախպօր

հիշատակն ա, չեմ տա»: Էսի կըքաշեն, էտ խեխճ մառթին էնքան կըտըփեն, թօղեն դիակ գ՛էտին, ձ՛ին կառին կէթան: Գ՛էլին էս ժօղօվուռթ, էս քեռուս կըղ՛ընեն սէլի վըրէն, էսի կըխօսա, կըսա՝ «Հանգառծ չըքըշէք, էթաք խասիք, քիչ ա մացե՝ խասինք Արազին, հէսօր քանի օր անասուններ ծառավ են, կէթան կըլըցվին գ՛ետըն»: Էտ քօչէլու ժամանակ, յեփ ջ՛ըրեր գ՛էլէր, էդ վախտ էր կըսկըսին կըռիվներ, վօր իրանք էտքան պադրօն ու զէնք չօքտազօռծէն: Լըցվին ջ՛ուր, էթան: Էս մառթիկըն էկէր ին, ասում ա, խամ մառթիկ, սէլեր էկան, կըսա, ինչօր լուցկու կարօպկա լըցես էս գ՛ետըն, տանի: Էտենց, սէլեր՝ քօչէրօվ, էրէխէքօվ: Ասում ա՝ էս մերն էլ, վօր ջ՛ուր ին խըմե, առթէն հանգիստ հիճան, Մարքարա կարմունջօվ մենք հընցանք, էկանք էս Հայաստան: Էդ անասուններ հըմէն բ՛էրէցինք ըստե, մեզի աղավարի ապրանք:

Արուս Տոնոյան (Սանդրոյան), ծնվ. 1937 թ.

## Մեղրաձոր գյուղ

***

Ժուլէտի մառտի անունը Վօրօշ է: Հիրար հէտ ցաձից խօսալօվ գ՛ալում ենք: Հիրա կընօջ անունն էլ ե Ժուլէտ, իմ կընօջ անունն էլ ե Ժուլէտ: Էսի մէ հինգը կիլօ պիսօկ առե, ըսենց խանութից՝ ցաձից հըլնէլուն գ՛ալում ենք: Հասանկ ըստուց մէ հա̈րուր մետըր նէրկեվը, ասի՝ Վօրօ՛շ, բա՝ ի՛նչ ե, ասի՝ «Բ՛ե Ժուլէտները փոխենք, Ժուլէտը Ժուլէտ ե, է՛լի»: Էդի վօր ասէծի, մէ քիճ ըսենց շա̈շ էր հիշկըմ, «Յես քու տիրօչ մէրն», ու հենց էտ դըրբին դուզ… պիսօկը հընգավ կանալը: Էկավ էս կանալը պիսօկը թապավ, յես փախա…

***

Ցորենը, գ՛արին քաղըմ ին գ՛էրընդիյօվ, մեզի հավաքում ին տանում ին, փոցխ ինք անըմ, հավաքըմ ինք: Հիրանք կաբըմ ին

ջ՛օվօվ, մենկ էլ շըլգըմ ինք, տանըմ ինք ընդե: Սէլը գ՛ալըմ էր, մէ սէլը քառասուն խուռց էր, բ՛առնըմ ին, բ՛էրում ինք գ՛յուղը, տալըմ ին մալատիրկի տագը: Բ՛էրում ին լըցում ին պայեստը: Քանի աշխօր արէր ես, էն աշխօրի դ՛իմաց վառձատըրում ին:

***

Սալըխն առա, ասէծին՝ ախճըգանըդ փախծըրած են: Վո՞վ ե փախծըրե, վո՛վ չէ փախծըրե՝ էս մառթն ա փախծըրե: Գ՛ընածինք, ասինք, էրկօր հընցավ, տեղը չասէցին: Քուֆըր-քաֆըրն ըսկը-սէցինք: Վոր էտ տըղէն կազմակերպէր էր, հիրա հօրօխպօր տըղէն էր, հիմի ինվալիտ է իմ նըման, ըղօրը կըբանք, ի՛ինչ ասես քըռֆէցի: Տըվէցինք միլիցայություն, էս յան, էն յան, վեռչը շատ խօսացինք, տըղէս ջըղայնացավ, ասի՝ «Սո՛ւս, մի ջըղայնացի, պէտկը չի»… Գ՛իշերը քընած ի, էտ փախծըրօղի ախպէրըն էգավ: Էգավ, ըդե կայնավ սիգնալ տըվեց: Էգավ, բա՝ «Ապէ՛ր Սարիկ, հի՛լ վեր»: Ըսի՝ ի՞նչ է: Բա, ասավ՝ «Հի՛լ տանենք, ախճըգանըտ ցույց տամ»: Տըղէս հէլավ ջըղայնացավ, ասի՝ «Դ՛ու նըստի տեղըտ, գ՛օռծ չունես,- ասի,- դ՛ու նըստի, քօ գ՛ոռծը չէ, դ՛ու մընա»: Գ՛իշերն հէլա նըստա էդ աֆտօն, յես ու հինկը գ՛ընացինք: Դուզ ասած՝ հիմի սաղ տեղեր յերկիր ֆըռացէր եմ, էտ Կիրօվական, բ՛անի յա-ները յես չեմ գ՛ընացե, չեմ հիմանում: Քըշեց, հա քըշեց, հո՞ւր ես քըշըմ, հո՞ւր ես քըշըմ, մի օր քըշեց, վեռչը գ՛ընացինք մըդանք էդ Բօզի գ՛եղը: Մէադ էրգու հարգանի տուն էր: Հիչանք ըդե կայնանք, մէադ լավ կընիգ էր, օղօրմի հիրանը, շուղ ե մեռե վայթէ, պառավ կին էր՝ «Վա՛յ, մատաղ քի, դուրբանըտ ըլիմ,- սկըսեց աղաչէլօվ պաղաչէլօվ,- նըստի՛, մատաղ ըլիմ քեզ, նըստի՛, էս ա քընած է, թօղ առթընանա էրէխէն, կըհանէմ գա»: Ախպէ՛ր ջան, նըստանք, մի քիճ խօսացինք, վեռչացըրէցինք, բա, ասավ՝ առտէն հէլե վեր, հի՛լ: Հիլանք յերգըրօռթ հարգը: Հիլա յերգըրոռթ հարգը, գ՛ընածի, շանվոռթու թուլէն մըդէր էր կառաֆտի տագը, էտ տըղէն: Ախ-ճիգըս էլ կայնուգ էր: Ասի՝ «Մայրա՛միկ ջան, ի՞նչ կա»: Նախկան էդ, մեր գ՛յուղին մէգը կար, մէհադ ախճըգա փախծըրին տարան,

հեդ բ՛էրէցին, ու էդի մընաց, ու էդ ախճիգն էդենց մընաց: Ասի՝ «Ի՞նչ կա, ախճի՛կ ջան, ի՞նչ ես ասըմ»: «Պա՛բ,- ասավ,- վոնց էգէր եմ, ընենց էլ,- ասավ,- կամ: Հիմա,- ասավ,- ի՞նչ ես ասըմ,- ասավ,- յետէ գ՛ամ, գ՛ըլիմ էս մառտի ախճիգը, խայտառագ գ՛ըլիմ, կասեն՝ տարան պայէցին, բ՛էրին թօղէցին,- ասավ,- մի կըտոր խոդը՝ ինշվորայա,- ասավ,- յես վոր էգէր եմ, էգէր եմ»: Ասի՝ «Հալալ ըլի քեզի,- ասի,- համաձայն եմ, ախճի՛կ ջան»: Իչանք, գ՛ընացինք հառաչի հարզը: Բ՛էրէցին զավյադին - մավյադին, գ՛իշերանօվ սեղան-մեղան քըցէցին, նըստանք ըդե, մէ բուռում հաց-մաց կէրանք, բա՝ «Արէք նըստինք աֆտօն, էտանք»: Էրգու իրեք աֆտօ յէր, ընձի նըստցըրին ախճըգանըս կօխկը, խօսալօվ ըդենց էգանք: Էգանք հասանկ էս կամուրջը, ասի՝ «Կայնէկ՝ յես իջնեմ, դ՛ուք գ՛ընացէք»: Ընձի բ՛էրին ըստե իջըցըրին, իիրանք հէլան գ՛ընածին իիրանց տունը: Վեռչը, մի քանի վախտ մընած, արին հառսանիկ, նոր մեր բ՛արէգամնէրօվ հավկըվանք, գ՛ընածինք, կէրանք խըմէծինք, բա՛րիշանք…

***

Հիրանց տունը շադ մեձ, բ՛առցըր կուբա ծաձգ էր: Սըրանը մէ հադ տաղի ուներ՝ հօր հօրօխպօր կընիգը, անունը Սալամ էր, ամբօղջ ռայօնօվ մէգ դըռըցընըմ էր: Սեվ շոր էր հակնըմ, բօյէբօյ, լըռիվ ըսենց ճագադը պօլի վոսկի, հիրա ախպէրը տէրդէր էր, յեսիմ վոր յէրգըրնէրին հավքուզ էր: Ըդուց ըսենց դըռդըռում ինք, վախէնում ինք, շադ ինք վախէնըմ: Էդի վոր տարէր են, ռիսկ չինք անում էտէր ինք ըտե: Մէ օր ասի՝ «Մայրի՛կ, համէկիս մէ հադ փեռթ տուր, ինշ գ՛իլի», ըստու հօրօխպօր տըղէն էլ էր: Ասավ՝ չեմ տա: Ասի՝ բա լավ, բա ի՞նչ անենք: Դ՛ըրանց կուբէն էլ շատ բ՛առցըր էր, ասավ՝ «Էրգըսիցըտ օվ վոր մէգը հըլի վէրեվ, կ՛ուբէն (մուտըն էր, գ՛իշեր ժամը տասըն էր, է՛լի), օվ վոր հըլի վէրեվ, յեռտիկից գ՛ըլօխը կախէ, հիշնի իշի նըման զըռա,- ասավ,- հէնց հիշնէլուն խետ յես վոսկի յեմ տալում»: Յես ու ըստու խօրօխպօր տըղէն հէլանկ վազէվազ: Հէլանկ, յես ապալ-թապալ գ՛ըլօխըս կախի ու

զըռացի… Հիձա, հիձա ցաձ, բ՛էրեց մէ հատ փեռթ տըվեց: Հըլը էտ փեռթը մընո՞ւմ է, չեմ գինում… Էտ փեռտը տըվեց, բ՛էրի տըվի հառսիս: Ասի՝ «Ա՛ռ, էսի ընենց հիշատագ է, վոր…»:

Սարիբեկ Մանասյան, ծնվ. 1937 թ.

***

Կիսուրիս կիսուրի հէտ եմ ապրե, քըմըրը տըվէց ընձի, հետօ կըռվավ, ձ՛եռիցըս առավ... Ըստու դըռըից մեռավ, ուրեմ յես պըդի էթէր ի, վոր հինքը մընէ՞ր, էդ էր հիրա կյանքն ու ումբըրը: Յես ընդու յաշին գ՛ըլնե՞մ…Իրա պատմէլօվ՝ ինքը գ՛ընացե Բօզի գ՛եղ, շըլգօվ սըռը տըված կառտօշկա բ՛էրե, էրէխա յե պահե… Հիմի յես քէլում եմ՝ կազի նըման գ՛ըլօխըս հիձնում գ՛էտին… Տէքօրըս կընիկն հըռուս էր: Կառտօլ ինք քանդըմ, կիսուրիս կիսուրը գ՛ընաց, էն էլ հիրա հօր տունն էր, էն ժամանակ պատ չըկար, ժէշտ էր: Լարիսն ասավ՝ «էզէք, աբրանք եմ բ՛էրե, առէք»: Մէզ էլ էս տէքօրըս կընիզը ասավ՝ «էրմի՛են, արի էտանք տէսնանկ Լառիսն ինձ է պէրե»: Ասի՝ «Շըհըն տատին թօ էտա հօր տունը, մի քիչ մընա, նոր»: Շըհըն տատին հընծավ հօր տունը, լը վոտներըս չըքըցինք պաղից էս յան, մէկէլ ժէշտից հէլավ՝ «Էդ դո՞ր էք էթում»: Պաղի վըրէն չործանք: Հըռըսին ասի՝ «Քօ կյանկը թաղեմ, է՞ս իր ուզում, հիրգունը կա-չըկա՝ մենք տըփըսվանք»…

***

Էդի հէլավ Սըֆըրենց Զօրօյը… Փօքըր-մօքըր կօվ էր իմ կօվը, չըփիկ էր ծընե: Հիմի հանըմ եմ, ասի՝ «Զօրօ՛, էն յան՝ չընզնի կանալը»: Մէզ էլ էսենց արավ՝ «Վա՛խ, էդ էլ կօ՞վ էր, վոր հընզընէր կանալը, հըլը՝ էդ էլ է կօվ, էս է՞լ է կօվ»: Ասի, մէ հաղ էդ կոռին հարէվանի տըղա յէր կայնուզ, ասի՝ «Մանվէ՛լ, հազար անկամ նէրօղուտյուն, Մանվէլն էլ է տըղամառտ, դ՛ու է՞լ ես տըղամառտ»:

Մէզ էլ էս Մանվէլն ասավ՝ «Ապռես, Հէրմի՛ն ջան, էլ բ՛ան չունեմ ասէլու, կօվը թող, յես կըքըշեմ…»:

Հերմինե Մանասյան, ծնվ. 1981 թ.

***

Էս մեր հարէվանին ունէր մէ հաղ լավ սիրուն ախճիզ՝ անունը Մարէտ: Վոչ հօրն էր քաշե, վոճ էլ մօրն էր քաշե: Էսի մէ հաղ լավ, ուզաձիղ նըման շուստըրի քուր ունէր: Մէ հաղ ազգ կար՝ Ճըլիզենց ազգը, վոր հա՛շկ ին ղ՛ըրաձ էս ախճըկանը: Էս քուրը մէ հաղ մաննիկի հըմար էղ փէսին (դէ հինքն էլ էրէխա յէ հէլե, առտէն էնի յօտ ուտերօռտ դասարանն է հէլե) ասե՝ «Նօ՛ր ջան, քօ գ՛ոռձը չէ, ընձի մէ հատ մաննիք կըտաս, յես կըդըզիմ, Մարէտին կըտանես ղ՛ու»: Էս Մարէտն էլ մէամիտ, դէ փօխվէր էր տասյերօռտ առտէն: Մէ հաղ լավ աշխարագրության ղ՛ասատու ունէինք, ղ՛ասից հէդօ յես ու էղ աշխարագրուտյան ղ՛ասատուն միջանցքում կայնուկ ինք… Բ՛այց յես չի իմանըմ, էղ վախտ էղ Ճըլէզենց ազգուտյունը չըգիդեմ քանի հաղ աֆտօ ունէր, էտ աֆտօները կէսը քըրօչ տան հետեվն էր ին, կէսը էն ժամանակվա գ՛ոմերներն ին: Պախկըվէր ին էղ գ՛ոմերների կըրըշնէրին: Ցերզըրօռտ հարզին կանզնաձ ինք, մէկէլ տէսնամ՝ էղ մի «ժիգուլին» էսենց էկավ, ու էտ խեխճ Մարէտին վօր բ՛ըռնէծին մէշկից, դէ էրէխա ախճիզ է, էն կըրըշնէրիծ թապան, էն կողմէրից թապան, ըսենց աչ ու ձ՛ախ, խեխճ ախճիզը չօկավ էղ բ՛անի՝ աֆտօյ մողը: Կընէրէք հարուր անկամ, վօր բ՛ըռթէծին, էս յուպկէն հէլավ շըռճըրվավ, բ՛ըռթէցին, կօխըռճէծին ըղըրանը աֆտօյ մէչն ու… էտ ի՛նչ թօզ ու դուման… Մենք՝ վա՛յ, վա՛յ, վոճ էն է՝ մեզի յերզըրօռթ հարզիծ քըցենք, վոճ էն է՝ չեմ իմանում… Էս քուրը մէշկը խըպեց սէտկին, ու տարան քըվորը… Կըռիվն ըսկըսվա՛վ, գ՛ընաց կըռիվը… Ստըրան փախծըրին տարան Կիրօվական: Տարան Կիրօվական, մէ քանի օր… Ախճիզը չէր ուզըմ տըղին: Տըղէն մէ քիչ կօլօտիզ էր, բ՛այց շատ լավ տըղա յէր: Աիակին վախտ ըստուն ապէր Սարիկը է՛լ քըֆուր, է՛լ մեռել, էլ չըգիդեմ ինչ՝

լըռիվ հանեց փըռեց արևվի հէրես, քանի ամիս էլ խըռօվ մընածին, վեռճում էլ բարիշան: Հիմա ամէնաշաղն էդ փէսին է սիրըմ:

Անահիտ Խաչատրյան, ծնվ. 1963 թ.

## Ջրառատ (Հրազդան քաղաքի թաղամաս)

***

Ի՞մալ մառթի կացի… Ընձի շատ ուզօղներ կին: Յես էլ կընացէր եմ թութուն քաղէլու, դաշտը, կացէր եմ՝ քաղեմ, վոր տանենք շարենքʲ: Էկա հիրիկուն, մեյ չինքʲ ասե՝ մամա՛, Շուշա՛ն կասիմ, մօրըս անուն կուտի: Ասեց՝ «Ախճի՛, էտա Թաթօյ տըներն էկած են քեզի…»: Ասի՝ «Յես չեմ առնե, ընչե՞ս ընձի տըվե էտ տըղին, էտ մառթին ընչե՞ս տըվե, չեմ ուզե»: «Ախճի՛,- ասեց,- ամօթ ա, էկած են, ուզած են, ի՞մալ յես չիտամ, կըլնեմ յես խայտառակ»: Ասի՝ «Ա՛յ կընիկ, թօ ընձէլ խառցընիր, ի՞նչ կըլի, մէ պէրան էլ ընձի խառցընիր, ասիր՝ ախճի կուզե՞ս, թէ…»: Վեռչ, էտենց ընձի ուզին: Ի՞նչ խառնիս… Թունդըրա շիշ կըզանին ցանի մէչ, ցանի վըրէն նավթ կըլըցին, կըվառին, պըռնին, վո՛նչ նաղարա, վո՛նչ զուռնա… Վորըն ուժ ունէր՝ նաղարա զուռնա կըզանէր, վորըն ուժ չունէր՝ նաղարա զուռնա չէր զանե: Մէ խատ ծեր կիսուր ունիմ, խիվանդ էր, մէկէլ էս մառթըս:

***

Յես զավօղըն կաշխատինք, վոր զավօղըն փազվավ, ընդուց անասուն ի պախինք: Յեռըսուն տարի սարերն եմ ֆըռացե, անասուն եմ պախե... Քօլիկ էր, քարօվ շարուկ քօլիկ էր... Տուն կուկʲամ. ժամի չոռսին հէլէր եմ վեր, անասուններին ճամփէր եմ, ինչ վոր կար՝ քօլկից վէրցըրէր եմ, պըտի կʲամ կյուղ: Էկամ, մեյ կասեյ Սուրիկի հախպուր կասենքʲ, հընցէր ենքʲ Կասումի գյօլ: Կասումի գյօլ, ըտե մառթ ա մեռե, սէլօվ շըռճըվե, մեռե, էտ Կասումի գյօլից մէ քիչ էսենց պավառօտ տըվիմ, առթէն վո՛չ ըտե

տավար կա, վո՛չ վոխչար կա, վոր ասեմ՝ խա, վոխչարն էկե լըցվե ըտե, կամ տավար կա… Առավոտ շուտ: Տէնամ՝ այ էս չափսի… Ա՛յ մառթ, ասի, էսի շո՞ւն ա, թէ՞ կէլ ա: Իմ տէմն էլե: Լէզուն էսքան թըլուկ տուս: Ա՛յ մառթ, ասի, էս շունըն էս վախտ հընչի՞ էկե ըստե: Պըտի վոխչար ըլնի, անասունն ըլնի՝ էտի ուտի, էս ընչի՞ էկե: Վախէցա յես, տըղէրք ջան: Ասի՝ տէ՛ր Աստըված, յեթէ իմ օրն ա, թօ կէլն ընձի ուտի, յեթէ իմ օր չի՝ փըռոթընեմ էս կէլից: Մէ անքամից էսենց պուպուզա ու կօռացի: Վոր կօռացի, էտ կէլ նայեց ընձի, մէկէլ ի՛նչ փախնել փախավ, էլ ասէլու չի… Ընդուց էկա, խասա Թայչարօխ, վօսկու հանքըն ըտե կաշխատէր: Կընացէր եմ, նըստէր եմ էտ վօսկու հանքի աֆտօբուզը, էկէր եմ խասէր եմ մեր էս կարմընջի անզաճը, Ռընդամալա կարմընջի: Էկէր եմ տունըն: Մըկա էկէր եմ, էսենց վախից կըլըփըլըփամ: Էս իմ մառթըն ասեց՝ «Հընչի՞ էտենց կանես, ախճի՛»: Ասի՝ «Վախէցէր եմ, կէլ հէլավ տէմըս»: Մըկա, պըռծէր եմ ամէն ինչից, կուզեմ էթամ ՝ վախէնամ: Կասեմ՝ հանգառծակի նորից չիկʲա տէմըս: Ի՞մալ անեմ: Մի կերպ, մի կերպ էտ Սուրիկի հախպըրի մօտից, էտ կէլըն վորդե կայնուկ էր, ըտեղից մի կերպ վազա, տէնամ՝ Սէրօժըն սարի կըլօխն ա: Բ՛օռացի, արի՝ «Նա՜մույ Սէրո՛ժ», ասեց՝ «Էն ի՞նչ ա, Ռօ՛զ»: Ասի՝ «Կէլն ըտերա՞յն ա, կէլն իմ տէմն առե»: Բա՝ «Արի՛, արի՛, չէ՛, կէլին զա՜նէր եյ, կացե, չըկա»: Հիճէր եմ, էկէր եմ իմ տուն՝ քօլիկ:

***

Էն ինչն ա, էն ինչ՝  
Կէթա կիկʲա,  
Աղէյ փորին  
Պարեվ կուտա (ձձում)

Ռոզա Այվազյան, ծնվ. 1932 թ.

## Սոլակ գյուղ

***

Ըսկըզըբից յես սիրած տըղա ունէնի. բ՛անակն էր: Գ՛ընացին ասին, վոր ախչիկնէրուն ուզօղ կա: «Նըշանաբ՛ան տու,- տըղի մօրըն ասին,- դ՛ընենք նըշան, մինչեվ գ՛ա հինքըն բ՛անակից»: Մէրն ասեց՝ «Հինքըն գ՛էշ ա, յես չուզեմ իմ տըղին, խօրօտ ախչիկ կուզեմ իմ տըղին»: Յես էդ նույն օրըն ասի՝ հէսօր վորը վոր գ՛ա ընձի ուզէլու, յես կառիմ... Վոր յես գ՛էշ եմ՝ գ՛էշ եմ, կէթամ գ՛էշ տըղա կառիմ, թօ ձ՛եր տըղէն գ՛ա, խօրօտ ախճիկ առի: Ընձի չըխանգարա: Իմ մէ թա՛շկինակ չըկա մօտըն, վոր գ՛ա նըշանց տա, ասի՝ էս թա՛շկինակը էս ախճըկա թա՛շկինակն ա: Յես կէթամ, լավ ու վատ՝ կէթամ իմ բա՛խտին կաբրիմ: Էտ օրը ընձի էստոնք էկան ուզէլու: Հակառակի նըման, ցավըտ տանիմ, էտ ջըղայնացուկ վախտ: Յեթէ մէ օր մընէր, չի գ՛ի: Բայց նույն օր, հէնց էտ նույն օր էկան ընձի ուզէլու: Յես էս տըղի նըշան վէրցի... էս էլ՝ մէրըն մեռուկ, հիրանք տաս էրէխա, մէ ախճիկն էր ամուսնացած, վեց ախճիկ, իրեք տըղա՝ տուն: Ինըն էրէխա, իմ կէսրէր՝ տաս: Յես էլ վոր էկա, վոր ընձի նըշանին, ասի՝ յես չըկանամ խաց թըխեմ… Ասի՝ գ՛օնէ էտ իմ կիսուրըն խաց կըթըխա, յես էլ տան գ՛ոռծ կէնեմ, բ՛այց էտքան նա՛ֆա՛րի խաց յես վո՞նց թըխեմ: Իմ մառթուն ասի՝ «Արարատ, գ՛ընա քօ խօրն ասա, թօ՝ մէ հատ կընիկ կա, էրէխա չըբ՛եր կընիկ, ինքըն էրէխա չունէցեր ա, էտի թօ գ՛ա մեզի խաց թըխա, մենք էլ աշխատինք, աբրինք հիրար խէտ»: Իմ կէսրէրին գ՛ըկա կասա, իմ կէսրէր գ՛ամաձայնըվի, կասա՝ «Լավ բ՛ան ասե խառսըն, էն էլ իմ ախչիկնէրու նըման ախչիկ ա»: Հիր ախչիկներն իմ թայն ին հըմէն. մէկ յեռսուն թիվն էր, մէկ յեռսունէրկու թիվն էր, փոքըրըն՝ մէ տարէկան: Վոնց վոր իմ էրէխէն, գ՛ալու օրվընից իմ գ՛իրկ դ՛ըրի մեծացուցի, մինչեվ մէծացավ: Էտոր խամար էտ կընգան էլ բ՛էրէցինք, եղանք տասնէրկու նաֆար: Տասնէրկու նաֆարի մէչ դէ ապրի ու արի եղի ութանասունյօթ տարէկան…

***

Սարից էկէր եմ յես, լավ վօչխարի միս եմ բ՛էրե, ամէն ինչ: Ճաշն էփի, կէրանք, նըստանք, խօսացինք, ուրխըցավ իմ կիսուրը: «Վայ,- ասեց,- Փօփօ՛լ ջան, ինչ լավ ա էկար, խասար տուն, յես մինձ՛կ չըկանի կօ էս տուն յօլա տանի»: Ասի՝ «Բան չըկա, աղէ՛ (աղէ կասինք մենք, էղ վախտ աղէ յա եղե, մեր մօտ աղէ յա եղե կիսուրնէրուն),- ասի,- պձ՛ն չըկա, յես էկէր եմ, դ՛ու արխային մաց»: Խաց կէրավ պըռծավ, բա՝ «Մէ մէշօք շիշ եմ հավաքե, տանիմ տամ Ախտա, հէսա գ՛ըկամ»: Ասի՝ «Տար տուր, աղէ»: Էտի կըծախէր, ուր ձ՛եռի խէտ տեղ էթալուց փող կեղեր մօտ: Էն վախտ ընդու թօշակըն չոռս մանէթ էր, էտ չոռս մայէթը յես կըստանի, կըկապի լայլըղի ճօթ, դոր վոր էթէր՝ գ՛ըքէր, կասի՝ «Ա՛ռ, աղէ, էսի քօ փողն ա»: «Ա՛յ բալա ջան, հընչի՞ չես ծախսե»: «Տօ,- կասի,- ա՛յ մէր, դ՛ու տեղ կէթաս, հընչի՞ գ՛աս մեզնից փող ուզես, քու ջէբ թօ փող եղի: Դ՛ու վորտեղ կէթաս, գ՛ընա»: Էտ օր էկավ, ասեց՝ Փօփօ՛լ, ասի՝ «Ի՛նչ ա, աղէ՛ ջան, ի՞նչ կասես»: Յես շատ կուզի հիրան, իմ էրէխէքին պախէր էր, յես աշխատէր ի, իմ վեց էրէխէն հինքըն կըպախէր, յես կաշխատի: Ասեց՝ «Յես կէթամ մառթու»: Իմ տըղէն էլ բ՛անակն ա, մեծ տըղէս: Համարյա թէ մէ հիցուն-հիցունխինգ տարէկան հազիվ էլ եղի էտ վախտ: Էմալ ուրխըցա: Ասի՝ խառս ուզեմ, վիր դուռ էթամ՝ չի տան, կասեն՝ էրկու կիսուրոչ, էրկու կիսուր հիրար խէտ՝ մենք խառս տանք, ի՞նչ էնա: Կայնի հավէլի լավ ա, թօ էսի էթա մառթու, յես կըմընամ մինձ՛կ, կէթամ իմ տըղին կըպըսակեմ՝ բ՛անակից վոր գ՛ա: «Աղէ՛,- ասի,- վոր սիռտըս ուզիր, կըխանի կըտի քեզի, բայց վոր մառթ կուզես, յես, մառթ չըկա, վո՞րդուց մառթ տամ քեզի»... Քաղաք գ՛ընձ՛ց: Մեր գ՛եղացի յէր: Էտ առնօղ մառթու անունն էլ ձ՛զիզ էր: Էրկու տարի սաղ մընաց: Էրկու տարի յետօ մեռավ: Խոռթ խառսներըն զձ՛նին աշկ խանին, դ՛եղին, մեռըցուցին էտ կընգան: Ընենց մեխկըս էկավ, վոր լըսի: Հարէվներ կըսօվըռցուցին, կասին՝ «Վոր դ՛ու մընաս էստեղ, վոր

դ՛ու մեռնես, քե չըխօրեն»: «Աղէ՛, քյե դ՛ընենք՝ խո՞տ քա՛շենք քօ մօտից, կըխորենք քեզի անպայման, դ՛ու դո՞ր ա կասես, վոր յես մեռիմ, ընձի չըխօրեն, կըխօրենք, աղէ՛ ջան»: «Չէ, բալա՛ ջան, յես կէթամ մառթու»: «Աղէ՛, քե հաջօղություն»: Ասի՝ «Ինչ կուզես՝ վէրցա տընից, ինչ աշկըդ կըկըդրա, ինչ կա իմ տուն, դ՛ու քօ փայը վէրցա, գ՛ընա»: Իմ կէսրէրի տեղաշոր, վոր հինք քընէր էր մէչը, էտ տեղաշորըն, մէ չամադան շոր, մէ խատ կուշէտկա, հըմէն տըվի, ասի՝ տար: Վեռչը, էտի վոր գ՛ընաց պըռծավ, տըղէս էտ ձ՛ըմեռ էկավ բ՛անակից: Հինք վոր նոր էր էկե, խաց-մաց կէրան, ուրախություն էրինք, քէֆ էրինք էս մեծ տընօվ մէկ: Մէ հատ լավ ցուլիկ մօռթի էդ վախտ, վոր տըղէս բ՛անակից էկավ: Դէ լավ ունէվոր ինք էդ վախտ. կօվ ունինք, վոչխար ունինք, խավ ունինք, խոզ ունինք, հիմա մէ խավ էլ չըկա, վոր մէ ձ՛ու ածա, յես վէրցեմ օգտագօրծեմ, տըղա՛ ջան: Դէ, չըկանամ պախեմ, յեթէ կանի պախի, լիքն ա խավ, կառնի կըպախի, բ՛այց չըկանամ: Յես իմ տըղին ասի՝ «Տըղա՛ ջան, բա յե՞փ կըպըսակվիս»: Վանուշ ա տըղիս անուն, ասեց՝ «Մամա՛, էրկու տարի յետօ»: «Վա՛յ,- ասի,- յես քու ցավը տանեմ, էրկու տարի յես քօ նըշանի հըմէն բ՛աներ կառիմ: Վօսկէղէն կառիմ,- ասի,- մէ մէդալյօն եմ առե հըլը: Հազիվ եմ կարացե էդ մի մէդալյօնն առե, էդուց յետօ յես քօ հըմէն ինչ կառիմ քօ նըշանին»: Գ՛ընաց էտ ախճըկա խետ մառթհամար գ՛ըրեց, տէնամ՝ էկե տէքորըս խէտ կըխօսա, յես հանգաձ կէնեմ: «Հօպա՛ր, մամայ ասի՝ է՛րկու տարի յետօ կըպըսակվիմ, բայց էտ իմ սիրած ախճըկան ուզօղ կա»: Ասի՝ «Արխային մըկա պըսակվի, տըղա՛ ջան, յես չըվախէնամ,- ասի:- Պառտք կէնեմ, կըվէրցեմ, կաշխատիմ, կըփակեմ, խօ չեմ թօղի անպըսակվել, մըկա պըսակ-վի»: Էտ ախճիկ քաղաք կաբրէր մօր խետ, մէկուճա՛ր մէկ ախճիկ էր: Դ՛ու բ՛ե, վոր մենք կէթանք ուզընզան, էտ ախճըկան ուր հէրական տատիկն էր պախե, մէրըն բ՛աժանվէր էր, խետըն բ՛էրէր էր քաղաք՝ ապրին: Էտ վոր կէթինք մենք ուզէլու, էտեղ իրեք անքամ գ՛ացինք Հէրէվան, իրեք անքամ՝ գ՛եդ: Կասէր՝ գ՛ացէք իմ ախպօրից ուզէք, իմ մօրից ուզէք, էնոնք ա պախած... Գ՛ըքինք

էստեղ, էսի կասէր՝ գ՛ացէք ուր մօրից ուզէք: Մեծ ախճիկըս ասեց՝ «Ա՛յ տըղա, վոր դ՛ու կըպըսակվիս, իմ խէրը մէր քօ գ՛յէրի՞ն են, էս էլ քանի անքամ էթան Հէրէվան, դ՛առնան գ՛ան Սօլակ, դ՛ու վիր կուզես, էն արա»: «Չէ, յես էտոր կառիմ»: Դ’ասի, «Վոր կուզես, գ՛ընա փախցու բ՛ե»: Էտ օր գ՛ընաց, վոր փախցուցէր: Ցես էլ, դը իմ խմյսմթ կըդըրվի, յես պարապ չըմընի: Փօխինդ ի էրե, տարէր ի ծախէր ի, ինչ մացէր էր, դ՛ըրէր ի պաեստ, Հէրէվանա պաեստ դ՛ըրէր ի, վոր հառավոտ էթի ծախի: Լը էնի էն տեղն ա: Էլ վոչ գ՛ացի ըտե, վոչ էլ: Կիրմկի գ՛ընաց, էտ ախճիկը անկընունք էր, կիրմկի էտոր կըկընքին: Էտ խառսիս վոր կընքին պըռծան, էրկուշափթէ գ՛ընաց փախցուց բ՛էրեց տըղէս: Տըղէս վոր փախցուց բ՛էրեց, էլ փօխի՞նդ աշկըս գ՛ըկէր, վոշ գ՛ացի փօխընդի հէտեվ, վոչ էլ…

***

Մըխու գ՛ըլխուն գյօմփօվ զմնել չեղի:

Վոչ խառսի ումուդի յեմ, վոչ փէսի ումուդի յեմ, յես ընձի կըպախեմ, դ՛ըրա համար լավ եմ:

Լավ տըներ ունի, վոր մըտիս՝ բ՛արեվըտ կըմօռնաս, ասսուն հմզմր բ՛էրան փարք:

Փոփոլ Դանիելյան, ծնվ. 1930 թ.

## Վանատուր (Հրազդան քաղաքի թաղամաս)

***

Էս մեր կեղացիք հէլէր են լավ ֆայտոնչիք ժամանակին: Կօլօտ Հայրապետ կըկյմ մեր կեղ, կիաֆքի ինշքան ֆայտոնչիյ կան, կասի՝ «Տըղէ՛րք, յես Հէրէվան շմքյմր եմ պէրե:- Էս ծըմեռվա կէս՝ փէտըրվար ամսին կըլնի:- Պըտի էթայ Հէրէվանից էտ շմքյմր պմռցեյ պէրեյ»: Ծըմեռվա կէս, կըլնեն… էտ ֆայտոնչիքի կըլխա-

վորն էլ կըլնի Բընօյ Զöքօն: Քառսուն հօքի ֆայտոներ լըծեն, կըլնեն կէթան կայարան: Շöքյöր պառցեն, էն ժամանակ, էն վախտեր ճöմփէն հէլեր ա թաքավորական ճöմփա՝ էն մալականի տըկօվ, ճöմփէն, է՛լի: Էտ թըվէրին ըտեյրանք էր, Սուխօյ Ֆան-տանօվ կըկյէր, ասենք, սարի տըկօվ կէթէր, ըտեղօվ ծօվի վըրօվ կըհընցնէր, կէթէր Նոր Բայազէտ՝ Քöվöռ: Վեռչըն, կէթան շöքյöր կպöռցեն: Ֆöյրöդն էլ կասի՝ «Յես, ընձի գյուլլես, մըկա չեմ էթա: Ա՛յ մառթ, էս կիշերվա կէսին, ծըմեռ ա…»: էն ժամանակ էլ, ասենք, պöնէրին, էտ ծիյանքի մըռթըներից էն լամփէրից ա կախուկ հէլե, է՛լի: Էտենց, վեռչըն, գ՛ըլնի պöռցա, կասա՝ «Յես պըտի էթամ»: Գ՛ընգըներ սաղ քյամկից, գ՛ըլնեն կէթան, կըխասնեն Քյöվöռ լուսուտեմ: Էտ Կօլօտ Հայրապետ կըլնի, կասի՝ «Ա՛յ տըղէրք, տուք ի՞մöլ էք էկե խասե ըստե»: Կասի՝ «Էկէր եյ»: Վեռչում էլ էտ Մըխիթöրի Հօվակի սանկէն, ծօվօվ վոր քըննեն, կիժնի ճըրի մէչ, քöշեն խանեն՝ սա՛աղ շöքյöր կըթըռճըվի: Էս Կօլօտ Հայրապետ վոր տէնա՝ սաղ շöքյöր պէրած խասցըրած, լըսի՝ մէ ֆուրղունն էլ թըռճըվե, կասի՝ «Էս էլ խալալ ա, տարեյ ծեզի»: Տանեն, էրկօր յետօ Ֆöյրöդ կըլնի կըկյö, կասի՝ «Բը իմ շöքյöրն ո՞ւր ա»: «Գյö,- կասի,- մեյ քեզի կանչիյ, տու մեր խէտ չէկար, էլ էս հընչե՞ս կըպե մեզի՝ շöքյöր կուզես»:

***

Մեր կեղացի հէլե Թումօյ Բալիկ: Շատ մöզöլու մառթ էր, է՛լի: Ըտոյ, ասենք, բօյօվ մառթ էր, ասենք: Պöնէրի ժամանակ կար կաչաղներ ըստե: Ըտոյ անտառներ կաբրին, հիմնական էտ Թայչարուխա անտառներն ին կաբրին: Ըտոյ կիժնին, կեղրանքից իրանց ալան-թալան կառնին, կէթին: Ուրեմըն, կըկյöն, էտի ցօրնի պայեստնէրի վըրէն պահակ կայնուկ կըլնի: Կըկյöն կասեն՝

«Բալի՛կ ջան, պըտի պճցես, ցորեն տանեյ, չէ՝ կըսպանեյ քեզի»: «Տըղէ՛յ,- կասի,- վոր պացեմ, մէ էրկու մէշօք էլ մեր տուն կըտանէ՞քյ»: «Է՛,- կասի,- վո՞ր շանվոռթին չըտանի, պճցես տաս մեզի՝ մեյ չե՞յ տանի»: Վեռչ, ցօրեն կըպճցի, պճռցեն կէթան, կասի՝ «Դո՞ր ա կէթայ, կայնէք, ա՛յ մառթ, մէշօյ խայցըրէք կըլխիս, էրկու խատ էլ տըվէք քիթ մըռթիս, տըփէք ըստեն... էտենց կյճցիք,- կասի,- առավոտ շուտ կըկյճն, ընձի պըռնեն դ՛ճտեն»: Վեռչ, կըկյճն տէնան՝ Բալիկի թեվեր կապուկ, մէշօյն էլ կըլխին խայցուկ, հընգյուկ ա ըտե: Գ՛առցըկեն, կասի՝ «Ցես չըտէսա, մէշօք խայցըրին կըլխիս, ընձէլ քըցին ըստե»: Կիշկան տէնան՝ ճճռթուկ չի, կօղպէս պճց ա, կասեն՝ «Բալի՛կ, էսի տու յես արե»: Կասի՝ «Չէ, ամօթ է՛ն մառթին, վոր յես արէր եմ»: Շունըն պէրեն ֆըռֆըռցընեն, կըկյճ ըտու շընէլի փէշից քյճշի: Շընէլի փէշից քյճշի... Վեռչ դճտ կըլնի, դճտճվոր կասի՝ «Բալի՛կ, քյու վեռչի խօսքն ի՞նչ ա»: Կասի՝ «Դճտճվոր ջան, տու կըռթըվուկ մառթ ես, յես անգըրագետ մառթ եմ, յեթէ քյու խելք տըրէր ես էս շանն, ընձի դճտես՝ դճտի»:

Մանվել Ռաֆայելյան, ծնվ. 1958 թ.

***

Ի՞մալ պըսագվամ՝ սիրիմ, առամ... Խառնըսօվ պըսագվէր եմ... Ցես կըկյըռտընկիմ, կիսուրը կըթըխէր... Խացատուն ճօչ թէշտ կար, փէտից էլ կար, հառէչ ալուր կըմաղի, աղըն կըքըցի, թըխտըմոր... Ճօչ խացատուն էր: Մառթըս տախտակնէրօվ սարքէր էր, շորեր կըփըռինք, կյունդըն կանի, ու կըսկըսինքյ խացըն թըխել: Չէ՛, մըկավա նըման՝ վազնեյ խանութ, էսակըդճ առնեյ պէրեյ, չեյ կըշտընայ էլ, էտի խա՞ց ա, թէ ինչ ա: Բօքներ կըթըխիմ, ճըմուռ կըսարքիմ, ճճրէ բօքոն՝ ճճրէ ալուրօվ: Մըկա յէլ կըցանեյ...

Կին, ծնվ. 1937 թ.

## Քաղսի գյուղ

***

Մակուից էկած ենք, մեր գ՛եղին մէ հօքյի է, վոր Թուրքիայից ա էգե, հընց մէ հօքյի, թէ չէ մընացաձը բ՛օլօրը մէ տեղից են էգե: Վոր էգէր են ըստեղ, ման են էկե, էս Զանգույի կըշտին մէ քանի չադըրօվ ծասկըռտըվէր են, մընացէր են: Տէսէր են, վոր ջ՛ուր կա, հարմար ե, կարան յօլա էթան, ըտենց բ՛ընակըռէր են, ձ՛ուզ էլ ա հէլե: Զանգուին բ՛ան կար՝ բախտակ կար, կօղակ կար: Իրեք տըղա ունէցէր եմ, մէ տըղէս մէզից հավէլի լավն են: Հէսօր մեր տավարի հեռթըն ե, տըղէս տարէր է արաացընէլու, մէ իրեք հատ կօվ ունենք: Հառէճ հավէլի շատ ունինք, փոխէցինք, ծախծըխինք, մոռթինք գ՛ընաց: Ցամքիր են, յեղանազը շադ վադ էր, ցամքան:

***

Մէ օր էգան, դը տըվին... Քանց էտ հընդիկնէրին, փոքըր ի, մեծ չի: Չասին՝ էտի կէթա՝ անկիսուր վո՞նց յօլա կէթա. թունդիր էր, հաց թըխել էր, յես էլ՝ տասյօթ տարէգան էրէխա: Հէն է՝ թօ բիձէն ասի, հինքը մէ քիչ մեծ էր ընձընից: Էս մեր հարէվանի պառավը գ՛ալում էր, թըխում էր, շադ մոդիզ ին հէլե կիսուրիս հէդ: Ըդենց էգավ սհակյին վախտ էդ մեր հացը թըխեց: Ընձի ասում էր՝ «Բավակա՛ն ջան, յես չեմ թոդի՝ քօ հüշկէրի սուրմէն փըչանա, յես քանի սաղ եմ, կըթըխեմ, քյեզի կօքնեմ»: Ցես հիրա գ՛ըռնակն ի անըմ, հինքըն էլ իմ հացըն էր թըխըմ: Ըդենց մընաց, մէ վախտից յետ, մէ յüքյü թէշտ խըմոր եմ արե: Դ՛ու մի ասա, էդ պառավը գ՛ընացե, հիրանց ասկությունից մէզը մեռէր ե, գ՛ացե ըտոնց տունը, մենք խաբար չենք: Հառավոտն հէլա գ՛ընդէցի, Սեդային ասի՝ «Սէդա՛ ջան,- փօքըր տալիս,- գ՛ընա մօրքուրին ասա՝ թօ գ՛ա, թունդիրը քաշվում ե»: Գ՛ընաց էգավ, ասավ՝ «Հարսէ՛ ջան /ընձի հարսէ յին ասում/, հարսէ ջան,- ասավ,- թունդիրը քաշվի չըքաշվի, մօրքուրը գ՛ընացիր ա թաղում, գ՛ացե մեռել լօղցընէլու»: Ցես մընացի շիվար. օրը բիթուն յես հա՞ց եմ թըխե: Հիմի մէ հադ էլ,

ահակ՚ին մեծ էր, է՛լի, կէսրարըս, էգե կայնե թունդըրա գ՛ըլխին, ասում ե՝ «Բավազան ջան, թըխի»: Է՛, Բավազանը վո՞րդեղից թըխի: Վէրցում եմ, ընենց լավ քըցում եմ, դափի վըրէն հացը, բ՛այց զարգում եմ թունդըրա պադը, հանել չեմ կանում թունդըրից: Էրվըմ ե ձ՛առներըս, հացը ճըղճըղվըմ, լըցվըմ թունդիրը: Մէ յաք՚ա ըսենց կօլօն հացի փըշրանք հանի կօլօնէցի: Հայրիկը բա՝ «Բ՛ան չըկա, Բավազան ջան, էդի յես կուդեմ»: Վեռչը, ըտենց մէ կ՚երպ թըխէցի պըռձա ու հիվանդացա: Շըփանց ինք ասում մենք՝ էն վոր գ՛ըլօխնէր ցավում ե, ուզար էլ են ասըմ, շըպանց հէլա ու պարզա: Մէ հաղ լավ տէքըր ունի, էդի ընձի տէր էր կայնում յանի: Մէ յանից սիռդ ի հէտ տալում, գ՛ըլօխըս ցավում էր, մէ յանից էսի՝ «Բ՛ան չըկա, հարսէ՛ ջան, հէսա գ՛ընցընի, հէսա գ՛ընցընի»: Բ՛այց ի՞նչ. մինչեվ հընցավ, հացը պըռձավ…

***

Հառավոտն հէլէր եմ ժամի հինգ անց կէսին: Հըլնում եմ վեր, էթում եմ գ՛ոմը: Խոզեր ունենք, խոզի ձ՛աք՚եր ունենք, կօվ ունենք: Վոխչըրին եմ ճամփըմ համէնա հառէչ, սուրու տանում են: Մըդնում եմ գ՛ոմը, ըղերանք մաքրում եմ, վեռչապէս, ամէն ինչ: Հավ էլ ունենք, ճուտ էլ ունենք: Թուխս ենք ասըմ, էս քանի տարի, ճիշտ ասած, ընձի հավ թուխս չի նըստըմ: Ճուղ եմ առնում պահում: Մեծանում են, վորն աքլօր ե, մոռթում են, էրխէք ուդում են, վորը չէ՝ զաթի հավ է ու հավ է: Մէ հաղ, սաբաթ ենք ասում, պաբու գ՛օռձաձ սաբաթներից ե, ըտենց սալօմը դ՛ընում եմ մէչը, նըստում են, մէչըն ածըմ: Աշնանը թէբրափոխվըմ են, թէբուրները թափում են: Ընենց կա վոր, հառէչ շատ կար, էնքան շադ կար, ըսենց, կօզօլ վառեգ ինք ասում, հըմի ըդոնցից չըկա... Շուշան ենք քաղըմ, սիբեխ ենք քաղըմ, հէդօ՝ խալուվըրիզ են ասում, էն գ՛արնանը վոր հըլնում ես՝ էսենց փըռված գ՛էդնին, ընենց անուշ հօդ ե, ընդըրա

հօղը յես սիրում եմ: Գ՛արնանը էս մեր փոսերից բ՛անից քաղում եմ…

Սիրուշ Գրիգորյան, ծնվ. 1939 թ.

## ՆԱԻՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

### Արագյուղ գյուղ

***

Մըղա թօրօն շէնք դ՛ըրէծի, մէ թէշտ խըմօր ի արե: Իմ ախճիգը մէ տարէգան էր, դ՛ըրէր ի փէջի կուշտը: Յես էլ ինչ հիմանայի՝ էրէխէն պըղի մըղնէր, էն յանից դ՛ուս գ՛ար, հընգընէր փէջը, մէ տարէգան էրէխա յէր: Դ՛ըրէծի, ասի՝ մըղնիմ շէնքը դ՛ընեմ, թօրօնի մէչը: Տէսա՝ էրէխի ձ՛էնն էլավ, ասի՝ օ՛ֆ, կայնէք շէնքը դ՛ընեմ, նօր հըլնիմ էթամ էրէխի հավարին: Ինճ հիմանամ՝ հընգե փէջը: Վօր չըքաշի՝ ըսենց միսը մընած փէջի վըրէն: Վա՛յ, ըտե ուշըս գ՛ընաց, հավարը քըցէցին... Այդենց հէդօ լ՚ալօվ իմ ախպօր խէդ առա գ՛ընածի հիվանդանօծը: Ըդե լ՚ալում ի, ճըճում ի... Ասում ին՝ էս փաճէկից կըդրենք, դ՛ընենք էս հէրեսըն բ՛ան հըլնի էլի՝ կարկըտան են ասում, ի՛նճ: Չըթօղէծի յես: Ըսեցի՝ սըբէն մընում ե, վօր չաղընում ե, էդ սըբէն կօրում ե: Ընենց մառթ ա առե, միյնակ տէնաս: Գ՛աս թէ՝ մառթի չըգ՛ընա՞ց:

***

Յես մէամիդ դ՛ըրէծի էդ անտէր սալօմը վառէծի, հէլա գ՛ընածի, ըստե կըռօջօն թափի, գ՛ամ տէնամ՝ ամբօղջ խօղը վառվե, տըվեր ե կըրիշը: Հավա՛ր, հավա՛ր, է՛, չ՚անք էգան... Մըղէր ի զիվ՚ գ՛օմը, յես ընձի ազաղէր ի, է՛լի, մըղա՝ խեխտըվում ի: Գ՛օմի մէճը մուխը տըվեծ, էլ չըկառծա հէլի դ՛ուս, հազիվ մէ կերպ հէլա դ՛ուս,

է՛լի: Ցեսիմ, ըտենց… Էնդա բ՛ան ասէծին... Հա՛, մէամիդ հէլավ, յես ի՞նճ հիմանի՝ պըդի պաժառ հընգնի… Տանչըվուկ կընիկ ենք…

***

Սըբաս էր օրէգան էփում էդ իմ կիսուրը, թունդըրա մէճը, էդ կըճըճօվ: Ինադու կանթը քըցէցի շիշը, էդ սըբասը լըծվավ թունդըրա մէճը: Հիմի փախա, էդի հընգավ իմ քամազը, յես գ՛ընածի տափա: Չանք էգա, էդի քընէր էր: Վայ, էդ հօղ ու դուման էդ տունը վէկալէր էր... Դէ օրէգան՝ սըբա՛ս, սըբա՛ս, սըբա՛ս: Չօլից գ՛ալում ինք՝ էդ սըբասն ինք ուտում: Խա, ըդենց քըցի կըչուչը ջ՛առթըվավ, էլ հըմի վօճ սըբաս դ՛ըրեց թունդըրա մէճը, վօճ էլ բ՛ան արավ... Հէլա փախա: Փախա գ՛օմը, փախա մէ պադի տազ մընածի, մինճեվ էտի քընավ:

***

Իմ մէր գ՛ընածէր էր բազառը, մէ վէդրօ ձ՛ու յէր տարե, հէրն էլ հեղն էր հէլե: Ասէր էր՝ հայրիգ, տըվէծի մէ սեվ շըլվըրօվ մառտ տարավ էդ ձ՛ըվերը: Է՛, հըմընօվ սեվ շըլվար են հակած, յես ո՞ւմըն էտամ ասեմ: Ասավ՝ յե՛լ, յե՛լ, էլ գ՛ընա՛ած… Չ՛ըրի յէր տըվե, գ՛ընածէր էր… Ասէր էր՝ «Դ՛առտըրկեմ, բ՛էրեմ կըտամ»: Քաղաքին կըբ՛էրե՞ն… Գ՛ընածէր էր, չեմ գիդում, ունիվէրմա՞գ էր գ՛ընածե, հո՛ւր, էրգու քուր հիրար նըման են հէլած, ընդե հծյլի կա՝ ունիվէրմազին, չէ՞, ասէր էր՝ վա՛յ, քուրըս էգավ, տըվէր էր էդ հծյլիկն հըմէն ջ՛առտէր էր, էդ ունիվէրմազի հծյլիկը… Հավօղ էր կէրե, կշտացէր էր իմ մէրը, իմ պաբի հծշկերը դ՛ուս էգէր էր, հավօղ չէր տըվե: Մէ հատ մառթ ընդե հէլե, ասե՝ հարի՛, հարի՛, այ մառթ, հարի՛ հավօղ տամ կեր: Պաբն ասէր էր՝ իմ հծշկերը դ՛ուս էգավ՝ դ՛ու ընձի հավօղ չես տալում, հուրիշի յա ասում՝ հարէք կէրէք հավօղը… Պաբըն ասէր էր՝ ա՛յ Հառփօ ջան, պըդի քեզի ամուսնացընեմ, ասա՝ վօ՞րդե: Քաղա՛ք: Ասե՝ գ՛ըքան էդ քօ

շռքիլըդ գ՛իշկեն... Քաղաքի բ՛ա՞ն ես դ՛ու: Սե՛եվ՝ իմ մէրը, սեվ տըռճէ էր, վօ՞վ կըտանէր քաղաք մառթի:

Ռիմա Մնացականյան, ծնվ. 1940 թ.

***

Էս քարհանքի գ՛ըլխին ֆօրթ ի պայրում, մէ շօֆեր էկավ, զօռում է՝ պըդի գ՛աս նըստիս աֆտօն: Ամանչում եմ: Ասում եմ՝ «Այ ախպէր ջան, դ՛ու գ՛ընա, մեր տունը հէն ա, յես ֆօռթ եմ բ՛էրե, ախըր»: Ասում ա՝ «Չէ, պըտի գ՛աս նըստիս աֆտօն, բ՛ան եմ հառծընում»: Հէլա նըստա աֆտօն, մէ քիչ տեղ, բա՝ «Յես Քռրռշամ բ՛անվօր եմ տանում, յես վեծ ամիս հիվանդանօծ պարգէր եմ, վօշ մէ բ՛ուժում չի հէլե, յես ունիմ հինգ էրէխա: Յես վախէնում եմ՝ ռռկօվ մեռնիմ, էրէխէկըս մընան: Հիմի քռրռշռմցի էրկու կընիգ, մը հատ Աստըղիկ կա, ասում են՝ բ՛ըժիշկ է, ըդու սալըխն են տըվե»: Ասի՝ «Ըստե՝ մեր թաղամասին, ումն ես ճանաչում», բա՝ «Տըրակտըրիստ Վաղօյին»: «Հընց,- ասի,- Վաղօյի տան հէդվի տունն էլ իմ մօր տունն է»: Էզանք: Ըղօր առա, էզա դ՛ուռը: Տարա, մէրըս նօր քընուծ հէլէր էր՝ Աստըղիզը: Պաղին սըռպէր ունէր շարաձ, սըռպէրի խէդ խօսում էր կայնե: Ասի՝ «Աղէ՛, մառտ եմ բ՛էրե մօղըդ»: Էդ մառթին էլ նախօրօք ասի, ասի՝ «Չասես հա՛, յէթէ ասէր ես՝ հիմածի, չասես՝ քանըմ ամսըվա հիվանդ ես դ՛ու: Հինքը կասէ՝ կըհավաղաս, չէ՛՝ սըխալ ասավ, ուրեմ բ՛ըժիշկ չէ էղի»: Էզավ, ասավ՝ «Ի՞նճ հէլե, տըղա ջան»: Ասավ՝ «Մայրիզ ջան, շաղ վաղ էմ: Ունիմ հինգ էրէխա, յես շաղ եմ ըդմիծ վախէնում, լը մըհաղ ընձի նայի էլի»: Ասավ՝ «Մէ, ախճի ջան, բ՛առծը բ՛ե, պարզըցըրա»: Թախտի վըրէն էր պարզըցընում: Պարզըցըրեց բ՛առցի վըրէն, նայեց, ասավ՝ «Վա՛յ, տըղա ջան, դ՛ու հիվանդ չես»: Ասավ՝ «Բա ի՞նչ եմ»: «Քօ պօռտըն հընգեր ե, էսի՝ հընգից վեծ ամիս»: Տօշնի, է՛: Վօր էդի ասավ, էդ տըղէն թըռավ ու մօրըս հէրըսները պաչեց: «Այ մօրքուր ջան, էդ դ՛ու պըռաֆէսօ՞ր իր, վօր ասում ին՝ ընդե գ՛յուղին կա՝ չի հավատում»: Քըցեց տեղը,

պարզըցըրեծ, մէ քիչ մընաց, տըղին հանեծ, ասավ՝ «Նըստի, հըմի յես քե մէ բ՛աժագ չայ կըտամ, կըխըմես: Ուզում ես, տըղա ջան, մընա մեր տանը, մի հիրար արի պարգած տեղիցըտ, էնի էնքան շուտ է հէլե, վօր էնի առտէն տեղավօրվե քօ ստամօքսին, չուր գ՛ա, տեղավօրվի էղի»: Ասի՝ «Աղէ՛, դէ դ՛ու չայ տու, յես վազիմ էթամ էրէխէկին»: Էգա, թըբէթըս չըտըվեց, վազա, գ՛ընացի տէսա՝ չայը խըմե, նըստե: «Բայց,- ասավ,- ուժեղ պըրիստուպներ կունէնաս, չըվախէնաք, էղի անջախ պօզէր եմ տեղից»: Մէ քիճ մընած, մէգ էլ հէլավ, ասավ՝ «Մօրկուր ջան, էթամ տունը, աֆտօն դանդաղ կըքըշեմ: Հէկուծ գ՛ըկամ: Հէկուծ էլ գ՛ըկամ»: Ասավ՝ «Իրեկ օր գ՛ըկաս, չուրի յես էտի տեղաղըրեմ, վօր դ՛ու աշխատես»: Իրեկ օր էդ մառտը լավ բ՛անօվ-մանօվ, կանֆըղօվ-մանֆըղօվ էգավ, մօրըս տէսան մառթ ու կընիգ, գ՛օյ ու շընօրակալ, վօր՝ «Առտէն ցավեր չունիմ, յես կարամ առտէն աշխադեմ»: Իրեկ օրը լըռածավ, էգավ մէ լավ էլ շընօրագալություն հայդընեծ, գ՛ընած ու գ՛ընած, հէլավ բ՛ոխկ:

***

Գ՛ընածի մըդա մեր ժամը, մօմ վառիմ: Նախօրօկ վառում եմ՝ էթամ խանուտ: Յես վառում եմ, էդ մօմը հանգում ա: Նօրիծ եմ կըպցընում, էդ մօմը հանգում: Իրեկ անկամ: «Այ մառտ,- ասի,- կայնի էթամ, է՛: Էրտամ, շուտ գ՛ամ»: Իմ տըղէն էլ էգավ, դ՛իմօվս հընծավ: Ասի՝ «Հայկազ ջան, գ՛ընա տուն, հէսա խանութից գ՛ալում եմ Առտազի խէտ»: Այ մառտ, գ՛ընածի խանութը, վըրա վօղի էկա հասա էդ մեր հէրանցըս տան հէդեվը, տէնամ՝ զօռօց ե հըլնում, բօռում ե՝ Տանիրա՛, Մէլա՛, յեսիմ ինչ, հարէ՛ք, յես մեռնում եմ, վադ եմ: Էգա, դ՛ըռնից մըդա՝ ի՞նչ է հէլե: Բա՝ վադ եմ: Զանգին, ըշտաբ օքնությունն էգավ: «Զանգէք իմ ախճըգնէրին»: Ախճըգներն էգան թափան: Մէգն Հէրէվնա, մէգն Ուշագնա, մէգը գ՛եղիծ: Ըշտաբ օքնությունն էգավ, սըրըսկեց, վօր պըդի էղի, ասենք, լավի գ՛ա: Դ՛եղ տըվեծ, հընգավ ցընծումի մէչ: Մեռա՛վ մընած, քաշվա՛վ ըդու ճ՛եռ ու վօղը… Հընար չըկա, վօյին հասնում խըփում է պարգուզ տեղիծ, հընար չըկա: Զանգին, յերգըրօռթ ըսկօրօ պօմօշչ էկավ:

Տարան Հէրէվան: Տարան Հէրէվան, Հէրէվան էլ ընդե էրէխէքըս չեն պադմում, վօր հառաջի ըշտաբ օքնությունը սըրըսկե, էսենծ արե: Ասում են՝ «էսի գըժվեր ա, պըտի տանէք գըժանօծ»: Ախճըգները լ՛ալում են, ասում են՝ «Վօշ մէ հատ գըժանօծ, մեր հէրը ամբօղջ օրն աշխադում, ի՞նչ գըժանօծ: Մենք մեր հօրը տուն ենք տանում»: Ըդե սըրըսկում են, դէս դէն, թէ՝ «Տարէք, մէ սուտկա էսի քընած կըմընա, վօր կըզառթնի, դ՛եղ կըտաք, նօրից կըքընի»: Էդի բ՛էրէծին, նա՛սիլզօվ հանինք, տարանք պարզըցըրինք, թէ՝ առթէն էսի գ՛ընած, վարի յէ էթում, չըկա: Այ մառթ, գ՛իշերա մէ պային տէնամ՝ ձ՛էն ե տալում. «Թ՛առլա՛ն, Թ՛առլա՛ն, յե՛լ»: «Ի՞նճ է»: «Յել մէ ջուր տու, խըմեմ, մէ պապիլօզ տու ծըխեմ»: «Իյա,- ասի,- էսի լավըցե»: Հէլան ախճըգներըն, համէքը թըռան՝ «Պաբա, հէլար, պաբա, հէլար»: Հէլավ սուս փուս նըստավ: Վօճ էն մեռօղն եմ, վօճ էն սաղըն եմ: Նօր բ՛էրին էդ ցէրէզը, միս գ՛ընածին բ՛էրին, խօրօվաձ արին, կէրան, խըմին: Մէ տաս օր էլ էդ նէրվէրի դ՛եղ ու մեղ տըվինք խըմեծ: Հընծավ՝ հընծավ… Հիմի օրը մէ լիտըր արաղ ատկազ չունի:

Թառլան Մնացականյան, ծնվ. 1940 թ.

## Արգել գյուղ

***

Հառաջ կօվ պախըմ ինք, հիմի՝ չէ: Առաջ յեռթօվ պախըմ ինք: Մի օր յես ի տանըմ, մի օր դ՛ու յիր տանըմ… Ըենց պահում ինք՝ քարի տակից գ՛էլըն հէլավ: Մէամիտ հէլավ, հէլավ ու խասավ կօվին, կօվի բօզը բ՛ըռնեց, մինչեվ մենք խասանք, կօվին քըցեց գ՛էտին առթէն, բօզը ճըղեց, արունը ծըծեց, ու ըտենց կօվը սատկավ: Հո՞ւր փախէր, էնի արուն տէսէր էր, սընունդ էր տէսե, հո՞ւր փախէր: Մե՛նք վախէցանք փախանք: Կօվը էտենց էլ մընաց չօբանի վըրէն, տարավ մօռթեց ծախեց, ինչքան պէտկ էր՝ փող դ՛ըրեց վըրէն, մէ հատ կօվ առավ, տըվեց տիրոչըն: Օխճըրին վըռազ ճըղըռտըմ ա: Գ՛եղըն չի մըտեր ա, բ՛այց դ՛աշտերն հէլեր ա: Աղ-

վէս շատ կա: Գ՛իշէրնեց վոր լուսը քըցես շօշի վըրէն, փախնում էս յան, էն յան: Ըստեղից սար էթալ չըկա: Ըս տարի դ՛աշտերը ժողօվըրթին ա տըված, ամէք մէ էսքան տեղ վէրցած, բոստան-մոստան են դ՛ընում: Պամիդօր, լօբի, մէզը թութուն ա դ՛ըրե, մէզը ցանք ա արե, ցօրեն ա ցանե, այտենց բ՛աներ դ՛ըրած, կառտօլ էլ են դ՛ընում: Ջ՛ըրեր հանէր են: Հազիվ հիրանց հէրիք անա, էլ ի՛նչ ծախեն: Ժողօվուռթ հո՞ւր ա, յե՞փի ա մացե: Միյնակ տըներն ա մացե, սաղ էլ խօպան են: Մառթ կա՝ ընտանիքը տանում ա, մառթ կա՝ չի կարում տանի, ընդեղից իփըր թէ կախշատի, փող ղըրկա գ՛ըքա: Էն էլ՝ կըստան, չեն տա, յեսիմ, յօլա յա կէթան: Մէ հաղ զավօղ կար, էդ զավօղը բ՛ըռնին փազին: Կար մեծ զավօղ, հինգ հարուր հօքի մառթ էր ախշատըմ: Ասում են՝ մէ կօչաղ մառթ էկավ, փազել տըվեց: Ասում ա՝ «Արի կիսենք, հիցուն-հիցուն», էն էլ՝ զավօղի տէրըն, ասում՝ «Յես վո՞րդուց տամ հիցուն-հիցուն քեզի, էտքան ժողօվուռթ պըտի պախեմ յես, չէ՞»: Ըտենց էլ փազին: Ամէքը հիրան մէ բ՛ան ըստուց ընդուց, յօլա յա կէթա էլի: Յօլա կէրթանք: Հիմի վեռչում վո՞նց ա գ՛ըլնի էս ժողօվըռթի հառցը, լասա տէնամ: Ուրեմըս մենք էլ պըտի քօչենք: Չի հըլնի: Ախշատանքն հըլնի, ժողօվուռթ գ՛իշեր էլ կաշխատի:

Ադոլֆ Երվանդյան, ծնվ.1935 թ.

## Բուժական գյուղ

***

Տասնութը թըվին օր թուրքէրը հայէրին ջ՛առթաձ ա, հէլած գ՛իշեր փախած: Անդրանիզըն ըսէ՝ հէլէք քօչէք, վօչ մի բ՛ան ձ՛էր հէղըն չըտանիք, թուրքէրըն կըջ՛առթին: Գ՛իշեր հէլաձ ա, տաս-նութ թըվին, հընգաձ գ՛իշեր ճամփա: Անօթի - ծառավ: Էզաձ վօղօվ հասաձ ափ, ըստե մէ հաղ ծառ կար, էղեղ կուճուռվաձ, մէ թիքա բ՛ան-ման կէրաձ, էզաձ հասաձ Լէնինազան: Լէնինազան մացաձ ա մէ տարի էրզու, քըսանչօրս թըվին, ըտեղից առթէն ձ՛եռ չի տըվե իմ հօրն ու մօրը, քօչե էկէր են Չամըրլու: Ըսաձ ա՝ կէթանք

վօղօվ, վի դ՛ըռնից անասուն շատ գէլնի, օչխար շատ գէլնի, հöլբöթ հարուստ մառտ ա, մեզի հացափորի կըպաhի: Էգած տէսած, որ էդ մառթկանց գ՛օմըն անասուն կա, օչխար կա, բը՝ «Մենք զախտական մառտ ենք, էզէր ենք՝ փորիացի մեզի պայէ»: Մ՛էրզու տարի պայած ա ըտեղ: Լավ էլ պայած ա մառթիք, հալալ եղնի իրան: Ըդըրանից հետո, բա՝ «Մենք հէլինք էթանք»: «Դէ,- ըսե,-ձ՛եր գ՛ոռծն ա, որ կէթաք՝ գ՛ընացէք»: Հէլած վօտօվ ... Ծընվէր եմ գ՛օմի մէչ: Վոչ մի բ՛ան չեղե, ամօթ ասել՝ մէրըս հանե իրան փէշըն, թալե ընձի մաքրե, մըսըրքի մէչ, գ՛օմի մըսըրքի մէչ: Հէլած էտենց գ՛ըրգանոցից ընձի առած, էգած ա: Էգած Չառչըլու, տէսած Չառչըլու յէլ ձ՛եռ չըտըվե, էգած Բ՛ուժական: «Մըկա էթանք Բ՛ուժական, էլի վի դ՛ըռնից անասուն շատ գէլնի, կըսինք մեզի հացափորի պախի»: Աղէգի Համբօյ տունըն: Հարուստ մառթ եղե, շատ ազիզ մառտ եղած: Արէք, ըսեց, արէք աշխադէք, մենք ձ՛եզի կըպախինք: Մէ քանի տարի մեզի պայած ա ըտեղ, ըդըրանից հեդօվ ըսեց՝ էլ առթէն բ՛ավական ա, ըսեց: Գէլնին գ՛իքան մէ հատ հող կըդան, հէրըս, մէրըս տուն կըսարքէն՝ հացատուն: Էդ հացատան մէչըն կաբրէն մէ քանի տարի, ըդուց հեդօ մէ հաղ գ՛ոմ կըսարքէնք, գ՛ոմից հեդօ մէ հատ օթաղ սարքէցինք, ըդենց մանրից, մանրից սարքէր ինք, մինչեվ հէսօր աբրէր ինք, մառթ ու կին: Կինըս առթէն չօրօռթ տարին ա, որ մահացեր ա: Ցես մընացէր եմ մէնակ: Ցես մընացէր եմ մէնակ, ունեմ քառասունըէրկու հատ ծոռ ու թոռ: Էտքան ունեմ նաղդի: Էկու-իրեք ամիս՝ իրեք հատ ծընված ա պըզդըլիզ:

***

Խող ու ջ՛ուր բ՛աժնին տըվէցին, հիմի ժօղօվըրթի ուժը էլ չի ախտա: Սալարկէն թանգ ա, վարելըն թանգ ա, շարքացանըն թանգ ա, սէրմացուն թանգ ա, չեն կարա: Ամենալավ կեղնէր՝ էնէն կօպէրատիվ, պէտութուն էնէր կօպէրատիվ, ցանէր: Հայաստան խող շա՞դ ունի: Ցանէր, պէտության հաց էղնէր: Նեղութուն շատ ենք քաշե: Ախըր ի՞մալ ըսեմ: Հիմի տընէստուն աֆտօ նըստին կէթան: Էն վախտ, միլիցա Անդըրէյին կարա՞ք հիշէք, թէ՞ չէ, սաղ

քաղաքի մէջը Անդըրէն էր: Խըրօմի սապուգներ հաքուկ, ըստե յէլ զանգուլակ կախուկ, օր Անդըրէին տէսնէն, քառսուն տեղ կըփախնէն: Էդ մի քաղաքն էդ մէ մառթն էր: Կէթէնք կաշխադէնք, էրգու մանէթ փող կառնէնք: Էդ թեփըն (հիմի անասունին ա կիդենք) կէթէնք հեռթ կըկայնէնք, հեռթի տազ, գ՛օխտուր, թէ՝ քախքի նօրմէն դ՛ուք իրավունք չունիք տանիք: Գ՛իշեր գ՛էլնէնք Սարի թաղօվ՝ պօյեզի գ՛ըծօվ, օր Անդըրէն չըբ՛ըռնէր մեզի՝ դ՛ու իրավունք չունիք քախկի նօրմէն տանիք, գ՛իշեր գ՛էլնէնք ժամի մէզին, գ՛ընգնէնք Սարիթաղի պօյէզի գ՛ըձօվ, լըսի՞ր, գ՛ըքէնք գ՛ընցնէնք Քանաքեռ, Առձանաձ՛օրօվ, Մօրաթափի դ՛ըռնօվ, յեռեսուն կիլօ, քառասուն կիլօ շըլգօվ: Աղըն շըլգէր եմ, մէշկըս յերա յա էրե, նըֆտըն շըլգէր եմ, հէլե լըսվե մէշկըս վառե: Մըզավա ջայէլները ճիշտ ա, դըժգօյ ին, բայց մեձերըն դըժգօ չին: Հիմի մենք թաքավօրի նըման կաբրինք: Մենք նեղութուն տէսէր ինք: Հիմի պեռվի սօռթ հաց ա կուդինք, ասսուն փառք: Սօյա քուսպըն բըրիգադներ կըդ՛նէն զըռան մէչ, կըփազէն, օր հանգառծ մենք չուդէնք՝ անասնակեր… Օր տան անասուններին: Էն վախտըն հացըն օր կըծէձէնք կալը, քամի կիդէնք, հիրգըվա մըթան քամի կիդէնք, լամպարօվ, գ՛իշեր հարի լուս քըցէնք, դ՛արմանըն կըտանէր, ցօրէն կըմընէր, հեդօ ցօրէն օր մընէր, կընանիքըն գ՛իքէն, նըստէն ալըրմաղօվ մաղէն, փօզէմաղօվ: Նօր սերմացու գ՛անէնք: Կօլխօզ էր, կիդէնք կօլխօզին: Թեփ էր կուդէնք, քուֆտէն մենք զինէ՞նք…: Կօմունիստնէրի վախտօվ լավ ինք աբրե:

***

Քառասունէրկու թըվին գ՛ընացէր եմ բ՛անակ, պատէրազմի վախտ: Տարան հասցըրին մինչեվ Բօռժօմը: Հըրաման տըվէցին՝ քըսանըչոռս թըվի ծընվաձնէրին բ՛էրին ըստե՝ Հայաստան: Գըրանիցից վախէցան, չէ՞, Թուրքիայից, օր կարօղա յերգըրօռթ ճազատ բ՛անէր: Գ՛ընացինք, յետ էրին, բ՛էրէցին, Էշմիաձին պայէցին մէզի, ըտե սայման կըպաշպանէնք: Էշմիաձինից բ՛էրին Քանաքեռ: Քառասունը ուտը թըվին էլ զօրացըրվա: Բ՛անազից էզա, հարէվանի ախճիզ ունէր, լավ սիրուն ախճիզ (խօրօդ էլ ա կըսենք): Հօրն ու

մորըս ըսէցի՝ «Հայրիգ ջան, նանէ ջան, յես էս ախճըգան կըսիրեմ»: «Ա՛յ բալամ, դ՛ու բ՛անակ ես հըլը, բ՛անագից ազադվի, հարի, նոր»: «Չէ,- ըսէցի,- յես էտ ախճըգան կըսիրեմ»: Վեռչ հէրն ու մէրըս չըհամաձայնվան: Ըսեց՝ «Կազադվիս գ՛ըքաս, նոր կամուսնացնենք»: Էդ ախչըկա հէդ մէ քիչ մօղէցանք հիրար, խօսք տըվինք, հիրար սիրէցինք: Բ՛անագից ազադվա էգա, ամուսնացա: Ըդըբանից հետո հօրն ու մօրըս հէտ մընացի մէ քանի տարի, բ՛աժվա: Էգա մէ հատ գ՛ոմ սարքի: Էդ գ՛օմի մէչ աբրանք մէ տարի:

Սեդրակ Երիցյան, ծնվ. 1924 թ.

## Գետամեջ գյուղ

***

Էն վախտ յես էլ գ՛էղէցկուհի ի, ընձի փախցըրեց տարավ: Գըռուզավիկօվ էլ տարավ: Յես շա՞տ գիդեմ... Տանէր իրա հօր տուն՝ հէրըն կըսպանէր իրան, յէթէ նույն րօպէյին տէնար: Տարավ իրա հընգերնէրի տուն: Ինչքան ժամանակ մընաց, նոր հառսանիք արին: Մի կերպ բարիշավ, հէրըս շատ խիստ մառթ էր, մեռնեմ ձ՛եզի: Իմ նըման աշխատօղ չի եղե: Թութուն ի շարում, իմ մատերըն չէիր տէնա, վօնց ի շարում յէս: Հայտըրնի յէրքչուհի ի յես, ձ՛էն եմ ունէցե, հըմի մի հատ կըյերքի: Մեռնեմ քեզի, հըմի չըկարամ: Հարուր, էրկու հարուր հավ եմ պահե: Գ՛ըռտնակ արօղ ի, գ՛ըռտըրնգէր եմ՝ քուրըս թըխե: Կօվ ինք պահըմ, վօչխար ինք պահըմ: Էծ կըթէր եմ, գային կըբ՛ըռնին, մենք կըկըթինք: Շատ կօչաղ ի յես: Թանը կըղըրում ինք, շօռ ինք սարքում, ժաժիկ, կօռծում ինք փօշու վըրէն: Կանանչի, դ՛ախծ սարէրից ինք քաղում բ՛էրեում: Շատ լավ էր հըլնըմ՝ էփըմ ին, կըտըռտըմ ին սաղ մանդըր-մանդըր ուտէլու չափ: Մեռնեմ քեզի, սաղ գ՛յուղըն իրար օքնըմ էր մինչեվ գ՛արուն: Ածիկըն սաղ գ՛յուղ դ՛ընըմ ին, ցօրենի կանանչըն սարքում ինք ածիկ, ալուրօվ էփում ինք, ընենց համօվ էր ըլնըմ... Առավօտ տունըն իմ ուսէրին ա, ռէմօնտըն չենք արե, նոր ռէմօնտըն անէնք, չեմ կարա կեխտոտ թօղի իմ տունըն,

դ՛ուռըն, լավ ա՝ տէսաք: Իմ տըղէս ա, ինչ վօր ինքըն ցանկանա, կասի՝ «Մա՛, էս բ՛անըն էփի, ուտէնք»: Բը հընչի՞ չեմ էփի: Քյալյամըն մանըրենք սիրուն, սօխառած կանէնք, գ՛ըլըցնենք կաստըրրուտկի մէջ ու կըդ՛ընենք փէչկի վըրէն, կէփի: Մեծ կաստըրուլկէք ունենք, թուփըն հէնց ընենց կըդ՛ընեմ, չեմ խաշի, լըխկըմ ա, խաշածըն լըխկըմ ա, գյազյար կըդ՛ընէմ...

Արաքսյա Մինասյան, ծնվ. 1931 թ.

## Եղվարդ քաղաք

***

Յէս կյա՞նք էմ տէհէ, վօր ասէմ: Վօ՞նց ասէմ: Շատ նէղության մէջ էնք ապրէ: Կըռվի տարի յա ըլէ, մօրըս ունէցէլ ա հինգ էրէխա, մէ հադ կէսուր: Աբրէլ էնք, հէրըս գ՛ընացէլ ա բ՛անակ: Հէլածըն էլ կէրէլ էնք պըռծէլ էնք, էլ չի ըլէ, վօր ուտէնք: Մէրըս չի թօղէ էթանք դըբրօց, աշխադանքի հըմար, վօր աշխադինք, աբրինք: Էթում ինք դ՛աշտը պաշադ ինք անում, ցօրէն ինք հավաքըմ, էթում ինք վառէլիք ինք բ՛էրում ձ՛ըմըռվա, էթում ինք կամ ինք քըշըմ: Կամը գիդա՞ք. քուլաշը փըռում ին, յէզնէրը լըծում ին, մէզ էլ նըստացնում ին էտ կամի վրա, պարաննէրօվ կաբըռտում ին փէդէրից, վօր մէնք վըրից չընգընէինք: Վօր էտ անասուննէրին քըշէինք՝ ֆըռար: Նըստում ինք դըրադ՝ արէվի տակը, ինձ նըստացնում էր, կիտըմ էր ցօրէնը: Քըշէրը մալատիրկօվ քամըմ ինք, քամում ինք, ցօրէնը ջըզըմ ինք, լըցնում ինք մէշօքնէրը, լըցնում ինք սէլէրի մէջը մէշօքնէրօվ, բ՛էրում ինք, պահէստավօրում ինք: Ձ՛ըմէռն էլ նըստում ինք տունը:Դ՛արման ինք բ՛էրում շըլազօվ, կօվ ինք պահըմ, վօշխար ինք պահըմ, էշ ինք պահըմ: Էշը տալիս ինք վառցօվ: Թունդիրը վառում ինք, ճաշը դ՛ընում ինք մէջը, կըճըճօվ, նըստում ինք քուռսու տակը: Դ՛ուք տէհած չէք ըլի. կավէ քէրէդան էր, դամշէ քըթալ... Կօվը ծընում էր, ֆօռթին ծըծացնում ինք, հընգէրքը մինչէվ չընգընէր, տատըս չէր գ՛ալի տունը, ընդար ինք նըստըմ... Մի իրէք օր կըթըմ ինք խիժ, դ՛ալ ինք էփըմ, շիքում ինք դ՛ալ, բ՛աժանում

ինք: Պարանները քըցում ինք օձօրքից, խընօցի ինք հարըմ, ընդար ինք հարըմ... Իրէք քյիր էնք, վօր մանգէղօվ ձ՛էռնէրըս կըղրում ինք, արին գ՛ալիս էր, ֆօղը լըցնում ինք վըրին, վօր արինը կըղըրվէր:

***

Գ՛օղէրը մըտէլ ին, հարէվանի թըխած հացը դ՛ըրէլ ին ուսնէրին, գ՛ընացէլ ին: Գ՛օղէրը էտ հացը վօր գ՛օղացէլ ին հարէ-վանի տընից, բ՛էրէլ ին դ՛ըրէլ ին մէր դարվազի առաչը: Մէր տունն էլ մի հատ մաշակար էր մընում, էրկու ախչիկ ունէր: Հին կօշիկնէր էր սարքըմ էտ մառթը, աբրըմ էր, է՛լի: Տուն չունէին, տատըս բ՛էրէց մէր տունը պահէց, հացատունն ինք քընցընում ըտըրանց: Էտ գ՛օղը վօր հացը գ՛օղանում ա, բ՛էրում ա դ՛ընում մէր դարվազի առաչը: Էտ միլիցէքըն էկան, դ՛ուռը ծէծէցին, տատըս դ՛ուս էկավ: Տատըս ըսէնց արէց՝ «Վա՛յ, վա՛յ, էս ի՞նչ ա, էս ի՞նչ ըլավ, էս իմ տունը քանդըրվավ»: Մէրըս ասէց՝ «Ի՞նչ ա ըլէ, այա՛, ի՞նչ ա ըլէ»: Ասէց՝ «Գ՛օղէրն էկէլ էն, հացը բ՛էրէլ էն, մէր դ՛ուռը դ՛ըրէլ, շառը քըցէլ էն մէր վըրա»: Շառը քըցին վօչ թէ մէր վըրա, քըցին էտ մառթի վըրա, էտ մաշակարի վըրա: Վէկալան տարան: Տարան Աշտարակ: Ըտըրան լա՛ավ ծէծէցին... Շօրէրը ճըղված, ճօթըռված էկավ տունը: Ասէց՝ «Մուկո՛ւչ ջան, էտ ո՞ւր գ՛ընացիր»: Թէ՝ «Ա՛յ մէր ջան, ինձ տարան Աշտարակ, միլիցա Նօրիգը ինձ ընդար ա ծէծէ, չէմ էլ կարում ժաժ գ՛ամ»: Բա՝ խի՞, ի՞նչ ա ըլէ... «Վօր էտ հացը գ՛օղացէլ էն, բ՛էրէլ էն, քըցէլ էն իմ վըրա, յէս էտ հացից էլ խաբար չէմ»: Նօր տատըս գ՛ընաց կանցիլարը, խօսաց, ասէց՝ «Էդ մառթը քըշէր ու ցէրէզ նըստած՝ ասէղը թէլում ա, մաշակար ա անում, վօր կօպէկ առնի, իրա էրէխէքին պահի: Խի՞ էք տարէ ծէծէ»: Թէ, տատիիս անունը Իսկուհի էր, թէ՝ «Իսկուհի՛ մայրիկ ջան, յէս քու տըղէքի խաթէր նըրան էլի բ՛ան չէմ ասի, վօր իմացէլ էմ քու տունն ա մընացէ, յէս թօղէլ էմ էկէլ ա, թէ չէ պըտի բ՛ըռնէինք, դ՛աղէինք ըտըրան»: «Ախըր ընչի՞ հըմար դ՛աղէիք»,- ասում ա: Ասում ա՝«Բա ի՞նչ անէնք, բա հացը գ՛օղացէլ ա»: «Ա՛յ տըղա ջան,- ասէ,- նըրանք հաց չէն կարա գ՛օղանա, ո՞ւմ տունը զիդան, վօր ընդըրանք

կարէնան հաց գ՛օղանան»: Վէռչը իմացանք՝ օվ ա գ՛օղացէ: Տատըս գ՛ընաց էտ տըղին լավ ամօթանք տըվէց, ասէց՝ «Չէ՞ս ամաչում, դ՛ու բ՛էրէցիր քըցիր էտ խեխճ մառթի վըրա շառ ու փօռցանքը»: «Դէ բա ի՞նչ անէի,- ասում ա,- մէլիցէն ինձ բ՛ըռնէր տանէ՞ր»: «Թօ բ՛ըռնէր տանէր, բա խի՞ իր գ՛օղանում»: Ութ էրէխա ունէր, ինքն էլ կըռնատ մառթ էր: Կըռվից նօր էր էկէ, չէր կարըմ աշխադէր, է՛լի: Վօր կըռվից էկէլ էր, աչ թէվը ըսէնց կըռնատ էր: Էկէլ էր, էտ մառթի հացը գ՛օղացէլ էր, էդ մառթին էլ էրէխա չունէր: Մառթ ու կընիգ ին մինակ: Վէռչը, էտ հացը վէկալան տարան տըվին տիրօչ: Էտ մառթին բըրախին, էկավ մէր տունը մընաց, էլի շարունակէց իրա աշխադանքը, մէնք էլ՝ մէր աշխադանքը: Բայց էտ մառթը մէզ շատ-շատ էր օքնըմ:

***

Իմ մէրը ջահէլ ախչիգ ա ըլըմ, էրազին էթըմ ա (վօր աղի թիքա էն ուտըմ, հա՛, Սուրփ Սարքըսի օրը, աղի թիքա էն ուտըմ. ասըմ ա՝ «Յէս չէմ կէրէ աղի թիքա»), «Գ՛ընացէլ էմ,- ասըմ ա,- կարմընջի տակից ջ՛ուր էմ լըցնըմ: Ջ՛ուրը լըցրէ՛ցի,- ասըմ ա,- տէհամ՝ մի հատ մառթ բ՛էրէց նախշուն բ՛աժակօվ ջ՛ուր տըվէց ինձ»: Ասըմ ա՝«Ըսէնց աչքըս քըցի վիրէվը, տէհա՝ վօնց վօր ճանանչում էմ, բայց չէմ իմանում՝ օ՛վ ա, ի՛նչ ա, է՛լի»: Ասըմ ա՝ «Վէ՛կալ, վէկալ խըմա»: «Ջ՛ուրն,- ասըմ ա,- վէկալա, բայց չըխըմա, պօչը կօղըրվավ, ընգավ ջ՛ուրը»: Բ՛աժակի պօչը կօղըրվէլ ա: «Վօչինչ, վօչինչ,- ասում ա,- ըտէնց էլ ա ըլում: Բա ի՞նչ պըտի ըլի, վօր դ՛ու լավ չըկարէցար բ՛ըռնէիր, բ՛աժակն ընգավ ջ՛առթըվավ»: Ասում ա՝ «Մէզէլ էկան ուզընգան ինձ: Էկան ուզընգան, թամաշ արի, տէհա էտ տըղէն ա: Մէրըս ասում ա՝ չէ՛, չէ՛, յէս ախչիկ չունէմ մառթի տալու, լա մէնձը առաջին ա»: Ասում ա՝ «Հէրըս ասէց՝ Կատի՛ն, ա՛խչըկա բախտը վօր բ՛ա՛ցվում ա, պուճուր ըլի, մէնձ ըլի, պըտի տաս»: Թէ՝ «Չէ՛, մէնձին չէմ թօղա»: Ասում ա՝ մէնձին էլ սիրած ունէր՝ հէրը - մէր չունէր: Դ՛ըռան առաչն էր՝ ասում ա: Էտ տըղէն վօր իմացավ՝ էկէլ էն քըվօրն ուզէլու, ինքը վըռազ, ասում ա, էկավ: Մի հատ հինգ կօպէկանօց տարէլ ա շիքէ

մատանիկ՝ կալցօ, բ՛էրէլ ա նըշան: Ասում ա՝ ըտար ճարպիկ էր, ըտըրա համար տըվինք… «Հէրըս,- ասում ա,- ասէց՝ ա՛յ օգռաշ, վօր էտ բ՛էրէլ էս, յէս չէ՛մ հասկանո՞ւմ՝ վօսկին ինչ ա»: Էթում ա, քիսիկօվ վօսկին բ՛էրում ա, դ՛ընում ա առաչը, ասում ա՝ այ էս ա վօսկին: Ասում ա՝ «Բաղըշ բիձա, դէ լավ, է՛լի, մէնք կըհա-րուստանանք, վօսկի էլ կունէնանք, ամէն ինչ էլ»: Բ՛այց էտ տըղէն մի քըսան հօքու բըրիգադիր ա ըլըմ: էտ ախչըկան ինքըն ա առնում: Մօրըս իմ հէրն ա առնըմ: Իմ մէրը ղօչաղ կընիգ ա ըլըմ, շատ ղօչաղ ու բաշարօղ: Իսկ ըտա, ասում ա, գ՛օթի, գ՛օթի, գ՛օթի՝ էդ մօքʲիրըս: Շատ գ՛օթի յա ըլըմ: Մօրը տանում ա, իրա կար-կըտանն անում, չուլքիքն ա կարկըտում, մինդար ա սարքըմ, բ՛առցի էրէս ա կարում, սաղ մէրն ա անում:

Ռոզա Հարությունյան, ծնվ. 1934 թ.

## Զովունի գյուղ

***

Ախպէրըս դ՛եմքօվ, դ՛իրքօվ լավ տըղա յէր: Իկʲա̈լ էր, խօրըս ըսէլ էր. «Հայրի՛կ, վօր յես ըլնէլ եմ, կայնէլ եմ շօշին, էն լավ-լավ ա̈փտօնները (էտի վօր ասէլ եմ, քառասուն մէ թըվի խօսկ եմ ասէլի), էն լավ-լավ ա̈փտօներն իկʲա̈լ են, կայնէլ են, ընձի վէրցէլ են, պէրէլ են: Գինան թէ՝ յես պաշտօնավօր մառթ եմ»: Էտ ախպէրըս էրկու հատ յեղունիկ խօստացիր էր (էս Ծախկավանքը գինաք, Արայի սարը, ըտե սուրփ կա), ըտա̈րը մատաղ վօր պէրէր: Մէ տարի, էրկու տարի էտ յեղունիյները պախիր էր, մօրըս ըսիր էր՝ «Աղէ՛, դէ յե՛լ (աղէ յինք ըսէլ մեր մամանէրին), յե՛լ տանենք էդ վանքը մեր մոմերը վառենք, յեղունիյներս էլ բըրախեմ, իկʲա̈մ»: Հէնց էլիր ին մեր Աբարան, կէրէզմընէրի հենց կըլօխը, էդ յեղունիյները ախպօ-րըս ծեռէն թըռիր ին: Թըռիր ին կընացիր ին, ախպէրըս մէ քիչ տըխրիր էր, ասիր էր բա՝ «Յես հույսօվ, հավատօվ պախեմ, յեղունիյները թըռնե՞ն, պըտի տանիմ ախ վանքի մէչը»: Մէրըս

ըսիր էր՝ «Վոչինչ, բալա՛ ջան, ӧրէթայ մեր հուխտըն անենք, իիկʲանք: Թըռավ՝ թըռավ, ի՞նչ անենք, յա՛ մեր տունը կէթա էլը, յա՛ մէ օր կըպըռնես էլը, կըպէրես ըտե կըբըրախես»: Էլիր ին կէրէզմընէրի կըլօխը, մէ տասը մէտըր էր մընացե, վոր մըննին վանքի մէչը, յեղունիյներն էն վէրէն թըռան էկան, կայնան ախպօ-րըս տեմը, ախպօրըս տեմն ին կայնէլի:

***

Մեզի վոր պէրին կալանավորնէրի էտ բարակները, էտ իմ մառթն օրէկան կըլէր՝ «Լուսի՛կ, ընձի յե՞փ կըփըսակես»: Ասիմ՝ «Ընչի՞, քեզի խինգ էրէխա ունես, յես քե տանեմ փըսակե՞մ»: Ամէն օր իկʲӧլ էր ըսէլ էր: Բայց մի քիչ խըմէլու խէտ սէր ունէր: Ասիմ՝ լավ, հըլը թօ էսօր խըմած չիկʲӧ, տըսնամ՝ կասի՞, թէ՞ խըմած վախտն ասէլ: Մէկէլ տըսամ՝ էկավ. օյաղ էր: «Լուսի՛կ, ընձի յե՞փ կըփըսակես»: Ասիմ՝ «Քեզի խէրը մէր կա (սաղ ին հըլը կիսուր կէսրըր), կընӧ թօ քեզի տանեն փըսակեն, յես քօ ի՞նչըն եմ՝ տանեմ քեզի փըսակեմ»: «Առթէն ընդӧնցէն պӧժնըվիր ինք, մենք պӧժӧն ինք, ընդӧնցէն պӧժնըվիր եմ, տու պըտի փըսակես»: Հա ասաց, հա ասաց, կընա մէ ամիս ասէլ ի: Ցետօ մէ օր էլ էկավ, ասիմ՝ վոր օյաղ ըլնի, կասեմ՝ յե՛լ տանեմ փըսակեմ: Օյաղ էկավ, էկավ՝ «Լուսի՛կ, ընձի յեփ ես փըսակէլ», ասիմ՝ «Ցելթանք (յել էթանք) մըկա փըսակեմ»: «Վո՞րդե յես ախչիյ տըսե», բӧ՝ էս շենքերը: Ըստӧնա մենք լӧ ըդ զօնան ենք, ըստե մէ քʲӧնի տուն էկʲիր էր: Մէկի խէտ ասէլ ին՝ իփըր սիրէլ ի, ասիմ՝ «Ցելթայ փըսա-կեմ»: Էլանք էկայ խասանք է՛էն ճանապարին՝ «Լուսի՛յ, վո՞րդե էթանք»: Ասիմ՝ «Ցեսի՞մ, տու վորդե ախչիյ տըսիր ես, ընդӧ էթանք»: Բӧ՝ «էթայ շենքե՞րը, թէ՞ էթայ Չէրէմուշկա»: Վոր էտ կըլ-խըվերն էկանք, մէ քիչ զӧռզӧնդ հընգավ սիռտըս, ասիմ՝ էսի չը-տանի՞ քըցի էտա ծորըն ընձի: Դէ, խինգ էրէխա ունեմ: Վոր ըստӧ մէկի խէտ էլ ըտӧրը պամբասէլ ին, յես վոչ խանդիր եմ, վոչ խէտը

կըռվիր եմ, վոչ մէ պձն: Էն Լէնայ խէտ վոր աւէլ ին: Ասիմ՝ վայթէ ընձի տանի քըցի էտ ծորէն, էտենց մէ թէթեվ շուք հընգավ սիռտըս, էլի: Բայց չէ՛ հա, էտենց պձն չէր անի: Ասաց՝ «Դէ վոր էթանք, յես կաբինգայէ չեմ հիշնի, ձֆտոյ, տու կէթաս ուզընգան»: Ասիմ՝ «Չէ, պըտի քե տանեմ ասեմ՝ էսի տըղան ի, ծեր ախչիյ տըվէք: Քեզի թոդեմ աֆտոն, յես էթամ վի՞ր խըմար ուզեմ»: «Չէ, Լուսի՛կ, տու պըտի էթաս մըննես տունն ուզես, յես նըստեմ...»: «Չէ,- ասիմ,- էտենց չէ: Պըտի քեզի խէտըս տանեմ, վոր ասեմ՝ էսի տըղան ի, ծեր ախչիկը»… Յետո ասաց՝ «Չէ, վոր ըտենց է, արի տձռնանք»: Ասիմ՝ «Դէ հարի տձռնանք»: Ըտձնձ բայց հիրանը մէ կոպիտ պձն ասէցի: Ասի՝ «Դէ իշթար էկիր ես, ընենց ուտէլօվ տձռցի»: Էկանք, ճըժերըս մէկը զձռթուն էր՝ «Մամա՛, ո՞ւր իք կընացե»: Ասիմ՝ «Կընացիյ պապիյ տունն էկանք, ո՞ւր պըտի էթինք…»:

Լուսիկ Սիմոնյան, ծնվ. 1934 թ.

## Թեղենիք գյուղ

***

Ընձի իմ մաման ա տըվե, իմ մէրը: Համէնափըրգիչ՝ իրա հօր տան ավէղրան, օր, ըսում ա, մառթ էռթար մօղը, կըփըրգըվէր: Տըվե ընձի, մեռնեմ Ամէնափըրգիչին, տըվաձը Ամէնափըրգիչն ա... Մոմ էլ ի թափըմ, հձշկըս չի տէնում, էլ չեմ թափում: Էնքան մառթ եմ փըրգե, քաղաքից էլ են էգե՝ փըրգէր եմ... Իմ մէրը հիվընդցավ, յես տասնըչոռս տարէգան ախչիկ ի, տասչոռս տարէգանից բ՛ըռնէր եմ էսի: Էրազ էգավ, տէսա՝ դ՛ուռը բ՛ացեց մէ հօքի, փէղը ձ՛եռը մըղավ: Յես էլ (դէ չըկար, ղօքա տուն էր) թախտի վըրէն պարգաձ ի: Բեց՝ Սիրանո՛ւշ, ըսէցի՝ ի՞նճ ա: Ասեց՝ «Քօ մէրը հիվանդ ա, կըմահանա, դ՛ու քու մօր գ՛ոռծը կըվէկալես»: Ասի՝ «Յես չեմ վէկալի, յես՝ տասչոռս տարէգան ախչիկ, էտի վէկալե՞մ»: Ասեց՝ «Չէ, պիդի

վէկալեs»: Հեռսօղավ վըրէս: Ասի՝ չէ՛: Մէրըս ըսեց՝ ա՛յ բալա...Պաղմէցի, ա՛յ մամա, ըսի, ըսենց ըսենց: Ըսեց՝ «Ա՛յ բալա, վէկալա, քեզի նեղութուն կըտա»: Մընաց, ըսի՝ «Դէ լավ, կըվէկալեմ»: Մեր հարէվանի հօրքուրի տըղէն էրգու իրեք ամսըգան էրէխա ունէր, էգավ, ասեց՝ «Քեռուկընիգ, արի էրթանք՝ էրէխէն հիվանդ ա»: Ասեց՝ «Ա՛յ բալա, յես չեմ գ՛ա, Սիրանուշին հան տար»: Էգավ, չըգ՛ընացի: Ասի՝ «Յես տասչոռս տարէգան՝ էլիմ էթամ փըձըցընե՞մ»: Չըգ՛ընացի... Հիրգուն մէկ էլ տէսա՝ փէղն առավ, էգավ կայնավ իմ գ՛ըլխի վըրէն: Ասեց՝ «Հընչի՞ չըգ՛ընացիր, հէլի գ՛ընա, թէ չէ դ՛ու վատ բ՛ան գ՛իմանաս»: Հէլա, մէրըս ըսեց՝ «Գ՛ընա՛, այ բալա ջան, գ՛ընա»: Հէլա, գ՛ացէր եմ նոր, էրէխին բ՛ըռնէր եմ, աղօթէր եմ, վախը չափէր եմ, էրէխէն փըրգըվավ: Ընդորից էս յան նոր յես բ՛ըռնէր եմ: Հիմի իմ թոռին գ՛աս, սօվրում ա քաղաքը, ասում եմ՝ «Տամ քեզի, է՛լի»: Է՛, պըրդի էրազ գ՛ա, օր տամ: Իմ մեծ տըղէն՝ Թէլմանն ըսեց, ամենամեձը, առթէն վացուն տարէգան մառթ, «Մամա՛, տուր ընձի»: Ասի՝ «Ա՛յ բալա, էրազ պըրդի գ՛ա, առանց էրազ յես վո՞նց կանամ: Չեմ կարա տա,- ասէցի,- ըսեմ՝ արի էս գ՛ոռձը էրա՞»: Մեր հարէվանի էրէխէն հիվանդ էր յեղե: Յես ու իրա տատը կըռվանք, հէրն ու մէրը էրէխէն բ՛էրին, մըդաձէր ի՝ չըբ՛ըռնի. էսա մեզի կըբաձ ա: Ըսի՝ «Չէ, յես կըռվէր եմ Արուսի հէդ, չեմ էթա»: Էգավ կայնավ, ասեց՝ «Հընչի՞ չըգ՛ընացիր, էրէխէն ի՞նչ էր էրե քեզի»: Հէլա գ՛իշեր գ՛ընացի, ժամի իրեքին էդ էրէխին նոր աղօթի, բ՛ան էրէցի, թօղի էգա:

Սիրանուշ Մուրադյան, ծնվ. 1926 թ.

***

## Ֆիդայինի երգը[143]

Հէսօր Ալադաղ, հէքուց վըր Սիփան,
Էլօր վոն զինա, վոր քար ու կապան,
Աստված ֆիդայուն յեղի պահաբան.
Զöրգէք տըղէգներ, թըխ փիլա ձ՛եր թուր,
Օր ազադ յեղի խայոց խող ու ջ՛ուր:

Ալային էգե փաթե չորս բ՛օլոր,
Ֆիդային յեփ ա մնացե մօլոր,
Մէզի դէմ խարիր öսկöր ա հէսօր,
Զöրգէք տըղէգներ, թըխ փիլա ձ՛եր թուր,
Օր ազադ յեղի խայոց խող ու ջ՛ուր:

Ֆիդային հուխտ ա էնե սըրփազան,
Օր թասլիմ չեղի դուշմընին գ՛ազան,
Քու խամար կյանք լէ կիդա Խայաստան.
Զöրգէք տղէգներ, թըխ փիլա ձ՛եր թուր,
Օր ազադ յեղի խայոց խող ու ջ՛ուր:

Իմ քաջ ֆիդայիք, հա գ՛ացէք հառաչ,
Գ՛ըլխուց վեր պախէք Անդրանիգի աչ,
Էն վախտ աշխըրքին կեղինք մենք ճանանչ,
Զöրգէք տըղէգներ, թըխ փիլա ձ՛եր թուր,
Օր ազադ յեղի խայոց խող ու ջ՛ուր:
Գ՛էվօյ ախչիգն եմ ձ՛էզի պարդազան,
Իմ ախպեր Սիրօն ձ՛էզի օքնազան,

[143] Այս և Թեղենիքին վերաբերող հետագա նմուշները վերցրել ենք ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 108 տետրից: Գրանցումը 1980 թ. կատարել է մանկավարժ Նվեր Հովհաննեսի Մանուկյանը: Ցավոք, նա չի հիշատակել ասացողին:

Զ՛եր թալուզ գ՛ընդազ չեղի ցիրուցան,
Ջӧրգէք տըղէգներ, թըխ փիլա ձ՛եր թուր,
Օր ազադ յեղի խայոց խող ու ջ՛ուր:
(1907-1908 թթ.[144])

***

## Ախ, իմ Մուրադ

Մուրադ գ՛իքա Ծաղգանց սարէն,
Մարմանդ-մարմանդ գ՛ընցի դ՛աշտէն,
Բ՛ացվեր ա իմ սըրդի յարէն,
Վին կըթօղեմ քէզի, Մուրադ:
Ախ, իմ Մուրադ՝
Խայոց Ցեփրադ,
Իմալ աբրիմ
Ցես քէզնէ զադ:
Զ՛ըմեռ ա, ձ՛ուն, բ՛ուք ու բօրան,
Քէրիմ փաշի տուն-տեղ վէրան,
Ալաշկէրդցիք քօչեր բ՛արցան,
Խըդ ափէրօվ հէլան գ՛էդի:
Ախ, իմ Մուրադ՝
Խայոց Ցեփրադ,
Իմալ աբրիմ
Ցես քէզնէ զադ:
Մէր ու մանուզ պաղաձ ափին,
Ուր մէչ կառի կադըուզ լափին,
Մուրադ գ՛ըլօխ կիդա քարփին,
Արուն լալօվ գ՛ընցի կէրթա:

[144] Նմուշը հօրինելու ժամանակն է: Ասացողի մասին տե՛ս հաջորդ նմուշի հղումում:

Ախ, իմ Մուրադ՝
Խայոց Ցեփրադ,
Իմալ աբրիմ
Ցես քեզնէ զադ:
Մօրէն յեղա վըր քու ափին,
Իմալ թօրգեմ քէզի թուրքին,
Աշխար, թըքում յես քու վարքին,
Դոր գ՛ախտենք մեր խող ու ջ՛ըրէն:
Ախ, իմ Մուրադ՝
Խայոց Ցեփրադ,
Իմալ աբրիմ
Ցես քէզնէ զադ:
Գ՛էվօյ ախչիգ էլ բ՛ուն չունի,
Մըչ աշխըրքին էլ տուն չունի,
Մէկ Մուրադ ա, էրգուս չունի,
Մեռի բա̈լքի, մընի ըստեղ:
Ախ, իմ Մուրադ՝
Խայոց Ցեփրադ,
Իմալ աբրիմ
Ցես քեզնէ զադ:
(Հորինվել է 1915 թ. դեկտեմբերին՝ փախեփախի օրերին[145])

[145] Բանագետ Սերգեյ Վարդանյանը վկայում է, որ բանահյուսական նյութեր հավաքելու իր կոչով տարիներ առաջ այս երգը գրի է առել նաև ասացողի դպրոցական թոռը, իսկ ասացողը Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկն է՝ Կաքավ անունով, որ այդ ժամանակ 106 տարեկան է եղել: Ժամանակին Ս. Վարդանյանը երգը հրապարակել է մամուլում և «Հրեղեն ձին» ժողովածուում:

***

## Երգ նորահարսին

Իմ խարս խօրօդ ա
Քընց շուշա տիգին,
Գ՛եղ կայնե թամաշա
Ընդրա շնօրքին:

Իմ Մարդօն թաք ա,
Չունի թեվ-թիգունք,
Չըմըրես, լաօ,
Ընդրա աչք ու հունք:

Սուրփ Քանչէլազ՛օրձ,
Թալէր եմ քու թօռ,
Իմ Մարդօն խեղջ ա,
Էնես պադվավոր:

Յօթ վորթի իդաս,
Յօթ կըրազ ու խուր,
Յօթ մադաղ բ՛էրեմ,
Կայնըցում քու դ՛ուռ:

Ճըրաք յեղնիս, լաօ,
Լուս իդաս իմ տուն,
Յօթ տարի քու կէսրար
Չիմնա քու լէզուն:

Քու խէրն ա, լաօ,
Քու կէսրար Արուջ,
Հըմէն հեղ լըվաս
Ընդրա փօթ ու բ՛ուջ:

Քու կիսուր սաղ ա,
Հէքուց էլ չեղի,
Քու մօր կաթ, լաօ,
Քե խալալ յեղի:

***

## Երգ աղջկա ծննդյան առթիվ

Ախչիգ ա յեղե, դարդ մ'էնա վորթի,
Զ՛օչնա կըղ՛առնա մէ օջախի հուս,
Ախչիգ յա տըղա՝ մէգ ա, հիմացի,
Տըղէն խօր փարքն ա, ախչիգ՝ խօր նամուս:

Թըխ զընգա քու տուն ճըժէրու ձ՛էնէն,
Դ՛արդագ չըմընա, չէղնի ավեր բ՛ուն,
Օր առօվ-փառօվ խարս տաս հուրիշի
Ու հուրիշից լէ խարս բ՛էրես քու տուն:

Ճիժ ու պիժ պախա քընց թառ-թառ ծաղիգ,
Ախչըգա խամար քու աչք յեղի լուս,
Տըղէգներ ունիր, պագաս էր ախչիգ,
Տըղէն խօր փարքն ա, ախչիգ՝ խօր նամուս:

***

Արեվ զա̈րգե Նըբադ սար,
Գ՛ըլխուն թասագ օսկէշար,
Քէզի աչքօվ էնէցի,
Ախ, ինչ անուշ խընդացար:

***

Ալաշկերդա դ՜աշտ դ՜ուրան,
Խայոց մէգէլ օրօրան,
Մեռիմ ընդրա խող-ջ՜ըրուն,
Մըչ աշխըրքին չըկա նըման:

***

Յերգիր կարօղ ու էրազ,
Մըչ իմ սըրդին դ՜ու մուրազ,
Յեփ կըբ՜ացվի ճար-ճանփէք,
Ախ, գ՜ամ, հընցիմ յես Արազ:

***

Իմ Կազի գ՜եղ, Կազի գ՜եղ,
Մըչ աշխըրքին անուշ տեղ,
Քու խող ու ջ՜ուր վոն ունի,
Մըչ իմ մըդաց ամէն հեղ:

## Մրգաշեն գյուղ

***

Ճաշ չի կառնում ուտէր ի, բ՜ըժիշկն ասէց՝ «Մայրի՛կ ջան, վօր ասեմ՝ լեղապարկ չունես, կըհավատա՞ս»: Ասի՝ «Հընչի՞ չեմ հավատա»: Ասեց՝ «Ծօրանըտ չօրացած, լեղապարկըտ թառամած, դ՜ու վօ՞նց ես ապրըմ»: Ասի՝ «Յես էս իրեք տարի վատ եմ ըզգածե, բայց չեմ հասկըցե՝ ինճ է»: Քըրիստոսը մեր բ՜օլօրի մէճը… էսի մէ հատ տէսիլկ յելէր չօրս օր հառէճ: Միշտ յես տէնում եմ տէսիլկը: Վադ ի: Ասի՝ «Հէրմի՛նէ, մէ հատ դ՜եղ լը տուր խըմեմ»: «Մամա՛, ի՞նչըտ ա»: Ֆըլան ֆըստան տըվին, պարզա: Էն վեռճի սէնյազըն իմըն էր: Աղօտէցի պարզա: Էս նըզարներն հըմէն իմ կողքին, փառաբանում եմ: Հէրեսըս արէր եմ պատի յանը... Մէկ էլ տէսա՝ ըսենց, մառտ չըկա կողկիս, ըսենց վէրմազըս բ՜ա՜առծըրցավ, էս քըշերանոծըս բ՜առծըրցըրին, տէնում եմ՝ մէ հատ էսքան դ՜եղին ծաղիկ դ՜ըրին

ըստեղ ու գ՛ընացին: Վա՛յ, փառք քեզի, Տէր, մենք ասում ենք՝ իշի յօնջա, դ՛եղին, էտ ծաղիկից էր, սարի կանթապի ծաղիգ էր: Այսքան ծաղիկ, դ՛ըրին ըստե, գ՛ընացին: Հէսօր իրեկ օր, չոռս օր կառտօշկի ժարիտ եմ ուտըմ... Վօշ մի բ՛ան չի ուտըմ, ինչ ուտըմ ի՝ վատընում ի: Կառտօշկի ժարիտ եմ ուտըմ, է՛ս եմ ուտըմ, է՛ն եմ ուտըմ, խընձոր եմ ուտըմ, տանձ եմ ուտում, փառք եմ տալըմ Տիրոջը…

***

Բ՛ընիկ դօվրէցի յեմ հէլե, էկէր ենք ըստե: Սէրօժի կընիգն եմ, Դօվրիյա ծընունդ եմ: Իմ մառթն ասավ՝ «Իմ պապական տըները յես չեմ քանդի», մընացէր էր, էտըմ ինք... Կօվ եմ կըտե, ֆոռթ եմ պայե, էն գ՛այ, բաղ եմ թաղե, բաղ եմ բ՛ացե, մանզաղ եմ քաշե, գ՛էրընդու յեմ քաշե խօտի, կամ եմ քըշե, արէր եմ... Ընենց տէկօր կընիկ ունէր ի, վօր մօրից առավէլ էր իմ համար... Տէկըրըս զիվմ թակավորըն էր, օտաղի վէրեվի ճագատին ին քընըմ մառտ ու կընիկ, հաշտին էլ՝ կիսուր կէսրարըս... Հավակույտի տըները չեմ էտում... Օ՞վ փող չէր տա, վօր մէ հատ փօկըր ժամ սարկէր ին, էտար ին, ծընգի գ՛ար ին Տիրոչ դ՛էմը, մոմերը վառէր ին, խունգը ծըխէր ին... Յես հուրիշի տըները չեմ էտա: Էրնէկ էտար ի Դօվրի, յէգէղէցին մոմ վառէր ի, ծընգի գ՛ար ի, աղօտկ անէր ի, էն խըցէրի մէճը չօկէր ի, գ՛ըլօխըս դ՛ընէր ի էն քարի վըրէն, աղօտկ անէր ի, դ՛ուս գ՛ար ի, մըտնէր ի խօրանը...

Նինել Մուրադյան, ծնվ. 1935 թ.

## Նոր Գեղի

***

Ուրէմը, թաքավօրի ախչիկը չի խօսում, մէծացէ, ամուսնանալու ժամանակն ա՝ չի խօսում: Թաքավօրը տէնում՝ դէ ճար չըկա, ասում ա, հրաման ա առցակում, ասում ա՝ «Օ՛վ իմ ախչըկան խօսցըրէց, տալիս էմ իրան, հարըստությանըս կէսն էլ հէտը»: Ու գալիս էն, դէ բնական ա, հայտարարություն ա էղէ, մառթիք հա-

վաքվում էն: «Օ՞վ ա ուզում խօսցրնի»: Օվ գալի՝ էթում ա, օվ գալի՝ էթում, չէն կարում: Մէ հատ չօբան տըղա յա գալի, սարի չօբան տըղա: Նըստում էն, սաղ պալատականնէրը նըստած, էդ ախչիկն ըտէ, էս տըղէն պատմություն ա պատմում: Ասում ա՝ «Ժօղօվուռթ, լըսէք, մէ հատ պատմություն պատմէմ ձէզ: Ուրէմը, տէրդէրը, պըլօտնիկը, մէկ էլ դէռցակը ճամփա յէն էթում իրար հէտ: Մութը տալի, հասնում էն անտառի բէրան, դէ հիմի մութ ա, էլ ո՞ւր էթան: Ասում ա՝ դէ ստէից ապահօվ տէղ չըկա, ստէ հանգըստանանք, առավօտ կըշարունակէնք ճանապարհը: Դէ վօ՞նց հանգըստանանք, դէ հէռթօվ կանգնէնք, է՛լի: Էրկուսը քընում էն, մէկը նըստում ա: Սկըզբից պըլօտնիկն ա կանգնում հէռթապահ, էրկու ժամ վօ՞նց անի էտ մառթը: Բըռնում ա, մէ հատ կօճղ ա բէրում ու առձան ա քանդակում, ախչըկա առձան: Ժամանակը լըռանում ա, էդ առձանը ըտէնց թօղում կանգնած, դէռցակին ձէն ա տալի. իրա հէռթն ա: Ինքը քընում, էնի հըլնում, նայում ա, տէնում՝ ախչըկա առձան ա կանգնած: Ասում ա՝ ա՛յ մառթ, էսի իմ ընգէրն ա սարքէ, է՛լի, յէս էլ սըրան շօր կարէմ: Էս էլ սաղ քըշէր նըստում, շօր ա կարում սըրան էդ էրկու ժամվա մէչ, հաքցընում, առթէն ախչիկ ա: Էս էլ տէրդէրին ա ձէն տալի ու քընում: Տէրդէրն ըլնում էլի նայում, տէնում ա, ասում՝ էս իմ ընգէրնէրը իրանց հունարն էն ցույց տըվէ, է՛լի, յէս էլ իմը ցույց տամ: Սըրան շունչ ա տալի»: Հիմի էտ տըղէն պատմում, ասում ա՝ «Ժօղօվուռթ, պալատականնէր, տէրդէրը շունչ ա տալի, էտի դառնում ախչիկ: Հիմա էս իրէքի մէչ կըռիվ ա ընգըռնում. էնի ասում ա՝ իմն ա, էնի ասում՝ ընձի յա հասնում, էնի ասում՝ ընձի յա հասնում, էտ ախչիկը ո՞ւմն ա հասնում»: Վօփշէմ, էնի ասում՝ սըրան, էնի ասում՝ սըրան, էդ ախչիկը ընդէից խօսում ա, թաքավօրի ախչիկը, ասում ա՝ «Յէս չըգիդէմ՝ էտի ումը հասավ, բայց դու ընձի հասար»:

Սամվէլ Խուրշուդյան, ծնվ. 1950 թ.

## Նոր Երզնկա գյուղ

***

Մենք Մըշվա Բ՛աթնոց գ՛ավառից ենք էկե: Էտի յես չըկըռնամ, մեռիմ քեզի, հընչի՞ յա կըխօսամ, խօ յես... Դ՛ու ընձի օյաղ չըտէնիս... Ամէք մառթ հիրա լէզվօվ ա կըխօսա, մէծամասնություն մառդունէցի յեն ու ախալքալակցի: Աշխատէր եմ բ՛անվոր, մէնձըցէր եմ բ՛անվոր, չա՛րի մըկա բ՛անվոր... Գ՛օղություն էլ կէնի, բանգ էլ կըթալնի, գ՛ըրա՛ կուզես: Մենք հուրիշի յենթարգվէր ենք, մինչեվ մըկա հուրիշի էլ կըյեն-թարգվինք. վախտըմ՝ թուրքին, մըկա էլ՝ ըռըսին: Մեզի պաղ-մություն զօ՞՝ քեզի պաղմէլ: Գ՛ըրակետ մառթըն դ՛ու յես, ընձի յես կըխառցուս... Վօրօվհիտեվ հիրար բ՛ըռնել չըկար հայէրու մէչ, մէկըն մէկին տակ ա կըքանդեն, իմալ օր դ՛ու էկէր էք, մեր տակ կըքանդէք, էդպէս էլ մեր գ՛եղացիք: Խա, բա ընչի՞ էք էկե: Խօսա՛, դ՛ու ընձընէ գ՛ըրակետ, խօ քե չըտանի՞ն դ՛ատեն... Չօռս խարիր խատ կընիկ օր ունէնամ, կըսեմ՝ կընգըտիկըս, օր մէկ կընիկն ունիմ, կըսեմ՝ կընիկըս... Հօրի յես քառսունիրեք թիվն եմ, քու պա-պըն կարօղ ա յերկար ա աբրե...

Այվազ Համբարձումյան, ծնվ.1943 թ.

***

Փախծըրիլ է, տունը նըստած էմ էղէ... Հէրըս խօռթ էր, մէրըս տունը չէր, հարէվաններուն ախճըգնէրօվ նըստած էինք, ասօնք իրէք ախպօրմօվ ու հարսը՝ մէծ ախպօրը կընիկը առած էկան: Մէնք էլ, թընդիր կար, թընդիրի մէչըն կախվէր ինք, թընդըրի մըչէն քաշէցին ու տարան: Վօչ ալ տէսէր էի, փախուցին տարան իրենց տունը: Քէռուն կընիզը ծէձէր զը, ջ՛առթէր զը... Ի՛նչ ըսիմ, հէր ալ չունիմ... Կաշէր, կըսէր՝ մեխք է, հինգ տէքէրկին, հընզի մէչ ընձի լավ կաշէր, մէ չօռըմ ընձի չի ըսէլ, մէ պան չէ ըսէլ, վօչ ալ հօրըս է քըրվէ, ավուր մը ասիզա հէչ մէ բան չէ ըսէ, անքան վատ օրէր էմ տէսէ, հէր ալ չունիմ...

Ոսկանյան (հաջորդ բարբառախոսի կինն է), ծնվ. 1931 թ.

***

Կէրթայինք հոտաղի հետ, վար կէնէին, օրական ամէնիս մի հաց չէր հասնի, չըկար... Պաբըս էրկու ջ՛ավալ ցորեն առավ բ՛էրեց, հէդօվ հորըս ալ բ՛անակ տարան... Քընացի չօբան, օչխարի չօբան: Հէրս ալ բ՛անագ էր: Գ՛արի ցանէինք կը: Հընարավօրություն չըկար, վօր հարսնիք էնէինք: Օր սարըն էի, սարն էի օրա՝ օչխար կըկըթէր, փախուցինք բ՛էրինք...

Ավագ Ոսկանյան, ծնվ. 1927 թ.

## Սարալանջ գյուղ

***

Մեր պաբօնք էկէր են Մըշի Բըլանուխից, Գյաբօնէրից, կայնի ըսեմ, ճզի՛զ ջան, պաբաս՝ Մըշի Սուլթանլուից, գ՛ըրա՛ դ՛ու... Ցէս լավ ընդանիկ էմ հընգէ, կէսրարի թախում լավ ժօղօվուռտ ին, հըլա գ՛ընա մէ քանի մառտից հառցըրա՛... Տաջգաստանից էգած կէսուրի կէսուր ունէի... Վեց-յօտ հատ կօվ ունինք, մօզի ունինք, օչխար... Խազ չունինք: Էն ժամանագ օր նօր բ՛աժանվա էգա, օչխար պահէցի, տէղաշօրըս լա՛վ տաս-տասէրկու ձ՛էռք քըցէցի: Ցես կօլխօզից չէի կըրա գ՛օղուտյուն անէի. յես իմ կյանկում վօշ թօղէր էմ իմ էրէխէն գ՛օղուտյուն անի, վօճ էլ յես էմ արե: Ծընվէր էմ, մինճէվ հիմի վօ՛ճ վադ էմ աբրէ, վօ՛ճ էլ վատ շըրջապադ էմ հընգէ, գ՛օյ էմ:

***

Մէրըս էն էր ասում օր՝ ասում էր՝ հիրա հէրանց ժօղօվուռթին լըռիֆին՝ լըցրէ կընանիկին մարակ, վառէլ էն, իսկ մառտիկին էլ սաղ տապօռօվ ... Մինուճար մի հատ քէռի էմ ունէծէ՝ իրէկ ամսըվա ամուսնածած, բ՛ան էն արէ, մարմինը շինէր են գ՛ըրբան, ձ՛էռնէրը մըտծըրէր էն մէճը: Աղամնէրը քաշէ շարէր

էն ճազադին, նօր սպանէր էն: Ինձ ա՝ իրա հէրը կիռտ ա էղէ, աշխադէր ա գ՛ավառում, իսկ հայր իրավունկ չունի ըղէնց աշխադանկ անի. իրա ընդանիկին ըղէնց դաժան էն վէրաբէրվէ: Իրէկ ախպէր էն էղէ, յօտանասունհինգ շընձից մինակ քէռիս ա ազատվէ, մէկ էլ էդ քէռուս կինն, օր ըղէնց դ՛աժան ըսպանէլ էն: Իրանկ քըռդէրի մէձ էն էղէ: Մէ հատ քուռդ էտ քէռուս բ՛էրէ, մօղկըցըրէր ա հըռուսնէրին, օր իպըր փըրգըվին, է՛լի, գ՛օնէ էդ մէծ ընտանիկից էդ էրկուսը փըրգըվին: Էդ ժամանակ ռուսնէրը ուզէցէր էն էդ քըռդին խըպէն, իմ քէռուս կընիզը իրան քըցէ օղնէրին, խընթըրվէ, թէ՝ խընթըրում էմ, օր ինկը մէզի… Ըղէնց էդ էրզուսը էզէլ էն բ՛ան, Թիլվիզ: Իմ պապօնկ էլ էզէլ էն Լէնինազան, մածէր էն Լէնինազան, ընդից հէղ էն էզէ Աբարան, Աբարանից էզէ նօր ըստէղ բ՛ընազվէր էն:

Արուս Գրիգորյան, ծնվ. 1929 թ.

## Քանաքեռավան գյուղ

***

Ասըմ ա՝ ամէն առավօտ կալիս էն, տէնում էն, ասում ա, ծիէրը քըռտինքի մէչ կօրած էն: Ա՛յ մառթ, էս ի՞նչ ա ախըր, ծիէրը գ՛օմումը կապած, ինչի՞ պիտի քըռտընէն: Վէռչ, հէտէվում էն, հէտէվում էն, տէնում էն՝ էտ քաշկը կալիս ա, ծիէրին էնքան ա չարչարըմ, վօր ծիէրը ըտէնց քըռտինքի մէչ կօրան: Վէր էն կալըմ, թամքի վըրա կուպըր էն քըսըմ: Սատանան նըստըմ ա ծին, կըպնըմ ա, էլ չի կարըմ պօկվի: Առավօտ նօր պըռնում էն սատանին: Էտ պատմությունը ըտէնց էին ասում, է՛լի: Տըրանից մընաց Մա̈լիքանց քաշկը: Վօր մէկը մի քիչ սատանայություն էր անում, պա̈ն, ասում էր՝ Մա̈լիքանց քաշկըն էս տու:

***

Էտ Մա̈սըրվանիս վօր աւում էմ, ըտէղ քինում ինք, տըրանց կեղի վիրէվը պան կար, հին, ավէլի շուտ մատուռի էր նըմանում, քարէրօվ շարած էր, պանօվ չէր, էլի, սօվօրական բազալտ քարէրօվ շարած էր, մանըր քարէրօվ: Ըտէ քինում ինք, մօմ ինք վառըմ, կ՚առ-մառ ին մօռթըմ, մատաղ ին անըմ: Կալիս ինք, տըրանից նէրքէվ հառթ տէղ էր, քառասուն հատ ախպուր էր հէլնում ըտէ: Ուրէմ էտ իրէք կեղի՝ ա̈լա̈հէրցի, վիշնէցինէրը, մէկէլ մա̈սըրվանսցինէրը, մէր կեղից էլ ջա̈հէլնէրը քինում էին, Շուռութից, Փարաղաշից, Կ՚ա̈ղից ջահէլնէրօվ քինում ինք, մասնակցում էինք: Ըտէղից վէռչացըրնէլուց հէտօ կալիս էինք, գէտը պըտի անցնէինք: Ըտէղ առթէն տէնայիր՝ ճըրօցը, իրար ճըրէլը վօնց էր ըլնում: Ճըրըմ ին, ճըրըմ ին, էլ ընդէղ կընիկ, ախճիկ, մէծ, պուճուր՝ ըտէնց պան չըկար: Վօրը վօր հանգառծ չըթօղնէր, զօռօվ պըռնէլու էին, անպայման ճըրում լօղացըրնէին պաց թօղնէին: Ըտէնց պան չըկար, սաղին ճըրում էին:

Համլետ Սողոմոնյան, ծնվ. 1936 թ. (Փարաքաշտի խոսվածք)

***

Առաչի կուռսը պըռձա, Ախըլցըխա կըսօրվէի, Ախըլցըխա էմ յէս ավառդէ, տէխնիկում: Առաչի կուռսը պըռձա, տարան բանակ: Էրգու տարի ծառայէլ էմ, էգէ շարունագէլ էմ տէխնիկումը, պըռձէլ... Դ՛ըրռօցէն իրար կուզէինք... Էգէլ էմ, տէխնիկումից հէդօ գ՛օռձի մըղա ռայօնը, մէ քանիմ օր հէդօ պաքաս ըսավ՝ եթէ կուզէս տէղափօխվիլ, ուրեմ գ՛օրձէղ դ՛ուս արի: Ութանասունվէց թըվին յես էգէլ էմ էստիղ: Մէնակ հայրըս մընաց մի տարի, մեր տունը ծախէցինք, մենք հըրնդանիքօվ էկանք: Մինչէվ տիեղը մառթ գ՛ըտավ, վօր աշխաղի, նօր իրէն գ՛օռձէն ազադէցին, նօր էկավ: Ընդիղ անէրանքս էն, մէկէլ մէր ազգից մէ էրկու տուն կա: Հըմի ընդէղաց աքրէլակէրպը ավէլի հէշտացիլ է, կառտօշկա կըցանին, լավ կառտօշկի յէրգիր է, ու հիմնազան սաղ տանին զը Թուրքյա, Աղըրբէջան: Անցյալ տարի տաժէ յես կեղ էի կընացե, Թուրքիայի

շօֆերը՝ աղըրբէջանցի, ինքը էգիլ կայնէլ էր մեր կեղէն քառտօլ կը պառնար: Աղըրբէջանու էգիլ քառտօլ կըտանի… Աշխադէլ՝ չիդէմ, բայց նույն օրը Թուրքյա կէրթան տառնան զը, բ՛աջանաղըս կընաց տառցավ էգավ, Ղարզախօվ՝ Ջիվանու կեղօվ, մինք Ղարզախ կըսինք, Ղարզախօվ պըրյամօ ճամփա կա:

Կարեն, ծնվ. 1961 թ. (Ախալքալաքի Փոքր Խանչալի գյուղից)

## Քարաշամբ գյուղ

***

Իմ պապը շատ խօրօտ բօյօվ տըղամառթ ա եղե: Հինքըն խօրօտ ա եղե, ունէր մէ հատ էլ կօլօտ ախպէր՝ կակօ Առշակ: Կօլօտ մառթ էր, բ՛այց էլի ճառպիկ: Ուրեմ էս իմ պապը, մէ հատ էլ ընձի տատ ունի... Սաղ գ՛եղն էլ սիրում ին էտ կընօջը, լավ բ՛արի կին էր եղե, ասում ա՝ օվ սօված էր, իրանք ունէցիր ին, ասում ա՝ լավաշըն ըսենց կըղ՛ընէր ծոցըն, օվ վոր ընենց մէ քիչ նեղության մէչ մեր դ՛ըռնօվ ընցե, իմ տատըն հանե հաց ա տըվե: Ղումաշ էր իմ տատի անուն, շատ են սիրե: Ղումաշ ունէցե էրկու տըղա՝ իմ հէրն ու իմ հօրօխպէրը: Իմ պապըս, ուրեմ, էն հընգերն էր պատ-մում՝ Բօզօյ Սարքիս, ասում էր՝ էն գ՛յախն օր քօլօզ գ՛ըլխին էն յանից գ՛ըկյէր Նա՛զա՛ր՝ թըվանք ուսըն քըցուկ, կասիր՝ յերանեկ քօ տիրոջ: Ձ՛իյօվ է ման ա էկե, ձ՛իյավոր ա հէլե: Ուրեմ էսի կընիկ բ՛էրե, էրկու տըղա յէլ ունէցե իմ պապըն: Գ՛ընացե ինչօր մի տեղ, յերկըրում հըլը, մէ հատ սիրուն ախճիկ ա տէսե՝ տասնըվեց տարէկան: Միրեր ա էտ ախճըկան, խավնե, խավներ ա: Միրե էտ ախճըկան, սիռտըն կըպե, հընգերօչ հէտ գ՛ընացե, Վըռթօյ հետ գ՛ընացած, փախցըրած էտ ախչըկան, բ՛էրե հիրան կընիկ: Իմ տա-տին էլ յա՛քա՛ էրկու-իրեք էրէխատէր մեծ կընիկ ա եղե, շատ էլ խանդոտ ա եղե տատըս: Ուրեմ, խանդե, է՛լի: Էտի խառսին օր բ՛էրե, ընդե էն վախտ, ըսենք, մէ հատ օդա յա եղե, սաղօվ մէչն են քընե, մէ հատ էլ մառան են ունէցե: Առե ըտըրան, Նազանի յա եղե անունըն, Նազօյն առե էտ մարաքի մէչ ա քընե, է՛լի: Ցերզըրօռթ

կընիկ ա բ՛էրե: Վեռչ, բ՛այց հիրա կընգան չի բըրախե, ասե՝ յես իմ կընգան է, էրէխէքին է կըպախեմ: Մի տաս օր ըտեղ իրար հէտ ապրէր են, էս իմ տատըն, դէ գ՛իշեր ա է՛լի, հինքն էլ ջահէլ կընիկ ա եղե, խանդից չի կարէցե քընե, հէլե գ՛ընացե, ասե՝ էթամ տէնամ ի՛նչ կըխօսան հիրանք: Գ՛ընացե գ՛իշերա մութ, էդ մառանին էլ յեռթիկ ա ունէցե, լուսնի լուսն էլ հընգեր ա էտ մարաքի մէչ: Էս իմ տատն էսենց իմ նըման մազերըն զա՛վ՛ա՛զըջի, քընից օր էլի մառ-թըն, մազերըն վօնց պըտի ըլի, լավ ըսենց գ՛ըզզ՛ըզված մազէրօվ, հուշիկ մըտե էտ մարաք, օր տէնա՝ ի՛նչ են խօսում: Գ՛իշերվա ըտենց մէ տասէրկուսի յաներն ա: Մըտե, ըտըրանք էլ՝ էտ պապըս քընուկ ա եղե, Նազօն զառթուն ա եղե: Օր մըտե, էտ լուսնի շօղի մըչօվ օր անցե, ըտըրա մազերըն… Նազօն հանգառծ աշկեր բ՛ացե, մէնակ գ՛ըլօխն ա տէսե: Էդ մազերն օր տէսե, մէ հատ ճըչացե ու ուշաթափվե: Լէզուն բ՛ըռնըվե էտ խեխճ ախճըկա: Էս ճըչօցից իմ պապ զառթնե, պապըս զառթնե՝ Նազօ՛, Նազօ՛, Նազօն չըկա: Մէ կերպ ջ՛ուր քըցե, հէլե՝ Նազօն մեռավ, Նազօն... Տատ գ՛ացե հիրա-նից դավօլնի, յա՛նի խա՛բա՛ր չեմ, գ՛ացե իրա համար մըտե իրա տեղեր: Գ՛էլին, Նա՛զօն առթէն ընկընավօրության բ՛ան ա ձ՛եռք բ՛էրե, կուշաթափվի օրվա մէչ, էրէխա ախչիկ, է՛լի, վա՛խէցե, կու-շաթափվի… Մէկէլ ասում են՝ մէ գ՛եղ դուլ կա, նայօղ կա, Նարէկ ա կառթում՝ լավանում են, տարէք ընդեղ թօ գ՛ըլխին Նարէկ կասի, թէ ինչ անի, վեռչապէս էս հառսըն լավանա: Ըսանք էլ ընդեղ առթէն ունէցեր են քուռդ թըշնամիներ, միշտ եղե հայի ու քըռդի թըշնամություն եղե... Մերըն՝ աշխատավոր ժօղօվուռթ, ընդըրանք՝ թալանչի, քօչվոր ցեղ, սօվոր են, օր միշտ ըտըրանցից գ՛օղնան տանին. թըշնամի յա ունէցե պապըս, քա՛սա՛ր: Հինքն էլ շատ գ՛եղե-ցիկ տըղամառթ ա եղե: Հէլած, օր գ՛ընացէր են, բ՛ան են անցե, մէատ ըտենց թունէլ ա եղե վօնց օր: Թունէլօվ անցե նօրից հիրա հընգերոչ հէտ, էդ Վըռթօյի հետ, իրար հետ ձ՛իյավոր, դ՛ըրեր ա հիրա թա՛րէքին, ասում, հիրա գ՛իրկըն Նա՛զօյին, տարե: Էտ թունէ-լից անցնէլիս քըռդեր տէսէր են, օր Նազարըն անցավ, էդ իմ պա-

պըն գ՛ընաց: Թըշնամություն ունին հետըն: Ուրեմ տարե, էդի ասե՝ «Պըդի թօղես ըստե մի քանի օր, յես հիրան բ՛ուժեմ». տարե ղըլի մօտ: Թօղե, հիրանք էրկու հընգերօվ դ՛առե էկէր են: Ուրեմ քըռդեր սպասէլուց են եղե դ՛ըրանց: Իմ պապու մահն ըտենց ա եղե: Կէսըն թունէլի էս բ՛էրանի մօտ են պահ մըտե քարէրի հէդեվ, պախկըվե, կէսն էլ՝ էն դ՛ուս գ՛ալու: Սըրանք օր մըտէր են էրկու հընգերօվ, զառզընդէլի թունէլ ա եղե ահակին խոր, մըտէր են թունէլը, էն յանից էլ են բ՛էրանըն լըցվե փազե քըռդեր, էս յանից է: Ըսրանք հըրացաններ թէվներ բ՛ան են արե, է՛լի, նըրանք խա̈նչա̈լնէրօվ, հըրացաննէրօվ լըցված: Օր էրկու կօղմից փազած, էրկու հօքի՝ շատ քըռդին ի՞նչ պըտի անեն: Հառձակվե, ըտըրանց ուղղակի տանջամահ ին արե: Ասում ա՝ իմ պապուն օր խըփէր ին, ըսենց կօղքից խըփէր են սըռտին, խա̈նչա̈լ օր հանէր են, պապըս ըսենց, արունը էկե, ըսենց ձ՛եռըն դ՛ըրե իրա էս կօղին, արունը լեռթացե, ձ՛եռն, ասում ա, օր բ՛էրիր են տուն, ձ՛եռըն կըպած ա եղե ըտե, արունըն լեռթացե, ըսենց կըպցըրե, է՛լի: Էն մէկին էլ տանջա-մահ… Բեղէրն է մինչեվ քաշէր են ըսենց: Ըտենց տանջամահ… Էրկըսին էլ ըսպանէր են: Էրկըսին էլ ըսպանե, գ՛ընացե բ՛էրէր են: Էտի առթէն, հիրա էտ կօլօտ ախպէրըն՝ մեր կակօն, Առշակ էր անուն, բ՛այց հինքըն ռիսկօվ մառթ էր, էտի առթէն ինքն էր պատմում, ասում էր՝ «Օր Նա̈զա̈րին զա̈րկէցին, յես իմ արուն առէ-ցի իմ աչք,- ասում ա,- խարիր քըսանվեց խատ քուռդ սատկէցըցի»: Էտ իմ հօրօխպէրն էր ասում: Ասի՝ էս կօլօտըն սութ ասում, յես պըտի էթամ Սարքըսին հարցընեմ: Գ՛ա̈ցի հիրա հընգերօչ մօտ, ասի՝ էտ ի՞նչ էր, էտի հէրօ՞ս էր... Էն պապըս, ըտենց սպանին, բօյօվ վիդօվ մառթ էր, յերքօղ, ասում ա՝ քօլօզն օր կըդ՛ընէր, կըյերքէր, կըգ՛ըժվին ախչըկներ դ՛ըրա համար: Վեռչ… Գ՛ընացի ասի՝ «Սանահէ՛ր Սարքիս, էս կակօն ասում ա՝ Նազարին օր ըս-պանէցին, յես հարուր քըսանվեց խատ քուռդ սատկէցըցի»: Ասեց՝ «Խա, սատկէցըցե, բայց ի՞մալ…»: Ասի՝ ի՞մալ: «Պախկըվէր քարէրու հէտեվ, թըվանք կըթա̈լէր», յա̈նի՝ կըկըրակէր հըրացանօվ:

Ասի՝ լավ ա արե, նաղդի հիրա վըրէժը… Բա վօր էլնէր, իրան էլ կըսպանին, պախկըվե քարէրի հէտեվ, խըփե, հարիր քըսանվեց խատ քուռդ սատկէցըցե… Ասում ա՝ Նազարի մաուզեր կախէր էր իրա վըրէն, Նազար՝ բօյօվ, հինք՝ կօլօտ, գ՛ետնի հէտ քաշ կէթէր, էնքան կօլօտ էր հինքըն: Բ՛այց, ասում ա, պախկըվէլօվ ըտենց խըփեց քըռդէրին: Էն ախչիկըն, մինչեվ վեռչ էլ... Իմ ախպէրըս գ՛ընաց գ՛ըտավ ըտըրան, ապրում էր Շատավանում, ամուսնացէր էր նօրից (էլ չէր էկե, վեռչ, մառթին ըսպանին), լավացէր էր: Իմ ախպէրըն գ՛ընաց գ՛ըտավ, է՛լի, վօնց վօր մեր տատըն էր, չէ՞…

***

Կէսրարիս մասին է մէ բ՛ան պատմեմ, հազիվ մէ հատ ճար-պիկ կընիկ էր գ՛ըտե… Սահակից պատմեմ, Սահակին կասին քօ-սա̈ Սահակ:Էս քօսա̈ Սահակըն իմ պապայիս խօրօխպօր ախչըկա խէտ ամուսնացե, առեր ա Մարօյին, սիրուն ախչիկ ա եղե Մարօն, յերկիր հըլը Մարօյին առեր ա: Յես ունէցէր եմ էրկու կիսուր, վօրից մէկըն իմ խօրքուրն էր, պապայիս խօրօխպօր ախչիկն էր: Էտ Սըհակըն եղեր ա նայեվ էս Նազարի ձ՛եռի տակ վօնց վօր… Նա̈զա̈ր լայէղ չէնէր ընդըրան հընգեր պահէր… Էկե ուզե Մարօյին, տըվէր են հիրան: Ամուսնացե, հէտօ քըռդեր, լը էտի յերկիր, մուռ են ունէցե, էկէր են էս Ղազօյի ախպօր կընգան, սիրուն կին ա եղե, խօրօտ ա եղե, էտ իմ խօրքուրիս, ըտենց ըտըրանց գ՛եղի մէ քանի ջահէլ խառսնէրին փախցըրե տարէր են գ՛էրի: Ըտըրանց մէչ՝ իմ պապայիս խօրօխպօր ախչըկան, էտ խօրքուրիս էլ են տարե: Հէտօ Ղըզար աղէն կըհամփէրէ՞ր՝ Հայկանուշին տանին, էլ չըբ՛էրին: Գ՛ավաքա էտ մէ քյա̈նի ջիգիթնէրին… Բ՛այց մէ տարի կըմընան գ՛էրի ըտըրանք, տարե ամուսնացէր են, սիրուննէրին գ՛օղցե տարե, ամուսնացիր են: Բ՛այց Ղազարէն չի ընթունե, օր իրա ախպօր կընգան տանեն, շատ սիրուն, Հայկանուշ պատկեր էր, կըշօղէր… Ուրեմ գ՛ընացե ըտենց, մէ քանի լավ ջահէլնէրին հավաքե գ՛ընացե, էտ քուռդերին՝ վօրին ըսպանե, վօրին տըփե ջ՛առթէր են, հիրանց գ՛երինէրին հետ են բ՛էրե: Բայց էտ ընթաց-

քում էտ իմ կէսրարըն թաթարի մէ հատ ուրիշ կընիկ ա ճարե՝ իմ իսկական կիսուրին: Էտ էլ սիրուն չէր Մարոյ պէս, Քըշմօն... Մարօն հէտօ յէր գ՛էշըցե, սիրուն էր: Ըտենց իմ կիսուրին բ՛էրե: Բէրեր ա, առթէն քօւմ Սըհակ պըսակված ա եղե: Առթէն չըհամփէրե, դը տարէր են, էլ ի՞նչ… Մէ հատ անտէր կընիկ պատահե, սիրուն էլ չեղե, էտի իմ մառթի մէրն ա իսկական, Քիշմիշին առե: Մէ էրկու տարի անցե, Ղազարըն խումբ հավաքե գ՛ընացե, էտ ում վօր տարէր են, բ՛էրե: Վօր բ՛էրե՝ բ՛էրե, իմ պապայի խօրօխպօր ախչիկն ա, ընթունէր են հիրանց ախչըկան: Բ՛էրէր են մեր տուն, իմ խօր տուն, բ՛այց հիրա սիռտըն Սըհակից չըկըդրե: Հէտօ էն վախտ ամօթ էր, է՛լի, օր ուրիշի էլին վըռազ առին: Մարօն սուս սուս նըստե իրա խօրօխպօր տըղէքի շըվաքի տակ: Էս Սըհակն էլ Մարօյին շատ ա սիրե, հէլե էկե, ասե՝ «Նա՞զա՛ր, իմ կընգան էկէր եմ տանիմ»: «Տօ, քօւմ՛, դ՛ու մէ հատ էլ կընիկ ունիս, էլ տանիս… Դ՛ու չըհամփէրիր մինչեվ քօ կընիկ գ՛ա»: «Չէ՛, յես իմ կընգան, իմ նամուսն ա, յես թօղեմ Մարօն ուրիշի՞ առի, հընչի դ՛ու կանաս էրկու կընիկ պախես, յես չըկա՞նամ…»: Էդ վախտ Նազարն էտ Նազօյը բ՛էրած ա եղե: Յես իմ կընգան կըտանիմ, օր կըտանիմ… «Ա՛յ մառթ,- ասում ա,- էլ ի՞նչ տանիս»: Ընդըրան էլ քըրոչ պէս ընթունէր են մերոնք, էդ յերգըրօռթ կընգան, մենք ընըրան էլ ինք ասում խօրքուր: Չէ, էս մառթըն կըկըպըռչկի՝ չէ՛, յես իմ կընգան պըտի տանիմ: Մարօն ասա՝ «Վա՞ռթա՛ն, յես կէթամ,- իմ խօրըն ասա,- յես կէթամ, յես …»: Իսկ յերգըրօռթ կընիկըն ասե՝ «Յես կըկախեմ ընձի, յես ընձի կըսպանեմ», առթէն մէ հատ էլ էրէխա յա ունէցե: Չըբ՛էրես, օր չըբ՛էրես: Էս իմ խօրքուրըն գ՛ըկա, Մարօն կասա՝ «Քիշմօ՛, դ՛ու ընձի կիսուր, յես քեզի՝ խառս: Սահակ ընձի պէտկ չէ, քօ մօտ թօ քընի: Բ՛այց յես չըմընամ, է՛լի, անմառթ: Կուզեմ իրա շըվաքի տակ ըստե քեզի կիսուրություն էնեմ, ընձի մառթ պէտկ չէ»: Վեռչ, լա՛ց, մըխկըտոց Քըշմօն, Մարօն կէթա խէլօք, ըսենց խեխճ մէ պատի տակ կընըստի. հէտօ էնքան ին սիրում էտ էրկու կիսուր հիրար… Ուրեմ էտ մառթը մեռե գ՛ընացե,

հիրանք վօնց վօր հիրար սիրահարված, քուրըն ըտենց չէ... Հանգառծ էն մէկի էրէխին մէ բ՛ան ասին, էնի մառթասպանություն կանէր: Ուրեմ սկըզբից էտի խօսկ ա տըվե, օր՝ «Յես Մարօյի մօտ չեմ քընի, ընձի վօրպէս քուր թօ մընա, է՛լի, էս տան մէչ, յես քօ հէտ կըքընիմ»: Իրար հետ են եղե, մէ էրկու իրեք հատ լավ ախչիկներ բ՛էրեր ա էդ իմ իսկական կիսուրը: Մընաց, հէտօ Մարօյը կասինք՝ վօ՞նց հաջօղացըրիր, օրինակ, դ՛ու ասէր իր՝ յես քօ կիսուրն եմ, դ՛ու վո՞նց նօրից գ՛ընացիր մըտար Սըհակի ծոց: Ասեց՝ «Գ՛օթու յարէն թա̈լա Սըհակ, մէ օր ընձի ամբըրոցի մէչ, լա՛օ, դ՛ու էլ իմ էրէխէքն էք, ընձի բ՛ըռնեց: է՛, հիմի ձ՛եռ թա̈լեց ընձի, իմ Գ՛արէզին ծընվավ»: Չի ծընվե լը, բ՛այց ընդըրան առթէն ախչիկներ ունի… էսի ճըժօվ ա… էն վախտ է թունդիր ա տան մէչ, թունդիրըն վառէր են, էսի սըռտխառնոց ունի, հետ ա տըվե... էս իմ կիսուրըն ասե՝ «Քա Մարօ՛, քեզի ի՞նչ եղավ»: Դէ զիդա, օր հիրա մառթը տըրա մօտ չըքընե: Կասա՝ «Չգիդեմ՝ հէրէկ ինչ կէրա, էնենց վատ եմ»: Գ՛էլի հետ կըտա: Հետ կըտա, էս կընիկը լը չի հավատում, օր կարօղ ա պայմանը խախտէր են: Մէկ է մէ հատ բօշա գ՛ըկա: Մէ հատ բօշա գ՛ըկա կըմըտի՝ կըտէնա էտ Մարօն պարկուկ ա էտ թունդըրա կող ու հետ կըտա, ընենց վատ ա: Ասում ա՝ «Չըզիդեմ՝ ուր ա, էս տան կընիկ չեմ յես, ինքըն ո՞ւր ա՝ տուն չէ: Յես քեզի բ՛ան չեմ կարա տամ, գ՛ընա՛, կամ կուզես՝ կայնի, հինքըն գ՛ըկա, շատ վատ եմ»: Գ՛էլի դ՛ուս, Քըշմօն էն յանից գ՛ըկա: Ասում ա՝ «էն քօ խառսն ա, քօ տէքօր կընիկն ա, թէ ինչն ա, ճըժօվ ա, տըղա յէլ կըբ՛էրա»: Քըշմօն կըկատղի, վո՛նց թէ՝ ճըժօվ ա… Կըմըտի կըսա՝ «Մարօ՛,- ըսենց ձ՛եռներն, ասում ա, դ՛ըրեց կօղէրին,- Մարօ՛, էտ հընչի՞ հետ կըտաս»: «Չըզիդեմ, Քիշմօ»: էն էլ վա̈խէցուկ ա, չէ՞, գ՛օղություն ա արե, վա̈խէցուկ ա: Կասա՝ «ճըժօ՞վ ես»: «Չըզիդեմ»: Բ՛այց առթէն կըզզա, օր էտի ճըժօվ ա: Կասա՝ յա՛ա, ուրեմ ըտենց, խա՞: Մառթըն գ՛ըկա տուն, կասա՝ «Սահա՛կ», ասում ա՝ «Ի՞նչ ա, Քըշմօ»: «Մարօն ճըժօվ ա»: «Ի՛մա էնեմ, քօփօղըո՛ւ դէլ, ճըժօվ ա՝ ընձընա̈ յա, իմ կընիկն ա, ընձընա̈ յա»: Օր էտի կասա, էսի

կըլըռփոտի մէ վախտ, իրեք օր լավ հիրա ջրդայնություն կըթափա: Մարօն կասա՝ մէկէ գ՛ըկա, կասա՝ «ճխճի՛», անունն էլ չի տա, էտ յերկըրոըթ կիսուրըս ա պատմում: «Ի՞նչ ա, Քիշմօ»,- ըսենց խեխճ – խեխճ: «Քօ սիռտ ի՞նչ կուզա»: «Ցեսիմ»... Մեխկըն գ՛ըկա, է՛լի, էտի ճըժօվ ա, էտքան յետ կըտա: Ասում ա՝ «Վօսպօվ վըռիկը կուզեմ, Քիշմօ՛»: Կէփա կըր՛էրա, էտի կուտա: Ասում ա՝ յես էլ ըտենց համօվ ճաշ չեմ կէրե: Սիռտըն ուզե, ռիսկ չի արե, օր էտ կընգան ասէ: Վեռչապես, հիմի բ՛այց միշտ գ՛ախտնի յա հանդիպե էտ իմ կիսուրին: Էնի սօվօրական հիրա կընիկն ա, գ՛ընացե քընե ծոցըն առօք-փառօք, էս խեխճըն կայնե տէնա՝ մէ օր է յեփ կըհաջօղի… Դ՛աշտըն դ՛էզի մէչ ա հիրան բ՛ըռնե, վեռչը… Բ՛այց շատ սէրօվ ապրէր են էտ մառթիք իրար հետ: Վէռչապէս, էս իմ կիսուր ունէցե իրեք տըղա: Էնի շարե վեց ախչիկ, մէռածը: Վեռչում հազիվհազ իմ մառթին բ՛էրե… Տըղէքըն Մարօյից են ծընվե, էտ մէկըն՝ Քըշմօյից վեռչում, իմ ամուսինն ա: Ասում ա՝ ըսենց կէնէր. «Քօսա,- էտ Քըշմօն՝ Սըհակին,- դ՛ու գ՛իդես՝ վօր օրն ա տըղի օրըն, էտ օր կէթաս Մարօյ մօտ. վօր օր ախչըկա օրն ա՝ գ՛ըկաս իմ մօտ»: Միշտ Մարօյին էնի գ՛օխտուկ ա հանդիպե...

***

Իմ կէսրարըն, ինչ ճիշտն ա, յես ճիշտ եմ ասում, թա՛մբա՛լ մառթ ա եղե: Էս Քըշմօն տունըն ա շախե, էտ շատ էրէխի մէրըն, Մարօն դաշտն ա եղե: Ուրեմ գ՛ընացէր են Աշարաբաթ քաղ: Իմ հէրըն է բըրիգադիր ա դ՛ըրանց: Ասում ա՝ մէ հատ քօռ էշ ունէր, կընըստէր էտ էշըն կէթէր, էնքան էր, օր Մարօյ բ՛օլոր կըֆըռֆըռէր, Մարօն կըքաղէր: Թա՛մբա՛լ ա եղե, էրկու կընիկ աշխատած, իրան պահած: Խիստ էլ ա եղե: Իմ կիսուրըն կըպատմէր, ասում ա՝ օր կընըստինք հացատուն, ասենք՝ հաց թըխէլու, դէ հաց ա, խըմոր ա, վըռազն ա, շուշուտ, ասում ա, պըտի ավլինք տինք դ՛ըռան քունջ, ասենք, տան հէտեվ, ավելըն տանք դ՛էմ, նըստինք թըխենք, օր հացըն չուշանա: Գ՛ըքէր, ասում ա, տըքալօվ մէ հատ դիփտ

կըվէրցէր, էտ զիբիլըն կավլէր դըֆտի վըրէն, բ՛էրէր կըլըցէր ռաֆաղի վըրէն՝ «Ըստեղ ավէլի լավ ա»: Օր զիբիլըն չենք թափե, ուրեմ փընթի կընիկ ենք: Հինքն էլ գ՛օռծունյա չեղե: Հէրըս գ՛ըքա տէնա՝ ժօղօվուռթ փըռվուկ ա ըսենց Աշարաբաթ, խոտ են քաղում: Ըտըրա էշն է կապած ա ընդեղ, քօռ էշըն... Մէ հատ էլ, ասում ա, թօփալ գ՛էլ կար, ըսկի վ՚ախէցօղ չէր, ըսենց ժօղօվըռթի մէչ մըտնում էր էտ գ՛էլըն, գ՛ըքա, օր էշի փորըն թափա: Մարօն ընդեղ կըքաղա, Սըհ՚ակն էլ կայնուկ, ասում ա, ըսենց կէնա՝ «Մարօ՛, Մարօ՛, գ՛էլն էկավ, Մարօ՛, ա՛ Մարօ, հասի՛»: Հինքըն կայնե, տըղամառթ, Մարօյին կըղըրկա, օր գ՛էլըն էշի փոր չըթափա: Իմ հէր գ՛ըքա կասա՝ «Տօ քօս՚, գ՛էլն օր Մարօյին խըփէր /հիրա քուրն ա, հիրա հօրօխպօր ախչիկն ա/, դ՛ու իմ ձ՛եռից կըպըռծի՞ր, դ՛ու տըղամառթ ե՞ս»: Իմ հէրն էլ հըրացանօվ ման գ՛ըքէր: Հըրացանօվ կըխըփա, բ՛այց չի էլ կարա խըփա գ՛էլին: Գ՛էլըն կըփախի: Թ՚ամբ՚ըլ մառթ էր իմ կէսրար: Կընանիքին նեղե... Էրկուսն էլ օր մեռան, էնի ասեց՝ ընձի չըթաղէք Սահ՚ակի մօտ, էնի ասեց՝ ընձի չըթաղէք Սահ՚ակի մօտ...

Զվեղ Գրիգորյան (Մուրադյան), ծնվ. 1943 թ.

## ԲԱՌԱՑԱՆԿ[146]

**աբէրանցի,** Կպտն., *վիրահատություն.*
**աբուր,** Քսխ., *թանապուր.*
**աբրանք,** Եղվրդ., *անասուն.*
**ագռա,** Քսխ., *ատամ.*
**ադաթ,** Հցվն., **ա̈դա̈թ,** Մյկս., *սովորույթ.*
**ա̈դա̈մպուպուզ տէնալ,** Աղվնձ., *շատ ծեր լինել.*
**ադէ,** Արգդ., Ջվն., Թղնք., Հտս., Մրգշ., Ջրռտ., Սլկ., *մայրիկ.* Մրմրկ., *տատ.*
**ազաբ,** Ողջբդ., **ա̈զա̈բ,** Լռնստ., *ամուրի.*
**ազաբաշի,** Աղվնձ., *հարսանիքի ժամանակ փեսայի կողքին եղող ամուրի երիտասարդ.*
**ա̈զըզցընել,** Մղրձ., *մեկի նկատմամբ ավելորդ հոգատարություն դրսևորել.*
**ազի,** Եղվրդ., *մայրիկ.*
**ազիզ մառտ,** Բժկն., *սիրելի անձնավորություն.*
**ա̈զիզ**, Ալփ., Աղվնձ., Արգդ., Գդդր., Ջվն.,Լռնստ., Հտս., Սլկ., Սրլնջ., **ազիզ,** Ջռ., *հոգյակ, սիրելիս.*
**ա̈զիզը խօրել,** Լռնստ., անեծք է.
**ա̈ժել,** Սլկ., *արժել.*
**ալաղ անել,**Ալփ., **ալաղ անէլ,** Արմս., *քաղհանել.*
**ալաղել,** Ջռ., *քաղհանել.*
**ալայլուղ,** Մրմրկ., պար է.

---

[146] Կազմվել է ըստ ներկայացված նյութի: Բառացանկում «Քնքռվ.» նշումով նկատի ունենք Քանաքեռավանում Կարնո բարբառի խոսվածքի դրսևորումը, իսկ «Քնքռվ.[1]» նշումով՝ այդ բնակավայրում Փարաղաշտի խոսվածքին հարող տարբերակը: Այդպես նաև՝ «Նրզնկ.» նշումով նկատի ունենք Նոր Երզնկայում Մշո բարբառի խոսվածքի դրսևորումը, իսկ «Նրզնկ.[1]» նշումով՝ այդ բնակավայրում Կարնո բարբառի խոսվածքի դրսևորումը:

**ա̈լբա̈լ,** Գռն., **ալբալը,** Քղս., *միանգամից, անմիջապես.*

**ալվէլ,** Զվն., *ավելել.*

**ախճի,** Աղվնձ., Զրռտ., **ախչի,** Լռնստ., դիմելաբառ՝ ուղղված աղջկան.

**ախճիկ հա̈շկադ՛ըրել,** Քղս., *մի աղջկա վրա աչք դնել.*

**ախպէր,** Աղվնձ., Արմս.,Գղդր., Զռ., Հցվն., Մրմրկ., Քրշմբ., *եղբայր.*

**ախպուր,** Զռ., Քնքռվ.[1], *աղբյուր.*

**ախտ հըլնել,** Ալփ., *ուժը պատել.*

**ախտըրվէլ,** Մյկս., *զսպվել.*

**ախքադ,** Զրվժ., *մուրացկան.*

**ածել,** Քղս., *լցնել.*

**ածէլ,** Զրվժ., *նվագել.*

**ակ,** Կտյք., *թոնրի օդանցք.*

**ակընկալ,** Բջն., *թոնրի օդանցքի լաթ.*

**ակուշկա,** Մրզշ., *պատուհան.*

**ակռա,** Գղդր., *սեղանատամ.*

**ահակին,** Գղշն., **ահակ'ին,** Քղս., *ահագին.*

**աղադվել,** Կտյք., *ծննդաբերել.*

**աղավարի,** Մրմրկ., *առատաձեռնորեն, մեծահոգաբար.*

**աղըլ,** Սրլնջ., *փարախ.*

**աղի կոշտ,** Կմրս., *աղի մեծ կտոր.*

**աղինջ,** Ակնք., Բլհվ., Զրվժ., *եղինջ.*

**աղունակ,** Արզլ., *աղավնի.*

**աղքատ խըպառտ,** Կմրս., *կարեկցության արժանի, բայց հպարտ.*

**աղօտկ անել,** Մրզշ., *աղոթել.*

**աճառօվ փըլավ,** Ալփ., *համարով փլավ.*

**ամանչել,** Մրզշ., **ամանչէլ,**Եղվրդ., *ամաչել.*

**ամբըրոց,** Քրշմբ., Կթնղբ., **ամբըրօց,** Արզդ., Սվբրդ., *աթարի դեզ.*

**ամբոտ,** Լռնստ., *ամպամած.*

**ամեղ տեղ,** Լոնստ., *առանց պատճառի.*
**ամէք իրան,** Բժկն., *ամեն մեկն իր հերթին.*
**ամէք մառթ,** Նրզնկ., *ամեն մեկը.*
**ամէք,** Գղղր., Ջռ., Կմրս., Հցվն., Վնտր., Քղս., *յուրաքանչյուր.*
**ա̈մի,** Արգլ., Մրմրկ.,Քնքռվ.[1], *հորեղբայր.*
**ամվէլի,** Կքվձ., *գովական.*
**ամրոց շարել,** Լոնստ., *աթարի դեզ շարել.*
**ամօթ բ՛ան,** Սվբրդ., *ամոթալի բան.*
**ա̈մօղլի,** Կպտն., *հորեղբոր որդի.*
**այա,** Եղվրդ., Ջռ., *մեծ մայր, տատ.*
**այսենց,** Մրգշ., *այ այսպես.*
**անա,** Լոնստ., Մրգշ., *մայրիկ, տատ.*
**ա̈նգ**, Գոն., Գղթ., *քունք.*
**ա̈նգյա̈լ,** Լոնստ., *ծույլ, անբան.*
**անգաՃ,** Մրմրկ., *ականջ.*
**անգ՛ըրել,** Մրմրկ., *չգրված.*
**ա̈նգիզ,** Քնքռվ.[1], *ընկույզ.*
**անէրծաք,** Ջրվժ., *աներձագ.*
**անըմ,** Եղվրդ., *անուն.*
**անծիծել,** Լոնստ., *չծեծված.*
**անիաղ վախտ**, Բժկն., *մասնավոր սեփականատիրության օրոք.*
**անիաղութուն,** Արգղ., Բժկն., *մասնավոր սեփականատիրություն.*
**անիատ ժամանակ,** Կմրս., *մասնավոր սեփականատիրության ժամանակ.*
**անձըրև պըռնել,** Կմրս., *անձրև սկսվել.*
**անմառթ,** Քրշմբ., *ամուսին չունեցող.*
**անջախ,** Արգղ., Կպտն., *հազիվ.*
**անվօր**, Էլ., *տվյա̈լ անունն ունեցող, անունավոր.*
**անտէնալ,** Մրմրկ., *առանց տեսնելու.*

**անտէտազ,** Քսխ., *թևատակ.*
**անունը խանել,** Գղշն., *անվանարկել, վարկաբել.*
**անօթի ծառավ,** Բժկն., *սոված-ծարավ.*
**անօթի,** Գղրդ., Մրմրկ., *սոված.*
**անօր տըղա,** Բլհվ., *աներձագ.*
**աշէլ,** Նրզնկ.[1], *նայել.*
**աշխարք,** Գտմջ., *աշխարհ.*
**աշխարքի տակ,** Բժկն., *ողջ աշխարհում.*
**աշկ,** Զվշն., Զռ., Լռնստ., Կմրս., Վնտր., Սլկ., *աչք.*
**աշկը առնել,** Կմրս., *նկատել.*
**ա̈շկըռել,** Աղվնձ., *չար աչքի գալ.*
**աշկի հախպուր,** Լռնստ., *աչքի արտասվագեղձ.*
**աշունք,** Զռ., *աշուն.*
**աշօղ,** Քնքռվ., *նայող, հսկող.*
**ապալ-թապալ,** Մղրձ., **ափալ-թափալ,** Քղս., *շատ շտապ.*
**ապէր,** Կպտն., *հորեղբայր.*
**ապէրացյա,** Հտս., *վիրահատություն.*
**ապըրվել,** Գղդր., *ապրել.*
**ապուր,** Լռնստ., Կմրս., Նրգղ., Սվբրդ., *սպաս, թանապուր.*
**առ,** Արգղ., *աշխօր.*
**ա̈ռա̈ջ,** Հցվն., *անցյալում.*
**առավնախառ,** Զվն., *վաղ առավոտյան.*
**առավոտ,** Լռնստ., Վնտր., *վաղը.*
**առավոտնեց,** Գղշն., *առավոտները.*
**առավօղը,** Էլ., **հառաղուն,** Ալփ., **հառավնօվ,** Արգղ., **առատուն,** Կքվձ., Չրղբ., **առտուն,** Ջրռտ., *առավոտյան.*
**առատվընէ,** Վնտր., *առավոտից.*
**առիք**[j], Չրղբ., *առաստաղ.*
**առճըզան,** Քսխ., *իլիկ.*
**առնել,** Գղդր., Գղշն., **առնէլ,** Եղվրդ., *կնության առնել.*
**առսունք**[j]**,** Կքվձ., *արցունք.*
**առուտուր,** Էլ., *առևտուր.*

**ասէլու խէտ,** Հտս., *ասելու պահին.*
**ասկ ու տակ,** Թղնք., *ազգականներ.*
**ասկյա̈ր,** Գղղր., *թուրք զինվոր.*
**ասկություն**, Քղս., *տոհմ, ցեղ.*
**ասսուն հա̈զա̈ր բ՛ էրան փարք,** Սլկ., *փառք Աստծուն.*
**ա̈վա̈լ,** Լռնստ., *հնում.*
**ավարիա,** Էլ., *վթար.*
**ավէղրան,** Լռնստ., *ավետարան.*
**ավէլուրդ,** Քնքռվ., *ավելորդ.*
**ավիլուկ,** Աղվնձ., Ջրռտ., *ավելուկ.*
**ավղուշ,** Քրշմբ., *որս.*
**ավրել,** Կմրս., *ավերել.*
**ավուր,** Նրզնկ.[1], *օրվա.*
**ատար,** Սրլնջ., *աթար.*
**արաղ,** Գռն.,Եղվրդ., Լռնստ., Կմրս., Կտյք.,Մղրձ., Սրլնջ., Քնքռվ.[1], *օղի.*
**արան,** Մղրձ., *դաշտային տաք տեղ.*
**արանք,** Մյկս., **արանք**[յ], Կքվձ., *նեղ տարածություն երկու առարկայի միջև.*
**արաացընել,** Արզկ., Բջն., Քղս., *արածեցնել.*
**արեվ առնել,** Մրմրկ., *արևել, արևի շողերը վրան ընկնել.*
**ա̈րէթայ,** Զվն., արի էթանք = *եկ գնանք.*
**արին,** Եղվրդ., *արյուն.*
**արխային,** Սլկ., *անհոգ, ապահով.*
**արքատ,** Բլհվ., *խաղողի վազերից կտրված ճյուղեր.*
**արօղ կընիկ,** Հտս., *տնարար կին.*
**արօղ տըրօղ,** Ողջբդ., *հմուտ տնտեսուհի.*
**ափօ,** Կմրս., Մրմրկ., *հորեղբայր.*
**աքլօր,** Աղվնձ., Առնջ., Ջրվժ., Սվբրդ., Քղս., Քնքռվ.[1], **ա̈յլօր,** Արմս., **ա̈յ**[h]**լօր,**Կմրս., *աքաղաղ.*
**աֆտօ,** Սվբրդ., *ավտոմեքենա.*

**աֆտոմատ,** Սվբրդ., *ինքնաձիգ.*
**բազաժնիկ,** Կտյք., *բեռնախցիկ.*
**բազառ,** Արգդ., *շուկա.*
**բ՛աժան,** Մղրձ., Քղս., *բաժան, առանձին.*
**բ՛աժնել,** Մրմրկ., Թղնք., *նոր՝ առանձին օջախ ստեղծել.*
**բ՛աժվել,** Բժկն., *ընտանիքից առանձնանալ, նոր օջախ ստեղծել.*
**բալա,** Մրգշ., Նրգդ., Սլկ., *երեխա,* նաև՝ դիմելաբառ.
**բալթա բեղեր,** Գղրդ., *երկար և կեռ բեղեր.*
**բալիշ,** Սրլնջ., *բարձ.*
**բ՛ալնիք,** Կթնղբ., *բանալի.*
**բ՛ախ,** Աղվնձ., Կթնղբ.,Մրմրկ., *բաh.*
**բախճա,** Արգլ., Մրմրկ., **բախչա,** Գղշն., Գղթ., Ջվն., *այգի.*
**բա̈խտըն պիրել,** Լռնստ., *հաջողվել, բախտը բերել.*
**բաղ,** Ակնք., Գռն., Ջվն., Կմրս., Մրգշ., *այգի.*
**բաղ ու բախչա,** Գտմջ., *այգիներ.*
**բաղնիս,** Բժկն., *բաղնիք.*
**բ՛անցընել,** Գտմջ., *գործածել.*
**բ՛անցըր,** Եղվրդ., *բարձր.*
**բանդ,** Կտյք., *ջրի առաջը փակող հողաշերտ.*
**բաշարել,** Ջռ., *կարողանալ, գլուխ հանել.*
**բաշարող,** Եղվրդ., *ճարպիկ.*
**բաջանաղ,** Քնքռվ., *քենակալ.*
**բա̈ռա̈ղի,** Բժկն., Գղդր., Գտմջ., Կպտն., Քղս., *անօգուտ, իզուր.*
**բառղան,** Գտմջ., *մեծ պարկ.*
**բ՛առնալ,** Բժկն., Սվբրդ., Քնքռվ., *բարձել.*
**բ՛արեվը մօռնալ,** Սլկ., *հիացմունքից ու զարմանքից քար կտրել.*
**բա̈րիշել,** Գղշն., Գղթ., Մղրձ., Սլկ., *հաշտվել.*
**բ՛արօվ խէրօվ,** Գտմջ., Մրմրկ., *հաջողությամբ.*
**բէսա̈մթ,** Մղրձ., *անհարմար ձևով.*
**բ՛էտ,** Աղվնձ., *մեծ.*

**բ՛էտընալ,** Գոն., *մեծանալ.*
**բ՛էրանացի,** Հտս., *անզիր.*
**բ՛էրել մըտէն,** Մրգշ., *հիշել.*
**բ՛էրնի ջ՛ըրերը էթալ,** Կպտն., *շատ ցանկանալ ուտել կամ ունենալ.*
**բը /բա/,** Կքվձ., Վնտր., հաստատման կամ հարցման իմաստով վերաբերական է.
**բըլագ,** Մյկս. /հոգն.՝ բըլյ̈ըյնէր/, **բըլյ̈ագ,** Ակնք., *դաստակ.*
**բըլյ̈ագուկ,** Գդրդ., *ապարանջան.*
**բ՛ըլել,** Աղվնձ., Արգդ., Բժկն., Զվշն., Բլհվ., Քսխ., *փուլ գալ.*
**բ՛ըլցընել,** Կթնղբ., *փուլ տալ.*
**բըլուզկա,** Կքվձ., **բըլուսկա,**Հտս., *կանանց շապիկ.*
**բըմբըլել,** Գդղր., *փետրահան անել.*
**բըմբուլ,** Բլհվ., *փետուր.*
**բ՛ընակըռել,** Բջն., Քղս., *բնակություն հաստատել.*
**բ՛ընատա,** Արզկ., *գութանի հաստ շղթա.*
**բ՛ընկալ,** Քղս., **բ՛ունգալ,** Սվբրդ., *հավաբնում թողնված ձու.*
**բըշկուլ,** Եղվրդ., Զվն., Սվբրդ., *ոչխարի թրիք.*
**բ՛ըշտել,** Թղնք., *կտրուկ կշտամբել.*
**բ՛ըոթէ թել,** Ալփ., *բրդյա թել.*
**բ՛ըռնել գ՛ըլխուն,** Սլկ., *դիպչել գլխին.*
**բըրախէլ,** Էլ., Եղվրդ., **բըրախել,** Բջն., Զվն.,Կմրս., *բաց թողնել, արձակել.*
**բիբար,** Մրմրկ., *տաքդեղ.*
**բիձա,** Արզկ., Ջրվժ., Սրլնջ., Քղս., **բիձ̈ա,** Լռնստ., Կպտն., *հորեղբայր*, Գդթ., *ծերունի.*
**բ՛ուռ սիվտըկել,** Քղս., *գլխի մազերն ամբողջովին սպիտակել.*
**բուռջ,** Ջրվժ., *տերև.*
**բուռում,** Մղրձ., *փաթաթված լավաշ՝ մեջը պանիր կամ այլ բան.*
**բօբիգ,** Բջն., *բոբիկ.*

**բօզ,** Արզլ., *կոկորդ.*
**բօզ մա̈նդա̈կ,** Հտս., բույս է.
**բօլ,** Լռնստ., Քրշմբ., *հերիք,* բավական.
**բօլ ու բօլդա̈ն,** Քղս., *շատ, բավարար քանակությամբ.*
**բ՛օլոր,** Վնտր., *շուրջ.*
**բօխչա,** Եղվրդ., *կապոց.*
**բօյ,** Զվշն., *հասակ.*
**բօյ ու բուսաթ,** Արզկ., *հասակ.*
**բօյէբօյ,** Մղրձ., *ամբողջ հասակով.*
